Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԼԱՍԵՇԱ ՊՈՊԼԻՍՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳԻՐ

ՆԱՏԱՇԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳԻՐ

ՄԱՍ 2

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ-2018

ՀՏԴ 821.19-94Պողոսյան
ԳՄԴ 84(5Հ)-4
Պ 797

Գիրքը հրատարակվում է Արցախի գրողների միության երաշխավորությամբ

Նվիրում եմ մանկավարժ դպրերս՝ Սոֆյա Պետրոսյանին

Պողոսյան Նատաշա
Պ 797 Մանկավարժի օրագիր/ Ն. Պողոսյան.- Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ., 2018. Մաս 2.- 544 էջ:

Արցախի Հանրապետության վաստակավոր ուսուցչուհի Նատաշա Պողասյանի «Մանկավարժի օրագիր» գրքի երկրորդ մասն առաջինի շարունակությունը հանդիսացող մանկավարժական, գաղափարախոսական, հրապարակախոսական խորը վերլուծությունների ու դիտարկումների ամբողջություն է: Ուշագրավ է նրա օրագրային գրառումների համակառույցը, որում հեղինակը սրտի թրթիռով է վերաբերվում անցյալին, եռանդով ապրում ներկան, նախանձախնդրորեն պլանավորում ապագան: Հեղինակն այս անգամ ավելի շատ անդրադարձել է ուսուցիչ գործընկերների կերպարների ներկայացմանը: Օրագրի բովանդակությունը յուրատիպ տարեգրություն է՝ ուսուցչի թելադրած իրականություն, որում նույն հասարակության մեջ ապրող, նույն հասարակության խնդիրների կրողն է՝ կրթադաստիարակչական ու հանրային խնդիրների իր հարցադրումներով ու հետաքրքիր լուծումներով:

Գիրքը հասցեագրվում է ոչ միայն դպրոցի մանկավարժներին ու աշակերտներին, այլև՝ ծնողների և ընթեցասերների լայն հասարակությանը:

ՀՏԴ 821.19-94 Պողոսյան
ԳՄԴ 84(5Հ)-4

ISBN 978-9939-1-0818-6

© Նատաշա Պողոսյան, 2018

ՆԱԽԱԲԱՆԻ ԽՈՍՔ «ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳՐԻ» ՄԱՍԻՆ

Ստեղծագործության և հոգևոր պարապուրդի մեր օրերում ջերմություն և լույս սփռող է Նատաշա Պողոսյանի «Մանկավարժի օրագրի» երկրորդ մասը, որին շատ շատերն էին սպասում: Ուսուցչի մասնագիտական ինքնության ու կերպարի փոփոխությունների, երբեմն նաև կորուստների մեր օրերում «Մանկավարժի օրագիրը» լուսավոր ու առաքինի ուսուցչության պարզած դրոշ է, իրականությանը համաքայլ ընթանալու, իրականության գնացքից չուշանալու անթաքույց հորդոր:

Մարտակերտը, հիրավի, Արցախ աշխարհի ռազմավարական նշանակության մեր հայրենիքը, ուսուցչի օրագրային գրառման յուրաքանչյուր էջում է, տողատակում և լուսանցքում, առանցքում և ենթատեքստում, յուրաքանչյուր օրվա լուսաբացի սպասման մեջ, անհանգիստ ու աղմկոտ միջօրեում, մայրամուտի նիրհում:

Ն. Պողոսյանի ստեղծագործական թռիչքներով Մարտակերտի հողը, նրա մշակն ու պահպանողը, նրա ուսուցիչն ու աշակերտը դառնում են իմաստուն ու հանճարեղ: Նա բազմաբույր ու բազմագույն հրճվանքով է ներկայացնում բնության ընկալման, բնությանը մերձենալու իր բոլոր ապրումները, մտքերն ու հույզերը, որոնք սլանում են հորիզոնից անդին: Դպրոցը, գործընկերները, աշակերտներն ու ծնողները նրա օրագրի հերոսներ են: Նրա յուրաքանչյուր գրառման մեջ գնահատվում ու արժևորվում է անանցն ու հավերժականը, անանձնականն ու վերանձնայինը: Ու թերևս այստեղ է երևում ուսուցչի կերպարն ու նրա ազդեցության ուժը:

Մանկավարժի օրագրային գրառումներում ամբողջանում է Մարտակերտի բազում քաջորդիների հայրենասիրության սխրանքի կենդանի առասպելը, որոնցից շատերը նրա աշակերտներն էին: Բացառիկ անկեղծ է Պողոսյանի խոհն ու ապրումը: Հաճախ կարելի է զգալ նրա երկրորդ շնչառությունը, հոգեկան բեռի ծանրությունը: Կյանքից պոկված փաստագրություններով նա յուրօրինակ ձևով գտնում է իր իսկ առաջադրած կենսական հարցադրումների ելակետը:

Մանկավարժը հոգու խորքում զգում է և արտահայտում սոցիալական բարոյականության ու սոցիալական ներդաշնակության պահանջը և իր գրչով պայքարում հոգևոր ներդաշնակության համար: Մանկա-

վարժի իր ոգևորությամբ նա փարատում է սերնդի կրթության ու դաստիարակության լիարժեք կազմակերպման դժվարությունների հետ կապված բոլոր թերահավատ կարծիքներն ու թուլակամ փաստարկները և սեփական դիտողականությամբ ու կենսափորձով ոչ թե համակերպվում, այլ մանկավարժի կատարելությանը հասնելու իր տեսլականն է ուրվագծում և փիլիսոփայական կարոտով սպասում դրա իրականացմանը:

Մանկավարժի նրա երազանքների գաղտնաբառը մեկն է՝ պայքարի ոգին: Ու այդ պայքարը սոսկ հայրենիքը պահելու համար չէ, դա հանդուրժողականության, արդարության, զսպվածության ու առաքինության համար մղվող պայքար է: «Մանկավարժի օրագիրը» ուսուցչի ստեղծագործական տառապանքով կերտված մանկավարժի կերպարի ու գործունեության գեղագիտական իդեալն է, որը պետք է հաղթի մերօրյա մարտահրավերների բոլոր հարթակներում՝ պատերազմից մինչև տնտեսություն, կրթությունից մինչև մշակութային ինքնության պահպանում: Նա հայկական հպարտությամբ է լցնում բոլորի սրտերը, հայրենիքը սիրելու և նրան նվիրվելու օգտակար ցանկությամբ:

Ամեն մի գիրք ունի իր պատմությունը, ընթացքն ու ավարտը: Բայց այստեղ ավարտ չկա: Կա մտքերի ու երևակայության խանդավառություն, ստեղծագործելու առատ լիցք և բարին արարելու պատգամ: Ուրեմն թող մանկավարժի հետագա գրառումները հետայսու միմիայն երջանկության հուշերի վերապատումներ լինեն:

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Արցախի ԿԳՍ նախարարության մասնագիտական
կրթության և գիտության բաժնի վարիչ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԽԻԶԱԽՈՒՄ

Հայ նշանավոր գրող և գրաքննադատ Հակոբ Օշականն այս կամ այն գրական երկը արժևորելիս խորհուրդ էր տալիս նախ և առաջ հաշվի առնել, թե «ինչ կա այնտեղ իմ ժողովուրդէն»: Չփորձելով «Մանկավարժի օրագիրը» տարազավորել ուռճացված բնորոշումներով՝ միանշանակ փաստել կարելի է, որ այն գիրք է հայի և նրա երկրի, տվյալ պարագայում՝ Արցախի և արցախցու մասին: Օրագրային գրառումներով գրքերը նորություն չեն մեր իրականության մեջ: Համաշխարհային գրականությունից բավական է հիշել միայն «Աննա Ֆրանկի օրագիրը», որը գրանցված է. 20-րդ դարի լավագույն գրքերի ցանկում. երեխայի կողմից գրված գիրք, որով, սակայն, փոքրիկ աղջնակը հզոր ձայնով պատմական ճշմարտություն է փաստում: Մեծ աշխարհի փոքրիկ ու գողտրիկ մի անկյունում (որը, դժբախտաբար, վերածվել է թեժ կրակակետի) ապրող ու արարող մանկավարժ Նատաշա Պողոսյանն էլ իր օրագրով է փորձում ճշմարտության ձայնը հնչեցնել ի լուր աշխարհի՝ «ո՛չ» ասելով պատերազմին: Արցախի ամեն մի թիզ հողը ներծծված է հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած երիտասարդների արյամբ: Ու էջ առ էջ գրառումներում մանկավարժը կերտում է ժամանակի պատմությունը, որտեղ տեսնում ենք պատերազմի արհավիրքը, հայրենի հողին արմատներով ամուր կառչած արցախցուն, որը ժայռի կատարին բուսած կաղնու պես դիմանում է ահեղ հողմերին ու շարունակում ջերմացնել աշխարհը: Օրագրային խճանկարը ընդլայնվում է, և ընթերցողի հետ անկեղծ զրույցի են բռնվում սահմանամերձ բնակավայրում ապրող աշակերտները՝ իրենց հասուն խոհերով, երազանքներով, նպատակներով, մտահոգություններով, առաջին սիրո խոստովանությամբ, կորուստների անդառնալի ցավով, հաղթանակների բերկրանքով: Իրական հերոսներ են դառնում նաև հեղինակի կողքին ապրող ուսուցիչը, լրագրողը, հողագործը, գրողը, զինվորը, բժիշկը, որոնք կերտում են իրենց ժամանակը, և որոնք մեկ ընդհանուր բնորոշում ունեն՝ հայրենիքի պաշտպան. նրանցից յուրաքանչյուրը, ինչպես Ն. Պողոսյանն է փաստում, ամենօրյա աշխատանքով հսկում է իրեն վերապահված տարածքի սահմանները. զինվորը՝ զենքով, բժիշկը՝ վիրաբուժական նշտարով, մանկավարժը՝ գրչով…Ու գեղարվեստական մանրաքանդակ-իրապատումներով հյուսվում է մանկավարժի օրագիրը, որը սահմանամերձ բնակավայրում ապրողի ու արարողի ամենօր-

յա խիզախման մասին է պատմում, և որը հայի հոգևոր տարածքներն անաղարտ պահելու, ճշմարիտ արժեքներ սերմանելու դավանանքն ունի: Այդ խիզախման համար Նատաշա Պողոսյանի պրպտումները սահմաններ չեն ճանաչում, և ամեն ինչ դառնում է միջոց՝ դրսևորվելով գրքի արարմամբ, առցանց հարթակներում ազնիվ մտավորականի ձայնի անխախտ հնչեցմամբ, ակտիվ համագործակցությամբ ժամանակի ականավոր գործիչների և հայրենանպաստ առաքելություն ծավալող կառույցների հետ: Ն. Պողոսյանի համագործակցությունն Արցախի գրողների միության հետ ավանդական բնույթ է ստացել, որը դրսևորվում է հատկապես Մուրացանյան ամենամյա օրերին և այլ միջոցառումների ժամանակ: Այո՛, մուրացանյան և առհասարակ հայ գրականության բյուրեղացած իմաստնություններով դաստիարակվող նրա սաներն են, որ կրակոցների ներքո շարունակում են ապրել, երազանքների համար մաքառել և արարել հայրենի Արցախում: Կարելի է ասել, որ մանկավարժը պատվով է կատարում իր վսեմ առաքելությունը՝ պաշտպանելով հայրենիքի հոգևոր սահմանները: «Մանկավարժի օրագիր» գիրքը հենց այդ հոգևոր և նյութական հայրենիքի, այնտեղ ապրող մարդու, նրա ժամանակի գեղագիտական և փիլիսոփայական խտացումն է, որը հետաքրքիր է, ինքնատիպ, անկեղծ ու անպաճույճ, լավի ու բարու արարման ձգտումով:

ԶԱՐԻՆԵ ՍԱՌԱՋՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դասախոս,
Արցախի գրողների միության անդամ

ԲԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ ԱՐԱՐՈՒՄԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԵՐԿԵՐՈՒՄ

Արցախյան մանկավարժական մտքի, գեղարվեստի, ազատասիրական ոգու մտասևեռումների լանդշաֆտում, հասարակական տարբեր շերտերն ամբողջացնող խոհածումների պարույրներում, արցախյան մտավորականության, ուսուցչական համակարգի փաղանգում առանձնանում է Նատաշա Պողոսյանի անունը, ով մանկավարժի ու մայրության, առաքինություններով-հերոսականության սուրբ մտասևեռումներով պսակյալ ստեղծագործական ծրագիր-նպատակադրումներով է մեկնության ելել՝ այս անգամ մտավոր աշխարհում հանդես գալով՝ երևի թե եզակի «Մանկավարժի օրագիր» գրքով՝ բաղկացած առայժմ երկու մասից:

Կին, ով հաճելի զարմանք ու մեծ հարգանք, անհատնում սեր վաստակող հայ կնոջ պատասխանատվության, ուսուցողական-դաստիարակչական գործի հետաքրքիր ու բարձր զգացումներ, անգնահատելի որակական դրսևորումներ ցուցաբերելով՝ խիզախում է օրվա, ժամանակի հրատապ խնդիրներին ընթացս և ընդառաջ, հնօրյա ու նորօրյա ազգային ավանդներին ունկնդիր ու ակնդիր՝ առաջադրում ու հուշում է իր պատասխանները, իր անհանգստությունները՝ պահպանելով հնագույն ժամանակներից եկող հայապահպան-ազատասեր, արարչագործ Խաչեն աշխարհի շնորհաշատ-հայրենասեր հայ կնոջ անգերազանց հատկանիշները, արցախուհու զարմանահրաշ տեսակը՝ ստեղծելով հայ մարդկանց հետաքրքիր կերպավորումներ՝ սերնդափոխությամբ եկող ու անցնող սիրելի աշակերտներ՝ իրենց ինքնատիպ բնութագրումներով, լեգենդ դարձած հայրենասեր-նահատակներ, սահմանամերձ գոտիներում կանգնած արիական հայորդիներ, հողի մարդիկ, ուսուցիչներ՝ կյանքի գույներին նոր ներկապնակ արտացոլող ոգեղեն սլացքներով:

Մանկավարժ ու հայրենասեր հեղինակ Նատաշա Պողոսյանն իր հոգու հրով ու սաների հանդեպ հավատով, նրանց սատարելու, կյանքի ճիշտ-առաքինի ճանապարհ ցույց տալու, նրանց բարձր տեսնելու նվիրվածությամբ ինձ հիշեցնում է մեծ իմաստասեր և ուսուցիչ Մովսես անապատականի աշակերտ, Նախիջևանի Շոռոթ և Ագուլիս գյուղերում ուսուցանող ուսուցիչ, 17-րդ դարում շահաբասյան արշավանքների ժամանակ իր սաներին-աշակերտներին մանկաժողովներից փրկելու, իր հավատին ամուր մնալու համար պարսիկների սրից նահատակված Անդրեաս երեցի (Մուրացան) անձնուրաց խիզախությունը, որին նվիրված բանաստեղծությամբ հանդես է եկել նույն դարում ստեղծագործող Ներսես Մոկացին և Առաքել Դավրիժեցին «Հայոց պատմությունում»:

Հերոսական հայրենի Մարտակերտն ու հերոսացած մարտակերտցիներն են տիկին Նատաշայի հերոսները, կրակի ու հազար որոգայթների տակ հայտնված սահմանամերձ բնակավայրը՝ իր աներեր բնակիչներով, ճակատագրին ընդառաջ գնացող մարտականները, ճակատագրի որոգայթներին-հարվածներին-պատերազմական թեժություններին դիմակայող, դրանց փոքրոգությունն ու ոխակալությունն արհամարհող, դրանցից չվախեցող, դրանց արիաբար հարվածող մարտակերտցիները, արցախցիները, ի սփյուռս հայությունը, երբեմնակի ու առավել հաճախ՝ հատիկ-հատիկ բնութագրված, բացահայտելով նրանց թե՛ մարդկային առաքինությունները, թե՛ թերությունները:

«Մանկավարժի օրագիրը» սիլլոգիզմների-պատճառահետևանքային կապերի մի ուսանելի սինթեզ է բոլոր հասակի ու որակի մարդկանց համար, հաճախ ազգային ու համազգային հարցադրումներին պատասխան պահանջող ու պատասխան առաջադրող լուծմունքներով, մարդկային բնավորության, հոգեկան աշխարհի, բարձր ինտելեկտի բացահայտումներով, որոնք մանկավարժի հոգևոր աշխարհի պահանջմունքներն են և արարելու կերպը, իսկական և անիսկական արժեքների գնահատումները, որտեղ նա հարահարցումներ ունի, ու վիպական ասելիքն անձնավորված ու անանձն երակ է ստանում, և երևույթներն անձնական մտորումներից բեկվում են անանձնականի: Քանի դեռ հեղինակը մարտականորեն, արարումներով լի է ու դեռևս խայտաբղետ կյանքի մարտադաշտում է գտնվում՝ հայրենի աշխարհի քաղաքական ու մշակութային կյանքի հորձանուտում, ազգային ճանապարհի նոր տրամադրություններին հավատացյալ՝ ակտիվ պայքարողի դրոշով, ուստի տեղին չէ նրա «վերջին հանգրվանի» մասին խոսքը և անհանգստությունն անառողջ քննադատության մասին թե՛ իր, թե՛ այլոց կողմից հնչեցված. այն, կարծում ենք, անպայմանորեն կունենա արարման նոր եզերքներ:

Ուրեմն, հետայսու, նա ավելի մեծ եռանդով պետք է նվիրվի հայ կնոջ անբասիր, արարումներով լի ճակատագրին՝ որպես զինվորյալ, և վիպական-օրագրային խնկարկումներով ներկայացնի Արցախն ու նրա երևելի, հերոսական ժողովրդին ու նրա հաղթապսակներով լի ապագան…Դեպի նոր ճանապարհ, սիրելի՛ Նատաշա Պողոսյան, զենքդ ու գրիչդ հատու են ու բեղուն, ինչպես հայրենանվեր սերմնացանն իր մարտեղեն ու արարումի հերկերում:

ԶԻՆԱԻԴԱ ԲԱԼԱՅԱՆ

Գրականագետ, գրող- բանաստեղծ,
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ

2017-01-03
2017-01-03

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՅՈՒՐԱՏԻՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ՏԵՍԼԱԿԱՆ

Նոր տարի է, բայց՝ ոչ նոր ուսումնական, Նոր տարի, որ իր հետ թարմ շունչ է բերում, նոր հարաբերություններ, ու այդ նորի մեջ փորձում ենք վերագտնել մեզ: Անցած տարին ինձ համար ստեղծագործական վերելքի տարի էր: Այդտեղ անմահացավ մի դպրոցական կյանք՝ իմ դասավանդելիք դասարանների աշակերտների ուրախ և տխուր օրերի ապրումներով, նրանց հուզական աշխարհով, անկեղծությամբ, ստեղծագործական մտքերով, մասնագիտությունների ընտրությամբ, իրենց ապագայի մասին տեսլականով, ազատ խոսքի ու կարծիքների բազմազանությամբ, ուսուցչի հետ ունեցած նոր հարաբերություններով ու անհատական առանձնահատկություններով: Այդ տարում ձևավորվեց մի «Մանկավարժի օրագիր», որ այս օրերին հրատարակության ճանապարհ է անցնում, որպեսզի այն գրքի տեսքով դրվի ընթերցողի սեղանին:

Անցած տարի մանկավարժիս համար բացվեց նաև մանկավարժական արարումների մի նոր ոլորտ, որտեղ երևացի իմ մասնագիտությանը զուգահեռված գեղարվեստական ու գրականագիտական վերլուծություններով, գնահատանքի խոսքերով…Այն հնարավորություն տվեց նաև ի մի բերել բոլոր նյութերը՝ իմ աշակերտների մտքերի, արտահայտած կարծիքների քննարկմամբ, որի արդյունքում նորից ասպարեզ եկավ մեկ այլ անհրաժեշտություն՝ հրատարակել ևս մեկ գիրք, որտեղ կերևա նաև մանկավարժը՝ տարբեր ստեղծագործությունների՝ պատկերավորման արվեստի վերլուծություններով, գրողի մասին ունեցած իր արժեքավոր խոսքով, գեղարվեստական մտքի խորությամբ: Անցած տարվա ուսուցչուհուս արարումների հաջողության դափնեպ-

սակն իմ երկու գրքերի ծնունդը կլինի 2017-ին, բայց շուտով կդրվի մի նոր գրքի սկիզբ, նոր արարումների փուլ, որտեղ մեր դպրոցականներից բացի կերևան նաև սահմանամերձ դպրոցիս ուսուցիչները, ինձ հետ աշխատող անհատականություններ՝ յուրաքանչյուրը յուրովի տարբեր՝ իրենց արտահայտած մտքերով, աշխարհայացքով ու կենսադիրքով:

Մանկավարժիս աշխարհը լրացնում են ոչ միայն աշակերտները, այլ նաև իմ գործընկերները՝ տարբեր սերնդի ներկայացուցիչներ: Իմ աշխատանքային օրը նաև նրանց հետ է՝ երբեմն՝ հասկացված, երբեմն՝ գուցե չհասկացված, երբեմն՝ սրտաբուխ խոսքերով, ժպիտներով առատ, երբեմն՝ մտքերի մեջ, հուզական խռովքով…Սա մի ուրիշ աշխարհ է, որտեղ համարյա բոլորս էլ Արցախյան պատերազմ ենք տեսել, բռնագաղթի ճանապարհ անցել, վերադարձել հայրենիք, նոր աշխատանքի կցվել, սերունդներ դաստիարակել, նորից ապրիլյան ահուսարսափ ապրել, նոր տարհանում տեսել, բայց նորից մնացել այս հողին կառչած: Հողն այս մոգական ուժ ունի: Այն այլևս սրբացված է ընկածների թանկ արյան շաղախով և դարձել է ողջերի արժանապատվությունը: Եվ հենց այս հողի նկատմամբ ունեցած սիրուց էլ կծնվեն խոսքերս յուրաքանչյուրի մասին, ովքեր նաև կորուստներ ունեն իրենց հոգում, հարազատների անմահ հիշատակ:

Նորից շնորհավորում եմ բոլորի Ամանորը, նոր երազանքներով հանդերձ՝ ցանկանում խաղաղ երկինք, որով պայմանավորված են նաև ուսուցչուհուս ստեղծագործական արարումներն իր աշակերտների և գործընկերների հետ մանկավարժական միջավայրում:

http://usarmenianews.com/am-n-7671.html

2017-01-04

ՈՐՊԵՍ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Միջնակարգն ավարտելուց 20 տարի հետո միայն ինձ հաջողվեց մտնել դպրոց: Շատ դժվար էր այդ ճանապարհը, բացի դրանից՝ այն դարձել էր կյանքի նպատակ: 1976-ի դպրոցի շրջանավարտիս բախտ չվիճակվեց այդ տարին ընդունվելու բուհ: Խորհրդային կարգերի քարացած կանոնների համաձայն՝ ընդունելության չորս քննություն բարեհաջող հանձնելուց հետո անգամ չընդունվեցի: Մեկ միավոր, որ չէր բավարարում…Այդ սառցե օրենքը շարունակվեց հաջորդ տարին…Մինչ այդ տարբեր աշխատանքներ տարա՝ ստաժ ձեռք բերելու համար, որ հնարավորություն ունենամ նորից փաստաթղթեր հանձնելու: Երկրորդ տարին հաջող քննություններ հանձնելուց հետո նորից դուրս մնացի ընդունելությունից: Այս անգամ իմ արցունքները պիտի միախառնվեին այն 0, 5 միավորին, որ չէր բավարարում…

Բարձրագույն ընդունվելն ինձ համար դարձավ գերնպատակ, որի համար նորից սկսվեց մի մեծ պայքար: Ամռանն արևահարվում էի, դրան հաջորդում էր իմ աշխատանքը անձրևի կաթկթոցի տակ, և ձմռան սառնամանիքին ցրտահարվածիս սպասում էր մի նոր տքնաջան աշխատանք խաղողի բաց դաշտում:

Երրորդ տարին հաջողակ էր ինձ համար, երբ երջանկությամբ համակված՝ հասկացա, որ վերջապես Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողուհի եմ դարձել: Ուսանողական տարիներին գերազանց սովորելը դարձել էր նոր նպատակ, և ես համառորեն ձգտում էի հասնել դրան:

1982-ին գերազանցությամբ ավարտեցի բուհը: Բայց այդտեղ դժվարությունների վերջը չեկավ: Միջնակարգի դռները փակ մնացին ինձ համար, և ես հայտնվեցի տարբեր աշխատատեղերում՝ մանկապարտեզի դաստիարակչուհի, շրջանային պիոներական տան մեթոդիստ, դաս-

տիարակչուհի գիշերօթիկ միջնակարգ դպրոցում, ապա՝ շրջանային լուսաշխատողների տան տնօրեն և, վերջապես, համատեղության կարգով՝ ուսուցչուհի գիշերային հեռակա դպրոցում:

Որքա՜ն դյուրին է թվարկելը, իսկ այդտեղ արցունքախառն վախվորած ճանապարհ կար երեկոյան ժամերին՝ գիշերային խավարի մեջ, որ ինձ այդ յուրատեսակ դպրոցն էր տանում, բայց նաև մասնագիտության հանդեպ սեր ունեի, որ սպառվում էր ինձանից մեծահասակ այդ «աշակերտների» սառած հայացքներին նայելիս:

1992-ի Արցախյան պատերազմի տարիների բռնագաղթից հետո ապրեցի ՌԴ-ում, իսկ 1995-ին հայրենի հողի կանչով վերադարձա Արցախ և, վերջապես, 1996-ին աշխատանքի ընդունվեցի Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում: Բայց այստեղ էլ դյուրին չէր իմ անցնելիք ճանապարհը, չնայած ձեռքբերումներիս հանդեպ ոմանք աչք էին փակում, բայց ամեն տարի պարգևատրվում էի տարբեր պատվոգրերով իմ աշակերտների հաջողությունների համար: Եվ ահա ուսուցչուհու բազմաբեղուն և տքնաջան աշխատանքս գնահատանքի արժանացավ 15 տարի հետո, երբ 2011թ. պարգևատրվեցի ԼՂՀ վարչապետի հուշամեդալով՝ մատուցած ծառայությունների և մանկավարժության մեջ ներդրած ավանդի համար:

2013 թ. մասնակցեցի «Տարվա լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթին ու պարգևատրվեցի ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ «Լավագույն ավանդույթների պահպանումը և նորարարությունը մանկավարժության մեջ» անվանակարգում հաղթելու համար: 2013 թ. ԿԴ նախարարության երաշխավորությամբ և ֆինանսական օժանդակությամբ հրատարակվեց իմ առաջին գիրքը՝ «Ուսուցչի իմ թղթապանակը» մեթոդական ձեռնարկը, որը բաժանվեց Արցախի բոլոր դպրոցներին:

2014 թ. ստացա հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

2014 թ. շնորհվեց Արցախի վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

Այս օրերին էլ, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, նաև որպես այդ մեթոդմիավորման նախագահ՝ սիրով շարունակում եմ իմ գործունեությունը նույն դպրոցում: Հուսամ՝ կկարողանամ նոր հաջողություններ արձանագրել իմ մանկավարժական աշխատանքում՝ չմոռանալով սիրո և արցունքի այն հետքերը, որ մնացին իմ անցած ճանապարհին:

Ինքնակենսագրական այս համառոտագրությունն իրականում պայքար էր, որի բովում թրծվեց իմ միտքն ու հոգին: Իրականում հեշտությամբ տրվող և ոչ մի բան չի կարող ախորժալի ու հյութեղ լինել, և քանիցս համոզվել եմ, որ նեղ ու անձուկ ճանապարհներն են հոգիդ դարձնում ընդարձակ, միտքդ՝ ճկուն, կամքդ՝ անկոտրում... Աշակերտներիս պատեհ ու անառիթ, ուղղակի և անուղղակի պատմում եմ կյանքի «ասֆալտապատ» և «քարքարոտ» ճանապարհների մասին, բայց իմ ու նրանց բանավեճի վերջին հանգրվանը դառնում է ճշմարտության ճանապարհը: Թող իմ բոլոր աշակերտներն առողջ կենսագրություն ունենան, և որ ոչ մեկն ինքնակենսագրելիս հոգոց չհանի...

http://usarmenianews.com/am-n-7682.html

2017-01-06

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԻՄ ԽՈՀԵՐԻՑ

Որպես սքանչելիք և լավագույն խորհուրդ՝ շնորհավորում եմ բոլորիս Սուրբ ծնունդը, որը սովորեցնում է ապրել մեր հասանելիք ազնվագույն կյանքը հոգու սնունդով: Այս օրերին Սուրբ ծննդյան տոնը մի հիանալի առիթ է՝ նորից խոսելու մարդկային լավագույն որակների դաստիարակության մասին, առավել ևս ուշադրության է արժանի այն երևույթը, որ յուրաքանչյուրս յուրովի առանձին տեղ ենք տալիս մարդուն մաքրագործելու տանող հոգևոր արժեքներին, իսկ հոգևոր դաստիարակությունը մեր անցած ու անցնելիք ճանապարհի ուղեկիցն է: Սուրբ ծնունդն արժեքների վերագնահատում ու վերարժևորում է:

Խորհրդային տարիների ստրկացված կյանքը՝ ադրբեջանական իշխանությունների «հովանու» ներքո, արցախցիներիս զրկել էր քրիստոնեական հավատքի ու նրա հետ կապված բոլոր սովորույթների ու տոնական օրերի մասին բարձրաձայն արտահայտելուց: Մարտակերտում եկեղեցի չկար, հին ավերակներ էին, Գանձասարում եկեղեցին չէր գործում, բայց առիթից առիթ գնում էինք ուխտագնացության: Հատկապես ուստարվա վերջին աշակերտներիս տանում էին այնտեղ, վառվող մոմերի առկայծումների մեջ մեր մրմունջները փոխանցում էինք Աստծուն լուռ ու երբեմն՝ ծածուկ: Բուհում սովորելու տարիներին էլ աթեիզմ էինք անցնում, որը ժխտում էր ամբողջ քրիստոնեությունն ու Աստծո գոյությունը, իսկ մեր հարևանները մեր հետևից «անհավատ» էին կանչում:

Արցախյան պատերազմը, կարելի է ասել, մեզ ազատեց նաև հոգևոր ստրկացումից, և յուրաքանչյուր արցախցի սկսեց գիտակցել, որ այդ հավատքը իր հոգու մեջ էր, բայց կապանքների մեջ լինելով՝ զրկված էր դրա մասին խոսելու իրավունքից: Վաղուց մենք ազատվել ենք այդ հոգևոր ստրկացումից և այսօր մենք համայն հայության հետ կանգնած ենք Հիսուս Քրիստոսի Սուրբ ծննդյան մեծ խորհրդի առջև:

Այն չքնաղ մի խորհուրդ է, որ մեզ սովորեցնում է բարություն, ազնվություն, մեծագույն մարդասիրություն, որի կարիքն ունի ամբողջ աշխարհը: Սուրբ ծննդյան ոգեկոչումը խաղաղության և մարդկային լավագույն հարաբերությունների արտահայտություն է, քանի որ Քրիստոսի Սուրբ ծննդով մարդիկ կոչված են համերաշխ ապրելու իբրև հարազատ եղբայրներ՝ իբրև երկնավոր հոր որդիներ: Սուրբ ծննդյան ամեն

մի ավետիս հոգու վերածնունդ է յուրաքանչյուր քրիստոնյայի համար, նրա ամեն մի ավետիս հզոր վահան է և հաղթության զենք չարիքի ու մեղքի դեմ:

Մարդկային հոգին չի կարող միայն բավարարվել նյութականով, նյութականից վեր հոգևոր սնունդ է պահանջվում, մարդկությունը երազում է արդարություն և խաղաղություն բերող Փրկչի գալստյանը: Եվ ՆԱ եկավ, եկավ որպես հոգևոր սնունդ, եկավ՝ մեզ հոգու անդորրություն բերելու, եկավ, որ իր հույսով ու հավատով ապրենք: Ժամանակի հավերժության մեջ տարիներ, դարեր, հազարամյակներ են անցնում, մարդկային պատմության փոքր ու մեծ իրադարձությունները հաջորդում են միմյանց, և այդ ամենի վրա, որպես սիրո, արդարության և խաղաղության հավերժական ճառագայթում, տիրաբար շողում է Քրիստոսի Սուրբ ծննդյան լույսը՝ հոգևոր իմաստ ու բարոյական նպատակ հաղորդելով մարդու կյանքին: Հռոմի Պապի այցը Հայաստան բնավ պատահաբար չհամարվեց ուխտագնացություն: Քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն, աշխարհում առաջինն ընդունելու իրողությունն այսօր յուրատիպ ուղերձ է աշխարհին, առավելապես՝ Նարեկացուն «Տիեզերագնաց վարդապետի» կոչմանն արժանացնելու փաստը: Մենք բիբլիական ժողովուրդ ենք, իսկ Նարեկացին ոչ թե հայերիս, այլ մարդու և աշխարհի փրկության մարմաջով է շարադրել «Նարեկը»: Հայերս մեր ողջ պատմության ընթացքում հավատացել ենք Հիսուսի պատգամներով աշխարհը վերափոխելու, մարդու հոգին ազնվացնելու գաղափարներին ու այդպես էլ շարունակենք հավատալ գալիք լավ օրերի՝ մեր բոլորիս երազանքների իրականացմանը: Արժեքների վերածննդի ու վերարժևորման գիտակցմամբ մենք հաղթահարում ենք ինքներս մեզ, մեր թուլություններն ու տկարությունները:

http://usarmenianews.com/am-n-7697.html

2017-01-08

ՍՈՑՑԱՆՑՆ ԷԼ ՄԻՋԱՎԱՅՐ Է, ՈՐՏԵՂ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ

Գռեհիկ հոգի՞ն է գռեհիկ խոսքեր ծնում, թե՞ հակառակը: Ասում են՝ վաղուց է ծնվել այս հարցը, բայց պատասխանը դեռ չգիտեն: Բայց հայտնի խոսքն ասում է, որ գռեհիկ մարդն է գռեհիկ խոսում: Կարծում եմ՝ եթե անգամ մարդու հոգին է այդպես խոսում, ապա հոգու դաստիարակություն է պետք, որպեսզի մարդը չկեղտոտի միջավայրը իր գռեհիկ ու հայհոյախառն խոսվածքով:

Հուսով եմ՝ շատերը մանկավարժիս հետ համամիտ կլինեն, որ երբևէ չեմ կարողանում հաշտվել այն երևույթի հետ, երբ սոցցանցը դառնում է զրպարտության, անարգանքի, մարդկանց վարկաբեկելու հարթակ՝ երբեմն՝ անանուն, երբեմն՝ անուններով տարբեր հասցեատերերի քարկոծելու համար:Գուցե դա մտքի պարապությա՞ն հետևանք է կամ այս տարածական դաշտում՝ ուշադրություն սևեռելու միջոց: Այս միջավայրն էլ մաքրություն է ուզում մեզանից՝ մաքուր խոսք, մաքուր վերաբերմունք, մի քիչ՝ տնավարի, նաև՝ հյուրընկալ, երբեմն՝ պաշտոնական կամ հարգալից՝ դրանով իսկ յուրովի մեր կերպարն ի ցույց դնելով ամենքին: Ասում են նաև, որ մարդու լեզուն և բնավորությունն իրար հետ անխզելիորեն կապված են: Մի մեծ ճշմարտություն, որին հակասելու առիթ չկա: Այդ բնավորությունը նաև նկատելի է այս տարածական միջավայրում, որտեղ մեզ համար կերպարներ են ստեղծվում: Այստեղ մենք ազատ ենք մեր շրջապատը ձևավորելու և ընկերների ընտրության հարցում, նույնպիսի ազատություն նկատելի է նաև մեր կարծիքներում, որոնց ոչ ոք իրավունք չունի բռնանալ:

Ի՞նչ է ինձ համար այս միջավայրը: Ամեն օր սոցցանց եմ մտնում, առաջին հերթին բացում եմ իմ էջը՝ այս յուրահատուկ լույսի աղբյուրի: Այն լրատվության հիանալի միջոց է, տեղեկատվական դաշտ, միայն թե ճիշտ և նպատակային օգտագործվի: Գիտելիքների լավագույն շտեմարան է, հետազոտական որոնումների հուսալի աղբյուր՝ ինքնակրթության ճանապարհին: Նորօրյա նամակագրություն է տարածական հեռավորության վրա՝ ժամանակի մեջ տեղավորված, ինքնահաստատման, ինքնաճանաչողության զարգացման ուղի՝ կատարած հղումների, գնահատանքների, իրար հետ կիսվելու արդյունքում:

Այն ասպարեզ է մրցույթների, բանավեճերի, նաև՝ մտածական ունակություններ դրսևորելու, ստեղծագործելու, հետաքրքրություններն ընդլայնելու համար: Ցանկացած հարթության շրջանակներում և փոխադարձ հղումների արդյունքում յուրաքանչյուրս յուրովի շփվում ենք մարդկանց հետ, ընթերցում նրանց գրառումները, կարծիքներ հայտնում, մեկնաբանություններ կատարում՝ մասնագիտական կամ հասարակական կյանքին առնչվող հարցերի շուրջ: Այս յուրահատուկ ընկերությունը, որը նաև որոշ դեպքերում արտաքնապես անճանաչելիության քողով է ծածկված, մարդկային հիանալի հարաբերությունների հաստատման ասպարեզ է ինձ համար, առողջ միջավայր՝ անկախ սեռից և տարիքից: Ուրեմն՝ մաքուր պահենք մեր միջավայրը, որտեղ կերպարներ են ստեղծվում, իրական մարդկային կերպարներ՝ ազնիվ մղումներով, հաստատուն քայլերով, բարի կամքի դրսևորումով, կերպարներ, որոնք, տարածությունու ժամանակ չճանաչելով, մոտենում են իրար, դառնում հարազատ: Բայց ասում են՝ «ոչինչ չանելն» էլ աշխատանք է, ուրեմն՝ ովքեր ոչինչ չեն անում այս տարածքում, ցանկալի կլինի, այդ հոգեմաշ պարապությունից հոգնած, ուրիշներին չանվանարկեն:

http://usarmenianews.com/am-n-7701.html

2017-01-10

ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ

Արտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենն է նա՝ Լիդիա Պետրոսյանը: Երբեմն ես նրա հետ եմ, նրա կողքին՝ մտերմիկ միջավայրում, երբեմն կիսում եմ նրա մտահոգությունը՝ դպրոցի հետ կապված տարբեր հարցերով: Նրա հետ զրուցում եմ, նա շատ անմիջական է, պարտավորվածության զգացումով, ու հիշողություններս ինձ տանում են 20 տարի առաջ այն 96 թվականը, երբ օտար ափերից դստերս հետ վերադարձա հայրենիք: Վերադարձանք, որ ապրենք մեր տանը, բայց ուրիշն էր ապրում իմ օջախում, իսկ ես պատերն էի համբուրում իմ բնակարանի, աղաչում նրանց, որ ազատեն այն: Մեր կողքին էր նա՝ դպրոցի տնօրենը, ով սատար կանգնեց մեզ՝ նորից բնակվելու մեր ծխապատ ու ծեփաթափ ոչ հարմարավետ տանը, որ ապօրինաբար ուրիշն էր սեփականացրել Արցախյան պատերազմից ու մեր բռնատեղահանությունից հետո:

Այդ 96-ից առաջ ես ունեի ևս մեկ 20 տարի: Դպրոցն ավարտելուց հետո անցել էր այդ երկու տասնյակ տարին, բայց երբևէ ինձ բախտ չէր վիճակվել միջնակարգը մտնելու՝ որպես ուսուցչուհի, որն իմ տարիների երազանքն էր: Նորից դպրոցի տնօրենն էր, որ հայտնեց ինձ այն ուրախ լուրը, թե դպրոցում ինձ դասաժամերն են սպասում…Ու ես՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, այդ 96-ի փետրվարին մտա դպրոց: Նա ինձ ուղեկցեց ուսուցչանոց և իմ՝ այն կարմիր գույնով բարձրագույնի դիպլոմը ձեռքին՝ թափահարեց՝ ի ցույց բոլորի, ու ինձ ներկայացրեց ուսուցիչներին…

Լիդիա Պետրոսյանը մաթեմատիկայի մասնագետ է, շռայլ հոգու տեր մի անձնավորություն, ով իր մանկավարժական երկարատև գործունեության շնորհիվ շրջապատում ձեռք է բերել հեղինակություն, իսկ տարիների ընթացքում տնօրենի պարտավորությունները մշտապես ուղեկցվել են ամենամյա հաջողություններով, որ հատուկ է եղել մեր դպրոցին: Նրա տքնաջան աշխատանքն ու նվիրյալ ջանքերն իզուր չեն

անցել, և երբեք չի մոռացվի նրա անձնական մասնակցությունը դպրոցի վերաշինման գործում դեռևս Արցախի հետպատերազմյան տարիներին:

1994 թ. սեպտեմբերի 1-ին նրա շնորհիվ Մարտակերտում նորից հնչեց դպրոցի ընդհատված զանգը՝ այդ ամռանը նրա նախաձեռնությամբ կատարված վերանորոգողական աշխատանքներից հետո: Դպրոցի դռները բացվեցին 300 աշակերտի համար, նրա խոսքով սկսվեց դպրոցի ուսումնական տարվա մեկնարկը, որը շարունակվեց տարիների ընթացքում, ու մինչ այսօր էլ նրա հետևողական աշխատանքի և անմնացորդ նվիրման շնորհիվ ամեն տարի մի նոր սերունդ է կյանք մտնում՝ տանելով իր հետ նրա մաղթանքներն ու պատգամները:

Ցանկացած աշխատանք գնահատականի և ուշադրության կարիք ունի, այդ առումով մեծ է Լիդիա Պետրոսյանի արցախնպաստ գործունեությունը, որի համար նա 2014 թ.-ին ԱՀ «Մայրություն» հասարակական կազմակերպության կողմից պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն» մեդալով, որը նվիրական ու խիզախումներով լի աշխատանքի արգասիք է:

Այս օրերին սահմանամերձ բնակավայրի մեր դպրոցում սովորում է 575 աշակերտ, ունենք բարձրագույն կրթությամբ 47 մանկավարժ, դպրոցում առկա են հումանիտար և բնագիտական ուղղվածությամբ հոսքային դասարաններ:

Մեր բնակավայրի ապրիլյան հրետակոծության հետքերը տեսանելի դարձան նաև դպրոցի վրա, չնայած այն միշտ էլ հիմնանորոգման կարիք ուներ, և այսօր էլ բարվոք դպրոցում դասավանդելը դարձել է բոլորիս համար երազանք: Բայց նաև հպարտությամբ ենք լցված, որ սահմանամերձ դպրոցի տնօրենի գլխավորությամբ բոլոր ուսուցիչներս էլ նոր սերնդի ուսմանը զուգահեռ՝ հայրենիքի պաշտպանի ձևավորման բարդ ու պատասխանատու աշխատանքն ենք կատարում՝ նպաստելով հայապահպանության կարևորագույն գործին:

Լիդիա Պետրոսյանը սոսկ մտավորական չէ: Ռազմարվեստի լեզվով ասած՝ մարտունակություն ու խիզախում կա նրա բոլոր ձեռնարկումներում, և նա սոսկ պարտականություններ կատարող չէ, այլ կրթադաստիարակչական քաղաքականություն իրականացնող հանրային կերպար: Ճիշտ ղեկավարից է ծնվում ճիշտ աշխատանքը: Խոստովանենք, որ նաև նրանից է սնվում մեր ոգեշնչումն ու մանկավարժական էնտուզիազմը, նվիրումն ու նախանձախնդրությունը:

http://usarmenianews.com/am-n-7717.html

2017-01-12

ԼՂՀ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐԸ

Մեծագույն շնորհակալություն ԱՄՆ Լոս Անջելեսի հայկական USArmenianews.com լրատվական կայքի խմբագիր հարգարժան Գայանե Մանուկյանին և ամբողջ խմբագրակազմին՝ մեր բնակավայրի կյանքը համայն հայությանը տեսանելի դարձնելու, սփյուռքում հայապահպանության, հայեցի խոսքն ամենուր հնչեցնելու համար:

Ամբողջ հայությունը մեզ հետ էր իր կարոտաբաղձ ու անհանգիստ տագնապներով, երբ ապրիլյան օրերին Արցախի սահմանին կանգնած հայ զինվորի ու սպայի մարտական ոգին էր թևածում կայքի էջերում, հրետակոծվող Մարտակերտի ցավալի կանչը, ազգի անպարտելիությունը, նրա հերոսական ոգին, հայոց մայրերի կարոտը, խաղաղ օրերի երազանքը, հայոց բանակի լինելությունը՝ հանձին Արցախի վաստակավոր մանկավարժ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատաշա Պողոսյանի՝ կայքին հղած բազմաթիվ հոդվածների:

Արդեն 2-րդ տարին է, ինչ կայքի «Մանկավարժի անկյունը» ուրվագծում է իր էջերում սահմանամերձ քաղաքի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցը, նրա աշակերտների ստեղծագործական միտքը, նոր սերնդի ուսումնադաստիարակչական ու հայրենանվեր գործունեությունը: Ամեն անգամ այդտեղ բարձրաձայնվում և ամրագրվում է հայ մարդու նկարագիրը՝ համեմված այն մեծ իմաստությամբ, որ մարդասիրությունն է ուսուցանելու իսկական արվեստը և մեր ազգի հարատևության երաշխիքը, որ հայ մարդը միշտ էլ մեծարել է մանկավարժի պատվավոր գործը, քանի որ հայապահպանության գործում առանձնապես նրանց է վերապահված այդ մեծ առաքելությունը:

Որպես տեղեկատվական աղբյուր՝ նորանոր հաջողություններ ենք մաղթում USArmenianews.com հայկական-լրատվական կայքի բոլոր աշխատողներին՝ խմբագիր Գայանե Մանուկյանի գլխավորությամբ, ցանկանում նոր ստեղծագործական վերելքներ հայակերտման սրբազան գործում:

Քաղաքային համայնքի ղեկավար՝ Մ. Գ. Գյուրջյան

Շնորհակալական խոսք

Մարտակերտի քաղաքային համայնքի ղեկավար Մ. Գ. Գյուրջյանին



Շատ ուրախալի էր, նաև մեծ անակնկալ՝ Ձեր կողմից անձիս՝ USArmenianews.com լրատվական կայքի խմբագրիս, և մեր կայքի ամբողջ խմբագրակազմին ուղղված շնորհակալագիրը, որն ընդունեցինք ջերմ զգացողությամբ: Միշտ էլ Արցախը համայն հայության ուշադրության կենտրոնում է, այդ մասին են վկայում նաև մեր կայքում տեղադրված բազմաթիվ նյութեր: Մենք՝ բոլորս էլ անհանգիստ սրտի տրոփյունով ապրիլյան օրերին մեր հայրենակիցների հետ էինք, առանձնապես՝ Մարտակերտի, նրա շրջակա գյուղերի բնակչության, սահմանում կատարվող իրադարձությունների ապրումներով: Հատկապես մեր պարծանքն է համարվում կայքի «Մանկավարժի անկյուն» բաժինը, որտեղ Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նատաշա Պողոսյանի՝ մեզ հղած մանկավարժական, ուսումնական, դաստիարակչական և այլ բազմաբնույթ ստեղծագործական հոդվածներով ներկայացնում է սահամամերձ դպրոցը, նրա աշակերտներին ու մանկավարժներին: Իմ և և կայքի բոլոր աշխատողների կողմից խորին շնորհակալություն Ձեզ, նաև համոզված ասենք, որ մեր համագործակցությունը շարունակական բնույթ կունենա, և այն կարձանագրվի նորանոր հաջողություններով:

Կայքի խմբագիր՝ Գայանե Մանուկյան

http://usarmenianews.com/am-n-7723.html

2017-01-13

ՈՂՋԵՐԻ ՄԵՋ ԵՆՔ ԳՏՆՈՒՄ ԸՆԿԱԾՆԵՐԻՆ

Ամեն օր Վլադիմիր Բալայանի անվան դպրոցն եմ մտնում, ամեն անգամ դպրոցում ես անցնում եմ նրա քարե հուշարձանի կողքով, ամեն օր ես տեսնում եմ նրա ավագ դստերը՝ Նաիրուհի Բալայանին, մի հմայիչ ու գեղեցիկ անձնավորություն, ով իր մասնագիտության հմուտ գիտակն է և իմ կողքին ամեն օր դասարան է մտնում, դասավանդում անգլերեն: Նա իր ընտանիքով ապրում է իմ հարևանությամբ, ես ամեն օր տեսնում եմ իմ կողքին ապրող Վլադիմիրի երկու թոռնիկներին, ովքեր նույնպես դպրոց մտնելիս անցնում են իրենց երիտասարդ պապիկի՝ քար դարձած հուշարձանի կողքով:

Վլադիմիր թոռնիկն ամեն օր մեզ հիշեցնում է մեր հերոս ազատամարտիկի մասին, ով լեգենդ դարձած ապրում է մեր հուշերում: Նրա որդին էլ Մարտակերտում է աշխատում, ամեն անգամ առիթից առիթ առնչվում եմ նրա հետ և ուրախ եմ, որ նա դեռևս տարիներ առաջ թողեց հայոց մայրաքաղաքը ու վերադարձավ հայրական տուն:
Եվ իմ ամեն օրերը կրկնվում են այսպես, ու ես ամեն օր մտովի խոնարհվում եմ նրա հուշարձանի առջև, ես ամեն օր մտովի բարևում եմ նրան, ով իմ հասակակիցն է, և նա այսօր չկա, բայց ապրում է բոլորիս սրտերում ու այդպես էլ կապրի հավերժ:

Ամեն օր այդ հուշարձանին նայելիս մեր ապրած օրերն եմ հիշում, տարիներ առաջվա մեր նկուղային կյանքը, այն մեծ հավատի մասին եմ հիշում, որ մարտակերտցիներիս ապրելու կամքն այն պատերազմական տարիներին նրանից էր կախված, մեր շնչելու օդը լցված էր Վլադիմիրով, մենք բոլորս ապրում էինք նրանով՝ անկախ նրանից, մեր կողքով քայլող ազատամարտիկին ճանաչում էինք, թե չէ...Եվ մենք՝ նկուղներում ամիսներ շարունակ պատսպարվածներս, դեռևս 92-ին, չնայած վախից կծկված՝ ամեն օր լուրերի էինք սպասում, երբևէ չէինք մտածում, որ թշնամու գնդակը հասու կլիներ նաև մեր ազատամարտիկ նվիրյալին, ում անունը տալիս էինք ու հանգիստ շնչում:

Ես նրան երկու անգամ եմ տեսել, երբ քաղաքս հրետակոծվում էր, հուսահատված փրկության ճանապարհ էի փնտրում, նա կողքովս համարյա վազելով անցավ, կողքիս ձայներ լսեցի, նրա անունն էին տալիս, հետ նայեցի, որ կենդանի լեգենդին տեսնեմ, նա արդեն չէր երևում: Նրան չտեսա, բայց մի նոր հավատ ծնվեց հոգումս, որ մենք կապրենք դեռ, քանի մեր կողքին քայլող վլադիմիրներ կան: Նրա հետ իմ երկրորդ հանդիպումն արտասվախառն էր, Աղաբեկալինջ գյուղում մասնակցում էի նրա հուղարկավորությանը...

Այդ օրը քաղաքս սգի մեջ էր, չէինք հավատում, այդ բոթաբեր լուրը ալիք-ալիք տարածվեց, հորձանք տվեց ու բոլորիս հանեց նկուղներից: Մոռացանք ահ ու սարսափ, համատարած սուգը բոլորիս տարավ դեպի Վլադիմիրի հարազատ գյուղը: Հրամանատարը չկար, սև գլխաշորերով նրա զինակից ընկերներն էին խրոխտ կանգնած, Լեոնիդի ելույթը արձագանք տվեց ու տարածվեց ամենուր՝ ձուլված բազմության հեկեկոցին: Այդ ոգեղեն ելույթը մի նոր հավատ ներշնչեց մեզ, հոգու խորքում համոզվեցինք՝ մենք պիտի ապրենք, որ Վլադիմիրի և բոլոր մյուս ազատամարտիկների անցած մարտական ճանապարհը հավերժացնենք: Բայց երբ սգո թափորը շարժվեց դեպի գերեզմանոց, նրա հետ թվաց՝ հողին հանձնեցինք մեր հավատն ու հույսը: Օրեր հետո կորցրինք Մարտակերտը, բայց տարի անցավ, վերագտանք այն նորից, վերածնվեցինք, նորից փլատակներից վեր հառանք, օջախ ստեղծեցինք, նորից դպրոցի զանգը հնչեց, այդ ողողանջները հասան ամենուր, որ նրա կանչից մեր զավակները վերադառնան տուն:

92-ի բռնագաղթից հետո Վլադիմիրի ընտանիքը տեղափոխվեց Երևան, նրա երեք երեխաներից ավագը տասներկու տարեկան Նաիրուհին էր: Տարիներ անց շատ-շատերի նման մանկավարժ դարձած դուստրը վերադարձավ… 2001-ին աշխատանքի ընդունվեց Մարտակերտի հ. 2 դպրոցում, հաջորդ տարի տեղափոխվեց իր լեգենդ դարձած հայրիկի անվան կրթօջախը, որ մոտիկ լինի նրան…

Նրա դուստրերի ու որդու մեջ փնտրում ու գտնում ենք նրան, ով ոչ թե մահացել, այլ միացել է հավերժությանը: Այո՛, այդպես ենք հզորանում՝ գնահատելով ու ապրեցնելով ընկածներին, ամենուր նրանց փնտրելով:

http://usarmenianews.com/am-n-7740.html

2017-01-14

ԵՍ ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ ՄԻ ԵՐԳ ԵՄ ՀՅՈՒՍԵԼ

Երբեմն ուսուցիչներիս միացնում է մի նոր մտերմիկ միջավայր, որտեղ անցյալը նորովի մեզ հյուր է գալիս, և այդ օրերում ափսոսում ենք մի անցած կյանք կամ գուցե օրեր, որ անվերադարձ են: Ու այդ անցյալում մեր կողքին տեսնում ենք մտերիմ մարդու, որ ամեն տարի գալիս է Մարտակերտ, այցելում իր հարազատներին ու հայրենակիցներին: Մի պահ կտրվում եմ մյուսներից և հայտնվում եմ նրա

կողքին, որ Հայաստանից է եկել, գյուղական դպրոցում դասավանդող ուսուցչուհին՝ Վիկտորյա Իսրայելյանը, ով սիրով պատմում է իր դպրոցի մասին: Փորձում եմ համեմատության եզրեր գտնել մեր դպրոցների միջև, և չգիտեմ ինչու, երանություն եմ տալիս մեզ, չնայած այս ձմռան եղանակին երբեմն մրսում ենք, երբեմն ծուխ կուլ տալիս մեր դասարանների փայտի վառարաններից:

Ինչու՞ եմ հպարտություն զգում այս մի հատիկ բառից, որ կոչվում է «ուսուցիչ», և հանկարծ մեկ այլ հպարտության զգացում գերիշխող է դառնում «Արցախի ուսուցչուհի» անվան կողքին, երբ այսքան մոտիկ ենք ապրում սահմանից: Եվ ես այդ նույն զգացողությամբ նրանց պատմում եմ, որ անցած տարին մանկավարժիս համար ստեղծագործական արարումների մի լայն շրջան էր, դպրոցական կյանքն իմաստավորելու մի մեծ ցանկություն, որն իրականություն դարձավ, և այն շարունակական կլինի մեր ուսուցիչների կերպարներով, ովքեր հայրենի հողի նվիրյալներ են: Կարծես ուզում եմ տեսնել անհոգ մարդ, բայց բոլորս էլ անցած օրերի անջինջ տպավորությունների մեջ ենք ու խաղաղություն ենք ուզում:

Եվ ժամեր անց մենությանս մեջ ես մտովի մեր ուսուցչուհիների հետ եմ, մի նոր երգ է ծնվում հոգումս, որ այն նվիրեմ ամենքին: Ու այդ օրը գեղեցիկ է թվում ինձ, գեղեցիկ է դառնում նաև հասարակ մի բառ, որ ստեղծվում է պատահաբար: Խաղաղ կյանքի մի նոր երգ է

այն, որ այս ձմռան եղանակին արևոտ օրեր է ուզում: Եվ ես բառեր եմ փնտրում, որ բոլորիս համար խաղաղ օրերի մի հեքիաթ հյուսեմ:

«Արևե՞լ», թե՞ «ձյունել», բառերն ինձ դուր են գալիս, ու այն մեկը՝ արևը, արևներ եմ դարձնում, որ արևոտված օրս փռեմ ամենուր բոլորի համար: Արևածագի երազանքս արևամուտին դառնում է կախարդական՝ մայրամուտի գույներով երիզված, կարոտս դառնում է արևահարված մի հարազատ կսկիծ, արևոտ նայվածքս՝ հանդարտ ու խորհրդավոր... Խաղաղ մի թախիծ պատում է հոգիս արև օրվան հաջորդող անձրևի միալար կաթկթոցի պես:

Արևի ջերմությամբ հարբած՝ մի սիրուն մեղեդի ձուլվում է էությանս, այդտեղ արևի դեղին ծաղիկներ եմ տեսնում, հեզիկ խոնարհումով արևի երգն են երգում, և կյանք կա այնտեղ, արևոտ ժպիտներ, ձյունի ծիծաղ կա այնտեղ, որ արևի հետ պար է բռնել...Ու այսպես կյանքը գեղեցիկ է դառնում, որտեղ արևներ կան շատ, պահն էլ գեղեցիկ է դառնում, երբ ձյան սառնության մեջ արև եմ փնտրում ու իմ արևներին իրար կողքի եմ դնում, որ սրտաբաց մի հեքիաթ պատմեն ձյան մեջ փայլող արևի շողերի մասին... Արևոտվա՞ծ, թե՞ ձյունոտված, երկուսն էլ լավ են հնչում, արևի մեջ ժպիտներ կան շատ, ձյունի մեջ՝ ծիծաղներ, սիրում եմ, երբ ձյունոտված օրս արևոտ է դառնում, և ժպիտների փնջերի մեջ ծիծաղներ եմ տեսնում: Ու այդ ծիծաղները փռում եմ ամենուր, որ արևոտված այս սիրուն մեղեդին ձուլվի մեր էությանը և հնչի բոլորիս հոգում՝ որպես խաղաղ օրերի մի նոր երգ:

Թող հուշերից ծնված բոլոր երգերն իմաստավորեն մեր կյանքն ու գործը: Իսկ ո՞վ է ասել, որ միմիայն ուրախության ու երջանկության համար ենք ապրում: Կյանքը դժվարություններով է իմաստ ու երանգ ստանում՝ դառնալով հեքիաթ ու երգ...

http://usarmenianews.com/am-n-7746.html

2017-01-16

ԾԱՂԿԱՄԱՆԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Սարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի դահլիճը լեփ-լեցուն էր, բեմը՝ գեղեցիկ ձևավորված, երեխաները՝ յուրովի իրենց դերերի մեջ: Սուրեն Մուրադյանի «Ծաղկամանի գաղտնիքը» պիես-հեքիաթի բեմականացումն իր շուրջն էր համախմբել դպրոցի տնօրենությանը, ուսուցիչներին, աշակերտներին ու նրանց ծնողներին: Աննկատ չէր բոլորի հետաքրքրությունը, թե ինչպես էին նախատեսել բեմականացնելու այս ստեղծագործությունն իմ դասղեկական 7-րդ ա դասարանի մի քանի դեռահասներ, ովքեր ընդգրկված էին դպրոցի ասմունքի խմբակի մեջ:

Երրորդ տարին է, ինչ խմբակավար Սվետլանա Դալլաքյանն իր աշխատանքի պտուղները հրամցնում է բոլորիս: Ուստարվա ընթացքում շաբաթվա երկու օրը դասերից հետո նա այդ աշակերտների հետ է: Իր գործի անմնացորդ նվիրյալն է, ում նկատմամբ սերն ու համակրանքը տեսանելի է բոլորիս: Եվ ահա միջոցառման բացման խոսքը նրա դուրեկան ձայնով է սկսվում, և համակ ուշադրությամբ լսում ենք Արցախի կյանքի՝ մեր օրերին միախառնված հեքիաթի բեմականացման նպատակաուղղվածության մասին, որ ի հեճուկս մեր թշնամիների՝ հայ մարդը արարող է, ստեղծարար, խաղաղասեր, դժվարություններ հաղթահարող, ու այն արձագանքվում է այդ երեխաների խոսքերով:

Միշտ էլ հեքիաթներում բարի ու չար ուժերի պայքարն է իմաստավորում մարդու բնույթը, և բեմում այս երեխաները բարձրաձայնում են այն մեծ գաղափարը, որ մարդը սերունդների օղակ է, նրան երազանքների իրականացման հնարավորություն է տրված, բայց նաև մարդը մահկանացու է, ումից անխուսափելի է մահը: Այդ ճանապարհին արարող մարդը դառնում է հնարամիտ, հրաշագործ, անընդհատ որոնող, հանդես է գալիս իր անսասան ուժով, իմաստությամբ, կենսասի-

րությամբ, լավատեսությամբ ու հաղթում է չար ուժերին, կեղծարարներին ու փառասերներին:

Պիեսում տեսնում ենք տարբեր խավերի պատկանող մարդկանց՝ թագավոր ու նրա դուստրը, պալատական վեզիրներ, ծաղկաբույծ հողագործ, նաև՝ սիրո և փառքի պայքար, որտեղ հաղթում է իսկական սերը՝ համեմված ծաղկամանի գաղտնիքով, և ամրագրվում է այն հզոր

միտքը, որ հայրենիքը բարգավաճում է միայն բարի, ազնիվ, արդար, խիզախ, արարող մարդկանց շնորհիվ: Մարդասիրության, իսկական սիրո, խաղաղ կյանքի գաղափարով ու քնարական շնչով եզրափակվում է պիեսը՝ հաստատելով, որ ամենանվիրականը «հայրենի հողն է, որի համար զոհվում են մարդիկ, ամենաշռայլը նույնպես հայրենի հողն է, որքան շատ աշխատես, այնքան շռայլ ու առատաձեռն կվարձատրվես:

Ամենից հարուստը դարձյալ հողն է. նա իր ընդերքում անհամար գանձեր ունի»:

Բեմում հնչող երաժշտությամբ, դերերի մեջ գտնվող երեխաների երգով ու պարով ավարտվում է միջոցառումը:

Աշխատանքն ու շիտակ խոսքը
Թո՛ղ որ երկրում հաղթանակեն,
Խնդությունն ու երազանքը
Բոլոր մարդկանց թո՛ղ համակեն:
Երջանկության ծաղկի բույրը
Թո՛ղ տարածվի ողջ երկրով մեկ,
Ե՛վ պալատում, և՛ամեն տեղ
Թո՛ղ միշտ հնչեն ծիծաղ ու երգ:

Դպրոցի տնօրեն Լիդիա Պետրոսյանի և մանկավարժիս՝ երեխաներին ու խմբակավար Սվետլանա Դալլաքյանին ուղղված շնորհակալական խոսքերով եզրափակվում է միջոցառումը:

http://usarmenianews.com/am -n-7751.html

2017-01-17

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՀՆՉԱԾ ԵՐԳԸ

Այս օրերին մի նոր երգի տեսահոլովակ ծնվեց մեր դպրոցի անցած ուստարվա շրջանավարտ Սերգեյ Զաքարյանի կատարմամբ: Այդ մասին չգիտեի, բայց սովորության համաձայն՝ այս անգամ էլ նա ուղարկեց ինձ՝ մանկավարժիս կարծիքն իմանալու համար: Մտորումների մեջ ընկա՝ տեսնելով զինվորական համազգեստով դեպի հայրենի դիրքերը ծառայության մեկնող զինվորին երգելիս: Նրա ձեռքին կիթառ էր, որի դյութիչ մեղեդու տակ խրոխտ հնչում էր այդ հրաշալի երգը:

Շուտով ես նրան հրավիրում եմ դպրոց: Պարզվում է՝ նա հունվարի 23-ին մեկնում է զինվորական ժամկետային պարտադիր ծառայության, նոր տեսահոլովակի ծննդյան մտահղացումն էլ իրենն է: Հոգում շաղախած մտորումները պիտի երգ դառնային ծառայության մեկնելուց առաջ: Նրան ուղղված իմ հարցերում ես տեսնում եմ մեր դպրոցի շրջանավարտին՝ «Վերջին զանգի» ժամանակ: Ապրիլյան զոհերին նվիրված նրա «Կա՛նգ առ, պատերա՛զմ» երգի նոր տեսահոլովակը, որ թնդում էր ամենուր, այդ օրն իր շուրջն էր համախմբել տարբեր կրթօջախներ տեղափոխված մեր դպրոցի շրջանավարտներին: Նրա երգով և բոլորիս արցունքներով սկսվեց ու վերջացավ «Վերջին զանգի» միջոցառումը:

Դպրոցն ավարտած և երգելու տաղանդով օժտված Սերգեյ Զաքարյանի համար Մարտակերտի մշակույթի տան դռները բաց էին, և շուտով նա աշխատանքի ընդունվեց: Սեպտեմբերի 24-ին ես նրա հրավերով մասնակցում էի իր մենահամերգին, այնուհետև նրան հեռվից հեռու տեսնում էի դիրքերում, որ երբեմն ինքն էլ իր ընկերների հետ այցի էր գնում զինվորներին, ոգևորում նրանց իր սքանչելի երգերի կատարումով:

Նա գոհունակություն ունի հայտնելու մարդկանց, ովքեր նպաստել են այս երաժշտական տեսահոլովակի ստեղծմանը: Երգի համակարգողն է Էդգար Ալեքսանյանը, իրենց ներդրումն ունեն այդտեղ մեր հայրենակից ռեփերներ Սպարտակ Հովսեփյանը և Արսեն Շիրինյանը: Նկարահանումը կատարվել է Էրիկ Պողոսյանի կողմից մեզանից ոչ հեռու գտնվող Տիգրանակերտի բարձունքի Վանքասարի եկեղեցու մոտ: Մարտակերտի շրջանային արհմիության նախագահ Միհեր Մանգասարյանի հովանավորությամբ է այն ի կատար ածվել, ձայնագրվել է Ստեփանակերտի «Անի» ստուդիայում:

«Մարտում», այսպես է կոչվում այս նոր նկարահանված երգի տեսահոլովակի վերնագիրը, որը մի պահ ցնցել էր ինձ: Ուզում եմ նրան և հայրենիքին զինվորագրված բոլոր տղաներին տեսնել խաղաղ օրերում երգի հնչյունների տակ. դա բոլորիս ցանկությունն է: Եվ իմ հարցին, թե ինչպես է տրամադրված հայրենիքի ապագա զինվորը, նա մեղմ ու զմայլելի մի ժպիտ է խաղացնում դեմքին ու պատրաստակամ կեցվածքով իր մարտական տրամադրությունն է արտահայտում:

Շնորհավորում եմ Մարտակերտում այս հիանալի հայրենասիրական նոր տեսահոլովակի ծնունդը և բարի ճանապարհ մաղթում երգիչ Սերգեյ Զաքարյանին ու բոլոր այն տղաներին, ովքեր մեկնում են զինվորական ծառայության: Թող խաղաղ լինի երկինքը, անփորձանք՝ սահմանը պահող զինվորների կյանքը:

Տեսահոլովակ https://www.youtube.com/watch?v=u7YFDg6T7-Q

http://usarmenianews.com/am-n-7758.html

2017-01-18

ԵՐԿՈՒ ՆԱՀԱՏԱԿ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺ ՔՈՒՅՐԸ

Հոգուս մեջ մի անհաշտ լռություն աղաղակում է, երբ նայում եմ նրանց նկարներին, և այդ խռովքը երբեմն ինձ հետ դպրոցի ճանապարհին է, երբ մենք միասին ենք՝ երբեմն հանգիստ զրուցելով, երբեմն շտապ քայլելով, երբեմն էլ՝ պատահական մեր կողքին կանգնած մեքենայի ուղևորուհիները դառնալով: Պատահում է, երբ մտնում եմ ուսուցչանոց, հայացքս հառում եմ դեպ այն կողմը, որտեղ սովորաբար նստում է նա՝ մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցչուհի Լյուդմիլա Ավագիմյանը՝ երկու նահատակ եղբայրների քույրը: Նա միշտ էլ լուրջ է, հավասարակշիռ, չափի զգացումով, զուսպ կեցվածքով, մանկավարժին հարիր պահվածքով, այս մեծագույն ցավը անթեղած հոգում:

Ես զրուցում եմ նրա հետ, մի պահ քարանում է հայացքը, մեծագույն վիշտը նրան տանում է դեպի այն հեռավոր օրերը, այն սեպտեմբերի սկիզբը, որ դպրոցի զանգի ղողանջներին փոխարինել էր սարսափելի գույժը՝ կրսեր եղբոր՝ Սամվելի՝ Չլդրանի պաշտպանական մարտերում զոհվելու մասին: Դիրքերում մենակ մնացած ազատամարտիկը վերջին փամփուշտն իր համար պիտի օգտագործեր՝ թշնամու ձեռքը չընկնելու համար:

Մի պահ լռում է, խոսքերն այն չեն, որ կարողանան սփոփել նրան, լռում է, ու այդ լռությունն ինձ տանում է այն նույն 92 թվականի նոյեմբերի 22-ը, ընդամենը 82 օր անց, նորից բոթաբեր լուր՝ ավագ եղբոր՝ Վաչագանի զոհվելու մասին Բաշ-Գյունեփայայի համար մղվող

մարտերում: Եվ տարիներ անց մտերիմ ընկերը, վիշտը սփոփելու համար, իր նորածին մանկանը Վաչե պիտի կոչեր նրա անունով:

Նորից խոսքերը կորցնում են իրենց արժեքը, բառերը խուլ հառաչում են՝ իրենց տեղը չգտնելով, քարանում է սիրտդ, այդ ինչպես է մարդը դիմանում, երբ աղաղակելն էլ անօգուտ է, Աստված կանչելն էլ՝ անիմաստ, ահեղադղորդ գոռալն էլ քիչ է, ուզում ես հանդարտեցնել հոգիդ, փրկության ճանապարհը դառնում է այն խուլ լռությունը, որ երկուսիս համրացնում է: Նոր օրերում ես տեսնում եմ մեր դպրոցի շրջանավարտին՝ Լյուդմիլայի կրտսեր եղբոր անունով կնքված Սամվել որդուն, որ զինվորական պարտադիր ծառայությունից հետո մնաց հայոց բանակում: Այն ծանր ապրիլյան օրերին մայրական մղկտացող սիրտը ձայն չհանեց, նա լուռ էր, ինչպես միշտ, իսկ այդ լռությունն ամեն ինչ ասում էր:

Իմ հիշողության մեջ, դեռ կենդանության օրոք, այս երկու եղբայրների մայրն է…96-ին օտար ափերից վերադառնալուց հետո չճանաչեցի, միանգամից ծերացած տեսա նրան, բայց իմ մտապատկերում մնաց այն երիտասարդ տարիների ժպտադեմ կինը:

Հարցերս կցկտուր են դառնում… Արցախյան պատերազմից հետո հեռուներում ապաստան գտած մեր ուսուցչուհու ընտանիքի վերադարձը հայրենիք ամենահուսալին էր: Նորից տուն եկան, իրենց հարազատ տունը, նա եկավ, որ նորից դպրոց մտնի և մոտիկ լինի Ստեփանակերտի հուշահամալիրում հանգչող հարազատների շիրիմներին:

http://usarmenianews.com/am-n-7772.html

2017-01-23

ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՄԱՍՎԱՐԸ

Հետպատերազմյան տարիներից Էլլադա Աղասյանը Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի ուսմասվարն է: 94-ի ամռանը վերանորոգման աշխատանքներից հետո նա դարձավ վերաբացված դպրոցի հենասյուներից մեկը, իր գործին նվիրված անհատականություն, որ առայսօր էլ շարունակում է իր մանկավարժական գործունեությունը: Մինչ Արցախյան պատերազմը՝ դեռևս 1977 թվականից, նա դպրոցում դասավանդում էր ֆիզիկա:

Բռնագաղթից հետո՝ 94 թվականին, ընտանիքով հարազատ ծննդավայրում էր: Վերադարձավ ալեկոծված մարդու ներքնաշխարհով, մեծագույն տառապանքով: Դպրոց մտավ վշտահար, մինուճար եղբոր կորուստը սրտում, նրա անհայր մնացած երկու որդիների կսկիծը հոգում: Տրորված մի կյանք, խաթարված մի ճակատագիր նրան ուղեկցեց տարիներ շարունակ, որ իր կողքին էր, ոչ շատ հեռու՝ Մարտակերտի գերեզմանոցում: Հայրենի հողին պահ տված ազատամարտիկի կողքին տարիներ անց տեղ բացվեց ավտովթարից մահացած նրա կնոջ ու փոքրիկ թոռնուհու համար, որ նույն օրը դարձան դժբախտ պատահարի զոհ:

Մորմոքիչ հուշը երբեմն գալիս է այցի, և հուշի մի փոքրիկ անդրադարձ բերում է իր հետ անցյալի մի պատառիկ: 96-ին հեռավոր ափերից վերադարձա հայրենի տուն, դպրոցի զոհված շրջանավարտների անկյունում տեսա Միշա Աղասյանի նկարը՝ այն գեղեցիկ երիտասարդին: Չէի հավատում, իմ մտապատկերում այն դպրոցականն էր՝ իմ պատմության ուսուցչուհու՝ Հրանուշ Հարությունյանի մինուճար որդին: Իմացա, որ նա զոհվել էր 1994 թվականի հունվարի 31-ին Մարտակերտի «Պուշկեն յալ» բարձունքում, ականի պայթյունից:

Ազգի ցավը բոլորինս է դառնում, երբ այստեղ զոհեր ունենք, ու մենք այստեղ ենք՝ մայր հողի գրկում՝ այս հողի ճաքճքած հառաչանքներին ականջալուր: Կարծես հավատարմության երդում ենք տվել

առ հայրենին, որ այստեղ պիտի լինենք՝ այս հողին կառչած, որ դարձել է սրբազան մասունք, ձուլվել մեր էությանը, դարձել մեր գոյության խորհրդանիշը:

Ես զրուցում եմ Էլլադա Աղասյանի հետ, ապրած զգացումը մաքուր է դառնում, ինքնաբուխ, երբ նրա խոսքում տեսնում եմ մի քանի ուսուցիչների դեռ այն օրերին՝ 94-ի ամռանը, երբ դպրոցի տնօրեն Լիդիա Պետրոսյանը պատուհանների ապակիներն էր հագցնում, իսկ իրենք մաքրություն էին անում, որ հասցնեն պատերազմից հետո նորաբաց դպրոցում սեպտեմբերին նորից զանգը հնչեցնել:



Եվ ողողանջեց այդ զանգը տարիներ շարունակ, առայսօր էլ այն հնչում է՝ իր շուրջը հավաքելով օրըստօրե ավելացող աշակերտներով: Եվ այսպես սերնդափոխության ճանապարհին ամեն ուսումնական տարի գալիս են նորերը, ուսում ստանում, շարունակում մեծարել նրանց հիշատակը, ովքեր նահատակվեցին հանուն հայրենյաց հողի:

Վիշտն ու կորուստը չեն ընկճել Աղասյան մանկավարժի միտքն ու կամքը: Կորուստ ունեցող մանկավարժների դաստիարակչական աշխատանքն ավելի մաքուր է ու առավել ազդեցիկ, իսկ այդ ազդեցությունն անմահների անխոս հրամաններից է:

http://usarmenianews.com/am-n-7808.html

2017-01-24

ԱՆՇՈՒՔ, ԲԱՅՑ ՋԵՐՄՈՒԹՅԱՄԲ ԼԵՑՈՒՆ ՄԵՐ ՀԱՐԱԶԱՏ ԴՊՐՈՑԸ

Սա Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցն է, երկու պատերազմ տեսած, արտաքուստ անշուք մեր հարազատ կրթօջախը: Տխուր հետքեր կան այստեղ, անցյալի հուշեր, զանգի «քարացած» ղողանջների հիշողություն կա այստեղ, երկնքում թառած ամպի քուլաներ…Արկերի հարվածներից դողացող սրտեր կան այստեղ, առ երկինք հառած հայացքներ, հառաչանքներ կան շատ, բայց դրանց հակադարձված ժպիտների անսահմանություն, կենսուրախ մի կյանք, ջերմությամբ լեցուն մաքուր հոգիներ:

Այս անշուք դպրոցի պատերի ներսում երբևէ չէի լսել, որ մեր աշակերտները դժգոհեին, թե այս անմխիթար պայմանների պատճառով դաս չեն սովորել: Տարբեր արդարացումների կողքին անտեսվում էր այդ հանգամանքը, և իմ հիշողության մեջ այն աշակերտներն են, որոնց հիմա չեմ դասավանդում:

Տնային աշխատանքը, որ հանձնարարել էի 7-րդ դասարանում. «Արդյո՞ք շենքային անմխիթար պայմանները խանգարում են մեր դաս սովորելուն», այդ օրը զուգահեռվեց հայոց լեզվի «Ածական» թեմային: Աշակերտները չնայած առատ ածականներ էին օգտագործել իրենց ձևավորած նախադասություններում, բայց մի կողմից ինձ հետաքրքրեց այդ առաջադրանքի իմաստային կողմը, թե ինչպիսի զգացողություն ունեն մեր դպրոցականները, երբ այսպիսի պայմաններում են սովորում:

«Ես նույնպես կցանկանայի սովորել հարմարավետ, կահավորված դպրոցում, լավ կլիներ ունենայինք նորմալ մարզադահլիճ... Կարծում եմ՝ լավ, կայուն գիտելիքներ ստանալու համար դպրոցի շքեղ տեսքը այդքան էլ էական չէ, բայց ցանկալի է» /Ստեփանյան Արեգ/:

«Ճիշտ է, մենք ձգտում ենք ուշադրություն չդարձնել մեր դպրոցի վատթարագույն պայմաններին, բայց երբ հիշում ենք, որ արդեն 21-րդ դարն է, զարմանում ենք, նաև զգում, որ մենք անզոր ենք դիմակայելու այս ճնշող պայմաններին, առանձնապես մեր խղճուկ պատերին» /Հակոբջանյան Մերի/:

«Դպրոցի կիսաքանդ պատերն ու ճաք տված հատակներն ամեն օր «վերանորոգում» են աղերսում, այդ պահանջն առավելապես ցայտուն երևում է աշնան ու ձմռան ցուրտ ամիսներին: Դեռ տարիներ առաջ էի լսել, որ պիտի վերանորոգվի, բայց այն մնաց մեզ համար ցանկալի երազանք» /Պետրոսյան Կարինե/:

«Սովորող երեխան ամեն վիճակի էլ հարմարվում է, բայց բոլորս էլ ցանկանում ենք սովորել հարմարավետ դպրոցում: Ճիշտն ասած, հույս չունեմ, որ ես կտեսնեմ, թեկուզ ամաչելով եմ ասում, կուզեի տարիներ հետո գոնե իմ երեխաները լավ պայմաններում սովորեին» /Մակյան Դավիթ/:

«Այս ամիսներին ծխապատ դասարանում դաս վարելը մեզ համար սովորական երևույթ է դարձել, դրան էլ ենք հարմարվել, միայն զոհեր չլինեն: Իմ դաս սովորելն ամենևին կապ չունի ոչ հարմարավետ պայմանների հետ, միշտ էլ սիրով եմ դպրոց հաճախում» /Մարտիրոսյան Արմո/:

«Ես էլ եմ ուզում մեր դպրոցը տեսնել վերանորոգված, դասասենյակները՝ կահավորված ու ջեռուցված: Մայրիկիս պատմելով՝ այս դպրոցը մինչև պատերազմը բարեկարգ էր, այն Արցախի լավագույն կրթօջախներից մեկն էր» /Հարությունյան Հարություն/:

«Թեև դպրոցի շենքը գտնվում է անմխիթար վիճակում, բայց դա մեզ համար դաս չսովորելու պատճառ չի հանդիսանում, միայն թե պատերազմ չլինի» /Այվազյան Դարիկո/:

Հիշողությանս մեջ այս երեխաների ճշմարտացի խոսքերն են, և իմ անհանգիստ մտորումները... Երանի թե խաղաղ երկնքի տակ կարողանայինք վերանորոգված դպրոցի մասին երազել, բայց նաև դժգոհ չեմ, որ անշուք, բայց ջերմությամբ լեցուն՝ ինձ շատ հարազատ դպրոցում եմ դասավանդում:

http://usarmenianews.com/am-n-7828.html

2017-01-25

ՄԻ՞ԹԵ, ԱՇԽԱՐՀ, ՍԽԱԼ ԿԼԻՆԵՐ, ԵԹԵ ԻՐ ՏՈՆԻՆ ՆԱ ՆԵՐԿԱ ԼԻՆԵՐ

Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում կազմակերպված հուշ-ցերեկույթը՝ Ն պաշտպանական շրջանի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, փոխգնդապետ Ալիկ Սարգսյանի նախաձեռնությամբ, նվիրված էր Արցախյան ազատամարտի նահատակ Սլավա Ներսիսյանի ծննդյան 60-րդ տարելիցին: Միջոցառմանը մասնակցում էին դպրոցի տնօրենությունը, ուսուցիչներ, զինվորականներ, մարտական ընկերներ, հյուրեր, աշակերտներ: Այն սկսվեց դպրոցի սովորողների հետ ուսումնադաստիարակչականաշխատանքների կազմակերպիչ Կարինե Բալասանյանի խոսքով: Զինվորական նվագախմբի խրոխտ հնչյունների ներքո հոտնկայս հարգեցինք Արցախյան ազատամարտի նվիրյալների հիշատակը:

10-րդ դասարանի աշակերտուհի Տաթև Ղահրամանյանի ելույթն Արցախի բարձունքները տենչացող հատուկ վաշտի հրամանատար Սլավա Ներսիսյանի անցած հերոսական ճանապարհն էր, նախկինում ներքին գործերի շրջանային բաժնի պատասխանատու աշխատողներից մեկը, ով 92-ի հուլիսին նշանակված էր այդ բաժնի պետ: Բազմաթիվ մարտերում թրծված ազատամարտիկն օրեր հետո՝ օգոստոսի 18-ին, ծանր վիրավորվեց խրամատում ընկած թշնամու արկից: Նրա երկու ընկերները՝ Վանիկ Միրզոյանը և Իգոր Բաղունցը, զոհվեցին, իսկ իրեն տեղափոխեցին Երևան, բայց փրկել չհաջողվեց: Երկու օր հետո 35 տարեկանում վախճանվեց աննկուն հրամանատարը՝ որբ թողնելով իր երկու զավակներին: Նրան հողին հանձնեցին Երևանի Շահումյանի գերեզմանոցում: Հավերժացավ մի կյանք՝ գիտակցելով, որ «մահ իմացյալ անմահություն է»:

Ամբողջ միջոցառման ընթացքում Արցախյան ազատամարտի նվիրյալների մասին ֆիլմի դրվագների ցուցադրում էր, որին զուգահեռ հնչում էին ելույթ ունեցողների խոսքերը դեպի Սարսանգի ջրամբար թշնամու առաջխաղացումը կանխող հրամանատարի ու նրա զինակիցների մասին: Դպրոցի ուսուցիչ, Արցախյան պատերազմի ճանապարհ անցած Գառնիկ Իսրայելյանի ելույթն ազատամարտիկ հայրենակցի մարտական ճանապարհը բարձրագույնս գնահատողի խոսք էր:

Փոխգնդապետ Ալիկ Սարգսյանն ամբողջացրեց սերունդների դաստիարակությանն ուղղված գիտակցական մահվան ճանապարհն ընտրած հերոսների հիշատակը՝ հայրենյաց նվիրյալ Սլավա Ներսիսյանի կերպարով: Դա հերոսական մաքառումների ճանապարհ է, երբ



մարդը գիտակցում է, որ ինքը գնում է անձնազոհության, դա անմնացորդ նվիրաբերում է հայրենիքին: Նրա ելույթն ապրողներիս, սերունդների համար զգոնության կոչ էր, որով բանաձևվվեց այս տարածքում մեր ինքնապաշտպանությամբ գոյատևելու ուղին:

Իմ դասղեկական 7-րդ ա դասարանի աշակերտների ասմունքին միահյուսված էին հայրենասիրական երգերը՝ 5-րդ ա դասարանի մի քանի աշակերտների մասնակցությամբ: Նրանց խոսքերում հնչում էր սերնդի կողմից մեր հայորդիներին հիշելու սուրբ պատվիրանը. «Այս տղաները, որ հիմա ընկան, Այրվում են, մարում Արցախիս համար, Աստղեր են դառնում, հավիտյան հառնում: Որպես փրկության բախտի ուղենիշ՝ Մենք լեգենդներին չէինք հավատում, Բայց ձեզ իրական լեգենդ ենք պատմում, Ամեն նահատակ ընկնում է հիմա, Որ երբեք-երբեք էլ չմահանա»:

Ներկա ու գալիք սերունդների համար դաստիարակչական դաս էր այս միջոցառումը, անմահների անցած ճանապարհի մասին հիշողություն, հերոսի ծննդյան օրվա հիշատակ, որ ավարտվեց զինվորական նվագախմբի արձագանքների տակ:

http://usarmenianews.com/am-n-7844.html

2017-01-27

ՏՈՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ

Հայոց բանակի ծննդյան 25-ամյակն է, ազգի նվիրյալների տոնը: Այս օրը հիշենք նրանց, ովքեր հիմք դրեցին զինված ուժերին, հարգանքի տուրք մատուցենք հանուն հայրենիքի զոհվածների հիշատակին, մեր երախտագիտությունը հայտնենք հայոց բանակում իրենց մարտական ավանդն ունեցող ազգի զավակներին, նրանց, ովքեր այսօր էլ շարունակում են ծառայել ազգային բանակում:

Շնորհավորանքս համայն հայությանը, առանձնապես սահմանամերձ բնակավայրերում ապրողներիս, ովքեր թև ու թիկունքն են հայոց բանակի:

Ազգային պետության անկախության պահպանման երաշխիքը մարտունակ բանակի ստեղծումն էր, որ կազմավորվեց 1992-ի հունվարի 28-ին: Այդ օրը «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» բանաձև ընդունվեց, որն էլ դարձավ ազգային բանակի ստեղծման սկիզբը: Զինված ուժերի գերագույն խնդիրը դարձավ սեփական ժողովրդի անվտանգության ապահովումը, հայրենիքի ամբողջականության և ազգային պետական շահերի պաշտպանությունը, և այն մեր հոգում ամրագրվեց որպես ազգի անպարտելիության, նրա հերոսական ոգու, ազգային հպարտության, հերոսացումի և նվիրաբերումի հավերժական տոն:

Արցախյան ազատամարտի հերոսական ճանապարհ անցած ազգի նվիրյալների տոնն է համարվում, որ ծանր փորձություններով անցան, և բանակի խաղաղ կառուցման ներշնչմամբ այս օրը դարձրին մեր անկախության երաշխիքը, մեր ներկան ու գալիք օրը: Սահմանին կանգնած հայ զինվորի ու սպայի մարտական ոգին է հայոց բանակը, հանուն հայրենյաց նահատակվածների հիշատակը, ապրիլյան պատերազմով անցած մեր քաջորդիների հերոսական ուղին, մեր անվտանգության պահպանման և խաղաղության հարատևության երաշխավորը, որն իր ներսում ապրելու, գործելու և արարելու հզոր կամք ունի ամբարած:

Մեր խաղաղ ու անվտանգ օրերի երաշխավորն է հայոց բանակը, մեր երկրի երջանիկ ու պայծառ ապագան: Հայոց բանակը մեր գոյությունն է, մեր ապրած ամեն մի օրը՝ հայ զինվորի կորստյան դառնագին բոթով ամրագրված: Հայոց մայրերի կարոտի կանչն է այն, խաղաղ օրերի մեր երազանքը, հայոց բանակը մեր լինելությունն է՝ այս տոնական օրով հավերժացված:Հայոց բանակը Արցախի սահմանամերձ բնակավայրիս խաղաղ գիշերն է, նրա ամեն մի լուսաբացը, հայոց բանակը մեր հիշողությունն է՝ գալիք խաղաղ օրերի երազանքներով փառավորված:

http://usarmenianews.com/am-n-7872.html

2017-01-28

ԵՎՍ ՄԵԿ ՀԱՅՐԵՆՅԱՑ ԴԱՍ

Դարերի պատմության ընթացքում ողջ հայության առջև, որպես հավերժորեն բաց մի ընծայարան, դրվեց մեր հայրենին, ուր ամեն ոք անցավ ընծայաբերման իր ճամփան և արժանացավ երկնային անդաստաններին: Եվ այդ դարերի ընթացքում հայրենի ոստանի նվիրյալ զինվորներին բաժին հասավ իրենց նվիրաբերելու երդումը:

Այդ նրանք են, որ Արցախյան ազատամարտի բովով անցան, հասան ապրիլյան պատերազմ ու դարձան իրենց կյանքերն ընծայաբերողներ: Այդ նրանք են, որ այսօր էլ, սահմանին կանգնած, գիտակցում են, որ հայրենիքի պաշտպանության վեհ գործին իրենց պետք է զոհաբերեն, որ կանգուն մնա հող հայրենին: Նրանք են, որ հավատարիմ իրենց երդմանն ու առաքելությանը՝ գալիս են դարերից ու այսպես գնում հավերժացած անուններով:

Իր կյանքը հող հայրենիին ընծայաբերած հայորդի Զորիկ Գևորգյանին էր նվիրված հուշ-ցերեկույթը Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում հայոց բանակի 25-րդ տարեդարձի տոնական օրը: Այդտեղ էին շրջանի պետական և զինվորական կառույցների ներկայացուցիչները, նահատակ քաջորդու հարազատները, մարտական ընկերները, դպրոցի տնօրենությունը, ուսուցիչներ, աշակերտներ, որ հավաքվել էին Զորիկի ծննդյան 28-րդ տարելիցին անվանակոչելու դպրոցի «Նշանակետ-ՄՄ» վարժասարքային դասասենյակը:

Այս օրերին տնօրեն Լիդիա Պետրոսյանի, դաստիարակչական գծով տնօրենի տեղակալ Կարինե Բալասանյանի, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Պետրոսյանի ջանքերն իզուր չէին անցել՝ միջոցառումը հավուր պատշաճի կազմակերպելու համար:

Զինվորական նվագախմբի խրոխտ հնչյուններն անանուն ազդարարեցին նահատակ հերոսի մասին, և միջոցառման մասնակիցներս հոտնկայս հարգեցինք անմահների հիշատակը: Դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Անանիա Հարությունյանի ելույթը մեծարանքի խոսք էր խիզախ քաջորդու մարտական ուղու մասին, ում դեռևս ծառայության ընթացքում տրվել էր «Անորսալի միայնակ գայլ» մականունը: Նա մարտական առաջադրանքները կատարելիս միայնակ էր «որսի դուրս գալիս», չնայած փնտրվում էր թշնամու կողմից, բայց միշտ էլ անվնաս վերադառնում էր՝ առաջադրանքը կատարած:

2014 թ. օգոստոսի 2-ի գիշերը չլուսացավ հետախույզ հրամանատարի համար, ստացած վիրավորումներից հաջորդ օրը հոսպիտալում մահացավ նաև նրա կողքին խիզախորեն թշնամուն դիմադրող Սարգիս Մովսիսյանը:

Հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության և նվիրումի, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը անձնազոհաբար կատարելու համար Զորիկ Գևորգյանը հետմահու պարգևատրվեց «Երկրորդ աստիճանի մարտական խաչ» ՀՀ շքանշանով, դարձավ «Արիության համար» մեդալի ԼՂՀ շքանշանակիր, արժանացավ բազմաթիվ այլ պարգևների:

Չափազանց հուզիչ էին և արցունքախառն անմահացած լեգենդի մասին ցուցադրված ֆիլմի դրվագները: Այնտեղ մանկություն կար, ազնիվ ու մաքուր պատանեկություն, բանաստեղծելու տաղանդ կար, հայրենի հողի հանդեպ սեր, մարտական ուղի կար, խաթարված մի կյանք, կսկծացող մոր սիրտ կար, սգավոր մատուռ, մարմրող մոմեր կային, որ ավետում էին հավերժացած մի կյանքի մասին, որ ընծայաբերվեց հայրենի հողին:

Սերժանտական խորհրդի նախագահ Սլավիկ Ալահվերդյանը ներկայացրեց Արցախյան պարերազմից առայսօր հայոց մարտունակ բանակի հաղթական ուղին՝ ամրագրված բազում քաջորդիների ու հայրենիքի նվիրյալ Զորիկ Գևորգյանի հիշատակով: Դպրոցի աշակերտնե-

րի ասմունքը, երգն ու պարը երդման արարողության էին նման, և որպես նոր սերնդի խոնարհումի խոսք՝ այն եզրափակվեց կորստյան ցավն իր մեջ կրող սգավոր մորը՝ Հերմինե Քոչարյանին, նվիրած ծաղիկներով: 12-րդ դասարանի աշակերտուհի Գրետա Խաչատրյանի երգի թախծոտ մեղեդայնությունն արձագանք տվեց ամբողջ դահլիճում, զինվոր-աղջիկների «Մարտակերտ» պարը՝ պարուսույց Նաիրի Ազատյանի ղեկավարությամբ, մի նոր ասելիք էր երկու պատերազմ տեսած մեր հարազատ քաղաքի ապրելու հարատևող կամքի մասին: Հայրական հուզիչ խոսքով եզրափակվեց միջոցառումը, որտեղ Ժիրայր Գևորգյանի շնորհակալական խոսքը հնչեց՝ ուղղված որդու հիշատակին նվիրված հուշ-ցերեկույթի կազմակերպիչներին, և այն հպարտությամբ եզրափակեց բանաստեղծելու շնորհքով օժտված որդու խոսքերով. «Թե ինձ կհիշեք, Օրհնում եմ ես ձեզ, Թե չեք հիշելու, Աստված ձեզ օրհնի, Կարևորն այն է՝ Ազգը իմ ապրի»:

Դպրոցի «Նշանակետ-ՄՄ» վարժասարքային դասասենյակի անվանակոչման արարողությանը ժապավենը կտրելու իրավունքը վերապահվեց տնօրեն Լիդիա Պետրոսյանին և Զորիկի քույր Անի Գևորգյանին: Ավարտվեց մի հայրենյաց դաս, որ ազգի հարատևման պատգամն էր ավետում՝ Զորիկ Գևորգյանի և բազում նահատակների անմահ անուններով:

http://usarmenianews.com/am-n-7884.html

2017-01-30

ՋԵՐՄՈՒԹՅԱՄԲ ԼՑՎԱԾ ՉՅՈՒՆՈՏՎԱԾ ՕՐԸ

Ավանդույթ դարձած հանդիպումները կրկնվում են շրջանավարտների հետ, իսկ ես նրանց այցը միշտ էլ խանդավառությամբ եմ ընդունում, մտերմիկ միջավայրում: Ժամեր եմ հաշվում, ժամերը դառնում են րոպեներ, սպառվում են անգամ այդ րոպեները, իսկ ես սպասում եմ նրանց, գուցե այն մեկին, ով պիտի գար իմ հետևից ու գնայինք հանդիպման վայր: Մի նոր անակնկալ. այն մեկը չէր, այլ բոլորը, որ մտափոխվել էին ու եկել ինձ մոտ՝ իմ տաքուկ անկյունը, լցրել այն ջերմությամբ: Այդ դասարանի ավագը՝ բարձրագույնում սովորող ուսանողուհի Անուշ Առաքելյանը, այդպես էլ մնաց մյուսների համար ավագ՝ ամենքի հանդեպ ունեցած անսահման սիրով ու ջերմությամբ:



2013-14 ուստարվա մեր դպրոցի շրջանավարտներն են, այն օրերի իմ դասղեկական դասարանի աշակերտները, որ հիմա ուսանողներ են տարբեր բուհերում: Բայց այս երկուսը այդ դասարանի չորս տղաներից՝ Վարդանը և Սիերը, դեռ նոր են զորացրվել զինվորական ծառայությունից: Այն ապրիլյան օրերին նրանք էլ այնտեղ էին, բոլորս էլ՝ անհանգիստ, իսկ ամիսներ անց տեսա նրանց՝ իրենց տասնօրյա արձակուրդի ժամանակ, երբ եկել էին դասղեկին տեսնելու: Այն նախորդ հանդիպմանը դասարանի տղաներից Իգորն էլ եկել էր՝ հրաժեշտ տալու մինչ ծառայության մեկնելը:

Եվ որքա՜ն շատ էի նախատում այդ տղաներին դպրոցական օրերին…

Շրջանավարտների հետ հանդիպումը մեզ նորից տարավ դեպի դպրոցական կյանք: Ուսանողական աշխարհը միահյուսվել էր դպրոցական հիշողություններին, որոնք երբեմն մոռացվում են ուսուցիչներիս կողմից, բայց նոր օրերի հուշերում դրանք դառնում են կենսախինդ ու անհոգ օրերի արտահայտություն: Մի քանի ժամ, և հոգիս լցվեց ուրախությամբ, ժպիտների ու կարկաչուն ծիծաղի շիթերը ուզում էի հավա-

քել, որ մասունքի նման պահեմ, փայփայեմ՝ համոզված, որ այս օրն էլ կանցնի անցյալի գիրկը՝ որպես մի քանի ժամ անհոգ ապրած կյանքի հիշողություն:

Նրանց զրույցներն էի լսում, որքան տարբեր, նույնքան հետաքրքիր էին իրենց ընկերության մասին ընկալումներով, ապրած կյանքի դասերով, անձնական մտորումներով...Մասիսը՝ այնքան հասուն, գեղեցիկ մտքերով, կյանքի դառնություններին ու անարդարություններին տեղյակ, Միերը, որ հայր էր կորցրել ամիսներ առաջ, ավելի մտահոգ և շատ լուրջ: Անուշը՝ ուսանողական կյանքի հետաքրքիր պատմություններով, մյուս աղջիկները՝ Անին, Քրիստինեն, անցած տարիների համեստությամբ օծված: Վարդանը՝ կենսախինդ ու ջերմ, ժպիտների առատությամբ… Մյուսներն էլ մեզ հետ են, իմ այն օրերի աշակերտները, երբ անցած ամիսներին էին եկել դասղեկի հետ հանդիպման:
Իմ օրը երփներանգվեց, մտովի ամեն մեկին մի գույն եմ վերագրում, ընտրած գույները վառվռուն են, լուսավոր, իրենց անունների նման տարբեր, բայց կարոտով լեցուն, զարմանալի և հասուն: Նրանց ճանապարհեցի, բայց յուրաքանչյուրը յուրովի մի հետք թողեց իր հետևից, ու ես, ինչպես նախորդ տարիներին, մենությանս մեջ բանաձևում եմ անունները նրանց: Ու այդ անունների սկզբնատառերով մի նոր իրական աշխարհ եմ ստեղծում, և Լ-ն դառնում է լուսավոր, մի հրաշք լուսին լաջվարդ կապույտում, Ն-ն՝ նարնջագույնն է՝ նոր կյանքով լեցուն, Վ-ն վարդագույնն է՝ ծաղկափթիթ մի նոր կյանք, Մ-ն մի նոր միտք՝ լույսով ճառագած, Կ-ն կանաչն է, մի նոր ճանապարհ, Ա-ն՝ ոսկեգույն արև է դառնում՝ ջերմությամբ լցված... Եվ այսպես շարունակ ստեղծում եմ իմ հրաշալի գույները, որ իրական են, ամեն մեկը՝ մի նոր դիմագիծ՝ լույսով շաղախված, ծաղկառատ կյանքով:

Արևոտ ջերմությամբ օրս սպառվում է, իսկ դրսում Մարտակերտը ձյունոտված էր...

http://usarmenianews.com/am-n-7898.html

2017-01-31

ԳՈՎՔ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ

Ստեփանակերտի կենտրոնական գրադարանում տնօրեն Իրա Բաղրյանի կողմից կազմակերպված գրական-երաժշտական ցերեկույթով եզրափակվեց հունվար ամսում հայոց բանակի 25-րդ տարեդարձին մեկնարկած միջոցառումների շարքը: Քաղաքի երկու դպրոցների աշակերտներն Արցախի գրողների ստեղծագործություններով վեհացրին հայրենի բնաշխարհն ու նրա ծոցում արարող հայ մարդուն, նրա համառ կամքն ու անցած ճանապարհը:

Միջոցառմանը մասնակցում էին մշակույթի ոլորտի աշխատողներ, զինվորականներ, դպրոցականներ: Նոր սերունդն Արցախի հաղթանակների ու ցավերի ականատեսն է, որ ամիսներ առաջ սարսափելի մի նոր ապրիլ ամրագրեց, բայց նաև այդ սերունդը հողի ձայնն ունի իր հոգում և հպարտորեն հնչեցրեց տարբեր հեղինակների ստեղծագործ մտքի պատառիկներ, որոնք միջոցառման մասնակիցների կողմից ընկալվեցին քար լռությամբ, հպարտության անթաքույց զգացողությամբ:

Հրավիրված լինելով միջոցառմանը՝ ակամայից ներկա եղա գեղարվեստական խոսքի մատուցման մի գեղեցիկ արարումի, որի պատիվը պատկանում է այդ դպրոցականների մեջ նաև իմ աշակերտներին: Այն օծված էր հայրենասիրական երգերի մեղեդայնությամբ, զինվորական դարձած աղջիկների խրոխտ պարով, որ կախարդական շղթա կազմած՝ իրենց ապրելու կամքն էին ազդարարում: Մշակույթի և երիտասարդության կենտրոնի երգիչ Արշակ Միրզաբեկյանի կատարումները մարդուն համակած հիացումի արտահայտություն էին, իսկ աշակերտների խոսքերը՝ մի-մի ներբող՝ նվիրված հայրենի հողին ու արարող մարդուն, հայոց բանակի անպարտելիությանն ու նահատակների հիշատակին:

«Սիրում եմ Արցախի անկրկնելի բնաշխարհը, նրա հարթությունները, ուր հասնում են խաղողն ու նուռը, անտառները, ուր երկինք է բարձրանում արքայական կաղնին ու վազում են եղնիկն ու այծյամը:

Սիրում եմ մեր առասպելական Մռավ սարը, որը հսկում է մեր աշխարհի անդորրը: Սիրում եմ Արցախի մայր գետը՝ Թարթառը»/Անի/:

«Արցախցին իր աստվածային բնության մի մասն է՝ բարի ու իմաստուն:Այդ գեղեցիկ հատկություններն օգնել են նրա գոյատևելուն: Նա դիմացել է դաժան փորձությունների և մաքուր պահել իր լեռնաշխարհը:Մենք համոզված ենք, որ ցանկացած օրհասական պահի կարող ենք ապավինել հայոց բանակի զորությանը» /Յանա/:

«Դարերի խորքից եկած իմաստավորված այս հողում ապրում և արարում է արցախցին: Եվ հավատում է, որ պայքարելով դուրս կվռնդի իր թշնամուն և մաքառելով դարեր կապրի, քանզի նրա հզոր բազկի ուժը հավաքական է ու բռունցքված» /Բաղդասար/:

Արցախյան պատերազմի ճանապարհ անցած կին ազատամարտիկներ Վալյա Պետրոսյանն ու Սվետա Աբրահամյանը նվերներ հանձնեցին Ն պաշտպանական շրջանի զինվորներին, ովքեր չորրորդ գումարտակից էին և հրետանու դիվիզիոնից: Ավարտին հասավ Արցախին ու նրա՝ խաղաղ ապրելու երաշխավոր հայոց բանակին նվիրված ցերեկույթը, որ ապրողների համար մի նոր դաս էր՝ հիշողության ու նորանոր արարումների:

http://usarmenianews.com/am-n-7907.html

2017-02-01

ՄԱՐՏԱԿԵՐՏ... ԱՅՍՏԵՂ ՀԱՎԵՐԺԱՀՈՒՅԶ ՄԵՂԵԴԻՆԵՐ ԿԱՆ, ԼՈՒՍԵ ԵՐԱԶՆԵՐ

Սա մեր քաղաքն է, մեր հարազատ բնօրրանը՝ երկու պատերազմ տեսած մեր բնակավայրը: Ավելի քան մեկ տարի՝ 1992-93 թվականներին, եղել է թշնամու ձեռքին, բռնագաղթված ժողովուրդը՝ տեղահան եղած: Կամաց-կամաց նորից եկան, նորից տուն ու տեղ վերականգնեցին, ու նորից մի նոր ապրիլյան պատերազմ, իր հետ մի նոր տարհանում ու մի նոր սարսափ: Անսահման սեր կա և հույս, խռովք ու ընդվզումներ այստեղ ապրողների հոգում: Դա խաղաղության հաստատման և պատերազմի դեմ ուղղված բոլորիս ազատաբաղձ կոչն է, որ ամեն օր հնչում է այս հողին ամուր կառչած մեծերի ու փոքրերի շուրթերով:

«Խաղաղություն ամենքի՛ն և ամենու՜ր,- Այդ ենք միայն մենք աշխարհին կամենում»,-սևակյան այս տողերը բնաբան կարելի է համարել սահմանամերձ բնակավայրում ապրողներիս համար: Ամբողջ աշխարհի համայն մարդկության բաղձալի երազանքն է այն, և ուզում ենք հավերժական լինի այդ խաղաղությունը, թևածի ամենուր, մտնի տնից տուն և լույս տա բոլորի օջախներին:

«Քաղաք» անվանումն այսօր անհամատեղելի է նրան, գուցե հենց այդ անհամատեղելիությունն է սեր ծնում նրա հանդեպ, չնայած քաղաքին տեսանելի մի շարք կառույցներ ունենք՝ հիվանդանոցի հրաշալի շենք, դպրոց՝ արտաքուստ ուսումնական հաստատության տեսքով, ներքուստ ցավալիորեն անմխիթար վիճակ, վերանորոգված մշակույթի տուն, ձմեռային ցրտերին ջերմությամբ հագեցած պետական մի շարք հիմնարկությունների ամբողջություն, մի քանի գեղեցիկ երևացող բնակելի կառույցներ, այդ թվում նաև՝ռուսաստանաբնակ մարտակերտցիների կողմից վերանորոգված հանդիսությունների սրահ:

Արտաքուստ օգնության կարիք չունի այս քաղաքը, բայց այն փոշու մեջ կորած փողոցներ ունի, որոշ հատվածներ՝ ասֆալտապատված,

պատերազմի հետքերն իրենց վրա կրող ավերակներ… Շփման գծին ամենամոտ քաղաքն ապրում է խաղաղ՝ հոգում անթեղած ցավը ազգիս, հավատացած հույսով ապրելու պատգամին: Իսկ մենք՝ մարտակերտցիներս, ապրում եք այստեղ, որովհետև ոգի կա, հայի հավատ, սեր... Սեր կա հողի, օջախի, անգամ փոշու, իսկ ավերակների հանդեպ տածած մեր մեծ սիրո մեջ սարսուռ կա, որ երբեմն մեզ վեր է թռցնում կրակոցների ձայներից, և ամեն անգամ մենք էլ ենք մեռնում ու նորից հարություն առնում սահմանում զոհված զինվորի հետ մեկտեղ:

Այս հակասական կյանքի ճանապարհին մեզանից յուրաքանչյուրն այստեղ կերտում է մի-մի կենսագրություն: Այստեղ ազնվացնող և ջերմացնող հոգիներ կան, շատերը՝ խառնվածքների բազմազանությամբ, մարդկային խորունկ և հմայիչ մտորումներով, որ լուսավոր ու պայծառ հայացքներով իրենց անցնելիք ճանապարհին կարողանում են կերտել փայլուն ու գեղեցիկ կերպարներ՝ համոզված, որ Տեր Աստվածը հենց դրա համար է մարդուն կյանք պարգևել:

Հպարտության զգացում ունեմ քաղաքիս ու այստեղ ապրողների նկատմամբ, առավել ևս, երբ գիտեմ, որ ուշադրության և հոգատարության կարիք ունենք մենք, որ համառ կամքով ընդունել ենք այստեղ ապրելու պատգամը: Ասում են՝ լավատեսությունը մեծ մարդկանց շքեղությունն է, ահա այդպես էլ ապրում ենք մենք ոչ իրական, բայց հոգու շքեղության մեջ, որտեղ հավերժահույզ մեղեդիներ կան, անմահների հիշատակ, որ կամաց-կամաց սուզվում են հույզերիդ աշխարհը, լուսավորում միտքդ և տանում քեզ դեպի երազների մի նոր աշխարհ, որտեղ խաղաղությունն է թևածում իր մոգական հնչյունների ներքո:

http://usarmenianews.com/am-n-7935.html

2017-02-02

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀԱՅՈՒՀՈՒ ՄԻ ԽԱԹԱՐՎԱԾ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Իմ տողերը երբեմն ցավով են ծնվում, երբ նայում եմ այս նկարներին... Փորձում եմ խոր շունչ քաշել, որ կարողանամ գրել իմ տեսադաշտում գտնվող ինձ հարազատ դարձած մարդկանց մասին, իսկ այս դեպքում ինձ բազմակետերն անհրաժեշտ են լինում, որ մի պահ կանգ առնեմ, նորից խոր շունչ քաշեմ, հետո կարողանամ շարադրել մտքերս:

Նայում եմ այս երեխաներին, որ մեր դպրոցի 1-ին, 6-րդ և 7-րդ դասարաններում են սովորում, և միշտ էլ տեսնում եմ նրանց նկարներում իրենց նահատակված հայրիկի գերեզմանաքարի մոտ... Ցավում է սիրտս, լացելու ցանկություն է ծնվում ներսումս...Երանի թե մեր բալիկներն այս վիշտը չտեսնեին...Իմ ներսում ցավի ալեկոծված ձայնն է հնչում, որ դառնում է մի տխուր ճակատագիր, ու ես ուզում եմ բարձրախոսել այս երեխաների մայրիկի մասին, մի հայուհու, ով այս ուսումնականից Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում է աշխատում:

Ազատամարտիկ հայր կորցրած այս երեխաների մայրը՝ Անժելա Պետրոսյանը /Եղիգարյան/ դպրոցում սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչն է, մի ազնիվ ու հմայիչ անձնավորություն, այս երեք երեխաների միակ խնամակալը, հայրենասեր հայուհու օրինակելի կեպար, որ մտահոգված է մարդկային անտարբերությամբ և սերունդների վաղվա օրով. «Դավիթը նույնիսկ թշնամու գնդակից վիրավորվեց, բայց երբեք չհանձնվեց, երբեք պայքարի դիրքը չլքեց, վաղը նրա երկու որդիները հայրենյաց պաշտպան կդառնան, հիշենք ու գնահատենք այս տղերքի անցած ուղին, նրանք գնահատանքի արժանի են: Նաև շնորհակալ եմ այն մարդ-

կանց, ովքեր մարդ մնացին՝ մեծահոգաբար հարգելով այս տղաների ապրած ու չապրած կյանքը»:

Այս երեխաների հայրը Արցախյան պատերազմի տարիներին փայլուն հաղթական ճանապարհ անցած ազատամարտիկ Դավիթ Պետրոսյանն է՝ Խուդոյ մականվամբ: Մարտական գործողությունների ժամանակ բարեբախտաբար նրանից ամեն անգամ թշնամու մահացու գնդակը վրիպել է, սակայն խաղաղ օրերին ԼՂՀ ՊԲ փոխգնդապետը 2012 թ. հունիսի 15-ին դժբախտ պատահարի զոհ է դառնում՝ թողնելով երեք երեխաներին կնոջ՝ Անժելա Պետրոսյանի հույսին: Ամիսներ անց՝ դեկտեմբերի 8-ին, ամուսնու աճյունը Անժելան ՀՀ և ԼՂՀ պաշտպանությունների նախարարությունների թույլտվությամբ, իր իսկ միջոցներով Տոնաշենից տեղափոխեց Եռաբլուր: Այն դարձավ ուխտատեղի, որ երբեմն մայրը երեխաների հետ անցելում է այնտեղ, իր հոգում անթեղած ցավն ու մորմոքը փոխանցում քարացած հերոսին:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Դավիթ Պետրոսյանը արժանացել է բազմաթիվ գնահատանքների, պարգևատրվել ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի, «Մարտական ծառայություն», «Վազգեն Սարգսյան», «Մայրական երախտագիտություն», «ՀՀ ԶՈՒ 20 տարի» մեդալներով:

Դպրոցի 7-րդ դասարանը Դավիթ Պետրոսյանի անունն է կրում, նրա ավագ որդին՝ Գևորգը, այդ դասարանում է սովորում, մի աշակերտ, ով բազմիցս մեզ հուզել է հայրիկի մասին իր հիշողություններով, երբեմն թղթին հանձնած այն հատուկենտ տողերով, որ շատերիս աչքերից արցունքներ է քամել:

Հայրենասեր հայուհու խոսքերն ամենուր ինձ հետ են, որ դարձել են կարգախոս, դարձել խորհուրդ, անմահների անցած ճանապարհի սուրբ պատգամ. «Անտարբեր մի՛ եղեք իրական հերոսների նկատմամբ...Նրանք տարիներ շարունակ մաքառեցին, կռվեցին այս հողի, մեր ժողովրդի, մեզ համար.. .Հիշենք նաև կենդանի լեգենդներին, որ բախտի բերումով նրանցից ոմանք կենդանի են մնացել: Հիշենք բոլորին անուն առ անուն և մեծարենք իրական հերոսներին»:

http://usarmenianews.com/am-n-7956.html

2017-02-03

ՀԱՅՈՒՀԻ ԵՄ ԵՍ, ԽՐՈԽՏ ԼԵՌՆՈՒՀԻ

Այսօր դպրոցի միջանցքում ես գրկեցի նրան: Երկուսս էլ ուրախ էինք, այդ ուրախությունն անցավ մյուս աշակերտներին, որ մեր կողքին էին: 12-րդ հումանիտար դասարանում սովորող իմ աշակերտուհին՝ Լադա Արզումանյանը, գրականության առարկայական օլիմպիադայի շրջանային փուլում արձանագրել էր ամենաբարձր միավորը, հուսանք, որ մեր համատեղ աշխատանքի արդյունքում նա մի նոր հաջողության կհասնի օլիմպիադայի հանրապետական փուլում:

Նա կմասնակցի նաև շարադրությունների մի նոր մրցույթի: Ես թերթում եմ նրա գրած շարադրության մի հատվածը, որ հայրենյաց զինվորին է նվիրված: Նաև հուսով եմ, որ այս խրոխտ լեռնուհին կկարողանա իր ստեղծագործական նոր մտքերով մի նոր հաղթանակ արձանագրել...Եվ նրա տողերում տեսնում եմ նրան՝ մի ազնիվ ու հայրենասեր հայուհու, որ ազգի ցավով է անհանգիստ:

«Կրկին ցավ, հոգու դատարկություն: Փնտրում եմ բառեր, որոնք հնարավորինս լավ կարտահայտեն այն, ինչ զգում եմ հիմա, բայց գոյություն չունեն նման բառեր, դրանք լոկ տառերի կույտ են և ի զորու չեն փոխանցելու կարոտով պարուրված իմ հպարտությունը: Ուզում եմ թռչել տիեզերքի աստղազարդ երկնակամարով ու հանդիպել քեզ, իմ հերո՛ս զինվոր: Դու կյանքդ զոհեցիր մեզ համար ու դարձար անմահ: Դու դեռ ունեիր կյանքի մեծ ուղի: Քո վերադարձին պիտի մայրդ ուրախությունից լաց լիներ, իսկ հայրդ շուքով քեֆ պիտի աներ, բայց դաժան թշնամին խլեց ծնողներիդ հույսերը, ինչպես թևերն են կտրում թռչունի:

Ես տեսնում եմ քեզ ամեն օր, ամեն ժամ: Քեզ փորձում եմ փնտրել մարդկանց մեջ, փորձում եմ տեսնել քո հայացքը, աչքերը, ես լսում եմ այն երգերը, որոնք դու երգել ես: Քայլերիդ ձայնից արթնանում են սարերը, ժպիտդ արևի պես ջերմացնում է ինձ: Քո արյունը մեր լեռների ալ կակաչներն են, երկնքի կապույտը՝ քո խաղաղ ոգին, դաշտերում արևի

տակ շողշողացող քաղցրահամ բերքը հորովելիդ օրորն է, երկնքից թափվող աստղերը՝ քո մեծ պատրանքը: Երկնքում ճախրող աղավնին դու ես, քո սերն է, կիսատ մնացած երազանքներդ: Դու ցույց տվեցիր աշխարհին, թե ինչպես պիտի ապրել ու ինչպես պիտի անմահանալ: Նայում եմ ճերմակափառ Արարատին, նրա երկնահաս բարձունքին փրկության լույս եմ տեսնում: Լույս, որ հույս է ճառագում՝ գերյալ սրբավայրերի, շղթայված լեռան ազատության հույսը: Եվ դու, հերո՛ս զինվոր, այդ լուսեղեն օրերի անձնուրաց քաջամարտիկն ես, որ քո արյունով ես գծել քո տառապած հայրենիքի սահմանները: Հոգումս կաթիլ առ կաթիլ կուտակվող դառնությունն ատելություն է դառնում: Ատելություն թշնամու հանդեպ: Նա բերանը բաց սպասում է, որպեսզի խժռի մեզ: Բայց ես հավատում եմ, հավատում եմ քո բազկի ուժին, զինվո՛ր, հավատում եմ, որովհետև հավատն է մեզ ուժ տալիս:

Այնքա՜ն հպարտ եմ, որ հայուհի եմ՝ խրոխտ լեռնուհի, և քեզ կարող եմ «եղբայր» կոչել: Քո շնորհիվ ես հանգիստ գլուխս բարձին եմ դնում՝ իմանալով, որ դու այդտեղ կանգնած պաշտպանում ես ինձ: Ամեն գիշեր նայելով երկնքին՝ աղոթում եմ քո կյանքի համար, իսկ ամեն առավոտ արթնանալով՝ նայում եմ պատուհանից: Երբ տեսնում եմ՝ պարզ է երկինքը, հասկանում եմ, որ դա միայն քո շնորհիվ է: Դու իսկական հերոս ես, ազգի ցավն ու նահատակվածների հերոսական ոգին ունես քո սրտում, մեր հավատն ու օրհնանքը՝ քո ճանապարհին: Բոլորս պատմում ենք, խոսում քո մասին, նկարագրում քեզ, գովեստի շատ ու շատ խոսքեր ասում, բայց բառերն այնքա՜ն խղճուկ են, այնքա՜ն նսեմ: Մեր շնչով, ծիծաղով, խոսքով ու կյանքով ենք քեզ պարտական, իմ զինվո՛ր եղբայր: Հայրենիքիս կյանքը, անուշ երազներով քունը, մեր լեզուն, ազգիս հարատևելը քո ձեռքերում է, քո ափերի մեջ: Պատերազմ տեսած հայուհու աչքերով այսուհետ ուզում եմ խաղաղություն տեսնել թե՛ քո հոգում, թե՛ մեր հայրենիքում, պաշտպանի՛ր մեզ, որ հայոց յուրաքանչյուր բացվող օրվա համար խաղաղ լուսաբացներ լինեն ու կապույտ երկինք»:

http://usarmenianews.com/am-n-7970.html

2017-02-04

ՄԱՐԴԿԱՆՑ, ԱՄԵՆՔԻՆ, ԱՇԽԱՐՀԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՎԱՏՍ ԼՈՒՍԵ

Մեծագույն շնորհակալությունս հրաշալի անհատականությունը՝ ֆրանսաբնակ հայուհուն՝ Նվարդ Մնացականյանին՝ այս տարածքում գեղեցիկ արարումների՝ իր ասմունքով տեսաերիզների ֆիքսավորման համար, որտեղ կերպավորվում է անձը, հավերժանում պահը՝ հաճելի զգացողություն պարգևելով անհատին: Այդ հոգեպարար ու ազնիվ նվիրումի լավագույն նմուշներից մեկը մանկավարժիս արձակ խոհերն են՝ իր իսկ ընթերցմամբ և ֆիքսավորումով:

Ապրում եմ սահմանամերձ Մարտակերտ քաղաքում, դասավանդում Արցախյան ազատամարտի նվիրյալ Վլադիմիր Բալայանի անունը կրող միջնակարգ դպրոցում: Ազատ ապրելու իրավունքը գերխնդիր է դառնում այստեղ, սահմանի մոտ այն վերածում է ինչ գնով էլ լինի՝ կյանքը փրկելու ճակատագրական մտասևեռման, և համառորեն կառչում ենք հողից, որ փրկենք այն: Սահմանին մոտ հողի՝ արկերից ճաքճքած հառաչանքներն են մեզ հասնում, և զգում ենք, որ այդ պահին մարդը հերոսանում է ոչ միայն պատերազմի առաջին գծում, այլ իր հարազատ հողի վրա, և մարդու մեջ խոսում է հողի ձայնը: Սահմանի մոտ այսպես գոյատևելու ապրելակերպն այդ մենք չենք ընտրել, այստեղ բոլորս էլ՝ մեծից փոքր, նվիրյալներ ենք: Եվ այսպես հողի ձայնը ամեն օր արցունքից ծնված մի փոքրիկ հեքիաթ է հյուսում, որ արձագանքում է հոգուս կանչերի լուսե-լուսավոր գալիք օրերին՝ մարդկանց, աշխարհին, ամենքին ուղղված:

«Ես հավատում եմ լուսե օրերի, բայց ես չգիտեմ՝ իմ անգոյությամբ, գուցե գոյությամբ այնտեղ կլինե՞մ, թե չեմ լինի ես: Ես հավատում եմ լուսավոր օրվան, որ պիտի բացի նոր արշալույսներ, ես հավատում եմ, երբ նույնիսկ խամրած օրերիս մեջ էլ լույսի մի շող կա, ես հավատում եմ գալիք օրերի լույս երազներին, թեկուզ ես այնտեղ երբեք չլինեմ:

Խավար գիշերում անամպ երկնքի աստղերն եմ հաշվում, առավոտվա մանրիկ շաղի մեջ լուսե մի փոքրիկ արցունք եմ փնտրում, որ փայլում է այն կամ աղոտանում, երբեմն դառնում արցունքե հյուլե: Ափերիս մեջ էլ զգվում եմ նրան անափ կարոտով, արցունքից ծնված մի

փոքրիկ շաղիկ դողում է հանկարծ, ու շաղիկների մի փունջ եմ գրկում, որ հողին պահ տամ: Արևոտ օրս պայծառ խենթությամբ սպասեցնում է ինձ արշալույսների հրավառության մի նոր հանդեսի, որ հրճվանքով լի պիտի շողշողա:

Ես հավատում եմ գալիք օրերին: Անզորությունս երբ լաց է լինում, սթափ հայացքով սաստում եմ նրան, որ հեռու մնա հոգիս պաշարած անհույս խավարից: Անորոշության պահերին անգամ կարեկցում եմ երբեմն նրանց, ում էության մեջ կարեկցանք չկա, անտարբերության չարիքի դեմ էլ երբեմն անձայն մաքառում եմ ես, որ միտքս հանկարծ չապավինի անհուսության թանձր մշուշին: Անկայուն մտքի անզորության դեմ փրկության ելքը գտնելու համար՝ հենվում եմ հանկարծ երազանքներիս խորքում ծվարած իմ էությանը, որ հույս է դառնում, երբեմն հավատ, որ սեր է դառնում, երբեմն՝ կարոտ, որ կյանք է դառնում ու մի նոր աղոթք՝ չարիքին ուղղված խոստովանության մի նոր եղանակ:

Իմ սուրբ հավատը… Սիրում եմ նրան երբեմն նույնիսկ, երբ հուսահատված, ցնցումից հետո նոր ուշքի եկած, բացում է հանդես, սիրով գեղգեղում, իր անուշաբույր և թովիչ ձայնով հոգիս է գրկում մեղմիվ շոյանքով և կամ տխրամած, գգվող հայացքով, խենթացած հոգով լուսե մի սիրուն կյանք է երազում: Լուսե հավատս….Նա միշտ ինձ հետ է՝ իր կողքին պահած մի կտոր կարոտ ու մի կտոր հույս, մենությանս մեջ լռին ու անձայն, մեղմիվ շոյանքով գրկում է ինձ, լռության ձայնն էլ՝ հոգուս հարազատ, հեքիաթ է հյուսում տխրամած ու հեզ հավատիս մասին՝ մի կտոր դարձած:

Երբեմն նույնիսկ լուսավոր օրվա երազանքներս մայրամուտների մեջ եմ թաքցնում, անձրևից հետո ծիածանների գույների մեջ էլ հավատ եմ փնտրում: Ծաղիկների մեջ թափված թերթերն եմ հավաքում կամաց, անտես մի հևոց, տխուր մի հառաչ արձագանքում է հոգուս կանչերին: Մի նոր հավատ եմ փնտրում իմ շուրջը, լուսե լուսավոր մի նոր սուրբ հավատ, երբ սուտն է հանկարծ անզորության մեջ կողքիս թևածում:

Ափսո՜ս, իմ հավա՛տ…Արևոտ լեզվով խոսում եմ կամաց, կարոտս նորից հևում է հանդարտ, մի տխուր հավատ դողում է հանկարծ, թևաթափ հոգիս գգվում է նրան, որ չանշնչանա, չմարի անձայն: Մաքուր հավատս լռում է հանկարծ, կեղծիքի կողքին մի բուռ է դառնում, համբանում նույնիսկ, չի ուզում անգամ իր լեզվով խոսել:

Անձրևոտ օրս գրկում եմ կամաց, հոգուս ծալքերի անունների մեջ մի կտոր կարոտ, մի փոքրիկ հավատ, կողք կողքի կանգնած, սպասում են միշտ ծիածանների գունեղ շքերթին: Երազանքների լուսավոր քողով մի նոր սուրբ հավատ, հոգուս մեջ գրկած, հավատում եմ ես մարդկանց, աշխարհին»:

http://usarmenianews.com/am-n-7980.html

Տեսաերիզ՝ *https://www.youtube.com/watch?v=-u9CecGpXtQ*

2017-02-06

ԵՍ ԻՆՉ ԵՄ ԱՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ

«Ես ինչ եմ անում Արցախի համար» վերնագիրն անսովոր թվաց 7-րդ ա դասարանում սովորող աշակերտներին, թե իրենք այդ տարիքում ինչ կարող են անել հայրենիքի համար: Բայց որոշ բացատրական աշխատանք տանելուց հետո հասկացա, որ նրանք կկարողանան շարադրել իրենց մտքերը: Եվ շուտով Նարեկ Բաղրյանի շարադրանքն ուշադրությանս արժանացավ, մտասևեռ նայեցի նրան, թե որքանով են տողերը համահունչ արձագանքում նրա հոգու ձայնին: Կարծես հենց դրան էլ սպասում էր, անմիջապես հակադարձեց ինձ՝ երևի հասկանալով իմ տարակուսանքն ու ոչ հաստատուն կեցվածքը, թե արդյո՞ք ինքն է շարադրել այս մտքերը. «Արցա՛խ աշխարհ, ադամանդե լեռների վրա վեր խոյացած երկնասու՛յզ երկիր, աշխարհների մեջ անպարտելի կանգնած իմ դրա՛խտ լեռնաշխարհ, դու լույսի՛, ազնիվի՛ և մաքրությա՛ն ջրաբաշխ, այդ քո լեռներից են սահանքում գետերդ՝ տանելով ու սփռելով բարբարոսների հողերի վրա բարություն և օրհնություն»:

Այս տարիների ընթացքում, առայսօր էլ, աշխատասեր ու նպատակասլաց է նա, ջանքեր չի խնայում՝ արդարացնելու իրեն նույնիսկ արտադասարանական միջոցառումներում, որտեղ հայրենյաց պաշտպանի իր կերպարին հավատարիմ՝ ամեն անգամ խրոխտ տողերով ազդարարում է այս հողին ու ջրին հաստատուն կանգնած նոր սերնդի ոգեշունչ խոսքը. «Ես սիրում եմ քեզ, իմ եղեմակա՛ն Արցախ: Ամիսներ առաջ կարծում էի, թե հայրենասիրությունը հատուկ է միայն ընտրյալներին: Սակայն ապրիլյան սև օրերը մեկ անգամ էլ ապացուցեցին, որ բոլորս ենք սիրում այս մի բուռ երկիրը, որովհետև ուրիշ երկրներն այսքան ցավատանջ ու քարաշատ չեն, և ոչ էլ՝ այսքան վտանգված: Կա՞ արդյոք ավելի դժբախտ, ավելի արյունոտված մի երկիր, քան դու ես, իմ սու՛րբ Արցախ: Անթիվ ու անհամար թշնամիներ եկան հարավից և հյուսիսից, արևելքից և արևմուտքից, թունավոր օձերի պես խրվեցին քո մարմնի մեջ՝ դարեր շարունակ ծծելով քո ազնիվ արյունը: Թշնամին եկավ քո տունը, սպանեց եղբորդ և տեր դառնալով քո հողին ու տանը՝ իր մահաբեր նիզակը ցցեց քո սրտում: Սակայն, իմ հրաշագե՛ղ երկիր,

չաղավաղվեց քո հոյակապ լեզուն, չնվաստացավ քո արվեստը և քո ստեղծագործ հոգին չշղթայվեց»:

Այս շարադրության տողերը դաջվեցին իմ հոգում, բայց չէի համարձակվում այն տեսանելի դարձնել: Դպրոցում օրեր առաջ հող հայրենիին նվիրված մի բեմադրությունից հետո Նարեկի մայրիկը համեստորեն արձագանքեց որդու շարադրության մասին, թե որքան է նա «չարչարվել», որ ուսուցչուհու մոտ արդարացնի իրեն իր ստեղծագործական մտքերով. «Այսօր ես ինձ եմ հարցնում, թե հայապահպանության գործում ի՞նչ կարող եմ անել, որ իմ մի բուռ դարձած երկիրը չկործանվի: Ես ապրում եմ քո գրկում ու խոստանում եմ, որ երբեք չեմ լքի իմ երկիրը: Մենք կհարատևենք դարեր շարունակ, և մեր լեզուն, մեր հավատը կապրեն հավերժ, ու միշտ կծածանվի մեր եռագույնը: Ես ապրում եմ այստեղ, որովհետև հայրենասիրական ոգով եմ դաստիարակված: Դա ինձ համար սահմանին կանգնած և երկրիս խաղաղ գիշերն ու անխռով առավոտը հսկող քաջ եղբայրներիս սիրելն է, նրանց գնահատելն ու իմ ազգի անունը ամեն տեղ բարձր պահելն է, և նույնիսկ հարկ եղած դեպքում՝ կյանքս չեմ խնայի հանուն հայրենիքի: Ես էլ ունեմ երազանքներ, որոնք անպայման ի կատար կածվեն: Ուզում եմ դառնալ ծրագրավորող, բայց ինչ էլ դառնալու լինեմ, ես կվերադառնամ իմ հայրենիք: Վստահ եմ՝ ոչ մի թուրք չի կանգնեցնի մեզ, քանի որ մենք վաղվա հերոսներն ենք և կանենք ամեն ինչ՝ մեր Արցախը շենացնելու համար»:

Վերջերս Մարտակերտի կենտրոնական գրադարանում կազմակերպված հայրենասիրական միջոցառմանն ակտիվ մասնակցություն ունեցավ նա, հետո ես Նարեկին առաջարկեցի առանձին նկարվել:

Նրա հարցական հայացքն ուղղվեց ինձ, բայց նկատեցի նաև իմ աշակերտի անսահման մեծ ուրախությունը... Ամենևին չզարմացա, երբ ասաց, որ եռագույնի մոտ է նկարվել…Հուսամ, իրեն տեսնելով այստեղ, հրաշալի անակնկալ կլինեմ մատուցած ապագա հայրենյաց պաշտպանին:

http://hayernaysor.am/archives/231537

2017-02-06

ՄԵՆՔ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՆՔ ՏԵՄՆՈՒՄ ՄԵՐ ՎԱՂՎԱ ՕՐԸ

Յավն ամրապնդում է մեր տեսակն ու ինքնությունը, ճշգրտում մեր ինքնաճանաչման սահմանները: Եվ վտանգի ու պատերազմի ժամերին մենք ավելի ենք տեսնում մեր ներսը, ավելի լավ հասկանում մեր անելիքը:

11-րդ դասարանում հարցրի աշակերտներին, թե որտեղ են տեսնում իրենց վաղվա օրը: Տարակարծություններ կային, բայց առաջարկեցի գրել, ու, հակառակ իմ սպասածին, որ ապրիլյան օրերից հետո հուսահատության ու վհատության երանգներն էին միախառնված նրանց մտքերում, կարդացի տողեր, որոնք հնարավորություն տվեցին ինձ նորից տեսնել մի սերնդի, որ ընտրել է իր ապրելու իրավունքն այս բազմաչարչար հողի վրա:

«Ոչ ոք չի կարող ասել, թե վաղվա օրը մեզ համար ինչ անակնկալներ է պատրաստել: Մեր վաղվա օրն այս պայմաններում ոչ մի լավ բան չի խոստանում, բայց իմ ապագան չեմ էլ պատկերացնում ուրիշ երկրում: Այստեղ իմ ապուպապերի հողն է, այն պետք է պաշտպանենք, շարունակենք նրանց կիսատ գործը» /Իսրայելյան Արթուր/:

«Բոլորս էլ մտահոգված ենք, թե ինչ է լինելու վաղը: Իմ ապագան չեմ պատկերացնում Մարտակերտում, բայց չեմ էլ տեսնում մեկ այլ երկրում՝ փոխված շրջապատում, օտարության մեջ» /Իսրայելյան Լիանա/:

«Ոմանք իրենց վաղվա օրը չեն ուզում տեսնել Արցախում, քանի որ նրանց պապերն էլ իր ժամանակ իրենց վաղվա օրը կապել են այս հողին, հիմա չեն ուզում իրենց երեխաներն ու թոռները տեսնեն այն, ինչ իրենք են տեսել այս հողում: Ես կապրեմ Արցախում, քանի որ սիրտս

ուրիշ տեղ չի ձգում, բայց ինչքա՜ն լավ է, որ ուրիշ երկրներում ապրողներն իրենց վաղվա օրվա մասին չեն մտածում, նրանք իրենց ազատ ու անկախ երկրում են ապրում» /Դանիելյան Վարդան/:

«Ես գիտեմ, որ այսպիսի մասնագիտություն ընտրելը մեծ պատասխանատվություն է, բայց համալսարանն ավարտելուց հետո կվերադառնամ իմ ծննդվայրը և որպես բժշկուհի՝ կաշխատեմ մեր հիվանդանոցում: Կլինեմ բոլորի հետ բարեհամբույր ու հարգալից, հուսով եմ՝ շատերը կգան ինձ մոտ մեծ սիրով՝ հավատացած, որ ապաքինվելու են» /Դանիելյան Վիկտորյա/:

«Միշտ էլ իմ ապագան պատկերացրել եմ այստեղ, բայց անընդհատ ապրել վախով ու սպասել, որ ահա նորից կրակոցներ կլսվեն, դա անհնարին է դառնում; Իմ վաղվա օրը երբեմն կասկածելի է դառնում այստեղ, բայց հույս ունեմ, որ մի օր մենք էլ կքնենք հանգիստ ու կապրենք անհոգ կյանքով» /Պետրոսյան Գոռ/:

«Առաջնահերթ եմ համարում ուսումս շարունակել Երևանի պետհամալսարանում, հետո կգամ իմ հարազատ բնօրրանը: Հուսամ, որ այն ժամանակ խաղաղ երկնքի տակ կկառուցեմ իմ ընտանիքը, իմ զավակներին կդաստիարակեմ: Սիրում եմ երազել, նույնիսկ երբ դրանք անիրական են: Լուսավոր ապագա եմ երազում, վստահ, որ եթե լինի մշտական խաղաղություն, ապա կհայրենադարձվեն շատերը, ովքեր ապրում են հեռուներում» /Դավթյան Տաթևիկ/:

«Ես ինձ լիարժեք կզգամ, երբ ստանամ ուսում, ունենամ իմ սիրած մասնագիտությունն ու աշխատանքը, սիրված լինեմ ընտանիքիս ու շրջապատի կողմից: Իսկ բնակվել կցանկանայի իմ երկրում, ուզում եմ շրջագայել այլ երկրներում ու տիրապետելով նրանց քաղաքակրթությանը՝ այն կատարելագործել իմ հայրենիքումե /Մարդոյան Քրիստին»/:

«Ցանկանում եմ ավարտել դպրոցը, ընդունվել համալսարան, լավ կրթություն ստանալ, դառնալ բժշկուհի: Գուցե և ավարտելուց հետո չվերադառնամ Արցախ, բայց եթե իմանամ իմ կարիքը կա այստեղ, անպայման կգամ: Ապրիլյան դեպքերն ապացուցեցին, որ մեր հողին բժիշկներ են պետք» /Հակոբյան Լուսինե/:

«Ապրիլին սահմանին կանգնած մեր տղաներն ամբողջ աշխարհին ցույց տվեցին, թե ինչպիսի պաշտպանություն ունի մեր երկիրը: Ամեն պատերազմում լինում են կորուստներ, այս մեկն էլ բացառություն չէր: Շուտով ես էլ կմեկնեմ ծառայության և հուսով եմ, որ կկարողանամ կատարել այդ տղաների կատարածի չնչին մասը» /Հարությունյան Հարություն/:

Ընթերցում եմ այս տողերը և հավատում նրանց, այո՛, հավատում եմ, որ նրանց համար ուրիշ տեղ դժվար կլինի ապրելը, ես հավատում եմ, որ գնացողները նորից եր կվերադառնան...Կգան՝ իրենց հույսն օրորելու այս արյունոտ ու ցավատանջ հողի վրա, կմնան նաև, որ ապրեցնեն հող հայրենին...Հավատում եմ, որ սերունդների այս շղթան կչգվի հար դարեր, ու հավերժական կլինի նրանց երթն այս բազմա-չարչար հողում:

http://usarmenianews.com/am-n-7989.html

2017-02-07

ՊԱՏՐԱՍՏ ԵՄ ԴԱՌՆԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՊԱՇՏՊԱՆԸ

Շատ դանդաղ եմ շարում տողերը, ֆեռքիս ափի մեջ սողոսկած, անանուն մի ցավ եմ զգում, մատներս չեն ուզում ենթարկվել ինձ, ընդարմացել են, բայց ես չեմ էլ կարողանում խուսափել նրա ինքնախոստովանությունից և ուզում եմ տեսանելի դարձնել այն, որի մասին բարձրաձայնում է 11-րդ դասարանում սովորող իմ աշակերտ Գևորգ Առաքելյանը՝ թղթին հանձնած իր մտքերով:

«Երբևէ չեմ զգացել այն պատասխանատվությունը, որ զգում են սահմանին կանգնած տղաները, սակայն միշտ էլ ոգեշնչվել եմ հայրենասիրական երգերով և պատրաստ եմ դառնալ հայրենիքիս պաշտպանը, զգալ, որ ինձանից է կախված թիկունքի պաշտպանությունը: Այդ պահին ո՞վ է մտածում մահանալու մասին, նույնիսկ գերադասում եմ ընկնել հերոսաբար, թեկուզ տունս դատարկվի, սակայն հպարտության զգացումը առկա կլինի ամեն անկյունում, որտեղ հիմա ես եմ մեծանում: Չնայած մարդիկ տարբեր են, սակայն վստահ եմ, որ շատերն են մտածում այսպես, և պատճառն այն է, որ մենք մեր ծնված օրվանից արդեն գիտենք, որ մեր տունն այստեղ է, մենք ենք մեր տան արքաները, այդ մենք ենք մեր տան պաշտպանները, և դա մեզ հնարավորություն է տալիս հպարտ կանգնելու այս հողին»:

Սա այն է, որ երբևէ չեմ լսել իմ առջև նստած աշակերտներից, նա կարծես մի նոր կոչ է հղում ամբողջ աշխարհին, ապրելու և հարատևելու անմնացորդ կոչը, որ կյանքի նկատմամբ ունեցած մեր մեծ սիրուն այստեղ փարվում է այն սարսափելի մահը, որին արցախցին ստիպված է լինում հարմարվել անգամ: Ես գիտեմ, որ նա բոլորիս անունից մի մեծ ճշմարտություն է արտահայտում, բայց չեմ էլ ուզում հաշտվել այդ մտքին, ու այդ «հարմարվել» բառը, որ միշտ էլ սովորական հնչողություն է ունեցել, այսօր դնում եմ չակերտների մեջ և ուզում եմ մի նոր կոչով ազդարարել, որ սահմանին թող երբեք զոհեր չլինեն, մենք խաղաղ ապրել ենք ուզում այս սուրբ ու անարատ, մեր նախնյաց երկրում:

«Ծառայել հայրենիքին՝ համարում եմ սրբազան պարտք, նաև՝ ինքնավստահություն, մտածում եմ, թե երբ ձեռքս կվերցնեմ զենքը ու կկանգնեմ սահմանի եզրագծին, որտեղ երբևէ չեմ եղել: Բայց նաև խաղաղ օրերի երազանքներ ունեմ, երբեմն երևակայությամբ սավառնում եմ, լինում այլ երկրներում: Մտովի ճանապարհորդում եմ մայրցամաքներով, լինում աֆրիկական ցեղերի մոտ, Ամերիկայում՝ Սպիտակ տան կողքին, ցուրտ Անտրակտիդայում, Ավստրալիայում՝ կենգուրուներին մոտիկ, և ամենուր: Ինձ շատ հետաքրքրում են տարբեր ազգերի մարդկանց սովորությունները, սակայն վաղվա օրս պատկերացնում եմ իմ հայրենիքում՝ հայրենակիցներիս կողքին, որտեղ ուզում եմ օգնել մարդկանց, ձեռք մեկնել կարիքավորներին»:

Ես նորից հիշողությունների մեջ եմ... Եվ անցած օրերում՝ ամիսներ առաջ, պեսնում եմ նորից Գևորգ Առաքելյանին, երբ աշակերտներին ուղղված իմ հարցումին, թե որտեղ կցանկանային ապրել, նա մյուսների նման գերադասեց հայրենի Արցախը, բայց հոգումս դաջվեց նրա ցավոտ խոսքը. «Ես իմ հայրենի տանն եմ՝ սահմանի մոտ, և ամեն անգամ, երբ բացում եմ աչքերս, ուզում եմ ինքնակամ խոցել իմ վախի սիրտը, որ հանկարծ նա չկանգնեցնի իմ սրտի աշխատանքը»:

http://usarmenianews.com/am-n-7996.html

2017-02-08

ԱՇԽԱՐՀ, ԿԱՆԳՆԵՑՐՈՒ՛ ԱԶԳԻՍ ԱՐԺԱՆԱՎՈՐ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Ամրտակերտում սուգ է, համատարած սուգ, որ մտավ դասարանից դասարան, տնից տուն, փողոցից փողոց, բակից բակ... Խոսքեր մնացին կիսատված, անավարտ ծիծաղներ քարացան, հառաչանքների մի ծով ալեկոծվեց ու դարձավ աշխարհին ուղղված բարձրակոչ ցասում: Նորից զոհ՝ ՊԲ պայմանագրային զինծառայող Գեղամ Հենրիկի Մանուկյանը, բոլորիս կողմից սիրված հայրենիքի նվիրյալը, ով անցած տարի ականի պայթյունից վիրավորվեց, կորցրեց ոտնաթաթն ու արմունկի կեսը, բայց ապաքինվելուց հետո նորից վերադարձավ սահմանային դիրք: 38-ամյա երիտասարդ փոխգնդապետը ամիսներ առաջ՝ 20 տարվա զինվորական ծառայությունից հետո, թոշակառու դարձավ, հակառակ հարազատների հորդորներին՝ չթողեց դիրքերը, քանի դեռ սահմանին հող հայրենին վտանգի տակ է:

Նա շատ-շատերի կողմից ճանաչված և հարգված անհատականությունների՝ Արցախյան պատերազմով անցած, տարիներ շարունակ շրջկենտրոնում պատասխանատու աշխատանքներ վարած Հենրիկ Մանուկյանի և մեր դպրոցի դասվար Արմինե Ափանցի միանուճար որդին է, քաղաքի հ. 2 դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Քնար Մանուկյանի եղբայրը, նաև՝ մեր դպրոցի շրջանավարտ, երկու երեխաների հայր:

Նորից իմ դասղեկական 7-րդ ա դասարանում որբացավ մի սիրուն աղջնակ՝ Արմինե Մանուկյանը: Օրը տագնապահարույց էր, սահմանային լարվածությունից անհանգիստ ապրումների մեջ՝ մտա դասարան: Հայոց լեզվի դասաժամ էր. հեռախոսազանգից վեր թռա: Մյուս կողմից ինձ լսելի դարձավ այդ սարսափելի գույժը: Չէի հավատում, բայց քարացած եմ: Կողքից լսելի եղան ինձ ուղղված աշակերտների հարցումները, թե արդյո՞ք ինչ-որ բան է պատահել:

Հայացքս ուղղվեց դեպի իմ համեստ աշակերտուհին, նա մեղմորեն ժպտաց ինձ: Դասաժամի ավարտն ազդարարող զանգին եմ սպասում անհամբեր, այն հինգ րոպեն ծանրանում է հոգումս, հայացքս փախցնում եմ նրանից, բայց նա ձեռք է բարձրացրել...Նա կանգնեց, խոսում է դասանյութից, իսկ ես չեմ լսում: Կարծես փախչում եմ դասարանից: Բայց րոպեներ անց ես ականատես եմ իմ աշակերտուհու աղիողորմ լացին, ամենքս արտասվում ենք, բայց փորձում եմ հորդորել նրան, որ հայրն ընդամենը վիրավորվել է և շուտով իմ աշակերտուհուն տանում եմ «վիրավոր» հայրիկին տեսության:

Ես Գեղամին տեսնում եմ տարիների հեռվից՝ դեռևս 1996-ին, երբ օտար ափերից վերադարձա հայրենի բնօրրանս: Առաջին իսկ օրերից դպրոցում աշխատանքի ընդունված ուսուցչուհուս ուշադրությունից չվրիպեց 10-րդ դասարանում առաջին նստարանին նստած այդ աշակերտը: Անհանգիստ հոգին շուտով սկսեց բացել ինձ հետ: Առաջին սիրո ազնիվ ու մաքուր տվայտանքներին ի տես դարձա ես, մի անաղարտ սեր զուգահեռ դասարանում սովորող այն գեղեցկատես աշակերտուհու՝ Ինգայի հանդեպ, որ հետագայում դարձավ իր երկու երեխաների մայրը:

Կորստյան ցավին որպես մխիթարա՞նք եմ գրում այս տողերը, թե՞ տանջահար վշտին դիմանալու ցանկությունից եմ ուզում բարձրաձայնել, որ այստեղ կյանքի կարոտը վեր է ամեն ինչից, բայց հակառակ մեր կենսալից ու լուսավոր կյանքի մասին ունեցած երազանքներին՝ ապրելու տենչը հակադրվում է այն սարսափելի մահվանը, որ սահմանի մոտ երիտասարդ կյանքեր է խլում, օջախներ ավերում:

Որդեկորույս մայրերի աղիողորմ ճի՞չն էի լսում այսօր, թե՞ այրիացած կանանց աղաղակը՝ միախառնված որբացած երեխաների աղիողորմ ձայներին, որ ուղղված էին աշխարհին:

Կանգնեցրե՛ք ազգիս արժանավոր զավակների կորուստը, բավական է, կանգնեցրե՛ք այն…

http://usarmenianews.com/am-n-8010.html

http://www.yerkir.am/news/view/123264.html

2017-02-09

ԵՍ ՉԵՄ ՄԱՀԱՑԵԼ, ԵՍ ՄԻԱՑԵԼ ԵՄ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆԸ

12-րդ դասարանում այսօր իմ ծրագրային դասանյութից շեղվեցի…Այն արիության դաս էր Գեղամ Մանուկյան քաջազուն հայորդու մասին: Դասարանի քար լռությունը ճեղքեց իմ ձայնը…

Ծանր տրամադրությունը համակեց բոլորիս… Արցունքի կտորներ կային այնտեղ, ինձ սևեռված հայացքներ:

Ժամեր հետո ես տեսա նրան քարացած ու հավերժության ճանապարհին…Զիվորական համազգեստով էր նա՝ մի շարք պետական պարգևների արժանացած ազգի նվիրյալը: Եվ ափսոսանքը խեղդում էր ինձ, որ մեր կողքին կենդանի լեգենդ կար, իսկ մենք չգիտեինք:

Բազմաթիվ նկարների մեջ փնտրում եմ նրան, համեստությունը նույնիսկ նկարվելու մեջ էր, որ տեսանելի չլիներ, այնպես, ինչպես գործն էր անտեսանելի շատերիս համար:

Երբևէ մեծարանքի ու հպարտության խոսք չկար մեր կողքին ապրող հերոսի մասին, ով իր զինվորական գործը գերադասեց անձնական հոգսերից, ապրեց շրջապատի աշխարհից թաքցրած իր մաքառումները, դարձավ զինվորների կողմից սիրված հրամանատար, արժանացավ պետական պարգևների, ստացավ փոխգնդապետի կոչում, վիրավորվեց, նորից վերադարձավ դիրքեր, թոշակի անցավ, բայց շարունակեց զինվորական ծառայությունը:

Կհավատա՞ ինձ աշխարհը, որ այս փոքրիկ քաղաքում քսան տարվա մեջ հայրենիքին զինվորագրված նվիրյալին տեսել եմ միայն երկու անգամ: Առաջինը պատահաբար էր. փորձել եմ կողքով լուռ անցնել, չէի ճանաչել, բայց նրա ժպիտը կանգնեցրել է ինձ: Երեխա-

յի նման անմեղ հայացքով իր ուսուցչուհուն հասկացրել է, որ ինքն այն տարիներ առաջվա դպրոցականը չէ, հիմա ուրիշ է, մի ուրիշ մարդ, ում ես դեռ չեմ ճանաչում: Երկրորդ հանդիպումը մտերմիկ միջավայրում էր, բայց այդ ժամանակ էլ հայրենի հողին նվիրված իր մարտական ոգով անտեսանելի մնաց ինձ:

Ես ցավում եմ այսօր, որ չհասցրի նրան ճանաչել, երբ նա իմ առջև նստած աշակերտուհու հայրն է, իմ կողքին աշխատող ուսուցչուհու որդին, ես չհասցրի նրան ճանաչել, երբ ամեն անգամ առիթից առիթ գործի բերումով հանդիպում էի նրա հայրիկին կամ պատահաբար տեսնում էի քրոջը: Լռության քողով էր պատված ամեն ինչ, նա չէր սիրում բարձրաձայնել, և բոլորը լուռ էին: Եվ այդպես լուռ նա ապաքինվեց, երբ ականից վիրավորված էր, հարազատներն այդ նույն լռությամբ ապրիլյան օրեր ապրեցին, երբ Գեղամն առաջնագծում էր: Համեստորեն լռեցին նրանք՝ չիմանալով, որ մի օր այդ լռությունն ահեղագոչ կաղաղակի՝ ի լուր աշխարհի, որ մեր կողքին ապրում էր ազգի նվիրյալ մի հայորդի:

Այս օրերին լռության շղթան քանդվեց, որ անմահացած հերոսի մասին լեգենդներ պատմեն, ով իր սխրանքների կողքին լռությունն էր գերադասում:

http://usarmenianews.com/am-n-8024.html

2017-02-10

ԲԱՎԱԿԱՆ Է՝ ՄԵՐ ԱՐՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՉԱՓԵՆՔ ԱԶԳԻՍ ՋԱՎԱԿՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Նայելով այս լուսանկարին՝ ուզում եմ բարձրաձայն աղաղակել՝ ի լուր աշխարհի, որ հայրենիքի նվիրյալ հայորդին՝ Գեղամ Մանուկյանը, հողի սերը գերադասեց իր ընտանեկան երջանկությունից, որտեղ անչափահաս երկու երեխաներ կան, սիրված կին ու հարազատներ: Քանդվեց մի օջախ, կործանվեց մի գեղեցիկ սեր…

Այս պահին իմ ես-ը դառնում է մենք, ու այդ մենք-ի մեջ տեսնում եմ մի տառապած ժողովուրդ, որ այսօր հավաքվել էր իր նահատակ հերոսին պատվով ճանապարհելու…Իմ մտապատկերում Գեղամի վշտամորմոք կինն է, նրա դուստրը՝ իմ աշակերտուհին, որ այս օրերին հայրիկի կողքից չհեռացավ, որդին, որ չէր կարողանում հավատալ իրականությանը, այս մեծ տառապանքից ցնցված ծնողները, եղբոր կորստից իրեն կորցրած քույրը, բոլոր հարազատները, երկրիս պետական այրերը, զինվորականներ, մի ամբողջ ժողովուրդ, արցունքոտված մի ազգ հավաքվել էր Մարտակերտի մշակույթի տանը՝ հրաժեշտ տալու ազգի նվիրյալ զավակին:

Չեմ ուզում լալահառաչ հնչի իմ խոսքը, բայց ո՞վ ենք մենք և ի՞նչ ենք զգում, երբ ամեն անգամ ազգի զավակներին կորցնելուց հետո լսում ենք նահատակների հոգու կանչը… Այս պահին ուզում եմ աղաղակել՝ կանգնեցրե՛ք ազգիս կորուստը, կանգնեցրե՛ք, թեկուզ այն հնչի որպես սպառնալիք:

Այս պահին իմ ես-ը դառնում է ընդհանրական, ու մի նոր հարց է ավելանում՝ ես հայրենի հողի ուժի ու նրա սրբազան լինելու գաղափա՞րն եմ իմ մեջ կրում, փորձում մաքրագործող ուժ ներարկել նոր սերնդին, թե՞ ընդհանրական ճշմարտություն բարձրաձայնող եմ, այն մեծ ճշմարտության, ովքեր իրենց մեջ կրում են հայրենի հողի բույրն ու նրա ազատությունը և իրենց զոհաբերում այդ հողի համար:

Եվ իմ հոգու կանչն է իմ հարցումներին արձագանքում, և այդ նույն հոգու աչքերով էլ զգում եմ հողի ջերմությունը, աշխարհը վերարտադրում իմ ես-ի, իմ անհատական զգացումների, սեփական ապրումների ու համոզմունքների միջոցով, ու այդ ես-ն ամեն անգամ ինձ համար դառնում է ընդհանրական, որով կերպավորում եմ իմ շրջապատում գտնվող անհատին, որտեղ տեսնում եմ ազգի զավակների կորուստ, որդեկորույս մայրեր, որբացած երեխաներ, այրիացած կանայք… Այդ ես-ի մեջ տեղավորված են բազում նահատակ դարձած կերպարներ, ողջեր, ցավը կրողներ, ցավը հաղթահարածներ, և ամեն անգամ ես դառնում եմ նրանցից մեկը:

Իմ մտածողության մեջ մի ամբողջ տիեզերք կա, մարդկության ցավ ու տառապանք ու նրա կիզակետում՝ մի ամբողջ ազգ ու մեր էության մեջ գտնվող հայրենիքը: Եվ իմ հոգում ամեն անգամ կրում եմ իմ երկրի հինավուրց պատմությունը, նրա ներկան ու ապագա կյանքի երազանքը: Այդ ներկայի մեջ հայրենի Արցախի սահմանը պահող հայորդիներն են ու բոլոր նահատակները: Այո՛, նահատակներն ինձ համար երբևէ անցյալ չեն դարձել: Նրանց միջով է բեկվում ներկան, նրանցով է կերտվում խորախորհուրդ ապագան:

Ես իմ հայրենիքի գեղեցկության ընկալողն եմ դառնում ու իմ երկրի հավերժության ավետաբերը, և փորձում եմ այն նորից դարձնել ընդհանրական, որ բոլորս ենք այստեղ ընկալում այդ գեղեցկությունը, մեր մեջ զգում այդ հայրենիքը, այն ջերմությունը, որ իր գրկում հողն է պահում, ու այն կանչը, որ բոլորիս հոգում արձագանքում են նահատակները, բայց բավակա՛ն է…Բավակա՛ն է՝ մեր արցունքներով չափենք ազգիս զավակների կորուստը…Բավակա՛ն է…

http://usarmenianews.com/am-n-8034.html

2017-02-13

ԵՐԱԶՈՒՄ ԵՄ ԾԱՌԱՅԵԼ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏ ՀԱԳՆԵԼ

Ես վաղուց գիտեմ, որ 12-րդ հումանիտար դասարանում սովորող իմ աշակերտուհին՝ Արմինե Կարապետյանը, երազում է ծառայել, զինվորական համազգեստ հագնել, և այն օրեցօր ավելի հաստատակամ է հնչում, այս օրերին՝ առավել ևս, երբ վերջին փոթորկված օրերի մորմոքն ենք ապրում:

«Զինվո՛ր, խոնարհվում եմ քո առջև ու խոստանում, որ ընդամենը ամիսներ անց հագնելու եմ համազգեստ՝ նախ որպես կուրսանտ, իսկ հետո կանգնելու եմ այն դիրքում, որը եղբայրներիս արյամբ է գծվել: Երազում եմ ծառայել, զինվորական համազգեստ հագնել: Սա իմ երազանքն է, նպատակը: Արցունքները կոկորդումս խեղդած եմ գրում այս տողերը, երբ նայում եմ կապույտ երկնքին, թերթում մեր գոյամարտի փառավոր էջերը, հիշում հանուն հայրենիքի կյանքը զոհած հավերժի ճամփորդներին:

Ես անցած օրերի պատերազմն եմ հիշում, նոր օրերի մեծագույն կորուստը մեր ու հավատում, որ մի օր թշնամին պատասխան է տալու մեր կորցրած հողերի, այն լավ տղաների կյանքը մկրատելու համար, մեր թափած արցունքի համար, ամեն մի արձակած գնդակի համար: Պատասխան է տալու՝ մոր աչքը որդու ճամփին թողնելու, հերոս տղաների ճակատագրերն անհայտ թողնելու համար...

Շատերին կարող է տարօրինակ թվա իմ երազանքը, բայց ես հայուհի եմ՝ վրեժով լցված, և համոզված եմ, որ յուրաքանչյուր գնդակ իր նպատակին է հասնելու: Եվ եթե պահը գա, անկասկած, բոպե անգամ չմտածելով, կյանքս կտամ հայրենիքիս:

Իմ զինվո՛ր եղբայր, ուզում եմ միշտ իմանաս, որ եկեղեցում վառածս մոմերից մեկը միշտ քեզ համար է, գիշերվա աղոթքներս քեզ համար են, նաև՝ Արցախիս խաղաղության համար. «Տե՛ր, խնդրում եմ, թո՛ղ ամեն զինվոր հասնի իր օջախը, թո՛ղ նա իր աչքերը բացի խաղաղությամբ, թո՛ղ երբեք չարթնանա թշնամու կրակոցից…»:

Զինվո՛ր, զգո՛ն եղիր, հպա՛րտ, ուժե՛ղ եղիր, քանզի հաղթանակը կախված է որակից, այլ ոչ թե քանակից, իսկ թշնամին չունի այն ոգու ուժը, որն ապրում է քո մեջ: Ուզում եմ իմանաս, որ թիկունքում մենք քեզանով ենք ոգեշնչվում, քեզանով ապրում, խաղաղություն, համբերություն ու բարի հերթապահություն քեզ, իմ եղբա՛յր զինվոր: Սպասի՛ր, մի օր ես էլ կգամ քեզ հերթափոխելու»:

Պատմական հիշողությունն օգնում է մանկավարժներիս՝ հայ կանանց կերպարների տարբեր օրինակներով վարակել և դաստիարակել սովորողներին, բայց, չգիտեմ ինչու, ամենևին չեմ ուզում մեր աղջիկներին տեսնել դիրքերում՝ սահմանապահ զինվորների կողքին:

Այս անգամ «ո՛չ» եմ ասում իմ աշակերտուհու այս երազանքին, որ ցանկանում է զինվորական համազգեստ հագնել, զենք ունենալ ձեռքին:

http://usarmenianews.com/am-n-8055.html

2017-02-14

ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆԱՀԱՏԱԿ ՀԵՐՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱԼԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱՆ

Արցախյան ազատամարտի նվիրյալ Վլադիմիր Բալայանի ծննդյան օրն է: Հուշ-ցերեկույթն իր անունը կրող Մարտակերտի միջնակարգ դպրոցում մի հայրենյաց դաս էր՝ հավերժացած հերոսի անցած ճանապարհի հիշողությամբ, որ կազմակերպել էին դաստիարակչական գծով տնօրենի տեղակալ Կարինե Բալասանյանն ու դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Պետրոսյանը:



Մեկ րոպե լռությունը հարգանքի տուրք էր նահատակների հիշատակին: Մի խորհրդավոր լռություն, որ մեզ ցավով հիշեցնում է, թե պատերազմը մենք չենք հորինել, որ կարողանանք այն կանգնեցնել: Բայց հնարավոր չէ նաև նահատակներին հիշել միանգամից, երբ օրեցօր, ամսեամիս, տարի առ տարի մեր հիշողությանը նոր անուններ են գումարվում: Գնացին նրանք, բայց վերադարձան նորերը, նոր կտրիճներ աշխարհ եկան, նոր ծաղիկներ ցանվեցին ու հիմա էլ խոնարհվում են նրանց լեգենդ դարձած շիրմաքարերին: Դա երախտագիտություն էր մահերով հարուստ մեր ժողովրդի տաղանդավոր զավակների հիշատակին, որ դարձել էր ծննդյան օր, անցած մի փառավոր մարտական կյանքի հիշողություն:

Գյուղական պարզ կյանքով ապրող երիտասարդի կյանքի ու Արցախի ազատագրական պայքարի մեջ մտած մարտիկի անցած ուղու մասին ներկայացրեց 10-րդ դասարանի աշակերտ Գոռ Ավագիմյանը: «Արծիվները բարձունքներ են տենչում» /Ս. Նանագուլյան/ գրքի տողերը նոր շունչ էին առել բեմ բարձրացած դպրոցականի խոսքերում. «Մարտակերտով անցնող մայրուղին թուրքերից պաշտպանող տղաները, նրանց մեջ նաև Վլադիմիրը, կանգնեցրին թուրքերի ավտոշարասյունը ու պահանջեցին ետ վերադառնալ:

Ավտոշարասյունը ուղեկցող թուրք սպան պահանջեց բացել ճանապարհը՝ ասելով, որ ստիպված կլինի կրակ բացել: Թուրք սպային ընդառաջ եկավ Վլադիմիրը ու շատ հաստատուն հայտարարեց. «Թուրքերը Մարտակերտով կանցնեն այն ժամանակ, երբ հայերն անվտանգ կանցնեն Աղդամով… Մենք կզոհվենք, բայց թուրքն այս ճանապարհով չի անցնի»: Վլադիմիրի կրակոտ խոսքը, վճռականությունը, աչքերի ցոլքը, նրան շրջապատող տղաների հաստատակամությունն ստիպեցին թուրքերին ետ վերադառնալ: Դա գրեթե անզեն տղաների առաջին լուրջ հաղթանակն էր: Հետո այդ տղաները շրջանում առաջիններից կազմակերպեցին ինքնապաշտպանության ջոկատ: Եվ առաջին հավաքում Վլադիմիրին ընտրեցին իրենց հրամանատար»:

Հուշ-ցերեկույթը ցեղի ոգու կանչն էր արձագանքում բեմ բարձրացած մեր աշակերտուհիների՝ Գերտրուդա և Լիլիանա քույրերի հայրենասիրական երգերի հմայիչ ղողանջներով, մեր աշակերտների գեղարվեստական ասմունքով, տարբեր դասարանների աղջիկների զինվորական պարով: Ինֆորմատիկայի խմբակի սաները՝ /խմբակավար Ռուզաննա Հարությունյան/ 7-րդ ա դասարանի դպրոցականներ Մերի Հովհաննիսյանը, Նարեկ Բաղրյանը, Մալենա Մուսայելյանը, Վլադիմիրի կյանքի ու անցած մարտական ուղու մասին նկարներով, իրենց խոսքով ու երգերով տեսանյութեր էին ձևավորել, մի նոր ոճական երանգավորում հաղորդել միջոցառմանը, որոնք ցուցադրվեցին՝ ի տես բոլոր մասնակիցների: Մանկավարժիս և ռուսաց լեզվի ուսուցչուհի Նոնա Հայրապետյանի՝ Վլադիմիրի մասին հիշողություններով ավարտվեց միջոցառումը: Դպրոցի բակում խոյացած հայրենիքի նվիրյալի հուշակոթողին նոր ծաղիկներ խոնարհվեցին, նոր մրմունջներ վեր խոյացան առ Աստված՝ խաղաղ օրերի ազատաբաղձ երազանքներով:

Եվ մանկավարժի իմ օրագրում հայրենյաց դասի ևս մեկ գրառում ավելացավ:

http://usarmenianews.com/am-n-8059.html

2017-02-15

ԱՌԱՋԻՆ ՈՒ ՎԵՐՋԻՆ ԴԱՐՁԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Իմ ձեռքին մի խունացած թուղթ է՝ տասնվեց տարի առաջ գրված մի հիշողություն լեգենդար հրամանատարի մասին, որ բեմ բարձրացրեց ուսուցչուհուս Վլադիմիր Բալայանի ծննդյան օրը: Հանկարծակի ծագած մի միտք, որ պետք է ընթերցեմ նրա կյանքի այս մի փոքրիկ հատվածի մասին, որ դպրոցահասակ մի երեխայի հիշողություն է այն օրերից, երբ արցախցին իր նախնյաց արյան կանչով ելավ հրապարակ, որ իր ոտնահարված իրավունքի ու ազատ ապրելու մասին բարձրաձայնի:

Դահլիճում քար լռություն է, ինձ հառած հայացքներ, ու ես բոլորին ցույց եմ տալիս մի դեղնած թուղթ, որտեղ տողեր կան անմահացած այն օրերից, երբ պատերազմի այրող հոտը դեռ Արցախյան գոյապայքարի տարիներին շատ հայորդիների կռվի կոչեց, ու բռնեցին նրանք պայքարի ուղին և հավերժացան:

«Մեր լեռների արծիվը», այդպես էր Վլադիմիրի ծննդյան օրվան նվիրված ստեղծագործական շարադրության վերնագիրը, որ 2001-ի փետրվարին հանձնարարել էի գրել 10-րդ դասարանում: Այդ օրը Ելենա Ավթանդիլյանի տողերն առանձնացան մյուսներից: Լեգենդար հրամանատարի հետ իր առաջին ու վերջին հանդիպման մասին մի գեղեցիկ հիշողություն էր այն, որ տեղի էր ունեցել մեկ տասնյակ տարի առաջ: Այն թղթին հանձնեց նա՝ առանց գիտակցելու, որ տարիներ անց այդ հիշողությունը կավելանա անմահացած հերոսի կյանքի մասին պատմող տարեգրությանը:

«Ես, ինչպես իմ հասակակից շատերը, անմիջական ծանոթ չէի Վլադիմիրին ու նրա հետ կռվող տղաներին, բայց անգիր կարող էի թվարկել բոլոր կռվող տղաների անունները, գիտեի նույնիսկ նրանց սխրագործությունների մասին: Մարտակերտում մենք փոքրիշատե ապահովության տեսակետից ապաստանել էինք «Ղուզե թաղում»:

Կանանց կենցաղային ռիթմը վաղուց խախտված էր, ժամերով նստում էին շտաբի ճամփեզրին՝ մարտադաշտից լուրեր իմանալու ակնկալիքով: Ես էլ իմ հասակակից երեխաների նման սիրում էի խցկվել ամբոխի մեջ՝ ինձ համար այնքան հարազատ տղաներից որևէ լուր իմանալու համար: Ես էլ գիտեի՝ եթե որևէ տեղ դրությունն այն չէր, ուրեմն ուր որ է Վլադիմիրը կհասնի իր տղաների հետ, ու ամեն ինչ լավ կլինի: Միայն ես նրան դեռ չէի ճանաչում:

Մայիսյան պայծառ օր էր, մարդիկ սովորականի նման խմբվել էին ճամփեզրին: Ինչ-որ մեկն ասաց՝ ահա եկան Վլադիմիրի տղաները: Շրջապատի մռայլ տրամադրությունն ասես բոպեական անհետացավ:

Տարեց մի մարդ, որ գրավել էր իմ ուշադրությունը, առավոտից մի փունջ վարդ ձեռքին՝ դեռ նստած էր առանձին, բայց հանկարծ սթափվեց: Իր տարիքին անհամեմատ խրոխտ քայլերով մոտեցավ տղաներին: Ամուր բռնած ծաղկեփունջը՝ նա հայացքով փնտրում էր մեկին: Զինվորական հագուստով մի բարետես երիտասարդ առաջացավ: Տղաներն ազատ բոպե չկորցնելու համար տրվել էին կատակներին: Չգիտես որտեղից, ակորդեոն ճարվեց: Տղաները շուրջպարի բռնեցին: Տարեց մի մարդ, գրկած Վլադիմիրին, որդիաբար համբուրում էր նրա գլուխը, կամացուկ ինչ-որ բառեր շշնջում: Մի քանի բոպեից այդ մարդու հետ տղաների մեջ հայտնվեց նաև Վլադիմիրը՝ ծաղկեփունջը ձեռքին:

Դա իմ առաջին հանդիպումն էր Արցախի ազատամարտի հերոս Վլադիմիր Բալայանի հետ: Հիշողությանս մեջ գաղթի ճանապարհների արհավիրքների հետ կա մի սուրբ, լուսավոր պատառիկ: Դա իմ առաջին հանդիպումն էր նրա հետ, որ, ցավոք, վերջինը դարձավ: Թշնամու դավադիր գնդակը խլեց նրա կյանքը, մարտի դաշտից ելավ նրա զոհվելու բոթը: Տարիներ անցան, հիշողությանս մեջ մնաց մայիսյան մի պայծառ օր, երիտասարդ, բարետես մի զինվորական, ով, վարդի փունջը ձեռքին, պարում էր ծերունազարդ մի մարդու հետ, և մերթընդմերթ կարծես ականջիս է հասնում ծերունու դողդոջուն շշնջոցը, որ ասես աղոթում էր նրա կյանքի համար:

Կրկին վերադարձել եմ Մարտակերտ, և այն դպրոցը, որտեղ սովորում եմ ես, կրում է քո անունը, իմ սիրելի՛ հերոս: Հիմա ես ամեն օր եմ հանդիպում քեզ ու մտովի վերհիշում այն առաջին ու վերջին դարձած հանդիպումը»:

Դահլիճի քար լռության մեջ ընթերցեցի ազգի նվիրյալի՝ անցած օրերից մնացած մի փոքրիկ պատառիկ, այդ նույն լռությամբ իջա բեմից, ու հիշողությանս մեջ մեր անցած ճանապարհն է, որտեղ ցույցեր կան, պատերազմ ու ավեր, հարյուրավոր պատանդներ, սով ու մութ տարիներ, անթիվ զոհեր ու վիրավորներ, գաղթի անտանելի տագնապալի ճամփա, արցունք ու արյուն, համառ պայքար, օտար եզերքներ ու նորից վերադարձ հայրենի տուն:

http://usarmenianews.com/am-n-8066.html

2017-02-16

ՀԱՅՐԻԿ ԿՈՐՑՐԱԾ ԵՐԿՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ

Չեռքիս ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի շնորհակալագիրն էր՝ ի երախտագիտություն վերջերս Արցախի առաջնագծում զոհված Գեղամ Մանուկյանի՝ հայրենիքին մատուցած անմնացորդ ծառայությունների: Հայացքս սահում է տողերով, փոթորկված հոգիս ուզում է դուրս գալ բնից, բայց կողքիս սգավոր մայր կա նստած, մեր դպրոցի ուսուցչուհի Արմինե Ափանցը, որ քարքարոտ ճամփաներ ունի անցած, և մի անհատնում ուղի բարբառում է շատ ցավոտ ու հանդարտ: Նրա նվաղած հոգում ես չափում եմ որդեկորույս հայոց մայրերի վիշտը՝ անչափելի ու անսահմանության մեջ թանձրացած:

Մենք Գեղամի տանն ենք՝ իմ դասղեկական 7-րդ ա դասարանի ծնողական խորհրդի անդամ Անժելա Պետրոսյանը, նաև՝ մի քանի աշակերտներ, որ մեզ հետ էին իրենց համադասարանցուն՝ հայրիկ կորցրած Արմինեին տեսնելու ցանկությամբ:

Մի վշտամորմոք հայր, որ Գեղամի անցած օրերի նկարներն է թերթում՝ ընտանեկան խմբանկարներ, երջանիկ օրեր, հարազատ դեմքեր, ու հավերժացած այդ պահերին հակադրվում են մեր մշուշված հայացքները: Նայում եմ նահատակված հայորդու մեծացրած դիմանկարին, կարծես ուզում եմ ընկալել նրա շուրթերին գամված առեղծվածային ժպիտը, և ինձ հասանելի են դառնում հարազատների զրույցները, որ բոլորից թաքցրել էր իր մարտական ու դժվարին կյանքը: Եվ այդ արցունքախառն զրույցներում թև էին առնում հեռուներից եկած Գեղամի մարտական ընկերների, նրա հրամանատարության տակ ծառայած բազմաթիվ անձանց ցավոտ արձագանքներն ու հայրենասեր հայորդու մասին կամքի և նվիրվածության բազում սխրանքները:

Նրանց նվաղած հոգում տեսնում եմ վիշտը հայոց: Մշուշե քողը պատում է դեմքս, երբ նայում եմ երիտասարդ կնոջը…Բյուրեղի կտոր-

ներ, որ թափվում ու հալվում են այտերին: Արցունքների միջից հառած աչքեր, որ լուռ են, հառաչանքների տակ ծանրացած: Ինձ հետ է իմ դասարանի Գևորգի մայրը՝ տառապանքի դրոշմը դեմքին, որ տարիներ առաջ էր ազատամարտիկ ամուսին կորցրել:

Գեղամի դուստրը դասի էր այսօր… Դասամիջոցին դասարանի դուռը բացեցի, հայացքս փնտրում էր նրան: Փայտի վառարանի մոտ կանգնած էր նա՝ համադասարանցիներով շրջապատված: Մի մեղմ, շատ մեղմ ու ցավոտ, մի փոքրիկ ժպիտ պարգևեց ինձ: Ծանր հոգոց քաշեցի. որքա՜ն դժվար է հայրիկներ կորցրած երեխաներին դասավանդել: Եվ այդ տառապանքի քողը դեմքիս՝ ես տեսնում եմ այս օրերին հայրիկ կորցրած երկու դպրոցականի:

Կորստի ցավից կուչ է գալիս սիրտս…Ամեն օր զոհվածների սուրբ արյամբ է ցողվում հայոց հողը արցախյան: Ընկնում են ազգի նվիրյալ զավակները: Ընկնում են, որ գարունները գան ու չգնան մեր հայրենիքից, որ խաղաղությամբ բացվեն այս մի բուռ հողի արշալույսները, որ երկինքը մեր անամպ լինի, ու հավերժ ապրի ազգը հայոց:

Փայփայենք մեր որբացած երեխաներին, որոնց նայելով՝ ոչ թե խղճահարություն, այլ հպարտություն ես զգում, քիմքիդ առնում արժանապատիվ ապրելու համը:

http://usarmenianews.com/am-n-8080.html

2017-02-17

ԵՐԲ ԵՆՔ ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՄՏԵՍԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ

Օրեր առաջվա զրույցը, թե երբ ենք վերջին անգամ կերել խաշիլ, առիթ հանդիսացավ այսօր վայելելու հնուց եկած այդ ճաշատեսակը: Բայց նաև հիշեցի, որ անցած տարի տարբեր դասարաններում աշակերտներին ուղղված իմ հարցին, թե ինչը կդառնա թանգարանային նմուշ հիսուն տարի հետո, նրանց խոսքում խաշիլն էլ իր «արժանվույն» տեղն ուներ այդ անհետացող ճաշատեսակների մեջ: Անցած խաղաղ օրերի մասին տան մեծերի զրու՛յցն էր նրանց հասցրել հին օրերի հիշողությունների գիրկը, թե՞ սահմանային ամենօրյա լարվածությունն էր հոգնեցրել աշակերտներին, որ նրանց մի մասին այս թեման մի նոր հետաքրքիր վերլուծությունների էր տարել:

Այդ օրը Լուսինե Հակոբյանի խոսքում հնչեց մի ճշմարտություն, որով բարձրաձայնում էր ազգայինից հեռանալու իրական փաստը. «Մի՞թե կամաց-կամաց մոռացության չեն տրվում մեր տատիկներից մեզ մնացած թոնրահացը, հին հայկական ճաշատեսակների՝ խաշիլի, քիլինգյոշի, կորկոտի, ածիկի, թանապուրի պատրաստելը, իլիկով և ճախարակով թել մանելը, սանդերքի օգնությամբ բրդից թելի մալանչներ ստանալը, շյուղերով փափուկ գուլպաներ գործելը, քարե երկանքով ցորեն աղալը, տնային պայմաններում գորգեր ու կարպետներ գործելը, ասեղնագործությունը, բուրդ գզելը, բահով հող փխրեցնելը, եզներով վար անելը, նույնիսկ մեր օրերում՝ ձեռքով լվացք անելը...

Օրեր, ամիսներ, տարիներ և նույնիսկ դարեր են անցնելու, և մի օր այս ամենը մնալու են պատմության էջերում, ոչ ոք չի հիշելու այս ամենի մասին, քանի որ տեխնիկայի զարգացման զուգընթաց՝ մարդիկ ավելի շատ նստակյաց կյանքին են սովորել և նախընտրում են զբաղվեն առավել հեշտ գործերով»:

Աշակերտներ ունենք, որ երբեմն նրանց արտահայտած մեկ միտքն անգամ զարմացնում է մեզ, դասերից մի քիչ հեռացած՝ կարծես ոչինչ էլ չես ակնկալում նրանցից, բայց երբեմն հիանում ես նրանց վերլուծություններով ու դիտարկումներով: Այդ օրը հիշողությանս մեջ դրոշմվեց Հակոբ Մամունցի արտահայտած միտքը. «Իմ կարծիքով թանգարանային նմուշ կդառնան ոչ միայն առարկաները, որոնք գոյություն ունեն մեր օրերում, այլև մի քանի բարոյական գեղեցիկ արժեքներ, օրինակ՝ այն, որ հիմա մեզ մոտ երեխան ավտոբուսում իր տեղը զիջում է տարեց մարդուն...»:

Այդ օրն ինձ մնում էր շնորհակալություն հայտնելու օտար ափերում ապրող իմ շատ սիրելի Գոհար Բաղալյանին, ով, ինձ տրամադրելով ամերիկյան քոլեջների ընդունելության քննություններում առաջադրված շարադրության վերնագիրը, այս թեմայով մեզ տարել էր լավագույն հիշողությունների գիրկը:

http://usarmenianews.com/am-n-8086.html

2017-02-18

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇԸ» ՄԵՐ ՕՐԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Փետրվարի 19-ը Թումանյանի ծննդյան օրն է…Սահյանական տողերն եմ հիշում. «Ամեն տարիք ունի իր Թումանյանը, ամեն սերունդ ունի իր Թումանյանը, ամեն ժամանակ, ամեն օր ունի իր Թումանյանը»:

12-րդ դասարանում անցած նյութերի կրկնություն էր, բայց մտքերով նախորդ օրերի հետ եմ: Մեծ լռեցին ինձ տարավ աշակերտներիս արտահայտած կարծիքների աշխարհը: Երբևէ մտքովս չէր անցել, որ նոր օրերի աշակերտության մեջ կգտնվեր մեկը, ում դուր չէր գա «Անուշը»: Շատ մեծ էր անակնկալը. «Պոեմը, գիտեմ, որ հայ գրականության գոհարներից մեկն է, սակայն ես, բացառություն լինելով, այդքան էլ չսիրեցի այն:

Գուցե իմ սիրահարված չլինելը, կամ ինձ մոտ սիրո բացակայությու՞ննէ պատճառը, չգիտեմ: Ուղղակի իմ հոգուն հարազատ չէ պոեմի թեման: /Հարությունյան Դավիթ/:

Ժամանակնե՞րն են փոխվել, թե՞ սերունդն է իր մտածելակերպով մի քանի քայլ մեզանից առաջ անցել...Այս մտորումներն էլ հենց առիթ հանդիսացան՝ թեման մի փոքր բանավիճային դարձնել դասարանում և վերլուծել պոեմի կերպարներին մեր օրերի զուգահեռականում:

«Եթե համեմատենք Անուշին ու մեր օրերի աղջիկներին, ապա կտեսնենք ինչպես նմանության, այնպես էլ տարբերության եզրեր: Հակառակ Անուշին, ում սպառնում էր «գնացած, ետ եկած» աղջկա ճակատագիրը, կարելի է ասել՝ մեր օրերի աղջիկների համար դա սովորական է դարձել, այն արդեն վիճահարույց խնդիր չէ» /Կարապետյան Արմին»/:

«Կյանքը շատ դաժան է, ինչքան ասես, ցավեցնում է... Կարծում եմ՝ այսօրվա մեր հասարակության մեջ դժվար կգտնվեն աղջիկներ, ովքեր Անուշի նման իրենց սիրած էակի մահվանից հետո, ընդմիշտ նրանց հետ լինելու համար, զոհաբերեին իրենց կյանքը» /Արզումանյան Լադա/:

«Հիմա աղջիկներն ավելի համարձակ են և նրանց չի էլ հետաքրքրում հասարակական կարծիքը: Եթե նման դեպք տեղի ունենար մեր օրերում, թե ինչ-որ անհեթեթ «ադաթ» խախտելու համար Անուշի եղբայրը վիրավորված ինքնասիրությամբ սպանել է նրա սիրած տղային, երևի շրջապատում կասեին, որ այդ մարդը հոգեկան խնդիրներ ունի» /Բաղրյան Իննա/:

«Ո՞վ կմտածեր, որ այդ համեստ գյուղական աղջնակը կհամարձակվեր փախչել սիրած տղայի հետ: Անուշի ապրած ժամանակների նման մեր օրերում փախուստը այդքան էլ սարսափելի բամբասանքներ իր շուրջը չէր հավաքի, այն շրջապատի կողմից կդիտվեր որպես բնական և սովորական երևույթ: Չեմ էլ հավատում, որ Անուշի տարիքի աղջիկները սիրած տղային կորցնելուց հետո կխելագարվեին, նույնիսկ իրենց կյանքին վերջ կտային: Գուցե մեր օրերում դա հավատարմության բացակայությա՞ն նշան է....» /Անդրյան Անգելինա/:

Ո՞վ է այսօրվա դպրոցականը… Անհատականություն, ով նոր բացահայտումների առաջ է կանգնեցնում ուսուցիչներին: Ուրեմն ուսուցչի դերը միայն կրթություն տալը չէ, այս դեպքում չափազանց կարևոր է աշակերտին ճիշտ ուղղորդելու կարողությունը, նրանց լեզվամտածողության զարգացմանը նպաստելը, ազատ ու անկաշկանդ մտքերն արտահայտելու ունակության ձևավորումը, նրանց պատճառաբանված խոսքն ու մտածողությունը, որի ընթացքում երկկողմանի փոխըմբռնում է ստեղծվում ուսուցչի և աշակերտների միջև:

Կարծում եմ՝ յուրաքանչյուրս լավ պիտի հիշենք, որ հիմա այլ օրեր ենք ապրում, մեր օրերում ուսուցիչը գտնվում է նոր բացահայտումների առաջ: Դրական կերպարը կարող է նորովի մեկնաբանվել աշակերտի կողմից, պատահում է նաև աշակերտն ուսուցչին հանկարծակիի է բերում, փորձում արդարանալ՝ դասանյութը չսովորելու համար՝ պատճառաբանելով, որ այդ գրողին կամ տվյալ ստեղծագործությունը չի սիրում:

Դասական ստեղծագործությունների հմայքը պետք է կարողանալ պահպանել անգամ ամենահախուռն քննարկումների ընթացքում, քանի որ այսպիսի ստեղծագործությունների ու կերպարների ճիշտ մա-

տուցման միջոցով աշակերտներին հաղորդակից ենք դարձնում ոչ միայն գրական, այլև համամարդկային բարձր արժեքներին:

Որքան էլ համամիտ չլինեի իմ աշակերտի կողմից պոեմը չսիրելու կարծիքին՝ այդ դասաժամին նաև իմ աշակերտների որոշ տարակարծությունների նկատմամբ հանդուրժողականության կարողություն ցուցաբերեցի: Այս դասաժամին ևս նրանց ինքնաարտահայտման և ինքնադաստիարակման արդյունավետ պայմաններ ստեղծվեցին, որտեղ գերակա գործոն դարձավ աշակերտի անձը, իսկ առանցքում մեր օրերի աշակերտակենտրոն ուսուցումն էր և ուսուցիչը՝ կանգնած նոր բացահայտումների առաջ:

Երեկոյան մանկավարժի իմ օրագրում կատարեցի գրառում. «Մանկավարժական հանդուրժողականությանը մենք կարող ենք հասնել անձնային որակների զարգացման, ընկալումների և գաղափարների վերարժևորման միջոցով: Այն պետք է խարսխվի բարոյական գիտակցության ու ճշտի դավանանքի վրա»:

http://www.usarmenianews.com/am-n-8095.html

2017-02-20

88-Ի ՄՇՏԱՐԹՈՒՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Հիշողություններով այն օրերի հետ եմ: Անհնար է նկարագրել 1988-ի փետրվարյան օրերը, երբ ամբողջ Արցախը ոտքի էր կանգնել: Խորհրդային երկրում երևութական վերակառուցումը արցախցուն հանել էր հրապարակ, մի բուռ ժողովուրդ պայքարի ճիգերով ու անմահության ելևէջումներով դուրս էր եկել ցույցերի ու երթերի՝ արդարություն պահանջող կոչերով ու բողոքներով: Գիշեր ու ցերեկ

իրար էին խառնվել, որտեղ ցերեկներն անհանգիստ սպասումների երկարատև շղթա էին, գիշերները՝ թաքուն դավերի, անսպասելի շրջադարձերի ժամեր:

Ամբողջ հայության պահանջն էր՝ Արցախը հանել Ադրբեջանի կազմից, միացնել Հայաստանի Հանրապետությանը: Արցախցին տասնամյակներ շարունակ հոգու խորքում պահած դժգոհությունն էր արտահայտում, և ամենուր հնչում էր այն աներեր վճիռը, որ «մի՞-ա՞- ցու՞մ» էր վանկարկում ամենուր... Ձմեռ էր, ցուրտ, օդը շիկացած էր այդ միակ բառից, որ մեզ հանել էր մեր տներից:

Հայաստանը մեզ հետ էր, ամբողջ Երևանի փողոցներն ու հրապարակները լցված էին մարդկանցով, որ պահանջում էին հարգել արցախցիների որոշումը: Ոտքի էին ելել նաև սփյուռքահայությունն ու խորհրդային մյուս հանրապետություններում ապրող հայերը: Գրվում էր հայ ժողովրդի պատմության փառավոր էջերից մեկը՝ հույսի առկայծումներով, ազատ ապրելու իրավունքով:

Մարտակերտի հասարակության մեջ շարժման առաջնորդներից Վիգեն Շիրինյանն առաջինը մտավ պայքարի մեջ, այսօր էլ հիշում եմ նրա ելույթը, որ արյուն պիտի թափվի, եթե պետք լինի, կզոհաբերի

անգամ իր զավակներին: Բայց նա չտեսավ հաղթանակը, վեց երեխաների հայրը արկի բեկորից զոհվեց. դեռ որքա՜ն շատ գործեր ուներ անելու…

Արցախի ժողովուրդն սկսել էր իր պատմական առաքելությունը, սակայն ազերիների մի անտեսանելի ուժ հանգիստ չէր տալիս այս լեռնաստանի հայությանը: Այսօր էլ հիշում եմ, որ ճանապարհներն էին փակում, ծեծում, սպանում մենավոր հայ ուղևորներին, ավտոբուսներն էին քարկոծում, ուղևորների վրա հարձակումներն էլ դարձել էին սովորական:

Ամբողջ հայությունը ոտքի վրա էր, պայքարի ելած և «միացում» վանկարկող հայոց աշխարհը գնաց դեպի Արցախյան ազատամարտ, դեպի նոր հաղթանակներ: Արցախցին ելավ պայքարի... Ու մենք նորից հասկացանք, որ արևն այստեղ ջերմացնում է հարազատորեն, հողը երկնում է մայրորեն, ծիածանները գունազարդվում են պայծառորեն: Զգաց, որ հայրենիքը կապույտ հորիզոնների անսահմանությունն է, երկնակարկառ լեռների քարեղեն հավերժությունը: Զգաց ու պայքարի ելավ՝ փրկելու հայրենիքը, որ դարձել էր նահատակների արյունով սրբագործված նշխար:

88-ի շարժումն անհրաժեշտություն էր, և դա գիտակցում ենք բոլորս: 88-ի ազգային-ազատագրական շարժման ճշմարիտ էությունն ու ընթացքն սկսվում և ավարտվում է մեր մեջ: Թող մեծամտություն չհնչի, մեզանից յուրաքանչյուրն էլ հերոս է, որ հողը չզիջելու և հայրենիքին տեր կանգնելու գիտակցմամբ՝ դիմացել ու դիմանում է պատերազմական ու հետպատերազմյան իրավիճակին, ծագած ու ծագող բոլոր դժվարություններին:

http://www.usarmenianews.com/am-n-8106.html

2017-02-21

ՀԵՌՈՒՆԵՐԻՑ ԿԱՆՉՈՂ ԿԱՐՈՏ, ՈՍԿԵՂԵՆԻԿ ՄԱՅՐԵՆԻ

Հեռախոսազանգից հանկարծակիի եկա…Մտերմիկ ու քնքուշ ձայնը հեռախոսի մյուս կողմից ինձ ծանոթ թվաց, ևս մի քանի րոպե, ես ճանաչում եմ ձայնը՝ ծիծաղկոտ ու փաղաքուշ, անծայրությանմեջ թևածող մի քնքուշ ձայն, որ հասանելի է դառնում ինձ՝ մի նոր մեղեդայնությամբ օծված, որ հյուսված էր դարերի խորքից եկած, արևահարված ու դառնություններ տեսած մայրենիից: Գիշերային մենությունս անթաքույց ջերմությամբ է պատվում, երբ լսում եմ մեր դպրոցի անցած ուստարվա շրջանավարտ, այժմ Երևանի Հերացու անվան բժշկական համալսարանում սովորող Իննեսա Ստեփանյանի ձայնը, և այն մյուս կողմից նորից ինձ են հասնում տողեր, որ հարազատ են հոգուս ու մելամաղձոտ:

Բայց ինչո՞ւ ոգու կանչ, ոգի, որ հայերեն հնչյունների մի նոր կարոտ ունի, ու այդ կարոտը չի կարող սփոփել անգամ աշխարհի և ոչ մի սքանչելիք: Եվ ահա լսելի են դառնում ինձ նրա խոսքերը: Տողերը ծանոթ են հնչում, դեռ այն օրերից, երբ նա 12-րդ դասարանում էր, և երևակայորեն հայտնվել էր օտար ափերում՝ հայերենի կարոտը հոգում անթեղած: Մկրատել էր մտքերը, կիսատել ու նորից փոխել, որ այն դառնա իր ստեղծագործական պատումը՝ Մայրենիի օրվան նվիրված, որ ուղարկել էր իր ուսուցչուհուն:

«Քայլերս ուղղում եմ դեպ Ռիոյի գեղատեսիլ փողոցները... Վսեմաշուք կառույցները, գիշերային անդորրն այսքան տարի հետո դեռ օտար են իմ հոգուն. հայերեն չկա...Օվկիանոսի անաղարտ ու մաքուր ջուրը օտարություն է բերում իմ հոգուն: Արաքսի հայրենակարոտ երգն է կանչում, աստղերի հայրենազօծ փայլն է կանչում, հոգիս քեզ հետ է, երկի՛ր իմ հայրենի, քո լեզուն է ամենուր ինձ կանչում:

Քո փայլփլուն աչքերը հորդել են դարերի խորքից, բյուրեղացել, հարստացել, թրծվել ես արեգակի շողերի տակ ու արևահամվել մեր հա-

զարամյա տառապանքից: Քեզնով են պապերս տուն կառուցել, այգի ծաղկեցրել: Նրանց աշխատանքով, կենսաթրթիռ կորովով ես օծվել, մեր հազարագա՛նձ լեզու: Պատմության քառուղիներում բյուր թշնամիներ ունեցող մեր երկիրը հաճախ է խոցվել, երբեմն՝ արյունաքամ լինելու աստիճան: Խլել են մեր գանձերը, հոգևոր արժեքները, քանդել եկեղեցիները, այրել մագաղաթները: Անկողոպտելի ես մնացել միայն դու, իմ ոսկեղենի՛կ լեզու, մեր հազարագա՛նձ մասունք:

Իմ լեզո՛ւ, կարոտել եմ հնչյուններդ, քո մեղմ ու իմաստալից խոսքերը: Հիշում եմ, որ Արցախում տատիս թխած լավաշներում բարբառի համն էի զգում, իսկ Մռավի քամիները, թեկուզ այնքան ցուրտ էին, հայերեն էին ինձ հասնում ու հարազատ: Մեր աշնանային մեղեդին այնքան հրապուրիչ էր ու գայթակղիչ, որ դաշնամուրիս մեղմահնչյուն ձայների հետ մի շքեղ երաժշտություն էր ծնում: Այն տարիներին, երբ հայերեն էի ստեղծագործում, կյանքս իմաստավորված էր, այնքա՜ն նուրբ ու զգացմունքային էին իմ ստեղծագործությունները, որ հանդիսատեսն ուշադրությամբ լսում էր և հասկանում հոգուս կանչը:

Երանի՜ այն տարիներին, որ անցել են իմ չնաշխարհիկ երկրում, ուր ամեն տեղ հայերենն էր խոսում: Իսկ հիմա լուսինն էլ օտար է, միայն քամին է մերթընդմերթ հայերեն հնչյուններ բերում: Օտար ամայի ճամփեքի վրա հայրենակարոտ հայուհուս կարոտն է կանչում, Հայաստանն ու Արցախ աշխարհը, ոսկեղենիկ իմ լեզուն մայրենի…»:

http://www.usarmenianews.com/am-n-8111.html

2017-02-21

ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՃԱՄՓԱՆ ԲՌՆԱԾ ՄԵՐ ՍԱՀԱԿԸ...

Վառենք բոլոր մոմերը, վառենք համատարած…Նորից սարսափելի բոթ, մի նոր մահասարսուռ գույժ, որ բոլորիս անակնկալի բերեց: Անժամանակ կյանքից հեռացավ Մարտակերտի Սուրբ Կարապետ եկեղեցու հոգևոր հովիվ, տեր Բարսեղ քահանա Անդրյանի ավագ որդին՝ քսանվեց տարեկան Սահակ Անդրյանը՝ Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտ: Ասում են՝ հոգին Ավետարան է, որ սերմանում է սեր ու գութ, արդարություն ու իմաստալից կյանք: Եվ այդ սերն է տարիների ընթացքում տեր Բարսեղ քահանան սփռել ամենուր: Քանի՜-քանի օրհնության կարգ է կատարել, քանի՜ հուշաքար ու խաչ է օրհնել, քանի՜-քանիսն են քաջալերվել նրա խոսքերով, քանի՜ հավերժի ճամփորդ դարձած հերոսների է ուղղել իր աղոթքներն առ Աստված… Որպես վսեմ խորհուրդ՝ քանի՜ հոգեհանգստյան արարողակարգ է կատարել և որքա՜ն պատարագ մատուցել…Բայց այս անգամ հարազատ որդու հոգու հանգստյան համար պիտի հնչեն աղոթքները, վառվեն մոմերը համատարած, որ լույսի առկայծումներում մեր մրմունջները հառնեն առ Աստված:

Ես Սահակին տեսնում եմ դպրոցական տարիներին, պարզ ու հասարակ, շատ անմիջական, ազնիվ ու միամիտ բռնկումներով, նրա հանդեպ տածած մեր անկեղծ ապրումներով, որ առերեսվում էր բոլորի հետ իր այնքան մաքուր ժպիտների անսահմանությամբ:

Այսօր այն դասարանում էի, որտեղ նրան դասավանդել էի ու տարիների հեռավորությունից ես նրան էի փնտրում, այն նստարանը՝ պատուհանի կողքին, որ նա էր նստում: Ուզում էի հեկեկալ անհագ, բայց դասարանի դուռը բացվեց, ու մշուշված հայացքս նրան էր տեսնում, ինձ թվաց՝ հենց ինքը ներս մտավ՝ դասից ուշացած:

Ես այս պահին զգում եմ նրա ոտնաձայնը, որ կամաց բացում էր իմ բնակարանի դուռը, և անշշուկ ներս էր մտնում՝ այն անմեղ ժպիտը դեմքին, ու ես հարցնում էի նրան հայոց լեզվի դասը, որ գալիս էր

լրացնելու բացթողված դասանյութերը՝ բարձրագույն ընդունվելու համար: Առաջին օրերին ասաց, որ ամաչում է դաս պատմել, բայց սովորել է այդ օրվա նյութը: Գուցե ամաչում էր որևէ մեկից, ուրիշ դպրոցականներ էլ կային, բայց մենք «հաշտվեցինք» իրար հետ, երբ համարձակ մտքերը հավաքեց մի օր ու այդ օրվանից սկսեց խոսել:

Ես գլխահակ էի լսում նրան, չէի միջամտում, այնքան զգույշ, որ հանկարծ մտքերը չխառնի…Բայց մի օր հույզերը իմը դարձան, ու այդ անձնական ապրումների մեջ նորից տեսա մի մաքուր, անաղարտ հոգի:

Անսպասելի էր, երբ մի օր դպրոցի երրորդ հարկում մի բարձրահասակ երիտասարդ՝ անչափ կոկիկ կեցվածքով, կանգնեց իմ առջև: Կարծես նահանջել ցանկացա՝ մի պահ չճանաչելով նրան, բայց կենսախինդ ու մտերմական նայում էր ինձ: Եվ հիմա եմ լսում նրա մտերիմ ընկեր Գոռ Գյուրջյանից, որ շատ էր գրքեր ընթերցում, ու այդ գրքերից ստացած իմաստությամբ նա հեռացավ մեզանից: Նաև ջերմ բաղձանք կար նրա հոգում, որ ամուսնանար, ընտանիք կազմեր, սակայն ողբերգական գունավորում ստացավ նրա երիտասարդ կյանքը, մի կյանք, որ ծայրեծայր լցված էր հարազատների ջերմությամբ:

«Ինչու»-ների բազմությունը խեղդում է մեզ… Հեռացավ մեզանից մի երիտասարդ կյանք, որ ապրում էր մեր կողքին՝ շատերի ցավերին կարեկից, և հաշտ էր ու խաղաղ այս աշխարհի հետ:

Այս նկարը պատահաբար գտա: 2008-ին էր: Վերջին զանգի միջոցառումից հետո Սահակը մոտեցավ ինձ ու առաջարկեց նկարվել: Մեզ միացավ նաև նրա համադասարանցի, շրջանավարտ Գոռ Գյուրջյանը:

http://www.usarmenianews.com/am-n-8120.html

2017-02-24

Ի ՇՐՋԱՆՍ ԴԵ ՅՈՒՐ ԿԱՄ ՃԻՇՏ ԱՊՐԵԼՈՒ ԻՄԱՍՏԸ

Երբեմն իմ ապրած օրը մտորումների տեղիք է տալիս: Ուզում եմ ներդաշնակվել իմ ամեն մի օրվան ու փորձում եմ զգալ լուսաբացի գեղեցկությունը, որ հուզական մի նոր տրամադրություն է ստեղծում ինձ մոտ՝ ամեն անգամ դպրոցի ճանապարհին: Ես վայելում եմ այդ լուսաբացի անկրկնելի պատկերը և անսովոր համադրությամբ՝ ուզում եմ մարդկային բոլոր արատները շաղախել օրվա լույսերի մեջ, հայացք ուղղել դեպի մարդու ներաշխարհը ու այնտեղ տեսնել միայն մարդուն համակած մաքուր մտքերի արտացոլանքը:

Երբևէ չեմ ժխտել այս կյանքը՝ իր դրական տարբեր դրսևորումներով, հոռետեսությունն էլ ինձ համար չէ, միշտ էլ ունեցել եմ ներդաշնակ ու կատարյալ հասարակության մեջ ապրելու երազանք ու միշտ էլ հոգուս խորքում փայփայել եմ այն իդեալականը, որ այս փոքր բնակավայրում պետք է մեկս մյուսի նկատմամբ ունենանք: Միշտ էլ լուսավոր իդեալի երազանք եմ ունեցել՝ անտեսելով մեր շրջապատի արատները, միշտ էլ բռնկուն է եղել իմ անցած ճամփան, բայց հիմա կյանքի մեղմ ու հանդարտ ընթացքն եմ նախընտրում, նայում խոհերիս ընթացքին, ձգտում կրակոտ զգացումներս հակադրել մեղմորեն օրորվող մտորումներիս:

Սահմանից եկող անորոշ ու անհանգիստ տագնապը սպասման մեջ է դնում Մարտակերտում ապրողներիս, մեր ապրումներին ավելացնում նոր լարվածություն: Սակայն դա էլ չի խանգարում ապրելու և արարելու, կյանքն իմաստավորելու իմ մղումներին: Շրջապատում միմիայն գեղեցիկը տեսնելու և արարելու ցանկությունը երբեմն բախվում է իրականությանը, որտեղ սպասումը մարդկային ներդաշնակության հասնելու համար դառնում է անհրաժեշտ: Մարդասիրության ձգտումները մի նոր որակ են ստանում այստեղ, երբեմն նույնիսկ ուզում եմ հրավեր կարդալ բոլորին, որ մեր ապրելակերպը մեզ պիտի հիշեցնի, որ անանձնական պիտի լինենք այստեղ և սեփական ցանկությունը սահմանափակենք մեր իսկ անձնական ապրումների շրջանակում: Մեր ինքնարտահայտման ու ինքնաճանաչման հիմքն այդ մենք չենք և ոչ էլ՝ մեր ես-ը, մեր ապրելու հիմքը պիտի դառնա հանրային շահն ու ազգային ցավը, իսկ առանցքում պիտի լինի մեր վերածնության հույսը:

Ես շարունակում եմ կապված մնալ իմ հարազատ երկրի, իմ շրջապատի, իմ ապրած ու ապրելիք տարիների հետ, իմ կյանքը շաղախված է մեծագույն սիրով ու հարգանքով, որի մասին համարձակորեն ազդարարում եմ: Իմ ես-ի մեջ ես տեսնում եմ բոլորին, ովքեր հոգեպես հարստացնում են իրենց կյանքը, երբեմն անտեսում արատներ, սիրում մարդուն, ապրում կարոտով՝ ներդաշնակ իրենց խոհերին: Ուզում եմ հստակեցնել իմ ոճը և ասել, որ իրական կյանքի մի անդրադարձ է սա, ներանձնացած մի խոհ, մտքերի ներսուզված պահի արտահայտություն, որ իրավունք է տալիս ինձ բարձրաձայնելու իմ հավատի անշեղ ուղու մասին, որտեղ լուսավոր օրերի երազանք կա, արատների ժխտում, մարդասիրական ձգտումներ, մաքուր խոհերի արտացոլանք: Ի շրջանս դե յուր: Հետևապես պետք է ապրենք միմիայն ճշտի սկզբունքով, բարին արարելու աստվածահաճո էությամբ:

http://www.usarmenianews.com/am-n-8139.html

2017-02-25

ԱՆՑԱԾ ԴԱՐԱՎԵՐՋԻ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՍ ՎԿԱՆ

Նորից Լևոն Ադյանի «Հեռացող եզերք» գիրքն է աշակերտների ձեռքին: Մի նոր մտահղացում՝ պետք է քննարկենք վերը մեր աշակերտների՝ գրքից ստացած տպավորություններով: Նախապատրաստական աշխատանքներ են ընթանում, բայց ահա մի նոր անակնկալ՝ դպրոցում սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ Անժելա Պետրոսյանը տարբեր դասարաններում հանձնարարել էր՝ գրքի թեմային համահունչ պատի թերթեր ձևավորել: Եվ շուտով տեսանելի են դառնում մեր աշակերտների ձեռքի աշխատանքները:

12-րդ դասարանում եմ, հարցնում եմ նրանց, թե որքանով էր ճիշտ, որ այդ գիրքը դպրոց մտավ, որի էջերին մեր դպրոցականները դեռ ծանոթացել էին անցած ուստարվա փետրվարյան օրերին: Միահամուռ բարձրաձայնում են՝ հաստատելով գրքի մուտքը դպրոց շատ նպատակային ու ողջունելի:

«Այս գիրքը շատ հավանեցի... Աստվա՛ծ իմ, մի՞թե կարելի է մարդուն սպանել միայն նրա համար, որ նա հայ է: Հային միշտ էլ վիճակված է եղել տառապել, բայց երբեք նա իր հավատը, իր խաչը չի մոռացել: Գիրքը մեր թշնամու ոճրագործության մի անխոս վկա է, որ իր արցունքոտ էջերում պատկերում է այդ արնախումների վայրագությունները, որոնց մասին կարդալիս տակնուվրա է լինում հոգիդ»:

«Պետք է կարդան այս գիրքը բոլորը, որպեսզի իմանան, թե անցած դարավերջին ինչ խորը և չսպիացող վերք ավելացավ հայի սրտում» /Կարապետյան Արմինե/:

«Այս գրքի տխուր, ողբերգական պատմության մեջ կա գեղեցիկ սիրո պատմություն, կան ընդհատված ու անկատար երազանքներ, արյունոտ էջեր, մի նոր ցեղասպանություն հայի հանդեպ ոչ հեռավոր անցյալում: Երկու երկրների միջև եղած թշնամության պատճառով խաթար-

վեց Ռենայի և Լեոյի սերը, կյանքեր կործանվեցին, մի հրաշալի աղրբեջանուհի դարձավ իր ազգակից ոճրագործների բռնությունների զոհը, թե ինչ է՝ ժխտեց այդ ազգին իր պատկանելությունը: Այս անգամ էլ ցավով այս գիրքը իմ ձեռքը վերցրի» /Ջավադյան Վարդուհի/:

«Նորից վերընթերցեցի այս գիրքը, նորից զգացումներս ու հույզերս խառնվել էին իրար, կոկորդս խեղդում էր, ուղղակի բառերով անհնար էր նկարագրել այն, ինչ կար սրտումս, բառերն էլ կորցրել էին իրենց արժեքը՝ զգացածիս դիմաց: Ամեն ինչ այնքա՜ն ցավոտ է այստեղ, այնքա՜ն դառնալի ու անդառնալի կորուստներ կան այս գրքում, այնքա՜ն տառապած ուտառապող սրտեր, արցունքոտ ու արյունոտ էջեր...Ես տեսա այստեղ գրողի, որ ապրել է ու արարել ողջ կյանքում, տեսել անտանելի փորձություններ, բայց, անկախ ամեն ինչից, շարունակել է ստեղծագործել՝ հավատարիմ մնալով իր գրչին» /Հովսեփյան Լիլիթ/:

«Այս գրքի դպրոց մտնելը շատ խրախուսելի է, բայց այն պետք է կարդան անպայման ավագ դասարանների դպրոցականները: Այստեղ նկարագրություններ կան, որոնք հասանելի չեն լինի միջին դպրոցի աշակերտներին: Սա այն գիրքն է, որ կարելի է կարդալ մի քանի անգամ» /Խաչատրյան Աննա/:

Երգչուհի դառնալու մեծ ցանկությամբ՝ այդ դասաժամին Աննա Խաչատրյանն ասաց, որ մի քանի երգեր է սովորել, և փորձնական հնչեցրած նրա երգի տողերն այնքան էին համահունչ՝ Սումգայիթի և Բաքվի ոճրագործության զոհերի հիշատակին, որ հուզեցին բոլորիս: Իր հոգեպարար ձայնի ելևէջներով տարբեր երգերի տողեր լսեցինք, իսկ ամբողջ դասարանում մի անորոշ թախծոտ տրամադրություն էր տիրում: Համոզված էինք, որ Սումգայիթյան օրերին նախապատրաստվելիք մեր միջոցառումը՝ այդ ոճրագործությանն ականատես գրողի «Հեռացող եզերք» գրքի քննարկման շուրջը, հայությանը պատուհասած մղձավանջի ցավալի հիշողություն կլինի և հարգանքի տուրք՝ այդ վայրագություններին զոհ գնացած նահատակների հիշատակին:

http://www.usarmenianews.com/am-n-8147.html

2017-02-26

ԿԱՐԴԱՆՔ ԱԿԱՆԱՏԵՍԻ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Դիշտ էլ ժպտալու սովոր էր նա, բայց նրա երգի տողերը, առանց երաժշտության, այնքան թախծոտ ու կենդանի էին հնչում, որ նույնիսկ չէր զգացվում դրա պակասը, ամեն մի հնչյուն երանգավորվում էր իր գեղեցիկ ու նրբին ձայնով: Եվ իմ աշակերտուհուց՝ Անգելինա Անդրյանից, չեմ էլ հարցնում, թե ինչ կարծիք ունի Լևոն Աղյանի՝ Սումգայիթի և Բաքվի սարսռազդու դեպքերի նկարագրությամբ՝ «Հեռացող եզերք» գրքի մասին, մի գիրք, որ վաղուց մեր դպրոցականներին հարազատ էր դարձել:

12-րդ հումանիտար դասարանի աշակերտների հետ կատարված նախնական փորձերն արդեն զգացնել էին տալիս, որ փետրվարի 27-ին նախատեսված մեր գրական-երաժշտական հուշ-ցերեկույթը՝ ականատես-գրողի վեպի քննարկման շրջանակներում, առիթ կտա, որ այդ գիրքը բազում ընթերցողների նոր ստվար խմբեր ունենա:

«Երբ առաջին անգամ ընթերցեցի այս գիրքը, լեզուս կապ էր ընկել, ձեռքերս կարծես շղթայվել էին, չէի կարողանում երկար ժամանակ ոչինչ արտաբերել: Մի՞թե մարդ-արարածն ընդունակ է նման բռնությունների: Չնայած՝ ինչպե՞ս կարելի է մարդ համարել աթաթուրքի հետևորդներին, որոնց երակներում արյան հետ կատաղությունն է հոսում: Աստվա՛ծ իմ, նույնիսկ պատվազուրկ էին անում հայ կանանց ու աղջիկներին, այդ գազանները սարսափելի դժոխք էին ստեղծել հայերի համար... Զոհերի մեջ էր վեպի գլխավոր հերոսուհին՝ մի աղրբեջանուհի, ով հոգով հայուհի էր և ինձ համար՝ օրինակելի ու իդեալական կերպար: Նա կարող էր փրկվել այդ բարբարոսների ճանկերից, բայց գերադասեց նահատակվել, և կործանվեց Ռենայի ու Լեոյի հավերժական թվացող այդ իրական սերը» /Ղուլյան գեղեցիկ/:

«Ամեն անգամ անհանգիստ ապրումներով եմ բացում «Հեռացող եզերքը»: Ասում են՝ Սումգայիթի, Բաքվի ջարդեր…Լսում եմ ու զարմանում, ի՞նչ ջարդերի մասին է խոսքը, երբ համատարած ոչնչացնում էին հայերին: Ամենուր իրար էին խառնված, դա կոտորած էր, արյունահեղություն... Ինչքա՜ն դաժան է ու ծանր, երբ աչքերիդ առջև տեսնում ես, թե ինչպես են մարդուն տանջամահ անում: Այդ վայրենիները չնայեցին ահել-ջահելների, սպանեցին հայերին նրանց հարազատների դիմաց, ներխուժեցին բնակարաններ, հաշվեհարդար տեսան անմեղ մարդկանց հետ: Ի՞նչ մեղք ուներ այն փոքրիկ մանկիկը, որ դեռ չծնված՝ սպանվեց մոր որովայնում: Ինչու՞ պիտի վառեին հայերին, բայց ինչե՜ր չարեցին այդ գազանները…Տե՛ր Աստված, ես համոզված եմ… գիտեմ, կգա օրը, երբ նրանց անունը կջնջվի երկրի երեսից» /Աբրահամյան Ռուզաննա/:

Գրքում այդ ոճրագործության իրական նկարագրություններն այնքան գերհուզական են ու զարհուրելի, հոգեբանական ծանր ապրումների պատկերներով առկա, որ երբ աղջիկներին առաջարկեցի՝ որոշ հատվածներ կարդալ բնագրից, հրաժարվեցին: Դասարանի միակ տղան հանձն առավ կարդալ որոշ հատվածներ միջոցառման ժամանակ: Անհնար է առանց հուզումների ընթերցել այն բարբարոսությունների մասին, որ քաղաքակիրթ աշխարհի աչքի առջև իրականացվել էր անցած դարավերջին ու ցայսօր մնում է անպատիժ:

Իսկ անպատժելիությունը նոր ոճիրներ ծնեց՝ Գուրգեն Մարգարյան, Քյարամ Սլոյան...Որտե՞ղ է ուղղված քաղաքակիրթ Եվրոպայի հայացքը...

http://www.usarmenianews.com/am-n-8149.html

2017-02-27

ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Այսօր Սումգայիթի ոճրագործության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումը՝ արձակագիր Լևոն Ադյանի «Հեռացող եզերք» գրքի շրջանակներում, կայացավ Մարտակերտի պատմա-երկրագիտական թանգարանում: Տնօրեն Սեդա Հայրապետյանի, թանգարանի աշխատողներ Մարինե Միքայելյանի և Նաիրա Ավետիսյանի ջանքերն իզուր չէին անցել՝ մեր դպրոցի 7-րդ ա և 12-րդ հումանիտար դասարանների աշակերտների միջոցով գրական-երաժշտական հուշ-ցերեկույթին մի նոր ոճական երանգավորում տալու համար:

Միջոցառման երաժշտական մասի օժանդակությունը նկատելի էր մշակույթի տան տնօրեն Թամարա Եղիշյանի ու այդ ոլորտի՝ իր աշխատողների մասնակցությամբ:

Հրավիրված էին Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի դաստիարակչական գծով տնօրենի տեղակալ Կարինե Բալասանյանն ու դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Պետրոսյանը, դպրոցի պատմության մեթոդմիավորման նախագահ Արշալույս Գաբրիելյանը, 12-րդ դասարանի դասղեկ Նոնա Հայրապետյանը, 7-րդ ա դասարանի աշակերտների մասնակցությամբ՝ ասմունքի խմբակավար Սվետլանա Դալլաքյանը, կենտրոնական գրադարանի տնօրեն Իրա Բաղրյանը, երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Միեր Անդրյանը՝ իր աշխատողներ Գոհար Մամունցի, Մանուշ Մաթևոսյանի հետ, նաև՝ դպրոցականներ:

Մարինե Միքայելյանի նախնական խոսքը Բաքվի և Սումգայիթի հայության նկատմամբ իրականացված արյունահեղության դատապարտումն էր, որ առայսօր էլ, կոպտորեն աղավաղելով փաստերը, ոճրագործները մնացել են անպատիժ: Այդ ցեղասպանության հավաստի վկայությունը թերևս ականատես գրողի կողմից գրված «Հեռացող եզերք» վեպն էր, որի քննարկման և գրական-երաժշտական ցերեկույթը վարելու նախապատվությունը վերապահվել էր մանկավարժիս՝ իմ աշակերտների ակտիվ մասնակցությամբ: Իմ խոսքում պատմական այդ դաժան իրադարձության զոհ գնացած բազում նահատակների հիշատակին կազմակերպված այս միջոցառումն էր, թանգարանում անցկացնելու միտումը, առանցքում՝ Լևոն Ադյան գրողը՝ իր «Հեռացող եզերքով»:

Գրողի կենսագրության ու գրական գործունեության համառոտ տեղեկություններին զուգահեռվեց վեպի դիպաշարի վերլուծականը, որ մեկընդմեջ հավելվում էր Գերտրուդա Բեգլարյանի, Մանե Հակոբյանի, Աննա Խաչատրյանի ու Անգելինա Անդրյանի թախծալից երգերի հմայիչ ձայներով: Գրքից ստացած տպավորություններով ու իրենց կարծիքներով կիսվեցին դպրոցականները՝ յուրաքանչյուրը յուրովի տարբեր, մեկը մյուսից հետաքրքրիր ու նույնքան՝ հուզական: Նրանց խոսքում գրքի ու նրա հերոսների նկատմամբ առանձնակի համակրանք կար, գիրք, որ անցած տարվա փետրվարից մտել էր դասարանից դասարան, առայսօր էլ նրա ար-

ցունքոտ էջերն իրենց հետքն են թողնում նրանց հուզական աշխարհում, երբ ամեն անգամ թերթում են այն:

Վեպի բնագրից ընթերցած հատվածները հաստատում էին այդ սև գործն իրականացնողների հրեշավոր դեմքը, որ ուղեկցվել էր սպանություններով, տանջանքներով, բռնաբարություններով, մարդկանց վառելով, վտարանդի դարձած հայությամբ: Դրանք պատասխան էին Արցախի հայ բնակչության խաղաղ ցույցերի, որոնցով արդարացիորեն պահանջվում էր իրականացնել ինքնորոշման սահմանադրական մեր իրավունքը:

Միջոցառման ավարտի շնորհակալական խոսքս ուղղված էր բոլոր մասնակիցներին, որ եզրափակվեց պատմաերկրագիտական թանգարանին՝ գրողի կողմից փոխանցված «Հեռացող եզերք» գրքի նվիրատվությամբ:

http://www.usarmenianews.com/am-n-8163.html

2017-02-28

ԲԱՑՈՒՄ ԵՆՔ ՍԻՐՈՎ, ԸՆԹԵՐՑՈՒՄ՝ ՀԱՓՇՏԱԿՎԱԾ, ՓԱԿՈՒՄ՝ ԱՓՍՈՍԱՆՔՈՎ

Այսօր ծաղիկներ խոնարհվեցին Սումգայիթի նահատակների հիշատակին: Դպրոցում մեր երեկվա միջոցառման վերլուծությունն էր՝ կարծիքների փոխանակություն, հիանալի արձագանքներ դրա մտահղացման, գրքի քննարկման, անմեղ զոհերի հանդեպ հարգանքի դրսևորման մասին: Նորից 7-րդ ա դասարանում աշակերտների զգացած ապրումների մասին է խոսվում, նորից 12-րդ հումանիտար դասարանում նստարաններին Լևոն Ադյանի «Հեռացող եզերք» գիրքն է, առանցքում՝ նրանց՝ վեպից ստացած անցած տպավորությունները, որ այդ օրը Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարանի պատերի ներսում մի նոր շունչ էին ստացել:

«Ես խոսելու ունակությունս կորցրել էի, երբ խորասուզվել էի վեպի ընթերցանության մեջ: Առաջին անգամ գիրքն ընթերցելիս զգացի, թե որքան թանկ և որքան դժվար է լինում բաժանումը: Սումգայիթում և Բաքվում կատարվածը ճակատագրական եղավ շատերի համար, այն ծրագրավորված է եղել նախօրոք, այդ են վկայում ջարդարարների մոտ հայերի բնակարանների ցուցակների առկայությունը, այդ ոճիրն իրականացնելու համար արտադրամասերում մետաղաձողերի և այլ գործիքների պատրաստումը: Երեք օր շարունակ նրանց բռնությունները զարհուրելի էին, ջարդարարների գործողությունները՝ անօրինակ դաժան: Անմահ գործեր շատ են եղել: Ինձ թվում է՝ կանմահանա նաև այս վեպը: Իր առաքինությամբ մարդասիրության օրինակ է նաև Ադյան արձակագիրը» /Դանիելյան Անուշ/:

«Կարդացի գիրքը, խառնվել էին մտքերս, ուզում էի արտահայտել այն, ինչ կա ներսումս, բայց ասես ոչ մի կերպ չէի կարողանում բացատրել զգացածս: Կյանքը շատ դաժան է, չես կարող պատկերացնել, թե քեզ համար ինչ է պատրաստել հաջորդ վայրկյանին: Վայրագությունների ալիքը սրբեց-տարավ իր ճանապարհին եղած ամեն ինչ: Դաժան ճակատագրի արժանացավ Ռենան՝ սպանվելով իր իսկ ազ-

գի խուժանի կողմից: Երանի թե հնարավոր լիներ անզգայանալ ու չզգալ այն ցավն ու տանջանքը, որն ինձ պարուրեց գիրքը կարդալուց հետո» /Բաղրյան Իննա/:

«Դժվար է, երբ տխուր է հոգիդ, երբ չես կարողանում ժպտալ, երբ ներսումդ տիրում է դատարկություն: Կարդալով վեպի առաջին էջերը՝ մտածում էի, թե ինչքա՜ն գեղեցիկ է այստեղ սերը, ինչքա՜ն սքանչելի է պատկերված նոր ծնվող զգացումը: Բայց երբ կարդացի դաժան սպանությունների մասին, խոհերս մութ գիշերվա նման մթագնել էին: Սիրտս ցավում էր՝ Ռենայի նկատմամբ դաժան բռնության դրվագը կարդալիս: Տխրությունն իր պաղ շնչով պատել էր հոգիս, ամեն ինչ դարձել էր գունազուրկ: Ամենաանտանելի վիշտը հոգու ցավն է, բայց ակամայից սովորում ենք դրան ու ապրում այդ ցավով րոպե առ րոպե, ժամ առ ժամ, օրեր, տարիներ և ամբողջ մի կյանք: Իսկապես ամենացավալին այն է, որ կորցնելով մեզ համար ամենաթանկ մարդկանց՝ մեզ ոչինչ չի մնում, քան համակերպվել նրանց կորստին» /Արզումանյան Լադա/:

«Այս գրքում գրողն ապացուցեց, որ սերը չի ճանաչում ազգություն, հավատ ու տարիք: Ափսոս, որ այդ գեղեցիկ սերն ունեցավ այդպիսի վերջաբան: Ես ընդհանրապես դեմ եմ, որ հայն այդ ազգի հետ ընտանիք կազմի, բայց երևի այն ժամանակներում դա սովորական էր, իսկ հիմա՝ անհնարին բան: Երբ այն դաժանությունների մասին կարդացի, ունայնություն իջավ վրաս, բայց նաև ինձ հուսադրեցի, որ այս ոճրագործները պատասխան են տալու մի օր՝ իրենց անմարդկային արարքների համար» /Կարապետյան Սյուզաննա/:

Ես փակում եմ այս գիրքը, որ բացել էի դպրոցում անցած փետրվարին: Այս մեկ տարում այն մեզ հետ էր, մեր հոգում և դարձել էր մեր լավ ու վատ օրերի ուղեկիցը... Գիրք, որի մասին այս մեկ տարվա մեջ ամենուր լսել եմ, որ սա այն ամենահետաքրքիր գիրքն է, որ մի շնչով է ընթերցվում, իսկ որպես մանկավարժիս ամփոփիչ խոսք՝ վստահորեն կարող եմ ասել, որ սա այն գիրքն է, որ բացում ես սիրով, ընթերցում՝ հափշտակված, փակում՝ ափսոսանքով:

http://www.usarmenianews.com/am-n-8172.html

2017-03-01

ՈՂՋԱԳՈՒՐՎՈՒՄ ԵՄ ՍՊԱՍՎԱԾ ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Գարուն է, գարնանաբույր, շրջակա աշխարհը կարծես չի շնչում, երբ անհագուրդ կարոտով ամեն անգամ զգում եմ ապրելու գինը: Ուզում եմ մոռացության տալ ամեն ինչ, միայն ապրել գարնան բույրով և առավոտվա լուսաբացի ժամերին սպասող անհամբերությամբ՝ ուզում եմ վանել անհանգիստ մտորումներս: Երբեմն բարձրաձայն արտասվելու մեծ ցանկություն է ծնվում, բայց լսելի միայն ինձ, երբեմն ապրելու մեծ ցանկություն է ծնվում, բայց լռում եմ, երբ զգում եմ, որ մի ամբողջ կյանք այդ օրվա հետ է կապված:

Գարուն է, ու այս գարնան անուշաբույրն եմ ուզում զգալ, բայց ինձ հասնող ձայներից ցասկոտ վեր եմ թռչում հանկարծ: Ապրելու մարմաջով կարծես տառապում եմ, ու այսպես երբեմն խուլ թնդում է հոգիս, բայց սառցե ձնծաղիկներ եմ տեսնում ու սառցե մանրիկ կտորների մեջ գարնանաշունչ եմ ուզում գտնել, բայց ինձ նայող ձնծաղիկների բույրը չեմ զգում:

Ու քայլերս ինձ տանում են դեպի դուռը: Բանալին եմ կամաց պտտեցնում, որ առատորեն շնչեմ այն մաքուր գարնան սառն օդը գիշերային խոնավ ու խավար մթության մեջ: Ծնչում եմ ագահորեն այն մաքուր ու հովից մեղմորեն օրորվող անուշաբույրը, որ գարունն է իր հետ բերել: Գարուն է, գարնան զարթոնք, և ես ուզում եմ կլանել անգամ այն բոլոր շշուկները, որ կարող է հանկարծ սարդոստայն է հյուսված, բայց մեղմ է օդը, հանգիստ: Նայում եմ գիշերվա մեջ մարմրող աստղերին, իմ տան վառվող լույսի մեղավոր շողերին եմ նայում և լույսի սպառվող ու մարող հույսերին չեմ ուզում տրվել:

Խաղաղ լուսաբացի երազանք կա իմ հոգում, ու այդ երազանքները ձուլվում են անցած գարնանամուտների օրերի հետ: Ուզում եմ ցրել այս երկար թվացող գիշերվա խավարը, որ իր հետ երբեմն սարսուռ է բերում, մեր հոգիները պատած սառույցն եմ ուզում կոտրել, երբ ապրելու կարոտ կա անհագ, երբ ամեն անգամ զգում եմ ապրելու գինը:

Խավարի մեջ լույսեր եմ փնտրում ու անցած-գնացած օրերի մեջ մի աստանդական կյանք եմ տեսնում այն «օտար, ամայի ճամփեքի վրա»: Ու նորից վանում եմ այդ մտքերն ինձանից, երբ կարոտի կանչ կա իմ հոգում, ապրելու մեծ սեր, երբ ապրելու մարմաջով տարված՝ լուսաբացի եմ սպասում: Չարագուշակ ինչ-որ զգացողություն

պաշարել է հոգիս ու փորձում եմ վանել, որ լուսաբացը դիմավորեմ գարնանամուտի նոր բացվող օրով: Հալվում է գիշերը կամաց, ողջագուրվում եմ այն լուսաբացին, որին սպասում եմ անհագ: Մի նոր օր է բացվում, մի նոր արշալույս. գարնան առաջին օրն է գիշերվա անհանգիստ ապրումներից հետո... Ջուլալված ու ապրելու մարմաջով տարված՝ նորոգում եմ մտքերս, վերաիմաստավորում իմ ու իրականության արժեքները և շինարարի հմտությամբ հարթում իմ ու իրականության միջև առաջացած անջրպետները:

http://www.usarmenianews.com/am-n-8189.html

2017-03-02

ԽՈՍՔ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մարտի 3-ը Գրողների միջազգային օրն է: Օգտվելով առիթից՝ շնորհավորում եմ գեղարվեստական խոսքի վարպետներին՝ այս հիանալի իրադարձության կապակցությամբ, բոլոր նրանց, ովքեր իրենց անհանգիստ ու վայրիվերո ապրումներով կարողանում են ընթերցողներին ներկայանալ արտահայտիչ ու պատկերավոր խոսքի ճշմարիտ արժեքներով, մարդկային փոխհարաբերությունների, հույզերի և անձնական ու անանձնական զգացումների հարուստ գեղարվեստական աշխարհով, մարդասիրության, լույսի և բարության ցոլքերով:

Սովորաբար գրողներին կոչում են գեղարվեստական խոսքի վարպետներ: Իրոք, ու՞մից մենք պետք է ուսանենք ստույգ, հստակ, տրամաբանված խոսքի արվեստը, եթե ոչ այդ վարպետներից: Դրա համար էլ գրականությունը մեզ տալիս է բոլոր հնարավորությունները, որպեսզի սովորենք ճիշտ խոսելու և գրելու արվեստը:

Որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ ինձ իրավունք եմ վերապահում ասելու, որ գրողի յուրաքանչյուր ստեղծագործություն ասելիքի խորություն պիտի ունենա, պատկերավոր լեզու, գեղարվեստական մտածողություն, քնարական ապրումներ, անսանձ երևակայություն, թարմ խոսք…Գրող լինել, նշանակում է՝ խոհը դարձնել պատգամ կոչ, օրհնանք ու երգ, որով շարժման մեջ է դրվում ներգործուն ու ազդեցիկ խոսքը: Գրողի սիրտը պետք է թրթռա մարդու սիրով, թափանցի նրա հոգին, հաղորդակից դառնա նրա ապրումներին, դադարի անհատական լինելուց, ապրի ընդհանրական զգացումներով, ունենա հարուստ ստեղծագործական արվեստ, աննկարագրելի պատկերներ ստեղծելու տաղանդ, նորը հայտնաբերելու և հաղորդելու շնորհ:

Մեր օրերում էլ գրողական աշխարհն ընդլայնել է իր շրջանակները, որը երբեմն արժեզրկում է ժամանակակից շատ գրողների հստակ աշխատանքը: Կա նաև «հացի խնդիր», որ երբեմն գիրք հրատարակելը նաև գումար աշխատելու միջոց է ծառայում, բայց դրա կողքին

փոշու մեջ կորած գրքեր կան, որ ընթերցողներ չունեն: Հաճախակի եմ հիշում Նար-Դոսի հերոսին, Պատրիկյանի կերպարն այսօր էլ առկա է, երբ մտավորականներ ունենք՝ ստեղծագործական հմուտ խոսքով, բայց նրանց գրքերը գրախանութներում են դարսված: Երբեմն ոչ բոլորին է հաջողվում գիրք հրատարակել՝ կապված ֆինանսական միջոցների հետ: Սա ևս խնդիր է, որ ոչ բոլորին է հաջողվում դառնալ գրքի հեղինակ: Կա նաև հակառակը՝ գրքի հեղինակ լինել, դա չի նշանակում՝ դառնալ գրող:

Մեծ է գրականության կենտրոնական դերը համաշխարհային մշակույթի մեջ, ուղղակի պետք է կարողանալ պաշտպանել նաև գրականությունը ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող սպառնալիքներից և պայքարել ազատ խոսքի համար, որին երբեմն սվիններով են արձագանքում: Կա նաև մտահոգություն, թե այսօրվա հայ գրականությունը որքանով է զարգանում համաշխարհային զարգացման ընթացքով, և որքանով է այն հասանելի օտար ընթերցողներին:

Ժամանակակից հայ գեղարվեստական մտքի զարգացման հիմքում պետք է տեսնել գրական հայերենի կատարյալ արտահայտությունը, մաքուր ու կենսունակ լեզուն, որի պահպանման նախապատվությունը տրված է նաև գրողներին: Մանկավարժիս համոզմամբ՝ այդ իսկ բյուրեղյա մաքրությամբ էլ յուրաքանչյուր գրող դառնում է «ժամանակի հայելին»՝ իր բարձրարվեստ դիմանկարով՝ որպես խոսք արարող, մարդագետ ու մարդաբան:

http://www.usarmenianews.com/am-n-8202.html

2017-03-03

ԿԱՐՊԵՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ ՓՈԽԱՆՑՎՈՒՄ Է ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ

Իմ դասղեկական 7-րդ ա դասարանի աշակերտների ձեռքի փայտե շրջանակները ուշադրությանս են արժանանում, հենց այդ հետաքրքրությամբ էլ մտնում եմ տեխնոլոգիայի դասաժամին այդ դասարանը, որ նախատեսված է աշխատանքի ուսումնական գործընթացն իրականացնելու համար: Ուսուցչուհի Մարինե Ահարոնյանն է այնտեղ, որ տեսական և գործնական պարապմունքների զուգորդման միջոցով, մասնագիտական գրականության ուսուցմամբ՝ համապատասխան հանձնարարություններ էր տվել աղջիկներին, ովքեր կարպետագործության կազմակերպման համար բոլոր անհրաժեշտ պայմաններն էին ստեղծել:

Յուրաքանչյուրը յուրովի պատրաստել էր ուղղանկյունու կամ եռանկյունու տեսքով դազգահի փոխարինող շրջանակ, բերել էին աշխատանքային գործիքներ՝ փայտից պատրաստված ասեղ, տարբեր գույների թելեր: Կարպետագործություն սովորելու ընթացքում ուսուցչուհու ուղղորդմամբ էր տրվում գունային լուծումները, ընտրվում էին համապատասխան թելերը, հյուսում էին՝ ըստ էսքիզի: Չնայած ուսուցչուհու աչքից չեն վրիպում թերությունները, բայց աղջիկները սիրով են կատարում իրենց գործը և իմ հարցումներին, թե որքանով է այն հետաքրքիր,

և ինչ զգացողություն ունեն կարպետ գործելու աշխատանքում, բոլորն էլ միահամուռ նույն ոգևորությունն են արտահայտում:

«Շատ եմ սիրում գործելը, առավելապես, երբ նուրբ մատներով փայտե ասեղին ամրացնում ենք բամբակե թելը և զգույշ փորձում մեկընդմեջ անցկացնել այն: Ձեռքերս գեղեցիկ շարժվում են, բայց արած գործս դեռ այնքան էլ լավ չի ստացվում» /Մկրտչյան Անի/: «Շատ հաճելի աշխատանք է, ազատ ժամանակ տանն էլ զբաղվում եմ դրանով: Ճիշտ է, այդքան էլ լավ չեմ գործում, բայց կարևորը՝ սիրով եմ կատարում» /Հովհաննիսյան Լուսինե/:«Մեր հայրիկներն են պատրաստել այս շրջանակները, որքա՜ն հետաքրքիր կլիներ, որ տղաներն էլ սովորեին, ու իրենք էլ զգային այն հաճույքը, ինչ մենք ենք զգում կարպետ գործելիս» /Հովհաննիսյան Մերի/: «Մի քիչ դժվար աշխատանք է, բայց երբ սիրով ես անում, մոռանում ես դժվարությունը» /Մուսայելյան Մալենա/: «Այն լավագույն արհեստներից մեկն է, որ մեզ է հասել մեր նախնիներից: Ես արդեն սովորել եմ նախշեր գործել» /Մանուկյան Արմինե/: «Ինձ դուր է գալիս գործելը: Շրջանակի վրա են ամրացված գամերը, դրանց արանքով անցնում են հենքաթելերը, իսկ գործվածքը կատարվում է միջնաթելերով» /Գալստյան Մանանա/: «Ինձ համար շատ հեշտ է դազգահի վրա աշխատելը, կարծում եմ՝ բոլորն էլ պետք է սովորեն գործել» /Մանուկյան Վիոլետա/:«Կարպետագործությամբ զբաղվելն օգտակար է աչքերի համար, այն աչքերի նախավարժանք է, նաև դժվար գործ է, ուղղակի պետք է ուշադիր լինել» /Միրզոյան Աննա/: «Հետաքրքիր գործ է, որով օգնում ենք ինքներս մեզ՝ վարժեցնելով մեր ձեռքերը» /Սարգսյան Էլինա/: «Շատ եմ սիրում, երբ փայտից պատրաստված ասեղը մեկընդմեջ թելերի միջով անց եմ կացնում» /Գալստյան Միլենա/: «Միշտ տատիկս պատմում է կարպետ գործելու մասին: Հիմա շատ շնորհակալ եմ ուսուցչուհուս, որ սովորեցրեց մեզ, իմ գործած կարպետն իր ծննդյան օրը կնվիրեմ տատիկիս» /Մելքումյան Էլմիրա/: «Երբ ուսուցչուհիս հանձնարարեց պատրաստել դազգահներ, ուրախությանս չափ չկար: Շուտով գամերին ամրացրինք հենքաթելերը, որից հետո միջնաթելերի օգնությամբ սկսեցինք գործել...Այն դարձել է մեզ համար ամենասիրելի զբաղմունքներից մեկը» /Սամվելյան Անժելիկա/: «Ինձ մոտ այնքան էլ հաջող չի ստացվում, արդեն մի քանի անգամ գործել եմ, նորից քանդել, բայց այն ինձ դուր է գալիս, հաճույքով եմ անում»/Մելքոնյան Սոֆյա/: «Չգիտեմ ուսուցչուհիս որքանով կհավանի իմ գործածը, բայց ես օգտագործել եմ այն գույները, որոնք սիրում եմ» /Բեգլարյան Գերտրուդա/:

Մնում էր շնորհակալություն հայտնել ուսուցչուհի Մարինե Ահարոնյանին, որ կարպետագործության ուսուցմամբ՝ ժողովրդական վարպետների քրտնաջան աշխատանքով ձեռքբերված փորձը փոխանցում է սերունդներին, զարգացնում նոր կարողություններ՝ վերահիմաստավորելով հայկական նախշերի խորհրդանշական իմաստը: Նպատակը հայկական մշակույթի արժևորումն ու պահպանումն էր, դպրոցականների կարպետ գործելու հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, զարդանախշերի ճիշտ ձևավորումը, գույների ճիշտ համադրումը, որ նպաստում է նաև այդ ասպարեզում ինքնուրույն ստեղծագործելու կարողությունների զարգացմանը:

Սա ազգային մշակույթի յուրացման մի հետաքրքիր գործընթաց էր, որին սիրով լծվել էին աշակերտները: Այն նաև ստեղծագործական միտք էր ու վերելք:

http://www.usarmenianews.com/am-n-8219.html

2017-03-04

ԻՆՔՆԱԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ԼԵԶՎՈՎ

Հայոց լեզվի տնային հանձնարարությունը, որ դասագրքի առաջադրանքի համաձայն՝ «Անկեղծ զրույց» թեմայով շարադրություն էր, 7-րդ ա դասարանի աշակերտները խուսափել էին իրենց անկեղծության մասին խոսք բացել: Առաջարկում եմ գրել այդ թեմայով 10-րոպեանոց շարադրություն, որպեսզի տեսնեմ՝ որքանով են անկեղծ իրենց շրջապատում: Ժամեր հետո թերթում եմ նրանց գրածները: Զար-

մանալի էր, որ աղջիկներից մեկն ինձ էր նաև հարց ուղղել. «Անկեղծ զրուցել, նշանակում է՝ բացել սրտիդ փակ դռները, իսկ ես ամուր փակվածները չեմ բացում, բայց տիկի՛ն Պողոսյան, արդյո՞ք ես ընդունակ եմ անկեղծ զրուցելու» /Մելքոնյան Սոֆյա/:

Այս նուրբ ու սիրուն աղջնակի՝ ինձ ուղղված հարցի պատասխանը թողնում եմ հաջորդ դասաժամին, որ արձագանքեմ նրա անկեղծությանը, հետո նայում եմ մյուսների գրած տողերին, բայց չեմ էլ ուզում նրանց անունները նշել. «Ես այդքան էլ անկեղծ չեմ, քանի որ հաճախ եմ ստում մայրիկիս, երբ դպրոցում լավ գնահատական չեմ ստանում կամ լավ չեմ լինում սովորած դասերս: Այս վերջերս էլ այդպիսի մի դեպք տեղի ունեցավ, թաքցրի հայոց լեզվից ստացած իմ «անբավարար» գնահատականը»: «Ես բնավորությամբ չգիտեմ ինչպիսին եմ, բայց ուզում եմ անկեղծանալ՝ ասել, որ այսօր մեծ սխալ եմ գործել՝ դա-

սարանի աղջիկներից մեկին վիրավորելով»: «Անկեղծ ասած՝ ես շատ թիթիզ եմ: Խոստացա հերթապահություն անել, բայց չարեցի, ես ամեն օր մեկի հետ վիճվում եմ, հետո՝ հաշտվում»: «Մայրս ասում է միշտ, որ պետք չէ նմանվել ուրիշներին, այլ նրանցից պիտի վերցնել լավը և կատարելագործվել: Վերջերս իմ վարքը փոխվել է դեպի վատը, նույնիսկ «անբավարար» գնահատվեց, խոստանում եմ վերացնել թերությունները և ավելի անկեղծ լինել»: «Երբեմն ուզում եմ անկեղծ լինել, բայց նաև վախենում եմ իմ անկեղծությունից»: «Ես լավ չեմ սովորում, երբեմն չարություն եմ անում, հետո՝ փոշմանում: Անկե՞ղծ եմ ես, չգիտեմ, բայց սրտումս մեկը կա, ես սիրում եմ նրան»: «Երբեմն ստում եմ, նաև մի քիչ գոռոզ եմ, բայց չեմ կարողանում խաբել ուսուցիչներին, նրանք իսկույն հասկանում են: Պատահում է՝ ծուլություն եմ անում և դասերս չեմ սովորում»: «Դպրոցում բոլորի հետ ազնիվ եմ, անկեղծ, կցանկանայի բոլորն էլ իմ հանդեպ այդպես լինեին:

Մի անգամ մայրիկիս խաբել եմ, նա հավատացել էր ինձ, բայց հետո խոստացա սխալս, նա ինձ ներեց»: «Ես լավ ընկեր եմ, աղջիկներին հարգում եմ քրոջ պես, բայց սխալներ ունեմ, պետք է ուղղեմ»: «Տանը ես չարաճճի եմ, բայց՝ ոչ անկարգ: Դասերս հազվադեպ եմ սովորում, որովհետև համակարգիչը չի թողնում: Ամենաշատը սիրում եմ կենսաբանություն և այն դասավանդող ուսուցչուհուն, այդ առարկայի վրա եմ շատ չարչարվում, բայց սովորում եմ լարված վիճակում, սիրում եմ նաև ռուսաց լեզուն»:

«Ես շատ անկեղծ եմ, երբեք չեմ խաբել ինձանից տարիքով մարդկանց, չեմ նախանձել ընկերներիս, բոլորի հետ մեղմ եմ, քաղաքավարի, երբեք չեմ էլ ստել մայրիկիս: Կարողանում եմ լավ սովորել, բայց մի անգամ հայոց լեզվից «անբավարար» եմ ստացել, հասկացել եմ սխալս, այն երբեք չի կրկնվի»:

Այս ինքնախոստովանությունը, որքան էլ դառը լինի, որ մտահոգության առիթ է տալիս, մյուս կողմից էլ բացահայտում է դեռահասներին՝ իրենց թերություններով հանդերձ, որը նպատակ ուներ շտկելու նրանց բնավորության բացասական կողմերը: Բայց նաև հիշողությանս մեջ որոշ աշակերտների անցած ամիսների բարձրաձայն արտահայտած խոսքերն են, ովքեր այսօր մեզ հետ չէին կամ չցանկացան անկեղծանալ. «Ես չարաճճի աշակերտուհի եմ, երբեմն ուզում եմ խանգարել դասերը» /Առուշանյան Արիաննա/: «Աշակերտը պետք է խելոք լինի, կարգապահ, ինձանից ի՞նչ աշակերտ» /Պետրոսյան Գևորգ/: «Ուսուցիչների կարծիքով՝ես շատ հանգիստ եմ, բայց դա

միայն դասերին, դասամիջոցներին շատ եմ աղմկում» /Պետրոսյան Դավիթ/: «Գրավորների ժամանակ երբեմն թաքուն արտագրում եմ, խոստանում եմ վերացնել...» /Իսրայելյան Միլանա/: «Երբեմն ձեռքերս եմ թափահարում, որ ինձ դաս հարցնեն, հուսով եմ կկարողանամ վերացնել, որ դիտողության չարժանանամ»/Հակոբջանյան Լյուբա/: «Չնայած միշտ էլ դասերս սովորում եմ, բայց այդքան էլ կարգապահ չեմ, երբեմն ինձ թաքուն նկարում եմ, սիրում եմ «սելֆի» անել» /Հովհաննիսյան Լուսինե/:

Ընթերցեցի այս երեխաների անկեղծ խոսքերը, բայց նաև մտքերի մեջ եմ, հուսամ՝ միասին կկարողանանք հաղթահարել այս բացասական գործոնները, որ ի հայտ եկան՝ նրանց անկեղծ արտահայտվելու 10-րոպեի ընթացքում:

http://www.usarmenianews.com/am-n-8239.html

2017-03-06

ԵՂԲՈՐ ԿՈՐՈՒՍԸ ՆՐԱ ԷՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է...

Արմինե Մուրադյան՝ իր գործի ազնիվ նվիրյալ, նուրբ ու մաքուր հոգի, Մարտակերտի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի կրթության գծով առաջատար մասնագետ, ով երկու տասնյակ տարի է, ինչ համատեղության կարգով աշխատում է նաև Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Ճակատագիրն այլ վախճան էր կանխորոշել նրա եղբոր համար՝ դառն ու վշտամորմոք: Այդ վիշտը միշտ նրա էության մեջ է, որ երբեմն լռում է, երբեմն՝ հորձանք տալիս՝ բացելով նոր հիշողություններ՝ արտասվախառն ու մղձավանջով լի: Նրա հետ զրուցում եմ եղբոր մասին…Նա փորձում է իրեն տիրապետել, բայց օժտված է նուրբ զգացողությամբ, և, ինչպես միշտ, այս անգամ էլ չի ստացվում. արցունքները խանգարում են:

Նորից խախտում եմ լռությունը...Հոգեպարար զգացումների նրբությամբ է պատմում նրա մասին՝ քնարական քնքուշ պատկերներով, անձնական ապրումների հուզումնալից պահերով, որ գալիս են լրացնելու Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում ծնված երիտասարդի ուսումնական ու աշխատանքային տարիները, ով իր մանկավարժական գործունությունն սկսել էր հարևան Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցում՝ որպես զինղեկ և ֆիզկուլտուրայի ուսուցիչ, և առաջիններից մեկը եղավ, որ անդամագրվեց ֆիդայական ջոկատներին:

Արմինեն ինձ հանձնեց մի քանի հրապարակումներ, որտեղ արձանագրված էին տարբեր ինքնապաշտպանական մարտերի մասնակցած եղբոր անցած կյանքի հերոսացման պահեր, որ վերջինը դարձան 1992 թվականի հուլիսի 3-ին Մարտակերտի մատույցներում՝ ցորենի ծխացող արտում: Սարսռաց հոգիս, երբ ընթերցեցի Գրիշայի ու նրա մարտական ընկերների մասին, որ հասկի ցողունի պես ճգվեցին նրանք, ճգվեցին դեպի լույսն ու հավերժացան:

«Կրակի օղակը հետզհետե սեղմվում էր՝ ետևում թողնելով ծխացող հասկեր՝ խանձված հույսի պես: Կրակից դուրս գալու համար

տղաները փորձեցին օգնել իրար: Ուշ էր: …Բոցի օղակը մոտեցավ Գրիշային: Հիշեց տխուր մի պատմություն խարույկ բարձրացված մարդու մասին: Հիշեց ու սարսռաց: Սարսռաց ու կրակեց վերջին անգամ: Գրիշայի բախտին արժանացան չորս վաղուհասցիներ ևս: Հետո…հետո լաց եղավ. լաց եղավ գյուղը. ոռնաց խելացնոր Վաղուհասը՝ թաղելով հինգ խանձված երազ» /Դ. Շիրինյան/:



Եղբոր անողոք բացակայությամբ ամայացավ Արմինեի հոգին, բայց մնաց ամուր կանգնած հայրենի հողին, եկավ այն ցորենի արտերին մոտիկ ապրելու, որ արտասվախառն աչքերով տեսնի ցանած ցորենի հասկերի օրորը, երկնքում ցանված աստղերի լույսերն արտերի վրա, տեսնի անմահացած եղբոր գալիքի ճամփան, որ հասկերի ծփանքից է սկսվում: Կսկծացող սրտով մայրը երկրի նախագահից պիտի ստանար հետմահու պարգևատրված Գրիշա Մուրադյանի «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանը՝ որդու հերոսացման ու հայրենիքին մատուցած գնահատանքի պարգևը, բայց մայրական սիրտը երկար չդիմացավ, տարիներ առաջ նա հեռացավ կյանքից՝ հայացքն այն հեռուներում ծիսացող ցորենի արտերին:

Հայրենի գյուղի դպրոցը կոչվում է Գրիշա Մուրադյանի անունով: Վերջերս՝ փետրվարի 18-ին, լրացավ հայրենյաց նվիրյալի ծննդյան 50 տարին: Նորից հիշատակվեց մի կյանք, նոր խոսքեր հնչեցին խիզախ հայորդու մասին, իր անվամբ կնքված նրա փոքրիկ զարմիկի՝ Գրիշայի և մյուսների շուրթերով նորից հավերժացավ մի կյանք, մի նոր էջ ավելացավ նահատակ ազատամարտիկի անմահացած կենսագրությանը՝ ցորենի արտերի ծփանքից ծնված, գալիքին հառած ոսկե հասկերով:

http://www.usarmenianews.com/am-n-8248.html

2017-03-07

ԿԻՆԸ...

Կինը երևում է մտորումներիս մեջ քնարական ապրումներով, ինքնաբացահայտման ճանապարհին՝ հոգեվիճակների հաջորդական ընթացքով, տրամադրությունների անխաթար դրսևորմամբ, կենսական ապրումների լայն հորձանքով: Նա գեղեցկության տեսքով է հայտնվում ինձ, և որպես ինքնայրում ու անմնացորդ նվիրում՝ սրբացվում է նա իր կենսասիրությամբ, աստվածային սիրով: Խոհերիս մեջ այն չար սատանայականը տեղ չունի, որ նույնպես կին է կոչվում, իմ մտածումների մեջ կինը հավատարիմ է, մարդկության խիղճն է նա, մայրական մի սիրտ, աշխարհին ուղղված արցունքի կաթիլ՝ պարզ ու անաղարտ:

Ես կնոջ մեջ տեսնում եմ ինչ-որ մի բան, որ երբեմն անծանոթ է նույնիսկ ինձ, բայց կանացի է ու առեղծվածային, և այն հրապուրիչ է դարձնում նրան: Նա ինձ երևում է ինքնավստահ կեցվածքով և միշտ հայացքը՝ դեպի լույսը, որ տանում է նրան նոր արարումների: Նա խորն է՝ իր մտածողության չափանիշներով, սիրո նվիրական ուժով, զորեղ է նա՝ մարդկային հավատով, խիղճն է նա աշխարհի, դիմագիծը՝ ազգի պատմության: Ոգեղեն թռիչք է իր մեջ կրում, իմաստավորված կյանք, բնական ապրումների անկեղծություն, հակադիր զգացումների հեղեղ, կեցության ճանապարհ, որ ընդունակ է նաև զոհաբերության: Տեսնում եմ ավանդական հայ ընտանիքի կնոջը՝ նաև որդեկորույս, ծանր ճակատագրի փորձություններին դիմադարձ կանգնած, ազգի ցավը՝ հոգում անթեղած: Նա առ Աստված ուղղված աղոթք է դառնում, լույս մաքրություն, արդարության խոսքն իր մեջ կրող, որ մարմնավորում է կյանքի հոգսն ու դժվարությունը, հենց ինքն էլ իմաստավորում տառապանքը ու մշտական վեճի բռնվում նրա հետ: Կին, ում կյանքը լարված ու տևական մաքառում է՝ արժանավայել ապրելու համար, և այդ գեղեցիկ կյանքը դառնում է իր համառ կամքի դրսևորումը:

Կին, որ իր ներսում մարդկային հոգու բազմերանգ ներկապնակն է արտացոլում, աշխարհին երևում իր անբաժանելիությամբ, որտեղ կարոտ կա, սպասում, խաթարված մի կյանք՝ հիասթափության ու հույսի նրբերանգներով: Նա մի զուլալ աշխարհ, ստեղծող աշխարհ է՝ մայրանալու սրբությամբ օժտված, աշխատելու կարևորության գիտակցությամբ: Անչափելի է նա մայրական սիրով, չարիքի դեմ իր անհաշտությամբ, ընդհանրական մտածողությամբ, ներող է նա բազմաշերտ իր սիրով, խաղաղ կյանքի անհագուրդ ցանկությամբ:

Նա կյանքի տարերքն է, աշխարհի սերը, հիշողության արթնացում, հավատի ու կամքի հզոր մարմնացում:

http://www.usarmenianews.com/am-n-8258.html

2017-03-10

ՀԱՅՐԻԿ ԿՈՐՑՐԱԾ ՄԻ ԳԱՐՆԱՆԱԲՈՒՅՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Կանանց օրվա շնորհավորանքների մեջ առանձնանում է մի դռան թակոց, մի սիրուն աղջնակ՝ ծաղիկներով զամբյուղը ձեռքին: Մեղմ ժպիտով հյուսված մի թախծոտ հայացք, որ ինձ է մեկնում ծաղիկների բույլը: Ես գրկում, համբուրում եմ նրան, բայց այդ ծաղիկների մեջ տեսնում եմ բնության մշտանորոգ շարժումը, որ մարդուն տանում է դեպի կյանք, իսկ այդ կյանքը մարդուն հասցնում է նաև մահվան: Մարդկայնության բարձունքից կարծես ուզում եմ վերացնել աշխարհի բոլոր ցավերը, առավելապես չեմ ուզում իմ առջև նստած երեխաներին որբացած տեսնել ու երփներանգ ծաղկաբույլում սահմանին վերջերս զոհված նրա հայրիկի արտացոլանքն եմ տեսնում:

Արմինե Գեղամի Մանուկյան՝ գարունը խորհրդանշող մի աղջնակ, հոգում՝ անսահման մեծ ցավ, ծաղիկների վառ գույներում՝ հեզիկ մի հայացք, որ քարացնում են ինձ: Մարդկային հավատի ու խղճի արթնացում կա այդ ծաղիկների մեջ, որ իմ աշակերտուհին է նվիրում ինձ՝ այն մեղմիվ ժպիտը հյուսած իր թախծոտ հայացքին: Եվ ես ուզում եմ կյանքի հավերժական տոնի մեջ բեկվի մահվան խորհուրդը, ու ծաղիկների այդ չքնաղ բույլում մարդկային խիղճն արթնանա, վաղաժամ մահեր չլինեն, մեր երեխաների մանկությունն էլ չխաթարվի:

Կարծես այդ ծաղիկներն էլ ազգային խառնվածք ունեն, իրենց մեջ կրում են մեր զավակների բախտը, և ինքնամոռաց նայում եմ ծաղիկներին, դառնության հուզական տրամադրությունն է համակում ինձ, հակադիր զգացումների մի խառնուրդ լույսի ու խավարի տեսքով պաշարում է միտքս: Այդ ծաղիկների մեջ կյանքի ու մահվան սահմանագծերը զուգահեռվում են, աշխարհի գեղեցկությունն եմ տեսնում, ապրելու հրճվանքը, որ հակադրվում են տիեզերական ցավին:

Նրա նկարների մեջ այս մեկին եմ նայում, որ նկարվել էր ամիսներ առաջ, երբ 7-րդ ա դասարանի աշակերտների հետ գնացել էինք զորամաս, և երևի չիմացավ նույնիսկ, որ այդ պահին իր թիկունքում նաև անծանոթ զինվորներ էին նկարվում: Մի փոքրիկ արցախուհի, ում տեսնում եմ նաև զինվորական հագուստով, որ հայրիկի հավերժացած անունն իր հոգում է կրում: Ես նրան նայում եմ մեկ այլ հայացքով, նա իր մեջ անսահման սեր ունի և գորով, ու ցավում եմ մեր երեխաների համար, որ սահմանին հայրիկներ են կորցնում:

Ես զրուցում եմ նրա տատիկի հետ, որ մեր դպրոցի ուսուցչուհին է: Վշտամորմոք մի սիրտ խոսում է թոռնուհու մասին, ով իմ դասարանի աշակերտուհին է և ցանկացել է անձամբ իր դասղեկին շնորհավորել:

Արցունքներիս արտացոլանքում նորից այն ծաղկաբույլն է երփներանգվում, որ ինձ էր նվիրել հայրիկ կորցրած մի գարնանաբույր մանկություն:

http://www.usarmenianews.com/am-n-8290.html

2017-03-14

ՀԱՍՈՒՆԱՑԱ ՄԻԱՆԳԱՄԻՑ, ԵՐԲ ԴԱՐՁԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԿԱՆԱՏԵՍ

7-րդ դասարանի աշակերտուհի Մերի Հովհաննիսյանի շարադրանքի առաջին տողերն ընթերցում եմ, մի պահ կանգ առնում... Կարծես հայրենություն է, որ այսքան պարզկերավոր բարձրաձայնում է այս փոքրիկ արցախուհին:

«Երբ տարիներ առաջ մայրս պատմում էր արցախյան շարժման մասին, ինձ մոտ այն կարծիքն էր, որ լռությունը փշրված կամրջի պես ճեղք է բաց արել հորիզոնի մեջ՝ ետ շպրտելով մոխրահամ անցյալը, իսկ հորիզոնում դեռ կախված է մնում հայրենիքիս ապագան: Եվ սրտիս խորքում վախի մի կծիկ էր առաջացել, որը, իմ մեծանալուն ու գաղափարապես հասունանալուն զուգընթաց, ավելի ու ավելի էր մեծանում, քանի որ գիտակցում էի, որ իմ երկրի խաղաղության հարցը լուծված չէ: Եվ կարծես գուշակում էի, որ վաղ թե ուշ կպայթի այն, ու պայթեց ապրիլյան պատերազմը, և ես դարձա այդ պատերազմի ականատեսը»:

Այն ոչ հեռավոր անցյալում եմ, երբ արցախցին անկախություն էր ուզում մարդկությունից, բայց չհայտարարված պատերազմի սարսափներ ապրեց նա՝ արկերի պայթյուն, զենքերի ճարճատյուն, վախից կծկված սրտեր, հերոսացած անուններ, գաղթի ճամփաների դժվարություններ, օտար ափերի սառնություն ու նորից վերադարձ հայրենիք: Այն օրերին հայ մանուկը, մոռացած խաղ ու խաղալիք, հույս ու հանգստություն էր փնտրում մեծերի հայացքում, իսկ այժմ նա հասունացել է, ցավալիորեն դարձել մի նոր պատերազմի ականատես:

«Իմ ապրած զգացողությունը չէի ցանկանա ունենա ոչ մի մանուկ: Հիմա էլ ապրում եմ սահմանին մոտ, բայց չեմ վախենում իմ այստեղ ապրելով: Ես ուժ եմ տալիս զինվորներին, նրանք չեն թողնի, որ մեզ հետ ինչ-որ բան պատահի: Այստեղ մյուսների նման ես էլ ունեմ երազանքներ: Ամբողջ աշխարհի համար խաղաղություն եմ ուզում, նաև՝ ցանկանում եմ դառնալ ուսուցչուհի և կրթել հաջորդ սերունդներին:

Մինչ պատերազմի ականատես դառնալս՝ երբ ուսուցիչներս և ծնողներս խոսում էին մեր հայրենիքի, նրա պաշտպանի և հարևան ենթգ թշնամու մասին, ես այնքան էլ գիտակցորեն չէի ընկալում այդ երկու անփոխարինելի արժեքները, քանի որ թե՛ հայրենիք և թե՛ հայրենիքի պաշտպան ասելով՝ ես չէի հասկանում, թե ինչ արժեքների մասին է խոսքը:

Վերջապես ես հասկացա…Հասկացա, որ հայրենիքը միայն հողն ու քարը չեն, հայրենիքը իմ գլխավերևում փռված երկինքն է, ջերմ արևը, ընտանիքս, հայրական տունս, դպրոցը, այն փողոցը, որով քայլում եմ, այն օդը, որով շնչում եմ, և վերջապես՝ այն ծանոթ և անծանոթ դեմքերը, որոնց հանդիպում եմ: Հպարտորեն պիտի ասեմ, որ հայրենիքս Արցախն է՝ ինձ համար աշխարհի հրաշալիքների մեջ ամենաարժեքավորը: Իսկ հայրենիքիս անդորրը հսկելու և իմ առավոտների խաղաղ բացվելու ու մայրամուտներն ուրախ դիմավորելու համար՝ պայքարող յուրաքանչյուր անհատ ինձ համար մեծագույն հիացմունքի պաշտպան է: Այսօր բոլորիս անդորրը հսկում են մեր հայրերը, եղբայրները, ովքեր մեր լեռների պես անառիկ են և իրենց ուսերին դրված խնդիրը պատվով են կատարում: Ես հավատում եմ մեր սահմանում կանգնած զինվորին: Մեր հայրենիքի պաշտպանն ամուր է, նա հայոց լեռների արծվի նման անպարտ է, ով տենչում է ազատության, ում աչքերի մեջ բոցկլտում է հայրենասիրության կրակը: Իսկ ես խոստանում եմ՝ դպրոցում լավ սովորել և հայապահպանության գործում ինչ-որ օգտակար բան անել, չէ՞ որ ես էլ հայրենյաց փոքրիկ պաշտպան եմ, բայց հասունացել եմ միանգամից, երբ դարձել եմ պատերազմի ականատես»:

Այո՛, երբեմն աշակերտներիս ստեղծագործական խոհերն ու զգացումներն ինչ պանում են ինքնավերլուծությունների ու ինքնաբացահայտումների, մղում նոր արժեքների որոնման ու ստեղծման: Խոստովանել է պետք. աշակերտների խոհերից երբեմն հոգեփոխվում ենք:

http://www.usarmenianews.com/am-n-8332.html

2017-03-15

ՀՈԳԵՏՎՆՋ ՄԻ ՀԱՐՑ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏԸ ՆՈՒՅՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՉԵՆ...

Չարենցի «Դանթեական առասպել» պոեմն ենք ուսումնասիրում 11-րդ դասարանում: 18-ամյա բանաստեղծի քնարական վերապրումն է՝ անցած դարասկզբի հայրենիքի, ազգային ցավի մասին: Ականատես գրողը վերարտադրում է Վանի ողբերգությունը, որ ուղեկցվում է դժոխային պատկերների նկարագրությամբ: Աշակերտուհիներից մեկը բարձրաձայնում է, թե որքանով է ճիշտ, որ իրենք անցնում են այդ պոեմը, որտեղ ահասարսուռ պատկերներ են՝ կամավորական զորքերին անդամագրված գրողի տպավորություններով:

Հակադարձում եմ նրան, որ պետք է անցյալը միշտ էլ վերհիշել, այդ նույնն է, որ մոռացության տանք 92-ի զոհերին, մեր անցած ճանապարհը: Մեկ ուրիշ աշակերտուհու արձագանք ուսուցչուհուս մի նոր զարմանք է պատճառում, թե ինչ կարևոր է, որ իրենք հիշեն նաև նրանց մասին:

Մենք չե՞նք կարողանում դաստիարակության ճիշտ ճանապարհով տանել սերնդին, թե ժամանակներն են փոխվել, ու կանգնած ենք նոր բացահայտումների առջև: Տարիներ շարունակ այն համոզմունքին եմ մնացել, որ Արցախի կրթության համակարգը համալրված է լավագույն ուսուցիչներով, ովքեր արժանապատվորեն են կատարում իրենց վերապահված առաքելությունը մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում՝ ի նպաստ մեր երկրի հզորացմանն ու բարգավաճմանը: Իսկ այսօրվա սերունդը լի է հետաքրքրություններով, սեփական կարծիքներով, ազատամիտ գաղափարներով, նա վաղը այս երկրի արժանի տերն է դառնալու, նաև համոզված եմ, որ ազատություն սիրող այսօրվա սերունդն է կերտելու ազատ ու անկախ Արցախը:

Բոլորս էլ գիտենք, որ այսօրվա դպրոցը հայրենիքի պաշտպանի ձևավորման բարդ և պատասխանատու աշխատանքն է կատարում, իսկ այսօրվա սերունդն Արցախյան ազատամարտում հաղթանակած ժողովրդի սերունդն է, որ սահմանի մոտ նոր հաղթանակներ է արձանագրում իր անմահությամբ՝ սերտած լինելով բարոյական այն բոլոր բարձր արժեքները, որ սերմանել ենք դպրոցում: Իսկ մանկավարժի աշխատանքը մարդ կերտելու արվեստ է, և մարդակերտման գործում այսօրվա դպրոցը բավարար հիմքեր ունի բարձրաձայնելու, քանի որ

դպրոցական նստարանից է սկսում ձևավորվել հայրենիքի պաշտպանության գաղափարը:

Այսօր մեր առջև նստած են նաև բազմակողմանիորեն զարգացած, տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետող աշակերտներ: Այս առումով այսօրվա ուսուցիչը նույնիսկ, կարելի է ասել, մի քանի քայլ հետ է մնում աշակերտներից: Չմոռանալով նաև ավանդական կրթության որոշ առավելություններ՝ հաստատակամորեն կարող եմ ասել, որ ժամանակները փոխվել են, մենք չենք կարող նախկին ստրկամիտ գաղափարներով դաստիարակել մեր աշակերտներին, որ հատուկ է եղել խորհրդային տարիների կրթությանը: Չեմ ուզում զերծ մնալ նաև այն բոլոր թերություններից, որ առկա են այսօրվա կրթության ոլորտում՝ կապված բուհական ընդունելության և այլ երևույթների հետ, բայց բարձրաձայն կարող եմ ասել, որ մենք ձևավորում ենք ապագա արհեստավորին, շինարարին, բժշկին, ուսուցչին, գիտնականին և շա՜տ- շատերին՝ շարունակելով մեր նախորդների առաքելությունը:

Այսօր կանգնած եմ երկընտրանքի առջև: Պատանի հանճարը ազգային ողբերգությունն է նկարագրել, նա ազգին փրկելու ուղիներ է որոնել, որը տեսավ մեր ժողովրդի հավաքական ուժի մեջ, և այսօր էլ այն արդիական հնչողություն ունի, բայց երբեմն այս սերնդի մեջ տեղատվության անորոշությանն են հակադրվում, որ հայրենիքի անցած տագնապալից ճանապարհը ներկա օրերում չեն ուզում տեսնել, երբ այսօր էլ գտնվում ենք այդ տագնապահարույց վիճակում: Հոգետանջ մի ինքնաբացահայտում ուսուցչուհուս դատապարտում է ներքին ընդվզումների: Երբեմն սերունդը փորձում է խուսափել անցյալի ցավալի տրամադրություններից… Բայց որտե՞ղ ենք սխալ թույլ տվել…

Իսկապես, ստեղծվել է մի վիճակ, երբ ուսուցիչն ու աշակերտը իրար չեն հասկանում: Այստեղ է, որ սրությամբ է դրվում մանկավարժի բարձր համոզմունքների ու կերպարային ազդեցության հարցը: Ես թերևս շարունակում եմ մնալ այն համոզմանը, որ ուսուցչությունը պետք է հասնի այնպիսի հեղինակության, որի հետ նույնանալու խորը ցանկություն ունենա աշակերտությունը:

http://www.usarmenianews.com/am-n-8341.html

2017-03-16

ԵՐԲ ՀԱՑՆ Է ԵՐԳՈՒՄ ՄԻ ԹԱԽԾԱԼԻՑ ԵՐԳ

Չկարողացա անտարբեր անցնել, երբ խոսքը մարդկային կորստի մասին է, ու այստեղ հացն էլ թախծալից մի պատմություն ունի:

Չեռքիս Վարուժանի «Հացին երգն» է, ու հացը երգում է այստեղ: Ցորենի արտերի մեջ կակաչներ կան, որ «սիրող սրտերու պես կ'արյունին»: Մարդը երգում է, երգում են ծղրիդները, երգում է հովը մեղմ, սրնգի նվագը օրորում է հասկերի քունը: Հացի երգը հնչում է ամենուր, այնտեղ հաց է արարվում, ու այդ երգը բարձրագույնն է բոլոր երգերի մեջ:

Ու այդ երգի ձայնը հասնում է մեզ, նրբորեն այն շոյում է մեր ունկերը, բայց այստեղ մի նոր պատմություն կա հյուսած նոր մարդու մասին, որ հաց է բերում: Ու մի նոր երգ՝ ՀԱՑ ԲԵՐՈՂԻ մասին, գարնանային այս օրն իր հետ հեկեկանք է սփռում, որ մաքրագործի աշխարհն իր արցունքներով: Այդ երգը գալիս, ծուլվում է մարդկանց հոգիներին, հացի փառաբանության երգն է դա, որ վաստակել է մարդն իր արդար քրտինքով, հասցրել ուրիշ մարդկանց ու դարձել ՀԱՑ ԲԵՐՈՂ:

Այս օրերին հացը երգում է մի տխուր երգ՝ ՀԱՑ ԲԵՐՈՂ ՄԱՐԴՈՒ մասին, ու ես փնտրում եմ տողեր՝ հացի զորությունն ազդարարող, բայց կանաչ արտերի ծփանքն եմ լսում, հասուն հասկերի երգը տխրամած, որտեղ ՀԱՑ ԲԵՐՈՂ ՄԻ ՄԱՐԴ կա, որ հավերժի ճամփորդ է դարձել:

Հայերը հացի նկատմամբ միշտ էլ պաշտամունք են ունեցել, և իզուր չէ, որ հյուրերին աղուհացով են դիմավորում: Հացը մեծագույն սրբություն է, և հույներն այդ սրբությունը համեմատել են միայն արևի հետ:

Ասում են՝ ուզում ես մարդուն ճանաչել, հացի՝ նստիր հետը, իսկ երբ 7-րդ դարի փիլիսոփա Դավիթ Անհաղթին հարցրել են, թե այն ի՞նչն է, որից մարդ երբեք չի ձանձրանում, պատասխանը Հացն է եղել:

Հացը բարություն է, անկեղծություն, ասում են նաև՝ սիրո, հավատարմության, ազնվության խորհրդանիշ: Պատմում են, որ հայ ժողովրդի անվանադիր Հայկ Աղեղնավորի հայր Թորգոմը ցորենի սերմացուն պահում էր կարասների մեջ, որոնց բերանները փակում էր ոսկյա կափարիչներով: Դա հավաստում էր, որ նա ցորենն ավելի բարձր է գնահատել, քան ոսկին: Իրավամբ, հացը միշտ էլ համարվել է մեր ամենամեծ հարստությունը:

Հացեկացի գյուղացիները Վաղարշապատում Մաշտոցին ուղարկել են 36 լավաշ՝ ի պատասխան նրա ստեղծած 36 հայկական տառերի, և հնում հացթուխին չէին սպանում. նա անձեռնմխելի էր: Իսկ Արցախի Տող գյուղի հաց թխողների մասին պատմում են, որ դեռ դարեր առաջ առաջին հացը հիվանդին էին ուղարկում, որ նա ուժ ստանա և առողջանա:

Ըստ ավանդության՝ Ալեքսանդր Մակեդոնացին պաշարել էր հայկական բերդերից մեկը, բայց տեսնելով՝ հայերը բերդի աշտարակից կախել են մի սպիտակ լավաշ, նա զորքերը ետ է քաշում, քանի որ այն հաշտություն էր ազդարարում:

Հացի պաշտամունքի մասին զրույցներ շատ կան, բայց այս մեկն ուրիշ է…Անունը ՀԱՑ ԲԵՐՈՂ է, որ հաց է հասցրել մարդկանց: ՈՒ հացի թխածալից երգն է հնչում այդ ՄԱՐԴՈՒ մասին, որտեղ անմահացած մի կյանք կա, ցորենի հասուն մի արտ՝ հասկերի օրորուն երգով:

http://www.usarmenianews.com/am-n-8366.html

2017-03-19

ԱՅՍ ԳՐՔՈՒՄ ԻՆՁ ԿԱՄՐՁՎԱԾ ԵՄ ՏԵՄՆՈՒՄ ՀԵՌՈՒՆԵՐԻՆ

Ձեռքիս Զոյա Պողոսյանի «Ղարաբաղն իմ հոգու մեջ է» գիրքն է, որտեղ ներկայացված են ղարաբաղյան բանահյուսության արժեքավոր պատառիկներ՝ հումորիկ պատմություններ, բանաստեղծություններ, բարբառով գրված մանրապատումներ, ասացվածքներ: Նաև նախաբանի արժեքավոր խոսք կա գրված՝ հոգեբան, ԱրՊՀ պրոֆեսոր, Գիտության վաստակավոր գործիչ Արզիկ Մխիթարյանի կողմից:

Մեր գյուղի՝ Մոխրաթաղի՝ ինձ շատ ծանոթ ու հարազատ մարդկանց մասին է խոսքը, որ գրվել է 92-ի բռնագաղթից հետո ՌԴ Սարատով քաղաքում բնակություն հաստատած իմ համերկրացու, նաև բարեկամուհու կողմից, որտեղ իր ապրած կյանքն է, գյուղի առօրյան, իրական կյանքի հուշեր: Կարոտի զգացողություն կա Արցախյան պատերազմից հետո օտար ափերում հանգրվան գտած հեղինակի հուշերում, անցյալ դարձած իրադարձություններ, նույնիսկ դեմքեր, որ մեզ հետ չեն արդեն:

Այդ գրքում նաև մեր տոհմածառն եմ տեսնում, հայրական կողմից պապիս ու տատիս՝ Գալուստ և Սոֆյա Պողոսյաններից ծնված զավակներին՝ Թալիշ և Սերյոժա Պողոսյաններին, որ զոհվեցին Հայրենական պատերազմում, հորս՝ Միքայել Պողոսյանին, ում փոքր քրոջ՝ Արևիկի հետ ծնողների մահվանից հետո որբանոց էին տարել: Աղջիկների ու տղաների մանկատներն առանձին էին, հորս էլ որբանոցից որբանոց էին տեղափոխում...Տարիներ անցան, քրոջը կորցրեց նա, հասունացած երիտասարդը, ցավոք, մենակ վերադարձավ հայրենի գյուղ... Հայրս ընտանիք կազմեց, ու ծնվեցինք մենք՝ չորս երեխաներս:

Հայացքս սահում է գրքի տողերով... Ծնողներս են՝ Միքայել Պողոսյան և Արզիկ Ղահրամանյան, նրանցից ծնված երեխաները՝ Վոլոդյա՝/ավագ եղբայրս/, ապրում է Մոսկվայում ընտանիքով, մեկ տղա ունի, Ալյոշա՝ /կրտսեր եղբայրս/, երկու երեխա ունի, ապրում է Իսպա-

նիայում, Նատաշա՝ ապրում է Մարտակերտում, մեկ աղջիկ ունի, մեկ թոռ, Նադյա՝ փոքր քույրս է, ապրում է Մոսկվայում, ամուսնացած չէ:

Իմ ներկայի արմատները անցյալիս մեջ են...Ու այդ հեռավոր անցյալում օտար ափեր չվող կռունկների երամ կա, 92-ի բռնագաղթի սարսափելի օրեր, երբ չարության ծուխը պատել էր երկնակամարը, և ճարահատյալ կռունկների երամը տագնապահար չվում էր հեռավոր ցուրտ ափեր:

Ապրելու հրճվանքն օտարության մեջ չէր, և երամից մի կռունկ ուզում էր հայրենադարձվել, երբ տեսիլքի պես նրան երևաց անսեր մնացած հայրենի մի տուն: Ու ես վերադարձա: Սիրո նվիրական մեծ ուժը ծննդավայրս էր, տագնապը՝ մայրենի լեզվից նկատվող նահանջը, որ տեսանելի էր ռուսական դպրոց հաճախող դստերս մոտ: Մենք եկանք 95-ին, որպեսզի փրկենք մեզ կործանումից, որ ձուլում էր կոչվում, վերացում:

Մի կռունկի փոքրիկ երամ ձուլվեց օտար հողին, որ կամրջվի հայրենիքս հեռուներին:

Տարիներ առաջ Սարատովի հայկական գերեզմանոցում ավելացավ երեք շիրիմ. ծնողներս էին և մորս կողմից Հայկանուշ տատս, որ հանգան օտար հողում, իսկ պապս՝ Նիկոլայ Ղահրամանյանը, զոհվել էր Մեծ հայրենականում:

Այս գրքում ինձ կամրջված եմ տեսնում հեռուներին...Հայրենադարձված մի կռունկ եմ, արմատներս՝ օտար հողում: Հարազատներ ունեմ այնտեղ, անհագ կարոտ, ծիածանված նոր երազներ... Ցավիս ակունքները խորն են, անձնական, բայց ընդհանրական են, ամենքից անբաժան:

http://www.usarmenianews.com/am-n-8407.html

2017-03-20

ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ ԿԱԹԻԼՆԵՐՈՎ ԵՆՔ ՀԱՎԱՔՈՒՄ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 20-ը Երջանկության միջազգային օրն է… Ի՞նչ է երջանկությունը: Ասում են՝ միշտ էլ փորձել են սահմանել այն և բացահայտել դրա աղբյուրները: Հետազոտական տարբեր խմբեր փորձել են գիտականորեն պատասխանել այն հարցին, թե վերջապես ինչ է երջանկությունը, և ինչպես կարելի է հասնել դրան: Այն հաճախ սահմանել են որպես բարեկեցիկ ապրելաձև, ոչ թե՝ պարզապես զգացումներ: Նաև երջանկության ընկալումները տարբեր են: Գիտնականների մի մասը երջանկությունը բաժանում է մի քանի բաղկացուցիչների, ինչպիսիք են՝ բարեկեցությունը, կյանքի որակը: Որոշ մտածողներ երջանկությունը սահմանում են որպես գոհունակություն: Ինձ համար երջանկությունը զգացմունքային վիճակ է, որը բնորոշվում է դրական կամ հաճելի հույզերով, որոնք էլ իրենց հերթին առաջացնում են բավարարվածության ուրախ տրամադրություն: Եթե կան խաթարված կյանքեր, հակամարտ հարաբերություններ, մարդկային խղճի ու բարոյական արժեքների հետ կապված բազմաթիվ խնդիրներ, երջանկությունն ինքնին վերացական է դառնում, նրան հասնելու ձգտումն էլ՝ անհնարին:

Մարդը երջանիկ պիտի լինի իր հարազատների միջավայրում, նաև այն հասարակության մեջ, որտեղ նա ապրում է: Մեր գլխավերևում ամպեր կան կուտակված, մենք տեսնում ենք այն, երբեմն մեր կողքի մարդու հոգուն պատած ամպերը չենք տեսնում, իսկ երբ փորձում ենք սփոփել նրան, երբ հուսահատ է, միայնակ, ժպտում է նա և սիրով ըմպում միայնությունը փարատող երջանկության կաթիլներից: Մարդկային ողբերգությունն անափ է, անսահման, մարդը միշտ էլ տագնապում է հարազատների կորստյան համար, նա նաև հոգսաշատ է, սոցիալապես անապահով, բայց հարմարվում է իր վիճակին, մռայլությունը քաշում է դեմքից, օրհնում իր զավակներին, որ ողջ և առողջ են. դա էլ երջանկություն է:

Երբեմն գիշերը մարդն անհանգիստ սպասում է ցայգալույսին, որ մեղմորեն ընդունի արևի համբույրը. դա երջանկություն է, որ կարողացավ զգալ այդ ջերմագին հպումը: Հայացքն ընկնում է մոտակա ծառին, ձգտում է հատնաբերել բնության մշտարթուն շարժը, որ սփոփանք է բերում, երջանիկ ակնթարթ: Կարող է լինել այն աշխատան-

քի բերկրանք. ապրում է մարդն այդ երջանկությունը, երբ իր ցանած ցորենի բերքն է հավաքում: Եկեղեցին հավատի տաճար է, արևի լույսը՝ կյանքի արձագանք, որ կարող են նույնպես երջանկություն ցանել: Կյանքը սիրո և պայքարի ասպարեզ է, չարիքի դեմ մարդն իր տեսչանքներն է գրկում, որոնք երջանկության ավետաբեր են դառնում, երազների մարմնացում: Լույս աշխարհ եկած մանկան ճիչը երջանկություն է ավետում: Մայրանում է հողը…Հողի մշակը երջանկություն է վայելում: Այդ նույն երկունքի ցավերով ծնվում է ստեղծագործ միտքը. այն նույնպես երջանկություն է բերում: Ուրեմն՝ ցավն էլ երջանկաբեր է…Երբեմն կաթիլներով հավաքած երջանկությունը անէանում է, նորից ես ուզում կաթիլ առ կաթիլ հավաքել այն, բայց ավելի ես համոզվում լիակատար երջանկության հասնելու անհնարինության մեջ: Մտորում ես նույնիսկ՝ ի՞նչ լավ է, որ կաթիլներով անգամ վայելում ես այն, ուրեմն երջանիկ մարդ ես:

Այո՛, երջանկությունը պեղում ու գտնում ենք աշխարհի ու ինքներս մեզ հետ ունեցած մեր վերաբերմունքով: Այդ մենք ենք ստեղծում նրա չափման նշաձողը, մենք ենք ապրում ու գնահատում այն կամ էլ՝ պարզապես անցնում կողքով:

http://www.usarmenianews.com/am-n-8421.html

2017-03-21

ՈՐՏԵՂ Է ՊՈԵԶԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ...

Պոեզիայի միջազգային օրվա առթիվ շնորհավորում եմ արվեստի՝ այդ ոլորտի խոսքի վարպետներին և որպես դպրոցի ուսուցչուհի՝ բարձրաձայնում եմ այդ ասպարեզում առկա որոշ երևույթների մասին:

Երբեք չեմ համարձակվել բանաստեղծություն գրել, եթե անգամ փորձեի, ձեռքս պիտի դողար, նաև երկընտրանքը միշտ էլ առկա էր, թե որքանով հաջողված կլինի իմ գրած բանաստեղծությունը, որովհետև գիտեի, որ բանաստեղծը հայտնություն պիտի դառնա իր ասելիքի խորությամբ, նորարարությամբ, մարդկային ապրումների անսահման աշխարհով:

Նոր ժամանակներում գրողական աշխարհն ընդլայնել է իր սահմանները, երբեմն հիանում ես բառին շնչավորելու ձիրքով օժտված անհատներով, նրանց ստեղծագործական մեծ վարպետությամբ, բայց պատահում է՝ չափածո խոսք ենք ընթերցում, չկա այն երանության զգացողությունը, որ պիտի պարուրի հոգիդ: Գրական քննադատության պակա՞ս կա, թե՞ գնահատության չափանիշներն են միակողմանի դարձել, որ երբեմն հանդիպում ենք բանաստեղծությունների, որոնց գեղագիտական ճաշակն ընկած է: Չգիտեմ, հայ պոեզիայի բարենորոգման խնդի՞ր կա այստեղ, թե՞ շրջապատում շատացել են իրենց բանաստեղծ կոչողները:

Դասական թե ժամանակակից գրողներից մեզ սովորելու շատ բան ունենք: Եթե բնատուր տաղանդ չկա, գոնե պետք է իմանալ, թե խոսքի լավագույն վարպետները լեզվաոճական ինչ հնարքներ, միջոցներ, եղանակներ են օգտագործել՝ իրենց խոսքին շունչ տալու համար: Գրագետ լինել, թերևս չի նշանակում, որ կարող ես ստեղծագործել: Կարող է լինել նաև հակառակը, բայց ով էլ լինի, ստեղծագործելու հակում ունեցող մարդը պետք է իր անհատական ոճն ունենա: Իսկ ոճի մասին խոսելիս միշտ հիշում եմ մեր դասականներից Դեմիրճյանի խոսքը. «Ոճը խոսքի ժպիտն է, տխրությունը, զայրույթը, խոհական

երազանքը»: Կարծում եմ՝ ստեղծագործող մարդու համար պետք է կենտրոնական լինի լեզուն, գրական հայերենի ամենակատարյալ արտահայտությունը պետք է նկատվի ամեն մի տողում, այն պետք է բյուրեղյա մաքրություն ունենա, որը, ցավոք սրտի, շատ ժամանակ խաթարված եմ տեսնում որոշ ստեղծագործողների կողմից: Չեմ ժխտում նաև կենդանի ժողովրդական լեզվի կարևորությունը, որը գալիս է մեր բանահյուսության ակունքներից, և այն ավելի ստույգ է արտահայտում ժողովրդի մտածողությունն ու հոգեբանությունը:

Տպավորիչ պատկերների ստեղծումը հիմնականում բնատուր շնորհ ունեցողներին է տրված, որով պայմանավորված է տվյալ ստեղծագործության բարձր արվեստն ու անկրկնելի գեղեցկությունը: Բայց դիպուկ մակդիրներն ու համեմատությունները, փոխաբերական յուրաքանչյուր միտք պետք է գեղագիտական հաճույք պատճառեն ընթերցողին: Ստեղծագործական միտքը կարող է հախուռն լինել՝ կրակոտ զգացմունքներով շաղախված, փիլիսոփայական խոհերի միասնությամբ, բայց բանաստեղծի ներաշխարհում պետք է տեսանելի լինի նաև ժամանակի իրադարձությունների արձագանքը:

Բանաստեղծ լինել, նշանակում է՝կարողանալ բառ ստեղծել, հետևաբար՝ ստեղծարար շնորհով օժտված անհատն է կարողանում իր ասելիքի խորությամբ ճանապարհ հարթել դեպի մարդկանց սրտերը:

Որտե՞ղ են այն արժեքները, որ գտնում են բարձր պոեզիայի հետ հաղորդակցման ընթացքում, որտե՞ղ է այն ապրումների խորքը, որ տանում է քեզ ինքնաբացահայտումների, որտե՞ղ է պոեզիայի մշակույթը...

http://www.usarmenianews.com/am-n-8441.html

2017-03-23

ԱՊՐԻԼԻ 24-Ի ԻՄ ՉԱԽՈՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

Ես քաղաքական դաշտում չկամ, բայց ամենուր նույն խոսակցությունն եմ լսում՝ տարածքներ պիտի հանձնեն: Ա՛յն տարածքները, որ պիտի հանձնեն, ե՛ս եմ այդ տարածքների հարևանությամբ ապրում, մե՛նք՝ բոլոր արցախցիներս: Ես կամ մյուսները այդ ու՞ր պիտի գնանք, երբ մեր այստեղ ապրելու երաշխիքը չկա այդ արյան ծարավ բորենիների կողքին:

Իմ ներկան շաղախված է անցյալիս…Հնօրյա կարոտների արահետներով եմ քայլում, ուզում ամեն մի ակնթարթի տալ հավերժականի իմաստ: Վերադարձ դեպի անցած օրերը, այդ վերադարձը չի ճանաչում ոչ մի սահման և ոչ մի պատնեշ: Անարգել վերադառնում եմ հավերժություն դարձած անցյալի հուշերի մեջ, բայց այնտեղ նաև կյանքի իմաստի տենդագին որոնումներ են, ապրած կյանքի տխուր տարեգրություն:

80-ականների սկիզբն է: Բարձրագույնը գերազանց ավարտել եմ, բայց անգործության եմ մատնված: Իմ փոքրիկ երեխան գրկիս է, աշխատանքի տեղավորվելու հարցով՝ ես մտնում եմ ընդունելության ոմն մի Ալիևի մոտ, ով մեր շրջանի իշխանական վերնախավի երկրորդ մարդն է: Հացի արժեքը 30 կոպեկ է, ես նրան հարցնում եմ՝ ամեն օր կարո՞ղ եք ինձ 30 կոպեկ տալ, որ իմ երեխային գոնե ցամաք հացով ապահովեմ: Նա զարմացած է, բայց ժպտում է ինձ, ու նրանից լսված միակ հայերեն բառը մի «բայց» է, որ հնչում է ու լռում: Ես նորից վրա եմ բերում՝ ու՞մից վերցնեմ այդ կոպեկները... հարևանի՞ց….Նա նորից հնչեցնում է մի կցկտուր «բայց»… ու նորից լռում է: Երբ երրորդ անգամ ես կրկնում եմ նմանատիպ մի հարց, թե պատահական անցորդի՞ց վերցնեմ այդ կոպեկները, որ իմ երեխային կարողանամ պահել: Նրա կցկտուր հնչեցրած «բայցը» ինձ համբերությունից հանում է…Ես զայրացած բացականչում եմ՝ ի՞նչ «բայց», ես ատեցի այդ «բայցը», որ ինձ հունից հանեց: Նա լռվեց, այն առեղծվածային ժպիտը քարացավ դեմքին, իմ երեխան սկսեց լացել, ես թողեցի իմ լացող երեխայի աղաղակը նրա խղճին, որ իմ համար աշխատանք չդարձավ:

Այդ օրվանից ես ատեցի այդ «բայցը», որի կողքին բազմակետեր էին շարված: Իսկ երբ տարիներ անց՝ 86-ին, վերջապես ես աշխատանքի ընդունվեցի՝ որպես շրջանային լուսավորության աշխատող-

ների տան տնօրեն, հաջորդ տարին ձախողվեց Մեծ եղեռնին նվիրված իմ միջոցառումը: Շրջանի արվեստասեր ուսուցիչների ու մանկապարտեզների դաստիարակչուհիների միջոցով էր կազմակերպվում այն:

Այս անգամ վերնախավի մի իշխանավոր «հայ կոչված» կանչեց ինձ, ես «մեղադրյալի աթոռին» էի նստած, որ համարձակվել եմ այդ օրը հիշել: Ինձ հատ-հատ հարցնում էր, թե ովքեր պիտի մասնակցեն, ու ես թվարկում էի շրջանի դպրոցների ու մանկապարտեզների անունները…Ու նա զանգում էր, և նրա ամեն մի խոսքին՝ զսպված արցունքներս չէի կարողանում պահել…Եվ նրա բարձր ձայնը արձագանք էր տալիս իր աշխատասենյակում, որ հեռախոսի մյուս կողմին հասկացնում էր, թե արգելում է այդ միջոցառմանը մասնակցեն:

Այն ձախողվեց, պարտադրաբար մեզ սկսեցին բաժանել երկու ռուբլանոց տոմսեր…Այդ օրը՝ Ապրիլի 24-ին, մենք պետք է մասնակցեինք համերգի: Ես կրկնում եմ՝ տոմսի արժեքը երկու ռուբլի էր, իսկ մեկ հացը արժեր 30 կոպեկ:Այդ օրը ոմն լյութֆիար իմանով ազերի մի օպերետային երգիչ Մարտակերտի մշակույթի տան բեմ բարձրացավ…Ասում են՝ հատուկենտ մարդիկ կային այնտեղ, այն էլ՝ պարտադրանքով բերված, որ պիտի լսեին ադրբեջանական երգեր:

Սա՞ է եղել դարավոր բարեկամությունը, որ երբեմն լսում եմ քաղաքական որոշ գործիչների կողմից, այն ո՞վ է ուզում, որ արցախցին ապրի մեր արյան ծարավ թշնամիների հարևանությամբ, բայց ո՞վ չգիտի, որ այն ժամանակներում էլ պաշտոնի գերի հայ իշխանավորներ են եղել, որ իմ նմաններին հանցագործ են համարել:

http://www.usarmenianews.com/am-n-8455.html

2017-03-24

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ

Մի քանի խոսք, թե խորհրդային տարիներին Արցախում ինչպես էինք ապրում ազերիների «հովանու» ներքո: Մարտակերտում էլ հայ իշխանավորներ ունեինք, որ ստրկացած էին նրանց գաղափարախոսությանը, և մեր ընտանիքն էլ զոհ գնաց նրանց նկրտումներին: Այդ ազատ ու խաղաղ կոչվող երկրում պառակտվեց մի բազմանդամ ընտանիք, որտեղ Երևանի բարձրագույն բուհերից մեկում սովորող հայր կար, մանկապարտեզում նվազագույն աշխատավարձ ստացող մայր և չորս երեխա: Որբանոցային կյանքից հետո կրթություն չունեցող հայրս գիշերային հեռակա միջնակարգ դպրոցն ավարտեց և շարունակեց այն բարձրագույնում, երբ արդեն անչափահաս երկու տղա և երկու աղջիկ ուներ: Մորս ուղղված երեխաներիս դժգոհությունները՝ մեր աղքատ ապրելակերպի շուրջը, սահմանափակվում էին նրանով, որ պետք է հարմարվենք, որովհետև մեր հայրը ուսանող է, կավարտի, աշխատանք կստանա, ու մենք կկարողանանք շատերի նման բարվոք կյանքով ապրել:

Մենք չգիտեինք, որ հայրս տարիներ շարունակ անգործության կմատնվեր: Լավ կյանքի մասին մեր երազանքները փլուզվեցին, ազերիներին հլու-հնազանդ ծառայող մեր տեղի հայ իշխանավորներից ոմանք վախեցան. նրանք «գորդյան հանգույցի» առջև էին…

Տարիների անգործությունը մեզ բաժանեց իրարից…Հայրս ստիպված էր ընտանիքը թողնել ու մեկնել արտագնա աշխատանքի հեռավոր ափերում: Երկու եղբայրներս դպրոցի աչքն էին՝մաթեմատիկական գիտելիքների իրենց իմացությամբ, բայց մորս աչքից ընկած էր այն բարձրագույնի դիպլոմը, որ մեր բազմանդամ ընտանիքի համար չարիք դարձավ:

Խորհրդային բանակում ծառայելուց հետո եղբայրներս էլ մեկնեցին արտագնա աշխատանքի: Պառակտվեց մի գեղեցիկ ընտանիք՝ օտարության մեջ գտնվող հայրս՝ երկու որդիների հետ, այստեղ՝ Մարտակերտում մայրս էր՝ երկու դուստերով, իսկ մեզ միացնողը հեռախոսային զրույցն էր, այն էլ՝ հարևանի տնից, քանի որ մենք զրկված էինք նույնիսկ բնակարանում հեռախոս ունենալուց.երևի վերևների թույլտվությունը պիտի լիներ:

Միջնակարգն ավարտեցի՝ արցունքն աչքերիս…Մորս խոսքերի արձագանքն առայսօր լսելի են ինձ «Մեր տանը դիպլոմը գին չունի, պետք չէ դու էլ բարձրագույնի դռները ծեծես»:

Բայց հանդգնեցի ծեծել այդ դռները, այն էլ՝ երեք տարի, մինչև մեծ դժվարությամբ ընդունվեցի, երբ կողքիս կաշառակերությունն ու հովանավորությունն էր թևածում: Տարիներ անց բարձրագույն կրթություն ստացավ նաև ինձանից փոքր քույրս:

Խորհրդային տարիները, ազերիների հետ մեր «բարեկամությունը» և տեղի իշխանավորների ստոր կեցվածքը մեզ մի պառակտված ընտանիք պարգևեցին, ու տարիներ շարունակ մենք կամրջված տեսանք մեզ այն հեռու-հեռուներին, և կարոտը հավիտենական դարձավ ու իր հետքերը դրոշմեց մեր ընտանիքի մասնատված թևերին:

88-ի Արցախյան շարժումը մի նոր ավետիս էր մեզ համար, որ հայրս վերջապես աշխատանք ստացավ հայրենիքում…Եվ այնքա՜ն կարճ էր դա՝ արդեն թոշակառուի տարիքի հասած մարդու համար, իսկ եղբայրներս այդպես էլ մնացին օտարության մեջ: Վերջապես մեզ նաև հեռախոսի «համար» տրամադրեցին: Աչքիս առջև դեռ իր ուսանողության տարիներից՝ 60-ականներին գրած հորս դիմում-խնդրանք էր, որ բնակարանում հեռախոս միացնեն: Կարծես արդարության համար մաքառող Պեպոյի «բարաթն» էր ձեռքիս, ես այդ դեղնած թուղթը, որ սուրբ մասունք էր դարձել, դժգոհությամբ մի պետական պաշտոնյայի աչքն էի խոթում 80-ականներին, որ 20 տարի է անցել, բայց իրար հաջորդող այդ ստոր պաշտոնամոլները դիտավորյալ անուշադրության էին մատնել այդ խնդրանքը, և մենք զրկված էինք հեռախոս ունենալու իրավունքից:

92-ի բռնագաղթը բոլորիս տարավ օտար ափեր, ծնողներս, նաև տատս հանգան օտար հողում, քույրս ետ չվերադարձավ, իսկ ես եկա դստերս հետ, եկա՝ ազդարարելու, որ մեր պառակտված ընտանիքի մի շյուղն եմ ես, որ ցանկանում է ապրել իր հայրենիքում:

Արցախյան վերածնունդն ինձ համար էլ մի նոր զարթոնք էր, վերջապես 96-ին հնարավորություն ստացա մտնելու դպրոց՝ ազատ ու խաղաղ իմ իրավունքներով, որ խաթարված էին անգամ իմ ուսանողության և հետագա մի քանի տարիներին, չէ՞ որ այն ժամանակներում ես Երևանում ուսում ստացած և արտագնա աշխատանքում գտնվող մարդու աղջիկ էի, այն էլ՝ ազերիներին հլու-հնազանդ ծառայող մի քանի հայ իշխանավորների կամայականություններին զոհ դարձած «սեզոնչիկի»:

http://www.usarmenianews.com/am-n-8463.html

2017-03-26

ՄԻ ՔԱՆԻ ՀՈՒՇ «ԵՂԲԱՅՐԱԿԱՆ» ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՑ

Ես «բարեկամություն» բառը դնում եմ չակերտների մեջ, չնայած այն ժամանակներում Մարտակերտի շրջանի պաշտոնաթերթն էլ «Բարեկամություն» էր կոչվում: Ինձ հավատացրե՛ք, որ Արցախում խորհրդային տարիներին եղել է «դարավոր բարեկամություն» ազերիների հետ, մի բան, որ այստեղ ապրելով՝ իմ գիտակցական կյանքում երբևէ չեմ տեսել:

Շատ-շատերի նման բամբակի բերքահավաքի եմ մասնակցել թե՛ դպրոցական և թե՛ ուսանողությանս տարիներին: Մենք չարչարվում էինք, նրանց շտեմարանները լցնում, բայց դրանց լակոտները, ծաղրելով մեզ, մեր հետևից «գյավուր» էին կանչում: Սկզբում չէի հասկանում այդ բառի իմաստը, հետագայում, երբ բուհում սկսեցինք անցնել «Աթեիզմ», գիտակցեցի, որ այդ առարկան ուսումնասիրելով՝ արհեստականորեն մոռացնել են տալիս մեր հավատը, մի բան, որ դարերի խորքից է եկել, և հասկացա, որ թուրքի լակոտը դրա համար է մեր հետևից «անհավատ» կանչում:

Եվ զարմանալի չէր, որ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի գերազանցիկ ուսանողուհի էի, բայց «Ադրբեջանի պատմություն» դասավանդող ոմն Ասրյանի կողմից միակ «չորս» գնահատականն ստացա ուսանողական չորս տարվա ընթացքում, թե ինչ է, հակաճառել էի, որ Ազոխի քարանձավը Ղարաբաղի Հադրութի շրջանում է գտնվում և ոչ թե Ադրբեջանում:

Հիշեցնեմ մեկ այլ «երանություն» մասին, երբ շաբաթվա մեջ հեռուստատեսությամբ ադրբեջաներեն տարվող հաղորդաշարերի կողքին միայն ուրբաթ օրերին՝ երեկոյան, կես ժամով հայերեն հաղորդում էր լինում: Ցավոք, մեր սպասածին հակառակ, երբեմն կիսահայերենով տարվող որևէ անիմաստ հաղորդում էր կամ իրենց երգի թագուհի կոչվող զեյնաբի «Նունեն» էր, որ կցկտուր հնչեցնում էր հայերենով, մեկը, ով այս օրերին էլ մեր դեմ պատերազմի կոչեր է անում՝ հողեր զավթելու համար:

Տեսած կա՞ք մեր երեխաների շուրթերին սառած երգ, որ պարտադրաբար պետք է երգեին ադրբեջաներեն: Վերևից եկած «հրաման» էր, դպրոցի 150 աշակերտ պետք է սովորեին ադրբեջանական ինչ-որ

երգ, որտեղ հայ երեխաների շուրթերով պիտի հնչեին իրենց «վաթան»-ի՝ հայրենիքի մասին խոսքեր:

Երգչախումբը ձևավորելու համար մեր աշակերտներին հավաքեցին մարզադաշտում: Տարածքն ազատ էր, կանգնելու տեղն էլ՝ հարմար: Ես էլ այդ խեղկատակության ականատեսն էի, բայց ամենացավալին մեր երեխաների վիճակն էր, որ օրեր շարունակ մի կերպ սերտել էին երգի տողերը՝ առանց գիտակցելու այդ «վաթան»-ի իմաստը, որտեղ բազմիցս երգի կրկնատողերում բարձրաձայնվում էր Ադրբեջանը՝ որպես մեր սրբասուրբ հայրենիքը: Բայց ո՞վ կհամարձակվեր հրաժարվել, մարդիկ կային, քիչ էր մնում նրանք էլ երգեին, միայն թե իրենց աթոռներից չզրկվեին:

Մեկ ուրիշ խեղկատակություն: Ընդհատել էին մեր հայոց լեզվի քննությունը և ձմռան փոթորկոտ, ձյունախառն եղանակին պարտադրաբար կանգնեցրել Ստեփանակերտի կենտրոնական փողոցի մայթին, թե ինչ է՝ ուսանողներս պետք է ողջունեինք մեզ «հյուրընկալվող տիրակալին»՝ այն «խաղաղասեր» Ալիև ավագին: Մենք նրան տեսանք մոտիկից, նա մեքենայից ժպտում էր մեզ, ձեռքերը՝ օդում թափահարում: Հետո հիշեցինք, որ մենք այդտեղ էինք՝ միայն կեղծ ժպտալու և ձեռքեր թափահարելու համար, բայց այնքան ցուրտ էր, որ մեզանից ոմանք այդ մասին մոռացել էին:

Այսպես էր մեր «բարեկամությունը» նրանց հետ, հիմա ինձ հավատացրե՛ք Արցախում ազերիների հետ մեկ ուրիշ «բարեկամության» մասին, որտեղ չակերտներ չլինեն:

http://www.usarmenianews.com/am-n-8469.html

2017-03-28

ԳԻՏԵՄ ԱՊՐԵԼՈՒ ԳԻՆԸ...

Որպես մտավորական՝ այս օրերին մեկընդմեջ հետևում եմ հայաստանյան նախընտրական իրադարձություններին: Տարբեր կուսակցությունների պատկանող պետական այրեր, որ կանգնած են բեմահարթակում, բայց կախված են այդ բեմին չարժանացած ժողովրդական զանգվածներից, որ ապրելու վառ հույսեր են կապում նոր օրերի հետ, և նրանցից ամեն մեկի ձայնը հազար արժե ապրիլի 2-ի ընտրության օրը:

Այս կյանքում երբևէ նպատակ չեմ ունեցել վեր բարձրանալու, երբ միշտ էլ զգացել եմ ինձ ամենավերևում: Իմ հոգու այն մեծ բարձունքից ես տեսնում եմ մի ուրիշ աշխարհ, որտեղ աթոռակռիվ է, վեր բարձրանալու անհագ ծարավ, երբ անգամ բարձրանալու տեղ չունի մարդը: Երբեմն ինձ ծիծաղելի են թվում այս օրերին քաղաքական դաշտում տեղի ունեցող իրադարձությունները, երբ հոգուս մեջ արթնանում է մի նոր ահասարսուռ ապրիլի 2, որտեղ պատերազմական օրերի հիշողություն կա քարացած: Բայց ինչու՞ քառօրյա, ապրիլի 2-3-4-5, մինչ հրադադարի պայմանագիր…Այն նորից շարունակվեց մեկընդմեջ մի ամբողջ ապրիլ… Այնտեղ սարսափելի ապրումներ կան, դպրոցի լռված զանգ, հատուկենտ երևացող աշակերտների վախվորած դեմքեր, վշտամորմոք կսկիծ, նկուղային կյանք, Մարտակերտի ամենասարսափելի արկակոծման օրեր…

Եվ մենք փրկվեցինք, բայց նորից զգացինք ապրելու գինը, որ գումարով չես առնի և ոչ էլ՝ խոստումներով: Դա մի ուրիշ արժեք է, մի ուրիշ զգացողություն, երբ մարդը դեմառդեմ բախվում է մահվանը, ինքն իրեն հանդարտեցնում, որ մահկանացու է, և լիառատ ու անհագուրդ շնչում է օդը մի վերջին անգամվա ակնթարթներով ու հանկարծ զգում, որ դեռ շարունակում է շնչել…Ուրեմն ապրում է, ու այդ ապրելու գիտակցությամբ մի նոր մարդ է ծնվում նրա մեջ, վերածնված այն նորը, որ արդեն գիտի իր ապրելու արժեքը:

92-ին էլ զգացի ապրելու գինը, երբ գրադի հարվածից բարձրացած հողե մշուշի մեջ ձեռքերս օդն էին շոշափում, դեպ երկինք հառած աղաղակիս մեջ փոքրիկ դստերս էի փնտրում…Աղիողորմ ձայների մեջ իմ ձայնը կորցրել էի…Տեսադաշտս կամաց-կամաց բացվում էր, հարազատներիս մշուշված դեմքերը տեսա… Ու հանկարծ վիրավորների հոգեվարք ապրող հառաչանքներ…

Ես նորից իրականություն եմ վերադառնում, և իրոք, որքան ծիծաղելի են թվում ինձ ամենօրյա հոգսերը, որոնց մասին այլևս չեմ մտածում, երբ հասկացել եմ ապրելու գինը: Իմ համեստ ապրելակերպը ինձ գոհացնում է, ես երբևէ չեմ երազում բարվոք ապրելու մասին: Իմ յուրաքանչյուր օրը գեղեցիկ է դառնում, երբ խաղաղ լուսաբաց եմ դիմավորում, նույնիսկ երբեմն անհոգ եմ դառնում ու շատ երջանիկ, որ այս կյանքում իմ գոյությամբ կամ:

Նորից Արցախի ապրիլյան պատերազմական օրերի հետ եմ, մի նոր սարսուռ եմ զգում ու մի նոր կսկիծ, բայց հայացքս այս օրերի հետ է, որտեղ հայաստանյան ընտրություններ են, մի անհանգիստ ժողովուրդ:

http://www.usarmenianews.com/am-n-8491.html

2017-03-29

ՄԱՆԿԱՎԱՐԺԸ ՆԱԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ԿՐՈՂ Է

Վերջերս ուշադիր հետևում էի տարբեր հրապարակումների՝ հայաստանյան ընտրություններին՝ մի շարք դպրոցների և մանկապարտեզների տնօրենների ներքաշվածության մասին: Չեմ փորձում իրավական գնահատական տալ, որի իրավունքը չունեմ, բայց որպես դպրոցի ուսուցչուհի՝ հայտնում եմ իմ կարծիքը՝ նշելով այն տարբերությունները, որ գոյություն ունեն նախընտրական շրջանում Արցախի և Հայաստանի՝ կրթական ոլորտի որոշ մանկավարժների գործունեության միջև՝ օրինակ բերելով մեր իսկ դպրոցը:

Հաշվի եմ առնում նաև այն հանգամանքը, որ որոշ առումով գաղափար ունեմ ընտրությունների սահմանված կարգից, քանի որ տարիներ առաջ Մարտակերտի շրջանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ էի, նաև մի որոշ ժամանակահատված մեր քաղաքացիների կողմից ընտրված էի քաղաքային համայնքի ավագանու անդամ, իսկ վերջին ընտրությունների նախօրեին ինքնակամ հրաժարվեցի՝ ավագանու անդամությանն իմ թեկնածությունը ներկայացնելու առաջարկից:

Հետպատերազմյան տարիներից հետո արդեն 20 տարի է՝ աշխատում եմ դպրոցում, երբևէ չի եղել նման դեպք, որ դպրոցի տնօրենը, լինելով մեզ հետ աշխատանքային նորմալ հարաբերություններում, իրեն իրավունք վերապահեր՝ ուղղորդելու որևէ ուսուցչի, թե որ կուսակցությանը կամ թեկնածուին նախապատվություն տալ ընտրությունների ժամանակ: Այս երևույթը բացառվում է մեզ մոտ, քանի որ մանկավարժ լինել, նշանակում է ուսում տալ սերնդին և ապագա քաղաքացի դաստիարակել բարոյական բարձր որակներով, որտեղ առանցքում անհատն է՝ իր ձայնի ազատ իրավունքով:

Կարող է գտնվի արդարացում իմ խոսքերին, որ այս կամ այն տնօրենը հնարավոր է՝ ընդգրկված լինի որևէ հասարակական կազմակերպության մեջ, որն էլ իրավունք կտա նրան հավաքագրելու ուսուցիչների կամ ծնողների: Ի լրացում՝ կարող եմ ավելացնել, որ տարիներ շարունակ մեր տնօրենն ընդգրկված է եղել տարբեր հասարակական կազմակերպություններում, բայց դա հնարավորություն չի տվել նրան՝ որևէ ուսուցչի և ծնողի ուղղորդելու ընտրությունների նախօրեին:

Մեկ այլ հանգամանք: Մեր դպրոցը միշտ էլ համարվել է ընտրատեղամաս, որտեղ բնակչության մի մասը մասնակցել է ընտրություններին: Տարբեր ժամանակներում մեր ուսուցիչներից ոմանք եղել են այդ տեղամասի ընտրական հանձնաժողովի անդամներ, առայսօր էլ կան, տնօրենը համարվել է այդ տեղամասի նախագահը, բայց ոչ մեկի կողմից չի կատարվել որևէ խախտում՝ ընտրողների ձայներ հավաքելու համար:

Որպես ուսուցչուհի՝ ես չեմ պատկերացնում, որ իմ ազատ ընտրելու իրավունքը որևէ մեկի, թեկուզ դպրոցի տնօրենի կողմից, կարող է խախտվել, մի բան, որ երբևէ թույլ չեմ տա: Որպես դասղեկ՝ երբևէ չեմ նվաստանա որևէ ծնողի մոտ՝ նրան ուղղորդելով, թե ում ընտրի: Որպես քաղաքացի՝ իմ ազատ իրավունքների տերն եմ, և իմ շրջապատում ոչ ոք իրավունք չունի իմանալու, թե որ կուսակցությանը կամ թեկնածուին եմ ձայն տալու:

Այս վերջերս, տեսնելով այդ տնօրենների մասին արտահայտած տարբեր տեսակետներ, ինձ իրավունք վերապահեցի արտահայտելու իմ կարծիքը՝ նաև ցավ ապրելով, որ տարիների վաստակ ունեցող մանկավարժները հայտնվել են հանրության տարբեր խավերի քննադատության թիրախում: Այդ տնօրենների շարքում համոզված եմ, որ կան լավագույնները՝ իրենց մանկավարժական փորձով, մասնագիտական ունակությամբ, ովքեր, զուգահեռ իրենց աշխատանքային գործունեությանը, իրավունք ունեն քաղաքական դաշտում ընտրություններին ակտիվ մասնակցություն ունենալ՝ միտված հայրենիքի բարգավաճմանը, ուղղակի յուրաքանչյուր անհատ ինքն է նախագծում իր անցնելիք ճանապարհը՝ ձայնի ազատ իրավունքով՝ առանց խախտելու ուրիշների ազատ ընտրելու իրավունքը:

http://www.usarmenianews.com/am-n-8509.html

2017-03-30

ՊԱՏԵՐԱԶՄ ՏԵՍԱԾ ՍԵՐՈՒՆԴԸ ՉԻ ՀԱՎԱՏՈՒՄ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ

Երբեմն ինձ թվում է՝ արցախցիներիս չեն հետաքրքրում դրսի աշխարհի իրադարձությունները, երբ մենք ինքներս թաղված ենք խնդիրների մեջ: Տարբեր դասարաններում փորձեցի տեղեկանալ, թե դպրոցականներին որքանով են հետաքրքրում հայաստանյան ընտրությունները, բայց նրանց լռությունն անտեղյակ լինելու արտահայտություն էր, նույնիսկ ոմանց չէր մտահոգում այդ անհանգիստ վիճակը:

Գուցե մեղադրեի այդ անտարբերության համար, բայց լուռ եմ, որովհետև նրանց մտահոգվելու շատ թեմաներ ունեն: Ու դրա փոխարեն լսում եմ մեկի արձագանքը. «Ընտրությունները մեզ չեն հետաքրքրում, ապրիլ է գալիս…»:

Մի վա՜յ ապրիլ, որ տեղահան արեց մեզ, ու նորից անցանք հիշողությունների…Նորից մեկի հարցը. «Բայց ինչու՞ ստվերի տակ թողեցին ապրիլի 2-ի քառօրյան և այդ օրը նշանակեցին ընտրությունների օր»:

Հարց, որին ես էլ չեմ կարողանում պատասխանել, իմ լռությունն էլ անտեղյակության արտահայտություն էր, և ինձ չեմ էլ մեղադրում, թե ինչու, չգիտեմ: Բայց ահա 11-րդ դասարանում իմ դասն ընդհատվում է…Հայաստանից լրագրող է եկել, պետք է պատասխանել նրա հարցերին: Եվ նրա «այստեղ՝ սահմանից այդքան մոտիկ Մարտակերտում, ինչպես եք ապրում»-ը տանում է ինձ դեպի ապրիլյան օրեր, ու մոռանում եմ հայաստանյան ընտրական իրադարձությունները, որոնք այս օրերին բոլորիս մտահոգությունն են:

Հաջորդ դասաժամին 12-րդ դասարանում եմ: Ինձ հանձնված թղթի կտորի վրա սևացրած տողերն իմ աշակերտուհիներից ոմանց թերահավատության մասին է խոսում, որ լուռ ընթերցում եմ. «Շուտով Հայաստանում ընտրություններ են, բոլոր կուսակցություններն ու դաշինքներն ուզում են հաղթել, այնտեղ խառնաշփոթություն է, ամեն մեկն իր ծրագիրն է ներկայացնում, բայց անկեղծ ասած, ես դրանց չեմ հավատում: Բոլորը սուտ խոստումներ են տալիս, ով էլ ընտրվի, կամ որ կուսակցություն ու դաշինք էլ հաղթի, ոչ մի փոփոխություն չի լինի, դրա համար էլ ինձ չեն հետաքրքրում այդ ընտրությունները» /Բաղրյան Իննա/:

«Ես գիտեմ, որ բոլոր խոստումները մնալու են օդում, դրա համար էլ չեմ հետևում այդ իրադարձություններին: Էլ ինչու՞ ենք նեղանում հակառակորդից, եթե մեր պետության ներսում հայերը միմյանց դեմ պատերազմ են սկսել: Դա խոսքի պատերազմ է, թե ով կկարողանա ավելի համոզիչ ու ավելի շքեղ խոստումներ տալ, մի բան, որին ես ինքս էլ չեմ հավատում» /Կարապետյան Արմինե/:

Որտեղի՞ց է գալիս այս թերահավատությունը, որ այսօրվա սերունդը չի հավատում թիկնապահներով շրջապատված այդ կուսակցությունների և դաշինքների ղեկավարներին ու նրանց թիմակիցներին, որ իրենց շուրջն են համախմբել ժողովրդի հարյուրավոր զանգվածների, և ամպագոռգոռ խոստումներով, մի նոր երազանքներով լի կյանք են խոստանում: Այս պատերազմ տեսած սերունդը չի հավատում խոստումներին, ու ես էլ չեմ ուզում նրանց հակադրվել: Նրանց մի ուրիշ կյանք է հետաքրքրում՝ առանց ընտրապայքարի, որտեղ գզվռտոցներ չկան, կեղծ խոստումներ, խաղաղ ու անհոգ մի կյանք են ուզում, որ երազանք է դարձել:

http://www.usarmenianews.com/am-n-8525.html

2017-04-01

ԱՇԽԱՐՀԻՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ՝ ՄԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՆՀՈԳ ԾԻԾԱՂՈՎ



Ապրիլի 1-ը Ծիծաղի միջազգային օրն է…Այդ օրն ուզում եմ մոռացության տալ կյանքի դառնությունները, բայց դառնում եմ մեկը, ով երջանիկ կյանք է ցանկանում, բայց ծիծաղում է դրան հասնելու անհնարինության համար: Զազրելի է դառնում կյանքը՝ խաբեությամբ ու մարդկային աղտեղությամբ լեցուն, բայց ծիծաղում եմ, ու ծիծաղս դառնակսկիծ արցունքներ է բերում: Լսում եմ անիմաստ ու ճապաղ զրույցներ, ծիծաղս խեղդում է ինձ՝ցավախառն ու հիասթափությամբ լի, և այդ ծիծաղը դառնում է թունոտ, երբ ընտրակաշառքը նվիրատվություն է համարվում:

Ծիծաղկոտ ու անհոգ օրերի երազանք կա հոգումս, բայց ապրիլյան օրերին ծիծաղս ցավոտ է հնչում:

Մաքրության, ազնիվ ու անբասիր կյանքի կարոտով մանկան ծիծաղի շիթեր եմ հավաքում, որ նվիրեմ մեր այն նահատակներին, ովքեր կարոտ մնացին մանկան օրոցքի: Այս օրն այդ ծիծաղի մանրիկ կտորները դարձնում եմ ծիծաղներ, որ քարացան շատերի դեմքերին՝ իրենց հետ տանելով իրենցից ծնված բալիկների անհատնում ժպիտներ: Այդ օրը ուզում եմ մոռացության տալ անցած ապրիլի դառնակսկիծ օրերը, բայց ծիծաղս կիսատ է մնում…

Ոչ շատ հեռուներից եկած կրակոցների արձագանքն է մեզ հասնում, բայց ծիծաղում եմ, երբ ցավն է խեղդում: Անցած օրերին եմ դառնում, ապրիլին դատարկված բնակավայրս եմ հիշում, դատարկ նստարաններ, մարդկային զոհեր, առ Աստված ուղղված աղոթքներ, սահմանից եկած սարսռազդու պատմություններ, և ապրիլյան ծիծաղը դառ-

նում է աշխարհին ուղղված մի ցասկոտ բողոք, որ որդեկուրույս մայրերի արցունքներով է սրբվում:

Ըմբոստանում է հոգիս, որ առանց մեր կամքը հարցնելու՝ շահարկում են հարցն արցախյան և ծիծաղելով մեզ համար խաղաղություն են մուրում: Ծիծաղում եմ, որ տեսնում եմ դիվանագետների կեղծ խաղը, երբ մեզ ազերիների հետ են հավասարեցնում՝ պաճուճված մարդասիրական խոստումներով, որ սև ոսկու պաշտամունքից է կախված: Ծիծաղս ողբերգական է հնչում և ընդհանրական, երբ մարդկության մեջ մարդը չի հասկացվում և ինքնաբերաբար հայտնվում է մարդու ծուղակում:

Ցասումս երկինք է հասնում, բայց ծիծաղում եմ անզորության համար և երազում այն օրվան, երբ մարդկություն կոչված համաշխարհային կրկեսում գլխավոր դերակատարները դառնան անհոգ ծիծաղն ու բարոյականը, և բոլորին հասանելի դառնա մեծ երգիծաբանի խոսքը. «Բարիին վարժեցուցե՛ք ձեր լեզուն, ձեր աչերը, ձեր սիրտը, ձեր ոտները և ձեռները և մի՛ վախենաք, վասնզի ՊԻՏԻ ԳԱ ՕՐ ՄԸ, ՈՐ ԲԱՐԻ ՄԱՐԴԸ ՊԻՏԻ ՀԱՐԳՎԻ» /Հ. Պարոնյան/:

Աշխարհին մաքրություն է պետք՝ մեր մանուկների անհոգ ծիծաղով…Այս անգամ ծիծաղս գալիք օրերի նոր հույսերով է լցվում…

/Նկարը՝ թոռնիկիս մանկական օրերից/:

http://www.usarmenianews.com/am-n-8535.html

2017-04-01

ԱՊՐԻԼԻ 2-Ը ՄԵՐ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ՍԿԻԶԲՆ ԷՐ

2016-ի ապրիլի 1-ին կարծես տխուր մի կանխազգացում ասում էր, որ մի բան այն չէ…Այդ օրը սահմանամերձ դպրոցի մանկավարժիս անհանգիստ խոհերը տեղ գտան ամերիկյան հայկական լրատվական կայքում /http://www.usarmenianews.com/am-n-2449.html/:

Կարծես մոտալուտ վտանգն էի զգում: Սահմանից եկող արկակոծության խուլ արձագանքները մեզ էին հասնում: Դպրոցում էլ լուռ էի... Չլսելու տալով շրջապատի անհանգիստ տվայտանքները՝ ձգտում էի արտաքուստ հանգիստ երևալ:

Այդ օրը՝ կեսօրից հետո, հանկարծակիի եկանք շատ մոտիկ հնչող կրակահերթերից: Դուրս եկանք բակ, մեծահասակներս տագնապալի վիճակում էինք, բայց բակում անհոգ խաղում էին երեխաները: Այն սովորական դարձած «պատերազմ» խաղը մի այլ հայացքով ընկալեցի, կողքիս երեխաների խաղալիք զենքերի ճարճատյունն այլ հնչողություն ունեցավ: Մեկընդմեջ լսվող կրակահերթերի ուղղությամբ հայացքս հառեցի դեպ երկինք, որ շատ պարզ էր ու լազուր: Հանկարծ կանգնածներից մեկը հորդորում է մեզ, որ թշնամու անօդաչու սարքեր են երևացել, մերոնք են կրակում…Մի քիչ հանդարտվեց իրավիճակը, ու նորից կողքիս երեխաների ուրախ ճռվողյունն եմ լսում, որ «պատերազմ» են խաղում:

Մտովի նորից 91-ի դեկտեմբերի 22-ի հետ էի, այն պատերազմական առաջին օրվան, երբ թշնամու հանկարծակի արձակած ալազանի հարվածից կեսգիշերին Մարտակերտում հրդեհվեց մի տուն: Այն ժամանակ առաջին զոհն ունեցանք. իր օջախում հանգիստ քնած մարդը չհասցրեց արթնանալ…

Ապրիլի 2-ը թշնամու սովորական ձեռագիրն էր…Կեսգիշերին, այն էլ՝ հանկարծակի… Մեր լուսաբացը կասկածի տակ դրվեց, խաթարվեց մեր կյանքը, բնականոն հունից ընկավ այն, տիեզերական ահռելի մի ցավ մեր գլխավերևում իր թևերը փռեց: Մարդուն հաղթելու ճանապա՞րհն էր դա, թե՞ մեր ինքնաճանաչման սահմանը, որ իրար հակադրվեցին ապրելու տենչն ու կործանարար մահը: Կարծես մարդու հոգու զորությունն էր ստուգվում, մարդկային այն մեծ կամքը, որին հակադրվում էր մահվան անխուսափելիությունը:

Սարսափազդու գիշերվա հիշողությունների հետ եմ…Արկակոծվում էր Մարտակերտը… Մի ահռելի աղետ եկել էր ոչնչացնելու, ավերելու ամեն ինչ: Կարծես տիեզերքի կենտրոնում կանգնած՝ սպասում էի…Սպասում էի վախճանի՝ քարացած համաձուլվածք դարձած: Մաքառումներով մեր կամքի կարողության սահմա՞նն էր չափվում, որ այդ վիճակն էր պարտադրվել մեզ…Բայց ուշքի եկա ապրիլի 2-ի լուսաբացին, երբ հանգած էլեկտրական լույսերը եկան...

Անմիջապես միացրի համակարգիչը, իմ ֆեյսբուքյան էջում կատարեցի կարճ գրառում….Ակնթարթ չտևեց, հայկական լրատվական կայքը Լոս Անջելեսում արձագանքեց իմ ապրումներին…Ժամանակային տարբերությամբ այնտեղ ապրիլի 1-ն էր: Այն տեղադրվեց կայքում՝ ի լուր բոլորի, որ Մարտակերտում «**ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԱՐՎԱԾ Է... ՍԱՀՄԱՆԱՄԵՐՋ ԲՆԱԿԱՎԱՅՐՍ ԹԻՐԱԽ Է ԴԱՐՁԵԼ, ՀՐԵՏԱԿՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԴԱԴԱՐՈՒՄ...**

ԲԱՑԱՀԱՅՏ ԳՆԴԱԿՈՇՈՒՄ ԵՆ...ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՑ ԱՌԱՅՍՕՐ ՆՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՉԵԻՆՔ ՀԱՅՏՆՎԵԼ: ՀՈՒՍԱՆՔ՝ ԱՄԵՆ ԻՆՉ ԿԽԱՂԱՂՎԻ՝ ՉՆԱՅԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԻՉ Է...» /http://www.usarmenianews.com/am-n-2465.html/:

Կատարվեց այն, ինչ որ սպասվում էր մեր արնախում թշնամուց, բայց կատարվեց նաև մի անսովոր ու գիտակցված բեկում, երբ մարդն իր հայրենի հողի վրա դարձավ ամենակարող, զգաց իր հաստատակամությունը և այդ իսկ գիտակցությամբ գնաց անմահության:

http://www.usarmenianews.com/am-n-8545.html

2017-04-03

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍ ՆԱԵՎ ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՎ

Այսօր հյուրընկալվել էի Արցախի հանրային հեռուստատեսության տաղավարում՝ մասնակցելու հարցազրույցի՝ «Ողջու՛յն Արցախ» հաղորդաշարում: Մթնոլորտը հրաշալի էր, լավագույն մարդկանցով շրջապատված: Հաղորդումը վարում էին Անի Մանգասարյանն ու Հունան Թադևոսյանը՝ իրենց գեղեցիկ տեսքով, հմայիչ խոսքով:

Օրեր առաջ Անի Մանգասարյանի հեռախոսազանգն ինձ մի փոքր անակնկալի բերեց: Հրավերը՝մասնակցելու հարցազրույցի, սկզբում կասկածի տակ դրվեց՝ կապված անձնական խնդիրների հետ: Շուտով ընդունեցի առաջարկը, առավելապես, երբ խոսքը վերաբերում էր ապրիլյան պատերազմին ու նոր սերնդի հայրենասիրական դաստիարակությանը:

Ապրիլը դառնակսկիծ է, բայց նաև հարազատացած, այդտեղ ապրումներ կային, հերոսացած նահատակներ, և ինձ թվում էր՝ պարտք ունեմ նրանց հանդեպ, որ պիտի կարողանամ ի կատար ածել հանրային հեռուստատեսությամբ՝ ի տես հեռուստադիտողի: Մտավախություն, որ շատ սուղ ժամանակահատվածում երևի չկարողանամ ամբողջ ասելիքս արտահայտել, կասկածի ենթակա չէր, բայց այն մի քանի րոպեներին իմ առջև նստած դպրոցականների հայրենասիրական ոգին էր թևածում ուղիղ եթերով:

Մինչ հաղորդմանը մասնակցելը՝ տարբեր դասարաններում հարցեր ունեի պարզելու: Ես համոզված էի, նաև երբևէ չէի կասկածել նոր սերնդի վարակիչ հայրենասիրությանը, բայց իմ հարցումը 11-րդ դասարանում, որքան զարմանալի, նույնքան հուզող էր: Իմ հարցը, թե Աստված չանի, հանկարծ մի նոր ապրիլ լինի, արդյո՞ք նրանք նորից կվերադառնային Մարտակերտ: Միանշանակ «այո՛» հնչեց, մի բան, որ հիացմունքի էր արժանի: Իմ հաջորդ հարցը, թե արդյո՞ք տղաները ցանկանում են գնալ զինվորական պարտադիր ծառայության, նույնքան լեցուն էր հպարտության զգացումով, երբ տեղերից լսում եմ ձայներ, որ եթե հնարավոր լիներ, այժմ էլ կգնային հայրենիքին ծառայելու:

12-րդ հումանիտար դասարանում միակ տղան բացակայում էր, միայն աղջիկներն էին: Նրանց հետաքրքրում էր մեկ այլ թեմա: Հարկ եղած դեպքում իրենց ուսուցչուհին պետք է արտահայտեր նրանց միահամուռ կարծիքը, որ դեմ են անգամ մի թիզ հող հանձնելուն, երբ այդ հողը նրանց հարազատների արյունով է սրբագործված:

Նույն պատկերն էր նաև մյուս դասարաններում, զարմանալին այն էր, որ 7-րդ ա դասարանի ամենաթույլ կարողությունների տեր աշակերտներն անգամ զարմանք հայտնեցին, թե արդյո՞ք իրենք ուրիշ տեղ ունեն գնալու, որտեղ էլ լինեն, ամենաքաղցրը իրենց հողն է, իրենց տունը, այն միջավայրը, որտեղ ապրում են: Եվ նրանց արտահայտած բազմաթիվ կարծիքների մեջ կերպավորվեց մի սուրբ հայրենիք:

Ես համոզված էի, որ հայրենասիրությունն այս սերնդի արյան և հոգու մեջ է, նա ականատես է պատերազմի, գրքերից ու ֆիլմերից չի տեղեկանում դրա մասին: Այս սերունդը գիտի, որ հայրենիքը չպետք է դատարկ մնա, այն իջևանատուն չէ, որ մարդիկ գան, մի քանի օր մնան ու հեռանան, հայրենիքը ծիծեռնակի բույն չէ, որ գարնանը շինվի, իսկ աշնանը քամին քշի, տանի: Իմ առջև նստած աշակերտուհին է այդ սերունդը, նա ակամայից գալիս է այն մտքին, որ Արցախն իր հոգին է, և այդ մտածումներով. «Զոհվի՛ր, միայն փրկի՛ր հայրենիքդ» կարգախոսն է նրա սրտում: Հայրենասիրությունն այս սերնդի համար սեր է մի ամբողջ հողի, մայր հայրենիքի, պետականության ու եռագույնի նկատմամբ: Նաև ապրիլը մի նոր փորձարան էր, հայրենյաց սերը հասարակ զինվորին տարավ հաղթանակի, նա ամուր կառչեց հողին, մեր կողքին քայլող մարդը դարձավ լեգենդ ու անմահացավ՝ այդ սերը փոխանցելով նոր սերնդին:

Թեման չնայած տարողունակ էր, ժամանակը՝ սուղ, բայց հաղորդումն այս օրերին շատ նպատակային էր, ես էլ՝ շնորհակալական զգացողությամբ, ուղղակի մի մեծ ափսոսանք մնաց տաղավարում…Ինչքա՜ն շատ ասելու բան կար, որ չասվեց…

http://www.usarmenianews.com/am-n-8554.html

2017-04-04

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

Բարեկամնե՛ր, դուք դիտում եք «Ողջույն Արցախ» նախագիծը, մեր հյուրն արդեն տաղավարում է, և ինչպես խոստացել էինք, մեր զրույցի թեման ապրիլյան պատերազմն ու սերունդների հայրենասիրական դաստիարակությունը կլինի:

Զրուցենք քաղաք Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան հ 1 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության վաստակավոր ուսուցչուհի Նատաշա Պողոսյանի հետ:

Նախ՝ շնորհակալություն, որ ինձ հրավիրել եք այստեղ: Երևի արցախյան նահատակների հիշատակը դավաճանած կլինեի, եթե չընդառաջեի ձեզ և չընդունեի այս հրավերը: Նաև ոգի կա, որ ինձ կանչել, բերել է այս տաղավարը: Եվ այդ ոգին այս կարճ, սուղ ժամանակում ինձ հնարավորություն կտա, որպեսզի մի փոքր ներկայացնեմ այն, ինչ կպարունակեն ձեր հարցերը:

1. Տիկի՛ն Պողոսյան, 1996 թ.-ից աշխատում եք դպրոցում, կրթում, դաստիարակում եք մատաղ սերնդին: Այժմ ինչպիսի՞ սերունդ է 21-րդ դարում մեծանում հատկապես Մարտակերտում:

Եթե ասելու լինեմ՝ այս հող ու ջրին կառչած սերունդ է մեծանում, կարծես նորություն ասած չեմ լինի: Ես համոզված եմ, որ աշխարհ կփոխի այս սերունդը, նաև հավատում եմ, որ կկարողանա արցախյան հիմնահարց լուծել իր դերակատարությամբ:

Ի՞նչ սերունդ է մեծանում: Դա այն սերունդն է, ով բարձրաձայնում է իր կարծիքը, ազատ իր տեսակետն է արտահայտում: Այդ սերունդն է, որ ուզում է աջակից լինել զինվորին, երազում՝ բժշկուհի դառնալ: Ու պատահական չի ընտրում այդ մասնագիտությունը, քանզի ուզում է վտանգի պահին սպիտակի հետ զինվորական համազգեստ կրել, նա ուզում է իրականություն դառնա վաղեմի երազանքը, որպեսզի լինի վի-

ռավոր զինվորի կողքին ու փրկի նրա կյանքը: Սա իրականություն է, քանի որ այդ նույն աշակերտուհին այս օրերին սովորում է Երևանի բժշկական համալսարանում, և ես համոզված եմ, որ նա ճշմարտություն է արտահայտել:

Մենք ունենք սերունդ, որ այսօր քմծիծաղով է տեղեկանում «քաղքենի» աշխարհի խնդիրներին ու ձգտումներին, երբ սահմանին այնքան մոտ է ապրում: Նա ավելին է տեսնում, քան աշխարհի շատ մարդիկ: Եվ նա չի ամաչում, երբ մի ներքին մղում նրան ստիպում է սիրել զենքը՝ որպես ինքնապաշտպանության միջոց: Եվ նրա համար աշխարհի ամենալավ տարածքն այն խրամատն է, որը պաշտպանում է հայ զինվորը:

2. Տիկի՛ն Նատաշա, այդ ամենը ասում էին նրանք մինչ ապրիլյա՞ն պատերազմը, թե՞ այդ դեպքերից հետո: Արդյո՞ք Դուք սպասում էիք, որ նրանք այդպիսի անձնուրաց նվիրումով կնետվեին մարտերի, նույնիսկ Ձեր երբեմնի այն աշակերտները, ովքեր այսօր զինվորական համազգեստով են:

Այս մտքերն արտահայտում էին դեռ ապրիլից առաջ: Ես սպասում էի անձնուրաց նվիրումի, որովհետև իմ առջև նստած աշակերտուհին երկու տարի է՝ ինչ ասում է, որ ինքը ուզում է դառնա դիպուկահարուհի, լինի զինվորի կողքին: Ապրիլյան օրերին նա աղաչել է հորը, որ իր հետ տանի դիրքեր, բայց հայրը չի համաձայնվել: Ես համոզված էի, որ մեր սերունդը պիտի ցույց տար անձնվիրություն, բայց իրենք առավելագույնը ցույց տվին, շատ ավելին, քան մենք էինք սպասում:

3. Խոսենք այդ օրերին երեխաների հոգեվիճակի մասին դեպքերից մեկ տարի անց: Ի՞նչ ազդեցություն ունեցան նրանց վրա ապրիլյան իրադարձությունները:

Այս սերունդը միանգամից հասունացավ…6-րդ դասարանցին ասում է՝ երբ այն օրերին Մարտակերտում դպրոց չէի հաճախում, դադարել էի գոյություն ունենալուց: Ես աշակերտներին հարցնում եմ, այսօր էլ հացրել եմ, որ եթե Աստված չարասցե, մի նոր ապրիլ լինի, նորի՛ց կվերադառնան Մարտակերտ: Միանշանակ «այո՛» եմ լսել տարբեր դասարաններում:

Դրա ապացույցը «Վերջին զանգն» էր, որ եկան նորից:

Այո՛, նրանք «Վերջին զանգի» միջոցառմանը հավաքվեցին: Կարոտով եկան՝ իրենց հայրենի հողի նկատմամբ, իրենց ծննդավայրի, հարազատների, իրենց օջախի, դպրոցի, ուսուցիչների նկատմամբ ունեցած մեծ սիրով: Նաև ասեմ, որ աշակերտը զարմացնում է մեզ, ասում

է՝ ենթադրենք Ֆրանսիայում կամ մեկ ուրիշ երկրում է ապրում, այնտեղ լավագույն կառույցներ կան, գեղեցիկ այգիներ, նրանց արվեստի գործերից՝ հրաշալի արձաններ, բայց ինչպե՞ս կարող է ապրել այնտեղ, երբ իր պապը այնտեղ ծառ չի տնկել, պատ չի շարել, երբ բոլորն անծանոթ են իրեն:

Եվ սա իրականություն է, ունենք արձանագրված հաջողություններ: Անցած ուսումնական տարվա ընթացքում հայրենասիրական թեմայով տարբեր շարադրությունների մրցույթում մեր դպրոցականներն առաջին տեղեր ունեցան:

Մեկ աշակերտուհու շարադրություն՝ «Գաղափարի զինվորն անպարտելի է» վերնագրով, առաջին տեղ գրավեց ԼՂ հանրապետական մրցույթում: Արցախի Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության կողմից կազմակերպված շարադրությունների մրցույթում երկու աշակերտուհու շարադրություն առաջնային համարվեց «Հավատ, հայրենիք, բանակ» վերնագրով, և «Ես սիրում եմ իմ երկիրը» խորագրով Երևանում կազմակերպված համահայկական շարադրությունների մրցույթում նույնպես առաջին տեղ ունեցանք: Ֆիլմ նկարահանվեց, որտեղ մեր աշակերտուհուն էլ հրավիրեցին նկարահանման:

Այս թեմայի տակ ես ազատ արտահայտվում եմ, ասում եմ մտքեր, որ վերացական չեն, սա իրականություն է, եթե որևէ խոսք ասում եմ, ուրեմն նաև այդտեղ տեսնում եմ իմ առջև նստած դեռահասին, ով նման կարծիք է արտահայտել: Ես մտել եմ դասարան, աշակերտուհու ծննդյան օր է, նա երգելու շնորհ ունի, հայրենասիրական երգեր հնչեցրեց արցունքոտված աչքերով, երբ սահմանից եկող կրակահերթերի արձագանքները մեզ էին հասնում: Այդ պահին սպասում ես առավել վատթարին, բայց նա երգում էր, մյուսները ձայնակցում էին նրան, մենք էլ հուզվել, արտասվում էինք: Այս սերունդը, ով սահմանից եկող հրետանային կրակոցների արձագանքների տակ երգել գիտի, ընդունակ է ամեն մի զոհողության:

Օրինակներ շատ կան…Ծնողները երեխաներին տարել են գյուղ, բայց 10-րդ դասարանում սովորող մեր աշակերտը եկել է Մարտակերտ, հագել հոր զինվորական համազգեստը, գնացել զորամաս, օգնել հորը՝ կամավորագրված ազատամարտիկներին զենք մատակարարելու գործում: Ապրիլյան դեպքերից հետո նա համոզված ասում է, որ ինքը զինվորական կդառնա: Այսօր նա ինձ ասում է, որ օրեր է հաշվում, որպեսզի գնա զինվորական ծառայության: Աղջիկները ավելացնում են,

որ առաջներում տղաներին բանակ էին տանում, հիմա իրենք են ուզում կամավոր գնալ: Այդ օրերին մեր դպրոցականները, ովքեր երգելու շնորհ ունեն, տեսահոլովակներ են ձևավորել, ներկայացել իրենց երգերով: Ապրիլյան օրերի ծնունդ էր մեր շրջանավարտի «Երդում» երգը, որն այս օրերին մեկ միլիոն երեք հարյուր հազարից ավելի դիտում ունի:

4. Տիկի՛ն Նատաշա, հիմա՞ էլ հուզվում եք, երբ խոսում եք ձեր աշակերտների ձեռքբերումների մասին: Կարող ենք ասել, որ այս սերունդը հայկական գենի անմահության վկայությունն է: Ձեր բազմամյա փորձից ենք ասում, որ սկսվում է 96-ից, երկու պատերազմ եք հասցրել տեսնել, երկու սերնդի հետ աշխատել եք, Ձեր դասավանդման տարիներին երևի ունեցել եք ծնողակորույս աշակերտներ: Նաև ապրիլը թարմացրեց մեր վերքերը… Ինչպե՞ս եք հաղթահարում այս ցավը:

Դա շատ ծանր թեմա է…Ես սովորել եմ՝ չամաչել արտասվելուց: Աշակերտը ինձ լացացնում է: Պատկերացրե՛ք իմ վիճակը… Այս վերջերս՝ փետրվարի 8-ին, սահմանում զոհված Գեղամ Մանուկյանի աղջկան, ով սովորում է իմ դասղեկական 7-րդ ա դասարանում, տանում էի զոհված հայրիկի մոտ՝ խրախուսելով, որ նա միայն վիրավորված է: Ես դասավանդել եմ Գեղամին, նա եղել է մեր դպրոցի շրջանավարտը... Ինչպե՞ս չհուզվել, երբ դեպքից մեկ ամիս անց՝ Մարտի 8-ին, նրա դստեր՝ ինձ նվիրած ծաղիկների մեջ Գեղամի արտացոլանքն էի տեսնում: Ես դասավանդում եմ «Խուդոյ» մականվամբ ազատամարտիկ Դավիթ Պետրոսյանի որդուն, նրա հայրը դժբախտ պատահարի զոհ է դարձել, բայց մարտական երկար նվիրական ճանապարհ է անցել: Ամեն տարի նրա ծննդյան օրը նշում եմ: Ինչպիսի՞ն կլինի իմ վիճակը, երբ ազատամարտիկի որդու համար ես մեծատառով մարդ եմ և այնքան եմ մեծարել իր հայրիկին, որ նրան թվում է՝ նա վերադառնալու է: Ես ինչպիսի՞ն կլինեմ, երբ նրա հայրիկի ծննդյան օրվան նվիրված միջոցառման ժամանակ բեմում արտասվել եմ, ինձ հետ՝ մի ամբողջ դահլիճ: Մենք ապրում ենք մի այնպիսի բնակավայրում, որ ամեն օր սպասելի է վատթարագույնը: Մենք գիտենք մեր թշնամու կեղտոտ ձեռագիրը՝ հարձակվել կեսգիշերին, այն էլ՝ հանկարծակի: Դա զարմանալի չէ, մենք պիտի սովորենք, հարմարվենք մեր ապրելակերպին: Թոռնիկ ունեմ ութ տարեկան, ով Մարտակերտի հրետակոծության օրերին ինձ խրախուսում էր, որ չվախենամ, այդ մերոնք են…Այդ սերունդն է այսօր մեծանում մեր կողքին:

5. Շնորհակալություն, տիկի՛ն Նատաշա, մենք ընտրել ենք մի այնպիսի թեմա, որն անսպառ է, երկար զրուցելու ժամանակ այս պա-

հին մենք չունենք: Ի դեպ, բարեկամնե՛ր, ձեզ հիշեցնենք, որ տիկին Պողոսյանը մի շարք հոդվածների հեղինակ է, և հատկապես ապրիլյան օրերին հանդես էր գալիս իր հոդվածներով, և աշխարհի տարբեր մարդիկ տեղեկանում էին, թե ինչ իրադարձություններ էին տեղի ունենում Մարտակերտում:

Եթե կարելի է, մի երկու նախադասությամբ լրացնեմ…Դա մանկավարժի օրագիր է, որ ես ամեն օր գրում եմ: Դրանք հիմնականում տեղադրվում են Լոս Անջելեսի ամերիկյան usarmenianews.com հայկական լրատվական կայքում: Փորձում եմ, առիթից օգտվելով, շնորհակալություն հայտնել խմբագիր Գայանե Մանուկյանին և կայքի ամբողջ խմբագրակազմին:

Շնորհակալություն Ձեզ…Ցավոք, մեր ժամանակը շատ սուղ է, նորից հիշեցնեմ, որ մեր հյուրն էր Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նատաշա Պողոսյանը:

Հարցազրույցը՝
https://www.youtube.com/watch?v=YpZuzhLeoxg&feature=youtu.be&app=desktop
Վարողներ՝ Հունան Թադևոսյան, Անի Մանգասարյան

http://www.usarmenianews.com/am-n-8563.html

2017-04-06

ՆԱ ԶՈՀՎԵՑ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Այդ օրը դիվահար եղանք ազգիս հասցված ահավոր ցավից... Մեզ թվաց՝ Աստված էլ կլացի, երբ իմանա մեր դպրոցի շրջանավարտ Լևոն Միրզոյանի մասին, որ հայրենիքին զինվորագրված հայորդին իր մայրիկի և քրոջ տոնը շնորհավորել է ու ժամեր անց դարձել թշնամու արկակոծության զոհը:

Այդ օրն Ավետման օր էր՝ Մայրության ու գեղեցկության տոն, բայց ո՛չ մարտակերտցիներիս համար: Տոնական օրվա բերկրալից ժամերից հետո սուգը մտավ մեր օջախները, կորստյան վիշտը տարածվեց ու պատեց ժայռերի ծերպերին անգամ, ուր խոյացել էր նա քանի՞-քանի անգամ, ցավն անտառներին պատեց նույնիսկ, ուր շրջել էր նա մոլոր, այն ալիքվեց դեպի հեռու՞-հեռուները, որ պատմի հույսով ապրելու հեքիաթի մասին, որ այդ օրը ցամաքել էր մեր աչքերում անգամ:

Ամենուր հռչակված էր մայրերի և մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր, բայց մեզ մոտ սուգ էր: Ասում են՝ Մարիամի մայրանալով՝ մարդկանց համար մայրության խորհուրդը նորովի է բացահայտվել, այն դիտվել է որպես աստվածային հրաշք, այդ նույն հրաշք զգացողությունն ապրել էր նաև Լևոնի մայրը, երբ նա ծնվել էր: Այդ օրը բոլոր եկեղեցիներում սուրբ պատարագ էր մատուցվում և մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության կարգ էր կատարվում, իսկ մեզ մոտ մոմավառություն էր՝ Լևոնի հոգու համար:

Այն հավերժական թվացող գեղեցկությունը թառամեց, ծաղկառատ և բուրումնավետ գարնան շունչը կանգ առավ: Սգում էր մի ամբողջ քաղաք, սգում էր, բայց չէր հանդարտվում, երբ գիտեր օրոցքի կարոտ իր զավակներն են զոհվում: Մեր արշալույսները ներկվեցին արյամբ, այդ օրը սուգը տնետուն մտավ, որ այդ տոնական օրը մայրերը լացեն, նորից սև հագնեն դուստրերը ազգի...

Նրա հավատը մեծ էր Աստծո հանդեպ, խնդրանքն էլ՝ անչափելի, բայց այդ ծաղկառատ տոնը արյամբ ներկվեց: Այդ օրը Լևոնի երազանքը չիրականացավ, վերջին օրվա գրած տողերում օրհնանքներ կային, որ սուրբ մայրերի սրտերը բարի՝ կարոտ ու արցունք երբեք չտեսնեն: Վերջին խոսքն էլ մեծատառով էր՝ ԱՍՏՎԱԾ ՊԱՀԱՊԱՆ ԲՈԼՈՐ ՁԻՆՎՈՐՆԵՐԻՆ: Բայց այդ օրը հավերժ գեղեցկության, երիտասարդության, առողջության, անսահման երջանկության այն անմար ժպիտները մարեցին:

Լևոնի զոհվելուց մեկ տարի հետո՝ 2016-ի ապրիլին, մարտակերտցիներս մի նոր պատերազմ տեսանք: Այդ սարսափելի օրերին մենք ամբողջ հոգով բոլոր նահատակների հետ էինք՝ սահմանում հերոսացած հայորդիների, նաև Լևոնի հարազատների կսկիծն էինք ապրում, այն Ապրիլի 7-ի Մայրության ու գեղեցկության տոնի, որ արյամբ էր օծված: Այսօր էլ մեր Ապրիլի 7-ը Լևոնով է սկսվում, նրա և բոլոր անմահացած հերոսների մայրերի ու քույրերի տիեզերական ցավով, որ բոլորինս է դարձել:

http://www.usarmenianews.com/am-n-8577.html

2017-04-06

ԱՆՑԱԾ ՏԱՐՎԱ ԱՅՍ ՕՐԸ

Մեկ տարի առաջ այս օրը տագնապահարույց էր: Այդ օրվա հիշողությամբ թերթում եմ տողերը, որ շարել էի ցավախառն հոգով, անհանգիստ տվայտանքներով, մեծագույն կարոտով առ քաղաքս, որտեղ անցել են տարիներս, մի ամբողջ կյանք, որ կապված է այս աղքատիկ բնակավայրի լավ ու վատ օրերի հետ: Ապրիլյան տառապալից օրերն իրենց կնիքն են դրել մեր հոգում, ու այն թերթում եմ կամաց, որ հիշողությանս այդ փշրանքները չկորցնեմ: Ընթերցում եմ տողերն այդ, որ գրել եմ մեկ տարի առաջ, ու այն տեղ էր գտել ամերիկյան հայկական կայքում, և այդ օրվա սրտիս անհանգիստ զարկերն եմ լսում:

«Իմ սրտի՛ցավ, իմ կարո՛տ, իմ գնդակոծվա՛ծ բնակավայր, իմ Մարտակե՛րտ:

Իմ սիրելի՛ քաղաք, նորից քո գիրկը կանչի՛ր տարհանված բնակիչներիդ, համոզված եմ, որ բոլորն էլ կարոտ են ձայնիդ…Շուտով կհանդիպեմ քեզ հետ, այլևս չեմ համբերում, բայց գիտեմ, որ մի նոր անհանգիստ ապրումներ կունենամ և այդ ճանապարհին նաև ինձ կփորձեմ հարմարեցնել այն մտքին, որ միշտ չէ ամեն մի հանդիպում գեղեցիկի զգացողություն ծնում մարդու մոտ:

Այս քանի օրերին, քեզանից ոչ շատ հեռու գտնվող մի գյուղում լինելով, հեռախոսի մյուս կողմից եկող ձայներն ինձ անընդհատ տեղեկացրել են քո բարձրակոչ հառաչանքների ու կորուստների մասին, որոնց համատեղ՝ սրտիս զարկերն են արագացել, փոթորկված հոգուս ալեբախումներն ավելի բարձր են արձագանք տվել:

Վաղը տոնական օր է՝ Ապրիլի 7-ը՝ Գեղեցկության տոն…Բայց այս անգամ այն իր նշանակությունն ու խորհուրդը կորցրած կլինի, այնինչ այս վերջերն ուրախացել էի, որ դպրոցի ճանապարհս ասֆալտապատվել էր…

Ավելի ամուր թելերով կապվեցի քեզ հետ դեռևս 92-ին, երբ գերության մեջ ընկար: Մեկ տարի հետո նորից վերածնվեցիր և դժվարությամբ նորից քո շուրջը հավաքեցիր բնակիչներիդ մի ստվար մաս, բայց այս անգամ էլ վիրավորվեցիր, չնայած հուսով եմ, որ այս անգամ էլ նորից կկարողանաս հավաքել տարհանված բնակիչներիդ: Աշխարհի առջև սիրտդ լայն բացել էիր, սրտիդ սահմաններն ընդարձակել, որ համատարած սեր փռես ամենուր:

Երևի շատ էր այդ սերը, որ գնդակոծության թիրախ դարձրին քեզ, բնակիչներիդ փոեցին ամենուր: Այս օրերին ցերեկային թե գիշերային ողբերդ ինձ էին հասնում, մայրամուտի նվագներդ էին ամենուր տարածվել, լուսեղեն առասպելներ էի հյուսում քո մասին, հավերժությունդ հաստատող կանչեր էի հղում ամենուր, ապրում քո լուսավոր տեսիլքներով:

Սիրով ու կարոտով վաղը կգամ քո գիրկը՝ ցավից ու տառապանքից կոփված, ավելի ամուր ու հաստատակամ քայլերով, քան կայի մինչ այդ, իմ սրտի՛ ցավ, իմ կարո՛տ, իմ Մարտակե՛րտ…»:

http://www.usarmenianews.com/am-n-2617.html

2017-04-07

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՊՐԻԼԻ 7-Ի՝ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԸ

Մեր օրերում երբեմն խաթարված ենք տեսնում մարդկանց հավատը, բայց մոր սրբազան կերպարը միշտ էլ ուղեկցում է մեզ, նա իրենով խորհրդանշում է կեցության չափանիշը, նաև մարդկային վշտի խտացումն է, իր տառապանքի մեջ՝ անսահման բարի ու գթառատ: Մայրն է, որ իր մարդկայնության բարձունքից կյանքի դասեր է տալիս աշխարհին, արժանանում պաշտամունքի, դառնում ճշմարիտ բարոյականության հավատարմատար:

Մայրը հայրենիքի անսասան ուժն է, կորստյան ցավի մարմնացում, կարոտի կսկիծ է, անձնվիրության բարձրագույն կերպար: Մայրը հույսի կերոն է, վստահության մարմնացում, կյանքը նորոգող էակ, սիրո նվիրական ուժ, ինքնամոռաց արարում: Մայրը ինքնայրում է, սիրո բերկրանք, կնոջ տեսքով գեղեցկություն, որ իր կենսասիրությամբ սրբացնում է կյանքը:

Ապրիլի 7-ը ոչ միայն Մայրության և գեղեցկության տոն օր է, այլև որպես Ավետման տոն, որը մի քանի խորհուրդներ ունի: Այդ տոնական օրը մեզ նաև հիշեցնում է այն մանուկների մասին, ովքեր զրկված են մայրական խնամքից և մեծանում են՝ փայփայելով ընտանիք ունենալու միակ երազանքը:

Հիշվում են այն մանուկների մասին, ովքեր զրկվում են լույս աշխարհ գալուց՝կախված իրենց ծնողների նախընտրություններից: Այդ տոն օրն առանձնահատուկ մեզ հիշեցնում է նաև այն անպաշտպան մայրերի մասին, ովքեր լռությամբ կրում են կյանքի դժվարությունները, նույնիսկ ենթարկվում բռնությունների: Հիշվում են նաև բոլոր նրանք, ովքեր միայնակ են մեծացնում իրենց երեխաներին:

Ավետման օրվա խորհրդով ցանկանանք բոլոր երեխաներին հանգիստ և ապահով կյանք իրենց մայրիկների գրկում և ձգտենք Աստվածամոր նման մեր մեջ կրել ամենայն աստվածայինը՝ բարություն, ազնվություն, սեր, անսահման զորություն և առաքինի ամեն-ամեն ինչ:

Ի բարօրություն մեր երկրի հավերժ և խաղաղ կեցության՝ շնորհավորում եմ բոլորին, ցանկանում ժպիտներ, ուրախություն, հոգու անդորր, խաղաղ ու երջանիկ կյանք: Շնորհավորում եմ բոլոր կանանց ու մայրերին, մեր հայուհիներին, որ համբերատար են ու կենսունակ, որ հավասարակշիռ են ու խոհեմ, ծանր բեռի տակ կքած են և խոնարհ, նվիրված են և ազատատենչ ու պայծառ ոգով:

Շնորհավորում եմ բոլորին, որ իրենց հոգում այն հեռուներում անթեղած կարոտ ունեն ու անսահման սեր, նրանց, ովքեր գեղեցկությունն իրենց մեջ են կրում, ունեն մաքրագործող ուժ: Բազմաշերտ են շնորհավորանքներս՝ բոլորին ուղղված, բազմաթիվ են ցանկություններս՝ խաղաղությամբ օծված:

Թող Ամենակարող Տերը խաղաղություն պարգևի հայոց աշխարհին, մարդկային ցավից ու այդ ցավի հաղթահարումից ծնված ոգու ամրություն տա որդեկորույս բոլոր մայրերին, տոկուն կամք և ամուր համբերություն: Խոնարհումս նրանց:

http://www.usarmenianews.com/am-n-8589.html

2017-04-08

«ՄԱՐՏԱԿԵՐՏ» ՊԱՐՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԵԲՅՈՒՏ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻՆ

ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության՝ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման ծրագրի շրջանակներում՝ ապրիլի 6-ին Ստեփանակերտում Արցախի դպրոցների միջև կազմակերպվեց «Ազգային պար» մրցույթ-օլիմպիադա, որտեղ Մարտակերտի մշակույթի և երիտասարդության կենտրոնի աղջիկների պարի խումբը՝ «Մարտակերտ» պարով, արժանացավ «Լավագույն դեբյուտ» անվանակարգին:

Վաղուց գիտեի, նաև ականատես էի, որ աղջիկների պարի խումբը տարբեր ելույթներով հիացմունքի է արժանացել հանդիսատեսի կողմից: Առավելապես, երբ իմ դասղեկական 7-րդ ա դասարանի երկու ակտիվ աշակերտուհիներ մասնակցում էին այդ խմբի պարապմունքներին, տեղեկացված էի նրանց հաջողություններին մասին: Պարելու շնորհ ունեցող տասնչորս աղջիկների ընդգրկվածությունը պատահական չէր: Մարտակերտի Վլադիմիր Բալայանի և Վարդան Մինասյանի անվան դպրոցներից յոթական աշակերտուհիների ընտրությունը՝ պարուսույց Նաիրի Ազատյանի կողմից, տեղին էր ու նպատակային, երբ նրա հաստատակամ աշխատանքի արդյունքում արձանագրվեց այդպիսի հաղթանակ:

Տարիների հեռվից ես տեսնում եմ 5-րդ դասարանում սովորող իմ աշակերտ Նաիրի Ազատյանին՝ առաջին նստարանին նստած: Հետագա տարիներին նա իմ տեսադաշտում չկա, բայց այդ ազնիվ ու հրաշալի երեխայի դպրոցական օրերի հիշողությունները միշտ ինձ հետ էին, երբ ընտանիքով տեղափոխվել էին Ստեփանակերտ…. Նոր օրերում բարձրագույնն ավարտած այս երիտասարդին հազիվ եմ ճանաչում, ով պատրաստակամ գալիս է Մարտակերտ, մատաղ սերնդին սովորեցնում ազգային պարեր՝ նպաստելով մշակութային ժառանգության պահպանմանը:

Պարզվում է՝ անցկացվող մրցույթի նպատակները բազմաթիվ են՝ մատաղ սերնդի շրջանում ազգային պարերի ուսուցման խրախուսում, ազգային պարերի տարածում ու պահպանում, ազգային պարերի, դրանց բնույթի և նշանակության վերաբերյալ գիտելիքների զարգացում: Ազգային գաղափարախոսության քարոզչություն, ոչ նյութական մշակութային ժառանգության և մշակութային ինքնության պահպանում,տեղական ինքնակառավարման մարմինների, մշակութակրթական հաստատությունների, կազմակերպությունների ներգրավում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման աշխատանքներին:

Ողջունում եմ այս հաղթանակը, մի քանի անգամ վայելում այս պարը, որտեղ ոգի կա, ապրելու, արարելու համառ կամք, հաստատակամ ու խրոխտ կեցվածք, և համոզվում եմ, որ արվեստը հզոր ուժ է: Այն կարող է լինել առանց խոսքերի զգացմունքների հեղեղ կամ հոգու ներդաշնակ շարժումներ, մեղեդայնությամբ օծված սրտի ազնիվ արձագանք կամ անխոս լռություն և երանության պահ...Եվ այդ արվեստում տեսանելի է դառնում ապրիլյան պատերազմ տեսած նոր սերնդի ապրելու համառ ուղին՝ մարդկությանը պարգած իրենց կեցության հավերժական պատգամը՝ որպես Մարտակերտ քաղաքի հարատևող կանչ:

Տեսանյութ՝
https://www.youtube.com/watch?time_continue=3&v=Dqh1EJxL-P8

http://www.usarmenianews.com/am-n-8590.html

2017-04-10

ՄԱՐԱՂԱՅԻ ՍՊԱՆԴԸ ՄԵԶ ՀԵՏ Է ԱՐԴԵՆ 25 ՏԱՐԻ

Մարաղա՛…Մի հարազատ ու ջերմ օրրան, որի խաղաղ բնակչությունը դարձավ ցեղասպանության զոհ 92-ի ապրիլի 10-ին: Այդ օրերին մարտակերտցիներս նկուղներում էինք պատսպարվում, բայց լսեցինք արյունարբու բարբարոսի ոճրագործության մասին, մնացինք պապանձված: Մենք ցնցված էինք, ահասարսուռ վայրագությունները՝ մեզանից ոչ հեռու գյուղում, մեզ գամեցին մեր բնակելի շենքի նկուղի բորբոսնած պատերին: Կցկտուր զրույցներ էին լսվում, որ ազերիների տանկերը կանգնել էին՝ փողերն ուղղված տների վրա, գոռում էին կատաղած գազանները, որ թաքստոցներից դուրս գան խեղճ բնակիչները…

Մեզ կորցրած էինք, չէինք ուզում լսել այն կցկտուր պատմությունները, որ կենդանի մարդուն գլխատել էին, հանել մարդկանց աչքերը, կտրել ականջները, երկաթյա ձողերով տանջամահ արել մեծահասակներին, կանանց ու երեխաներին: Չէինք ուզում հավատալ, բայց ինչու՞…Սումգայիթից ու Բաքվից հետո այդ արյան ծարավ գազանները մեզանից ոչ այնքան հեռու այդ գյուղն էին մտել, նման ոճրագործություն կատարել, և մենք չէինք ուզում հավատալ: Գուցե զգո՞մ էինք, որ կենդանի սպանված էինք, բայց չէինք ուզում մեր ոգին կոտրել: Եվ ամիսներ հետո մենք հասկացանք, որ կառչել պետք չէ այս հողին, մենք պետք է դուրս գանք մեր թաքստոցներից, որ կարողանանք փրկվել: Ու կեսգիշեր էր, երբ մեր նկուղի դռան մոտ կանգնած ոմն մեկը կանչեց շատ բարձր ձայնով.

«Դու՛րս եկեք…Մարդ կա՞ այդտեղ, թուրքը մտնում է Մարտակերտ, դու՛րս եկեք...»:

Երեսուն բնակարանոց շենքի բնակիչներից երկու ընտանիք էինք մնացել: Սարսափելի էր…Երկինքն էլ ծառս էր եղել, հորդառատ անձրև էր տեղում, կայծակն էր որոտում…Մարաղայի դեպքերն աչքներիս առջև՝ սարսափահար դուրս եկանք նկուղից: Ութ տարեկան քնաթաթախ երեխայիս լացի աղաղակը միախառնվեց գիշերային մառախլապատ երկնքի որոտընդոստ ձայներին…

Մարաղայի սպանդից տաս տարի անց՝ 2002-ի ապրիլի 10-ի հեռախոսազանգն ինձ անակնկալի բերեց: Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավար Ս. Հովսեփյանի անունից հրավեր ստացա՝ մասնակցելու

Նոր Մարաղայում՝ զոհերի հիշատակին կազմակերպված միջոցառմանը: Այդ օրը շատերի կողքին ես ելույթ ունեցա նահատակների հիշատակին կառուցված հուշարձանի մոտ…Առանց բարձրախոսի՝ իմ ձայնը շատ բարձր էր հնչում, որպեսզի հասանելի լինի այն հարակից ճանապարհի մոտ անվասայլակին նստած հաշմանդամ ազատամարտիկին, ով չկարողացավ մոտենալ հուշարձանին: Այդ պահին ես լսում էի տաս տարի առաջ արյունալի սպանդի ենթարկված, մահվան սարսափազդու հայացքի տակ ճչացող, գերության տակ կքած՝ մի բուռ ժողովրդի շուրթերին քարացած վերջին հառաչանքները:

Մեր դպրոցի տնօրենության և մանկավարժական կոլեկտիվի կողմից խոնարհումի խոսք ուղղվեց անհայտ կորածների և նահատակների հիշատակին, երախտագիտության խոսք՝ նորմարաղացիներին, ովքեր կարողացան մղձավանջային տառապանքների գնով վերընձյուղվել ու ստեղծել իրենց նոր կյանքը: Դա նաև մանկավարժիս ակնածանքի խոսքն էր՝ ուղղված անսասան կորով, ապրելու սեր, ազատության տենչ և գալիքի նկատմամբ մեծ հավատ ունեցող այդ գյուղի բնակիչներին, որով ողջունում էի նրանց պատմության արևածագը՝ խաղաղության և լուսավոր կյանքի ակնկալիքով: Այդ օրը ԼՂՀ կրթության և գիտության նախարար Հ. Գրիգորյանի՝ մանկավարժիս հետ ձեռքսեղմումն ու ինձ ուղղված շնորհակալությունը վկայում էին, որ խոնարհումի խոսքս իր ազդեցությունն էր գործել ներկաների վրա:

Մարտակերտից ոչ շատ հեռու է գտնվում Նոր Մարաղա գյուղը, որտեղ ապրում են մարդիկ, ովքեր չեն մոռանում այն հինը, որի վրա դրոշմված է մի արյունալի սպանդ: Այդ գյուղի անունը միայն Մարաղա էր, մի գյուղ, որ այժմ էլ գերության մեջ է:

http://www.usarmenianews.com/am-n-8600.html

2017-04-13

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԴՍՏԵՐՍ ՄԱՍԻՆ

Այս տարիներին բազմաթիվ օրագրային գրառումներ եմ կատարել, և որպես դպրոցի ուսուցչուհի՝ այդտեղ լուսաբանվել են տարբեր դպրոցականների ու մանկավարժների մասին, բայց այսօր համարձակվում եմ ներկայացնել իմ մանկավարժ դստերը՝ նկատի ունենալով, որ նրա ծննդյան տարեդարձն է: Ես առի՞թ էի փնտրում, թե՞ ուզում էի հարազատս էլ երևա իմ հրատարակվելիք գրքում, դա չէ կարևորը, երբ նպատակ ունեմ այդ գիրքը նվիրել դստերս՝ Սոֆյա Պետրոսյանին: Կարծում եմ՝ այդ գիրքը մանկավարժ մայրիկի արժանվույն նվերը կլինի իր հարազատին, որ ռուսաց լեզվի ուսուցչուհի է Մարտակերտից ոչ հեռու մի գողտրիկ գյուղում, որ Նոր Կարմիրավան անունն է կրում:

Վաղուց լսել էինք, որ 13-ն անհաջող թիվ է, բայց ապրիլի 13-ը տարիներ շարունակ գեղեցկացավ ու մի նոր շուք ստացավ մեր ընտանիքում: Շրջապատի համար զարմանալի էր, որ ռուսամետ տրամադրվածության մթնոլորտում ես դստերս հայերեն դասարան ընդունեցի: Բայց երկար չտևեց այն, երրորդ դասարան էր փոխադրվել, երբ 92-ի Արցախյան պատերազմը խաթարեց մեր կյանքը, ընտանիքով ապրեցինք նկուղային կյանքի, պատերազմական օրերի ու բռնագաղթի սարսափները, որ մտան մեր կենսագրության մեջ՝ որպես հային ուղեկցող դառնագին ճակատագիր:

Օտարության մեջ ռուսական դպրոց-լիցեյ հաճախող աշակերտուհու համար այնքան էլ դյուրին չէր անցնելիք ճանապարհը, երբ օտարանալու վտանգից զգուշանալով՝փորձում էի հայատառ գիրը հավերժացնել նրա հոգում, չնայած ռուսերենի ընկալումը շատ արագ կատարվեց նրա մոտ: Անցումը հայերենից ռուսերենին ինձ մոտ էլ ցավոտ հնչողություն ուներ, բայց հանգիստ հոգոց քաշեցի, երբ 95-ին վերադարձանք Արցախ: Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի ռուսական դասարանում սովորող աշակերտուհին

շատ արագ աչքի զարնվեց հայոց լեզվի առարկայական օլիմպիադայում՝ շրջանային փուլում վաստակելով ամենաբարձր միավորը: Շուտով ռուսաց լեզվից արձանագրած հաջողության արդյունքում՝ նա մի շարք դպրոցականների հետ մասնակցեց ՀՀ առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

Մասնագիտությունն արդեն ընտրված էր, և այն պիտի շարունակեր Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժնում: Եվ ես հպարտ էի, որ նա նույնքան սիրում և տիրապետում էր հարազատ մայրենին, այնքանով, որ երբեմն զարմացնում էր ինձ հայոց լեզվի քերականության իր իմացությամբ:

Մի նոր հպարտություն էր ինձ համար, երբ նա ընդունվեց ԱրՊՀ-ի ասպիրանտուրան՝ «Ռուսաց լեզու» մասնագիտությամբ: Հայաստանի բարձրագույն որակավորող հանձնաժողովի երաշխավորած տարբեր ամսագրերում հրատարակվող նրա մասնագիտական հոդվածները մի նոր լույսի տակ երևան էին հանում Արցախի մի փոքրիկ գյուղական դպրոցի ուսուցչուհու, ով սիրում էր իր մանագիտությունը և ուներ իր անհատական մոտեցումը մանկավարժության ասպարեզում:

Անցած տարի ապրիլյան պատերազմը չնայած մեր ուղեկիցը դարձավ, բայց նա իր ընտանիքով մնաց հարազատ Մարտակերտի հողին կառչած: Այսօր էլ նա շարունակում է իր մանկավարժական առաքելությունը Նոր Կարմիրավանի Յ. Գալստյանի անվան հիմնական դպրոցում, որտեղ հրաշալի կոլեկտիվ կա, գործի հանդեպ նվիրվածություն:

Օգտվելով օրվա գեղեցիկ պահի զգացողությամբ՝ շնորհավորում եմ դստերս ծննդյան օրը, որ այս տարիների ընթացքում նաև իմ մտերիմ ընկերուհին է, և ցանկանում եմ այն ամենը, ինչ կցանկանա յուրաքանչյուր մայր իր սիրելի դստերը:

ՀԳ Հիշում եմ, որ փոքր հասակում, երբ լացում էի, ասում էին՝ ամոթ է, որ լացում ես: Կամաց-կամաց իմ գիտակից տարիներին սկսեցի ամաչել և

խուսափել արտասվելուց այն հուզված պահերիս անգամ ու արցունքներս թաքցնում էի, որ տեսանելի չլինեն: Երբ կյանքիս քառորդ դարում ծնվեցիր դու, լացում էիր, ես էլ՝ քեզ հետ, չէիր ուտում, ես նորից լացում էի, դեռ մի քանի օրական, մենք ընկանք հիվանդանոց, քեզ հետ արտասվում էի...Դեղ ներարկելիս լացեցիր, ես՝ նույնպես, եկա տնից շորերդ տանելու, տեսա դատարկ այն փոքրիկ մահճակալը, հեկեկոցս լսելի դարձավ տան դատարկության մեջ, թվաց իմ արցունքներից ճաք տվեցին պատերը, ու ես հասկացա, որ պետք չէ ամաչել, երբ արտասվում ես, ու այդ արցունքները դարձան ինձ ուղեկից ապրածս տարիներին՝ թե՛ ուրախության այն արցունքաբեր ծիծաղի պահերին, թե՛ իմ հուզված օրերին: Շնորհավոր ծնունդդ, սիրելի՛ դուստրս, շնորհակալ եմ, որ քո ծնունդով ինձ մի նոր կյանք տվեցիր ու սովորեցրիր, որ այս կյանքում արցունքներից երբեք չամաչեմ:

http://www.usarmenianews.com/am-n-8628.html

2017-04-14

ՆԱ ՉԻ ՄԱՀԱՑԵԼ, ՆԱ ՄԻԱՑԵԼ Է ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆԸ

Չգիտեմ ինչու, բայց օրագրային գրառումներում հաճախակի եմ անդրադառնում գործընկերներիս: Գուցե թե պատճառը նրանց ոչ այնքան բարեհաճ ճակատագրից խեղճացած լինելն է:

Ռիտա Աթայան՝ պատասխանատվության զգացումով, իր գործին անշահախնդիր նվիրված, մարդկային լավագույն արժանիքներով օժտված անձնավորություն, Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի: Կերպար, ով վաղուց հարգանք է ձևավորել իր շուրջը, իսկ նրա ներաշխարհի նուրբ ու ցավալի տվայտանքները տեսանելի են դառնում միայն նրա հետ ունեցած զրույցում:

Նրա՝ մանկավարժի խոհն ու ապրումը զուգահեռվում են վաղաժամ կյանքից հեռացած եղբոր հետ կապված հիշողություններով: Այստեղ հավատի ու կամքի հզոր մարմնացում կա՝ Ռոբերտ Աթայանի սգավոր մոր կերպարով, ով, առայսօր հոգում անթեղած որդու կորուստը, հավատի անշեղ ուղով գնում է դեպի Աստծո դուռը, որ աղոթք-մրմունջները հասանելի դարձնի բարձրյալին…

Ես էլ հիշողություններով Ռոբերտին տեսնում եմ տարիների հեռվից՝ մտերմական միջավայրում: Հստակորեն ու գեղեցիկ երևում է ինձ շիտակ ու ազնիվ մի պատանի, և մտածումներիս մեջ կերպավորվում է բարության մարմնացում:

Հայրենիքի օրհասական տագնապների մեջ է ներկայացնում քույրը հարազատ եղբորը, երբ Արցախյան շարժման սկզբից նա մասնակցություն է ունեցել ազատագրական պայքարին՝ զենքերի հայթայթման, թաքստոցներում պահպանման և ինքնապաշտպանական գործողություններին: Միևնույն ժամանակ նա եղել է Ն. Հոռաթաղի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր ծառայող՝ սարկավագ: Արցախի թեմի առաջնորդի կողմից լիազորված է եղել Մարտակերտի կիրակնօրյա դպրոցում դասավանդելու «Եկեղեցու պատմություն և կրոն» առարկան:

Մարդկային հոգու տառապանքին ձուլվում է կարոտը, մի մեծ ափսոսանք, որ կանթեղի լույսի պես առկայծում է ու նորից մարում, երբ

իմանում ենք, որ 1966-ի հուլիսի 3-ին ծնված Ռոբերտը զոհվել է 26 տարեկանում, հուլիսի 4-ին: Նա իր բարձր կատարողականությամբ օժտված զինվորի հատկանիշների շնորհիվ՝ հրամանատարության կողմից 92-ի հունվարին հրավիրվել էր Կենտրոնական շտաբում ծառայության: Որպես պատասխանատու անձ՝ զենք ու զինամթերք է հասցրել շրջանի տարբեր սահմանային տեղամասերում տեղակայված ջոկատներին, իսկ անհրաժեշտության դեպքում ուղարկվել է՝ օժանդակելու ինքնապաշտպանությանը: Նաև ակտիվ մասնակցություն է ունեցել շրջանի տարբեր գյուղերի ինքնապաշտպանական գծի խրամատաշինությանը և ինժեներական ամրակառույցների շինարարական աշխատանքներին:



92-ի հունիսից Ռոբերտը ընդգրկված է եղել Մարտակերտի պարետային ծառայության ջոկատում:

Սգավոր մի մեղեդի անցյալի հուշերը նորից թարմացնում է, հոգու մի խոր ցավ ներկայում իմաստավորում է մի հավերժացած կյանք: Տառապանքի վեհությունն է ամբարված քրոջ հոգում, որ պատմում է Ռոբերտի վերջին օրերի մասին: Ու կենդանանում է նորից 92-ի հուլիսի 4-ը. «Եղբայրս մեքենայով պտտվում էր Մարտակերտի փողոցներով՝ բնակչությանը տեղահանվելու մասին հրամանատարությանն իրազեկելու նպատակով: Հանձնարարությունը կատարելուց հետո կեսօրին շարժվել է դեպի քաղաքի «Դիլլաքեն աղբյուր» կոչվող վայրում տեղակայված պարետային անցագրային կետ՝ մինչև վերջին մարդու դուրս գալուն սպասելու համար: Նույն օրը՝ իր ծառայողական պարտականությունները կատարելիս, զոհվել է թշնամու հրետակոծության ժամանակ:

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության մեդալով»»:

Բռնագաղթի ու տարագրության տագնապալից ճանապարհներին էինք. Ռոբերտ Աբայանի զոհվելու բոթը ցնցեց բոլորիս: Մեր ժողովրդին պատուհասած մղձավանջում հիշողությանս մեջ մնաց մի լուսավոր կերպար՝ մեր հոգևոր պատմության մեջ անմահացած մի երիտասարդ կյանք:

Նա չի մահացել, նա միացել է անմահությանը:

http://www.usarmenianews.com/am-n-8645.html

2017-04-15

ԱՅՍՕՐ ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ Է

Սուրբ Հարության տոնին միմյանց ողջունում են «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց» ավետիսով, պատասխանում՝ «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

Այդ սուրբ տոնին ցորեն ենք աճեցնում, որը խորհրդանշում է գարնանամուտը, նաև ածիկը համարվում է մեռնող ու հառնող կյանքի խորհրդանիշ: Այսինքն՝ ցորենը ցանում ես՝մեռնում է, հետո ծլում է, ու միջուկից դուրս է գալիս կանաչը՝ խորհրդանշելով նոր կյանքի սկիզբը: Ս. Հարության տոնին նաև ձու ենք ներկում: Ներկված ձուն համարվում է հարության և նոր կյանքի խորհրդանիշ: Ինչպես իմաստուններն են ասում. «Դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է Քրիստոսի արյունը: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հռչակում ենք մեր փրկությունը»:

Բոլորս էլ գիտենք, որ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված: Քրիստոսի խաչելությունից և մահից հետո՝ երեկոյան, բարեպաշտ մարդիկ նրա մարմինը իջեցրին խաչից և դրեցին վիմափոր գերեզմանի մեջ՝ փակելով մեծ քարով: Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, կանայք գնացին գերեզման՝ անուշաբույր յուղերով օծելու Հիսուսի մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքի քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ նրանք տարակուսում էին, երևացին երկու հրեշտակ և ասացին. «Ինչո՞ւեք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ հարություն առավ»:

Ամեն տարի հավուր պատշաճի նախապատրաստվում և լիարժեք նշում ենք այս տոնը, որը շարժական է: Կարծես սա այն է, որ երբևէ տարբերություն չի դրվել, թե որքանով է տվյալ մարդը հավատում Աստծուն, այնպես, ինչպես «Աստված իմ» արտահայտությունն է, որ կարող է հնչել ուրախության թե տխրության ցանկացած պահի, կարող է

ասել Աստծուն հավատացող կամ գուցե և չհավատացող որևէ մեկը: Պատահում է՝ թերանում ենք հոգևոր կյանքում, լինում են նաև Աստվածաշնչից շատ քիչ բան իմացող մարդիկ, բայց հաստատուն իրենց հավատքի մեջ, և բոլորս էլ նշում ենք այս տոնը:

Տարիներ առաջ ինձ էլ շատերի նման թվում էր, թե առերես պետք է հանդիպեմ Աստծուն, բայց օրեօր համոզվում և փորձում եմ հոգուս մեջ փնտրել նրան ու տեսնում եմ, որ Աստված ամենուր է՝ մեր ներսում, մեր հոգու անհունության մեջ, նա մեր մտքի սլացքի հետ է, մեր թևերի ազատ ճախրանքում, մեր սրտի տրոփյունի հետ, ամե՜ն-ամենուր...Եվ զգում եմ, որ նա մեր միակ ճշմարիտ ճանապարհն է, մեր իսկական անցած ու անցնելիք կյանքը:

Այսօր Զատկի տոնին միմյանց ողջունենք «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց» ավետիսով, պատասխանենք՝ «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի» օրհնաբանությամբ:

Օրհնյալ է Տերը, որովհետև վերջապես թոթափեցինք խորհրդային տարիներից մեզ վրա ծանրացած քրիստոնյա հավատքի ու եկեղեցական տոների կազմակերպման արգելքները: Ու այսօր եկեղեցական տոների դաստիարակչական հմայքը հնարավոր է դարձնում ոչ միայն ճիշտ մարդու, այլև ճշմարիտ քրիստոնյայի անձի դաստիարակումը:

http://www.usarmenianews.com/am-n-8652.html

2017-04-17

ՄԵՌԵԼՈՑԻՆ ԷԼ ՄՏՈՎԻ ԵՄ ԱՅՑԵԼՈՒՄ ԱՅՆ ՀԵՌԱՎՈՐ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ, ՈՐՏԵՂ ԻՄ ՄԻ ԿՏՈՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է ՄՆԱՑԵԼ

Ննջեցյալների հիշատակության օրն է… Լույս և խոնարհում բոլոր ննջեցյալներին:

Մտքերով ես այնտեղ եմ՝ այն հեռու-հեռուներում, որտեղ հանգչում են հարազատներս: Արցախյան պատերազմը մեզ հեռացրեց միմյանցից, ես դստերս հետ վերադարձա, մնացին նրանք օտարության մեջ: Ամեն անգամ այն հեռուներից երեք շիրիմ հառնում է իմ դեմ, և ես մտովի այցելում եմ նրանց…Գիտեմ, որ իմ հոգու տվայտանքներով շատերը կան, որ մտովի այցելում են իրենց հարազատներին, խոնարհումի խոսքեր ասում, այդ խոսքերի վշտահար բույրով ծաղիկներ խոնարհում նրանց շիրիմներին:

Հայկանուշ Ղահրամանյան: Տատս չէր սիրում իր փոքրիկ տնից դուրս գալ, ամեն օրվա գնալու տեղը դա մոտակա աղբյուրն էր, իսկ ամենահեռու տարածքն այն անտառն էր, որտեղից մենակյաց ու տարեց այդ կինը երբեմն ցախ էր հավաքում: Մեր մանկությունը նրա մոտ էր անցել, դպրոցական տարիներին մեր արձակուրդներն էլ գյուղում էին անցնում՝ տատիս մոտ՝ Մոխրաթաղում: Ու այդպես կարող էր հետագայում շարունակվել մեր կյանքը՝ Մարտակերտից մեր գյուղ՝ այդ յոթ կմ ճանապարհը կտրելով ու շաբաթ-կիրակի օրերն անցկացնելով այնտեղ: Բայց 92-ի պատերազմը տեղահան արեց նաև տարեցներին, այդ թվում տատիս, ով ութ տասնյակ տարի ապրել էր այդ գյուղում: Բռնագաղթի օրերին, անտառամիջյան կածանով հազիվ շարժելով ոտքերը, կրեց այն բոլոր դառնությունները, որ կանխորոշված էին անգամ իր տարիքի մեծահասակների համար: Հայրենի գյուղը, իր փոքրիկ տունը տատիս հետ էին միշտ, բայց հոգում տարավ նա, որ օտար հողում պահ տա իր կարոտը:

Միքայել Պողոսյան: Հայրս էլ հանգչում է այնտեղ՝ այն հեռու-հեռավոր գերեզմանոցում: Բռնագաղթի օրերին մենք կորցրինք նրան…Այն անտառամիջյան արահետներով, մացառները հետ քաշելով, ոտաբոբիկ քարշ էինք տալիս մեր հոգնած ոտքերը: Ջուր չկար, հացի մասին խոսելն ավելորդ էր, մտածում էինք միայն փրկվելու մասին, երբ մեր գլխավերևում թշնամու ինքնաթիռներն էին սավառնում: Մենք հասանք Ստեփանակերտ…Լույսը բացվելուն պես՝ գնում էինք փնտրելու հորս այն խառը մարդկանց մեջ, որ գյուղերից էին գալիս: Մենք փախստականներ էինք, բայց ոչ մեր կամքով, որ պիտակավորվեցինք: Եվ այդ փախստականների մեջ օրեր անց գտանք հորս՝ հողոտ, փոշու մեջ կորած, ում հազիվ ճանաչեցինք: Հետագայում նա ռուսական մեծ քաղաքի դառնությունները կրեց իր հոգում ու հանգավ այնտեղ՝ այն հեռավոր օտար հողում:

Արզիկ Ղահրամանյան: Մայրս հետդարձի ճամփան չտեսավ, երբ գիտեր, որ այն գերեզմանոցում իր մայրն է հանգչում՝ տատս: Նաև մայրս երբևէ հորս հանկարծակի մահվանը չհամակերպվեց: Քայլերը նրան անընդհատ տանում էին այդ գերեզմանոցը…Նա իրեն այնտեղ էր տեսնում՝ հարազատների կողքին: Բայց որքա՜ն փոքր է այդ տարածքն այն օտար հողում… Քույրս հեռուներից միշտ այցելում է նրանց, ծաղիկներ խոնարհում… Վառվող մոմերի առկայծումներում պատկերանում ենք մենք, որ հեռուներում ենք ապրում, և կարոտ կա մեր հոգում ու հեռուներում մնացած երեք շիրիմ:

Երեք կյանք, որ ընդհատվեց հարազատ հողի այրող կարոտից: Այո՛, կարոտից էլ են մեռնում...Այդպես էլ է լինում: Ես փախել եմ այդ հողից ծնված կարոտից և ամուր փարվել եմ նրան: Ու նրան չլքելու ուխտ եմ արել, և կարոտն այլևս ինձ չի այրում...

http://www.usarmenianews.com/am-n-8657.html

2017-04-18

ՆԱՄԱԿ ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻՆ ՈՒ ԱՍՏԾՈՒՆ

5-րդ դասարանում եմ: Մայրենիի դասաժամին նամակների բաժինն ենք ուսումնասիրում: Առաջարկում եմ նամակ գրել, իսկ նամակի հասցեատերը մեզ հարազատ դարձած զինվորն է, ով պաշտպանում է սահմանը, որպեսզի մենք ապահով լինենք թիկունքում: Ոոպեներ անց դասարանի աշակերտներից մեկը՝ Արթուր Ավթանդիլյանը, ձեռք է բարձրացնում: Ի զարմանք մեզ՝ ցանկանում է կարդալ իր գրածը:

Նա սովորաբար շատ հանգիստ է, պարզ ու ճշմարտախոս, մի քիչ ինքնամփոփ, միջակ կարողությունների տեր, բայց զարմացնում է մեզ իր անմիջական, պարզ ու մտերմական տողերով, որ գրել էր Հայաստանում ապրող մորաքրոջ որդուն՝ հարազատ զինվորին, ով ծառայում էր հայրենիքին:

«Սիրելի՛ եղբայր, տանը բոլորը քո մասին ենք մտածում և սպասում, թե երբ կվերադառնաս: Այնպե՜ս կուզեի, որ աչք թարթեի, երկու տարին անցներ, գնար: Ես գիտեմ, որ թշնամին, երբ փորձի սահմանը հատել, դու վեր կկենաս և հակահարված կհասցնես նրան: Ես ուզում եմ, որ իմ հայրիկի նման լավ ծառայես, ուզում եմ գնդակը քեզ երբեք չդիպչի, լավ լինես և զգոն, մենք քեզ շատ ենք սիրում: Ես գիտեմ, որ Տեր Աստվածը կլսի իմ աղոթքները և քեզ ու բոլոր զինվոր եղբայրներիս ողջ-առողջ կվերադարձնի տուն: Մեր մասին չմտահոգվես, մենք լավ ենք, շուտով ամառային արձակուրդներ կլինեն, ես տանը կասեմ, որ ինձ բերեն քեզ մոտ տեսակցության»:

Հազիվ այդքան էր հասցրել գրել, բոլորս լուռ ենք, ինքն էլ շատ ուշադիր սպասում է իր ուսուցչուհու խոսքերին, որ պիտի արտահայտեի նրան լսելուց հետո: Ու հանկարծ հարցնում եմ. «Եթե հանդիպես քեզ հարազատ զինվորին, ի՞նչ կնվիրես նրան»:

Նա անթարթ նայում է ինձ ու միանգամից ասում այն միակ բառը, որ երբևէ չէի սպասի նրանից. «Խա՛չ…Ես նրան խաչ կնվիրեմ…Բռանս մեջ պինդ բռնած՝ կտանեմ ու նրան կնվիրեմ»:

Հաջորդ օրը նա ինձ ներկայացրեց նոր տողեր, որ ավելացրել էր նամակին. «Սիրելի՛ եղբայր, դու մեր դպրոցում չես եղել, իսկ ես սովորում եմ Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցում, այստեղ ինձ շատ լավ ուսուցիչներ են դասավանդում: Եղբայրս էլ երկրորդ դասարանում է սովորում, արձակուրդներին կգանք քեզ տեսակցության: Երբ քեզ տեսնեմ, վազելով կգամ, քեզ կգրկեմ ու կնվիրեմ խաչ, որ Աստված քեզ ողջ-առողջ վերադարձնի տուն: Գիտե՞ս, դու հիմա ինձ չես լսում, բայց այս նամակի շնորհիվ կիմանաս, թե ինչ եմ զգում ես, երբ կողքիս չես: Նաև, երբ հանդիպենք, այսքանը չէի կարողանալու ասել, բայց դու ամեն ինչ կիմանաս, երբ կարդաս նամակս: Խաղաղ ծառայություն քեզ և բոլոր զինվորներին: Քո եղբայր Արթուր»:

Այս փոքրիկ, ազնիվ տղային առաջարկում եմ մի նկար ուղարկել ինձ և շուտով ստանում եմ այս մեկը, որ եկեղեցում է՝ մոմերի լույսերի տակ: Եվ հավատում եմ, որ Տեր Աստվածը կլսի նրա աղոթքները, որ մեր զինվորները ողջ-առողջ վերադառնան տուն:

http://www.usarmenianews.com/am-n-8672.html

2017-04-20

ԻՆՉԱՆԻՑ ՊՈԿՎԵՑ ՄԻ ԿԱՊՈՒՅՏ ԵՐԱՉ

Այս օրերին նրա հետ եմ, արցունքներիս արտացոլանքում նրա պատկերն է, անցած օրերում մեզանից հեռացած մի ազնիվ ու կենսուրախ կերպար, ով միշտ ուղեկցում է մեզ մեր վշտամորմոք հիշողություններում, որ ամեն անգամ ծառս է լինում մեր դեմ ապրիլյան այս ծանր օրերին:

Այդ բոթը ցնցեց բոլորիս: Կարծես երկինքը փուլ եկավ մեր գլխին, հողը շարժվեց մեր ոտքերի տակ, մի ամբողջ դպրոց պատեպատ զարկվեց: Դա մեկ ուրիշ ցնցում էր, նմանը չեղած ցնցում, և թվաց՝ աշխարհը ժաժ եկավ այդ դառը ցավից, որ սգավորի տեսքով մտավ դպրոցից ներս: Բայց դպրոցի պատերին զարկվող հարվածների ուժգնությունից անգամ մեր կծկված հոգիները չհանգստացան. աղիողորմ լացի ձայնը արձագանք էր տալիս ամենուր: Այդ մեծ վշտից կուչ եկանք, հայացքներս հառեցինք առ Աստված: Դա բողո՞ք էր, թե՞ աղերսանք, մենք էլ չգիտեինք, բայց կարծես փորձում էինք ետ վերադարձնել նրան, ով նպատակ ուներ Վերջին զանգի ու ավարտական երեկոյի համար նախատեսված գնումներ անել մեծ քաղաքում, բայց մնաց կեսճանապարհին:

Դպրոցում նրան չէի դասավանդում, բայց հայոց լեզվի անհատական պարապմունքներում ընդգրկված 12-րդ դասարանի աշակերտուհի Էլյանորա Առստամյանը, ով գալիս էր իմ տուն, ուշադրությանս արժանացավ իր անմիջականությամբ, ազնիվ ու անկեղծ մտքերով: Նա կենսախինդ մի կերպար էր, ում ներկայությունն անմիջապես շրջապատին ջերմություն էր բերում: Պրպտուն միտք ուներ, տնտղում էր բառը, մտնում հայոց լեզվի քերականական աշխարհի մեջ, ինձ տանում իր հետ, որ պարզաբանեմ ամեն մի մանրուք, այն, ինչ կասկածի տակ էր իր համար: Անհանգիստ հոգին ձգտում էր իմանալ ամեն ինչ, և ես հիացած էի նրա հետաքրքրասիրությամբ, ու այդ հիացմունքը պարզապես մեզանից անցնում էր մյուսներին, և այդ վարակը մեզ տանում էր հայոց լեզվի խորքերը:

Ես չգիտեի, որ դա մեր վերջին հանդիպումն է: Ափսո՜ս, չգիտեի… Երբ ասաց, որ հաջորդ պարապմունքին չի լինելու, մեկնում է Երևան, անակնկալի եկա, բայց նորից հանգստացա, երբ անմիջապես ավելացրեց, որ ընդամենը մեկ պարապմունք բաց կթողնի, մի քանի օրից ետ կվերադառնա: Երանի՜ թե իմանայի ու կանգնեցնեի նրան…

Այն վարակիչ հետաքրքրությունը հայոց լեզվի հանդեպ կարծես հանգավ: Ես փորձում էի մեղավորներ գտնել: Հետո, շատ հետո, այն աթոռին նստել եմ բազմիցս ու արտասվել, որ մնացել էր թափուր…Բայց հաջորդ ուսումնական տարում Էլյանորայի վշտահար քույրը՝ ավարտական դասարանում սովորող Աննան, եկավ: Եկավ ու զբաղեցրեց այդ աթոռը, իսկ մենք լուռ էինք… Լուռ էինք ու անխոս, միայն մեր հոգիներն էին ալեկոծված:

Էլյանորայի հայրենի Պողոսագոմեր գյուղում դպրոցի ուսուցիչներս աշակերտության հետ ապրիլի 24-ին մասնակցեցինք հուղարկավորության: Քնած էր նա անվրդով, քնած հավիտենական: Հորեղբոր կողքին էր նա, ով նույնպես այդ օրը նրա հետ վթարի զոհ էր դարձել: Աննկարագրելի էր՝ բառերով բացատրել բոլորիս ապրումները: Վերին բարձրյալին ուղղված աղիողորմ ճիչ էր, որ արձագանքում էր ամենուր:

Օրեր անց նրա աճյունը հարազատները տեղափոխեցին Մարտակերտի գերեզմանոց: Մասնակցում էի քառասուքի արարողությանը: Ջսպված արցունքներս աղաղակում էին, երբ գլխահակ նայում էի իրենց տնամերձ այգում Էլյանորայի աճեցրած բազմերանգ ծաղիկներին ու հայացքս հառում դիմացի բարձունքի գերեզմանոցին, որտեղ ծաղկեպսակներով պատված Էլյանորայի շիրմաքարն էր երևում: Թվաց՝ ինձանից պոկվեց մի կապույտ երազ, մկրատվեց նրանից փոխանցված անբռնազբոսությունն ու կիսատ մնացած պատմությունների կսկիծը...

Ես աշակերտուհի եմ կորցրել...

http://www.usarmenianews.com/am-n-8688.html

2017-04-23

ԱՐԾՎԻ ՄԻ ԹՌԻՉՔ ԸՆԴՀԱՏՎԵՑ ՀԱՆԿԱՐԾ

Սա մեկ ուրիշ ողբերգության սկիզբ է, ընտանիքի միանուագար որդու կորուստ, որ ցասման ահազանգ պիտի հնչեցնի ամենուր, ու մեր բնակավայրը մի նոր ընդհատված ճակատագրի մասին պիտի աղաղակի: Ես մանկավարժի ամենօրյա իմ գրառումների մեջ ուզում եմ դողացող մատներով կանգնեցնել շարվածքս, որ սգո բոթաբեր ցնցում է բերում, ուզում եմ փակել էջը, որ սարսուռ է դաջում՝ երիտասարդ կյանքերի կորստյան անեզր ցավով: Եվ իմ փնտրտուքների մեջ մի նկար եմ գտնում, որտեղ լուրթ երկնքի արտացոլանքում և կապույտ ծովի անսահմանությանը խառնված բազում երազներ կային, բայց մնացին անկատար…



Մի թանձր մառախուղ պատել էր հոգիներս, երբ նա մի մեր հիշողության մեջ արթնացավ դպրոցականի տեսքով: Մենք նրան տեսանք տարիների հեռվից. մտերիմների համար նա Հովիկ էր, ուսուցիչներիս համար՝ Հովհաննես Սահակյան: Ես նրան դասավանդել էի տարիներ առաջ՝ դեռևս 5-րդ դասարանում: Հետագա տարիներին նրան մի քանի անգամ տեսա հայոց լեզվի անհատական պարապմունքներում, իսկ հետո նրա և այդ դասարանի մյուս աշակերտների մասին լսում էի դասավանդող ուսուցիչներից:

Նիհար էր, բարձրահասակ, չարաճճի, հոգում՝ մանկական երազանքներ՝ ազնիվ ու մաքուր: Հետագայում՝ հասունանալուն զուգընթաց, նա ընկերական լուրջ միջավայր ուներ, առանձնակի հարգանք շրջապատում, որ նկատելի էր բոլորիս կողմից:

Դպրոցն ավարտելուց հետո նա իմ տեսադաշտում չկար, բայց գիտեի, որ բարձրագույնի գյուղատնտեսական բաժինն ավարտած Հովհաննեսը հայրենի եզերքի ցորենի արտերի ծփանքին է հայացքն ուղղել, որ հացը առատ լինի, երկինքը՝ խաղաղ: Ամիսներ առաջ մի քանի ուսուցիչների հետ էի, «անծանոթ» երիտասարդն առաջարկեց՝ նստել մեքենան՝ մեզ տուն հասցնելու համար: Նա անճանաչելի էր. սկզ-

բում չկարողացա կողմնորոշվել, բայց ծանոթ դիմագծերը և կողքից հնչեցրած «Հովիկ» անունը կարծես սթափեցրին ինձ, որ մեքենայի ղեկին նստածը մեր դպրոցի նախկին աշակերտն է:

Մարտակերտ մտնողներին սովորաբար ճանապարհի եզրի՝ թևերը փռած քարե արծիվն է ողջունում, որ խորհրդանշում է բարձունքներ տենչացող արծիվներին: Բայց ապրիլյան այդ օրը քարե պատվանդանից ոչ հեռու արծվի մի թռիչք ընդհատվեց հանկարծ, ավտովթարի զոհ դարձավ մի երիտասարդ կյանք, մեր դպրոցի շրջանավարտ, որ երազանքներ ուներ, հոգու թռիչք, գեղեցիկ ընտանիք ստեղծելու լավագույն ձգտում: Բայց այս անգամ նա չէր մեքենայի ղեկին…

Սինուճար եղբայր կորցրած քույրերի մահերգն է լսվում ամենուր… Որտեղի՞ց է գալիս երկրային վիշտը, որ անհոգ մարդուն հանկարծ դարձնում է վշտահար, և ո՞վ ունի քարանալու շնորհ, որ իր ներսում անխռով տանի այդ փոթորկված վիշտը: Հրաբխի ժայթքու՞մ է այն, որ երազանքներ է թևատում, երկնքի գոռո՞ց, որով չափվում է մահվան դեմ մարդու անզորությունն ու այդ նույն մահվանը դիմադարձ լինելու անխուսափելիությունը:

Ասում են՝ մահվան մեջ կյանք պիտի տեսնես, կյանքի մեջ՝ մահ՝ որպես բնության մշտանորոգ շարժում: Այդ ո՞ր մայրական սիրտը պիտի մահվան մեջ կյանք տեսնի… Ուզում եմ հակադարձել այս բնության մշտանորոգ շարժմանը, որ երիտասարդ կյանքեր է խլում, կործանում երազանքներ:

http://www.usarmenianews.com/am-n-8702.html

2017-04-25

ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՄ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Խուսումանս համաձայն՝ այս հարցը քննարկեցի նաև իմ դասավանդելիք դասարաններում, թե որքանո՞վ է ճիշտ, երբ դպրոցները կամ դասարանները կոչվում են ազգային հերոսների անուններով: Սահմանամերձ բնակավայր Մարտակերտում ապրող սերնդի համար նույնիսկ զարմանալի էր, որ այսպիսի հարցը կարող է տարակարծությունների առիթ տալ: Տարբեր դասարաններում միաբերան հաստատում են, որ դա գնահատանք է նահատակների հիշատակին, իսկ ես 12-րդ դասարանում ցանկանում եմ լսել նրանց առանձին-առանձին:

«Ի՞նչ, ուզում են, որ մեր հերոսների անունները մնան միայն գերեզմանաքարերի՞ վրա, այդ դեպքում ո՞վ պիտի նրանց հիշի իրենց հարազատներից բացի: Սերունդը ինչպե՞ս պիտի ճանաչի այդ նվիրյալներին…Պարզագույն մի օրինակ: Հորեղբայրս՝ Օնիկ Անդրյանը, Արցախյան ազատամարտի զոհերից է: Նա մինչև վերջին շունչը կանգնած է եղել իր հայրենիքի համար մղվող պայքարում: Ես ինքս առաջարկեցի՝ մեր դասարանը կոչել նրա անունով, իսկ մինչ այդ նրա մասին ոչ ոք տեղյակ չէր: Հիմա առանձնակի ուշադրության են արժանանում նրա ծննդյան և զոհված օրերը: Այսպես ենք մենք ճանաչել տալիս մեր հերոսներին» /Անդրյան Անգելինա/:

«Ես կասեմ ավելին…Յուրաքանչյուր դպրոցական պետք է իմանա մերօրյա հերոսների մասին: Կարծում եմ՝ կդադարենք գոյություն ունենալուց, եթե մոռանանք նրանց հիշատակը: Եթե անգամ խորհրդային տարիներից եկած վատ սովորություն են համարում անվանակոչումը, ապա ես կողմնակից եմ այդ «վատ» սովորության պահպանմանն ու սերնդեսերունդ փոխանցմանը» /Բաղրյան Իննա/:

«Դպրոցների և դասարանների անվանակոչումը լիովին արդարացված է, դա հարգանքի, ազգապահպանության ու հայրենասիրության դրսևորում է: Մեր ամեն մի խաղաղ օրվա համար այդ հերոսներին ենք պարտական: Չեմ հասկանում. դա հասուն, գիտակից մարդու մտածելակե՞րպ է, երբ հակառակվում են, թե ինչու են անվանակոչում նրանց անուններով: Այդ երևույթն ինձ հասանելի չէ» /Աղաբեկյան Սեյրան/:

«Մեր դպրոցը Վլադիմիր Բալայանի անունն է կրում, նա իսկական հերոս էր, և ես հպարտ եմ, որ հաճախում եմ այդ դպրոցը: Հիմա ես հարցնում եմ մարդկանց. «Եթե ոչ հերոսի, ով իր կյանքն է զոհել, ապա ու՞մ անունով պիտի կոչվեր մեր կրթօջախը»: Դուցե կոպի՛տ են հնչում խոսքերս, բայց սա ճշմարտություն է, որին հակադարձելն անմտություն կհամարեի» /Աննա Խաչատրյան/:

«Ես ապրում եմ սահմանին շատ մոտ, գիտեմ ինչ է հայրենիք պաշտպանելը, հերոս եղբայրներ ունենալը, ինչ է հայրենիքի համար կյանքը զոհելը: Բազում հերոսների ջահել կյանքեր են մկրատվել, ոչ մի բան չի կարող սփոփել նրանց հարազատների ցավը, սակայն մի փոքր արարքը՝ նրանց անուններով դպրոց կամ դասարան կոչելը, թեկուզ և հուշարձան կառուցելը, ինչ-որ չափով մեղմում է այդ կսկիծը: Չեմ հասկանում նաև այն մարդկանց, ովքեր ասում են, որ կյանքը շարունակվում է, դրանով նահատակներին հետ չեն բերի: Բայց գիտե՞ք՝ մարդն ինչպես է հպարտանում, երբ գիտի, որ իր կորցրած զավակին մեծարում են և հիշում» /Կարապետյան Արմինե/:

«Իմ կարծիքով՝ դպրոց կամ դասարան անվանակոչելը շատ չնչին «վարձատրություն» է մեր հերոսների անձնազոհության դիմաց, իսկ եթե մարդիկ կան, որ դեմ են արտահայտվում, առաջարկում եմ՝ մի որոշ ժամանակով տեղափոխվել սահմանամերձ տարածք, թող բնակություն հաստատեն այստեղ, հասկանան այդ «վարձատրության» գինը» /Ղուլյան Գեղեցիկ/:

11-րդ դասարանում սահմանափակվում եմ աշակերտուհիներից մեկի խոսքով. «Անցնում ենք Ավարայրի ճակատամարտ, գիտենք, որ անցյալը պետք է հիշվի, բայց ներկայում ապրիլյան հերոսներն են- …Ինչու՞ չներառել նրանց դպրոցական դասագրքերում «Մերօրյա հերոսներ» թեմայով, ինչու՞ չհիշատակվեն դասագրքերում Ուրֆանյանի, Սլոյանի, Աբաջյանի և շատ-շատերի անունները: Ես ապրում եմ այստեղ նրանց հիշատակով, և նրանք ինձ սովորեցրին, որ չվախենամ, ու ես վստահ եմ, որ 92-ի հաղթանակով ու Ապրիլյան քառօրյայով կվերջանա թշնամու ամեն մի ոտնձգություն» /Լուսինե Հակոբյան/:

Հնարավոր չէ բոլորի կարծիքները գրել այստեղ, բայց համոզված էի, որ սահմանին մոտ ապրող և պատերազմ տեսած սերունդն այսպես կարծագանքեր դպրոցների կամ դասարանների անվանակոչման մասին, որ առաջին հերթին այս հողի համար իրենց կյանքը զոհաբերած մեր հերոսներն են արժանի նման պատվի՝ որպես հիշողության արթնացում սերունդների հոգում:

Հանգիստ հոգոց եմ հանում, որովհետև շնորհակալ ու երախտագետ լինելուց են սնվում մնացած բարձրակարգ և ինտելեկտուալ զգացումները:

http://www.usarmenianews.com/am-n-8709.html

2017-04-26

ՏԱՌԱՊԱՆՔԻՑ ԾՆՎԱԾ ԿԵՐՊԱՐ

Արտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի գրադարանն այն ջերմ միջավայրն է, որ մեզ՝ ուսուցիչներիս, ազատ դասաժամերին տանում է իր գիրկը: Լորա Միրզոյանը դպրոցի գրադարանավարուհին է, ազնիվ ու ջերմ բնավորությամբ մի անհատականություն, ով քսան տարուց ավելի է, ինչ իր գործի անշահախնդիր նվիրյալն է, աշակերտների հետ մտերմական ու հարգալից, սիրված ուսուցիչների կողմից: Մենք երբեմն նրա հետ խուսափում ենք խոսել իր անցած դառնակսկիծ օրերից, բայց գիտենք, որ իրար հետևից ծնվող թոռնիկների՝ ծլարձակող նոր սերնդի ուրախությամբ ապրող նրա ջինջ հոգում անցյալի հետքեր կան ծանր:

Երեք մանկահասակ երեխաների մայր էր, երբ զոհվեց ամուսինը՝ ներքին գործերի բաժնի աշխատող Վանիկ Միրզոյանը: Երեխաներից մեծը՝ Արմինեն, չորս տարեկան էր, Արմենը՝ երկու տարեկան, իսկ կրտսեր դուստրը՝ Վարսիկը, տասը ամսական: Մի թանձր մշուշ պատում է հոգիս, երբ գիտեմ, թե ինչպիսի դժվարությամբ է մեծացրել այս երեխաներին, որոնց դասավանդել եմ դպրոցում, իսկ այսօր նրանք ունեն ընտանիքներ՝ իրենց հոգում ունենալով անհայր մեծանալու կնիքը:

Այդ օրվա զրույցը Լորայի հետ ես խախտում եմ իմ հարցումներով: Անցյալի դառը հիշողությունները կսկիծով են լցնում նրա հոգին: Համարյա քսանհինգ տարի առաջ էր…Վեց տարվա ամուսնական կյանքն ավարտվեց. «Տաս օր տեղեկություն չունեինք Վանիկից, մենք կարծում էինք նա գերի էր ընկել: Բայց հետո եկավ ու պատմեց, որ նույնիսկ անասունների ոտնահետքերի ջրից էին խմել…Վերջին հանդիպումը ամենից ծանրն էր: Նա համբուրեց երեխաներին՝ կարծես գիտակցելով, որ էլ չի հանդիպելու: Այդպես էլ եղավ: Սկզբում լսեցինք, որ վիրավորվել է: Պարզվեց՝ զոհվել էր…Դա 1992-ի օգոստոսի 18-ն էր»:

Ծանր հիշողությունը խեղդում է կոկորդը, նա սրբում է արցունքները: …Երկուսս էլ լուռ ենք, ու այդ լռության մեջ միայն արցունքներն են

թեթևացնում անցյալի վիշտը: Բոպեներ անց խախտում եմ լռությունը, շարունակվում է կիսատ մնացած մի տխուր պատմություն. «Վանիկի հուղարկավորությունը Հայաստանում էր՝ Էջմիածնում: Ես էլ երեխաների հետ այդ պատերազմական օրերին այնտեղ էի…Բայց 95-ին վերադարձանք Արցախ, հետո Վանիկի աճյունը տեղափոխվեց հայրենի գյուղի՝ Աղաբեկալանջի գերեզմանոց...Մասնակցել է Մարտակերտի շրջանի Այգեստան, Քաջավան, Մարաղա, Մաղավուզ, Մեծ շեն բնակավայրերի պաշտպանական մարտերին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով»:



Մարդկային վիշտն այն զորավոր ուժն է դառնում, որ մարդը կարողանում է հաղթահարել: Այդ ցավի հաղթահարումից ծնվում է մի ներքին հպարտություն: Ինչպե՞ս կարողացավ միայնակ մայրը, հոգու խորքում զսպելով իր մեծագույն տառապանքը, միայնակ մեծացնել երեք անչափահաս երեխաներին: Մի հարվածով կամ մի քանի տողով հնարավոր չէ պատկերել այդ արժանապատիվ կնոջ կերպարը, ով կարողացավ այդ ցավն իր մեջ խեղդել ու երբևէ չարտահայտել այն հոգու ընդվզումները, որ ապրեց նա այդ տարիներին: Ապրած ցավալի զգացումը երբեմն անբացատրելի է դառնում, երբ մարդը, հոգում ունենալով հակադիր զգացումների խառնուրդ, ապրում է լացի ու ծիծաղի ներդաշնակությամբ, նաև անորոշության՝ սիրտ ճնշող տագնապով՝ հոգում այն մեծ ճշմարտությունը, որ մարդն անցյալի ու ներկայի բարձրակետում է, այն միակը, որ կարողանում է դառնալ կեցության չափանիշ՝ գալիքի նկատմամբ ունեցած լավագույն երազանքներով:

Այստեղ թոռնիկներ կան, նոր կյանքի հավատ, բարի հույսերի հրվանդան, որ մայրն իր հոգու անսպառ սերը շարունակում է տարածել իր մեծացրած երեխաների ստեղծած գեղեցիկ ընտանիքներում:

Տառապանքից ծնված կերպար... Քանի՞ այսպիսի կերպարներ են ծնվել Արցախյան պատերազմից հետո: Մռայլվում են մտքերս, խճճվում պատերազմից ծնված ողբերգական ու գեղեցիկ դրվագները:

http://www.usarmenianews.com/am-n-8713.html

2017-04-27

ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ԱՆՀԱՅՏ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Այս տարածական աշխարհը մի նոր միջավայր է, որտեղ մարդկային լավագույն կերպարների հետ ենք առնչվում, երբեմն ընկերանում մեկի հետ, ով պարզվում է՝ բարեկամուհիդ է, հարազատ մարդ: Այդպես էր Սվետլանա Հովհաննիսյանի հետ մեր պատահական ծանոթությունը, և այն տարավ մեզ անցյալի գիրկը: Իմացա, որ ավարտել է Մարտակերտի հ.1 միջնակարգ դպրոցը դեռևս 1969 թվականին: Հետագայում բարձրագույնի կրթությանը համատեղել էր աշխատանքային գործունեությունը մեր շրջանի Կարմիրավանի, Ջրաբերդի դպրոցներում, իսկ ընտանիքը Երևան տեղափոխվելուց հետո աշխատել է 117-րդ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի:

Ամիսներ շարունակ, կարելի է ասել, ականատես եմ վաստակաշատ մանկավարժի հայրենասիրություն տարածելու նվիրական ոգուն, ազնիվ հայուհու դրական մղումներին: Մեծ է Սվետլանայի վիշտը, երբ անհայտ կորած եղբայր կա հոգում՝ Գառնիկ Հովհաննիսյանը, ով սկզբնական կրթությունն ստացել է նույնպես Մարտակերտի միջնակարգ դպրոցում՝ այստեղ սովորելով մինչև 7-րդ դասարանը: Այնուհետև ընտանիքը տեղափոխվելուց հետո նա իր ուսումը շարունակել է մայրաքաղաքի Տերյանի անվան դպրոցում, իսկ բարձրագույն կրթություն է ստացել՝ ավարտելով Երևանի ժողտնտեսության ինստիտուտը:

Այսօր՝ ապրիլի 27-ին, Գառնիկի ծննդյան օրն է, և ես ցանկանում եմ շնորհավորել, նաև հասկանալ հարազատների կսկիծը, որ տարիներ շարունակ քույրերը հայացքները հառել են դեպ անհայտություն, սպասել հարազատ եղբոր վերադարձին: Ծերացած մայր կա այդտեղ, մազերի ճերմակության մեջ անհաշիվ սպասումներ խորտակված, սրտի մրմուռ կա այդտեղ ու հավատ քարացած: Անհայտ կորած մի երիտասարդ կյանք, հավերժությանը գամված արդարության ճիչ, որ քառորդ դար սպասում են վերադարձին: Ու նորից մի նոր ծննդյան տարեդարձ, նորից սրտահույզ սպասում…

Ես Սվետլանայից իմանում եմ, որ եղբայրն անհայտ կորել է 1992թ.-ի հունիսի 13-ին Շահումյանի շրջանում (Բուզլուխ) մարտական գործողությունների ժամանակ: Ու տեսանելի է դառնում մի հարուստ կենսագրություն, որ հպարտությամբ լեցուն է, բայց արցունքախառն ու վշտալի. «88-ի փետրվարից նա ազատագրական շարժման մասնակիցներից էր, Գառնիկն այնտեղ էր, որտեղ զգացվում էր իր կարիքը և ամեն կերպ ջանում էր անհնարինն անել, որպեսզի վերականգնվի պատմական արդարությունը: Իսկ 88-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի սարսափելի օրերին սրտի կսկիծով միացավ աղետի գոտու փրկարարական աշխատանքներին: 89-ին հայրենի հողի կանչով Արցախում էր. աշխատանքի էր ընդունվել Ստեփանակերտում: Այդ ընթացքում Հայաստանի տարբեր շրջաններում կազմավորված կամավորական ջոկատները Շահումյանը պաշտպանում էին թշնամու ոտնձգություններից: 1990թ. Գառնիկն արդեն Շահումյանում էր: Լինելով ՀՅԴ անդամ՝ նա միանում է Կարոտ Մկրտչանի հրամանատարությամբ գործող ջոկատին, մասնակցում Մանաշիդ, Էրքեջ, Բուզլուխ և մյուս գյուղերի պաշտպանությանը: Մինչև 1992թվականը Գառնիկը մնում է այդտեղ՝ այդ ընթացքում մասնակցելով տեղի հայ բնակչության անդորրն ապահովող բոլոր մարտական գործողություններին»:

Ցավախառն մի պատմություն արձագանքում է ամենուր. «Հունիսի 12-ի լույս 13-ի գիշերը Գառնիկի և ջոկատի մյուս տղաների համար ճակատագրական դարձավ: Ավելի քան ութ ժամ մարտնչելուց հետո և անհրաժեշտ տեխնիկայի բացակայության պայմաններում, այլևս ելք չունենալով, տղաները ճարահատյալ թողնում են դիրքերը և նահանջում: Գառնիկն աջ կողքից ծանր վիրավոր էր, նա հրաժարվում է նահանջել և մնում է հենակետում, նրա հետ մնում է նաև իր ընկերը՝ Ալիկը: Քիչ անց Ջամբազի բարձունքը հեղեղվում է թշնամու զինվորներով…»: Ավարտվում է մի կյանք, որ անհայտության մեջ է, բայց նրա մասին տողեր կան հավերժացած, գալիքին հառած մի հերոսացած կյանք, որ ինձ է ուղարկում քույրը՝ հոգում անթեղած մի դառնակսկիծ վիշտ. «Հայրենիքի պաշտպանության ժամանակ ցուցաբերած

անձնական արիության համար Գառնիկ Հովհաննիսյանը հետմահու պարգևատրվել է ՀՀ «Արիության համար» և ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալներով: Նա զոհեց իր մատաղ կյանքը, որպեսզի հայը վերականգնի իր հայրենիքում արժանապատվորեն ապրելու իրավունքը՝ թոթափելով թշնամու պարտադրած անարդարությունն ու նվաստացումը: Գառնիկի անցած ճանապարհն ուղենիշ կդառնա եկող սերունդների համար և անջնջելի հետք կթողնի մեր պատմության հուշամատյանի լուսավոր էջերում»:

Սիրելի՛ Գառնիկ, Քո տեղը երբևէ թափուր չի մնա, որովհետև Դու հպարտությամբ ես լցնում մեր հոգիները, և մեր հիշողությունը մշտանորոգ է...

http://www.usarmenianews.com/am-n-8723.html

2017-04-28

ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՏԵՂ «Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ» ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂՈՒՄ

Ստեփանակերտի «Եվրոպա» հյուրանոցում անցկացվեց «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի հանրապետական փուլը, որը կազմակերպվել էր ՀՀ նույնանուն խաղի նախագահ Տիգրան Քոչարյանի և Արցախում այդ խաղի նախագահ Սերգեյ Մելքումյանի նախաձեռնությամբ: Մասնակցում էին Արցախի բոլոր շրջաններից և մայրաքաղաքի չորս դպրոցներից, ընդհանուր կազմով՝ տասներկու թիմ: Մարտակերտի շրջանը ներկայացնում էր Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի «Ջրաբերդ» թիմը՝ մասնակցությամբ պատմության ուսուցիչների և աշակերտների: Երրորդ մրցանակային տեղին արժանացավ մեր դպրոցի թիմը և հաջող ելույթի արդյունքում արժանացավ դիպլոմի, ստացավ հուշանվեր ու գրքեր:

Դպրոցի պատմության երիտասարդ մասնագետները՝ մեթոդմիավորման նախագահ Արշալույս Գաբրիելյանի հետ տարիների ընթացքում միշտ էլ մասնակցել են տարբեր ինտելեկտուալ մրցույթների: Այս անգամ էլ զարմանալի չէր երիտասարդ ուսուցիչներ Արսեն Գասպարյանի և Էրիկ Ավանեսյանի մասնակցությունն այս մրցաշարին, երբ թիմի մեջ ընդգրկված էին նաև չորս տարբեր դասարանների աշակերտներ: Հպարտության զգացում ունեմ, որ երիտասարդ ուսուցիչները մեր դպրոցի աշակերտներն են եղել ու տարիներ առաջ դասավանդել ենք նրանց: Շնորհավորանքի խոսքից հետո զրուցում եմ նրանց հետ, լսում բոլորի կարծիքներն ու ստացած տպավորությունն այդ միջոցառումից:

Գասպարյան Արսեն-ուսուցիչ: «Շնորհակալություն եմ հայտնում մեր աշակերտներին, որ կարողացան արդարացնել իրենց ու մեր հույ-

սերը: Այստեղ ոչ այնքան ստացած գիտելիքին է տեղ տրվում, որքան նրանց աշխարհաճանաչողությանը: Ամուր տրամաբանություն է պետք, որը կասկածի տակ չէր, նաև ուրախ եմ, որ նրանց մեջ Արթուրին ու Սաթինեին դասավանդում եմ: Ես զգուշացրել էի, որ մենք գնում ենք մասնակցելու այդ խաղին, ամենևին չէի մտածել հաղթելու մասին, բայց համոզվեցի, որ մեր երեխաների ինտելեկտը շատ բարձր է: Սա անակնկալ էր, բարձր մակարդակով կազմակերպված միջոցառում, որտեղ տարբեր տարիքի մասնակիցներ կային: Շատ մեծ հիացմունք եմ ապրել, շնորհակալ եմ նաև միջոցառման կամակերպիչներին»:

Ավանեսյան Էրիկ- ուսուցիչ: «Տպավորությունս շատ դրական է ու բարձր, քանի որ ձևաչափը փոխված էր այս անգամ, նույն թիմում խաղին մասնակցում էին ուսուցիչներ և դպրոցականներ: Հաճելի էր տեսնել աշակերտների ակտիվությունը, նույնիսկ որոշ չափով՝ նրանց առավելությունը ուսուցիչներից: Մարդու տեղեկացվածությունն է ստուգվում աշխարհից, դպրոցի գիտելիքները կապ չունեն այստեղ: Միշտ ամեն մի նոր բան վերցնում ես տարբեր միջոցառումներից: Սկզբում այդքան էլ տրամադրված չէինք, որ կարող է հաղթենք, բայց խաղի ընթացքում ոգևորությունը բազմապատկվեց»:

Օհանյան Մերի-դպրոցական: «Բարձր մակարդակով կազմակերպված խաղ էր, կցանկանայի հաճախակի լինեին, ընդգրկվեին նաև այլ դպրոցներ: Հարցերը հետաքրքիր էին, տրամաբանական, սիրով կմասնակցեի նմանատիպ այլ միջոցառումների, ավելացնեի գիտելիքների իմ իմացությունը: Ինքնակրթության արդյունք է այն, որը նպաստում է աշխարհընկալման զարգացմանը: Միայն աշխարհաքաղաքական հարցերի ընկալումով մարդը կարող է նման հաղթանակ արձանագրել, շատ ուրախ եմ, որ կարողացանք գրավել մրցանակային 3-րդ տեղ: Շնորհակալություն եմ հայտնում կազմակերպիչներին, թող այն շարունակական լինի»:

Բալասյան Արթուր-դպրոցական: «Պրոֆեսիոնալ ձևով էր կազմակերպված, որը տարբերվում էր մեր մասնակցած նախորդ բոլոր միջոցառումներից: Ամենևին մտքովս չի անցել, որ հաղթանակ կարձանագրենք: Մենք դպրոցում ուրբաթ օրերին պատմության ուսուցիչ Գասպարյանի հետ անդրադառնում ենք ինտելեկտուալ հարցերի, և մեզանից յուրաքանչյուրը տարբեր ոլորտներ է ուսումնասիրում: Ես ավելի շատ հակված եմ դեպի ժամանակակից տեխնոլոգիաները: Կարելի է ասել՝ մենք ավելի խորն էինք ուսումնասիրել, քան պատկերացնում էինք: Ամենաքաղցր մասն այդ խաղի ժամանակ այն է, երբ հարցի պա-

տասխանն ուղարկում ես, մտածում, որ սխալ կլինի, բայց պարզվում է՝ ճիշտ է»:

Մովսիսյան Սաթինե-դպրոցական: «Երեք փուլով ընթացավ խաղը, առաջին փուլում ամենաշատ միավորն էինք հավաքել, հետո դժվարացան հարցերը: Այդտեղ նշանակություն չունի, թե դպրոցում ինչքան գիտելիքներ ես ձեռք բերել կամ ինչ մասնագիտություն ես ընտրել ապագայի համար: Կարևորը մտածելակերպն է, նաև՝ հետաքրքրությունները: Ես ֆուտբոլով չեմ հետաքրքրվում, բայց այնտեղ հարցեր կային դրա մասին, նաև աշխարհի ամենահայտնի տեսահոլովակից, արտասահմանյան ֆիլմերից, դերասանների մասին, աշխարհագրությունից: …Ինտելեկտուալ խաղերի շուրջ իմ մտահորիզոնը զարգացնելու համար հետաքրքրություններիս ընդլայնումն ամենևին չի խանգարում դասերին, սիրով եմ մասնակցում մեր ուսուցիչ Գասպարյանի կողմից նախատեսված ուրբաթյան հանդիպումներին, նաև սիրում եմ ընդարձակել իմացությանս շրջանակները»:

Ղահրամանյան Տաթև-դպրոցական: «Նախ պետք է կարևորել հարցի էությունը: Ինտելեկտուալ խաղերը տարբեր նպատակներ են հետապնդում, այդտեղ մեկ բառը կարող է փոխել ամեն ինչ: Շատ կարևոր է մեր պահելաձևն այդտեղ, սխալ պատասխանելու դեպքում չպետք է կոտրվել, նաև իրավիճակը կտրուկ կարող է փոխվել…Ես տարբեր ժամանակներում նմանատիպ խաղերի հաճախակի եմ մասնակցել: Միակողմանի չէ իմ մտածելակերպը, հենց իմ բազմակողմանի հետաքրքրասիրությունն է նպաստել, այս անգամ էլ իմ ընթերցած լրացուցիչ գրականությունն է օգնել՝ գտնելու հարցի պատասխանը: Կյանքում երբեմն պետք է կտրվել դպրոցական ծրագրային թեմաներից, շատ լավ կլինի՝ մեր կյանքը լցնենք ինչուներով և կարողանանք գտնել դրանց պատասխանը»:

Իմ զրույցը բոլոր մասնակիցների հետ եզրափակվում է ուսուցիչ Արսեն Գասպարյանի սրտաբուխ խոսքով. «Այս երեխաների ցավը տանեմ, լավն են շատ», ու նրա հիացական զգացողությունը փոխանցվում է ներկաներիս, որ կարծես հնչում է որպես օրհնանք, սերնդին ուղղված մի նոր պատգամ՝ ինտելեկտուալ նոր հաղթանակներ ամրագրելու ճանապարհին:

http://www.usarmenianews.com/am-n-8726.html

2017-04-29

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԲԵՐԿՐԱՆՔ

Վերջերս մի նոր հաջողություն գրանցեցին Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի երկու աշակերտուհի աշխարհագրության առարկայական օլիմպիադայում: Դպրոցի միակ աշխարհագրության ուսուցչուհի Նունե Գասիյանի հետ եմ զրուցում, ով տարիներ շարունակ ազնիվ նվիրումով սերունդներ է ուսուցանել և դաստիարակել: Նրա խոսքում հուզմունք կա, նաև՝ հպարտություն դպրոցականների հանդեպ, ովքեր արդարացրին ուսուցչուհու ջանքերը և իրավունք ստացան մասնակցելու հայաստանյան առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

Դա այն գեղեցիկ զգացողությունն է, որ երբեմն նույնիսկ մոռանում ես քեզ ուղեկցող ֆիզիկական ցավը և սևեռվում ես այն միակ կետին, որը պիտի ամրագրի մի նոր հաղթանակ: Եվ նրա խոսքում նկատելի է ուրախություն այս տարվա նորարարության հանդեպ, որ առարկայական օլիմպիադայի շրջանային փուլի գրավոր աշխատանքներն անմիջապես ուղարկվել են Հայաստան…Պարզվում է՝ նրա հինգ տարբեր դասարանների աշակերտներից չորսը մասնակցել են առարկայական օլիմպիադայի Արցախի հանրապետական փուլին: Այստեղ 3-րդ կարգի դիպլոմի և դրամական պարգևի արժանացած Նորա Գրիգորյանը և ակտիվ մասնակցության համար պատվոգիր ստացած Լիլիթ Այվազյանը մասնակցել են ՀՀ առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

Ես զրուցում եմ նաև այս աշակերտուհիների հետ, ովքեր այդ հանձնաժողովի նախագահ Արսեն Գրիգորյանի կողմից ակտիվ մասնակցության համար արժանացել են պատվոգրերի ու ստացել վկայականներ:

Նրանց կարծիքով, այդ հաջողությունը աշխատասիրության, նպատակասլացության արդյունք է, իսկ այդ ընթացքում մեծ աշխատանք է տարել դասավանդող ուսուցչուհին: Նրանց՝ երկուսի խոսքում նկատելի է անթաքույց հիացմունք ուսուցչուհու հանդեպ, երբ կարճ ժամանակում ամրագրվեց մի նոր հարաբերություն և հասցրին ծանոթանալ մարդու մի նոր տեսակի հետ, ով միայն դասավանդող չէր, այլ ընկերական էր նրանց հետ, ջերմ ու մտերիմ: Դրա վառ ապացույցը Գասիյանին մատուցած նրա ծննդյան օրվա անակնկալն էր, այն ուրախ միջավայրը, որ ստեղծել էին Արցախից, Սյունիքից, Լոռուց և Գյումրիից եկած աշակերտներն ու նրանց ղեկավարները:

Աշակերտուհիների խոսքում նաև ներողամտության հայցում կար բոլոր այն ուսուցիչներից, ովքեր այդ օրերին հանդուրժել են իրենց բացթողումներն այլ առարկաների պարապմունքներից: Եվ ահա առանձին-առանձին լսում եմ նրանց. «Ես հաղթելու նպատակով եմ մասնակցել այդ օլիմպիադային, պարտավորվածության զգացումով: Սկզբում անհանգիստ էի, որ կարող է առաջին փուլը չանցնեմ, բայց երբ ծանոթացա հարցերին, զգացի, որ հարցաշարն այդքան էլ դժվարություն չի ներկայացնում, ու 20 միավորից վաստակեցի 17-ը և իրավունք ստացա՝ մասնակցելու երկրորդ փուլին: Ասեմ, որ նպատակս է՝ այդ ուղղությամբ շարունակել ուսումս բարձրագույնում, սիրում եմ այդ առարկան»: /Գրիգորյան Նորա, 10-րդ ա դասարան/:

«Ամենևին չէի սպասում, որ կհայտնվեմ հայաստանյան օլիմպիադայի եզրափակիչ փուլում: Սկզբում շատ լարված էի, բայց պարզվեց՝ ավելին ենք պատրաստվել, քան այդ հարցերն էին, և 16,5 միավորով անցա երկրորդ փուլ…Մասնագիտության հաշվով դեռ չեմ կողմնորոշվել, բայց այս հաջողությունից հետո տրամադրված եմ լավ ուսումնասիրել այդ առարկան»: /Այվազյան Լիլիթ-10-րդ բ դասարան/:

«Խմբի ղեկավարն էի, Արցախից տասը դպրոցական իրավունք ստացան մասնակցելու օլիմպիադայի հայաստանյան եզրափակիչ փուլին: Շատ տպավորված եմ, հուզվել եմ, ուրախացել, որ արդյունավետ էր մեր աշխատանքը: Առաջին փուլը տեսական էր, երկրորդը՝ գործնական: Ուսանելի հանդիպում էր, դա մի նոր շրջապատ էր, նոր շփում, կարելի է ասել՝ փորձի փոխանակում էր աշխարհագրության տարբեր մասնագետների հետ: Այդտեղ մի նոր ուրախալի փաստ էլ արձանագրվեց: Մեր դպրոցի աշակերտուհի Գայանե Մկրտչյանը, ում

հինգ տարի դասավանդել եմ, բայց ապրիլյան պատերազմից հետո տեղափոխվել էր Գյումրի, մասնակցեց եզրափակիչ փուլին, ինքն էլ, ձեռքբերած հաջողության արդյունքում, արժանացավ պատվոգրի»: /Գասիյան Նունե, ուսուցչուհի/:

Մի առանձնակի սիրով նա պատմում է իրեն մատուցած անակնկալի մասին, իսկ ես, տարիների ընթացքում օլիմպիական հաղթանակի բերկրանք ապրած ուսուցչուհուս համակած ուրախ զգացողությամբ, ի տես բոլորի՝ այս կայքից նորից շնորհավորում եմ իմ գործընկերուհի Գասիյանին և նրա աշակերտուհիներին՝ համոզված, որ նոր սերունդն իրենց ուսուցչուհուն մատուցած ծննդյան օրվա անակնկալով հաղթանակներ դեռ շատ կունենա:

http://www.usarmenianews.com/am-n-8730.html

2017-05-01

ԻՆՉՈՒ՞ ՄԱՅԻՍԻ 1-Ի ՏՈՆԱԿԱՆ ՕՐՎԱ ՇՈՒՆՉ ՉԿԱ

Մայիսի 1-ն աշխատանքի և աշխատավորների միջազգային տոն է համարվում, հիշենք, որ խորհրդային տարիներին այն ուղեկցվում էր մեծ շուքով ու շքերթով: Մեր օրերում այդ տոնը կարծես արժեզրկվել է, այն դարձել է ուղղակի ոչ աշխատանքային, հանգստյան օր: Մարդն իր գոյությունը կարողանում է պահել աշխատանքով, վաստակած աշխատավարձով. սա չափազանց կարևոր հանգամանք է, որ առանց աշխատելու հնարավոր չէ ապրել. խոսքս այն ձրիակեր փոքրամասնությանը չի վերաբերում: Նկատելի է, որ հնուց եկած այս տոնական օրը մեր օրերում անտեսվում է շատ-շատերիս կողմից: Փորձում եմ ուշադրությունս սևեռել այլ տոնական օրերի, որոնց դեպքում մեզանից յուրաքանչյուրն ինչ-որ նախապատրաստություն է տեսնում. դա լինի Նոր տարի թե Մարտի 8 կամ մեկ ուրիշ տոնական օր, որ նույնպես գալիս է հնուց:

Որտե՞ղ փնտրենք այս անտարբերությունը, որ առկա է մեր շրջապատում: Դա անգործության մատնված մարդկանց բանա՞կն է ստիպում մեզ մոռացնել տալ այս օրվա տոնական շունչը թե՞ աշխատավորների նվազ աշխատավարձը կամ անաշխատունակների գոյությունքարշ տալը: Ի՞նչն է ստիպում մարդկանց՝ անտեսել այդ օրվա խորհուրդը. գուցե այն սուղ, ծաղրի արժանի թոշակնե՞րն են պատճառը, որ օր ծերության մի քանի տասնյակ տարիներ աշխատած ու հանգստի գնացած մարդիկ «մուրացիկի» կյանք են վարում՝ չիմանալով ինչպես գոյատևել իրենց հասանելիք այդ նվաստացուցիչ գումարով:

Ես ապրում եմ սահմանամերձ բնակավայրում, իմ շրջապատում իրենց հոգսերով տարված մարդիկ եմ տեսնում, որ երազում են միայն խաղաղ երկինք ունենալ, իմ առջև նստած դեռահասներն ուրախ են շատ, որ մի օր ավելի են հանգստանում, բայց չկա տոնական շունչ այնպես, ինչպես ծաղկառատ Ապրիլի 7-ն էր, որ անտարբեր, հոգսաշատ մարդուն անգամ արթնացնում է: Օրեր հետո Մայիսի 9-ի հաղթա-

նակի օրը կգա, շատ մեծ շուքով կնշվի օրը, մարդիկ կայցելեն հուշարձաններ, ծաղիկներ կխոնարհեն՝ հարգելով նահատակների հիշատակը, կհիշեն բոլոր կենդանի հերոսների անցած և անցնելիք մարտական ճանապարհը:

Ու նորից Մայիսի 1-ը կմնա աշխատավորներիս աչքից հեռու, ստվերի տակ մնացած մի օր, որտեղ արարման շունչ չկա, անտարբերության շղարշով պատված մի սովորական օր, որ հնուց է եկել, բայց խամրած հիշողությամբ է հագեցած:

Այս մայիսմեկյան տոնական օրվա շունչը փորձում եմ գտնել օր օրի թանկացող խանութներում, որտեղ սպառվում են մեր համեստ աշխատավարձերը, հանրային սպառման կետերում, որտեղ պետական տուրքեր ենք մուծում, վարկերի մեջ թաղված աշխատավոր մարդկանց լուռ հայացքներում: Այս տոնական օրվա բերկրանքը ես փորձում եմ գտնել ինձ հյուր եկած բազմազավակ մոր աչքերում, որ վրդովված պատմում է աշխատանք չունեցող, անգործության մատնված ամուսնու մասին, ով ստիպված ուզում է օտարության մեկնել: Մայսիսմեկյան այս օրը ես ցանկանում եմ բարեկեցիկ կյանք մաղթել բոլորին, բայց հայացքս ուղղվում է այն թոշակառու միայնակ կնոջը, որ աշխատավորների օրն իր վերջին կոպեկներն է հաշվում: Ես հայացքս փախցնում եմ բոլորից ու նայում եմ երկնքի կապույտին, որ խաղաղ լինի երկնակամարը, թեկուզ և մայիսմեկյան տոնական օրվա խամրած հիշողությամբ:

Այո՛, աշխատանքն այլևս պետք է դառնա հոգևոր պահանջմունք, որպեսզի աշխատավորի տոնը պսակվի ոգևորությամբ:

http://www.usarmenianews.com/am-n-8737.html

2017-05-02

ԴՊՐՈՑ ԿԱՌՈՒՅՈՂ ԲԱՐԵՐԱՐՆ ՈՒ Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ «ՄԱՄՓՐԵ ԱՐՔԱՆ»

Արտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի առաջին հարկում գտնվող համակարգչային դասասենյակը տարիների պատմություն ունի: «Հայաստան» համահայկական հիմնադրամի՝ Տորոնտոյի վարչության առաջին հիմնադիր-ղեկավար Մկրտիչ Մկրտիչյանի նախաձեռնությամբ է տարիներ առաջ վերանորոգվել, ապահովվել համակարգիչներով: Այն ժամանակ հազվագյուտ ընտանիքներում համակարգիչներ կային, նման բարեգործությունը հիացմունքի արժանացավ, առանձնահատուկ հետաքրքրություն ծնվեց, թե որքանով կլինեն հագեցած մեր դասերը, երբ ժամանակակից տեխնոլոգիաներով առաջնորդվենք:

Դա մի նոր թարմություն էր բարերարի կողմից, սակայն համացանցի անհասանելի լինելը կամ թույլ կապը մեզ երբեմն հնարավորություն չէին տալիս՝ վայելելու այդ բերկրանքը: Ժամանակի ընթացքում այդ համակարգիչների մի մասը գործածությունից դուրս եկավ, բայց այդ դասասենյակը մնաց բոլորիս համար մի հարազատ անկյուն:

Այդ դասարանի հետ կապված հայ մարդու անուն կա, որ դարձել է շատերի բարեկամը, իսկ տնօրեն Լիդիա Պետրոսյանի համար նա եղբայր է, հարազատ մարդ, ում երկարատև տարիների անձնվեր գործունեությունը՝ ի նպաստ Հայաստանի և Արցախի զարգացման, ակնհայտ ու ողջունելի է մոտ քառորդ դար:

Դպրոցում համացանցի հասանելիությունը ապահովված է վաղուց, և Մուշեղ Գալշոյանի «Մամփրե արքան» այդ օրը մեզ տարավ համակարգչային դասասենյակ: Օպերատոր Ոսկեհատ Գրիգորյանի փնտրտուքների արդյունքում էկրանին տեսանելի էր հեղինակի ամենահայտնի ստեղծագործություններից մեկը, որը բազմիցս բեմադրվել էր, և պատմվածքի հիման վրա նկարահանվել ֆիլմ-ներկայացում:

7-րդ ա դասարանում այդ թեման համահունչ էր ապրիլյան եղերական օրերին, բայց կար նաև մեկ այլ ձգողական ուժ: Պատմվածքի

բեմականացումն էինք դիտում, այդ դասաժամին խոսք կար նաև Արևմտյան Հայաստանից աշխարհով մեկ սփռված հայության մասին, որի մի բեկորն է կանադահայ բարերար Մկրտիչ Մկրտիչյանը, ով ամեն տարի բարեգործական նախաձեռնությամբ այցելում է Արցախ:

Մամփրեի կերպարը դուր եկավ աշակերտներին, մտերմական, մի դուրեկան հույզ ծնվեց նրա հանդեպ, երբ իմացան, որ նա հետևում է, թե ինչպես է երրորդ դասարանում սովորող թոռնուհին կրտսեր եղբորը սովորեցնում հայոց այբուբենը, և ցանկություն է ծնվում պապի մոտ, որ ինքն էլ սովորի այբուբենն օր ծերության: Նա Արևմտյան Հայաստանում ապրելու տարիներին սովորել էր վարժապետ Հարությունի դպրոցում և հիշում էր, որ նա կարմիր տառեր էր ասեղնագործում սպիտակ պաստառի վրա: Տառերը կարմիր էին, որովհետև Մաշտոցը տառերն իր սրտից էր հանել, դրանք թրծվել են արյունով ու մասնակցել սրբազան կռիվների: Սակայն տառերը գրել-սովորել չհասցրին, պատերազմ եղավ, գաղթեցին նրանք: Եվ ահա Մամփրեն որոշել էր տառաճանաչ դառնալ, և թոռնուհին սկսում է տառերը սովորեցնել նրան: Մամփրեն ութսունին մոտ էր, և գարնանը նա արդեն գիտեր բոլոր տառերը, որոնց անվանում էր հայոց զինվորներ, բայց ափսոսում էր, որ գրերին ուշ ծանոթացավ:

Մամփրեի կարմիրով գրված տողերը մնացին սերունդներին, որ ահեղ ցասում է, ոգեղեն կոչ, անձնուրաց հավատ, հայրենի հողի սեր, ապրելու երազանք. «Օսմա՛ն, թալանչի՛ օսման, ուրեմն որպես ավազակ որ ճամփին կանգնեցիր, էդ ճամփեն քոնն է, հա՞: Քու թալանչի ձեռքն, որ դռան դիպավ, էդ տունը քոնն է, հա՞: Քու գիշատիչ աչքն, որ սարը տեսավ, էդ սարը քոնն է, հա՞: Քու հարամ շունչն որ աղբրակին դիպավ, էդ աղբուրն քոնն է, հա՞... Աթաբունար... Մամփրեն ճար չունեցավ, թե քեզ տրորեր, տրորեր ու տրորեր, ու դու հասկանայիր, թե Տալվորիկի սարերում ու ողջ Սասնո սարերում Աթաբունար հարամանուն աղբյուր չկա: Չկա ու չկա: Աղբյուրի անունը Մեհրե էր, ու Մեհրե կմնա՝Մեհրեաղբյուր: Պատմություն կա, արարիչ կա ու հնուց եկած զրույց. Առյուծ Մհերն էդտեղ՝ հենց էդ աղբրակի բխած տեղն է հանդի-

պել առյուծին ու ճղել զառյուծն, ու, կամոք արարչի, տեղն ու տեղն աղբյուր է բխել: Եվ արարիչն ինքն է կնքել՝ Մեհրեաղբյուր: Արարիչն է ծնել, ու արարիչն է կնքել: Օսմա՛ն, թալանչի՛ օսման, ես էլ մեռնեմ, դու էլ մեռնես, աղբյուրի անունը Մեհրե էր ու Մեհրե էլ կմնա: Մամփրե արքա»:

Մ. Գալշոյանի «Մամփրե արքայի» ուսուցումը մի հայրենյաց դաս էր, որտեղ պատմություն կար, հայրենիքի սեր, նոր օրերի կյանք, օտար ափերում ապրող հայ բարերար, որ ՍԻՐՈՒՄ Է ԴՊՐՈՑ ԿԱՌՈՒՑԵԼ և, ամեն անգամ Արցախ այցելելով, իր բարեգործական նախաձեռնությամբ հաստատում է հայի հարատևելու կամքը, որ գալիս է Մամփրեից ու նրա կարմիրով գրած այբուբենի տառերից՝ որպես ոգեղեն ուժ, ապրելու պատգամ հայ մարդու առաքելության ճանապարհին:

http://www.usarmenianews.com/am-n-8744.html

2017-05-03

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄԱՄՈՒԼԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Այսօր Մամուլի ազատության միջազգային օրն է. այն նշվում է ամբողջ աշխարհում մայիսի 3-ին: Օգտվելով օրվա խորհրդից՝ շնորհավորում եմ այս ոլորտի ազնիվ ու անկաշառ աշխատողներին, լրատվական դաշտի անխոնջ նվիրյալներին՝ ցանկանալով նրանց նորանոր ձեռքբերումներ ու ստեղծագործական հաջողություններ:

Թե որքանով է ապահովվում մամուլի ազատությունն ու ժողովրդավարական բնույթը, որը յուրաքանչյուր հասարակության առանցքն ու հասունության նշաձողն է, դա տեսանելի է շատերիս, բայց ցանկանում եմ բարձրաձայնել դպրոցի ուսուցչուհու՝ ինձ վերապահված իրավունքներից, որ լրագրությունը շատ լուրջ մասնագիտություն է, նույնքան լուրջ մի ասպարեզ, որը նույնպես սիրում է հղկված, անաղարտ ու մաքուր խոսքը, ընդունում անբասիր, անկեղծ ու ճշմարիտ վերաբերմունք իրականության հանդեպ:

Արդեն երկրորդ տարին է, ինչ իմ ապրած միջավայրի, Մարտակերտի մեր դպրոցի մասին բազմաթիվ հրապարակումներով հանդես եմ գալիս Լոս Անջելեսի հայկական USArmenianews.com լրատվական կայքում: Օրվա առիթով առանձնակի շնորհավորանքս կայքի խմբագրակազմին՝ հանձին խմբագիր Գայանե Մանուկյանի, նաև շնորհակալությունս հարգարժան խմբագրին, ում լրագրողական ազնիվ մղումով հայտնվել եմ այս լրատվական դաշտում:

Իմ հրապարակումներն ընդամենը մանկավարժիս համար ամենօրյա օրագրային գրառումներ են, որոնցով համալրվում է դպրոցի ուսուցչուհու մի աշխատանքային կենսագրություն: Երբեմն թյուրիմացաբար այն համարում են լրագրություն, մի երևույթ, սակայն, որի հետ հաշտ չեմ, նաև հակում չունեմ՝ հակառակ իմ այդ ոլորտում երևալուն: Բայց կա նաև ավելի մեծ արդարացնող պատճառաբանություն, որ երբևէ ուսուցչուհու իմ մասնագիտությանը «չեմ դավաճանի»՝ բացարձակապես հարգելով լրագրողի դժվարին ու խոցելի աշխատանքը:

Այս տարածքում իմ նյութերի տեսանելի դառնալուց հետո երբեմն հայտնվում եմ լրագրող-ուսուցչուհի կամ գրող-ուսուցչուհի զուգահեռականում: Իրավիճակը ծիծաղելի է թվում ինձ, այս եռմասնագիտության առանցքում ամենուր գրագետ, արտահայտիչ ու պատկերավոր խոսքի միասնություն կա, բայց նաև անթաքույց ճշմարտություն, որ ու-

սուցիչը, առավելապես՝ հայոց լեզվի և գրականության մասնագետը պետք է իմանա նաև լրագրություն, որի մասին նա ուսուցանում է դպրոցի ավագ դասարաններում, ծրագրերի համաձայն՝ որպես մամուլի խոսք ներկայացնելով հրապարակային ոճն ու տեղեկատվական ժանրերի տեսակները: Ուրեմն՝ յուրաքանչյուր ուսուցիչ նաև պետք է տիրապետի լրագրությանը՝ իր իսկ մասնագիտությունից ելնելով:

Մեծագույն ճշմարտություն կլինեմ արտահայտած, եթե բարձրաձայնեմ, որ ամեն մի թղթակից լրագրող չէ, այնպես, ինչպես ամեն մի ստեղծագործող անձ, ում իրավացիորեն չենք կարող համարել, որ նա գրող է: Ուսուցիչը գրող չէ, չնայած մեծ հավանականություն կա, որ նա կարող է նաև գրող լինել, քանի որ խոսքի վարպետներին ներկայացնելով՝ առանձնապես յուրաքանչյուր գրականության մասնագետ պետք է ստեղծագործելու շնորհ ունենա, բայց ստեղծագործել, թերևս չի նշանակում գրող լինել:

Խոսքերիս արդարացումը ես եմ՝ դպրոցի ուսուցչուհիս, ով տարիներ շարունակ տարբեր մամուլների թղթակցել է, բայց լրագրող չէ, նաև ստեղծագործել գիտի, բայց գրող չէ: Ուրեմն՝ ես ուսուցչուհի եմ, ով նրբին զգացողությամբ սիրում է իր աշակերտներին և սիրվում, դրա ապացույցը՝ նաև դպրոցական կյանքի իմ նյութերը, որ տեղադրվել են այս տարածքում՝ ի տես բոլորի: Ես ուսուցչուհի եմ, ով լրագրողի և գրողի նման ազնիվ հետաքրքրությամբ սիրում է գրել, բայց մնում է իր մասնագիտությանը սիրահար՝ համոզված, որ մանկավարժությունն էլ ոչ բոլորին հասանելի մեծագույն արվեստ է:

http://www.usarmenianews.com/am-n-8752.html

2017-05-04

ՀԱՅՏՆԻ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԻ ՄԵԾ ԵՐԱԶԱՆՔ

12-րդ դասարանում նրանց խոսքերը յուրովի տարբերվում էին մեկը մյուսից, թե տասը տարի հետո ինչպես են իրենց պատկերացնում: Երբեմն վերածվում էր պատրանքի կամ այնքան իրական էր հնչում, որ իսկապես նրանց տեսնում էի տարիներ հետո տարբեր աշխատատեղերում կամ ընտանեկան հոգսերի մեջ: Ուշադրությանս է արժանանում Գեղեցիկ Ղուլյանի միտքը. «Սեզանից յուրաքանչյուրն ինքն է իր ապագայի հատակագիծը ուրվագծում, իսկ այն գծելիս պետք է սթափ լինես, քանզի դա քո ապագայի փոքր թելն է»:

Առավել հետաքրքիրն այն է, որ այս թեման նաև բնավորություն էր բացահայտում: «Ես շատ հանգիստ անձնավորություն եմ, ինձ համար մեկ է, թե ինչ կկատարվի շուրջս, ես մտովի միշտ իմ երազանքների հետ եմ: Շատերին թվում է, թե իրենք ինձ գիտեն, բայց սխալվում են»:

Բնույթով, իրոք, նա շատ հանգիստ է, կազմակերպված, ամեն անգամ նրան հայտնաբերում եմ նորովի ու անթերի: Այս անգամ էլ ուզում եմ բացահայտել նրա հոգում տեղ գտած առեղծվածը, որը գուցե շատերին է յուրահատուկ. «Մարդկանց ճակատագրեր գուշակելն ու տարիներ հետո նրանց տեսնելն առեղծվածային է, ինչպես որ առեղծված էր այն, որ Հիսուսի խաչը փայտից էր, սիրտը՝ ոսկուց, իսկ հիմա մարդկանց խաչն է ոսկուց, սիրտը՝ փայտից»:

Նրա խոսքերում նաև երազանքների իրականացման ճանապարհին խորհուրդներ կային. «Զսպի՛ր քեզ, երբ վիրավորված ես ու տեսարաններ մի՛ սարքիր, երբ ցավեցրել են քեզ. ահա երազանքների իրականացման մի ճանապարհ: Բոլորին խորհուրդ եմ տալիս՝ ապրել ու վստահել իրենց ուժերին, որ ինչ-որ բանի հասնեն այս կյանքում: Տե՛ր կանգնեք, ձեր երազանքներին և տարիներ հետո կլինեք այնպիսին, ինչպիսին դուք եք երազում տեսնել ձեզ»:

Եվ նրա մտորումների մեջ թևածում է բարեկեցիկ կյանք ստեղծելու ու դրան հասնելու նպատակը, որ նրանց բազմանդամ ընտանիքի հա-

մար տարիներ շարունակ գերագույն երազանք է եղել, ու հիշողությանս մեջ նրա կյանքից հեռացած հայրիկն է, նրա մայրը, որ բազմիցս խորհուրդ էր հարցրել ինձնից, թե ում կարող են դիմել՝ իրենց ավերված տան վերակառուցման հարցով, որ այս օրերին իրականություն է դարձել:

«Երազում եմ, նաև վստահ եմ, որ կկարողանամ բարեկեցիկ կյանք ստեղծել: Իմ երազանքն է՝ դառնալ հայտնի, դեռ մանկուց եմ ծրագրել իմ ապագան, և դա անփոփոխ է: Ասում են՝ կյանքում ընտրի՛ր ամենադժվար ուղին, այնտեղ դու չես հանդիպի մրցակիցների, և հավատա՛ ինքդ քեզ, երբ ոչ ոք քեզ չի հավատում, և դու կլինես հաջողակ ու անվանի: Իմ առջև շատ նպատակներ ունեմ, տասը, միգուցե քսան տարի հետո տեսնում եմ դրանք իրականացրած: Առհասարակ չեմ սիրում իմ հետագա անելիքների մասին պատմել, դրանք միշտ իմ հոգում են, նաև՝ իմ սեփական նպատակներից հրաժարվելը կտանի ինձ անիմաստ կյանքի»:

Հիրավի, դժվարությունները կոփել էին այս նուրբ աղջկա հոգին ու միտքը: Գալիքի մասին մտորումները հորդում են նրա էությունից, որ համակված են լուսավոր ու կենսալից տրամադրությամբ, և անանուն մի երազ-բաղձանք՝ գորովանքով լի, բարձունքներ է կարոտում, որտեղ հայտնի դառնալու մի մեծ երազանք կա:

http://www.usarmenianews.com/am-n-8766.html

2017-05-05

ԿՈՄԻՏԱՍ ՀԱԿՈԲՅԱՆ. ԱՆԱՎԱՐՏ ՊՈԵՄ

Իմ ծանոթությունն Էվելինա Հակոբյանի հետ այս տարածքում պատահական էր: Արցախի պետական համալսարանն ավարտած, բայց ռուսաստանաբնակ այս հմայիչ կինն ուշադրությունս գրավեց իմ տեղադրած նյութերին իր պարզ ու անմիջական արձագանքներով: Մի որոշ ժամանակ գեղարվեստական ու գրականագիտական վերլուծությունների փորձեր էի կատարում, նա առաջին ընթերցողն էր, և նրա խոսքն առանձնակի արժեք ուներ ինձ համար: Ես վաղուց հասկացել էի, որ գործ ունեմ խելացի հայուհու հետ, ով լեզվագրական կրթություն ուներ, բայց հանգամանքների բերումով նրա ընտանիքը հայտնվել էր օտարության մեջ:

Անակնկալը մեծ էր, երբ նրա իսկ միջնորդությամբ ես առաջարկ ստացա՝ իմ թղթակցությամբ համագործակցել Վորոնեժի հայկական համայնքի «Անի» թերթին, իսկ այնտեղ իմ համերկրացին էր, մեր դպրոցի նախկին տնօրեններից Ռազմիկ Պետրոսյանը: Եվ շուտով սահմանամերձ Մարտակերտի մեր ապրելակերպը՝ զուգահեռված դպրոցական կյանքին, իմ արձագանքներով տեղ գտավ թերթի էջերում:

Մեր գրագրությունների ընթացքում ես իմացա, որ նա հոգու խորքում մեծ ցավ ունի՝ հարազատի կորուստ: Դա նրա զոհված եղբայր Կոմիտաս Հակոբյանն է, ով 1994 թ.-ից Արցախի գրողների միության անդամ էր: Շուտով թերթում եմ գրողների միության օջախը, արդեն նկարի երիտասարդն ինձ չափազանց հարազատ էր թվում: Կյանքից անժամանակ հեռացած մեր երիտասարդ դասականների՝ Դուրյանի ու Մեծարենցի կողքին մի 22-ամյա ավարտված կյանք եմ տեսնում, մի ազատամարտիկ, ով զենքը ձեռքին՝ հասցրել էր բանաստեղծել…

Այսօր այս հեռուներից ես հասկանում եմ քրոջ ու բոլոր հարազատների դառնակսկիծ վիշտը, որ ամեն տարի մայիսի 5-ը գուժում է Կոմիտաս Հակոբյանի զոհվելու մասին, ու մի անցած հերոսական կյանք դառնում է ներկա, որտեղ բանաստեղծ կա իր ԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՏ-

ՐԱՆՔՈՎ, ազնիվ հայորդի, ում կյանքը արցախյան հողին շաղախված ՆՎԻՐՈՒՄ դարձավ՝ իր բանաստեղծությունների ժողովածուներով:

Այս պահին ես նրա մարտական կենսագրությունն եմ ընթերցում. «Կոմիտաս Արսենի Հակոբյանը ծնվել է 1972թ. հունիսի 1-ին, ԼՂՀ

Մարտունու շրջանի Քերթ գյուղում՝ մտավորականի ընտանիքում: Յոթ երեխաներից վեցերորդն է: 1989-ին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի բանասիրական ֆակուլտետ: Մինչև կանոնավոր բանակի կազմակերպումը կամավոր մասնակցել է պաշտպանական և ազատագրական մի շարք մարտերի, այդ թվում՝ Դիվանալար և Ղաջար գյուղերի ազատագրմանը, Մարզիլլուի, Ամիրանլարի, Գևորգավան ռազմական հենակետերի վերացմանը: Այնուհետև սկսվել է Ֆիզուլլու, Աղդամի շրջանների ազատագրումը: Այդտեղ Կոմիտաս Հակոբյանը փայլուն կերպով կատարել է մարտական իր առաջադրանքը: 1993 թ օգոստոսի 16-ին նա իր մարտիկների հետ առաջինը բարձրացավ Ֆիզուլլուի բարձունքներից մեկը՝ «Կարիերը»: Շուտով նա ուներ ավագ լեյտենանտի կոչում և գումարտակի հրամանատարի տեղակալ էր քաղաքական գծով: 1994 թ ապրիլի 27-ին, անձնազոհության անկրկնելի օրինակ էր նրա կատարած սխրանքը: Կոմիտասը միայնակ և առաջինը մտավ ադրբեջանցիների կողմից գրավված խրամատը: 1994թ. մայիս 2-ին նա իր մարտիկների հետ մտնում է Մարտակերտի շրջան: Երեք օր պատերազմելով և գրավելով մի շարք դիրքեր՝ մայիսի 5-ին Կարմիրավան գյուղի ազատագրական մարտում հերոսաբար զոհվում է 22-ամյա Կոմիտաս Հակոբյանը: Ընդամենը օրեր էին մնում նրա և սիրած աղջկա՝ Նունեի հարսանիքին»:

Խիզախ մարտիկը հետմահու պարգևատրվեց Արցախի «Արիության համար» մեդալով, իսկ հայրենի գյուղի դպրոցը կոչվեց նրա անունով: Մի անավարտ պոեմ է դառնում ինձ համար Կոմիտաս Հակոբյանի կյանքը՝ շղարշված իր բանաստեղծություններով, որ կարոտի, երազանքների, հույսի ու սպասումի, կյանքի իմաստի որոնում է հայրենիքի փրկության բարդ հանգույցներում: Նա հորինվածք չէր, այլ՝ իրականություն, որ ծիածանվեց հայրենյաց ազատամարտում և անմահացավ նաև իր պոետական թարմ քնարով՝ հավերժացնելով մի երիտասարդ կյանք:

http://www.usarmenianews.com/am-n-8777.html

2017-05-05

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

Մայիսյան եռատոնին նվիրված ստեղծագործական շարադրությունների՝ Արցախի հանրապետական մրցույթին մասնակցած Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ հումանիտար դասարանի իմ աշակերտուհիներն արժանացան մրցանակային 1-ին /Անդրյան Անգելինա/ և 2-րդ տեղերի /Արզումանյան Լադա, Կարապետյան Արմինե/: Դպրոցից իր մասնակցությունն էր ցուցաբերել նաև 10-րդ դասարանի աշակերտուհի Տաթև Ղահրամանյանը՝ ապահովելով 3-րդ տեղ /դասավանդող ուսուցչուհի Վ. Իսրայելյան/: Ուրախ եմ, որ այս անգամ էլ ունեցանք հաղթողներ, բայց ամեն անգամ մի նոր հաջողության արդյունքում նորովի եմ հայտնաբերում ուսուցչի մասնագիտության նրբին գեղեցկությունը, որ երբեմն տանում է մանկավարժիս մի նոր աշխարհ: Այնտեղ մաքուր ու ազնիվ հոգիներ կան ամբարված, սևեռված հայացքներ՝ հասկացված, գուցե և չհասկացված երբեմն, բայց ամեն օր՝ նորը գտած ու նորովի բացահայտած:

Ու այս նորի մեջ ես փորձում եմ մի նոր հայացքով նայել նրանց, որ հաղթող են, և ուզում եմ գտնել բանալին հաղթության...Փնտրում եմ էջ առ էջ, բացում թերթիկներն անցած օրերի, սերտում խոսքերը նրանց շուրթերի, որ գիր են դարձել, դողացող սրտով շարվել ձեռագիր: Անցած օրերի ապրումների մեջ՝ իրենց ստեղծագործական մտքերով մե՛կ սահմանին են տեսնում իրենց՝ զինվորական կյանքով, մե՛կ արկերի տակ են երևում հանկարծ, որ մահ է բերում, ավեր ու աղետ, մե՛կ հեռվից եկող կրակահերթերն են ձուլվում դասերին...

«Ապրում եմ աշխարհի տարբեր երկրների մարդկանց նման, բայց բոլորի մոտ չկա իմ մեկ օրվա ապրած սարսափը: Ես չեմ սնվում այդ սարսափով, ես չեմ վախենում այն ամենից, ինչ միմիայն իմ երկրում է ակնկալվում: Ես չեմ փախչում շատերի նման, ապրում եմ իմ աղքատիկ քաղաքում, հայոց հողի վրա, իմ տանը՝ իմ զինվորի թիկունքում, և թող նա իմանա, որ ինքն էլ պաշտպան ունի, աջակցող» /Անդրյան Անգելինա/:

«Ես պատրաստվում եմ ապագայում իմ պարտքը մատուցել հայրենիքիս՝ կանգնել այն դիրքում, որտեղ եղել են մեր հերոս տղաները, պահել այն դիրքը, որ արյունով են պաշտպանել, ու թշնամուն ապացուցել, որ «առյուծն առյուծ է, լինի էգ թե որձ»: Միշտ պատրաստ եմ իմ քնքուշ ձեռքերով բռնել սառը զենքը ու թեկուզ կյանքովս՝ տեր կանգնել այս հողին» /Կարապետյան Արմինե/:

«Ապրելով այստեղ՝ ես դարձել եմ հերոս, հերոս, ով ուզում է աշխարհին ցույց տալ, որ կա մի փոքրիկ երկիր, որտեղ յուրաքանչյուր մարդ հերոս է իր ապրելու և դիմանալու ունակությամբ: Ես ուզում եմ ասել, որ կա մի երկիր, որ հասցրել է իր իմաստության չնչին մասը ցույց տալ, բայց այն դեռ դուրս կհորդի ու կպայթեցնի ամբողջ աշխարհը: Ես ուզում եմ լինել միշտ նրա գրկում, համբուրել նրա սրբացված խաչքարերը, արժանանալ սուրբ նահատակների արյամբ օծված հողին» /Արզումանյան Լադա/:

Նոր սերնդի հայրենասիրական դաստիարակությանն ուղղված այս ամենամյա մրցույթին մասնակցում են զինվորականներն ու դպրոցականները, անցկացվում է ԼՂՀ Պաշտպանության և կրթության, գիտության ու սպորտի նախարարությունների կողմից: Դպրոցականների շրջանային փուլն իրականացվում է կրթության ոլորտի վերահսկողության ներքո: Մասնակից աշակերտներին առաջարկվում է համապատասխան խորագրի տակ հանձնարարված վերնագրերի ընտրություն կատարել և շարադրել իրենց ստեղծագործական մտքերը: Շրջաններից հանրապետական փուլ ներկայացված շարադրությունները համապատասխան հանձնաժողովում ընդգրկված մասնագետների կողմից ստուգվում են Ստեփանակերտում:

Առանձնակի շնորհավորանքս մրցանակակիր զինվորականներին, Արցախի տարբեր շրջանների հաղթող դպրոցականներին և դասավանդող ուսուցիչներիս, ովքեր մայիսի 8-ին հրավիրված ենք՝ Պաշտպանության բանակի շտաբի խորհրդակցությունների դահլիճում մասնակցելու շարադրությունների մրցույթի հանրապետական փուլի արդյունքների ամփոփմանն ու պարգևատրությանը: Շարունակենք հաղթանակներ կռել կրթության ու գիտության տարածքում: Դիրքը պահողների համար թիկունքն այդպես ավելի հուսալի կլինի:

http://www.usarmenianews.com/am-n-8788.html

2017-05-06

ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԻՆ

Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում կազմակերպված միջոցառումը նվիրված էր Մայիսյան եռատոնին: Ն պաշտպանական շրջանի օպերատիվ բաժնի պետ Արթուր Ավագիմյանի և դասակի հրամանատար Վահե Մուշեղյանի կողմից անցկացված արիության դասը՝ 9-րդ և 10-րդ դասարանների աշակերտների հետ, նպատակաուղղված էր նոր սերնդի հայրենասիրական դաստիարակությանը, իսկ դպրոցի դահլիճում կազմակերպված գրական-երաժշտական ցերեկույթը դաստիարակչական գծով տնօրենի տեղակալ Կարինե Բալասանյանի և դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Պետրոսյանի ջանքերի արդյունքն էր, որ իրար կողք էր հավաքել տարբեր դասարանների աշակերտների, ուսուցիչների, և ներկա էին հյուրեր:

10-րդ դասարանի աշակերտ Գոռ Ավագիմյանի ելույթն ապագա հայրենյաց պաշտպանի սրտի խոսք էր, անցած հաղթական պատերազմների հիշողության արթնացում, նահատակների հիշատակին հարգանքի տուրք՝ մեկ րոպե հոտնկայս լռությամբ: 12-րդ դասարանի աշակերտուհի Գրետա Խաչատրյանի կատարմամբ հայրենասիրական երգերը՝ նրա թախծանուշ ձայնի հոգեպարար ելևէջներով, տարածվեցին ամբողջ դահլիճում: Միջոցառմանը մի նոր շունչ հաղորդեցին իրենց ասմունքով մեկընդմեջ բեմ բարձրացող յոթերորդցիները՝ Անի Սկրտչյանը, Նարեկ Բաղրյանը, Մալենա Մուսայելյանը, իսկ Մերի Հովհաննիսյանի արտահայտիչ խոսքը հնչեց որպես մարդկությանն ուղղված խաղաղության կոչ, որ ո՛չ էր ասում պատերազմին. «Չքվի՛ր, պատերա՛զմ՝ աղե՛տ աշխարհի, Եվ մի՛ սևացրու մայրական սրտեր, Թե՞ կուզես ողբա ազգը տառապյալ Եվ ճչա մանկան լեզվով անհստակ…»:

Գերտրուդա և Լիլիանա Բեգլարյան քույրերի համատեղ երգերը՝ իրենց թախծագորով շնչով, քար լռությամբ ընդունվեցին հանդիսատեսի կողմից, զինվորական համազգեստով փոքրիկի՝ 4-րդ դասարանում սովորող Ավետ Եղիազարյանի հայրենասիրական երգը ժպիտով ու հպարտությամբ ընկալվեց, 10-րդ դասարանցի Նաիրի Ջհանգիրյանի հայրենյաց երգը՝ խրոխտ հնչեղությամբ, նոր շունչ հաղորդեց շրջապատին: 6-րդ դասարանում սովորող «դհոլչիներ» Արսեն Սևոյանի ու Նորայր Միրզոյանի ելույթը ոգեկոչման մի հրաշալի արարողության էր նման, որ թափ էր առնում նրանց մատների համաչափ զարկերից: Գրական-երաժշտական ցերեկույթին առանձնակի փայլ տվեցին զինվորականի համազգեստով աղջիկների պարերը՝ որպես նոր սերնդի ազատատենչ ոգու կանչ՝ համեմված ցերեկույթի մասնակիցների բուռն ծափահարությամբ:

Միջոցառման եզրափակիչ մասն առարկայական օլիմպիադաներում հաջողություններ գրանցած դպրոցականների ու նրանց ուսուցիչների պարգևատրությունն էր պատվոգրերով, որ ներկայացրեց դպրոցի տնօրենի պաշտոնակատար Է. Աղասյանը: Արցախի ԿԳՍ նախարարության կողմից պարգևատրվել էին երկու աշակերտուհի և նրանց դասավանդող աշխարհագրության ուսուցչուհի Ն. Գասիյանը: Վերջին օրերին այդ աշակերտները մասնակցել էին ՀՀ օլիմպիադայի եզրափակիչ փուլին, վերադարձել պատվոգրերով և վկայականներով: Մարտակերտի կրթության բաժնի վարիչ Ժ. Դավթյանի կողմից պատվոգրերի էին արժանացել քսանմեկ աշակերտուհի, տասնմեկ ուսուցիչ՝ նրանց աշակերտներն օլիմպիադայի շրջանային փուլում բարձր արդյունքներ ցուցաբերելու համար:

Մայիսյան եռատոնի այս բարձր տրամադրության արտահայտությունն էր շարադրությունների հանրապետական մրցույթում դպրոցի չորս աշակերտուհու հաղթանակը, որ շուտով նրանց դասավանդող ուսուցչուհիներ Ն. Պողոսյանի և Վ. Իսրայելյանի հետ կամրագրվի Արցախի ՊԲ և ԿԳՍ նախարարների կողմից պարգևատրությամբ:

Հաղթական եռատոնի մեր միջոցառումների շարքը կհամալրվի Մայիսի 9-ին՝ Մարտակերտի «Փա՜ռք ազատամարտիկներին» հուշահամալիր բոլորիս այցելությամբ, նահատակների հիշատակին ծաղիկների խոնարհումով:

http://www.usarmenianews.com/am-n-8791.html

2017-05-08

ԵՌԱՏՈՆԻ ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Մայիսի 8-ին ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի խորհրդակցությունների դահլիճում տեղի ունեցավ Մայիսյան եռատոնին նվիրված ստեղծագործական շարադրությունների մրցույթի արդյունքների ամփոփում, որին ներկա էին ԼՂՀ Պաշտպանության նախարար, պաշտպանության բանակի հրամանատար Լևոն Մնացականյանը և Կրթության, գիտության ու սպորտի նախարար Սլավա Ասրյանը:

Ողջունելով ներկաներին՝ նրանք իրենց ելույթներում ներկայացրին Մայիսյան եռատոնի խորհուրդը, ապա բարձր արդյունքներ ցուցաբերելու համար շնորհավորեցին մրցանակակիրներին և արժեքավոր նվերներով, գրքերով, պատվոգրերով ու դրամական խրախուսմամբ պարգևատրեցին զինծառայողներին, դպրոցականներին և նրանց դասավանդող ուսուցիչներին: Հայրենասիրության մի գեղեցիկ դրսևորման արտահայտություն էր այս արարողությունը, որտեղ մեծարանք կար, գնահատանք, լավագույն աշխատանքի նկատմամբ արժանի ուշադրություն:

Իմ երեք մրցանակակիր աշակերտուհիներին ուղղում եմ հարց, թե ինչպիսի զգացողություն ունեն և ինչ կցանկանային ասել, որ այս տարածքում հանրությունն էլ տեղեկացված լինի: Ես ինքս էլ անչափ տպավորված եմ նրանց խոսքերով՝ յուրաքանչյուրը յուրովի տարբեր, բայց սրտահույզ, ուրախությամբ լեցուն, շնորհակալական զգացումով:

«Մի քիչ հուզված եմ, սակայն ամենևին չսպասվող հաղթանակը մոռացնել է տալիս այդ հուզմունքը: Օգտվելով առիթից՝ ուզում եմ նախաձեռնողներին շնորհակալություն հայտնել նման մրցույթ կազմակերպելու համար, ինչպես նաև շնորհավորում եմ մրցանակային տեղեր զբա-

ղեցրած դպրոցականներին ու զինվորականներին: Ուսուցչուհուս խորհրդով՝ այս տարի մասնակցեցի մրցույթին և չեմ ափսոսում, քանզի այս հաղթանակն ինձ համար հաջողությամբ պսակված մի նոր փորձություն էր: Շարադրանքս իմ մտքերի ու ապրումների արտացոլումն է, ինչը, երևի թե, պայմանավորված է նրանով, որ ապրում եմ պատերազմի գոտի դարձած Մարտակերտում: Բարձրաձայնել եմ այն մասին, որ մեր մի բուռ հայրենիքն ունի բոլորիս համախմբված ուժի կարիքը: Ուրախ եմ, որ խոսքս լսելի դարձավ: Եվ վերջում ուզում եմ առանձին շնորհավորել ու երախտիքի խոսքեր ուղղել իմ ուսուցչուհուն՝ հայոց լեզվի և գրականության վաստակավոր մանկավարժ Նատաշա Պողոսյանին»: /Անդրյան Անգելինա, 1-ին տեղ/:

«Երբ ուսուցչուհիս հայտնեց շարադրությունների արդյունքների մասին, անչափ ուրախացա, որ հայտնվել եմ հաղթողների շարքում: Շարադրել եմ բանակի, զինվորի ու իմ մասին՝ դրանով իսկ ցանկանա-

լով ասել, որ ապրելով սահմանամերձ Մարտակերտում՝ մենք ինքներս արդեն զինվոր ենք, ականատես պատերազմի ու գիտենք խաղաղության գինը: Առավելապես ապրիլից հետո ես համոզվեցի, որ հայրենիքի պաշտպանությունը միայն տղաների համար չէ, ես ինքս էլ պատրաստ եմ իմ նուրբ ձեռքերով բռնել սառը զենքը: Շնորհակալություն եմ հայտնում այս մրցույթի բոլոր կազմակերպիչներին, իսկ մեր զինվորներին մաղթում եմ խաղաղություն, համբերություն և բարի վերադարձ: /Կարապետյան Արմինե, 2-րդ տեղ/:

«Ուսուցչուհուս հայտնած լուրը, որ մրցանակային տեղ եմ զբաղեցրել, չափազանց ուրախալի էր, ուրեմն ինձ հաջողվել է շարադրությանս մեջ պատկերել այն բոլոր զգացումները, որոնք ինձ պաշարել էին ապրիլյան պատերազմի օրերին: Երբ կողքիս պատմում էին պատերազմի մասին, խոսում հերոսներից, կարծես թե լիովին չէի ըմբռնում, բայց տեսնելով պատերազմի սարսափը՝ զգացի, թե ինչ գնով է ձեռքբերվում խաղաղությունը: Ես ապրում եմ սահմանամերձ բնակավայրում և երբևէ չեմ մտածում այն լքելու մասին: Ես ուզում եմ արժանի լինել մեր հերոս տղաների արյամբ սրբացված հողին և, ապրելով այստեղ, շարունակել նրանց արդար պայքարը»: /Արզումանյան Լադա, 2-րդ տեղ/:

Մեր դպրոցականների հաղթանակների շարունակականությանը հավատալով հանդերձ՝ շնորհավորում եմ բոլորիս Մայիսյան եռատոնը: Թող խաղաղ լինի երկինքը և կապույտ երկնակամարում միշտ ծածանվի հայկական եռագույնը:

http://www.usarmenianews.com/am-n-8814.html

2017-05-10

ԱՐՑԱԽԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԽԱՂԱՂ ՈՒ ԱՆՀՈԳ ԿՅԱՆՔ ԵՆ ՈՒԶՈՒՄ

Եռատոնի միջոցառումները շարունակվեցին՝ Մայիսի 9-ին Մարտակերտի հուշահամալիր այցելելով, հաղթական դրոշների ծածանումով, նաև՝ ծաղիկների խոնարհումով՝ նահատակների հիշատակին: Այդ հաղթական օրվան միշտ ուղեկցում են թախծախառն ապրումները, որ բոլորիս նորից հիշեցնում են այն անցած պատերազմների դառնակսկիծ օրերը: Մշակույթի տանը կազմակերպված տոնական համերգը նոր շուք հաղորդեց Եռատոնին նվիրված միջոցառումների շարքին, որտեղ պատերազմական օրերի հիշատակ կար, երգ ու պար, հայրենասիրական ոգեշունչ խոսք ու մանկական մի հրաշալի աշխարհ, որ իրենց կամքով, համերգային ծրագրից դուրս, մեկընդմեջ բեմ էին բարձրանում և իրենց անկեղծ ու մաքուր մղումներով աշխարհին պարզում նոր կյանքի պատգամը, որ սեր է դառնում, ազնիվ արարում, խաղաղության երազանք:

Ուշադրությունս այն փոքրիկ աղջնակին էր ուղղված, որ հանկարծակի բեմ բարձրացավ, նրա հետևից մի քանիսը, ապա ավելացան նորերը, ու բեմը լցվեցին երեխաներով, ովքեր թռչկոտում էին, ուրախ պարում՝ երգի ելևէջներին համահունչ: Երգողները երբեմն չէին երևում, մի մանկական աշխարհ սավառնում էր, կարծես խաղաղության աղավնիներ էին թևածում՝ իրենց ճախրանքով խաղաղ կյանքի պատգամը հղելով աշխարհին: Նախադեպը չունեցող երևույթ էր, որ այս փոքրիկները կարող էին նախաձեռնությունն իրենցը դարձնել ու համույթի ծրագրային համերգը գունազարդել իրենց պարային գեղեցիկ շարժումներով:

Իսկ մայիսի 10-ին Մարտակերտի կենտրոնական գրադարանում եմ՝ իմ դասղեկական 7-րդ ա դասարանի աշակերտների հետ: Նախատեսված գրական-երաժշտական ցերեկույթը, որ կազմակերպել էր գրադարանի տնօրեն Իրա Բաղրյանը, կարելի է համարել այն նախորդ տոնական օրվա տրամադրությունների շարունակություն, որ այստեղ էլ

իրար կողք էր համախմբել Արցախյան ազատամարտի վետերանների, դպրոցականների, տարբեր կառույցների ներկայացուցիչների:

Երբեմն հոգեկան ներսուզումների պահեր են լինում, մի ներքին ընդվզում իրեն զգացնել է տալիս, որ այս հաղթանակը միայն բերկրալից պահերի արձագանք չէ, այլ բազում երիտասարդ կյանքերի զոհաբերման ճանապարհ, որտեղ ապրելու բուռն ցանկություն կար, կրակոտ զգացումներ, անհամար երազանքներ ու անկատար մնացած իմաստավորված կյանքեր:

Իմ կողքին նստած կինն անհայտ կորած ազատամարտիկի մայր է, նրա տարիների կյանքը մի անհագուրդ սպասում է որդու վերադարձին, որ թախանձագին հայացքը հառել է Աստծուն ու սպասել...Ես նայում եմ նրան, ում դեմքին լույս է ճառագում, երբ նախադպրոցական տարիքի փոքրիկ զինվորական բալիկներն են հայրենիքի սիրո երգը բարձրաձայնում: Եվ այդ երգը դառնում է հավերժության կոչ ու կյանքի շարունակականություն, լուսավոր ու խաղաղ կյանքի անրջանք, որ ցավն անգամ դարձնում է կենսակերպ տառապանքի վեհության մեջ, որ հնչում է ամենուր՝ որպես հոգու արթնացման կանչ:

Մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումների շարքն ավարտվում է, իսկ ես փնտրտուքների մեջ եմ...Ո՞վ էր այն փոքրիկը, Արցախի այս սիրուն դստրիկը, որ իր հետ բեմ տարավ մի ամբողջ մաքուր ու անաղարտ աշխարհ, որ երգի հնչյունների ներքո իրենց հայկական խրոխտ պարերով հնչեցրին ամենուր, որ իրենք խաղաղ կյանք են ուզում և ունեն անհոգ ապրելու անսասան հավատ:

http://www.usarmenianews.com/am-n-8827.html

2017-05-10

ՈՐՊԵՍ ՉԳՐՎԱԾ ՆԱՄԱԿ՝ ՍԻՐԵԼԻ ՔՐՈՋՍ

Քրոջս ծննդյան տարեդարձին փորձում եմ մի քանի տող նվիրել նրան՝ Նադյա Պողոսյանին: Նա կդառնար հրաշալի մանկավարժ, ով ավարտել էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի և ֆիզիկայի բաժինը: Նրա լավագույն մասնագետ դառնալուն երբևէ չէի կասկածել՝ գիտելիքների իր խոր իմացությամբ, բայց հանգամանքները փոխեցին ճակատագիրը…

Մենք արտաքնապես իրար նման չենք, ասում էին, որ նա հորական տատիս նման է, ում երբևէ չէինք տեսել, իսկ ես մորս արտապատկերն եմ՝ ուղղակի տարիքային տարբերությամբ: Այս պահին ես ուզում եմ մի այլ տեսք տալ իմ հույզերին, որ թախիծ է բերում իր հետ, և մեր՝ բոլորիս կողմից շնորհավորել քրոջս ծննդյան օրը, ով դարձել է մեզ համար մի հեռավոր կարոտ:

92-ին օտարությունը մեզ համար մեր կամքով չէր, այլ՝ Արցախյան պատերազմի ու մարտակերտցիներիս բռնատեղահանության պատճառով: Քույրս մեր ընտանիքի չորս երեխաների մեջ փոքրն է: Տարիները նրան կոփեցին, ու ժամանակի ընթացքում մենք մոռացանք այդ տարիքային տարբերությունը, որ առկա էր նրա ու իմ և մեզանից ավագ եղբայրներիս միջև: Արցախյան պատերազմի ծանը հետևանքները շատ-շատերի նման մեզ վրա կրեցինք, տուն ու տեղ թողած, փախստականի պիտակը մեզ վրա՝ տեղից տեղ հասանք, բայց ամենուր մեզ ուղեկցում էր քրոջս աղիողորմ լացը, ով չէր հաշտվում հարազատ բնօրրանը թողնելու մտքին:

Հայրենի գյուղից՝ Մոխրաթաղից, դուրս գալուց հետո մեր փրկության ուղին անտառամիջյան ճանապարհն էր, բազում բռնագաղթողների մեջ՝ քրոջս աղեկտուր ձայնը, որ երբեմն ընտանիքի անդամների անուններն էր բարձրաձայնում, որ հանկարծ չկորցնենք իրար: Անասունների ոտնահետքերով մեր բոբիկ ոտքերին տեղ էինք անում, բայց քույրս ավելի մեծ ծանրություն էր վերցրել իր վրա…Մայրս էլի

կարողանում էր քայլել, ութսունն անց տատս հազիվ էր փոխում ոտքերը, իսկ քույրս միշտ նրա կողքին էր…

Օտարությունն էլ իր դժվարությունն ուներ…Մենք այնտեղ մոռացանք այն դիպլոմները, որ ստացել էինք մանկավարժական ինստիտուտից: Մեզ պետք էր ապրուստ հոգալ, իսկ մենք չէինք ամաչում այդ ապրուստը հոգալու մեր ընտրությունից, որ ամենահամեստն էր մեր գոյությունը պահելու համար:

Ես վերադարձա հայրենիք, բայց քույրս մնաց: Ընտրությունը նրանն էր, ու նա մնաց: Կյանքի դառնություններին դիմադարձ լինելով՝ նա մնաց, որ օտարության մեջ որտեղ էլ լինի, «տիրություն» անի տատիս ու ծնողներիս շիրիմներին, որ դրանով իսկ փարատի իր մենությունը: Ու այսպես մեր կարոտը ճյուղավորվեց, և կամրջված տեսանք մեզ հեռուներին, որտեղ հարազատ մարդիկ կան՝ բույլ վշտերի հիշողությամբ:

Այս պահին ցավում եմ քրոջս կիսատ մնացած մանկավարժության համար, բայց գիտեմ, որ հայրենի Արցախի ու հեռավոր ափերի խաչմերուկում է նա, որտեղ հարազատ եզերքի կարոտ ունի հոգում, օտարությանը հառած՝ հարազատների հիշատակ:Ես թախծախառն ու կարոտով մեր բոլորիս անունից բազում բարիքներ եմ մաղթում նրան, լավագույն ցանկությունների իրականացում, թող այսուհետ նրա երազանքներն անավարտ չմնան:

http://www.usarmenianews.com/am-n-8816.html

2017-05-11

ՄԵՐ ԱՆՀԱՆԳԻՍՏ ՕՐԵՐԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԻ ԶՐՈՒՅԱԿԻՑԸ ԵՍ ԵՄ

Մեզ համար անցյալը չի հնանում, երբեմն այն թարմանում է, ու այդ հնին ավելանում է նորը, և նորից զգում ենք, որ սպասման, խաղաղության խաթարման վտանգ կա մեր շուրջը: Երբեմն մեզ հասած ցավալի լուրը չենք ուզում բարձրաձայնել, բայց մտավախություն կա, ու բոլորիս անհանգստացնող «հանկարծ նորից չսկսվի»-ն տարածվում է ամենուր: Երբեմն լսում ենք սահմանային լարվածության մասին, որ մտնում է տնետուն և անհանգիստ ապրումների տեղիք տալիս: Տխուր մտածումների մեջ ենք ընկնում, կյանքի բնականոն ռիթմն ընդհատվում է, բայց նորից հավաքում ենք մեզ. սա մեր ճակատագիրն է, մեր ապրելակերպը: Ուրեմն պետք է հաշտվել, նորն ընտրելու ճանապարհ չունենք, ու այդ նորը դառնում է մեզ համար «խորթ» մի կյանք, որտեղ հանգիստ ու խաղաղ երկինք կա, բայց ոչ սահմանին մոտ ապրողներիս համար: Երբեմն մեքենաների սրընթաց շարժը նկատելի է դառնում, բայց նորից աչք ենք փակում, ցանկանում, որ այն լինի թվացյալ: Դպրոցի ճամփան էլ առավոտյան երկար է թվում գիշերային մղձավանջային ապրումներից հետո: Բայց շատ լավ է, որ ամեն օրվա պես դասարաններում մեկ-երկու բացակայող աշակերտներ կան ու սովորական ընթացքով շարունակվող դասեր: Երկու զորեղ ու իրարամերժ ուժեր հակադրվում են իրար, երբ չենք ուզում արտաքուստ ցույց տալ մեր խռովահույզ ապրումները, երբ մեր ներսում ամեն ինչ փոթորկված է՝ վերստին պատերազմ սկսվելու տագնապով:

Ուսումնական տարին ավարտվում է, նոր հանձնարարություններ են տրվում՝ տարեվերջի կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների հետ կապված: Կարծես ոչինչ չկա, ամենօրյա ընթացքով շարունակվում է կյանքը՝ մեր ականջները սահմանից մեզ հասնող խուլ ձայներին: Երբեմն օրվա լարված իրավիճակը սառը ջուր է լցնում մեր ոգևորության ու ձեռքբերումների վրա, նույնիսկ այդ պահերին դպրոցականների դեմքին ճառագած ժպիտը հակադրվում է մեր սիրտը սողոսկած տագնապին, որ գալիս է մերժելու կյանքի քար լռությունը, որտեղ սարսափն է իր թևերը փռել... Ու այսպես ապրում ենք հնի ու նորի սահմանագծում՝ երբեմն հարցնելով ինքներս մեզ, թե այն մեծ քաղաքներում մարդիկ ինչպես են ապրում, երբ նրանք չունեն այն մեծ

մտավախությունը, որ վաղը կարող է նորից ամեն ինչ կորցնեն ու սկսեն նորը ստեղծել, այն նորը, որ մեզ համար մեծագույն տագնապ է դառնում, չկամություն այդ նորի հանդեպ...Կենսասեր մի ժողովուրդ ապրում է այստեղ մեծ հավատով, ու ապրելն այստեղ պայքար է դառնում, որ մերժում է անվերջ թափառումներով լի կյանքը, որ երբեմն ոչ մեր ցանկությամբ տնից-տեղից կտրում է մեզ: Մեր անհանգիստ ամեն մի օրն այսպես է անցնում ու դառնում մի նոր պատմություն, որ ավելանում է այն անցյալին ու հնանում, բայց երբեք չի մոռացվում: Ու այսպես Մարտակերտում հնի ու նորի սահմանագծում ենք, որ չենք ուզում այն նորը, որ այստեղից հեռու է՝ մեր տուն ու տեղից կտրված, թափառումներով լի մի կյանք, որ կարոտով լեցուն՝ խաղաղ երկինք և հայրենի տուն է ուզում:

Մեր հինն ու նորը շաղկապված են: Ներկան համր է՝ առանց անցյալի, ապագան՝ անորոշ, առանց ներկայի զորակցության: Այնպես կառուցենք մեր օրը, որ այն կառչած լինի անցյալի հերոսական դասերից, չավերի ներկայի ընթացքը և ուրվագծի լուսավոր ապագա:

http://www.usarmenianews.com/am-n-8835.html

2017-05-12

ԵՐԲ ՎՏԱՆԳՎԱԾ Է ՀՈՂ ՀԱՅՐԵՆԻՆ

Շարադրությունների ԼՂ հանրապետական մրցույթում առաջին տեղ գրաված Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ հումանիտար դասարանի աշակերտուհի Անգելինա Անդրյանի մտքերը նախորդ օրերի՝ իր ապրումների վերարտադրությունն էին՝ Արցախի հարաբերական խաղաղության, արտագաղթողների, հայրենի հողի պաշտպանների, բոլորիս համախմբվածության մասին, որ բարդշրաշայնեց նա՝ որպես նոր սերնդի մտահոգություն: (Նրա ստեղծագործական շարադրությունը՝ «Երբ վտանգված է հող հայրենին», տեղադրվում է որոշ կրճատումներով):

«Միշտ իմ բաղձալի երազանքն է եղել՝ ապրել Ռուսաստանի Դաշնությունում: Կարծում եմ՝ ոմանք կսկսեն քարկոծել ինձ, սակայն երազանքս արդարացում ունի: Ես ծնվել եմ հենց այնտեղ: Երևի այդ պատճառով էլ կարոտով լցված սիրտս ու միտքս ինձ այդքան ձգում էին դեպի ծննդավայրս: Միշտ էլ երազել եմ՝ գնալ այնպիսի երկիր, որտեղ չկա պատերազմի սպառնալիք, որտեղ կարելի է հանգիստ ու խաղաղ ապրել, որովհետև Արցախում «խաղաղություն» ասվածը սահմանային փոքր պատերազմների միջև ընկած կարճատև ժամանակահատվածն է: Ես միշտ էլ ցանկացել եմ ապրել այնտեղ՝ իմ ծննդավայրում, որտեղ խաղաղ է երկինքը, բայց միայն Արցախում ապրած մանկությանս տարիներն ու հասունացած հոգիս են ինձ հետ պահել, քանի որ այս տասնյոթ տարիների ընթացքում Արցախն ինձ համար հարազատ տուն է դարձել, և հաճախակի եմ հիշում հոգուս հարազատ դարձած սահյանական տողերը. «Ախր ուրիշ տեղ ամեն մի քարից, առվից, ակոսից Իմ աչքերով իմ աչքերին նայող Մանկություն չկա....»:

Միշտ էլ մտածել եմ՝ որտեղ էլ լինեմ, գիտեմ, որ Արցախն իմ աստղն է, առանց որի ապրել չեմ կարող, և ուր էլ գնամ, կհասկանամ, որ «Ամենից սիրուն, լավ տունը, որ կա, էս գորշ խրճիթն է, Էս հին խրճիթն է, գետի եզերքին, Ծառերի տակին», ու կշարունակեմ ապրել իմ հայրենի հո-

ղում՝ ականջս սահմանային կրակոցների ձայնին, հոգիս՝ տագնապով լեցուն:

Ապրիլյան պատերազմի օրերին ծնողներս ինձ ուղարկեցին օտար ափեր, և կարծես անչափ գոհ էի ճակատագրից նման հնարավորության համար՝ մտածելով, որ այնտեղ էլ կշարունակեմ իմ ուսումը: Առաջին ամիսն անհոգ անցավ, ինձ զգում էի, ինչպես տանը՝ հայրենի հողի վրա: Երկրորդ ամսում արդեն անհանգիստ էի, անսահման կարոտ ու սեր ունեի հարազատ Արցախիս հանդեպ: Հեռու լինելով Մարտակերտից՝ ես իսկապես հասկացա, թե ինչքան դժվար է ապրել ուրիշ տեղ, դրա համար էլ նորից վերադարձա իմ հայրենի տուն:

Ես վերադարձա իմ հողը՝ կարծես ցանկանալով կանգնեցնել արտագաղթողների թիվը, որ ոչ ոք չհեռանա հայրենիքից: Եկա, որ դեմ արտահայտվեմ արտագաղթին, երբ ճակատագրի հույսին են թողնում այս մի բուռ հայրենիքը: Բայց այստեղ ամեն անգամ կրակոցներ լսելիս գլուխներս կորցնում ենք, յուրաքանչյուրիս համար էլ թանկ է իր կյանքը, բայց պիտի իմանանք, որ հայկական խաչով կնքված հայկական արյունը հայ հողի վրա պիտի սերունդ տա, պաշտպանի սահմանը, շենացնի ու պահպանի նրա մշակույթն ու պատմությունը: Նորից եկա ես՝ գիտակցելով, որ սև է պատերազմը, այն բազում կորուստներ ունեցողների ու որբացած մանուկների հիշողությունն է, մայրական տառապանք: Մեկ րոպե լռությունն այստեղ այնքա՜ն խոսուն է դարձել…Չկա այս աշխարհում ավելի բարձր սրբություն, քան անմահ հերոսների ոգիների մենությունը: Նրանք կերտեցին փառավոր Արցախս, իմ այսօրը, իմ ներկան…Ես ատում եմ պատերազմը: Ես ատում եմ այդ խոսքը, երբ շուրջբոլորս երգի պես կրկնում են. «Պատերազմ հաստատ կլինի»: Ես ատում եմ այն անհանգիստ վախը, որից ծնվում են ամենաահավոր պատկերացումները:

Իսկ ես ի՞նչ եմ անում սերնդի վաղվա օրվա համար… Ոչի՛նչ, ոչ մի բան չեմ անում կարծես: Ապրում եմ աշխարհի տարբեր երկրների մարդկանց նման, բայց բոլորի մոտ չկա իմ մեկ օրվա ապրած սարսափը: Ես չեմ սնվում այդ սարսափով, չեմ վախենում այն ամենից, ինչ միմիայն իմ երկրում է ակնկալվում: Ես չեմ փախչում շատերի նման, ապրում եմ իմ աղքատիկ քաղաքում, հայոց հողի վրա, իմ տանը՝ իմ զինվորի թիկունքում, և թող նա իմանա, որ ինքն էլ պաշտպան ունի, աջակցող: Ես ամեն անգամ ապրում եմ իմ մեկ օրով, երբ կողքիս անմահ հերոսների ոգիների մենությունն է աղաղակում:

Ապրիլյան դեպքերից հետո ժողովուրդս կաթվածահար եղած, ծառի տերևի պես դողում է ամեն քամուց ու ամպրոպից: Հանկարծակի լսելի դարձած կրակոցների արձագանքները երբեմն խախտում են շրջապատի լռությունը: Բայց ամեն օր վախը սրտումս փակում եմ աչքերս ու աղոթում վաղվա համար, աղոթում եմ սահմանը պահողների կյանքի համար: Պատահում է, որ չեմ կարողանում գիշերը հանգիստ քնել, վախը ներխուժում է ներսս, կարծես քնի մեջ էլ մղձավանջի տեսքով մի նոր ապրիլի երկուս եմ տեսնում: Վեր եմ թռչում տեղիցս, արդեն առավոտ է, շուրջս՝ խաղաղ… Եվ ինչքա՜ն լավ է, որ այս մի գիշերն էլ անցավ, նորից ուրախ եմ, որ առավոտը բարի էր ու շատ խաղաղ, և այդ օրը ես չտեսա այն սև գույնը և չզգացի այն տհաճ հոտը պատերազմի:

Հանգիստ շունչ եմ քաշում՝ մտածելով, թե ինչքան լավ է, որ երազ էր: Երբեմն մտածումներով հեռուն եմ գնում, ինձ խեղդում են այդ պահին սառած արցունքներս, և մի պահ մոռանում եմ խոսելու ունակությունս:

Իմ օրերը լռությամբ են շաղախված, ունեն տխրության համ: Սառած քամին գրկել է հոգիս, սփոփում է ինձ… Անձրևին զուգընթաց՝ լացում են նաև հիշողություններս: Զինվո՛րս, դու ինձ պաշտպանի՛ր, ես՝ քեզ, բայց մի՛ մոռացիր գույնը պատերազմի» (Անգելինա Անդրյան):

http://www.usarmenianews.com/am-n-8854.htm l

2017-05-14

ԵՍ ԶԻՆՎՈՐՆ ԵՄ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ

Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ հումանիտար դասարանի աշակերտուհի Լադա Արզումանյանի ստեղծագործական շարադրությունը, որ ԼՂ հանրապետական մրցույթում 2-րդ մրցանակային տեղ էր զբաղեցրել, ապրիլյան պատերազմի ականատեսի շարադրանք է: Դա նոր սերնդի համար հասունանալու, արթնացման շրջան էր, որ գիտակցեց հայրենիքը պաշտպանելու իր դերակատարության մասին, հասկացավ խաղաղության գինը ու իրեն տեսավ զինվորագրված հող հայրենիին: (Շարադրությունը՝ «Ես զինվորն եմ հայոց բանակի», տեղադրվում է որոշ կրճատումներով):

Հույսի՛ ու լույսի՛ ոստան, իմ Արցա՛խ աշխարհ, մեր ջանքերի լուսաղբյու՛ր շտեմարան, խորհրդածում ենք՝ մենք ու դու, մենք՝ ռանչպարի վար ու մաճով, դու՝ պայքարի ու ցասման մեծ արթնությամբ: Մենք՝ ընդամենը կեցող, դու՝ մեզ շեն պահող: Քեզ հետ հառնում է հողիդ ուժը և հարուցանում հայի այն միտքը, որ ուրիշ տեղ հնարավոր չէ երկնել, ուրիշի մեջ հնարավոր չէ գտնել քեզ: Սրտիս ամեն մի կապանքով կապված եմ, սոսնձված ու միախառնված քեզ: Ուրիշ տեղ... Ի՞նչ տեղ: Ինչո՞ւ: Ինչպե՞ս... Ո՛չ, դու ես եղել, կաս ու կլինես իմ երկիրը:

...Ապրիլյան այդ գիշերը խաղաղասեր իմ ազգի գլխին դարձյալ արյունոտ ամպրոպի պես պայթեց պատերազմը: Չէի մտածում երբևէ, որ կարող էի պատերազմ տեսնել, որ քաղաքս կարող էր փոթորկվել պատերազմի ալիքներից: Իմ երկրի ամեն մի ճիչը վրեժի ծարավ, ցասում ու կանչ դարձավ, ամեն մի առավոտը դարձավ պատարագ: Սիրտս զարկում էր ավելի բարձր ու հստակ, ցանկանում էի գնալ պատերազմի դաշտ, զենք վերցնել ու կանգնել եղբայրներիս կողքին, բայց այդ օրերին կարող էի միայն աղոթել: Աղոթում էի Աստծուն, որ պահապան լինի մեր զինվորներին, բայց հասկանում էի, որ պատերազմը չէր կարող լինել առանց կորուստների, և, նայելով երկնքին, խոսքեր էի մտմտում. «Քո կերտած աշխարհն է վտանգված, Տե՛ր, ճանաչի՛ր չարերին աշ-

խարհում, իմ ազգը վառում է փարոսներ, իսկ չարը լույսերն է քո մարում»:

Այդ գեղեցիկ առավոտը միանգամից մթնշաղվեց: Նորից տնքաց այրված ու անմեղ արյունով ողողված հողս ու ծնեց հերոսներ: Իմ սահմանամերձ քաղաքը կարծես դարձել էր խրամատ, որի մեջ հավաքված բոլոր սահմանապահ զինվորները ամեն կերպ փորձում էին պաշտպանել իրենց հողը, չէին ուզում լքել այն: Ես լսում էի արկերի պայթյունը: Եվ ամեն մի պայթյունի հետ տեսնում էի, թե ինչպես էին ավերակների վերածվում ու ամայանում քաղաքիս փողոցներն ու տները: Անձրևում էր սիրտս, կարծես հոգումս ամպեր էին կիտվել ու ամեն մի սրտիս զարկի հետ կաթիլ առ կաթիլ հոսում էին անձրևները սրտիս, ու խոնավացել էր սիրտս ամեն մի արցունքի ճչից, ամեն մի լռած խոսքից, ու ցավում էր սիրտս: Ես ցանկանում էի զենք վերցնել ու կանգնել զինվորի կողքին: Ցանկանում էի իմ մի կրակոցով լռեցնել պայթող ականների ձայնը...

Այսօր էլ ես տառապում եմ հայրենիքիս տառապանքով, ուրախանում ու հպարտանում նրա զավակների սխրանքներով: Ապրելով սահմանին այսքան մոտ բնակավայրում՝ ես միշտ նրա հետ եմ, մեզ հարազատ դարձած զինվորի կողքին և ապրում եմ նահատակների հիշողությամբ: Ես ամեն օր զրուցում եմ նրանց հետ և երբեմն ցավ, հոգու դատարկություն եմ զգում: Փնտրում եմ բառեր, որոնք հնարավորինս լավ կարտահայտեն այն, ինչ զգում եմ հիմա, բայց գոյություն չունեն նման բառեր, դրանք լոկ տառերի կույտ են և ի զորու չեն փոխանցելու կարոտով պարուրված իմ հպարտությունը, որ փորձում եմ ուղղել զինվորին:

«Ուզում եմ թռչել տիեզերքի աստղազարդ երկնակամարով ու հանդիպել քեզ, իմ հերո՛ս զինվոր: Դու կյանքդ զոհեցիր մեզ համար ու դարձար անմահ: Ես տեսնում եմ քեզ ամեն օր, ամեն ժամ: Քեզ փորձում եմ փնտրել մարդկանց մեջ, փորձում եմ տեսնել քո հայացքը, աչքերը, ես լսում եմ այն երգերը, որոնք դու երգել ես: Քայլերիդ ձայնից արթնանում են սարերը, ժպիտդ արևի պես ջերմացնում է ինձ: Քո արյունը մեր լեռների ալ կակաչներն են, երկնքի կապույտը՝ քո խաղաղ ոգին, դաշտերում արևի տակ շողշողացող քաղցրահամ բերքը հորովելիդ օրորն է, երկնքից թափվող աստղերը՝ քո մեծ պատրանքը: Երկնքում ճախրող աղավնին դու ես, քո սերն է, կիսատ մնացած երազանքներդ: Դու ցույց տվեցիր աշխարհին, թե ինչպես պիտի ապրել ու ինչպես պիտի անմահանալ:

Հոգումս կաթիլ առ կաթիլ կուտակվող դառնությունն ատելություն է դառնում: Ատելություն՝ թշնամու հանդեպ, որ բերանը բաց սպասում

է, որպեսզի խժռի մեզ: Բայց ես հավատում եմ, հավատում եմ քո բազկի ուժին, զինվո՛ր, հավատում եմ, որովհետև հավատն է մեզ ուժ տալիս: Քո շնորհիվ ես հանգիստ գլուխս բարձին եմ դնում՝ իմանալով, որ դու այդտեղ կանգնած ես: Ամեն գիշեր նայելով երկնքին՝ աղոթում եմ քո կյանքի համար, իսկ ամեն առավոտ արթնանալով՝ նայում եմ պատուհանից... Երբ պարզ է երկինքը, հասկանում եմ, որ դա միայն քո շնորհիվ է: Դու իսկական հերոս ես, ազգի ցավն ու նահատակվածների հերոսական ոգին ունես քո սրտում, մեր հավատն ու օրհնանքը՝ քո ճանապարհին: Բոլորս պատմում ենք, խոսում քո մասին, նկարագրում քեզ, գովեստի շատ ու շատ խոսքեր ասում, բայց բառերն այնքա՜ն խղճուկ են, այնքա՜ն նսեմ: Մեր շնչով, ծիծաղով, խոսքով ու կյանքով ենք քեզ պարտական, իմ զինվո՛ր եղբայր: Հայրենիքիս կյանքը, անուշ երազներով քունը, մեր լեզուն, ազգիս հարատևելը քո ձեռքերում է, քո ափերի մեջ:

Պատերազմ տեսած հայուհու աչքերով այսուհետ ուզում եմ խաղաղություն տեսնել թե՛ քո հոգում, թե՛ մեր հայրենիքում, պաշտպանի՛ր մեզ, որ հայոց յուրաքանչյուր բացվող օրվա համար խաղաղ լուսաբացներ լինեն ու կապույտ երկինք»: (Արզումանյան Լադա):

http://www.usarmenianews.com/am-n-8866.html

2017-05-15

ՆԱ ՈՒԶՈՒՄ Է ԴԱՌՆԱԼ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՎՈՐ

Արտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ հումանիտար դասարանի աշակերտուհի Արմինե Կարապետյանի ստեղծագործական շարադրությունը ԼՂ հանրապետական մրցույթում 2-րդ մրցանակային տեղ էր զբաղեցրել: Ապրիլյան պատերազմի կորուստները հոգում, նաև՝ զինվորական կյանքի նկատմամբ մեծ սիրով՝ նա ցանկություն ունի կանգնել զինվորի կողքին, ինքն էլ զենք վերցնել՝ որպես ինքնապաշտպանական միջոց, որը կապ չունի իր մարդասիրության հետ: Նոր սերնդի հայրենասիրական մտորումների արտահայտություն է, որ դեմ է արտագաղթին, խաղաղություն է երազում, հայրենիքի փրկությունը տեսնում հավաքական ուժի ու հայի ոգու մեջ: (Ստեղծագործական շարադրությունը՝«Ես զինվորն եմ հայոց բանակիե, տեղադրվում է որոշ կրճատումներով):

«Այդ օրը՝ ապրիլի 2-ին, անընդհատ նայում էի ծնողներիս պատերազմ տեսած աչքերին: Ոչինչ չէի զգում մինչև այն պահը, երբ հորս կանչեցին զորամասից: Անընդհատ խնդրում էի, որ ինձ էլ վերցնի իր հետ: Ռմբակոծությունը գնալով սաստկանում էր, չէի կարողանում արտասվել, միայն «Հայր մերը» շուրթերիս փորձում էի հորս համոզել: Իսկ հայրս շուտափույթ փորձում էր բոլորիս հանել տնից: Ես ոչ մի կերպ չէի համաձայնվում, բայց հետո մեծ դժվարությամբ տնից դուրս եկա նաև ես:

Պատրաստվում եմ ապագայում իմ պարտքը մատուցել հայրենիքիս: Կանգնել այն դիրքում, որտեղ եղել են մեր հերոս տղաները, պահել այն դիրքը, որ արյունով են պաշտպանել ու թշնամուն ապացուցել, որ «առյուծն առյուծ է, լինի էգ թե որձ»: Միշտ պատրաստ եմ իմ քնքուշ ձեռքով բռնել սառը զենքը ու թեկուզ կյանքովս՝ տեր կանգնել այս հողին:

Դեռ մանկուց սեր եմ ունեցել դեպի զինվորական համազգեստը, բայց երբևէ չեմ պատկերացրել, որ առիթ կունենամ այն հագնել: Մի

անգամ փորձել եմ... Երբ այն կրում ես, կարծես ներսումդ մի ուրիշ աշխարհ է բացվում, այդ պահին մտովի տեղափոխվում ես սահմանագիծ...Կամ գուցե երազանքիս պատճառն այն է, որ մեծացել եմ զինվորականի՞ ընտանիքում, չգիտեմ:

Արցախ եկած հատուկջոկատայինների շարքում զինվորական համազգեստով կանգնած աղջիկն էր երազանքիս պատճառը, հենց որ նրան տեսա, ընդամենը մի քանի րոպե. որոշված էր արդեն, որ պիտի դառնամ դիպուկահարուհի: Ճիշտ է, հիմա չեմ կարող զինվորի նման զենք բռնել և կանգնել սահմանում, բայց այստեղ ամեն օր աղոթում եմ նրանց համար: Երազանքս է դա, որի համար պատրաստ եմ ամեն ինչի, և թող սրանք զուր խոսքեր չթվան:

Ես անցած օրերի պատերազմն եմ հիշում, նոր օրերի մեծագույն կորուստը մեր: Հավատում եմ, որ մի օր թշնամին պատասխան է տալու մեր կորցրած հողերի, այն լավ տղաների կյանքը մկրատելու համար, մեր թափած արցունքի համար, ամեն մի արձակած գնդակի համար: Պատասխան է տալու՝ մոր աչքը որդու ճամփին թողնելու, հերոս տղաների ճակատագրերն անհայտ թողնելու համար...

Նաև այն կարծիքին եմ, որ մեր երկիրը միակն է, երբ պատերազմի ժամանակ ժողովուրդն օտարությունից վերադառնում է, իսկ խաղաղ ժամանակ՝ արտագաղթում: Որքա՜ն էլ դժվար լինի հայրենիքում ապրելը, մարդ չպետք է հեռանա իր տուն ու տեղից: Մի՞թե զինվորի համար հեշտ է սահման պահելը՝ իր կյանքը վտանգելով, կամ սահմանին մոտիկ ապրող հայ գյուղացու համար մի՞թե դժվար չէ ապրելը, բայց նա չի հեռանում, մնում է իր հողին կառչած: Արդյո՞ք մեզ համար դյուրին է սահմանամերձ բնակավայրում ապրելը, երբ հասցրինք նույնիսկ պատերազմ տեսնել, բայց այստեղ հիմա էլ ապրում ենք:

Իմ զինվոր եղբայրը պիտի իմանա, որ եկեղեցում վառածս մոմերից մեկը միշտ նրա համար է, գիշերվա աղոթքներս նրա համար են, նաև՝ Արցախիս խաղաղության համար. «Տե՛ր, խնդրում եմ, թո՛ղ ամեն զինվոր հասնի իր օջախը, թո՛ղ նա իր աչքերը բացի խաղաղությամբ, թո՛ղ երբեք չարթնանա թշնամու կրակոցից…»:

Մտքերս ուզում եմ ավարտել զինվորին ուղղված խոսքերով. «Զինվո՛ր, խոնարհվում եմ քո առջև ու խոստանում, որ ընդամենը ամիսներ անց հագնելու եմ համազգեստ՝ նախ որպես կուրսանտ, իսկ հետո կանգնելու եմ այն դիրքում, որը եղբայրներիս արյամբ է գծվել: Ես երազում եմ ծառայել, զինվորական համազգեստ հագնել: Սա իմ երազանքն է, նպատակը: Արցունքները կոկորդումս խեղդած եմ գրում այս

տողերը, երբ նայում եմ կապույտ երկնքին, թերթում մեր գոյամարտի փառավոր էջերը, հիշում հանուն հայրենիքի կյանքը զոհած հավերժի ճամփորդներին: Իսկ երբ ամեն անգամ լսում եմ զոհերի ու վիրավորների մասին, թեկուզ չեմ ճանաչում, սիրտս կտոր-կտոր է լինում:

Զինվո՛ր, զգո՛ն եղիր, հպա՛րտ, ուժե՛ղ եղիր, քանզի հաղթանակը կախված է որակից, այլ ոչ թե քանակից, իսկ թշնամին չունի այն ոգու ուժը, որն ապրում է քո մեջ: Ուզում եմ իմանաս, որ թիկունքում մենք քեզանով ենք ոգեշնչվում, քեզանով ապրում, խաղաղություն, համբերություն ու բարի հերթապահություն քեզ, իմ եղբա՛յր զինվոր: Սպասի՛ր, մի օր ես էլ կգամ քեզ հերթափոխելու»»: (Կարապետյան Արմինե):

http://www.usarmenianews.com/am-n-8874.html

2017-05-16

ՀԱՄԲՈՒՅՐՈՎ ՕԾՎԱԾ ՄԻ ՉՈՒՂԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿ

Գարուրակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Տաթևիկ Ղահրամանյանի ստեղծագործական շարադրությունը ԼՂ հանրապետական մրցույթում 3-րդ մրցանակային տեղ էր զբաղեցրել /ուսուցչուհի Վ. Իսրայելյան/: Իր լսած պատմության վերաբերությունն էր ապրիլյան պատերազմական օրերից, որ նրա խոսքում գեղարվեստական հնչողություն էր ստացել ու դարձել զինվորի չուղարկված մի վերջին նամակ: /Ստեղծագործական շարադրությունից տեղադրվում է մի փոքր հատված/:

«Գարունն իր բուրմունքը տարածել էր ամենուր: Դեռափթիթ ծաղիկներն իրենց թովչանքով մարդկանց սրտերը լցրել էին խանդաղատանքով ու ջերմությամբ: Գարնան արբեցնող բուրմունքին խառնվել էր սարսռազդու պատերազմի շունչը, որ գնալով սաստկանում էր և կարծես ցանկանում խժռել գարնան բույրը: Այն «ոգի առավ» ռումբերի տարափով ու սկսեց հեգնել բոլորին՝ հիշեցնելով, որ հային տրված չէ ըմբոշխնել գարնան նրբագեղությունը, և ահռելի դարձավ հայրենիքը կորցնելու վտանգը: Աննկարագրելի էր սահմանում տիրող իրավիճակը, քանզի այն քաոս չէր, քանի որ քաոսը բնորոշվում է մի ընթեռնելի բառով՝ քոաս, իսկ այստեղ վտանգված էր հող հայրենին, որտեղ չպետք է խնայվեր անգամ սեփական արյունը:

Խրամատի մի անկյունում առանձնացել էր զինվորը. պետք է հասցնել և գրել այս նամակը, այլապես ո՞վ գիտի...Նրա մոտ վախի մի փոքր նշույլ չկար, սակայն դեմքը շառագունած էր, և մտասույզ էր նա: Դեմքից կարելի էր հասկանալ, որ մտատանջության մեջ է, ներսից մի բան մաշում էր սիրտը: Վերջապես հանեց գրպանի ծալծլած թուղթը և սկսեց արագ-արագ գրել մորն ուղղված մի նամակ. «Պաշտելի՛ մայրս, մատներս դողում են, գիտեմ, որ իմ խոսքերով խոցելու եմ սիրտդ, բայց մի անհանգիստ զգացողություն պաշարում է միտքս ու շարունակում մաշել հոգիս: Հորս խլեցին նախորդ պատերազմի ժամանակ, ինձ չեն խլի

քեզանից, այս անգամ վրեժ ունեմ առնելու, որ խոր արմատներ ունի ձգած: Պատերազմ է, ամենուր ռումբեր են պայթում, իսկ ես վրեժ ունեմ առնելու անքուն գիշերներիդ, այն դառն արցունքներիդ համար... Գիտեմ՝ կկարդաս նամակս, աչքերդ կարցունքոտվեն, սիրտդ կզարկի ուժգնությամբ, բայց ես վճռել եմ. ատամներս սեղմած չեմ կարող այսպես ապրել..»:

Մատների արագ շարժումներին համընթաց՝ խաղաղվում էր հոգին, բայց աչքերում կրակ կար վառված և մոր հանդեպ անսահման կարոտ: Ծալեց, համբուրեց նամակը, դրեց գրպանում: Շուտով թշնամին հետ մղվեց, նա չտեսավ հաղթանակը: Ընկերները գտան զինվորի մարմինը խրամատում, գտան նաև նամակը, որ շաղախված էր արյամբ: Ավա՜ղ, վերջինն էր այն, ամենավերջինը, իր համբույրով օծված մի չուղարկված նամակ...» /Ղահրամանյան Տաթևիկ/:

http://www.usarmenianews.com/am-n-8886.html

2017-05-17

ՍՊԻՏԱԿ ԹՈՒՂԹ, ԳՈՒՅՆԵՐ, ՎՐԴԻՆ ՈՒ ԼՌՈՒԹՅՈՒՆ...

7-րդ դասարանում հայոց լեզվի տնային հանձնարարությունը, որ նախատեսված էր շարադրություն գրել «Իմ կախարդական վրձինը» վերնագրով, աշակերտների մոտ տարակարծությունների տեղիք տվեցին, թե անհասկանալի է, չեն կողմնորոշվում՝ ինչ պիտի գրեն: Որոշ բացատրական աշխատանք տարվելուց հետո հաջորդ դասաժամին, իրար հերթ չտալով, ոռպե առաջ ցանկանում էին ընթերցել իրենց շարադրանքը: Ուշադրությանս արժանացան Մանե Հակոբյանի գրած տողերը:

Նա համեստության տիպար է, դպրոցականին հարիր իր օրինակելի կարգապահական կեցվածքով ու դասարանում ունեցած ազնիվ կենսաղիրքով: Մեկ տարի առաջ էր Հայաստանի Արարատ քաղաքի դպրոցից տեղափոխվել մեզ մոտ՝ Մարտակերտ, դասարանցիների հետ հասցրել է մտերմանալ, նույնպիսի զգացողությամբ հարազատացել Արցախին, որն էլ նկատելի էր նրա շարադրության մեջ:

«Սպիտակ թուղթ, գույներ, վրձին ու լռություն...Որքա՜ն ասելիք ունեմ այս առարկաների միջոցով արտահայտելու, որքա՜ն երազանքներ... Այս պահին վրձինը ձեռքիս է, սակայն երանի՜ այն կախարդական լիներ ու իմ մտքի թռիչքն ու իղձերն իրականացներ:

Նկարում եմ դեղին գույնով արև շողուն, որ միշտ ժպտա ու շողշողա և ջերմացնի մեր քաջարի զինվորներին, ովքեր, արթուն խրամատներում, իմ երկիրն են պաշտպանում: Կանաչ գույնով իմ վրձինը կնկարի կանաչազարդ իմ Արցախը, որի նման վառ բնություն, կանաչ սարեր, ծիլ ու ծաղիկ չկա ուրիշ ոչ մի երկրում: Կնկարեմ կանաչ սարեր ու անկյունում՝ թղթի վրա, կնկարեմ մի նռնենի: Կվերցնեմ կարմիր ներկը, ծառի վրա կնկարեմ իմ Արցախի խորհրդանիշ կարմիր նուռը, որ հասել է ու ճաք տվել քաղցրությունից: Կանաչապատ արտում բազում կակաչների բոսոր փնջեր կնկարեմ, որ սիրո կրակի պես մեր մայրերի մթնած

սրտում լույսի անմար ճրագ վառեն, որ ոչ մի մայր լաց չլինի, փոխարենը՝ զավակների վերադարձից ուրախության ծափեր հնչեն, երգ ու պարը թնդան ամեն դռնից:

Մոխրագույնով կնկարեմ այս բացատում մի մեծ կամուրջ, որ երբևէ այս աշխարհում թշնամիներ էլ չլինեն, այլ կամրջին իմ նկարած շա՜տ-շատ ազգեր ձեռք ձեռքի տան ու բարեկամ լինեն միմյանց: Վարդագույնով կնկարեմ տուֆից մի շենք, որտեղ լքված մանուկներն ու շատ ծերեր հարազատի կհանդիպեն ու կգրկեն նրանք իրար ուրախության արցունքներով: Կնկարեմ իմ մայրիկին ու հայրիկին և մի քույրիկ կամ եղբայրիկ, որ ես մենակ չմեծանամ: Կվերցնեմ սպիտակ գույնը ու կջնջեմ երկրիս վրա սևով գրված չարաբաստիկ այն «մահ» բառը և մանկատունն ու ծերանոցը...

Այս ի՛նչ էր...Արևս տխրեց: Արևիս շուրթերը պիտի կարմիր ներկեմ, կողքին՝ մի լայն ժպիտ, որ արևոտ իմ Արցախն ապրի առանց այդ բառերի և իմ վրձնով կախարդական անկախ դառնա իմ երկիրը...»:

Նա կարդաց շատ հանգիստ, հատ-հատ, բառերի հանդարտ հնչողությամբ ու անսպասելի նկատեցի, որ աչքերն արցունքոտվել են: Հարցնում եմ հուզվելու պատճառը, իսկ նա իր թախծոտ դեմքին հայտնված անմեղ ու մաքուր ժպիտով է ինձ արձագանքում և շուտով իր շարադրանքին ավելացնում է տողեր. «Ճիշտն ասած, չգիտեմ՝ որ պահից հուզվեցի, երևի քույրիկ կամ եղբայր ցանկանալուց. դրանք ուրախության արցունքներ էին: Արդեն մեկ տարի է, ինչ այստեղ եմ, չեմ էլ հասկանում՝ ինչպես անցավ ժամանակը, դա նրանից է, որ ինձ լավ եմ զգում Արցախում և հայրենիքիս խաղաղությունն եմ ուզում»:

Քույրիկ կամ եղբայր ունենալու նրա խանդաղատագին զգացումին միահյուսվում է այն մեծ մարդասիրական ձգտումը, որ բոլորիս երազանքն է: Վերջացնում եմ տպագիր շարվածքը, մտորումներիս մեջ իմ աշակերտուհին է՝ իր անձնական ու անանձնական ցանկություններով...Երանի՜ թե իրականություն դառնային նրա բոլոր անբիծ ու մաքուր երազանքները, որ անսովոր ու պայծառ թախիծով են պատված:

Մանեի շարադրանքով, հիրավի, հրճվանք ապրեց նաև մանկավարժի իմ օրագիրը:

http://www.usarmenianews.com/am-n-8889.html

2017-05-18

ԹԵ ԻՆՉ ԷՐ ՆԿԱՐՈՒՄ ՅՈԹԵՐՈՐԴՅԻՆԵՐԻ ՎՐՉԻՆԸ

Նրանցից յուրաքանչյուրը յուրովի իր ցանկությունն էր արտահայտել՝ մեկը մյուսից հետաքրքրիր ու զարմանալի, և նրանց արագ վրձնահարվածներով առանձնանում էր կապույտ երկինքը, որ խաղաղություն էր ավետում ամբողջ աշխարհին: Երբեմն դասերից հեռացած աշակերտից առանձակի ոչինչ չես ակնկալում, բայց ահա զարմանքը պատում է, երբ ընթերցում ես մի քանի տողերում գեղեցիկ

ցանկության մասին, որ նա կախարդական իր վրձնով «կգունավորեր և կպայծառացներ անզավակ մայրերի, այրի կանանց և սերը կորցրած աղջիկների հոգին: Նույնիսկ այդ վրձինը նուրբ երանգներով կընդգծեր մարդու հոգու ուրախությունը, տեսանելի կլիներ անգամ սահմանին անվրդով կանգնած զինվորը» /Միրզաբեկյան Յուրա/:

«Կախարդական վրձին գոյություն ունի՞ աշխարհում, չգիտեմ, չեմ տեսել, բայց իմ կարծիքով, խաղաղությունը չենք կարող ստեղծել վրձնով, երբ այն կախված է մարդուց: Եթե իրականում գոյություն ունենար այն, ես կստեղծեի բարի սրտեր ունեցող մարդկանց, ովքեր չէին վնասի իրար, չէին նախանձի միմյանց: Ես կնկարեի ծիածան, որը կպաշտպաներ իմ հայրենիքը, կկատարեի բոլորի երազանքները, չէի թողնի, որ երկինքը սևանա ամոթից ու լացի մարդկանց վատ արարքներից» /Բեգլարյան Գերտրուդա/:

«Երանի՜ իմ կախարդական վրձինը շուտ հայտնվի և ի զորու լինի կատարելու իմ երազանքները, երանի՜... Բայց ինձ թվում է՝ այն իմ ձեռքում կհայտնվի մի քիչ ուշ, որովհետև այն հիմա գտնվում է արարչի ձեռքե-

րում: Ինքներդ կհամոզվեք, եթե պատուհանից դուրս նայեք: Այդ դեպքում ականատես կլինեք գարնան հրաշքներին՝ զմրուխտ կանաչ, ծաղկուն ծառեր, երփներանգ ծաղիկներ՝ եղյամապատ ու հրաշագեղ: Իսկ գուցե մի գեղեցիկ օր այն հայտնվել է իմ ձեռքերում, իսկ ես չե՛մ հասկացել....Օ՜, ո՛չ, դա աններելի կլինի, չէ՞ որ ես ուզում եմ այդ վրձնի միջոցով կերտել մեր ապագան՝ հանգիստ ու խաղաղ» /Հովհաննիսյան Մերի/:

«Ես այդ վրձնով կնկարեի խաղաղության աղավնիներ, քանի որ մենք ունենք այդ երանելի խաղաղության կարիքը: Կնկարեի երջանիկ կյանք ավետող մի քանի նկարներ, քանի որ մենք ինքներս երջանկության պակաս ունենք, անհոգությունը կփռվեր իմ նկարներում, քանի որ անհոգ մանկություն ենք երազում, և իմ վրձնով կջնջեի պատերազմը երկրի երեսից» /Մուսայելյան Մալենա/:

«Իսկ ես մարդկանց կնկարեի՝ գեղեցիկ, ժպտերես, լցված բարությամբ, նրանց հոգին այնքան պարզ կլինի, որքան գարնանային երկինքն իմ աչքերով: Իմ նկարած աշխարհում մարդիկ հանդուրժող կլինեն, իրար ներող, չեն լինի թշնամիներ: Կվերացնեմ անժամանակ եկած այն դաժան մահը, նրան փոխարինելու կգա կարապների սիրո նման այն երեք տառից կազմված սերը» /Բաղրյան Նարեկ/:

«Ես կենդանիներ կնկարեի, կցանկանայի, որ նրանք էլ կարողանային արտահայտվել, բայց ոչ թե իրենց ոտնահարված իրավունքների, այլ մարդկանց ցուցաբերած անմարդկային վերաբերմունքի համար, որ պատերազմ են հրահրում: Ես խղճում եմ նրանց, որ լեզու չունեն, սակայն իրենց էությամբ բարձր ու վեհ են շա՜տ-շատերից» /Սարգսյան Էլինա/:

«Ես կապույտ կներկեի Արցախի երկինքը, որ միշտ խաղաղ լինի, սև ամպեր չկուտակվեն մեր գլխավերևում» /Միրզոյան Աննա/:

«Երկնքում աղավնիներ կնկարեի ռմբակոծող ինքնաթիռների փոխարեն: Իմ վրձինը կվերացներ չարն ամբողջ աշխարհում» /Մելքումյան Էլմիրա/:

Երբեմն գուցե չենք հավատում հրաշքների, բայց կյանքում պետք է լինել նաև երազկոտ, ունենալ պայծառ երևակայություն, սակայն չմոռանալ այն մեծ վտանգը, որ մեր կողքին է՝ սահմանամերձ Մարտակերտում, որի մասին բարձրաձայնում է նոր սերունդը. «Երբեմն հավատում եմ հեքիաթներին ու անուշներին, ես էլ ցանկանում ունենալ կախարդական վրձին, բայց խաղաղությու՜ն, միայն խաղաղություն կնկարեի, ուրիշ ոչինչ» /Մելքոնյան Սոֆյա/:

http://www.usarmenianews.com/am-n-8899.html

2017-05-19

ՄՐՑԱՆԱԿ «ԲՐԵՅՆ-ՌԻՆԳ» ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂՈՒՄ

Թանգարանների միջազգային օրն Արցախի մշակույթի զարգացմանը, հայրենի երկրի ճանաչմանն ու գիտելիքների խորացմանն էր ուղղված Շուշիում կազմակերպված պատանի բնախույզների հավաքը և այցելությունը Գ. Գաբրիելյանցի անվան երկրաբանության պետական թանգարան: Այդ օրը՝ մայիսի 18-ին, անցկացվեց «Պատանի բնագետ» հանրապետական երկրորդ «Բրեյն-ռինգ» ինտելեկտուալ խաղը, որին ներկա էր նաև երկրի նախագահ Բ. Սահակյանը:

Մասնակից տասը թիմերի մեջ էին Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտները՝ խմբի ղեկավար, աշխարհագրության ուսուցչուհի Նունե Գասիյանի հետ, ովքեր հանդես եկան «Ջրաբերդ» թիմում և հաջողություն գրանցեցին՝ զբաղեցնելով 2-րդ մրցանակային տեղ: Ստացած պատվոգիրը, վկայականները, ճամբարում հանգստանալու ուղեգրերն ու նվերները, նաև նրանց բարձր տրամադրությունը, որ փոխանցվեց բոլորիս, դարձան այդ հաղթանակի լավագույն գրավականը, որի մասին արտահայտվեցին ինտելեկտուալ խաղի՝ մեր դպրոցի մասնակիցներն իրենց խոսքերում:

Առուշանյան Նորայր - «Մեր ուսուցչուհի տիկին Գասիյանը կարողացավ ժամանակին թիմ ձևավորել և նպատակային աշխատանք տանել մեզ հետ, որի արդյունքում կարողացանք հաջողության հասնել: Մենք նպատակ ունեինք հաղթելու. դա սկզբից էլ արտահայտվեց մեր մարտական բարձր տրամադրությամբ: Առաջին փուլում գերազանց մասնակցություն ունեցանք, ուղղակի անթերի պատասխանեցինք բոլոր տասը հարցերին: Սակայն երկրորդ փուլում չկարողացանք ապահովել «տրիումֆային» առաջին տեղը: Մեր թիմն արժանացավ գեղե-

ցիկ քարից պատրաստված արձանիկի, որը նվիրեցինք մեր ուսուցչուհուն, իսկ ակտիվ մասնակցության համար մեզ շնորհեցին լավագույն քարից պատրաստված բուրգ և ճամբար գնալու ուղեգիր, որը մեզ շատ ուրախացրեց: Ես մինչ այդ մասնակցել էի աշխարհագրության օլիմպիադային, տեսա, որ գիտելիքներս օգնեցին նաև այս մրցույթի ժամանակ»:

Ավագիմյան Գոռ - «Մենք նպատակ ունեինք լավ խաղ ցույց տալ, որը մեզ մոտ ստացվեց: Մրցույթն սկսվելուց առաջ ինձ մոտ լարվածություն կար, որն առաջին փուլում անցավ, երբ բոլոր հարցերին պատասխանեցինք: Այս հաղթանակի համար շնորհակալ ենք մեր ուսուցչուհուն, մենք արժանացանք պատվոգրի, գրքերի, մեզ նվիրեցին փարավոնի քանդակով արձանիկ, ուղղակի շնորհակալ եմ բոլոր կազմակերպիչներին՝ այս գեղեցիկ միջոցառման համար»:

Այվազյան Լիլիթ - «Այս ուսումնականում մասնակցելով աշխարհագրության օլիմպիադայի եզրափակիչ փուլին՝ մեծ փորձ ձեռք բերեցի: Մրցույթից առաջ մեծ լարվածություն կար, բայց մեր ուսուցչուհին քաջալերում էր մեզ: Սկզբում այցելեցինք երկրաբանական թանգարան և մեծ բավականություն ստացանք: Այնուհետև գնացինք կերպարվեստի թանգարան, որտեղ ջերմ մթնոլորտ էր, և այնտեղ էլ անցկացվեց մրցույթը: Մեր հաղթանակը մեծ ոգևորությամբ նշեցինք. դա մեր ուսուցչուհու և թիմի անդամներիս աշխատանքի շնորհիվ էր, շնորհակալություն բոլորին՝ մեզ այսպիսի բավականություն պարգևելու համար»:

Գրիգորյան Նորա - «Ամեն ինչ բարձր մակարդակով էր կազմակերպված, և ամենաշատն ինձ դուր եկավ երկրաբանության թանգարանը: Սկզբից էլ այն զգացողությունն ունեի, որ մենք պիտի հաղթենք: Այդտեղ մեծ օգնություն էր աշխարհագրության մեր իմացությունը: Ողջունելի է, որ մենք կարողացանք գրավել մրցանակային տեղ, տա՛ Աստված, որ մյուս տարի ավելի բարձր ցուցանիշ գրանցենք»:

Ղահրամանյան Տաթև - «Բավականին հաճելի էր, որ մեր թիմը համախմբված էր, և թեժ մրցակցություն ընթացավ: Կարող էինք գրավել առաջին պատվավոր հորիզոնականը, բայց երկրորդ փուլի երկու հարցում թերացանք: Իսկ տասնօրյա ճամբարի հանգստյան ուղեգիրը մեծ խանդավառությամբ ընդունեցինք»:

Կարապետյան Քրիստինե - «Մինչև մրցույթի սկսվելը շատ լարված էի, բայց մեր ուսուցչուհու շնորհիվ և առաջին փուլում գրանցած բարձր միավորների արդյունքում՝ լարվածությունս գրեթե անցավ: Հպարտ և

ուրախ եմ, որ այսպիսի հնարավորություն ընձեռվեց և կարողացանք պատմական Շուշիում նման հաղթանակ արձանագրել»:

Այս հաղթական տրամադրությամբ ոգևորված՝ հիացմունք եմ ապրում և շնորհավորում մեր աշակերտներին ու իմ գործընկեր ուսուցչուհուն: Եվ թվում է՝ կարիք չկա հարցնել թիմի ղեկավար Ն. Գասիյանին իր ապրած զգացողության մասին, երբ տեսանելի է նրա աշխատանքի արդյունքը, բայց ուսուցչուհու խոսքում հուզմունք կար, մեծ գոհունակություն, որ գալիս էր հաստատելու այն մեծ ճշմարտությունը, որ գիտելիքը ուժ է, իսկ հայրենի երկրի ճանաչողությունը՝ մեծ հաղթանակ:

http://www.usarmenianews.com/am-n-8915.html

2017-05-19

ԵՐԲ ՈՒՍՈՒՑՉԻՆ «ՀԱՂԹՈՒՄ Է» ԱՇԱԿԵՐՏԸ

Էլինա Սարգսյան...Նա իմ դասղեկական 7-րդ ա դասարանի ավագն է: Իսկ այդ հասարակական գործունեության մեջ ընդգրկվել, նշանակում է՝ իր վրա մեծ պատասխանատվություն վերցնել: Ուսումնական տարվա սկզբին աշակերտական կոլեկտիվի կողմից ընտրված ավագն ամբողջ տարվա ընթացքում դասարանի կենտրոնական դեմքն է, ում ուղղվում է անմիջապես դասղեկիս հայացքը, առավելապես դասարանում տեղի ունեցած որևէ բացասական արարքի, ընդհանրապես, կարգապահական խախտման ժամանակ: Նման դեպքերում երբեմն «մեղքի» ամենամեծ բաժինը հասնում է ավագին: Այս օրերին ես դասարանում չլսելու տվեցի նրա բարձրաձայն առաջարկությունը, որ իրեն ազատեմ ավագությունից, այն էլ այն դեպքում, երբ օրեր անց ավարտում ենք ուսումնական տարին:

Իմ դիտողությունը երբեմն անբաժան է նրանից... Այդ օրն էլ նախորդների շարունակությունն էր, բայց երկար չտևեց. նա ասելիք ուներ իր պարզ, անմիջական, կենսախինդ խառնվածքով, որ դասից ուշացած՝ դասարանի մեկ այլ աշակերտուհու հետ, զանգը հնչելուց մի քանի րոպե անց, մտավ դասարան: Վարդերի գեղեցիկ փունջն իր շառագույնը փոխանցել էր աղջիկներին, որոնցից մեկը ժպտում էր՝ ծաղիկները ձեռքին, մյուսն ամոթխած էր, գլխահակ: Ուսուցչուհուս նվիրած այդ երփներանգ վարդերի այտերին թառած էր «ներողություն» հայցող նրանց խոսքը, որ իր վարակիչ գեղեցկությունը փոխանցել էր ինձ:

Կարծես ամեն ինչ հարթված էր, բայց Էլինա Սարգսյանն ասելիք ուներ ինձ և պիտի այն արտահայտեր իր տնային հանձնարարության տողերում, որ շուտով հայտնվում է իմ ձեռքին. «Ամեն անգամ երբ ինձ հետ մի արտասովոր բան է կատարվում, արդեն սպասում եմ, թե ինչպես է մեկնաբանելու իմ այդ արարքն ուսուցչուհիս: Նա մեր՝ դպրոցականներիս մասին գրում է, կարելի է ասել, որ նրա գրածով ավելի ենք բացահայտվում մենք: Ուսուցչուհիս կերտում է մեր կերպարն ու

խառնվածքը, բայց ես տարբերվում եմ մյուսներից նրանով, որ կյանքում ինքնափոխ եմ և իմ ներաշխարհում կատարվածի մասին չեմ հայտնում ոչ մեկին, այնինչ ուսուցչուհուս կողմից ես բացահայտված եմ: Ինքս փակ եմ և երբեմն կենսախնդությունս ինձ չի օգնում բացել սիրտս և անկեղծանալ, բայց առանց իմ անկեղծության և անմիջականության էլ ուսուցչուհիս ինձ հասկանում է:

Նա իմ ամեն բառի մեջ խոր իմաստ է փնտրում, կշռում է ասածս խոսքը և իմ մեջ միշտ փորձում մի նոր բան բացահայտել: Եվ այդպես բացահայտվում է իմ հոգեկան աշխարհը, ապրումները, նպատակներն ու ձգտումները, այն ամենը, ինչ խտացված է իմ ներսում՝ հոգուս խորքում: Նա կարծես մի դուռ ունի, որով կարողանում է ներթափանցել իր քննախույզ հայացքով: Նույնիսկ համադասարանցիներս երբեմն փորձում են իմ մեջ որոնել այն, ինչ առանց ջանք թափելու անում է ուսուցչուհիս, բայց դա նրանց չի հաջողվում, քանի որ միայն ուսուցչուհիս գիտի իմ սրտի այբուբենը և ոչ միայն իմ, այլ նաև՝ դասընկերներիս:

Նա կարողանում է կարդալ մեր աչքերից, կարդում է զգուշությամբ՝ ոչինչ բաց չթողնելով: Մեր հոգու խորքը թափանցելով՝ նա տեսնում է բոլորի աշխարհը, և եթե շատերը զանազանություն չեն դնում ոչ մեկի միջև, գուցե նրանց համար մենք միայն դեռահասներ ենք, ապա ուսուցչուհուս համար մենք կյանքով լեցուն աշակերտներ ենք, որ ունենք օգնության կարիք, որ յուրովի ենք և բոլորովին տարբեր: Ես արժանացել եմ նրա քննական հայացքին, միաժամանակ երջանկությամբ է լցվում սիրտս, երբ գիտեմ, որ ես էլ նրա հրատարակվելիք գրքի կերպարներից եմ, գիրք, որի հեղինակն է իմ ուսուցչուհին, ով ինձ համար դարձել է «կյանքի ուսուցիչ»»:

Այս տողերն ինձ զինաթափում են... Արտաքուստ չեմ ուզում ցույց տալ հոգուս ալեկոծությունը, բայց գիտեմ, որ նա ինձ «հաղթել է»: Եվ այդ հաղթանակը կրում է այսօրվա գիտակից սերնդի ներկայացուցիչը՝ իմ դասարանի ավագը, ով ամբողջ ուսումնական տարին լռությամբ «հանդուրժել է» իմ բոլոր դիտողությունները...

http://www.usarmenianews.com/am-n-8904.html

2017-05-22

«ՈՍԿԵ ՄԻՋԻՆԸ»՝ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Չգիտեմ՝ առայսօր ինձ որքանով է հաջողվել այս տարածքում ներկայացնել մեր դպրոցն ու այնտեղ սովորող աշակերտներին, բայց միշտ էլ զերծ եմ մնացել թերությունների վերհանումից, որ ամենուր էլ առկա են, և որոնց երբեմն մենք էլ առնչվում ենք: Նպատակ չեմ ունեցել ներկայացնելու իդեալական ուսուցչի կամ դպրոցականի կերպար, բայց փորձել եմ իմ գրառումներում կերտած իրական կերպարներով տեսնել յուրաքանչյուրի մոտ լույսի այն շողը, որը կարող էր ավելի մեծանալ ու նոր տարածքներ ընդգրկել:

Ուսումնական տարվա ավարտին մի քանի օր է մնացել: Ամեն անգամ այս օրերին մի հետադարձ հայացք եմ ձգում, և անցած դեպքերի ու դեմքերի խառնուրդում նոր կերպարներ եմ հայտնաբերում, որով հանրագումարի եմ բերում նաև այն թերությունները, որ առկա են եղել ուսումնական գործընթացում:

Այդ ճանապարհին վերստին հաստատում եմ մանկավարժի աշխատանքի դժվարությունները, որ երբեմն հասկացվում են շրջապատի կողմից, երբեմն՝ անտեսվում: Իմ մանկավարժական գործունեության տարիներին միշտ էլ թևավորել եմ, առաջ մղել, լուսավոր կետից նայել իմ առջև նստած աշակերտներին, բայց չէի ասի, որ միշտ էլ հարթ է եղել այդ ճանապարհը: Անցած ուղիս արտացոլվում է նաև դարուփոսերի հաղթահարումով, որ ձգտել եմ հասկացված լինել, երբեմն նույնիսկ աչք փակել մեր առջև նստած աշակերտների թույլ տված բացթողումների վրա: Ամեն տարի համոզվում եմ, որ ավելի է դժվարանում մանկավարժի աշխատանքը, երբ այսօրվա գիտակից սերունդը ենթադրում է երբեմն, որ ինքը հասուն է այնքան, որ կարող է ամեն անգամ հակադարձել ուսուցչին:

Ինձ համար նորություն չի դառնում, երբ լսում եմ, թե ինչու են ընդհանրապես արձակուրդի օրերին որևէ տնային հանձնարարություն առաջարկում: Այլևս չեմ զարմանում, երբ դպրոցականն ամբողջ ուստարին գիրք չի բացում, բայց սպասում է ուսուցչի բարյացակամ վերաբերմունքին՝ մի նվազագույն գնահատական ստանալու համար, նույնիսկ երբեմն համոզված է, որ ուսուցիչն ուզի թե չուզի դրական կնշանակի, այլապես նա չի ցանկանա «վատի» պիտակն իր վրա վերցնի: Երբեմն ուսուցիչը վատամարդ է դառնում, թե ինչու նկատեց, որ

աշակերտը գրագողությամբ է զբաղվում: Անտարբերությունն էլ չարիք է, երբ դպրոցականի համար նշանակություն չունի, թե իրեն ինչ են գնահատում: Անտանելի է որոշ դպրոցականների մեծամտությունը, երբ դպրոցականին թև ենք տալիս, մեծարում, բայց հաստատված մտերմական հարաբերությունների արդյունքում նա դառնում է ինքնահավան ու եսապաշտ: Մեր շրջապատում էլ երբեմն լինում է, որ դպրոցականը արհամարհանքով նմանակում է ուսուցչի խոսքը, երբեմն դեռահասը չի ցանկանում, որ ծնողը տեղյակ լինի իր անկարգությանը, և հանկարծ «մեղադրյալի աթոռին» հայտնվում է դասավանդող ուսուցիչը կամ դասղեկը, ով տեղեկացրել է: Ինչու՞ չէ, երբեմն պատահում է նաև, որ ծնողը, եթե «պետք է ուսուցչին», ապա թող վերջինս գնա նրա հետ տեսակցության, ինչու՞ պիտի ծնողը ներկայանա:

Ուսուցիչներն էլ տարբեր են դեռահասների հետ ունեցած հարաբերություններում: Տարիների իմ փորձը ցույց է տվել, որ պետք է պահել «ոսկե միջինը», հարաբերությունների այն անհրաժեշտ հեռավորությունը, որով ոչ թե ստատուսային շփումներ ենք հաստատում աշակերտների հետ, այլ պահպանում ենք մանկավարժական հաղորդակցման կանոնները: Մանկավարժական հաղորդակցումը չպետք է ունենա սխալ բացատներ, որոնցում կարող է ծնվել ուսուցչի կերպարային ազդեցության կորստի վտանգը:

http://www.usarmenianews.com/am-n-8926.html

2017-05-23

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԽՈՍՔ.... ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՐՑԱԽԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՏՈՆԸ

Այսօր Արցախի լրագրողների մասնագիտական տոնն է:Կարող է հարց ծագել՝ ինչու՞ միայն Արցախի լրագրողների...Կարծես չեմ էլ ակնկալում հարցիս պատասխանը լսելու, բայց մի ներքին հպարտություն զգացնել է տալիս իրեն, որ տարվա ընթացքում կա մեկ առանձին օր՝ մայիսի 23-ը, որ նշվում է Արցախի լրագրողների մասնագիտական տոնը:

Միշտ էլ ուսուցչուհուս առիթ է եղել շփվելու լրագրողների հետ, երբ այս կամ այն հոդվածով թղթակցել եմ որևէ մամուլի, երբեմն էլ հարցազրույցով հայտնվել Արցախի հեռուստատեսության էկրանից այն կողմ կամ ներկայացել հանրային ռադիոյով: Առանձնակի հարգանք ունեմ այս ոլորտի նկատմամբ, երբ համոզված եմ, որ դժվարին ու պատասխանատու աշխատանք է պահանջվում լրագրողներից, որպեսզի կարողանան արդարացնել հանրության սպասելիքները: Կարելի է ասել, որ այն նաև «վտանգավոր» ասպարեզ է, որովհետև միշտ չէ, որ ակնկալվում է լսել դյուրինը, երբեմն լրագրողական աշխատանքի ճշմարտացի բացահայտումները կարող են նրանց աչքի փուշ դարձնել շրջապատում, բայց նաև համոզված եմ, որ լրագրողն իր անաչառ ու անկողմնակալ խոսքով պիտի կարողանա հաղթահարել նման անջրպետը:

Լրագրողներին էլ ի վերուստ է տրված հայրենիքին ծառայելու վեհ կոչումը, նրանք էլ կրում են կյանքի դառնությունները, դառնում իրենց երկրի տխուր և ուրախ օրերի երգիչը, ստանձնում վեր հանելու ժամանակի հրատապ ու խնդրահարույց հարցերը, ապրում ժողովրդի մտահոգությամբ, քանի որ առաջին հերթին նրանց է վերապահված իրականության ճշմարտացի լուսաբանումը: Լրագրողն է, որ իր հավաքական կերպարով ներկայացնում է իր երկիրը, ապրած միջավայրը, դառնում անանձնական տրամադրությունների արտահայտիչը: Լրագրողն է մաքուր գրական լեզուն ի ցույց դնում հանրությանը, դառնում իր լեզվի կենսունակ պահողը: Նա իր մեջ կրում է դարի շունչը և իր ազգային

մշակույթի կրողն է: Նրա տեսադաշտում մարդն է, ով արարում է, պայքարում՝ անկախ մասնագիտությունից ու տարիքից:

Անցած դարավերջի Արցախյան ազատագրական պատերազմը և հետպատերազմյան ժամանակաշրջանը, նոր դարասկզբի հարաբերական խաղաղությունն ու ապրիլյան պատերազմը լրագրողների համար մի նոր հերոսական ճանապարհ ամրագրեցին, նրանք էլ դարձան իրենց տեսակի մեջ զինվորներ, որ իրենց գրիչը ծառայեցրին հայրենիքին, և այսօր էլ նույն ոգով շարունակվում է նրանց մտավոր գործունեությունը:

Արցախի դպրոցի ուսուցչուհիս շնորհավորում է ոլորտի բոլոր լրագրողների մասնագիտական տոնը, ցանկանում ասպարեզում մի նոր հոգևոր վերածնունդ ու կենսանորոգ տարերք, խաղաղ երկինք ու նոր օրերի արշալույսի բեղմնավոր և լուսավոր ճանապարհ:

http://www.usarmenianews.com/am-n-8930.html

2017-05-24

ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻ ԽՈՀԵՐԻՑ

Ինչպես մնացած կրթօջախներում, մեզ մոտ էլ՝ Մարտակերտում, ուսումնական տարվա վերջին օրերն են՝ կիսամյակային և տարեկան գնահատականների ամփոփում, «Վերջին զանգի» նախապատրաստություն: Յուրաքանչյուր դասարանում տարբեր է աշակերտների ընդհանուր տրամադրվածությունը, միջին օղակում անհանգստություն կա գնահատականների, տարեվերջի կազմակերպվելիք էքսկուրսիայի շուրջը՝ հակառակ բարձր դասարանցիների:

Այստեղ այլ է պատկերը: 11-րդ դասարանում ամենաքույլ սովորող աշակերտն ինչու՞ է համոզված, որ ինքը մինչև մի քանի տարի կհարստանա, կունենա բարձրագույն կրթության դիպլոմ, ապահովված կլինի մեքենայով, և հիշեցնում է, որ ոտքով քայլող իր նախկին ուսուցչուհուն անպայման իր մեքենայով տուն կհասցնի: Բայց դա քիչ է դեռ, կունենա ամենաշքեղ տունը, կօգնի իր ուսուցչուհուն՝ դպրոցականների մասին գրած գիրքը հրատարակելու:

Ժամանակնե՞րն են փոխվել, թե՞ մենք, որ չենք հարմարվում նոր սերնդի մեծամիտ կեցվածքին, բայց չէ՞ որ ճշմարտություն կա նրանց խոսքերում, և մեր առջև նստած ամենաքույլ կարողությունների տեր աշակերտներն են հետագայում առավել նորմալ ու բարեկեցիկ կյանք ստեղծում, և օրինակները բազմաթիվ են, ու նրանք էլ անուններով են խոսում:

Այն մյուսը օրեր է հաշվում ավարտի դպրոցը, որ մեկնի զինվորական ծառայության, բայց ամենևին նպատակ չունի հետո ընտանիք ստեղծելու...Մտավախությո՞ն ունի այդ նոր կյանքի հանդեպ, թե՞ իր ազատությունից զրկվելու վտանգ է տեսնում, ում ցանկանում եմ հակադարձել: Իսկ ոմանց համար հոգնեցուցիչ է դարձել 12-ամյա կրթությունը, նորի ձգտում կա, ուսանողական կյանքի մեծ ցանկություն:

Որոշ դպրոցականների մոտ անհանգիստ ապրումներ կան՝ պետական քննությունների հետ կապված, վերջին օրերի անսովոր զգացողություն, նոր կյանքի շեմին հուզական տրամադրություն կա, անցած օրերի հանդեպ երանելի հիշողության արթնացում:

Մեր մտերմիկ զրույցում ես էլ երբեմն երևում եմ իմ դպրոցական և ուսանողական տարիներին, նրանց հետ տեղի ունեցած զրույցը ինձ տանում է երբեմն այն օրերը, որ ամեն ուստարվա ավարտին մի նոր

հիշողություն է դառնում, մի նոր կարոտ անցած երիտասարդական տարիների հանդեպ:

Դպրոցից վերադառնում եմ տուն, ձեռքիս վարդերի փունջ է, որ ինձ են նվիրել 12-րդ դասարանում: Կեսճանապարհին հանկարծակի կողքիս արգելակած մեքենայի ղեկին իմ նախկին աշակերտներից է...Այս անգամ ես մտքերով նրանց հետ եմ՝ անցած տարիների մեր շրջանավարտների, իսկ հայացքս վարդերի շիկացած այտերին է: Թոռնիկս ինձ հետ է. մեքենայից իջնում ենք, նա զարմացած ինձ է նայում. «Տատի՛, այդ ո՞վ էր, որքա՜ն բարի է...»: Խանութից խանութ եմ մտնում՝ վարդերի մի փունջ ձեռքիս, մտքերով ես նրա հետ եմ, ով այնքան բարի է...

http://www.usarmenianews.com/am-n-8933.html

2017-05-25

ԱՆՑԱԾ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԵՐԻ» ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ...

Ուսումնական տարին միշտ էլ ավարտվում է «Վերջին զանգի» տոնական օրվա տրամադրությամբ, միջոցառում, որ գեղեցիկ խորհուրդ ունի իր ներսում՝ թախծի և ուրախության միախառն զգացողությամբ: Ամենից շատ ծանրաբեռնվածություն այդ օրերին դասղեկների մոտ է, որ ամենայն նվիրվածությամբ ավարտական դասարաններում ձգտում են հավուր պատշաճի կազմակերպել այդ հանդիսավոր միջոցառումը: Պակաս անհանգիստ չեն ծնողները, ովքեր մտահոգված են նաև իրենց երեխաների նյութականի ապահովմամբ, առավելապես՝ տվյալ դեպքում կարևորվում է շրջանավարտների արտաքին տեսքը, որ բոլորի ուշադրության կենտրոնում է լինում:

Մարտակերտ սահմանամերձ բնակավայրում «Վերջին զանգը» ամեն տարի փոխում է իր երանգները: Այն մեր ապրելակերպն է ուրվագծում, մեր անցած ու ներկա տրամադրությունը, որ տեսանելի է դառնում շրջանավարտների կեցվածքի և նրանց շուրջը ձևավորված արտաքին ներկապնակի գույների փոփոխությամբ:

2015-ի «Վերջին զանգի» հիշողություններով՝ այդ հանդիսավոր օրվա նկարներին եմ նայում:

Ուրախ տրամադրություն կար այնտեղ, եռագույնի խորհուրդ, որ երփներանգվում էր շրջանավարտների շուրջբոլորը, ճերմակ աղավնիների սլացք կար, կապույտ երկնակամար փոքրիկների զուգապարում: Արցախյան ազատամարտի նահատակների հիշատակին ուղղված խոսք կար, նոր օրերի վառ երազանքներ...

2016-ի «Վերջին զանգը» յուրովի տարբերվում էր նախորդներից: Մթագնած էր երկնակամարը, երբ ոչ հեռավոր ապրիլյան պատերազմն իր դրոշմն էր դրել ամենուր, որ զգացվեց բոլորիս հոգում, անգամ շրջանավարտների կեցվածքի վրա:

Պատերազմի հետքերն իր վրա կրած կրթօջախի կամարների տակ սգավոր մի սերունդ էր հրաժեշտի խոսք ասում դպրոցին և ուսուցիչներին: Նոր օրերի կորուստները թարմ էին, խոսքերը՝ արցունքախառն: Զանգը հնչում էր թախծագին՝ ազդարարելով ապրելու կամքը մեր, որ երբեմն դառնում էր ըմբոստություն՝ հայատյաց թշնամու բարբարոսության դեմ: Պատերազմ տեսած սերունդն էր վերադարձել՝ նոր ուժ ստացած սահմանապահ զինվորի հերոսությունից, որ «ո՛չ» էր ասում պատերազմին, և շրջանավարտի «Կա՛նգ առ, պատերա՛զմ» երգը պիտի դառնար մի նոր կոչ ու իր թևերը փռեր ամենուր, որ ազդարարում էր հայկական հողի վրա խաղաղ ապրելու սերնդի հզոր ոգին:

Արդեն ժամեր են մնացել 2017-ի «Վերջին զանգին»: Այս հարաբերական խաղաղ օրերին, երբ ամեն օր սահմանամերձ բնակավայրում վտանգն առկա է, մեր շրջանավարտների հրաժեշտի խոսքերում հպարտությամբ տոգորված զգացմունքների արթնացում կլինի, մարդասիրական ձգտումների բոլորանվեր արարում՝ նահատակների հիշատակի խոնարհումով, հայրենի հողի զորությամբ:

http://www.usarmenianews.com/am-n-8940.html

2017-05-26

«ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ» ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ

Դպրոցի երրորդ հարկում եմ, քայլերս ինձ ամեն օրվա պես տանում են 12-րդ դասարան: Հիացմունքս անսահման է, դասարանի արտաքին տեսքն ու շրջանավարտների փայլող հայացքներն ավետում են այն մասին, որ նորից մի սերունդ կյանքի նոր փուլ է թևակոխում: Բայց գիշերվա անձրևից հետո եղանակը թխպամած է, մտավախություն կա, որ կարող է նորից անձրև տեղալ ու խանգարել նախատեսված հանդիսավոր միջոցառումը:

Բոպեներ անց դպրոցի կամարների տակ թվաց՝ հանդիսավոր երդում է հնչում, ականատես ենք մի սուրբ արարողության, որտեղ մեկ բոպե լռությունն անգամ խոսուն է դառնում, ու խոսքեր են ասվում և ծաղիկներ խոնարհվում նահատակների հիշատակին, հնչում է հայրենյաց երգը, որ աղոթք է դառնում, ակնածանք՝ այս սուրբ հողին իրենց ընծայաբերողների համար: Իսկ երկնի կապույտում բաց թողնված աղավնիների ճախրանքը խաղաղ մի կյանք է ավետում, որ բոլորիս սրտի բաղձանքն է:

Շնորհակալական խոսքեր են հնչում, որ ուղղված են դպրոցի տնօրենությանը, ուսուցիչներին ու հարազատ կրթօջախին: «Ինչու՞ է այսպես սիրտս մղկտում, Երբ մոտենում է ժամը բաժանման…Կարծես ոչ մի տեղ էլ չեմ գտնի ես Դպրոցի նման հարազատ օջախ, Չէ՞ որ դպրոցն է իմ երկրորդ տունը, Կարծես անտուն եմ դարձել ես հիմա...»:

Երևի թե ամենից շատ դասղեկներն են հուզվում նման պահերին, իզուր չեն ուսուցչուհիներ Նինա Բաղունցին և Նոնա Հայապետյանին ուղղված խոսքերն այսքան սրտառուչ. «Վարդերի բուրմունք, հույզերի արցունք, Սիրելի դեմքեր, ժպտացող աչքեր, Նայի՛ր, իմ դասղե՛կ, Այսօր գարուն է համայն աշխարհում...»:

Նույնքան հուզիչ էր նաև 12-րդ հոսքային դասարանի դասղեկ Նոնա Հայրապետյանի ելույթը, որն անկեղծ զգացումների պոռթկում էր և ուրվագծում էր տարիների համատեղ ուսումնադաստիարակչական աշխատանքի ու մտերմիկ հարաբերությունների մի գեղեցիկ պատկեր:

Մեղմ երաժշտության տակ շրջանավարտների զուգապարն է թևածում, այնուհետև աղջիկների խրոխտ պարը, հրաժեշտի երգեր են հնչում, խոսքեր բաժանման. «Այսօր մեր վերջին զանգն է ղողանջում, Այսօր կարոտ կա մեր հոգու խորքում: Ուզում ենք այսօր ասել բոլորը, Ինչ որ չենք ասել տասներկու տարում...»:

Տարբեր ելույթներ են հնչում, բարի ճանապարհի խոսքեր, որ հայրենյաց դաս է դառնում, և նորից ավանդույթ դարձած մի դպրոցական տոն ավարտին է հասնում, այս անգամ դասերի սկիզբն ու վերջն ազդարարող զանգը շատ երկար է հնչում...

Հրաշալի տոնական օրն իր շարունակությունն ունեցավ Մարտակերտի հանդիսությունների սրահում՝ շրջանավարտների, նրանց դասավանդող ուսուցիչների և ծնողների մասնակցությամբ: Այդ սքանչելի օրվան բարձր տրամադրություն էր փոխանցում 12-րդ հոսքային դասարանի դասղեկ, ռուսաց լեզվի ուսուցչուհի Նոնա Հայրապետյանը:

Նա առատ է ամեն ինչով. դա իր գեղեցկությունն է, որ արտաքին փայլ է տալիս նրան, նաև շռայլ է իր ժպիտներով, կենսուրախ ու կատակասեր բնավորությամբ: Ծիծաղը նրա ուղեկիցն է միշտ, որ թևածում է նաև մեր շուրջբոլորը և իր կենսասիրությամբ ամենուր փռում մի նոր մաքուր ու ազնիվ կյանք, որտեղ պահի տակ վերանում ենք ու մոռանում մեր գլխին կախված այն մեծ վտանգը, որ առկա է սահմանամերձ բնակավայրում ապրողներիս համար, վտանգ, որ կարող է հանկարծ մեր դեմքին իսկ քարացնի այդ ծիծաղը:

Մտերմիկ է նա իր աշակերտների հետ, շատ անկեղծ, այդ օրվա նրա հուզիչ խոսքը, թե սեպտեմբերին ինչ տրամադրությամբ կմտնի դպրոց, դասղեկի հոգու անբացատրելի թախծի արտահայտություն էր, որ ամեն տարի նոր կյանքի փուլ մտնող շրջանավարտների հանդեպ ունենում ենք ուսուցիչներս:

Դպրոցի բակում հարազատների գրկախառնություն էր, շրջանավարտներին ուղղված շնորհավորանքներ, իսկ հանդիսությունների սրահում երգն ու պարն էին միախառնվել իրար: Ես նրանց հետ էի, ովքեր իրենց մտքերով էլ տարբեր էին յուրովի:

«Զգացմունքներս խառն են, չգիտեմ ուրախանա՞մ թե տխրեմ, որ ավարտում եմ դպրոցը: Սիրել եմ դպրոցական կյանքը, բայց կարծես ուրախ եմ նաև, որ ավարտում եմ: Կշարունակեմ ուսանողական նոր կյանք: Անցնելով հաջորդ փուլին՝ ես ինձ հետ տանում եմ հասուն անձնավորություն, ով լավ է հասկանում այս կյանքի լավն ու վատը, թացն ու չորը, և այդ ամենը՝ շնորհիվ մեր ուսուցիչների: Շնորհակալ եմ բոլորին՝ մեզ տված գիտելիքների և դաստիարակության համար, ես գիտեմ, որ կկարոտեմ դպրոցս» /Ղուլյան Գեղեցիկ/:

«Օրեր առաջ անընդհատ մտածում էի, որ շուտով հրաժեշտ կտամ և չէի պատկերացնում ինձ դպրոցից դուրս, իսկ հիմա զգում եմ վերջին պահի շունչը: Ամեն ինչի արժեքն զգում ենք միայն այն ժամանակ, երբ հիշողություն է դառնում: Գիտեմ, որ հետո կարոտելու եմ մեր դպրոցական խենթ օրերը, դասերին անպատրաստ ներկայանալը..., կարոտելու եմ ուսուցիչներիս, ովքեր մեզ սիրում ու երբեմն դիտողություն էին անում» /Կարապետյան Արմինե/:

«Չեմ պատկերացնում օրերս առանց դպրոցի, մի անբացատրելի տխուր զգացողություն կա հոգուս խորքում: Կկարոտեմ դպրոցս, դասաժամերը, ընկերներիս, ուսուցիչներիս, ովքեր իրենց համբերությամբ, բարի խորհուրդներով միշտ ուղեկցել են մեզ, իսկ դպրոցը կմնա մեր հուշերում...» /Ջավադյան Վարդուհի/:

Հիացմունքս եմ արտահայտում այս հանդիսավոր միջոցառման կազմակերպիչներին՝ հանձինս այդ դասարանների դասղեկների, և շնորհավորում բոլոր շրջանավարտներին, նրանց հարազատներին և ուսուցիչներին: Նոր սերնդին կյանքի վայրիվերո ճանապարհներին ցանկանում եմ հզոր կամք ու ոգի, յուրաքանչյուրի հոգում պարուրված լինի այն մեծ գիտակցումը, որ զանգի ղողանջները նրանց տանում են դեպի նոր կյանք՝ բարությամբ ու երջանկությամբ լեցուն: Խաղաղ երկինք եմ ցանկանում հայոց աշխարհին, բարի երթ բոլոր շրջանավարտներին:

http://www.usarmenianews.com/am-n-8944.html

2017-05-29

«ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ» ՀՈՒՇԵՐՈՎ... 11 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՎ ԱՅՍՕՐ

«Վերջին զանգի» օրվա անակնկալը մեծ էր, երբ 2006-ի շրջանավարտներից այս տարածքում հավաքվել էին իրենց դասղեկի՝ մանկավարժիս ֆեյսբուքյան էջում: Անի Թևոսյանի՝ ինձ ուղարկած «Վերջին զանգի» հղումը՝ «11 տարի առաջ» գրառմամբ, մեզ տարել էր անցյալի գիրկը, որտեղ հիշողություն դարձած մի դպրոցական կյանք կար: Նրանց ուղարկած իմ ծաղկաբույլերի մեջ երփներանգվեց մի անհոգ կյանք, որտեղ հանգրվան էր գտել մի անզուգական կարոտ: Առավել մեծ էր անակնկալը, երբ տեսանելի դարձան նրանց «Վերջին զանգի» մի քանի աղոտ նկարներ: Հուզմունքս մեծ էր, երբ նրանք ինձ մոտ էին՝ այս տարածքում, Կարինե Հյուսնունցը, Հայկ Առուշանյանը, Արմինե Վերդյանը, Արմինե Պետրոսյանը, Նանար Շահանցը, Դավիթ Հովսեփյանը, Ելենա Սարգսյանը, Վալենտինա Գասպարյանը...

Օրեր առաջ՝ մայիսի 26-ին, «Վերջին զանգի» երեկոյան հանդիսությունից ժամ առաջ դուրս եկա: Գիշերային լուսավառ Մարտակերտի կենտրոնական փողոցով ցանկություն ծնվեց՝ միայնակ ոտքով քայլելու մինչև տուն: Ոտքերս անց իմ կողքին կանգնում է նրա մեքենան...2006-ի շրջանավարտներից Դավիթ Ալավերդյանն էր, ում այս տարիներին չէի տեսել, բայց այդ միջոցառման օրը հասցրել էինք հիշել անցած օրերից. մեզ հետ էր նաև Նաիրի Ազատյանը:

Նրանցից շատերն արդեն ընտանիքներ ունեն, երեխաներ: Առիթից առիթ ոմանք զանգում են ինձ, երբեմն հաղորդակցվում ինձ հետ այս տարածքում: Պատահում է՝ առերես հանդիպում ենք, բայց միշտ էլ կարոտը նույնն է մնում նույնիսկ այս նկարներում, երբ ինձ տեսանելի

դարձան այդ ուստարվա շրջանավարտներից Մերի Անդրյանը, Բագրատ Օհանջանյանը, Արման Գրիգորյանը, Արմեն Միրզոյանը, Ալբերտ Նավասարդյանը, Սվետլանա Հյուսնունցը, Բենիամին Պետրոսյանը, Նարեկ Գյուրջյանը, Հասմիկ Գրիգորյանը...

Ես փորձում եմ այս պահին համեմատության եզրեր գտնել մեր օրերի աշակերտների ու նրանց միջև: Ուսուցչուհուս երբեմն հարցնում են աշակերտները, թե ինչու պետք է ուսումնասիրեն Դեմիրճյանի «Վարդանանքը» կամ Չարենցի «Դանթեական առասպելը»: Ես բացատրում եմ նրանց, որ յուրաքանչյուր սերունդ պետք է իմանա իր ժողովրդի անցած ճանապարհը, իսկ նրանք հակադարձում են, որ իրենք ուզում են անհոգ ապրել, ինչու՞ հիշեն անցյալը, երբ մեր օրերում էլ պատերազմի սպառնալիքի տակ են ապրում: Այսօրվա դպրոցականն իր անձնական հույզերով երբեմն կիսվում է ուսուցչուհուս հետ, նույնիսկ մերժում է Թումանյանի «Անուշը», երբ համոզված է, որ նոր սերունդը սիրո համար երբևէ ինքնասպանություն չի գործի, բայց զոհողության կգնա հանուն հայրենիքի. դրա վառ օրինակը՝ ապրիլյան դեպքերը:

Մեր օրերում դպրոցականները չեն ուզում օրագիր պահել, երբ գիտեն, որ ուսուցիչները գնահատականները մտցնում են էլեկտրոնային մատյան, նրանք դասերին նաև իրենց հետ բերում են բջջային հեռախոսներ, նույնիսկ արձակուրդի օրերին հարց են բարձրացնում, թե ինչու են իրենց տնային առաջադրանքներ հանձնարարվում: Նաև նոր օրերի դպրոցականը համոզված է, որ առանց սովորելու էլ բուհ է ընդունվելու, նույն հաջողությամբ հետագայում բարեկեցիկ կյանք է ստեղծելու, բայց նա հաստատ գիտի, որ այստեղ ապրելով՝ իր երկրի հայրենյաց պաշտպանն է դառնում:

Այն ժամանակ՝ տասնմեկ տարի առաջ, մեր շրջանավարտներն այցելեցին դպրոցի տնօրեն Լիդիա Պետրոսյանին, եկան իմ՝ դասղեկիս տունը, մեզ հրավիրեցին՝ մասնակցելու «Վերջին զանգի» միջոցառմանը, իսկ մեր օրերում զարմանում են, նաև ուրախ են, որ այդ սովորույթը չկա...

Մտքերն աքցանի պես սեղմում են գլուխս. Արդյո՞ք չեն ամայանում որոշ արժեքներ:

Ժամանակները փոխվում են, փոխվում է նաև սերունդը: Ուսուցիչներս երբեմն չենք հակադարձում նրանց, ժամանակի հետ ենք քայլում, բայց միշտ էլ երանի ենք տալիս անցյալին: Մազերիս մեջ էլ ճերմակները շատացել են, այս տասնմեկ և ավելի տարինե՞րն են պատճառը, որ ծերանում ենք, թե՞ այսօրվա մեր մտածումներին հակադարձող դպրոցականների մեղքն էլ կա, բայց մի բան պարզ է, որ ազնիվ ու առողջ սերունդ ենք մեծացնում, հայրենի հողի պաշտպաններ, ուսուցչի աշխատանքն էլ ծանրացել է, և միշտ երանությամբ ենք հիշում անցած տարիների մեր դպրոցականներին:

2006-ի իմ սիրելի՛ շրջանավարտներ, դուք միշտ ինչ հեր եք, ձեզ նվիրված այս հոդվածը սիրով գրեցի՝ հույսով, որ մի օր կհաջողվի հրատարակել ուսուցչուհուս ամենօրյա գրառումների «Մանկավարժի օրագիր» գիրքը, որտեղ իր արժանվույն տեղը կունենա նաև այս հրապարակումը:

http://www.usarmenianews.com/am-n-8959.html

2017-05-30

ՍԵՐՆԴԻ ԵՐԹԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Այսօր 12-րդ հումանիտար դասարանի շրջանավարտների հետ եմ, ովքեր նախապատրաստվում են քննությունների: Հայոց լեզվի և գրականության փորձնական թեստային առաջադրանքներ են կատարում, բայց լսելի են նաև նրանց գոհունակությունը դպրոցական կյանքից, անցած օրերի նկատմամբ ափսոսանքի զգացողություն, որ օրեր առաջ այդքան էլ նկատելի չէին: Գիտեի, որ այդպես էլ պիտի լիներ, երբ նախորդ օրն էլ շրջանավարտներից մեկը գրել էր ինձ, որ տխուր է առանց դպրոցի և ուսուցիչների:

Օրեր առաջ նորից քայլերս ինձ տարել էին այն դասարանը, որտեղ տարիներ շարունակ դասավանդել էի նրանց: Դասարանն իր արտաքին գեղեցիկ տեսքով հիացրել էր բոլորիս: Նկարվեցինք, բայց ափսոս, այդ պահին բոլորը չէին այդտեղ... Համոզված էի, որ հետո կարոտելու են դպրոցական կյանքը, բայց շատ դրականորեն ընկալում էի նաև նրանց գոհունակությունը, որ ավարտում են դպրոցը: Զգացվում էր, որ այն նորի հանդեպ, որն ուսանողական է կոչվում, անհագ ձգտում ունեն, և խաղաղ վայելում էի նրանց ամեն մի խոսքը:

«Դպրոցում սովորել եմ գրել, կարդալ, ընկերանալ, հարգել ու սիրել, մի խոսքով՝ ես նաև դաստիարակվել եմ այստեղ: Այս երկարուձիգ տարիներն անցան ակնթարթի պես, գեղեցիկ երազի տեսքով, բայց նաև չեմ ձևացնի, թե իբր չեմ ուզում հեռանալ դպրոցից, դադարել աշակերտ լինելուց, որովհետև այս ամենն ընկալում եմ որպես կյանքի հաջորդ փուլ թևակոխելու առաջընթաց: Կկարոտեմ համադասարանցիներիս, որոնցից շատերի հետ ջերմ հարաբերությունների մեջ եմ, կկարոտեմ ուսուցիչներիս, ովքեր մեզ հետ խիստ էին այս երկար տարիներին, բայց նաև՝ մի տեսակ մտերմիկ՝ վերջին տարում: Գոնե ամիսը մեկ անգամ կայցելեմ դպրոց՝ տեսակցելու ուսուցիչներիս, որոնց հանդեպ նույն

հարգանքը կլինի՝ բայց կարոտով շաղախված» /Անդրյան Անգելինա/:

«Ամեն տարի ես էլ երազում էի, որ ավարտեմ դպրոցը, ուզում էի վերջին անգամ հագնել դպրոցական համազգեստ, ուզում էի ինձ համար էլ վերջին անգամ հնչեր դպրոցի զանգը, ես էլ վերջին անգամ նստեի դպրոցական նստարանին: Բայց երբ արդեն հետևում են մնացել մեր անհոգ օրերը, իմ ներսում ուրախությունն ու թախիծը միախառնվել են իրար, գիտեմ, որ կարոտելու եմ ամեն ինչ՝ կապված դպրոցիս հետ: Դժվար է ընկալել այն, որ առավոտյան դասի չեմ գալու, դպրոց չեմ մտնելու, բայց փոխարենը կյանքի ծաղկուն շրջան եմ մտնում» /Արզումանյան Լադա/:

Այսպես ամեն տարի նրանց ճանապարհում ենք, միշտ էլ ափսոսանք է մնում նախորդ օրերից, մեզ հարազատ դարձած դեմքեր են մնում մեր հիշողության մեջ, յուրաքանչյուրը յուրովի անփոխարինելի է դառնում մեզ համար՝ իր կերտած կերպարով ու դպրոցականին վայել կենսագրությամբ: Կատարյալ ու գեղեցիկ կյանքի հասնելու երազանքով սերունդների ուղին շարունակվում է, ժամանակի հետ կյանքի երանգները փոխվում են, իսկ ուսուցիչը մնում է իր բարձրության պատվանդանին, որ վերևից հսկի նրանց խաղաղ ընթացքը:

ttp://www.usarmenianews.com/am-n-8965.html

2017-05-31

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԳԱՆՁԱՍԱՐՈՒՄ

Արտակերտի Ն զորամասի կողմից մեզ տրամադրված ավտոբուսը լեփ-լեցուն էր երեխաների ուրախ ձայներով: 8-րդ ա դասարան փոխադրված իմ դասղեկական դասարանի աշակերտներն են ու նրանց ծնողները, ովքեր կազմակերպել են ուստարվա ավարտին էքսկուրսիա՝ դեպի Գանձասար՝ բնության մի հրաշագեղ վայր, բարձունքին թառած այն հինավուրց եկեղեցին, որ դարերի պատմություն ունի: Ծնողական խորհրդի կողմից այս միջոցառումը նախատեսված էր Երեխաների միջազգային օրվա առթիվ, որով բարձր տրամադրություն էր փոխանցվել բոլորիս:

Այս երեխաների ծնողների կողմից կազմակերպված մեր միջոցառումը մի նոր շքեղություն էր ստացել նրանց իսկ մասնակցությամբ: Իհարկե, ոչ բոլորի, բայց այստեղ էին՝ Անժելիկայի, Սոֆյայի, Գևորգի, Արմինեի, Նարեկի, Էլմիրայի, Անիի, Լուսինեի ծնողները, իսկ մեր հայրիկներից Գևորգ Սամվելյանի միջամտությունը կար նաև ավտոբուսի օժանդակության հարցում:

Երբեմն դիտողություն էի անում երեխաներին, երբեմն հիանում այն անկեղծ ապրումներով, որ իշխում էր շրջապատում: Նրանց տարբեր երգերի հնչեղությամբ, կատակներով, ծափ ու ծիծաղով հաղթահարեցինք Վանք գյուղից վերև՝ դեպի Գանձասար տանող բարձունքը՝ հիացած բնության անձեռակերտ հրաշալիքներով: Մտանք եկեղեցի, երկյուղածությամբ ու մի առանձնակի ակնածանքով մոմերի լույսերի առկայծումներում մեր աղոթք-մրմունջները հղեցինք առ Աստված: Մեր երեխաների՝ մոմերին հառած հայացքներում աղերս էի ընթերցում, նրանց շուրթերին թառած մանրիկ աղոթքների պատառիկներն էին ինձ հասնում, ու խաղաղ կյանքի երազանքներ էին այնտեղ:

Եկեղեցուց ոչ շատ հեռու Մատենադարանն է, որտեղ դարերի խորքից եկած հին ձեռագրեր են: Ակնածանք կա այնտեղ, պարզ ու հետաքրքրասեր հայացքներ, որ սևեռված էին հին մագաղաթներին: Մեր ժողովրդի անցած դարավոր ճանապարհն է ուրվագծում այն, և պատերի ներսում քար լռության մեջ արձագանքում էր Ֆլորա Ահարոնյանի ձայնը, որ բացատրում էր ոգեղեն մատյանների հին պատմությունը:



Այս գեղեցիկ բնության գրկում մարդու ձեռքով արարված հրաշալիքներով հիանում ենք, և անհնար է դառնում չհիշել այն մեծագույն բարերար Լևոն Հայրապետյանի անունը, ով իր հայրենի գյուղում նման մարդասիրական նվիրաբերում է կատարել:

Եղանակի անբարենպաստ պայմաններն անգամ չեն խանգարում մեզ՝ վայելելու շրջապատի գեղեցկությունը, կարկտախառն անձրևին մերթընդմերթ փոխարինում էր անձրևախառն արևը, ու նրա անձրևոտ շողերի առկայծումներին միախառնվում էր երջանկությամբ արբեցած մեր երեխաների ու նրանց ծնողների ուրախ պարը, որ զուգահեռվում էր տաղավար հրավիրված երգչի ձայնով:

http://www.usarmenianews.com/am-n-8978.html

2017-06-01

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕՐՎԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆ ԱՂՈԹՔ Է ԴԱՐՁԵԼ

Դպրոցի 4-րդ ա դասարան փոխադրված երեխաները, թոռնիկս նույնպես, օրեր շարունակ սպասել են այդ ուղևորությանը՝ դեպի Գանձասարի վանք: 8-րդ ա դասարանցիների ու նրանց ծնողների հետ այնտեղ եմ, և ինձ թվում է՝ երկու օր առաջ այստեղ եկած այն փոքրիկների ոտնահետքերով ենք քայլում, և իզուր չէ իմ ենթադրությունը, երբ Նարեկիս դասվար Լիանա Ստեփանյանը հաստատում է, որ նույն տաղավարում են հավաքվել Գանձասարի վանք այցելելուց հետո:

Նրանք էլ իրենց մայրիկների հետ եկեղեցի են մտել ու մոմեր վառել, իրենց փոքրիկ մատներով խաչակնքել են ու աղոթք մրմնջացել, և իրենց մեղմիվ հայացքներով եկեղեցի թափանցող լույսի խաղի հետ նրանց դեմքին էլ ժպիտներ են խա-

ղացել ու, մտերմիկ դուրս գալով եկեղեցուց, կանգնել են այդ սուրբ կառույցի ետնամասի դռան մոտ և պատերին սեղմված՝ նկարվել լուռ:

Ամպամած եղանակը՝ կարկտախառն անձրևով, խանգարել էր այս փոքրիկների՝ամբողջ հոգով օրը վայելելու բերկրանքը, ազդել էր նրանց տրամադրության վրա, և ես հիացած նայում եմ այս նկարի պարզ ու անբիծ մանկությանը՝ կարծես ցանկանալով կանգնեցել այն ամպրոպաշունչ օրվա բնության տարերքը: Բայց նաև հոգուս խորքում զգում

եմ, որ օրը անձրևոտ լինի թե արևոտ, հիանում ես այս բարձունքին թառած հինավուրց եկեղեցու խոր լռությունից, որ իր ներսում պատմություն ունի կերտած ու մի ամբողջ հավերժություն:

Մինչ եկեղեցի մտնելն իմ դասարանի աշակերտներին և նրանց ծնողներին առաջարկում եմ՝ նկարվել միասին: Անհնար է բարձունքի անդորրը հսկող այդ եկեղեցու շրջակա բնաշխարհով չտարվես: Հիացմունքով հայացքդ փախցնում ես այս ու այն կողմ՝ չգիտակցելով անգամ, թե ո՞ր մի հրաշքով սքանչանաս: Եվ հոգուդ բավականություն տալու համար մի պահ վերացած նայում ես շուրջբոլորդ, անմահանում այդ բնության գրկում և ցանկանում բավականությամբ ու անհագուրդ շնչել այդ կենարար ու զովացուցիչ մաքրամաքուր օդը, որ լցված է խաղաղ ապրելու երազանքով:

Երեխաների վեր բարձրացված ձեռքերն ուղերձ են դառնում՝ խաղաղ ու բարեկեցիկ կյանքի ակնկալիքով, որ անկրկնելի գեղեցկություն

ունեցող Գանձասարի բարձունքից մաղթում են Մարտակերտի մեր դպրոցականներն աշխարհի երեխաներին:

Եվ Երեխաների պաշտպանության միջազգային օրը շնորհավորում ենք բոլոր երեխաներին՝ համոզված, որ նրանք են մեր լինելության խորհուրդն ու կյանքի իմաստը, մեր ապագան: Մեծագույն սիրով ցանկանում ենք նրանց ժպիտներ ու երազանքներ, անսահման սեր ու ջերմություն, հեքիաթային գունեղ և լուսավոր կյանք, խաղաղությամբ օծված երկինք, մանկական անհոգությամբ հյուսված անափ երջանկություն:

http://www.usarmenianews.com/am-n-8987.html

2017-06-02

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲՆ ՈՒ ՀՈՒՆԻՍԻ 1-Ը

Զինվորական նվագախմբի խրոխտ հնչյուններն եմ լսում, բայց չեմ կարողանում կողմնորոշվել, թե ինչ առիթով են զինվորները մեր բնակելի տան հարակից փողոցով անցնում: Ինձ մտերիմ ձայնը հեռախոսով տեղեկացնում է, որ դուրս գամ մանկական խաղահրապարակ: Քայլերս ինձ տանում են այնտեղ. այս անգամ ես ինքս եմ հետաքրքրությամբ նայում շրջապատին: Մի պահ կորցնում եմ ինձ. տարբեր տարիքի երեխաների զվարթ ու կենսախինդ ձայներն են կարկաչում: Զարմանալի է նաև իմ այդ տարածքում հայտնվելը, բայց հայացքս փնտրում է նաև թոռնիկիս, ում վերջապես տեսնում եմ փոքրիկ զինվորականի տեսքով, խաղալիք զենքը ձեռքին, ով, ի տարբերություն մյուս երեխաների, շրջվում է, չի ուզում անգամ նկարվել:

Ամեն անգամ անցնում եմ այդ մանկական խաղահրապարակի կողքով, որտեղ անցնում են մեր երեխաների ազատ ժամերը: Իմ բնակության վայրից շատ մոտիկ է այն, նկատելի է, որ այնտեղ կեսօրին հատուկենտ երևացող երեխաների թիվը շատանում է երեկոյան, առավելապես կողքի հարակից շենքերի մայրիկներն են երևում իրենց փոքրահասակ երեխաների հետ: Եվ ուրախ ու զվարթ աղմուկ-աղաղակին սովորաբար միախառնվում են մայրիկների՝ իրենց երեխաներին սաստող ձայները:

Ծանոթ դեմքեր եմ տեսնում, ապա իմ աշակերտուհիներից են մոտենում ինձ: Նրանց առաջարկում եմ նկարել այս հրաշալի տեսարանը, ապա մոտենում եմ նվագախմբի զրինվորներին: Իմ ողջույնի խոսքը աշխույժ նոտաներ ունի, երբ նկատում եմ զինվորների՝ ինձ հառած ժպտադեմ հայացքներ: Անուններ չեմ հարցնում, բայց նվագախմբի ղեկավարից եմ իմանում, որ Ն զորամասի նվագախումբն է, եկել են՝ երեխաներին ուրախացնելու:

Հունիսի 1-ն էր՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը: Նրանց շուրջը երեխաներ են հավաքվել, նաև մեծահասակներ կան,

իսկ հարակից շենքերի բնակիչներն իրենց պատշգամբներից են նայում: Բարի ու ժպտերես զինվորներն իրենց շուրջն են համախմբել սահմանամերձ Մարտակերտում բնակվող մի մանկական մաքուր աշխարհ: Հանկարծ այստեղից ու այնտեղից լսվում են երգեր, ոմանք ասմունքում

են, նաև զինվորներին եմ նկատում՝ համարյա ծնկի իջած այն փոքրիկների առջև, խոսեցնում են նրանց, շնորհավորում տոնական օրը, որ այդքան շքեղություն էր ստացել նվագախմբի ձայներից: Երեխաների ձեռքերը շոշափում են երաժշտական գործիքները, նաև նկարում են նրանց, ծափն ու ծիծաղը միախառնվել են իրար:

Տարբեր երեխաների հարցնում եմ, թե երբ է այսպիսի աշխուժություն եղել վերջին անգամ: Գուցե հարցս է զարմանալի, որ տարուբերում են գլուխները կամ ձեռքի ժխտողական շարժումով հասկացնում, որ սա առաջին դեպքն է, երբ Երեխաների միջազգային օրն այսպիսի ուշադրության է արժանանում: Իսկ մեծերից ամենուր լսում եմ հիացական զգացողություն, որ զինվորները մի նոր տեսք ու բովանդակություն տվեցին այս տոնական օրվան:

Շնորհակալական խոսք եմ ուղղում նվագախմբի ղեկավարին ու բոլոր զինվորներին, հետդարձի ճամփաս շատ կարճ է, բայց մտորումներս՝ խոսուն: Հայացքս հառում եմ դեպ երկինք, բոլոր երեխաներին ցանկանում անհոգ մանկություն, իսկ զինվորներին մաղթում եմ խաղաղ ծառայություն: Երբ ապահովված է բանակ և հասարակություն կապը, ինքնըստինքյան մեծ ցանկություն է ծնվում՝ շնորհակալություն հայտնելու նրան, ով կարողանում է նման գեղեցիկ նախաձեռնությամբ նոր որակ ու շունչ տալ օրվա խորհրդին:

http://www.usarmenianews.com/am-n-8999.html

2017-06-05

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔՆ ՈՒ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆԸ

Գանձասարի վանքի հարակից տարածքում ենք, որտեղ տեղակայված է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արցախյան մասնաճյուղը: Խորին ակնածանքով ենք մտնում այդ ձեռագրատունը, իսկ այդտեղ գիտական ուսումնասիրությունների բաժին կա և թանգարանային համալիր, որի մասին ներկայացնում է Ֆլորա Ահարոնյանը: Պատմական Հայաստանի Արցախ և Սյունիք նահանգներում գրչագրված ձեռագիր մատյաններ են, Արցախի պատմությանն առնչվող հազվագյուտ վավերագրերի բնագրեր ու ընդօրինա-

կություններ, հնատիպ գրքեր, ինչպես նաև պատմական հանգամանքների բերումով Արցախի վանքերում և եկեղեցիներում այլ շրջաններից բերված կամ փրկագնված ձեռագրեր, Երևանի Մատենադարանում պահվող ձեռագրերի կրկնօրինակներ...

Այստեղ պատմություն կա, որ անաղարտ հայերենով բացատրվում է ամեն մի ձեռագրի մասին: Մենք գիտենք, որ Գանձասարը հայ գրչության հին և նշանավոր կենտրոններից մեկն է, որտեղ շատ բարձրարժեք ձեռագրեր են ստեղծվել, բայց համոզվում ենք նաև, որ հայագիտության զարգացման համար նոր հնարավորություններ կան այդտեղ. ուսումնասիրություններ կատարելու, կոնֆերանսներ, գիտաժողովներ կազմակերպելու բոլոր պայմաններն ապահովված են:

Քանի որ Գանձասարը նաև կաթողիկոսանիստ է եղել, ժամանակին հենց այս համալիրում են բազմաթիվ մատյաններ ստեղծվել ու նկարազարդվել: Հասան-Ջալալյան տոհմի իշխանների հոգածության շնորհիվ՝ Գանձասարը երկար ժամանակ պահպանել է նաև հոգևոր կենտ-

ղոնի իր դերը: Վանքն ունեցել է հարուստ ձեռագրատուն, դպրանոց, այստեղ կրթվել են հոգևոր և աշխարհիկ շատ գործիչներ: Այդ մասին են վկայում նաև եկեղեցու որմերին ու խաչքարերի վրա պահպանված վիմագիր արձանագրությունները: Վանքի շուրջ երկու հարյուր արձանագրությունների մեծ մասը գրված է վարպետ գրիչների ձեռքով:

Ժամանակի պատմիչները՝ հատկապես Կիրակոս Գանձակեցին, հիացմունքով են պատմել վանքի շինարարության և նրա օծման արարողության մասին: Պատմական աղբյուրներից հայտնի է, որ Գանձասարի հինավուրց եկեղեցին քաղաքական ու կրոնական հավաքատեղի էր Արցախի և շրջակա հայկական գավառների համար: Իսկ 1701 թ.-ին այստեղ է գրվել ռուսական կայսր Պետրոս Առաջինին ուղղված առաջին նամակը, որով ղարաբաղի հայերը ռուսական պետությունից օգնություն են խնդրել՝ արևելքի բարբարոսներից ազատագրվելու համար: Խորհրդային տարիներին Գանձասարը չի գործել և այն հնարավոր է եղել նորոգել միայն 1993-97թ.-ին: Այս օրերին էլ բարեկարգվում էր շենքի հարակից տարածքը:

Հայոց պատմության էջերը թերթած այս երեխաները գիտեն, որ իր անկրկնելի գեղեցկությամբ, շրջապատի չքնաղ բնության հետ՝ Գանձասարի վանքը ողջ աշխարհին ներկայանում է իր լիարժեք շքեղությամբ ու հմայքով, այն հայ ժողովրդի հազարամյա բազմահարուստ ճարտարապետական ժառանգության հոյակապ գանձերից մեկն է: Այստեղ գլխավոր տեսարժան վայրը համարվում է Ս. Հովհաննես Մկրտչի եկեղեցին, որտեղից խորին ակնածանքով դուրս եկանք:

Ամեն մի օր իր ավարտն ունի... Այդ օրն ուրիշ էր: Վանք գյուղում գտնվող հյուրանոց նավի մոտ էլ նկարվեցինք: Երեկոն իջել էր, երբ հասանք Մարտակերտ:

http://www.usarmenianews.com/am-n-9013.html

2017-06-06

ՈՒՍՈՒՑԻՉԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Դիշտ չէ, որ ծնողական հասարակության կողմից սիրով է ընդունվում ուսուցիչը՝ ջերմ ու մտերմական, ազնիվ զգացողությամբ: Իսկ գուցե հանրայի՞ն դարձնեմ ծնող-ուսուցիչ-դպրոցական փոխհարաբերության մի գեղեցիկ պատկեր, որ անցյալ է դարձել, բայց ներկայում էլ ապրում է այդ ջերմ զգացումը, որ տարածքներ չի ճանաչում:

Տարիների պատմություն ունի այդ ջերմությունը դեռևս տասնամյա դպրոցից, որ սկիզբ դրվեց Սուսաննա Յաղուբյանի դստերը՝ Մերի Միրզաբեկյանին, 4-րդ դասարանում դասավանդելու օրվանից: Սևահեր էր նա, համեստ ու ազնիվ մի սիրուն աղջնակ, պարելու գեղեցիկ շնորհ ուներ, բայց ուշադրությանս արժանացավ նրա ստեղծագործելու ունակությունը:

Ընթերցում էի նրա գրածները, երբեմն շարադրությունները ներկայացնում մրցույթների: Պատկերներ կային այնտեղ, գեղարվեստական խոսք ստեղծելու երևակայական թռիչք, արտահայտչական միջոցների գործածություն...Պատահում էր՝ կասկածամիտ նայում էի նրան, բայց գրիչը սահուն սևացնում էր տողերը՝ նուրբ ու մանրակրկիտ պատկերների հյուսվածքով: Գարնանային նոր բացվող օր կար այնտեղ, ծաղիկների մեղմ օրոր, քամու նուրբ համբույր կար, աստղալից գիշեր ու երազանքներ:

Օրերը տարիներ դարձան, բայց դասարանից դասարան փոխադրվող իմ աշակերտուհու կոկիկ ու համեստ պահվածքը երբևէ չփոխվեց: Նրա ստեղծագործական միտքը թևեր էր առնում, իսկ նրան ոչինչ պետք չէր, միայն մի «թղթի կտոր»՝ պատվոգրի տեսքով, որ իր համար ավելին էր, քան մյուս գնահատանքի խոսքերը... Ժամանակնե՞րն էին ուրիշ, թե՞ այսօրվա ուշադրությունը չկար, իսկ հիմա, հակառակ այն օրերի, արդեն շատ վաղուց ամեն տարի մեր մրցանակակիրներին և ուսուցիչներին պարգևատրում են:

Մերին իմ տանն էի տեսնում մի որոշ ժամանակ՝ բուհ ընդունվելու համար անհատական պարապմունքներում: Նույն հեզիկ կերպարն էր նա, իսկ ես երբեմն նրան խորհուրդներ էի տալիս. չէ՞ որ նրա գեղեցկությունը չէր անտեսվում շրջապատի կողմից: Ուսանողական տարիներին իմ տեսադաշտում չկար նա, բայց ծնողներից տեղեկանում էի մեր դպրոցի շրջանավարտի մասին, ում հանդեպ առանձնակի համակրանք ունեի: Քույրը՝ Էմման, իմ տեսադաշտում էր, առավել ևս, երբ դպրոցում չէի դասավանդել, բայց նախապատրաստում էի նրան բուհական քննությունների: Գործի բերումով նրանց հայրիկի հետ առնչվում էի, ու փոխադարձ հարգանքը տեսանելի էր:

Տարիներ անց Մերիի հետ իմ հանդիպումը անսպասելի էր: Մի հեռախոսազանգ, և շուտով Հայաստանում հաստատված ու իր ուսուցչուհուն հյուրընկալվող իմ նախկին աշակերտուհին և նրա մայրը: Երկուսն էլ շիկահեր էին, իրենց՝ սազական...Իմ բնակարանում դիմացս նստած էր այն նույն հեզիկ կերպարի մեջ ամփոփված, բայց նոր օրերում հասուն մտքերով մի թախծոտ գեղեցկուհի: Խոսքերը նրա հատ-հատ էին ու շատ նուրբ: Հայացքս մեկ մայրիկին էի ուղղում, մեկ՝ դստերը, զգում, որ սիրո անապ մի կարոտ նրանց բերել էր ինձ մոտ:

Իմ երկրորդ հանդիպումը Մերիի հետ նրա մայրիկի ծննդյան տարեդարձին էր...Նույնպիսի կարոտով նրանք գրկեցին ինձ, բերկրալից այդ պահը հավերժացավ, բայց մեզանից ոչ ոք չգիտեր, որ օրեր անց այդ նկարներն իմ այսօրվա գրառման շարժառիթը կդառնային, որ ինչքան էլ տարիներ անցնեն, ուսուցիչը մնում է դպրոցականների ու նրանց ծնողների հիշողության մեջ:

http://www.usarmenianews.com/am-n-9021.html

2017-06-08

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ԵՐԴՈՒՄ ԱՌ ՀԱՅՐԵՆԻՆ

Արցախ աշխարհի մի հրաշալի բնապատկեր... Բնության հետ հանդիպումը հավատարմության երդում է դառնում հայրենիքին: Հենց հայրենապաշտությունը ծնվում է բնաշխարհի այսպիսի գեղեցկությունների հանդեպ ունեցած սիրուց, այսպես ենք զգում և վայելում դրա քաղցրությունը: Երջանկության վայելքն ենք ապրում այս բնաբեկորի կողքին, զգում, որ ներդաշնակություն կա բնության ու

մարդու միջև, և գեղեցիկ է դառնում այս հանդիպումը բնության հետ, որ թվում է՝ հավատարմության երդում է առ հայրենին:

Բնության ծոցում վերանում ենք բոլոր հոգսերից, բայց նաև զգում, որ բնությունն էլ կարծես ազգային խառնվածք ունի, իր մեջ կրում է հայ մարդու բնավորությունը, նրա պատմական բախտի ու երազանքների արձագանքները, խոհն ու մտահոգությունը, զայրույթն ու ցասումը: Արևոտ է օրը, ու հանկարծ հորդառատ անձրև, ապա արևը նորից իր շողերն է փռում, բայց նորից անձրևոտ օրը հագենում է կարկտի սպիտակ գնդիկներով, որ բռանդ մեջ հալվում են արագ: Լվացվում է բնությունը, զմրուխտ հագած ցողաթաթախ բնաշխարհը կարծես իր ժողովրդի անցյալի ապրումների արձագանքողն է դառնում: Եվ այդ հրաշք բնության մեջ ուզում ենք մոռացության տալ հոգի կսկծացնող վշտերը, որ միշտ մեզ հետ են, մեր ներսում ամբարված:

Մեր սահմանամերձ բնակավայրից հեռու՝ այստեղ մոռանում ենք պատերազմի սպառնալիքը, որի վտանգը դամոկլյան սրի պես մեր գլխին է կախված: Բնության այս գողտրիկ անկյունում հայտնաբերում ենք ինքներս մեզ, մեր հոգիների մաքրագործման ճամփան ենք փնտրում, ընկղմվում երանավետ անդորրության մեջ: Օդի մեջ բարձրացած թանձր փոշի չկա այստեղ, որ երբեմն մեր կողքին պտույտ է գործում, հոգնած կյանք չկա այստեղ, երբ բնությունն է իր կենսախինդ ժպիտով մեր հոգուն գգվում:

Մարդկային թերություններն անգամ մոռացվում են բնության գրկում, որ առկա են հասարակության մեջ, այստեղ գգվոտոց չկա, մարդը բնության հետ համերաշխ է, սիրտ կեղեքող մարմաջից ազատված: Ինքնաճանաչման լիարժեք սահման է սա, որի շքեղությունից արբած՝ հայացքներս հառում ենք կարծես տիեզերական անվերջությանը, ձգտում հասնել կատարյալին, որ միշտ էլ անհասանելի է դառնում այս անցողիկ կյանքում:

Այստեղ բնությունը հոգու մերձեցում է դառնում, մի նոր թարմություն, որ մաքրագործման ճանապարհ է ցույց տալիս մարդուն, անաղարտ ապրելու նոր ուղի: Լիառատ շնչում ենք այս մաքուր օդը, մենախոսում բնության հետ ու մարդկանց էլ նորովի տեսնում՝ նյարդային ջղաձիգ նկարագրից, ողբերգական լարված ապրումներից դուրս, անորոշության թանձր մշուշից ազատված: Եվ բնությունը դառնում է այն կենսատու լույսը, որ ցույց է տալիս մաքրագործվելու և խաղաղ ապրելու ճանապարհը, որի սիրուց էլ ծնվում է հային ուղեկցող հայրենապաշտությունը:

http://www.usarmenianews.com/am-n-9033.html

2017-06-09

ՄԻԱՅՆ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՓՐԿԻ ԱՇԽԱՐՀԸ

Ստորումներով ու խորին ակնածանքով մտանք ներս. Գանձասարի եկեղեցում ենք: Չիմացա, որ իմ դասարանի աշակերտների ծնողներից մեկն այդ պահը կհավերժացներ: Ձեռքիս մոմերից, չգիտեմ ինչու, առաջինը վառեցի մարդկանց համար, ովքեր իմ մտապատկերում անգամ չկային:

Առաջինը վառեցի նրանց համար, ովքեր իմ ապրածս տարիներին գիտակցաբար թե անգիտակցաբար ինձ «հանցագործ» են դարձրել ու անտեղի հայհոյանքներ տեղացել գլխիս՝ ինձանից հեռու և առանց իմ իմացության: Անչափ մեծ բարիքներ ցանկացա նրանց, ում համար այս կյանքում երբևէ աչքի փուշ եմ դարձել, գուցե և ոսկոր կոկորդներում, որոնց մասին ես անգամ չգիտեմ, թե ովքեր են: Հիմք ունեմ այսպես արտահայտվելու, որովհետև մանկավարժական դժվարին ճանապարհ եմ անցել, այսօր էլ շարունակում եմ այդ գործունեությունը թե՛ դպրոցում, թե՛ այս տարածքում՝ բարձրացնելով իմ դպրոցի դերը, այնտեղ սովորող աշակերտներին ու դասավանդող ուսուցիչներին՝ շնորհիվ մի կայքի, որն ունի շատ թշնամիներ:

Այդ մոմերից մեկը վառեցի այդ կայքի երկարակեցության ու նրանց աշխատողների համար, որ սահմանամերձ Մարտակերտի ուսուցչուհուս գրառումները տեսանելի են դարձրել ամենուր: Մոմերից մեկը խաղաղության երաշխավորն էր, որ ամբողջ աշխարհում, առանձնապես՝ հայոց երկրում, ուզում էր զենքերը լռեն, ու այդ վառվող մոմի կրակե լեզվակների մեջ մարդասիրություն էի փնտրում անգամ մեր թնամիների մոտ, որը շատ քիչ հավանական է: Ինչպես յուրաքանչյուր ոք, ես էլ մոմեր վառեցի իմ ընտանիքի, ինձ մոտիկ և հեռուներում ապրող հարազատներիս համար, ովքեր հանգամանքներից ելնելով՝ օտարության մեջ են:

Ես այդ օրը մտովի տեղափոխվեցի հեռավոր օտար ափերի այն գերեզմանոցը, որտեղ հանգչում են հարազատներս: Ինչու՞ մենակություն զգացի, չգիտեմ, բայց ինձ տեսա այստեղ՝ անգամ իմ անգոյությունից հետո... Այս ճաքճքած հողը ձգում է ինձ, ու մոմերից առկայծող կրակի լույսերի մեջ անհամար կորուստներ եմ տեսնում...Առանձնահատուկ հոգածությամբ հիշում եմ Սփյուռքում ապրող իմ հայրենակիցներին, քանի որ գիտեմ հեռուներում ապրողների կարոտի գինը: Եվ թվում է՝ այս վառվող մոմերով նաև ուզում եմ կանգնեցնել արտագաղթը, որ դարեր շարունակ հայերի ուղեկիցն է եղել: Որքա՜ն շատ երազանքներ կան, որ անանձնական են՝ արդեն սերունդների համար, և գալիքում հայրենիքին զինվորագրված խաղաղ օրերի սահմանապահներին եմ տեսնում:

Եկեղեցու որմերին պահպանված վիմագիր արձանագրություններին եմ նայում: Այս սուրբ խորանից դուրս գալիս հիշեցի, որ ձեռքիս փոքրիկ պայուսակ կար, մոռացել, թողել էի ներսում գտնվող նստարանին. նորից հետ դարձա...Հայացքս ընկավ Բարձրյալի պատկերին, ինձ թվաց նա լսում էր մրմունջներս, ձեռքս ինքնակամ նորից բարձրացավ...Ես խաչակնքում էի...Մարդասիրություն էի ուզում, որ ամենուր մարդասիրություն փռի, որից կկանխվեն բոլոր չարիքները, անգամ այն պատերազմները, որ մարդն է հրահրում, և սպառնալիք են դարձել մարդկության համար:

http://www.usarmenianews.com/am-n-9047.html

2017-06-10

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԲԱՐԴ ՈՒ ԴԺՎԱՐԻՆ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հազվադեպ ենք ուսուցիչներով նկարվում. դա լինում է ուստարվա ընթացքում առիթից առիթ: Այստեղ շատ քիչ ենք Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի հինգ տասնյակ ուսուցիչների կողքին, բայց իմ տողերում բոլորին եմ տեսնում: Այս օրերին նրանց մի մասը ամառային արձակուրդների է գնում, մյուսները դեռ շարունակում են դպրոց հաճախել՝ կապված դպրոցականների ավարտական և պետական քննությունների հետ:

Ամեն ուստարվա ավարտ իր հետքն է թողնում մեր հիշողություններում, ամեն անգամ ի մի ենք բերում մեր արածն ու թողածը, սակայն միշտ կանգնում ենք մի ճշմարտության առջև, որ ուսուցչի աշխատանքը դժվար է, բայց նուրբ, աշխատատար է, երևի թե՝ ոմանց կողմից էլ չհասկացված, թե ինչերի միջով ենք անցնում տարբեր ընտանիքների նույնքան տարբեր դաստիարակություն ունեցող երեխաների հետ: Տարիներ շարունակ հոկում ենք կերպարներ, ուսման ու դաստիարակության բարդ գործընթացում ձգտում հաշտ ու համերաշխ լինել դպրոցականի ու նրա ծնողների հետ ունեցած հարաբերություններում: Բայց այդ ո՞ր մի մասնագիտությունն է պահանջում այսպիսի զգոնություն մաքրամաքուր հոգիների կերտման համար, կամ ո՞վ է ամեն անգամ դասարան մտնող ուսուցչի տրամադրությունը հարցնում, որ զսպում, թաքցնում ենք, երբեմն մեր դեմքի արտահայտությունից մեզ հասկացող դպրոցականի հարցումին մեղմ ժպիտով արձագանքում:

Ուսուցչի կեցվածքն ուշադրության կենտրոնում է, բայց երբեմն ամաչում ենք, որ պատահական հայտնված կավճի հետքը սրբում ենք մեր հագուստից՝ դեռահասի «դիտողությամբ»: Լինում է նաև դասի ավարտի զանգը հնչել է, շտապ դուրս ենք գալիս դասարանից, մեր հետևից կանչում են, ինչ-որ իր, գուցե գիրք կամ տետր մոռացել ենք, թողել սեղանին, վերցնում, բայց նաև ամաչում ենք մեր մոռացկոտության համար: Մեզանից անկախ մեր ձայնը բարձր է հնչում, գուցե անհանգիստ ապրած օրվա հոգու պոռթկում է, բայց մեզ ուղղված զարմացական հայացքները, թվում է, սաստում են մանկավարժներիս, ու նորից «ուշքի ենք գալիս», մեր զգոնությունը պահում:

Արդյո՞ք միշտ է, որ դպրոցականը կարողանում է իրեն դրսևորել կարգապահական վայել կեցվածքով: Երբեմն երկընտրանքի մեջ ենք հայտնվում. որտե՞ղ է ծնողի կամ ուսուցչի սխալը, որ պետք է կարողանալ ժամանակին շտկել: Մեր առջև նստած դեռահասին կենսուրախ ենք տեսել միշտ ու հանկարծ նրա աչքերում ադամանդի պես շողացող արցունքի կաթիլ ենք տեսնում, մեր հոգին տխրում է ցավից, ու փորձում ենք կարեկից լինել նրա անհանգիստ ապրումներին, որ հնարավոր է նույնիսկ ծնողն էլ տեղյակ չլինի նրա անձնական հույզերին: Ամիսներով աշակերտը դաս չի սովորում, պատահում է՝ ծնողն էլ չի կարողանում ազդել իր երեխայի վրա ու «անարգանքի սյունին է գամվում» ուսուցիչը, որ հանկարծ անբավարար է գնահատել նրան բոլոր նրանց կողքին, ովքեր հասցնում են թույլ կարողություններով հանդերձ՝ իրենց նվազագույն դրական գնահատականն ապահովել:

Ուսուցիչը երբեմն բարդ ու խրթին հանգույցներում հայտնվող անհատականություն է, ով պետք է յուրաքանչյուր իրավիճակից պատվով դուրս գա, որ երբեմն ստեղծվում են աշակերտների և նրանց ծնողների հետ հարաբերություններում: Ուսուցիչը հանդուրժող է, ներողամիտ, բայց ոչ միշտ է այդպիսին ընկալվում շրջապատի կողմից: Երբեմն տեղյակ չէ ծնողը, թե ինչերից ենք կառչում, որ կարողանանք մի դրական գնահատական ապահովել իր ծույլ ու անաշխատասեր երեխայի համար: Համոզված ենք, որ մեր նկատմամբ հարգանքն ու պատիվը ձեռք ենք բերում մեր իսկ մանկավարժական ճիշտ գործունեությամբ, դժվարությունների հաղթահարման մեր ընտրած ճիշտ ճանապարհով, դեռահասների հետ ունեցած փոխադարձ հասկացվածությամբ, ծնողների հետ հարաբերությունների անհատական մոտեցմամբ, որ նկատելի է մեր շրջապատում: Արժանի լինենք մանկավարժի կոչմանը, այլապես կյանքի շատ ու շատ ոլորտներում կարող ենք պարտություն կրել:

http://www.usarmenianews.com/am-n-9057.html

2017-06-12

ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ, ՈՐՏԵՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ

Ժամանակները փոխվել են, սերունդն էլ քայլում է ժամանակին համընթաց, ուսուցիչն իրավունք չունի հետ մնալու մերօրյա առաջընթացից: Երբեմն մեղադրվում է ուսուցիչը... Ինչու՞մն է նրա մեղքը, որ հայտնվում է դժգոհությունների թիրախում: Ծնողների ոչ վայելուչ վերաբերմու՞նքը նրա հանդեպ, թե՞ վերջինիս ոչ մանկավարժական մոտեցումը, որ երբեմն ծնող և ուսուցիչ հայտնվում են հակասությունների երկու տարբեր ծայրամասերում:

Ծնողը բացեիբաց հայտարարում է, թե ինքն է ուղղորդում իր երեխային՝ ում դասաժամին իրեն ինչպես դրսևորի: Ուրեմն այստեղ կան դասաժամեր, որ ծնողի կողմից իրավունք է տրված երեխային՝ կարգապահական խախտումներ կատարելու: Ծնողը երեխայի համար մեծագույն դերակատար է, նրա խոսքը արդարացված և ընդունելի է երեխայի համար, ուրեմն տվյալ իրավիճակում ուսուցիչը հայտնվում է աշակերտի և նրա ծնողի կողմից ստեղծած բարդ հանգույցում: Մանկավարժական ճիշտ մոտեցումը միայն կարող է «փրկել» ուսուցչին՝ «գորդյան խնդիրը» լուծելու, այն դեպքում, երբ ծնողը հաստատակամ է իր որոշման մեջ, որտեղ նաև մեղադրանքներ կան՝ ուղղված ուսուցչին: Ուրեմն այստեղ ուսուցիչը գործ ունի «վրիժառու» ծնողի հետ, հետևաբար նա պիտի կարողանա իրավիճակից դուրս գալու փրկությունը գտնի իր վարպետությամբ՝ դեռահասի հետ հարաբերությունների մի նոր մթնոլորտ ստեղծելով, որը և կանդրադառնա ծնողի վարքագծի փոփոխությանը:

Երբեմն աշակերտը հայտնվում է երկընտրանքի մեջ, նա իր գործած սխալի համար պետք է ներողություն խնդրի ուսուցչից: Ավագ դպրոցում իր հասակակիցների մոտ նա ծանր հոգեվիճակ է ապրում, բայց մի կողմից՝ պարտադրանքը, մյուս կողմից՝ իր դասընկերներից սպասվող ծաղրալից ակնարկները, երկփեղկվում են, ու ստեղծված իրավիճակում միակ հանգուցալուծումը տվյալ ուսուցչի մոտ է, որ պետք է թույլ չտա դեռահասի «նսեմացված» կերպարի տեսանելիությանը ու թռուցիկ անցումով հասկացնի, որ ամեն ինչ հարթված ու հասկացված է: Բայց բոլո՞ր ուսուցիչներն են կարողանում նման անցումներն ապահովել, թե՞ սպասում են դեռահասի հետ իրենց «հաղթանակը» ամրագրելու՝ ի տես համադասարանցիների:

Ուսուցիչը միշտ չէ, որ ուղղորդող է, երբեմն կարող է աշակերտը մեզ ուղղորդի, բայց արդյո՞ք բոլոր ուսուցիչներն են ընդունակ՝ ընդառաջելու դեռահասի առաջարկին: «Սեծամտություն» կոչվածը, երբեմն կանգնում է «ամենագետ» ուսուցչի կողքին, վնասում է վերջինիս, արդյունքում հիասթափություն է ծնվում դեռահասի մոտ, երբ իր «նորարարությունը» անտեսվում կամ գուցե արհամարհանքի է արժանանում:

Նման փաստերն առկա են իմ մանկավարժական գործունեության ընթացքում: Աշակերտուհին գիրք է ընթերցում, մի գիրք, որ ամենևին չի առնչվում այդ օրվա դասանյութի հետ: Նա ամենևին չի ուզում «ենթարկվել» ինձ ու կտրվել այդ գրքից, նույնիսկ առաջարկում է բոլորին լսելի ինչ-որ հատված ընթերցել այդ վեպից: Նրա ուղղորդմամբ ես «ստիպված» առաջարկն ընդունում եմ, երբ գրքից հեռացած սերնդի մեջ մեր օրերում գտնվել էր ընթերցող, ով իրեն հետաքրքրող գիրքը ցանկանում էր տեսանելի դարձնել բոլորին:

Ստեղծված իրավիճակներում յուրաքանչյուր ուսուցիչ տարբեր վերաբերմունք կարող է ցուցաբերել, բայց կարևորը՝ իր մոտեցումը կարողանա ընդունելի դարձնի դեռահասին կամ նրա ծնողին՝ մնալով միշտ իր բարձրության պատվանդանին:

Այո՛, ուսուցչի վարպետությամբ են կանխվում կամ լուծվում մանկավարժական բոլոր կոնֆլիկտները:

http://www.usarmenianews.com/am-n-9065.html

2017-06-13

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒՍՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ

Երբեմն զարմացական արտահայտություններ ենք լսում, թե դպրոցի զանգը լռելուց ու դասերի ավարտից հետո ուստարվա վերջում ուսուցիչն ինչով է զբաղվում: Թերևս անելիքներ շատ կան, չնայած քննություններ կան այդ ընթացքում, բայց մենք առնչվում ենք մատենավարությանը, առավելապես դասղեկները, ովքեր պարտավոր են մինչ այդ ներկայացնել աշակերտների առաջադիմության հաշվառման ամփոփագիրը, որտեղ գնահատականներն են, դասարանի գերազանցիկների, հարվածայինների ու անբավարար գնահատված աշակերտների ցուցակը, հարգելի կամ անհարգելի պատճառներով բացակայությունների քանակը, առաջադիմության տոկոսը....

Վերանայվում են մատյանները՝ ըստ առարկաների, ստուգվում է յուրաքանչյուր ուսուցչի կատարողական, որ նախատեսված է իր ուսումնական պլանով: Դրանք թեմատիկ գրավորներն են, գործնական և կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքները, ընդհանրապես, դասավանդած բանավոր և գրավոր դասաժամերի քանակը, նախասիրական պարապմունքներն ու խմբակները, որ պետք է լրացված լինեն համապատասխան դասամատյանում: Նմանապես այդտեղ լրացվում են դասղեկական դասաժամերի թեմաները, փոխադրվող կամ վերաքննության մնացած աշակերտների մասին տեղեկություններ: Հաշվառվում են աշակերտների ամբողջ ուստարվա ընթացքում դպրոցից տեղափոխվելն ու նոր աշակերտների տվյալ դասարանում ընդունվելը:

Առանձնակի աշխատանք է պարունակում յուրաքանչյուր աշակերտի անձնական գործը, որտեղ գրանցվում են տարեվերջի բոլոր գնահատականները: Նաև աշակերտներին անհրաժեշտ է առանձին-ա-

ռանձին բնութագրել, թե ինչպես է տվյալ ուսումնական տարում այդ աշակերտն իրեն դրսևորել:

Մատենավարության ամբողջ գործընթացը վերջացնելուց հետո դրանք հանձնում ենք դպրոցի ուսումնական մասի գծով փոխտնօրեն (ուսմասվար) Էլլադա Աղասյանին: Թերևս ամենածանրաբեռնված աշխատանքը բոլոր ուսմասվարների մոտ է, որ լինում է կիսամյակների վերջում և ուստարվա ավարտին, ովքեր ներկայանում են մանկավարժական խորհրդի նիստերում իրենց հաշվետվությամբ:

Ուսուցիչը պետք է ուշադիր զննի իր նշանակած բոլոր գնահատականները. դա մանրակրկիտ աշխատանք է, որևէ սխալ կամ ջնջում արգելված է, հակառակ դեպքում փոխտնօրենի կողմից նա արժանանում է նկատողության, որը գրանցվում է մատյանի վերջում նախատեսված դիտողությունների էջում: Ամեն մի ուսուցիչ, տնօրենության կողմից տրված շրջանցման թերթիկում ներկայացված կետերով, պետք է ավարտին հասցնի իր աշխատանքը, որից հետո անցնի ամառային հանգստի: Այդտեղ մատյանային գործերն են, աշակերտների անձնական փաստաթղթերը, լաբորատորիայի հետ կապված հարցեր, գրադարանից վերցրած կամ հանձնած գրքերի ցուցակներն են.... Վզկապներ կան նաև, որ դպրոցի կողմից հանձնված են աշակերտներին, ամբողջ ուստարին կրում են, հետո հավաքվում են դրանք դասղեկների կողմից:

Ընդհանրապես, դասամատյանը վարելու կարգը, բոլոր փաստաթղթային գործերը պետք է իմանա յուրաքանչյուր ուսուցիչ՝ պարտավորված լինելով ապահովելու դրանց խնամքը ամբողջ ուստարվա ընթացքում: Այս պահանջների շարքն ու պարտավորություններն ինքնանպատակ չեն: Դրանցից է ծնվում բարեխղճությունը, կարգ ու կանոնն ու մանկավարժական գործունեության արդյունավետությունը:

http://www.usarmenianews.com/am-n-9074.html

2017-06-14

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՈՒՍԱՆԵԼԻ ԿԵՐՊԱՐ

Մանկավարժին հատուկ զննող հայացքով բազմաթիվ նկարների մեջ այս մեկն եմ ընտրում՝ ներկայացնելու Մարտակերտի Վլ Բալայանի անվան միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի Արշալույս Գաբրիելյանին, ում հետ տարիների համատեղ աշխատանքը հնարավորություն է ընձեռում ինձ՝ բնութագրելու մի անհատականության, ով իր գործի ազնիվ նվիրյալն է՝ մասնագիտական բարձր պատրաստականությամբ: Սերունդ ուսուցանելու և դաստիարակելու լավագույն մղումով տարիների ընթացքում անխոնջ աշխատանք է վարել հանրակրթության ոլորտում, ընտրվել դպրոցի պատմության մեթոդմիավորման նախագահ, իր մասնագիտական գործունեությունը ծավալել մասնախմբում, խորհուրդներով, ուղղորդող նախաձեռնությամբ վաստակել գործընկեր մանկավարժների հարգանքն ու սերը:

Քսաներկու տարվա աշխատանքային ստաժ և մի անցած գեղեցիկ ճանապարհ: Բազմաթիվ բուհեր ավարտած և տարբեր հաստատություններում այս օրերին էլ սովորող նրա սաները հայրենիքի ազնիվ զավակներն են, իսկ նրա ուսանած դասերով զինվորը սահման է պաշտպանում, նաև վտանգի պահին՝ իր անձնվիրությամբ անմահանում:

Ազգային դպրոցի մասին նա ունի իր ճշմարտացի և ուսանելի տեսակետը. «Լինելով անկախության սերունդ՝ արդի ժամանակաշրջանի հիմնախնդիրն էլ ազգային է: Կրթությունը պետք է պահել բարձր մակարդակի վրա, ունենալ հատուկ ազգային գաղափարախոսություն, այդ հենքի վրա էլ դաստիարակել հայրենասեր սերունդ, հայոց բանակում ծառայելու գիտակցությամբ հասուն զինվոր»:

Թերթում եմ Արշալույս Գաբրիելյանի անցած մանկավարժական ուղին. բազմաթիվ պատվոգրեր՝ նրա աշակերտների՝ ԼՂՀ և ՀՀ առարկայական օլիմպիադաներում ձեռքբերած հաջողությունների համար, այդտեղ նաև «Հայ ասպետ» մրցույթի առաջնակարգ տեղեր կան, շրջանի մշակույթի երիտասարդության բաժնի կողմից կազմակերպված տար-

բեր ինտելեկտուալ խաղերի ակտիվ մասնակցություն, իսկ 2009-ին մասնակցել էր «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին և դարձել մրցանակակիր «Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություն զարգացնելու կարողությունը» անվանակարգում: 2015 թվականին աշակերտների հետ Սևանում կազմակերպված ճամբարում էր, իր նվիրված գործունեությունը գնահատվեց Երկրապահ կամավորների միության կողմից «Հայաստանի երկրապահ» հուշամեդալի պարգևատրությամբ, իսկ հաջորդ տարին արժանացավ պատվոգրի՝ իր վարած հայրենասիրական ուսանելի դասի համար:

Այսօրվա դպրոցի և սերնդի մասին իմ մտահոգությամբ կիսվում եմ մեր ուսուցչուհու հետ, թե ինչով են պայմանավորված դժվարությունները, որ առկա են մեր օրերում: «Սոցիալական շերտավորման արդյունքում հասարակության կենսամակարդակը ցածրացել է, որն էլ անդրադառնում է ուսումնական գործընթացի վրա: Ծնողները մեծամասամբ անուշադրության են մատնում իրենց երեխաների դաստիարակությունը՝ կարծելով այդ հարցը միայն դպրոցին է վերաբերում: Իհարկե, ուսուցիչը, լինելով մանկավարժ և հոգեբան, կարողանում է հարթել յուրաքանչյուր իրավիճակ, բայց դա կատարում է՝ իր ուսերին կրելով նման մտահոգությունը: Կարևոր է նաև կենսատարածքը, ընտանիքի սոցիալական վիճակը, բայց անկախ այս և նմանատիպ այլ իրավիճակներից՝ ուսուցիչը պետք է մնա իր բարձրության վրա»:

Նա ասելիք շատ ունի, թեման ընդարձակվում է, ինչպես միշտ, տեսանելի է դառնում իր հայրենիքի և սերնդի վաղվա օրվա համար մտահոգ մի ուսուցչուհու կերպար, ով իր խոսքը եզրափակում է մանկավարժիս հոգուն հարազատ ուսուցչի աշխատանքի բարձր գնահատանքով. «Ուսուցիչը վեհություն է, բոլոր ժամանակների ճարտարապետը, նա է ներկան և ապագան, նա է կերտում անկախ երկրի ապագա քաղաքացու ճակատագիրը»:

http://www.usarmenianews.com/am-n-9079.html

2017-06-16

ԱՆԵԶՐԱԿԱՆ ԹԱԽԻԾ, ՈՐ ՄԻՇՏ ԻՆՁ ՀԵՏ Է

Երբ բառի համն առնում եմ, ճախրանքի սովոր թևերս բացվում են, դարուփոսեր չեն նկատվում այդժամ, որ կանգնեցնեն սավառնող էությունս, եթե հանգստի կարոտ ունեմ անգամ: Նախատում են ինձ երբեմն իմ կորցրած հանգստի համար, իսկ ես շտապում եմ այն անցորդի նման, որ դեռ ճամփա ունի անցնելու կեսճանապարհի անհարթությունների միջով: Ժամի զգացողությունը կորցնում եմ երբեմն ու իմ շտապողական կյանքում անհագուրդ մղվում եմ առաջ՝ չգիտակցելով անգամ՝ դեպ մայրամու՞տ եմ գնում, թե՞ դեպի լուսաբաց:

Օրերս իրար են խառնվում, գիշերն ու ցերեկը գրկում են իրար, իսկ ես, կանգնած սահմանագծում, խավարի մեջ լույսեր եմ վառում: Անեզրական մի թախիծ երբեմն գրկում է ինձ, երբ հայացքս հանկարծ գամվում է այն կետին, որտեղից անցնելիք էլ ճամփա չկա: Մղվում եմ առաջ, դեպի ու՞ր, երբ անցողիկ այս կյանքում վերջնագծից այն կողմ էլ անցնելիք չկա:

Երբեմն սաստում եմ ինձ, որ կանգնեցնեմ իմ երթն անավարտ, բայց նորից առաջ եմ մղվում, որ չկորցնեմ անցնելիք ճամփաս: Երկփեղկված հոգիս չգիտի անգամ՝ առաջ մղվելով այս ու՞ր ենք գնում, երբ ամեն մեկս անցողիկ կյանքում մեր ուղին ունենք՝ դյուրին թե դժվար, երբ վերջնագիծը մենք չենք նկատում, բայց մոտենում ենք նրան՝ մեր ամեն անգամ առաջ մղվելուց: Մեզ բաժին հասած ճանապարհը սեղմվում է ամեն օր, բայց ու՞մ նախատենք մեր անցածի համար, երբ կորցնում ենք ամեն օր, բայց մղվում ենք առաջ, որ նորից կորցնենք՝ չգիտակցելով անգամ, որ կարճացնում ենք մեզ հասանելիք ճամփան:

Ո՞վ է մարդը, ես կամ դու, որ կանգնեցնենք երթը մարդկային, առաջ մղվելու հակումը մեր ինչպե՞ս կանգնեցնենք, երբ մոլորվում ենք երբեմն այս անցողիկ կյանքում, բայց առաջ ենք գնում: Չեմ տանում նրանց, ովքեր մոլուցքով առաջ են մղվում, որ բեմահարթակում իրենք երևան բոլորից առաջ, ատում եմ նրանց, որ աչքիդ նայում, ստում են հանկարծ ու վազում առաջ: Ատում եմ նրանց, ովքեր բարբաջում կամ մեծամտում, փորձում են նույնիսկ արդար ձևանալ, թե իբր իրենք անբիծ են գնում անցնելիք ճամփան:

Ատում եմ...Եվ որքա՜ն շատ ատելու բան կա, բայց գուցե ինձ էլ ատում են ոմանք, թող ատեն նրանք, երբ չգիտեն նույնիսկ, թե ուր ենք գնում, երբ ապրելու անհագ մարմաջով տարված՝ մաքուր, անաղարտ մեծ կյանքի սիրով առաջ ենք մղվում և չենք ափսոսում:

http://www.usarmenianews.com/am-n-9099.html

2017-06-19

ՄՏԵՐՄԻԿ ԶՐՈՒՅՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցականների ամառային արձակուրդի օրեր են, իսկ մենք դպրոցում ենք... Իմ զրույցը մեր դպրոցի մի քանի ուսուցչուհիների հետ է: Ուզում եմ նրանց մանկավարժական գործունեությունից գրել, որ յուրովի տարբերվում է մեկը մյուսից: Իմ գրիչը թղթի վրա սևացնում է տողեր, որ երբեմն չեմ հասցնում անգամ արտաբերած նրանց խոսքը գրի առնել: Հարցերիս առանցքում նրանց դերն է, շրջապատում ունեցած ուշադրությունն ու հարգանքը, այն բոլոր դժվարությունները, որ առկա են այսօրվա ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքում:

Նալբանդյան Լուսինե- դասվար:

«Ուսումնական գործընթացից դուրս ինձ չեմ տեսնում: Յուրաքանչյուր աշակերտի յուրովի սիրում եմ: Զարմանում եմ, նաև վիրավորվում, որ երբեմն ուսուցչի աշխատանքը չեն գնահատում, քանի որ այն սուրբ գործ է: Մարդ պետք է սիրի իր աշխատանքը և այդ սիրով էլ մտնի դասարան, ուսուցիչը պետք է լավատես լինի և ուրախանա իր գործընկերների հաջողություններով, նա իրավունք չունի շրջապատում անտեսի լավը, ինչ արդեն տեսանելի է շատերին»:

Ներսիսյան Անահիտ - ֆիզիկայի ուսուցչուհի:

«Միշտ էլ ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում նախընտրում եմ լինել ընկերական, նաև ընդունում եմ նրանց ազատությունը, բայց չպետք է թույլ տալ, որ չարաշահվի: Այսօրվա աշակերտին «անբավա-

րար» գնահատելով չես կարող վախեցնել: Սիրում եմ իմ աշխատանքը, դա նկատելի է աշակերտների՝ իմ նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքով, առավել շատ յուրաքանչյուր դասարանում ուշադիր եմ լինում չար երեխաների նկատմամբ, երբեմն նույնիսկ նստում եմ նրանց կողքին»:

Ստեփանյան Լիանա - դասվար:

«Քանի որ փոքրերի հետ գործ ունենք, դասվարի գործը շատ ավելի ծանր եմ համարում, նրանց հետ ես մայր եմ, երբեմն նույնիսկ պատահաբար ինձ այդպես են կոչում: Ես նրանց շատ եմ սիրում, ինքս էլ ընդունված եմ շատ այդ լավ երեխաների ու նրանց ծնողների կողմից: Նրբություններ կան, որ միշտ էլ հաշվի եմ առնում. երեխան տխուր է, անմիջապես կապվում եմ ծնողի հետ, իսկ այդ կապը ինձ մոտ շատ ամուր է: Սիրում եմ միջոցառումներ կազմակերպել, աշակերտներին տեսնել մեկ այլ միջավայրում»:

Ավետիսյան Նարինե - մաթեմատիկայի ուսուցչուհի:

«Այսօրվա աշակերտների մոտ պակասում է աշխատասիրությունը, բանավոր խոսքը զարգացած չէ, մաթեմատիկական իմացությունը բնատուր շնորհ է նաև, բայց նկատելի է պասիվություն և անուշադիր վերաբերմունք առարկայի հանդեպ, առավելապես տեսանելի է աղջիկների մոտ, և միշտ էլ դա նկատել եմ: Առավել շատ ուսման նկատմամբ անտարբերությունն զգացվեց ապրիլյան պատերազմից հետո, այսինքն՝ երկրի անորոշ վիճակը անդրադառնում է նաև ուսման վրա»:

Բալայան Նաիրուհի - անգլերենի ուսուցչուհի:

«Նոր օրերի աշակերտները չեն համապատասխանում մերօրյա կրթական չափորոշիչներին: Երեխաներն ուրիշ մտածելակերպ ունեն, բայց համակարգի պահանջներն ուրիշ են: Կցանկանայի դպրոցում լիներ հոգեբան, որպեսզի աշխատեր երեխաների հետ՝ չնայած յուրաքանչյուրս էլ հոգեբանի մոտեցում ունենք դեռահասի նկատմամբ: Շատ կցանկանայի ընթերցանության հանդեպ մեծ սեր լիներ»:

Անդրյան Հերմինե - դասվար:

«Առաջին հերթին ուսուցիչն իր դերում պիտի լինի, եթե աշակերտի մոտ պահանջկոտություն կա, դա ավելի հետաքրքիր է դարձնում մեր աշխատանքը: Չեմ սիրում, երբ ասում են այսինչը վատ աշակերտ է, այդպիսի աշակերտ չի լինում, պետք է նրա մեջ լավը տեսնել: Ուսուցչի աշխատանքի դժվարությունը կայանում է նրանում, որ նա պիտի կարո-

ղանա մոռանա իր անձնական հույզերը, երեխայի միամիտ մի հարցն անգամ կարող է տրամադրություն փոխել: Բազմաթիվ նրբություններ կան, որ ազդում են փոխադարձ հարաբերությունների վրա»:

Թեման ընդարձակ է, բայց յուրաքանչյուրի համառոտ խոսքում նկատում եմ, որ ճշմարտություն կա, նաև համոզմունք, որ մասնագիտության հանդեպ սերն ու նրբանկատ մոտեցումը աշակերտին՝ կտա արգասաբեր արդյունք, որն էլ կդառնա ցանկացած մանկավարժի հաջողության գրավականը:

http://www.usarmenianews.com/am-n-9107.html

2017-06-20

ԵՐԿՓԵՂԿՎԱԾ ԱՊՐՈՒՄՆԵՐ

Լուիզա Հարությունյանը մեր դպրոցի ուսուցչուհիներից էր, դասավանդում էր անգլերեն...

Ինչու՞ անցյալով եմ գրում մեզ հետ նույն դպրոցում մեկուկես տասնամյակ աշխատած ուսուցչուհու մասին, երբ այդ անցյալն իր հետ բերում է հիշողություններ իր մասնագիտության մեջ հմտացած և մանկավարժների ու դպրոցականների կողմից սիրված անհատականության մասին:

Անթաքույց մի թախիծ պարուրում է հոգիս հայրենի հողից հեռացողների համար: Դեռևս ամիսներ առաջ իմացա, որ հանգամանքներից ելնելով՝ ընտանիքով տեղափոխվում են Ռուսաստանի Դաշնություն: Գուցե և համոզված էի, որ գնալու են, բայց չէի ուզում հավատալ: Օրեր անց նա չիմացավ, որ իմ ամենօրյա գրառումներում տողեր ավելացան՝ թախծախառն ու վշտամորմոք, որով կարծես ուզում էի կանգնեցնել արտագաղթը, որ հասել էր նույնիսկ մեր բնակավայրը, մտել մեր դպրոցը: Եվ տողեր հյուսվեցին, որով կարծես ցանկանում էի մեղմել հոգուս անհանգիստ տվայտանքը, թե ինչու էին մեր կողքին ապրողները թողնում իրենց տունը, հեռանում այստեղից:

«Հոգիս տխուր է, չեմ ուզում բնավեր դառնա իմ ժողովուրդը և արդեն կարոտում եմ նրանց, ովքեր պիտի հեռանան այստեղից...Ցավոտ է, բայց կարոտս անուններ ունի... Ես չեմ ուզում արցախցին գնա, ուզում եմ պատնեշ դառնալ բոլոր նրանց, ովքեր ուզում են հեռանալ այս սուրբ հողից… Հոգիս դատարկվում է, երբ լսում եմ, որ իմ կողքին ապրող արցախցին թողնում է իր բնակավայրը: Չեմ ուզում նրանք տեղափոխվեն այնտեղ, որտեղ խաղաղ է կյանքը, բայց կարոտը հայրենի եզերքի հանդեպ սպանում է մարդու հոգին»:

Լուիզա Հարությունյանն այս օրերին վերադարձել է Մարտակերտ, եկել է տեսության իր հարազատներին, այցելել դպրոց, հանդիպել ուսուցիչներիս հետ, տեսել իր աշակերտներին, ովքեր այս օրերին հագստանում են: Ես նրա հետ զրուցում եմ, ով կարոտ ունի իր հոգում, բայց

մեծ ու սպահով քաղաքը ձգում է մարդուն, ու երկփեղկված իր մտքերով նա մեկ այստեղ է հայտնվում, մեկ՝ այն հեռուներում:

«Ես կարոտում եմ իմ աշխատանքը, իմ հարազատներին, իմ շրջապատը, ինձ այլ աշխատանքում երբևէ չեմ տեսնում, ուզում եմ այն հեռուներում էլ իմ մասնագիտությամբ դպրոց մտնել: Ամիսների անաշխատունակությունից ձանձրացել եմ: Այս տաս ամսվա ընթացում բոլորին կարոտել եմ, գիտակցում եմ, որ այստեղ ապրելը դժվար է, նաև մտահոգված եմ այստեղի ապրելակերպով: Երբ այստեղ եմ, ձգում է քաղաքը, իսկ այնտեղ կարոտը խեղդում է մարդուն: Երեխաներիս ապագան այստեղ չեմ տեսնում, այնտեղ էլ որդիս մասնակցել է անգլերենի առարկայական օլիմպիադաներին, հաջողություն գրանցել, արժանացել պատվոգրերի»:

Նրա խոսքում նաև նկատելի է, որ իր դպրոցահասակ երկու երեխաներին նույնպես ձգում է մեր միջավայրը, առավելապես՝ կարոտում են այստեղ ապրող իրենց հարազատներին, դպրոցը, համադասարանցիներին և ուսուցիչներին: Դրա վառ ապացույցն ավագ որդու վերադարձն էր, ով ուսումնական տարին ավարտեց այստեղ՝ իր նախկին դասարանում: Առավելապես հպարտության արտահայտություն էր, երբ համեմատած ռուսական դպրոցների հետ՝ նրա խոսքում նաև շատ բարձր էր գնահատվում մեր դպրոցի ուսուցիչների տված գիտելիքները, այն դեպքում, երբ մենք սահմանամերձ բնակավայրում ենք ապրում, անմխիթար պայմաններում, վերանորոգման ենթակա դպրոցում ենք, ձմռան ցրտին՝ փայտի վառարաններից ետ տվող ծխի մեջ:

Անկեղծ է մեր զրույցը՝ պարզ ու շիտակ, բայց գեղեցկատես մի ժպիտ նրա դեմքին թախծախառն թևածում էր, որտեղ բարվոք ու խաղաղ կյանքի երազանք կար ու մի մեծ կարոտ հայրենի օջախի, հող ու ջրի հանդեպ:

http://www.usarmenianews.com/am-n-9114.html

2017-06-21

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՍՎԱՐ՝ ՀՈԳՈՒՄ ԱՆԹԵՂԱԾ ԱՄՈՒՄՆՈՒ ԿՈՐՈՒՍՏԸ

Ամեն զրույցն ուշանում էր. հասկացա, որ այդ մեծագույն կորստի մասին հնարավոր չէ բանավոր խոսել: Անհաշտ եմ աշխարհի հետ, ու այդ իսկ անհաշտությամբ առաջարկում եմ մեր դպրոցի երիտասարդ դասվար Հերմինե Անդրյանին՝ գրել իր հոգու ալեկոծության մասին՝ գիտակցելով, թե ինչպիսի դժվարությամբ է հաղթահարել անցած ուսումնական տարին՝ ունենալով սրտում մեծ կսկիծ: Նա գիտեր, որ պիտի արտաքուստ ժպտար, դեռահասի մոտ թաքցներ իր անսփոփ վիշտը, և այդ իսկ գիտակցությամբ՝ ամեն օր մտել էր դասարան...

Անզուսպ մի հեկեկոց խեղդում է ինձ, ու Հերմինեի տողերի շարվածքում սիրո և կարոտի քնքշանք եմ տեսնում, ով թախանձում է լուռ. «Ինձ երեխա էի զգում քո գրկում. կարոտում եմ... Քեզ փնտրում ու գտնում եմ մեր որդու մեջ... Միշտ մեզ հետ ես՝ մեր սրտի փոքրիկ տնակում: Կարոտում եմ անվերջ, տենչում քեզ, իմ միա՛կ, խեղդվում եմ քո կարոտից, անզորությունից... Հոգնել եմ անվերջ ձևացնելուց, թուլությունս թաքցնելուց, անսպառ արցունքներս զսպելուց... ու ժպիտների ներքո շարունակում եմ հպարտ քայլել: Դու ինձ սովորեցրիր՝ այդպես ապրել...»:

Անցած տարի Ուսուցչի մասնագիտական օրը բոլորիս համար սուգ դարձավ. կյանքից անժամանակ հեռացավ Արտաշես Գրիգորյանը: Մեր դպրոցի երկու շրջանավարտ անսահման մեծ սիրով ձևավորել էին մի հրաշալի ընտանիք: Նորածին երեխան նոր երջանկություն ավետեց այդ ընտանիքում, ովքեր ապրում էին իմ հարևանությամբ: Անհնար էր առավոտյան դասից ուշացող ուսուցչուհուն Արտաշեսը չհրավիրեր՝ նստելու իր մեքենան, ու ականատես էի դառնում աշխատանքի շտապող այս զույգի լռության մեջ քողարկված գեղեցիկ սիրուն, որ հասկացված ու ջերմ էր, փոխադարձ ու ազնիվ նվիրվածությամբ:

Հերմինեի տխրամած հոգու տվայտանքն եմ ընթերցում, որ ուղարկել էր ինձ: Ամուսնու կորստի հետ անհաշտ՝ մի ազնիվ ու մաքուր հո-

գի իր տառապալից խոհն է պարզում աշխարհին. «Միգուցե ծուռ է, միգուցե շիտակ, միգուցե ուղղակի թվու՞մ է ինձ, կամ գուցե հենց այնպիսին է, ինչպիսին կա՞... աշխարհը՝ ճիշտ ու սխալ: Մենք ուղղակի ապրում ենք մեր հասցեով ուղարկված կյանքով: Մտածում եմ, փորձում հասկանալ ինձ հասցեագրված ամեն մի մանրուք, որ իրականում իմ աշխարհն է կազմում, դառնում իմ ճակատագիրը: Ու ապրում եմ, գոյատևում իմ աշխարհով, ցավով, երազներով, ճակատագրով: Բայց ճակատագիրը չէ, որ կառավարում կամ ապրեցնում է մեզ, կարծում եմ՝ ուղղակի մենք ինքներս ենք երևի թե արժանանում մեզ արժանիին:

Հաճախ եմ բողոքում, չարանում, հուսալքվում, ատում, արհամարհում... Ինչու՞: Որովհետև մենք ստեղծվել ենք սիրելու, արարելու, կյանք նվիրելու համար: Ու այդպես է, որ կա... Սիրում եմ, սիրում անմնացորդ, գուցե անպատասխան կամ թաքուն և անիրական...

Արարում եմ, նվիրվում իմ գործին, տալիս ինչ կարող եմ՝ ակնկալելով միայն բարին, հաշվի չառնելով սրտումս ամուր բույն հյուսած ցավը, շրջապատի կարծիքները, մարդկանց խեթ հայացքները... Ամեն մեկս յուրովի ենք գնահատում մեր ապրած ու չապրած, մեզ հասանելիք կյանքի բաժինը, մինչդեռ կարևորը մարդ մնալն է: Դժվարությունները մեզ համար են, նույնիսկ մահը. այն անասելի է: Սակայն մարդն օժտված է մոխրից կայծ ստանալու, քարից հաց քամելու ունակությամբ: Կորցրածը հիշելով, գնահատելով, մաքառելով, նոր իմաստներ փնտրելով՝ հպարտորեն առաջ եմ շարժվում՝ նվիրված այս ծուռ ու շիտակ աշխարհին»:

Տխուր եմ և իմ մտորումներով՝ Հերմինեի հետ....Անձնական ցավը հաղթահարելու կամք ունի նա, բայց մշտամնա մի տառապանք իր հոգում՝ ամուսնու հետ կապված հիշողություններով, միշտ նրա հետ է...Եվ նրա ապրելու, արարելու համար լույսի մի ուրախության հովիտ եմ տեսնում՝ հարազատների ջերմությամբ ու բոլորիս հոգածությամբ շրջապատված մի համայնապատկեր, և շուրջբոլորը թևածող թախծոտ ժպիտների մեջ այն փոքրիկ բալիկի զրնգուն ծիծաղն է կարկաչում:

http://www.usarmenianews.com/am-n-9120.html

2017-06-22

ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆ

Արտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտ Մելինե Մամունցը մոտ մեկ տասնյակ տարի է, ինչ բարձրագույնն ավարտելուց հետո նույն դպրոցում դասավանդում է «ֆիզկուլտուրա» առարկան: Ֆիզիկական դաստիարակության լավագույն որակ է ապահովել այս տարիներին՝ մարմնակրթության ուսուցման իր յուրահատուկ մոտեցմամբ, որն ուղեկցվել է բազմաթիվ հաջողություններով:

Դպրոցի անմխիթար վիճակը, առավելապես մարզադահլիճը, որ ձմռան սառնամանիքին հնարավոր չի լինում մտնել, թվում է՝ այդ օրերին պետք է կանգնեցներ նրա դասագործընթացը, բայց ինչպես ինքն է ասում. «Հաղթահարում ենք՝ ելնելով մեր աշխատանքի նկատմամբ ունեցած պատասխանատվությունից: Ոչ բարվոք պայմանները խանգարում են մեզ, որոշ մարզաձևերի հնարավոր չի լինում ուշադրություն դարձնել, բայց հուսով եմ՝ ժամանակի ընթացքում կվերանորոգվի այն, և ընթացք կտանք մեր հաջողություններին»:

Միշտ էլ բոլորիս համար տեսանելի է եղել, որ նրա սաները փայլել են տարբեր մրցույթներում: Դրա վառ վկայությունն այն բոլոր գավաթներն ու պատվոգրերն են, որ ձեռք են բերվել նրա նվիրական աշխատանքի արդյունքում: Ու մեր զրույցի ժամանակ պատմում է նա այն ձեռքբերումների մասին, որ դպրոցի թիմն ունեցել է այս տարիների ընթացքում: Հպարտություն կա նրա խոսքում և մասնագիտության հանդեպ անկեղծ սեր, երբ ուշադիր լսում եմ իր գործին նվիրված ուսուցչուհուն:

«Մեր առաջին հաղթանակը տարիներ առաջ մարմնամարզությունից էր /թեթև ատլետիկա/, հանրապետությունում մի քանի անգամ առաջնակարգ տեղեր զբաղեցրինք: Դպրոցի թիմը Հայաստանում կայացած Ազգային ժողովի գավաթի խաղարկությունում գրավեց առաջին տեղը, հետո թիմի անդամները և ուսուցչուհիս ԼՂՀ Ազգային ժողովի նախագահի կողմից արժանացանք դրամական պարգևի: Դեռևս 2015

թ-ին իմ նախաձեռնությամբ կազմակերպվեց հին ավանդական խաղերի մրցույթ՝ «Հին ու նոր Մարտակերտ» խորագրի տակ, որտեղ հիմնականում մեծահասակներ էին խաղում: Մասնակիցները ներկայացան մեր պապերից եկած մի շարք հին խաղերով՝ լախտի, քաշոցի, յոթքարանի, աթոռակռիվ...

Տարիներ առաջ հանդիպելով ունեցել ենք լավագույն խաղացող՝ Վալերիկ Պողոսյանը, ով Հայաստանի թիմում մասնակցել է Ֆրանսիայում կայացած մրցումներին և արժանացել «Լավագույն դարպասապահ» պատվոգրին: Վերջերս վոլեյբոլի հանրապետական մրցույթի ժամանակ մրցավարների կողմից խաղացողների մեջ ուշադրության արժանացավ մեր թիմի խաղացողներից տարիքով ամենափոքրը՝ 6-րդ դասարանի աշակերտուհի Նաիրա Նասիբյանը, ով ընդգրկվեց հանրապետական թիմում: Շրջանի ղեկավարության կողմից ես էլ պարգևատրվել եմ դիպլոմով՝ որպես ֆիզկուլտուրայի լավագույն ուսուցչուհի»:

Իմ հարցին, թե ինչ առաջարկներ ունի, որոնց մասին կարող է բարձրաձայնել, նա անվարան ասաց, որ պետք է սպորտի հանդեպ սեր ներարկել սերնդի մոտ, բայց դպրոցի աշխատանքը միակողմանի կլինի, եթե ամուր համագործակցություն չլինի մարզադպրոցի հետ, միայն այդ դեպքում նորանոր հաջողություններ կարձանագրվեն:

http://www.usarmenianews.com/am-n-9127.html

2017-06-23

«...ՈՒ ՏԱՆՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ՀԱՐՎԱԾ, ԲԱՅՑ ՄՆՈՒՄ ԵՆ ԷԼԻ ԿՅԱՆՔԻՆ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ»

Բոլորը չեն այստեղ տեսանելի, բայց խոսքս ուսուցիչների մասին է: Դպրոցականների ամառային արձակուրդի օրերին ամեն օր զրուցում եմ նրանց հետ: Յուրաքանչյուրը յուրովի բացահայտում է իր աշխարհը, որտեղ նաև անձնական ապրումներ կան, որ ներդաշնակվում են իրենց ուղղված հարցերին: Ինքս էլ նորովի եմ բացահայտվում նրանց համար, որ ձգտում կա իմ մեջ՝ հայտնաբերել նրանց նույնպես նորովի և ի տես դարձնել բոլորին նույնքան անձնական ու անանձնական ապրումների մեջ:

Իմ գրիչը շարժվում է կամաց, երբեմն հանդարտ, գուցե և հուզված, որտեղ կերպարներ են վեհանում, ու ամենօրյա իմ գրառումներով ամբողջանում է Ուսուցիչը, Մարդ, ում սիրում եմ իր իսկ էությամբ, ապրած իր գիտակցական կյանքով, մաքառումներին դիմակայելու կամքով, հաստատակամությամբ, ազնիվ նվիրումով...

Մարդկային կյանքը զերծ չէ կործանարար դեպքերից, աղետներից ու պատերազմներից, որ գալիս են ի տես բոլորի, աղաղակում իրենց մասին...Բայց Ուսուցիչը... Մտամոլոր է նա, ու պիտի կարողանա զսպել, դեռահասը մեղավոր չէ, որ այդ աղետը նրա տունն է մտել...Ուսուցիչը վեհանում է իմ աչքին այդ զրույցների ժամանակ, երբ տեսնում եմ նրան աչքերի արցունքները սրբելիս, որ հանկարծ աշակերտները չտեսնեն իր հոգու կսկիծը, երբ հաճախ նրան հյուր է գալիս անգամ դասերին:

Լրջանում եմ, երբեմն հուզվում այդ զրույցների ժամանակ և ամեն օր նուրբ ու մտերմիկ մի նոր հարաբերություն եմ հայտնաբերում, որ ծնվում են... Եվ գրի եմ առնում սիրով, գեղեցիկը տեսնելու հակումով, լա-

վագույնը տեսանելի դարձնելու մղումով: Ամեն մեկը յուրովի ներկայացնում է իր տեսակետը՝ մանկավարժության, մերօրյա աշակերտության ուսուցման և դաստիարակության դժվարությունների մասին, բայց բոլորի մոտ նույնանում է միտքը, որ սիրում են իրենց մասնագիտությունը, այն կրթօջախը, որտեղ դասավանդում են, բոլոր նրանց, ում կողքի աշխատում են... Նրանց խոսքում տեսանելի են դառնում աշակերտների և նրանց ծնողների հետ նոր հարաբերություններ, դեռահասների մերօրյա կերպարներ, ուսուցիչների անցած ուղին, նրանց մանկավարժական փորձը, որ ուսանելի է, ընդօրինակման արժանի:

Այս հողին ամուր կառչած մտավորականների կերպարներ են ամբողջանում, ովքեր իրենց կյանքն ուրիշ տեղ չեն պատկերացնում, այնպես, ինչպես ապրիլին, որ պատերազմից հետո օրերով տարհանվածներ դարձանք, բայց վերադարձանք Մարտակերտ՝ մեր բնակավայրի, հարազատ օջախի հանդեպ հայրենաբաղձության մի նոր կարոտով, հաստատակամ, որ ուրիշ տեղ չենք կարող ապրել:

Ուսուցիչը պետք է մնա իր բարձրության վրա, այդ իսկ ընկալումով ուզում եմ շրջապատում, հասարակության մեջ տեսնել Ուսուցչին, դարերի խորքից եկած լույսի ջահակիրներին, պատկառանք ու ակնածանք ունենալ բոլոր նրանց հանդեպ, ովքեր տքնաջան աշխատում են, մնում հասունացող սերնդի բյուրավոր հոգիներում: Եվ եթե մանկավարժիս հարց ուղղվի, թե ովքեր են այսօրվա ուսուցիչները, ապա ուրիշ ոչ մի միտք չեմ կարող առաջ քաշել ու դնել Սևակի՝ Ուսուցչին լավագույնս բնութագրող տողերի կողքին. «Թեկուզ ծանր կարիքի մեջ ու զրկանքում, ընդունում են ու տանում են ամեն հարված, բայց մնում են էլի կյանքին սիրահարված»:

http://www.usarmenianews.com/am-n-9129.html

2017-06-26

ԼՐՋՈՐԵՆ ՄՈՏԵՆԱՆՔ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆԸ

Դպրոցականների ամառային արձակուրդի օրեր են: Դպրոց հաճախող ուսուցչուհուս այսօրվա թեման դեռահասների մասնագիտական կողմնորոշման հարցն է, որ պետք է ընտրություն կատարել վաղ հասակից, մի բան, որ մեզ մոտ ցայսօր մնում է բաց:

Դպրոցում սովորելու տարիներին ինձ համար դասամատյանը ձեռքին ուսուցչուհին ամենաընդունված մարդն էր: Երազում էի մատյան վերցնել, ու մատենավարության սիրուց ծնվեց մանկավարժի աշխատանքի հանդեպ ակնածանքը, իսկ առարկայի հանդեպ մեծագույն սիրո պոռթկումը հինգերորդ դասարանում «Գիքորն» էր, որ արցունք քամեց աչքերիցս, և ընտրվեց այդ օրվանից առարկան ու իմ մասնագիտությունը:

Մեր օրերում մասնագիտության ընտրությունը հաճախ մնում է ծնողի հայեցողությանը, թե ինչ կարելի է ընտրել, որ հետագայում ապրելու լավագույն միջոց լինի, գումար վաստակելու աղբյուր դառնա: Հիշում եմ անցած տարիներից մի դեպք: Երրորդ տարին էի ընդունվել բուհ... Որ վերջապես ընդունվել եմ, շրջապատում մեծ ուրախությամբ ընդունվեց, բայց գրադարան մտա, այնտեղ աշխատող կինը թերահավատորեն ինձ նայեց. «Դու ճիշտ ընտրություն չես կատարել, մարդ պետք է շերեփին մոտիկ մասնագիտություն ընտրի, որ հետագայում կարողանա ապրի»:

Անակնկալը մեծ էր, որ այդ խոսքը լսեցի մտավորականից, ով բազմաթիվ գրքեր էր ընթերցել, բայց նաև հասկացա, որ հնարավոր է՝ Նար-Դոսի «Նեղ օրերից մեկն» է հիշել, և այդ իսկ հիշողությամբ, գուցե և իր սուղ ապրելակերպով չի ուզում, որ մտավորականը Պատրիկյանի նման անապահով կյանքով ապրի:

Մեր օրերում բոլորն էլ դեպի բարձրագույն ուսումնական հաստատություններ են գնում՝ համոզված, որ ընդունելության համար դռները բաց են: Յուրաքանչյուր ավագ դասարանի լավ սովորող աշակերտ ինքն

է նախապատվությունը տալիս այս կամ այն մասնագիտության ընտրությանը, իսկ ամենաթույլ սովորողն ուղղորդվում է ծնողի խորհրդով:

Երբեմն ստիպում են դեռահասին ընտրել մի բան, որն իրենը չէ: Ծնողները պետք է հաշվի առնեն իրենց երեխայի անհատականությունն ու կարծիքը, որ շատ դեպքերում անտեսվում է:

Զարմանալի չէր, որ իմ հարցումին, թե դպրոցում չսովորող, թույլ կարողությունների տեր աշակերտն այդ ո՞ր մի բուհում կընդունվի, հաստատակամորեն արձագանքեցին, որ մայրը կորոշի, թե իր երեխան ո՞ր բուհում ինչ մասնագիտություն ընտրի: Նույնքան զարմանալի չէր արդեն, որ մասնագիտության ընտրությունը բարվոք ապագայի հեռանկարներ ուներ:

Դեռահասը տեղեկացվում է, որ Արցախում այդ մասնագիտության պահանջարկը չկա, հետևաբար ավարտելուց հետո աշխատանք չի ունենա: Նա հաստատակամ է, այդ մասնագիտությունն է ընտրել, բայց նաև կա հետաքրքիր հարց՝ եթե պահանջարկ չկա, ապա ինչու՞ այդ մասնագիտությամբ բուհի ընդունելություն է նախատեսված:

Սա ցավոտ խնդիր է, երեխաների հետ պետք է կատարել համապատասխան նախապատրաստական աշխատանք՝ նույնիսկ վաղ հասակից ընդգրկելով նրանց մասնագիտության ընտրության հարցերում: Դեռահասների մասնագիտության ընտրությունը պետք է պայմանավորված լինի նրանց ընդունակություններով ու հետաքրքրություններով, լինի նպատակային և խելամիտ, նա պետք է ծանոթանա մասնագիտություններին, դրանց ներկայացրած պահանջներին և տվյալ երկրում առկա պահանջարկին: Ի վերջո, մասնագիտության ճիշտ ընտրությամբ է մարդը ինքնահաստատվում և ունենում առողջ միտք ու վարք, համոզմունք ու աշխարհայացք, հետաքրքրություններ ու կենսաձիրք:

http://www.usarmenianews.com/am-n-9146.html

2017-06-28

ԱՅՍՕՐ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐՆ Է

Ակնածանքով ենք այցելում հուշահամալիր, այնտեղ անբաժան ցավի ու տառապանքի հիշողություններ կան, ծաղիկների խոնարհում, զոհված հայորդիների հիշատակին հարգանքի տուրք, պատերազմի փորձություններ տեսած և կենդանի լեգենդներ դարձած ազատամարտիկների մասին հուշերի արթնացում ու պատկառանք:

93-ին հայության համար Մարտակերտի ազատագրումը մի նոր նվաճում էր, բայց զոհողությունների գնով. հանգան բազմաթիվ ճրագներ, արյուն հեղվեց, որբացան մանուկներ... Մարտական գործողությունների կիզակետում խոնավ հողաթմբեր բարձրացան, փոքրիկ շիրմաքարեր՝ կարճ, համառոտ մակագրություններով... Ամուսնական մահիճ չտեսած շատ պատանիներ զոհվեցին, կորստի ցավից կուչ եկավ հայի սիրտը, զոհվածների արյամբ ցողվեց հինավուրց հողը արցախյան: Սրբացած հողը ճաքճքեց ցավից, անմահացան հերոսներ...

Անցանք փորձությունների երկար ուղի՝ բռնագաղթի խորդուբորդ ճանապարհների ահուսարսափ ու ողբ, սառն օտարություն, հայրենի հողի կարոտ...Տեղահան եղած ժողովրդի մի բեկորը բնակավայրի ազատագրումից հետո կամաց-կամաց վերադարձավ: Եկավ իր ավերված տունը, իր օջախը վերականգնեց, իր որդիների շիրիմների կողքին նոր աղոթք մրմնջաց՝ հայացքն Աստծուն ու երկնքին:

Տարիների ընթացքում պատերազմը գալիք սերունդների համար, թվաց, դարձել է հեռավոր հուշ, բայց նորից ապրիլին անմահացան հերոսներ, հավերժության ուղին բռնած մեր ժողովուրդը հասկացավ, որ

խաղաղ ապրելու երաշխիքը այստեղ քիչ է, բայց ամուր պիտի կանգնի իր հողին՝ դարերին պատգամելով մեր ապրելու անսասան կամքը:

Երկու պատերազմ տեսած մարտակերտցին այսօր արարում է, նորից ապրում: Գիտենք, որ դեռևս վաղ է պատերազմի վերջնական ավարտի մասին խոսելը, բայց նահատակների անցած ուղին հավերժ մեզ հետ է, մեր սրտերում: Անուն առ անուն հնարավոր չէ հիշել նրանց, ովքեր զոհվեցին, բայց ցավալիորեն մեր հիշողությանը նոր անուններ են գումարվում սահմանին կանգնած զինվորների անմահությամբ: Եվ իղձեր են կիսատվում, չիրականացված երազանքներ...

Անվերծանելի զգացումով ողբերգություն ապրած ժողովրդիս ցանկանում եմ խաղաղ լուսաբացներ, սահմանում կանգնած զինվորին՝ անվրդով ծառայություն: Ջերմեռանդորեն ու նվիրումով շնորհավորում եմ մարտակերցիներիս տոնը, հուսով, որ մի օր կվերականգնվի նաև մեր քաղաքի փառքը: Ցանկանում եմ բոլորիս միասնականություն, հայրենասիրական գաղափարների ամրապնդում, ամուր ու հերոսական կամք: Անձնական ու անանձնական ջերմ ապրումներ եմ ցանկանում բոլորին, նորանոր ձեռքբերումներ ու հաջողություններ:

http://www.usarmenianews.com/am-n-9153.html

2017-07-03

ԴԱԴԻՎԱՆՔՈՒՄ ԵՆՔ՝ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Վերջապես արձակուրդում ենք: Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենության ու մի շարք ուսուցիչների նպատակադրված ուխտագնացությունը դեպի Դադիվանքի եկեղեցի, իրականացվեց: Ն զորամասի կողմից տրամադրված ավտոբուսը տանում էր մեզ դեպի միջնադարի վանական համալիրը: Բնության ծոցում է ծվարած այն՝ Շահումյանի շրջանի Դադիվանք գյուղում՝ Դադիվան լեռան լանջին՝ Թարթառ գետի ձախ ափին:

Հայացքս այն լեռների լանջերին թառած գյուղերն են, որ հեռվից հեռու տեսանելի են դառնում բոլորիս: Լռություն է շուրջդ, ներսուզված խոհերի մեջ, թվում է՝ շուտով կարթնանան այդ գյուղերը, ու կսկսվի հոգսաշատ կյանքը: Անուններն էլ ծանոթ են մեզ, հարազատ, բայց զարմանալի չէ նաև, որ հային քարաշատ երկիր է բաժին հասել ու լեռների ծերպերին գտնվող քարքարոտ բարձունքներ, որտեղ նա հիմնել է իր տունը ու ծառ տնկել...

Ինչպիսի՜ բնաշխարհ...Վերանում, զմայլվում ես շրջապատի գեղեցկությամբ: Կողքիդ Թարթառն է կարկաչում, վեր խոյացած ժայռեր, դաշտային ծաղիկների ու դեռաբույսերի առատություն կա շուրջդ, ու կլանում ես բնաշխարհի այս գեղատեսիլ վայրի հրաշալիքները՝ ժամանակ առ ժամանակ հայացքդ հառելով այս կամ այն ուղղությամբ: Կենդանի ու հարաշարժ այս բնությունն իր բազում ձևերի մեջ ներդաշնակում է մարդու խոհերին, ու սփոփանք բերում մարդու հոգուն: Այն դառնում է բազմաթիվ գեղեցկություններ հայտնաբերելու անսպառ շտեմարան, որտեղ ննջում է իր խոհերի մեջ այս հնուց եկած վանքը:

Մեր քայլերը տանում են մեզ դեպի այդ աղոթարանը, ակնածանքով ենք մոտենում վանքին, իսկ այնտեղ շինարարական աշխատանքներ են ընթանում: Վառվող մոմերի կրակե լեզուներն իրենց ստվերն են գցում մեր դեմքերին, երկրիս խաղաղության համար աղերսները ձուլվում են մեր անձնական երազանքներին: Հալչող մոմերի առկայծումներին հառած իմ հայացքում անուններ կան, ու աղոթքի մրմունջներս արձագանքում են հոգուս մեջ ներսուզված մտածումներիս:



Նորից վանքի պատմությունն եմ թերթում: Ասում են, ավանդության համաձայն, եկեղեցին հիմնվել է Քրիստոսի առաքյալներից Թադևոսի հետևորդ՝ Դադեի կողմից 1-ին դարում: 12-րդ դարում Մխիթար Գոշը միաժամանակ այստեղ է բնակվել, և աշխատել է իր «Դատաստանագրքի» վրա: Ուշ միջնադարում Դադիվանքը եղել է Արցախի հայկական մելիքությունների կազմում: Այն ունեցել է 200 000 հա կալվածքներ, սակայն 1920 թվականին Արցախը Խորհրդային Ադրբեջանին բռնակցվելուց հետո զրկվել է կալվածքներից, դադարել գործելուց: 1960-ական թվականներին Ադրբեջանի իշխանությունները վանքային համալիրի տարածքում գյուղ են հիմնել, որի բնակիչները վնասել են վանքային համալիրի շենքերը, որմնանկարները: 1993 թվականի մարտի 31-ին Դադիվանքն ազատագրվել է, 1994 թվականին՝ վերաբացվել, իսկ 1999 թվականից սկսել են վերանորոգման աշխատանքները: Ադրբեջանական ստոր քաղաքականության աղաղակող փաստերից է Դադիվանքի ավերումը, որը համարել են հայկական քրիստոնեական կրոնի մնացորդներ և ավերել այն, ինչպես կարողացել են:

Վանքի որմերն էլ երկյուղածությամբ ենք շոշափում, սրբացված են ասես, որ իրենց խորքում միջնադարից եկած մրմունջներ ունեն՝ առ երկինք հառած: Մեր աշխարհն է սա, մեր սրբավայրը, և նրա գրկում հավերժանում ենք մենք՝ մեր հայացքներն այս լեռնաշխարհի գեղահրաշ բարձունքներին հառած:

http://www.usarmenianews.com/am-n-9192.html

2017-07-04

ԹԱՐԹԱՌԻ ԱՓԻՆ ԵՆՔ

Թարթառ (Տրտու) գետի ափին ենք, իսկ այն սկսվում է Արցախի լեռնաշղթայի հյուսիսային և Մռավսար լեռնաշղթայի հարավային լանջերից, անցնում Մարտակերտի և Քարվաճառի շրջաններով: Ականատես ենք, որ գետը անցնում է մի հիասքանչ ձորի միջով, իսկ այնտեղ անտառներ կան, բարձրաբերձ ժայռեր: Դետափից ոչ հեռու գտնվում է Դաղիվանքը: Թարթառ գետի վրա է կառուցված Սարսանգի ջրամբարը, մի հիասքանչ պատկեր, որի վրա կապույտ երկնակամարի արտացոլանքն է երևում հեռվից, ու սքանչանում ես այս բնաբեկորի գեղեցկությամբ:

Թարթառի ջրերին եմ ներսուզվում իմ մտորումներով, սառը ջուրը կարծես ավետում է գալիքի նոր արշալույսների մասին: Կռացած ուռենու ծառը իր ծամերն է սուզել ջրերում, անէանում ես, դառնում բնության մի մասնիկը: Ուռենու ճյուղերն էլ քամու օրորի տակ իրենց զրույցն են անում՝ ջրի կարկաչին միախառնված: Լիանայի տերևները գրկել են մամռոտած ծառը, սիրում եմ այս հրաշքը, սիրում բոլորին, որ կողքիս են: Թվում է՝ երազանքներդ իրականանում են, և աշխարհի ընթացքն ու ապագան միայն ավետաբեր է:

Այս միջավայրում կարծես նորովի ենք հայտնաբերում մեկը մյուսին: Ազատ խոսք ու զրույցը մոռացության է տալիս դպրոցական օրերի մանկավարժներիս զսպվածությունը: Սիրում եմ այս հրաշք գեղեցկությունը, որ մոռացության է տալիս նաև տաղտուկ աշխարհի՝ մեզ երբեմն սպառնացող վտանգը: Այստեղ մոռանում ենք պատերազմի մասին ու դառնում ենք բնությանը միաձուլված խաղաղ կյանքի սիրահարներ:

Սա հայրենիքի դյութական տեսիլք չէ, այլ՝ իրականություն, այստեղ այն հաստաբեստ ծառի արմատներում դարերից վեր հառած ազգիս արմատներն եմ տեսնում, վեր խոյացող ժայռերի մեջ՝ մեր ժողովրդի



ամուր կամքը, որ ապրել գիտի պատերազմների միջով, վեր հառնել գիտի զոհերի գնով, արարել գիտի հայրենի բնաշխարհի, պատմական հիշատակների ոգեկոչումով: Այս բնության գրկում ազգային ցավի ողբերգություն չկա, այստեղ մարդկային ապրումներն անսահման են՝ ողողված հույսի, լավագույն կյանքի ակնկալիքով: Սա մի մաքուր աշխարհ է, որտեղ անորոշություն ու լքվածություն չկա, այստեղ հոգու աչքերով ես նայում շրջապատիդ ու բնությանը և այն մարդկանց, որ միշտ կողքիդ են եղել, բայց այդ օրը՝ նորովի բացահայտված: Մեր աշխարհն է սա, մեր բոլորի Արցախը, մեր գոյությունը, ու մենք՝ նրա հետ:

http://www.usarmenianews.com/am-n-9195.html

2017-07-05

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ

Երբեմն մանկավարժիս ամենօրյա գրառումներում մանրապատումների տեսքով մտքեր եմ շարադրում, չգիտեմ որքանով է ինձ մոտ հաջողվում, բայց յուրաքանչյուր ոք կարող է իրեն տեսնել այս տողերում, որ ծնվում են ինքնաբերաբար կյանքի և ընդհանրապես, մարդու հանդեպ ունեցած հավատից ու սիրուց:

Ինքնանվիրում

Թարմ շունչ ես զգում, երբ տեսնում ես քո մեջ կյանքի ոգելից շունչը, որ մերժված էր ընդմիշտ: ՆԱ քեզ արև է դարձնում, իսկ դու արև ես դառնում՝ մարմնի հպման ու ջերմություն զգալու երազանքի թևերով: Սերը երկրային կյանք է, ՆԱ ինքն է սերը, որ կանչում է քեզ, այդ կանչով զգայական ու մտավոր ապրումների գագաթնակետին ես հասնում ու նորից իջնում բարձունքից՝ հայացքդ դեպի վեր:

Քեզ կանչում է ՆԱ, և դու նորից ես ուզում բարձրանալ, միանալ նրա էությանը... Կյանքի սերը խորանում է քո մեջ, երբ ՆԱ ինքն է կյանքը, իսկ այնտեղ մտքերի ու կրքերի հոսք է, երբ մարմնիդ հետ վիճվում ես դու, բայց այն ձգվում է դեպի կյանքի իմաստը:

Փնտրածդ ի՞նչ էր այս կյանքում, դու չգիտես, բայց գտար նրան, ով գտավ քեզ: Սիրո տարերքն է ՆԱ, որ տանում է քեզ իր հետևից, ՆԱ վայելք է, որ մոլեգին կանչում է քեզ: ՆԱ հոգի է, և դու նրան տեսնում ես հոգու աչքերով, համապարփակ է այդ սերը, իսկ ՆԱ երևում է քեզ լայնածավալ անհունի մեջ: Քո ապրումներում ՆԱ սրբացվում է, երբ դու ինքդ էլ նրա համար կյանք ես դառնում, մի նոր աշխարհ, որտեղ ելք փնտրելու ձգտում կա, զգացմունքների հոդաբուխ շաղախ:

Դու ապրում ես ու քո ապրումի ելևէջները փոխվում են ամեն օր, երբ զգում ես, որ ՆԱ է իմաստավորում քո կյանքը: Իսկ ՆԱ... ՆԱ ուրիշ է, պարզ է ու վճիտ՝ այն աղբյուրի պես, որ արտացոլանքն է քո պարզության: Իր էությամբ մարդասեր է ՆԱ՝ իր բոլորանվեր նվիրման մեջ, և դու ազնվորեն նրա համար ինքնանվիրում ես դառնում: Ինքնանվիրում...Ինչի՞ն՝ սիրու՞ն, որ հենց ինքը սեր է իր էությամբ, հողի՞ն, որ ազնիվ պաշտպանն է հողի, կյանքի՞ն, որ հենց ինքը կյանքն է, որ կա...

http://www.usarmenianews.com/am-n-9202.html

2017-07-06

ԲԱՌԻ ՀԱՄԸ, ԲԱՌԻ ՀՈՏԸ, ԲԱՌԻ ԳՈՒՅՆԸ...

Բառի հետ գործ ունեմ, բայց երբեմն բառերի պակաս եմ զգում, պատահում է նաև գրկում եմ բառը՝ ինձ շատ դուրեկան, ու այն դառնում է նոր բառ, հետո՝ բառերի շարք, ու դրանց մեջ գտնում եմ համն այդ գործածած բառի, հոտը, որ երբեմն բուրում է կողքիս, գույնը, որ միշտ ձգում է ինձ: Բառի համը...Բառի հոտը... Բառի գույնը...Ինձ հետ են միշտ:

Իրիկունը դառնում է իրիկնային, որի կողքին երբեմն զեփյուռ եմ դնում, իրիկնամուտը մոտենում է հանկարծ, ու այն դառնում է օրվա պահ, գուցե մայրամուտ, որ չի բացվելու հենց ինձ համար, բայց սիրում եմ անգամ այդ օրվա վերջալույսը, որ արևի վերջին շողերով է պատված:

Իրիկնաժամին ես դառնում եմ մելամաղձոտ, բայց նորից հոգուս մեջ իրիկնային ժամերն եմ հաշվում, որ շուտով կգա արշալույս, մի նոր արևածագ ու նոր երազներով ցայգալույսի տակ երազանքերի մի փունջ կգրկեմ, որ ամենուր շաղ տամ, լուսաբացներին ավետիս կասեմ, վերջալույսներին նոր բացվող օրվա լույսին կսպասեմ, ու այսպես կանցնի մի կյանք հասարակ՝ մի փունջ սիրով, մի բույլ հավատով, որ ինձ հետ են միշտ:

Բառի հոտն եմ զգում, երբ կողքիս բուրում է, երբ գույնն եմ փնտրում, գունազարդվում է, երբ համը չեմ զգում հանկարծ, հեռու եմ մնում, որ չարատավորվեմ այդ անհամ բառով: Անհամ, առանց համի, բառի համը ո՞րն է, դեռ չեմ հասկանում, երբ մարդուն հանկարծ վարկաբեկում են շատ անհիմն ձևով ու անհամ մի բառ կողքին են դնում, բայց բառը ինքը գիտի իր տեղը, նա չի գործածվի, որ համը կորցնի...

Համով բառերի մի շարք եմ հյուսում, որ լույս է դառնում, լուսե-լուսավոր մի կյանք է դառնում, լուսե մի հավատ, որ ինձ հետ է միշտ: Ուզում եմ ընտրել բառի գույնը, հողագույնը ո՞րն է, որ նախընտրում եմ գույնը հողի, որ բառին գույն տամ: Հողի գույնը... Բազում գույներ կան այնտեղ թաքնված, սևսիրտ կակաչի կարմիր թերթեր, ճերմակ երազներ՝ հողին պահ տված: Տխրում է հոգիս, երբ բառերի կապույտի մեջ կորսված երազներ կան, որ բուրում են, սիրտդ պարուրում անափ թախիծով:

Բառի համը...Բառի հոտը... Բառի գույնը... Իմ կողքին են միշտ, ու ես՝ նրանց հետ:

http://www.usarmenianews.com/am-n-9208.html

2017-07-07

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԽՈՍՈՒՄ ՀՈԳՈՒ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԻՑ...

Ասում են՝ տգեղ ու գեղեցիկ բառեր չկան, ուղղակի ամեն բառ իր տեղը պիտի ունենա խոսքում: Նույնպես կարող եմ ասել, որ տգեղ ու գեղեցիկ մարդիկ չկան, արտաքուստ անգեղ մարդն էլ կարող է դուրեկան լինի, եթե նրա հոգին գեղեցիկ է: Բայց արդյո՞ք միշտ է հրաշալի արտաքինով մարդը գեղեցիկ լինում, երբ նրա հոգին մաքուր չէ:

Երբեմն անտրամադիր ես տեսնում մարդուն, բայց ձգտում ես վերականգնել նրա աչքերի փայլը, պղտոր է հոգին, ուզում ես բերկրանքով լցնել նրա հուզումնառատ հոգին, սիրազուրկ է նա, փորձում ես քո սիրով սփոփել նրան...Երբ ձեռք մեկնել գիտես, դու գեղեցիկ ես հոգով, որ ամենևին կապ չունի գեղեցիկ արտաքինի հետ:

Անցնում ես մարդկանց կողքով, հանկարծ մեկը գռեհիկ հայհոյանքներ է թափում...Ամաչում ես. գռեհիկ մա՞րդն է գռեհիկ խոսում, թե՞ նրա հոգին է գռեհիկ: Նայում ես, արտաքինն էլ գեղեցիկ է, բայց ինչու՞ է այդպես խոսում, երբ նրա խոսքում բառերը կորցնում են իրենց տեղը:

Ովքե՞ր են խոսում հոգու մաքրությունից, մաքուր հոգին ո՞րն է... Տեսե՞լ ես մարդու հոգու ցավը, սրբի՛ր նրա աչքերի արցունքը, եթե քո հոգին մաքուր է: Մարդը ծիծաղում է երբեմն իր սրտում ունեցած կորստյան վշտից, ծիծաղել պետք չէ, կանգնեցրու՛ այն անզուսպ ծիծաղը, որ ծնվել է ցավից: Բարևի՛ր նրան, ով շրջապատում անտեսված է, նա ուրախությամբ կծիծաղի, դու ապրի՛ր այդ օրը հենց այդ ծիծաղով, որ անկեղծ էր ու կյանքով լեցուն: Գլուխ բարձրացնել պետք չէ՛ երկնքին հասնելու համար, գլուխդ իջեցրու՛, որ երկինքը խոնարհվի քո առջև, եթե դու խոնարհվելու ընդունակ ես: Գեղեցիկ արտաքի՞ն ունես, մի՛ ծաղրիր այն մեկին, ով գեղեցիկ դեմքի կարոտ ունի, փնտրի՛ր և նրա մաքուր հոգին գտի՛ր, որ բռանդ մեջ մեկնես նրան՝ որպես սպեղանի:

Ասում են՝ մարդու դեմքն իր ներաշխարհի արտացոլումն է, նրա դեմքն ու դիմագիծը մշակվում են նրա արարքների, մտածողության համեմատ: Բարեկիրթ մարդու հետ խոսելը դուրեկան է, բայց պետք չէ ծիծաղել այն մարդու վրա, որ խոսելիս երբեմն իրեն կորցնում է: Ամաչե՞լ գիտի մարդը, հարգի՛ր նրան, զարմանա՞լ գիտի, դու էլ զարմացի՛ր, արտասվե՞լ գիտի, եթե պետք է, դու էլ արտասվի՛ր, իսկ երբ ծիծաղում է արցունքի միջից, դու էլ ծիծաղի՛ր, մինչև արտասվես:

Գեղեցիկ է դառնում կյանքը, երբ կողքիդ մաքուր հոգիներ կան, երբ ծիծաղել գիտեն՝ անզուսպ ու մաքուր, սիրել գիտեն՝ հոգու նրբությամբ, ապրել գիտեն՝ մեծ կյանքի սիրով...

http://www.usarmenianews.com/am-n-9214.html

2017-07-10

ՄԵԿ ԲԱՌՆ ԷԼ ԿՅԱՆՔ Է, ՄԻԱՅՆ ԹԵ ԱՍԵՆՔ...

Ամենքից ո՞ր մեկն է կարողանում խոստովանել իր ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ինչ-որ հարցում: Եթե միշտ հաղթող ենք ու հպարտ, ապա պարտությունը մեզ համար չէ և խուսափում ենք ասել, որ պարտվեցինք: Բայց երբեմն պետք է զգալ այդ պարտության հաճելի զգացողությունը, որ մարդուն վերևից իջեցնում է ներքև՝ շատ ազնվորեն, առանց նվաստացնելու: Սեփական պարտությունն զգալն էլ մի նոր հաղթանակ է մարդու համար, միայն թե զգանք:

Որքա՜ն հաճելի է այն մի խոսքը, որ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ենք դիմացինին՝ մի շնչով արտաբերելով այդ մի բառը, բայց զգում պարտությունը մեր, որ այն մյուսին հաղթանակ է բերել: Երբեմն պետք է հպարտորեն իջնել պատվանդաններից՝ մոռանալով այն վսեմաշուք ինքնավստահության մասին, որ հաղթողը միշտ մենք պիտի լինենք:

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ հայցե՞լ եք՝ գոռալու համար, սխալ բառ ասելու, անհիմն մեղադրանքի, այն արցունքոտված աչքերի համար, որ պատճառ եք դարձել նրա հուզվելուն: Թերանում ենք երբեմն այդ մի բառն ասել, երբ մեր շուրթերի ծայրին է անգամ, թեկուզ շշուկով և այնքան կամաց, որ ինքներս զգանք բառի համն անգամ, որ մեղմացնում է մեզ, հոգի գուրգուրում:

ԱՆԿԵՂԾԱՆԱԼՆ էլ հաճելի է շատ, որ գուցե նույնիսկ միամտաբար, բացել ենք սիրտը մեր՝ այն մեկի հետ, ում վստահել ենք: Պետք չէ խուսափել, նայե՛ք աչքերին մարդկանց, եթե անկեղծ եք...Պետք չէ զսպել մեզ, երբ ծիծաղելու հակում ունենք, բայց չենք ծիծաղում, ժպիտն էլ մարդու համար է, երբ մոռանում ենք, գուցե խուսափում, իբր ժպտալն էլ մեզ սազական չէ:

Լսում ենք երբեմն՝ ԲԱՐԵՎՆ Աստծունն է... Բարևե՛ք մարդուն՝ կողքով անցնելիս, միայն բարևե՛ք, նույնիսկ՝ անտես-անհայտին, եթե կարող եք: Բարևի երես չտեսած այն լույս մանուկին բարևե՛ք անգամ, անծանոթ մեկին, որ ինչ-որ մեկի բարևի կարոտ իր մտքերով է... Բարևե՛ք մարդուն, որ բարև առնեք, գոնե այդ բառը շռայլե՛ք ազատ, որ թևեր կտա բարև առնողին, գուցե սիրտ կտա հուսահատվածին:

Երբեմն խուսափում ենք, որ ասենք մարդուն, թե ՀԱՎԱՏՈՒՄ ենք ու ՍԻՐՈՒՄ նրան: Ինչու՞ խուսափել, երբ վստահում ենք... Ազնվորեն սիրե՛ք, եթե կարող եք, բառն այդ շատ քնքուշ սիրելով ասե՛ք, միայն թե ասեք, որ սիրտ ջերմացնի, հոգի պարուրի անափ կարոտով:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ասում ենք երբեմն ու այդպես գնում, նրա հետքերն էլ երբեք չեն մնում, երբ բառից հետո մենք մոռանում ենք՝ ինչու՞ ասացինք...Բառն այդ երկար է, բայց շնորհքով է, երբ մարդն է ասում ու չի մոռանում, թե ում է ասել:

Բառեր են սրանք, որ ասում ենք մենք, երբ պետք է լինում, բայց բառն էլ պետք է զգանք մեր հոգում, երբ ասում ենք այն թեկուզ բարձրաձայն, կամ գուցե կամաց, մի քիչ ուշացած կամ գուցե հուզված... Մեկ բառն էլ կյանք է, միայն թե ասենք...

http://www.usarmenianews.com/am-n-9227.html

2017-07-11

ՀԱՄԵՄԱՏԵԼ ՊԵՏՔ ՉԷ, ԵՐԲ ՆԱ ՍԵՎԱԿ ՉԷ ԿԱՄ ՈՉ ԷԼ՝ ՍԱՀՅԱՆ...

Երբեմն ականատես ենք երևույթների, որ չենք կարողանում անտարբեր անցնել դրանց կողքով: Թերևս շրջապատում նկատելի է արհեստականորեն մարդուն վեր բարձրացնելու հակումը, որ երբեմն ծիծաղելի իրավիճակի մեջ է դնում նրան, ում այդքան վեր են բարձրացրել, հասցրել առասպելական բարձունքի: Մարդը երբեմն ստեղծագործում է, գուցե շատ լավ է ու հետաքրքիր, կամ գուցե անիմաստ է ու անըմբռնելի, բայց հանդիպում ենք ոչ հիմնավոր համեմատությունների, որ չենք կարողանում դժգոհությամբ չարձագանքել այդ երևույթի դեմ: Սովորական ստեղծագործող մարդը հանկարծ համեմատվում է դասական գրողների հետ: Ոչ ոք Պարույր Սևակ կամ Համո Սահյան չի դառնալու, ոչ մեկը չի հասնելու Շիրազ տաղանդին ու Չարենցին կամ մեկ ուրիշի, պետք չէ նմանեցնել ստեղծած նորաթուխ բանաստեղծություններն Իսահակյանի կամ Թումանյանի, թեկուզ և անվանի ուրիշ գրողների ստեղծագործությունների հետ:

Հայ գրականության մեջ ամեն մի գրող իր տեղն ու դերն ունի, և շատերի համար դյուրին չի եղել անցնելիք ճամփան, որպեսզի հիմնավոր կրթություն ստանան, բայց անհրաժեշտ բազմակողմանի գիտելիքներ ձեռքբերելու նպատակով ինքնակրթությունը լավագույն միջոց է եղել նրանց համար, որից այսօր շատ-շատերը հեռացած են, բայց դյուրությամբ են ընկալում իրենց հասցեին ասված այդ մեծափառ գովեստը, որ միանգամից մարդը հանկարծ հայտնվում է տաղանդավոր գրողների կողքին:

«Գրող և ոչ մրոտող լինելու համար, բացի քիչ ու միչ շնորհք ունենալուց, պետք է ընդարձակ, շատ ընդարձակ ու բազմակողմանի զարգացողություն ունենալ»,- գրել է Նար-Դոսը, բայց նա իր հետաքրքրությունները լրացրել է ոչ միայն հայ գրականության ընթերցանությամբ, այլ մի շարք ռուս գրողների ուսումնասիրելով և եվրոպական հեղինակների ստեղծագործություններ կարդալով:

Հեռու մնանք Թումանյան հանճարի հետ համեմատվելուց, երբ իր ժամանակ ամենայն հայոց բանաստեղծն էլ երգիծում էր այն գրողներին, որոնց Մասիսի գլխի ամպերն ավելի էին հուզում, քան Մասիսի ստորոտում ապրող մարդկանց վիճակը, և նրա իսկ համոզմամբ՝ իսկա-

կան գրողը նա է, ով կարողանում է բարձր արվեստով արտացոլել ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներն ու նրա կյանքի կարևոր կողմերը:

Սևակ հանճարն էլ իր ժամանակ կոչ էր անում հեռու մնալ մտավոր հետամնացությունից, երբ «Արբանյակներ են պտտվում երկրագնդի շուրջ, իսկ ոտանավորների շատ ժողովածուներում ավանդական ջրաղացքարն էր»: Ու ջանում էր գրականության հերոս դարձնել այն անհատին, որի ականջները ոչ թե ճաշարանային նվագախմբի են կարոտ, այլ ծարավի են սիմֆոնիաների...

Բոլոր գրողների անցնելիք ճամփան անսայթաք չի եղել, բայց պատասխանատվության զգացում են ունեցել իրենց ստեղծագործությունների հանդեպ, երբեմն նույնիսկ դուրս են թողել վաղ տարիների իրենց գրած գործերը՝ կատարելով խիստ ընտրություն ընթերցողների առջև: Նրանք էլ հոգևոր սնունդ են ստացել իրենց նախորդներից, բայց երբեք չեն նույնացվել նրանց գրածները ուրիշ գրողների ստեղծագործությունների հետ: Այդ մասին ճշմարտացիորեն ասել է Սահյան բանաստեղծը. «Իբրև բանաստեղծի իմ ձևավորման շրջանում ինձ վրա ազդել են բոլոր հայ բանաստեղծները՝ գողթան երգերի հեղինակներից մինչև իմ ժամանակակիցներն ու գրչակիցները:Իսկ ձևավորումից հետո ես գնում եմ իմ ճանապարհով՝ աշխատելով հարստացնել ու զարգացնել նախորդների ավանդները»:

Իր ձևավորած ճանապարհով ընթացող բանաստեղծն էլ չհասկացավ Շիրազ առասպելի խորհուրդը, երբ իր իսկ խոսքերով՝ այնքան պարզ ու սովորական մարդու մեջ դրված էր արտակարգ հանճարը: Ուրեմն, հանգիստ թողնենք մեր դասական գրողներին ու նրանց հետ համեմատվելու մարմաջը, և յուրաքանչյուրս ունենանք մեր անցնելիք սեփական համեստ ու խաղաղ ճանապարհը:

http://www.usarmenianews.com/am-n-9235.html

2017-07-13

ՎԵՐԱԿԱՆԳՆԵՆՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՂԵՄԻ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ

Դպրոցականների ամառային արձակուրդի օրեր են, բայց երբեմն մտքերով նրանց հետ եմ: Անցած ուստարում արձակուրդից հետո նրանք եկան նոր տրամադրությամբ, որ արձակուրդի օրերը հանգստանալու համար են, ոչ թե՝ ինչ-որ հանձնարարություններ կատարելու: Ինչու՞ բուռն հակադարձում չկար իմ կողմից, համամի՞տ էի, թե՞ ներողամիտ գտնվեցի նրանց նկատմամբ: Կամ գուցե ես էլ դեմ էի այն ծավալուն տնային հանձնարարություններին, որ երբեմն որոշ ուսուցիչներ ծանրաբեռնում են դպրոցականներին հենց այդ արձակուրդային օրերին: Թերևս նրանց էլ կարելի է հասկանալ, բայց այս եռամսյա հանգստյան օրերին մեծ սիրով կարելի է գիրք ընթերցել, թեկուզ և՛ էլեկտրոնային տարբերակով, մի բան, որից հեռացել է նոր սերունդը, երբ նրա համար ընթերցանությունն արդեն մոդայիկ չէ, այնպես, ինչպես դեռ հագնելու պիտանի մի հին շոր, որ մեր օրերի նորաձևությանը հարմար չէ:

Ընթերցում եմ՝ ՌՈԶՄԱՐԻ ՈՒՐՔԻԿՈ. «Ժամադրվե՛ք մի աղջկա հետ, որը ԿԱՐԴՈՒՄ է...»: /Թարգմանությունը՝ Վարդան Ասլանյանի/: «Որը» լինի, թե մեր օրերի գործածական «ովը», նշանակություն չունի, կարևորը, որ այստեղ մի հրաշալի սեր կա արծարծված ընթերցանության և գիրք ընթերցող աղջկա հանդեպ, մի բան, որ կարող են շատերը մեր օրերում սվիններով հակադարձել:

«Հանդիպե՛ք աղջկա հետ, որը կարդում է... Ժամադրվե՛ք այնպիսի աղջկա հետ, որը հագուստի փոխարեն իր գումարը ծախսում է գրքերի վրա, որը պահարանում ազատ տարածության խնդիր ունի շատ գրքեր ունենալու պատճառով: Հանդիպե՛ք աղջկա հետ, որը տակավին ընթերցելիք գրքերի ցանկ ունի և ընթերցողական տոմս է ձեռք բերել տասներկու տարեկանից...Գտե՛ք այնպիսի մի աղջկա, որը կարդում է:

Դուք կհասկանաք դա, որովհետև նա իր պայուսակում դեռևս չավարտած գիրք ունի: Նա մեկն է, ով սիրով նայում է գրախանութի դա-

րակներին դարսված գրքերին, ով զսպված ճիչ է արձակում, երբ գտնում է իր փնտրած գիրքը: Տեսնո՞ւմ եք այն խորհրդավոր թռչնակին, որը շնչում է հին գրքերի բույրը օգտագործված գրքերի խանութում. նա՛ է ընթերցողը: Նրանք չեն կարողանում ընդդիմանալ էջերի բույրին, հատկապես երբ դրանք մաշված ու դեղին են»:

Անդիմադրելի մի ձգողական ուժ ինձ տանում է դեպի այս տողերը, որ բազմիցս ընթերցել ու նորից ընթերցում եմ՝ վերհիշելով մեր անցած օրերը և իմ սերնդակիցներին, որ անհագ կարոտով մտնում էինք գրադարանները՝ գիրք վերցնելու և կամ հենց տեղում կարդալու, երբ գրքի պահանջը սուր էր... Բայց մենք կհանդիպե՞նք հիմա այսպիսի մեկին. «Ահա՛, այն աղջիկն է, որը կարդում է սպասման պահերին մայթեզրին գտնվող սրճարանում: Եթե հայացք նետեք նրա բաժակին, կտեսնեք, որ սերուցքն այդպես էլ մնացել է պռունկին, որովհետև նա ամբողջովին կլանված ընթերցանությամբ թևածում է հեղինակի ստեղծած աշխարհում: Նստե՛ք նրա կողքին: Գուցե նա ձեզ շանթի հայացքով, ինչպես այն աղջիկների մեծամասնությունը, որոնք չեն սիրում, երբ ընդհատում են իրենց ընթերցանությունը: Հարցրե՛ք նրան՝ հավանո՞ւմ է արդյոք գիրքը: Եվս մեկ բաժակ սուրճ հյուրասիրեք նրան»:

Ինչու՞ եմ ցավում, որ այսպես շատերը հեռանում են ընթերցանությունից. անցյալի մեր պատմությո՞ւնն է մոռացվում, երբ երբեմն այս սերունդն է հակադարձում մեզ, թե ինչու ենք ուսումնասիրում այն, երբ ինքներս գտնվում ենք նոր օրերի վշտամորմոք ապրումների մեջ: Մի կարգին ձեռագիր էլ չունեն, երբ արդեն շատերի համար ձեռագիր գրելն էլ մոդայիկ չէ գիրք ընթերցելու նման: Բայց ես նորից գիրք կարդացող աղջկա հետ եմ:

«Երբ դուք գտնեք ընթերցող աղջկա, բաց մի՛ թողեք նրան: Երբ գտնեք նրան գիշերվա ժամը երկուսին գիրքը կրծքին սեղմած արտասվելիս՝ մեկ բաժակ թեյ պատրաստե՛ք նրա համար և գրկե՛ք նրան: Դուք կարող եք կորցնել նրան մի քանի ժամով, բայց նա միշտ կվերադառնա ձեզ մոտ: Նա կարող է խոսել գրքի հերոսների մասին, ասես նրանք իրական լինեն, որովհետև ինչ-որ մի պահի նրանք այդպիսին էլ կան: ....Եթե ցանկանում եք աշխարհը ձեռք բերել և դրանից անդին գտնվող մյուս աշխարհները՝ հանդիպե՛ք աղջկա հետ, որը ԿԱՐԴՈՒՄ է... Կամ ավելի լավ է՝ հանդիպե՛ք աղջկա հետ, որը նաև գրում է...»:

Կա՞ն գիրք ընթերցողներ դպրոցականների այս արձակուրդային օրերին, եթե չկան անգամ, գոնե կարդացեք այս տողերը.... Այդ տողերից մեծ սեր է բուրում գրքի ու գիրք ընթերցողների հանդեպ:

http://www.usarmenianews.com/am-n-9249.html

2017-07-17

«ԵՍ Ո՞Վ ԵՄ» ՇԱՐՔԻՑ...

«Ես ո՞վ եմ»,- նորից հարցնում եմ ինձ, ու շարքն ավելանում է, որ իմ կերպարը բացահայտվի: Այդ ճանապարհին երբեմն լացում է հոգիս, բայց գահավիժելուն սովոր չեմ, ժպտում եմ, երբ ամուր է կամքս, երբ հավատս դառնում է ինձ հենարան: Զրուցում եմ երբեմն ինձ հետ, մենախոսությանս մեջ «ինչու»-ներն ավելանում են, պատասխանի փնտրտուքների մեջ ձայնս բարձրանում է, բայց նորից հանգիստ եմ թողնում այն մի քանի «ինչու»-ները, որ պատասխան չունեն այլևս: Շտապում եմ երբեմն, երբ հապաղելու կարիք չկա, ու կարծես ուզում եմ բացել իմ կերպարը, որ վաղուց բացված է: Բայց ինչպե՞ս, թե ի՞նչ եմ սիրում՝ գրել եմ արդեն, ինչպե՞ս եմ ապրում՝ այդ էլ գիտեն, և ուրիշ շատ հարցեր պարզված են արդեն: Ուրեմն ի՞նչ, ես ո՞վ եմ...

Այն Արցախյան պատերազմական օրերին չարենցյան երկնուղեշ փայտերը երևում էին ինձ. նա գնաց դեպ այն պարանը՝ զոհաբերելու իրեն, որ ուրիշները չզոհաբերվեն: Մտքերս խառն էին այն ժամանակ այնքան զոհերի կողքին: Ես ո՞վ էի, մարդ, որ սարսափել գիտեր արկերի հարվածների տակ, բայց երանության անսովոր զգացում ուներ բոլոր նրանց հանդեպ, ում հուղարկավորող ուներ: Գրադի դատարկված արկղում ամփոփված մարդուն երանի տվեցի, որ իրեն գերեզմանոց տանողներ կային. նրանք չորսն էին, որ այդ անսովոր դագաղն էին տանում: Սարսափելի զգացում, որ տեսա հրետակոծության տակ՝ մեր գյուղի գերեզմանոցի ճանապարհին, այն դաժան օրերին:

Ես ո՞վ եմ, մարդ, որ հուսահատվել, բայց կրկին ոգևորվել գիտի... Գյուղամիջում ընկած գրադի հարվածից փրկվեցինք մենք, շուրջբոլորը մշուշված էր, պատերազմի հողմն էր բարձրացել օդում, մեր աղաղակն էլ հասնում էր երկինք: Բայց այն ժամանակ Աստված կա՞ր տեսնես... Մեր կողքին հաշմանդամ կին կար ընկած. հոգեվարքի մեջ էր նա...Այն մեկը, որ մայր էր, ձեռքն էր կորցրել...Նայեցի նրան, արյան հեղեղ էր, ես ինքս էլ ինձ կորցրի...

Մի ներքին ձայն ինձ տանում է այն հեռավոր ափերը: Ո՞վ էինք մենք այն օտարության մեջ: Փախստականնե՞ր, որ փախել էինք մեր հող ու ջրից, մեր տուն ու տեղից, բայց ինչպե՞ս... Մենք փրկվել էինք այն չարաղետ պատերազմի ճիրաններից... Բայց, ցավոք, փախստականներ կոչվեցինք մենք և ո՛չ՝ փրկվածներ:

Ես ո՞վ էի այնտեղ, որտեղ ծով կար ու կապույտ երկինք, ու ծովը քաշում էր ինձ: Հուսահատ գնացի մի օր, որ կառչեմ ծովի ալիքներից, բայց կանգ առա...Հուսահատվել պետք չէ, պիտի կարողանալ ապրել այդ օտարության մեջ, երբ շուրջդ բութ հայացքներ կան, օտար ու սառը, երբ բազմաժխոր ամբոխի մեջ մենակ ես դու...Բայց կառչեցի կյանքից, որ ապրեմ, ու ապրեցի ես, որ ինձանով ապրեցնեմ նաև շուրջս...

Կյանքի իմաստի տենդագին որոնումների մեջ փնտրում եմ կյանքը, երբ կողքիս է այն, գնում եմ դեպի լույսը, երբ շուրջս լուսավոր է, հավատ եմ փնտրում, երբ հավատս ինձ հետ է... Ու այսպես հայացքս հառում եմ այն անծայրությանը, որտեղ գնում ենք բոլորս, բայց այնտեղից հետդարձի ճամփա չկա, ու կանգնում եմ... Կանգնում եմ, որ թերթեմ այն կիսատված էջերը, բայց թվում է՝ չեմ հասցնի թերթել, երբ միտքս փախչում է ինձանից առաջ, ու կանգ եմ առնում, որ հետո թերթեմ այդ անփույթ շարված տողերը կյանքիս...

Ես ո՞վ եմ, մարդ... Երբ փորփրում եմ անցյալս, տխրում է հոգիս, երբ հուսահատվում եմ, թաքցնում եմ այն, երբ արտասվելու ցանկություն է ծնվում, արտասվում եմ լուռ: Բայց, այնուհանդերձ, սիրում եմ կյանքը:

http://www.usarmenianews.com/am-n-9270.html

2017-07-19

ՕՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԵԿ ՀԵՐՈՍՈՒՀԻ

Ամառային արձակուրդի օրեր են, բայց երբեմն իմ աշակերտների բարի ողջույնները հասանելի են դառնում ինձ այս տարածական հեռավորության վրա: Ու նորից ես նրանց հետ եմ....Հրատարակվելիք իմ գրքերի շուրջ մտահոգությունս մոռացության եմ տալիս նրանց՝ ինձ ուղղված խոսքերում, որ այս պահին իմ ձեռքին են՝ թղթին հանձնած:

8-րդ դասարան փոխադրված իմ աշակերտուհու՝ Լուսինե Հովհաննիսյանի խոսքերը շատ անկեղծ են ու անմիջական. «Միշտ երազել եմ լինել հեքիաթի բարի հերոսուհի, երազել եմ հրաշքներ գործել, փոխել աշխարհը և անգամ երևակայում էի, թե ինչպես եմ նման հրաշքներ գործելու: Ինձ տեսնում էի՝ որպես մի երևակայական, արտասովոր հեքիաթի հերոսուհի, բայց պատկերացրե՛ք, որ հիմա ինձ համար ավելի հաճելի է լինել ուսուցչուհուս հրատարակվելիք գրքում, թեկուզ հեքիաթի հերոսուհի դառնալու ձգտումս դեռ չի մարել, բայց ինձ համար այդ գրքում երևալն ավելի կարևոր է:

Եթե ես իմ տեսակով գրքի «հերոսուհի» եմ դառնում, ապա դա չի բխում ինձանից, այլ այն գալիս է իմ ուսուցչուհու աշխարհընկալումից: Շատերը կարող են երանի տալ ինձ, և այդ երանությունը զուր չէ, քանի որ, իրոք, երանություն է այդպիսի ուսուցչուհի ունենալը, ով կարողացավ նկատել մեր աչքերի մեջ առկայծող անգամ ամենափոքր փայլը, նա կարողացավ զգալ մեր ներսի զգացողությունն անգամ, երբ նույնիսկ շփոթված ենք մենք: Մինչև հիմա էլ զարմանում եմ, թե ինչպե՞ս նա կարողացավ զգալ այն, ինչի մասին միայն մենք ինքներս գիտենք: Մի՞թե նա հատուկ կանոններ է սահմանել՝ մեզ բացահայտելու համար, բայց այդպիսի կանոններ չէին կարող լինել, քանի որ նրա էությունն է այդպիսին:

Երբեմն դասերի ժամանակ նա մեր վատ արարքների մեջ անգամ ցանկանում էր ինչ-որ բան որոնել, երկընտրանքի առջև կանգնելով՝ մենք սխալներ էինք գործում, բայց նա կարողանում էր հասկանալ, որ

մեր սխալ արարքները մեր անմտությունից են բխում: Իմ թերություններով հանդերձ՝ նա իմ մասին գրել է, ես այդ գրքում կլինեմ, և այն փաստը, որ այդ գրքում կլինեմ ես, ինձ անչափ ուրախացնում է:

Մի քիչ ամաչում եմ, երբ գիտեմ, որ բոլորը կարդալու են անգամ իմ սխալների մասին, բայց ծածուկ, սրտիս խորքում ես մի մեծ երջանկություն եմ զգում:

Ընկերներս միշտ մտածում էին, թե ես ինքս եմ իմ մտածումների, ձգտումների մասին հայտնել ուսուցչուհուս, բայց իրականում նա ինքն է կարողանում ամեն ինչ հասկանալ՝ առանց ոչ մի խոսքի: Եվ վերջապես, ուզում եմ ասել, որ շատերը կարող են ինձ երանի տալ ոչ թե նրա համար, որ ես իմ էությամբ տարբերվում եմ իրենցից, այլ զուտ նրա համար, որ ունեմ Պողոսյանի պես ուսուցչուհի, ով ինձ դարձրեց իր հրատարակվելիք գրքի «հերոսուհին»»:

Այս տողերն անդորրություն են բերում ինձ, և դրական հույզերի մի աստղաբույլ է ծնվում հոգումս ու հեռվից ինձ հասանելի է դարձնում այն խոսքը հայտնի, որ եթե ծնողներն իրենց երեխաներին մարմին են տալիս, ապա ուսուցիչները պետք է հոգի տան նրանց... Ուրեմն հոգի տանք այս երեխաներին, որ մեր առջև են նստում, ու նրանցից էլ ստանանք նույնպիսի հոգի, որ ջերմացնում է մեզ, երբ գիտենք, որ գնահատված ենք մենք այս դեռահասների կողմից:

http://www.usarmenianews.com/am-n-9288.html

2017-07-21

Ո՞Վ Է ՄԵՂԱՎՈՐԸ, ՈՐ ԱՐՑԱԽԻ ԱՅՍ ՆՈՐԱԾԻՆ ԲԱԼԻԿՆ ԷԼ ՊԻՏԻ ԱՐՏԱԳԱՂԹԻ

Մեծագույն սիրով շնորհավորում եմ արցախդատեր ծնունդը, բայց նաև մտահոգ եմ սերնդի համար... Ո՞վ է մեղավորը, որ այս փոքրիկն էլ պիտի արտագաղթի...Դեռ նոր է անվանակոչվել Վիկտորյան, ով Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի 2006 թվականի՝ իմ դասղեկական դասարանի շրջանավարտ Արման Գրիգորյանի նորածին բալիկն է:

Արմանն ինձ համար հարազատ դարձած անձնավորություն է, մեծացել է իմ հարևանությամբ ապրող ընտանիքում: Քսան տարվա մեր ընտանիքների մտերմությունն ամրագրել է մի ազնիվ բարեկամություն, որ արյունակցական չէ, այլ հոգով, հասկացվածությամբ, միմյանց հանդեպ ունեցած մեծագույն հարգանքով ու սիրով:

Այս տարիների հեռվից նա ինձ երևում է որպես դպրոցական, ով շատ հանգիստ ու հավասարակշռված կերպար էր, յուրաքանչյուր ուսուցչի՝ իր պահվածքով երանության զգացողություն փոխանցող մի դեռահաս, ով չափազանց կոկիկ էր, հրաշալի կեցվածքով, նուրբ ժպիտով, դասերի հանդեպ ուշադիր պատրաստականությամբ: Նա բուհ ընդունվելու համար մասնակցում էր ինձ մոտ հայոց լեզվի անհատական պարապմունքներին՝ նույն ազնիվ զգացողությունն իր ներսում ամփոփած: Շուտով դարձավ Արցախի պետական համալսարանի ուսանող, նորից ականատես եմ նրա ուսանողական կյանքին, իսկ զինվորական պարտադիր ծառայության տարիներին հպարտության անթեղված զգացում կար հոգումս նրա և բոլոր այն զինվորների հանդեպ, ովքեր հող հայրենին են պաշտպանում՝ հայրենասիրության ուսուցանած դասն իրենց հոգում սերտած:

Տարիներ առաջ մասնակիցն եմ նրա հարսանեկան գեղեցիկ արարողությանը, հրաշալի դրական հույզերի մի ամբողջություն գալիս էր ազդարարելու, որ մի նոր ընտանիք է ստեղծվում, նոր երազանքներ են իրականացվում, ու այդ նորի մեջ սերնդափոխության ծիլերն իրենց ավիշները կտարածեն, որ հավերժ ապրի այս անառիկ ամրոցը, որ հայրենի տուն է կոչվում, հարազատ Արցախ: Բարձրագույնն ավարտած Ռուզաննայի հետ ընտանիք ստեղծվեց, բայց երկուսի համար էլ աշխատանքի տեղավորվելու փորձերն ապարդյուն էին...

Ո՞վ է մեղավորը, որ մարդն ստիպված մեկնում է արտագնա աշխատանքի, ո՞վ պիտի կանգնեցնի այս արտագաղթը, որ մարդը հուսահատորեն ընտրում է այդ ճանապարհն իր ապրուստը հոգալու համար: Ո՞վ է մեղավորը, որ ընտանիքներ են մասնատվում, ու իմ կողքին հավերժ բարեկամության անխզելի թելերով կապված այս ընտանիքն էլ ստիպված է մեկնել օտար ափեր:

Այս օրերին Արմանը վերադարձել է այն հեռուներից, եկել է իր փոքրիկ դստեր ծննդյան ավետման երջանկությունն զգալու, ապրելու հայրիկ դառնալու մեծագույն հրաշքը, վալելելու այս բալիկի անմեղությանը պարուրված սերը... Բայց նա նորից պետք է հետ վերադառնա. այնտեղ՝ այն հեռուներում, արտագնա աշխատանքի է:

Տխրում է հոգիս, ընդհանրական դարձած այս հարցումը նորից բարձրաձայնվում է՝ ո՞վ է մեղավորը, որ հայը հեռանում է իր հարազատ օջախից, ո՞վ է մեղավորը, որ այս ծնված փոքրիկ բալիկն էլ իր մայրիկի հետ ամիսներ անց պետք է մեկնի հեռավոր ափեր...

Իսկ այնտեղ հարազատներ ունի այս նորածին մանուկը՝ պապիկ դարձած ու բոլորիս կողմից մեծագույն հարգանքի արժանացած Արմիկ Գրիգորյանը, ով երեք տասնամյակ և ավելի տարիների զինվորական նվիրյալ ճանապարհ անցնելուց հետո թոշակի է անցել, բայց այստեղ ուրիշ աշխատանք չգտնելով՝ այս օրերին օտար ափերում է աշխատում: Ո՞վ է մեղավորը, որ այս փոքրիկ բալիկի հորեղբայրն էլ արտագ-

նա աշխատանքի է մեկնել, սիրելի հարսնացու ունի այստեղ, որ գերազանց բարձրագույնն է ավարտել, բայց նա էլ շուտով ընտանիք կկազմի ու կմեկնի օտարության:

Իմ «մեղավոր ով»-երի» շարանը չի ավարտվում, երբ ականատես եմ, որ իմ կողքին այս գեղեցիկ զինվորական ընտանիքի երեք տղամարդիկ արտագնա աշխատանքի են մեկնել, բայց ընտանիքի միակ աշխատող մայրն այստեղ շարունակում է իր զինվորական ծառայությունը, իսկ դուստրը Հայաստանի բարձրագույն բուհերից մեկի գերազանցիկ ուսանողուհին է:

Ինչու՞ են այսպես իրարից հեռանում ընտանիքի անդամները, ինչու՞ են հարազատների կարոտները տարածքներով կամրջվում... Եվ վերջապես՝ ո՞վ է մեղավորը, որ Արցախի այս նորածին բալիկն էլ պիտի արտագաղթի...

http://www.usarmenianews.com/am-n-9312.html

2017-07-23

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕԳՈՒՏՆ ՈՒ ՎՆԱՍԸ

Որքանո՞վ է ճիշտ բարձրագույն կրթություն ստանալը, երբ ուսանողը վճարում է, ավարտում բուհը, մատնվում անգործության: Ո՞րն է օգուտը՝ բարձրագույնի փաստաթու՞ղթը, որ ստացել է նա, թե՞ անցած ուսանողական ճանապարհը, իսկ որոշ աղջիկների համար՝ երբեմն այդ դիպլոմի օժիտ դառնալու միտումը:

Բայց կա նաև մյուս կողմը՝ առանց բարձրագույն կրթության հնարավոր չէ համապատասխան աշխատատեղում ընդունվել, պետք է դիպլոմ ունենալ՝ տվյալ մասնագիտությամբ աշխատանքի տեղավորվելու համար: Նաև հիշում եմ, որ Արցախյան պատերազմից ու բռնագաղթից հետո օտար ափերում անպիտանելիությունն զգացի իմ բարձրագույնի փաստաթղթի, երբ ապրուստ հոգալու համար, առևտրական գործերի մեջ ընդգրկվելով, մոռացա դրա գոյությունը, որ միջնակարգն ավարտելուց հետո բուհ ընդունվելու երեք տարվա մաքառումների և իմ ուսանողական չորս տարվա տքնաջան աշխատանքի արդյունքն էր:

Բարձրագույն կրթությունը մեր ժամանակներում «թանկ հաճույք» է եղել, իսկ հիմա՝ մեր օրերում, այսպես ասած, «մոդայիկ» է դարձել: Շատ ծնողներ իրենց պարտքն են համարում երեխաներին բարձրագույն ուսման տալ՝ անկախ նրանից, թե ինչպես են նրանք սովորել հանրակրթական դպրոցում, և բուհն ավարտելուց հետո շատերը մնում են անգործության մատնված:

Զարմանում եմ: Պիտեր Թիլը, ով հանդիսանում է Pay Pal-ի հիմնադիրն ու Facebook-ի առաջին ինվեստորներից մեկը, համոզված է, որ այսօր բարձրագույն կրթության դերը գերագնահատվում է, և մեծ մասամբ այն հանդիսանում է ժամանակի անօգուտ ծախս: Նրա կարծիքով՝ բանական մարդու համար սկզբնական կապիտալն ավելի կարևոր է, քան բարձրագույն կրթությունը: Նրա խոսքով՝ Մարկ Ցուկենբերգը և այլ հաջողակ գործարարներ այդպես էլ չեն ավարտել բարձրագույն ուսումնական հաստատությունները:

«Բարձրագույն կրթությունը ես համարում եմ օճառե պղպջակ, այն էլ՝ դասական պղպջակ: Մենք կարող ենք պղպջակ անվանել այն երևույթը, որի արժեքը գերագնահատվում է, և միաժամանակ բոլորը հավատում են դրան… Ինչպես անշարժ գույքի գործակալները, համալսարանները ձեզ առաջարկում են ներդրում կատարել ապագայի վրա:

Բայց մեծամասամբ բարձրագույն կրթությունը անօգուտ ժամանակի և փողերի ծախս է. սովորական երևույթ, որը ձգել են մինչև 4 տարի: ....Ես չեմ ուզում խորհուրդներ տալ, բայց ուզում եմ ասել, որ այն մարդիկ, ովքեր ավարտել են դպրոցն ու պատրաստվում են համալսարան ընդունվել, օգտակար կլիներ մտածել այն հարցի շուրջ, թե ո՞րն է իմաստը նման կրթության, ո՞րն է դրա նպատակն ու ո՞ւր է այն տանում»:

Նրա կարծիքն իր համախոհներին գտավ ուսանողության շրջանակներում, երբ տարիներ առաջ նա առաջին անգամ հայտարարեց իր ոչ սովորական ծրագրի մասին, որ համապատասխան գումար կտրվի բիզնեսում ներդրումներ կատարելու համար... Եվ նա ստացավ ուսումը թողնելու ցանկություն ունեցողների ավելի քան 400 հայտ: Հայտերի զգալի մասը առաջատար և հեղինակավոր բուհերից էին...

Գուցե մեզ մո՞տ էլ ավելի հարմար կլիներ՝ այդպիսի ծրագիր լիներ, որի համաձայն՝ գումար տրամադրվեր, և այն ներդրվեր որևէ բիզնեսի մեջ: Կարծում եմ՝ դա ավելի օգտակար կլիներ, քան ծնողների գրպանի հաշվին՝ դպրոցի որոշ շրջանավարտների՝ բուհերում ձևական անցկացրած ուսանողական տարիները: Բայց արդյո՞ք մեր օրերում կգտնվի մեկն այն հայ գործարարներից, որ համարձակորեն նման ծրագիր կառաջարկի մեր երիտասարդներին...

http://www.usarmenianews.com/am-n-9318.html

2017-07-28

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ ԿԱՄ ԻՄ ԱՌԱՋԻՆ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Գիրք գրելու մտահղացումը հանկարծակի էր ծագել ինձ մոտ դեռ տարիներ առաջ: Իմ նպատակն էր՝ համեստ նպաստս թողնել մանկավարժության ասպարեզում՝ դրանով իսկ փորձելով յուրատիպ ձևով ներկայացնել ուսուցչի բարդ ու պատասխանատու աշխատանքի նրբությունները, որով օգնած կլինեի հայոց լեզու և գրականություն դասավանդող ուսուցիչներին, ընդհանրապես՝ մայրենիի նվիրյալներին: Եվ 2013-ին ծնվեց իմ առաջին գիրքը՝ «Ուսուցչի իմ թղթապանակը» մեթոդական ձեռնարկը, որ հրատարակվեց ԼՂՀ ԿԳ նախարարության երաշխավորությամբ ու ֆինանսական միջոցներով և շուտով բաժանվեց Արցախի դպրոցներին: Նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Ղարախանյանի խմբագրական ուղղորդող խորհուրդներով և մտահղացումներով ես այդ ժամանակ բացահայտվեցի որպես գրքի հեղինակ, գիրք, որ, իրոք, գրել էի մեծ սիրով ու նվիրումով:



Այն համարվեց ուսուցողական նյութերի մի յուրատիպ ամփոփագիր՝ իմ մանկավարժական փորձի ուշագրավ արձանագրումներով՝ համաքայլ կրթության բարեփոխումների ընթացքին: Շրջանցելով գիրքը հրատարակելու իմ այդ նպատակը՝ մեծ ուրախություն ապրեցի, երբ այն լայն ընդունելություն գտավ դպրոցի աշակերտների կողմից, առանձնապես նրանց, ովքեր իրենց հիանալի մտքերով դարձել էին այդ գրքի իրական «հերոսներ», եթե, իրոք, այդպես կարելի է կոչել: Վաղուց նրանք ավարտել են դպրոցը, բայց հիշողությանս մեջ մեր դպրոցականների խոսքերն են, որ այդ օրերին ամբարել էին իրենց պարզ հոգիներում՝ միախառնված հպարտության զգացմանը:

«Ահա բացում եմ «Ուսուցչի իմ թղթապանակը» գիրքը և իմ աչքերի առջևով տեսաֆիլ-

մի ժապավենի նման անցնում է ուսուցչուհուս մանկավարժական աշխատանքային գործունեությունը: Գրքին իրականություն ներշնչելու համար թերևս նա գերադասեց «հերոսներ» դարձնել իր աշակերտներին և նրանց մտքերը: Պատիվ եմ ունեցել դառնալ գրքի «հերոսուհիներից» մեկը և ուրախ եմ, որ ստեղծագործական աշխատանքս արժևորվեց ուսուցչուհուս կողմից և որպես մտքի նշխար՝ տեղ գտավ այդ գրքում» /Հարությունյան Լիլիթ/:

«Ես իրական գրականության «հերո՞ս»: Չգիտեի՝ երա՞զ է թե՞ իրականություն: Ես էի, իմ մտքերն էին, խոհերը, ապրումները՝ ամփոփված մայրենի լեզվին նվիրված շարադրության մեջ, որ տեղ էին գտել այդ գրքում: Ես անբացատրելի հուզմունք ապրեցի: Այո՛, ես արդեն իրական գրքի «հերոս» էի ՝ իմ ուսուցչուհու շնորհիվ: Իմ մտքերով ու հոգու թրթիռներով դարձել էի յուրօրինակ կերպար՝ իմ խոսքն ասելով, իմ երգը թողնելով, իմ նվիրվածությունն ապացուցելով: Ես արդեն կայի որպես անհատականություն, որ բացահայտվեցի ուսուցչուհուս խորաթափանց աչքերով: Բայց մինչ այդ մենք սովոր էինք, երբ գրքերում կարդում էինք գրական կերպարների կամ պատմական հերոսների մասին: Մեզ համար օրինակելի էր նրանց անցած ճանապարհը, նպատակները, խորհուրդները, որոնք զարգացրել էին մեր աշխարհայացքը, նոր որակ հաղորդել մեր դիրքորոշումներին, պատկերացումներին: Ես ուզում էի այդ գրքում ամփոփված մեր բոլոր աշակերտների մտքերը սիրով փոխանցվեին հետագա սերունդներին» /Հարությունյան Շուշան/:

«Ես անտարբեր չեմ եղել գրականության ու գրական հերոսների նկատմամբ և միշտ էլ ցանկացել եմ լինել գրքի հերոսուհի, բայց մտածում էի, որ այդպիսի անակնկալ ինձ կմատուցի միմիայն իմ երազների սիրո իդեալը, բայց դրա համար դեռ երկար պետք է սպասեի, գուցե և՛ անարդյունք: Իմ արդարամիտ ուսուցչուհու մատուցած մեծ ընծայով ես ապրեցի գրական հերոսուհու այն վայելքը, որը երկար տարիներ զգում էի իմ երազանքների հրաշափառ անկյունում: Գրքի մասին մեծ հուզմունքով պատմել էի նաև բոլոր ծանոթներիս ու բարեկամներիս՝ նրանց տեղեկացնելով, որ իմ մտքերն էլ զետեղված են այդ գրքի էջե-

րում: Օտար ափերում ապրող պապիկիս ու տատիկիս խոսքի հնչյունների մեջ նշմարել էի հուզմունքի, հպարտության և ուրախության նշույլներ. դա ինձ համար մեծ գնահատական էր» /Սինասյան Անուշ/:

«Ինձ համար արևի մի ջերմ շող, անծայր երկնքի մի մասնիկ և անհուն ծովի մի փոքրիկ կտոր էր այդ գիրքը, որի հրատարակությունը մեծ հաղթանակ էր նաև ինձ համար, քանզի աննկարագրելի էին իմ հույզերը, երբ իմացա, որ գրքի «գործող հերոսուհիներից» մեկն էլ ես եմ: Իմ մտքերը տեղ էին գտել այդ գրքում, իմ բանաստեղծությունը՝ նույնպես: Աննկարագրելի էր: Հուզմունքից խեղդվում էի, բայց միևնույն ժամանակ մեծ հպարտություն կար իմ մեջ: Փորձում էի հասկանալ և գնահատել իմ ուսուցչուհու կատարած մեծ ու քրտնաջան աշխատանքը, սակայն գիտակցում էի, որ խոսքերն ավելորդ են, պետք էր միայն գլուխ խոնարհել և անվերջ կրկնել՝ շնորհակալություն»/Հարությունյան Մարինե/:



Որքա՞ն լավ էի հասկանում իմ աշակերտների հորդաբուխ և հուզմունքառատ խոսքերի նշանակությունը, չէ՞ որ ես էլ նույն զգացումն ունեի նրանց նկատմամբ, ովքեր իրենց ազնիվ նվիրվածությամբ ձեռնամուխ էին եղել այդ գրքի հրատարակության գործին: Հպարտ էի զգում ինձ, որ մանկավարժի՝ իմ մասնագիտության այս բարդ ու պատասխանատու աշխատանքի պարգևատրությունն իմ աշակերտների գնահատականն է, նրանց հետ հոգևոր շփման ամենօրյա բերկրանքը, որ այդպես էլ շարունակական դարձավ: Դեռ այն օրերին էի փորձում արդարության, ազնվության, բարության հունդեր սերմանել նրանց պարզ հոգիներում, չնայած ես ինքս էլ վաղուց չէի հավատում այդ արդարությանը: Բայց եկավ այն, եկավ այդ արդարությունն ու բարձրաձայն ազդարարեց իր գոյության մասին, որ որտեղ տքնաջան աշխատանք կա, այնտեղ կա նաև ազնիվ գնահատանք:

http://www.usarmenianews.com/am-n-9345.html

2017-07-30

«ՆԵՂ ՕՐԵՐԻՑ ՄԵԿԸ»

Կյանքը մեզ ստիպեց օտարության մեջ արագ ճանաչել ռուսական այդ քաղաքի ճանապարհները, որ Արցախյան պատերազմի տարիների բռնագաղթից հետո մեր ընտանիքի անդամներին տարավ թաղամասից թաղամաս, փողոցից փողոց, տնից տուն...Վաղուց այդ քաղաքում ապրող հարազատ եղբայրների օգնող ձեռքերը մեզ ապավեն էին դարձել, բայց պետք է սովորեինք մեր ապրուստը հոգալու ձևը սեփական քրտինքով, որ դժվարանում էինք այդ ծանր օրերին: Տնից-տեղից զրկված էինք, դատարկաձեռն, մեր հագի շորն էր միայն, մեր վիատված սիրտն էր մեզ հետ, մեր հիշողությունը, այն «փախստականի» պիտակը, որ մեզ հետ էր միշտ:

Ես ու քույրս փակ շուկայում էինք աշխատում՝ իրարից ոչ մեծ հեռավորության վրա: Եղբորս՝ հարազատի ներկայությունը միշտ կար, որ սեղաններին շարված մանր-մունր ապրանքները վստահորեն վաճառեինք այդ օտար միջավայրում: Թևաթափ էի դառնում, կոտրված, երբ այդ հայաշատ քաղաքում ինձ մոտեցող գնորդը մեր կողմերից էր լինում: Ամաչու՞մ էի, թե՞ վերհիշում անցած կյանքս, որ պատվավոր էր, հարգված՝ տարիներ շարունակ շրջանի ուսուցիչների տան տնօրենի աշխատանքում:

Ինձ մոտեցողն այդ օրը սևահեր աղջիկ էր: Ռուսերենով նրա հարցումը հասկացրեց ինձ, որ նա մեր կողմերից չէ: Առատ գնումներ կատարեց. երկուսս էլ գոհ էինք: Նրա գնալուց ոոպեներ անց հայացքս ընկավ արկղում շարված գարեջրի շշերին: Գիտակցեցի, որ գումարը սխալ եմ հաշվել, այդ օրվա ինձ հասանելիք աշխատավարձի չափ վնաս ունեի: Կողքիս առևտուր անող ռուս վաճառողուհուն անմիջապես խնդրեցի նայել սեղանին, ես, ինձ կորցրած, անհաշիվ բազմության մեջ փնտրում էի այն սևահեր աղջկան: Չգիտեմ՝ քանի անգամ այդ փակ շուկայից դուրս եկա ու մտա ներս, բայց բազմաժխոր մարդկանց մեջ չգտա նրան:

Ինձ կորցրած էի, երբ գիտեի, որ օրվա ավարտին պետք է հաշվառվեր իմ առևտուրը, իսկ այն պակասորդ պիտի ունենար: Ձեռքիս եղած վերջին գումարն իմ պայուսակից հանեցի, անխոս դրեցի դրամարկղում: Ինձ մխիթարողն արցունքներս էին, որ առանց իմ կամքը հարցնելու հոսում էին, թաքուն սրբում էի, որ հանկարծ այն օտար հայացքները չնկատեն, բայց հոգուս մեջ մեծ կսկիծ կար, որ այդ օրը ես աշխատավարձ չունեի:

Անցան օրեր, գուցե ամիս...Իմ առջև կանգնածն այն սպիտակամորթ, բայց թխահեր աղջիկն է: Նորից՝ առատ գնումներ, բայց ինձ կորցրած եմ: Նա էլ զգաց, որ ինչ-որ բան այն չէ, երբ իր ցանկացած ապրանքի դիմաց մեկ ուրիշն էի իր առջև դնում: Հարցրեց ազգությունս, իմացա, որ ինքն էլ հրեուհի է... Մեր հավա՞տն էր մեզ մտերմացրել, թե նրա բարի հայացքը, որ բացատրում էի նրան այն օրվա՝ իրեն գտնելու իմ փնտրտուքների մասին: Նա անակնկալի եկավ, որ իր առատ գնումների մեջ չէր նկատել այդ գումարի ավելցուկը: Ես ժպտում եմ, փորձում բացատրել, որ անցած-գնացած դեպք է, որի մասին ընդամենը հիշեցի, իսկ նա իր գնումների համար վճարելուց հետո իրեն տրված մնացորդը չէր ուզում վերցնել: Իսկ այդ մնացորդը իմ կորցրածից մի քիչ շատ էր...Այն վերցնելու իմ պարտադրանքն ավելորդ էր:

Ես ուզում էի վերադարձնել այդ գումարը, բայց նրան կորցրի նորից բազմության մեջ, միայն օդում մնաց նրա ռուսերենով հնչեցրած խոսքը. «Վերցրե՛ք.... Հանուն Ձեր այդ օրվա քայքայված նյարդերի՝ վերցրե՛ք...»:

Այդ օրերին ես չգիտեի, որ տարիներ անց կվերադառնամ Արցախ, կապրեմ իմ հայրենի տանը, կաշխատեմ իմ մասնագիտությամբ, և դասարանից դասարան մտնող ուսուցչուհիս երբեմն դասերին կմիախառնեմ նաև իմ ապրած կյանքից այն «նեղ օրերից մեկը», որ, ցավոք, այդ օրով չսահմանափակվեց: Ու այդպես անցան օրեր, ամիսներ ու տարիներ, բայց այդ նեղ օրերը մեկընդմեջ ինձ հյուր եկան, դարձան շարունակական, բայց կոփեցին դրանք միտքս ու հոգիս, որ կարողանամ այս կյանքում ապրել:

http://www.usarmenianews.com/am-n-9356.html

2017-07-31

ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ ԽԱՂԱՂ ԼՈՒՍԱԲԱՑ Է ԱՎԵՏՈՒՄ

Ասնակից եմ իմ դասղեկական դասարանի՝ 2013-14 ուստարվա շրջանավարտ Անուշ Միրզոյանի նշանադրության արարողությանը: «Սպիտակ հարսանիք» հասկացությունն ինձ հետ՝ մտել էի հանդիսությունների սրահ, մտածելով, որ նման տոնական միջոցառումների վերջում հարսանիք է լինում, իսկ դրա հիմնական բաղադրիչը սպիտակ հարսանեկան զգեստն է, որը հատուկ էր խորհրդային ժամանակներին: Ու մինչ ես այդ տպավորությամբ փնտրում էի հայացքով փեսային ու հարսին, ում պատկերացնում էի ճերմակի մեջ, հանկարծ կողքիս տեսնում եմ նրանց՝ Արմանին ու Անուշին՝ մեկ այլ շքեղությամբ: Ճառագում էր նրանց դեմքերին երջանկություն ավետող յուրահատուկ ժպիտների բազմազանություն. պահը հավերժանում է, իմ շնորհավորական խոսքերը միախառնվում են այդ ժպիտներին:

Գիտենք, որ մարդու կյանքում ամենաուրախ և կարևոր իրադարձություններից մեկն է նշանադրությունը, որ նախորդում է հարսանքին, և այն հայերը մեծամասամբ սիրում են նշել յուրահատուկ ճոխությամբ և շուքով: Յուրաքանչյուրի կյանքում դա եզակի տոն է, և ամեն մեկը սրտի տրոփյունով է սպասում այդ իրադարձությանը: Այն միշտ էլ վառ ու գույնզգույն տոն է՝ լի երգ ու պարով և պերճախոս կենացներով, որի ականատեսն ենք նշանադրության հրավիրվածներս: Նաև նկատելի է, որ ժամանակակից զույգերը հիմա իրենք են նախընտրում՝ ինչպես նշել իրենց կյանքի ամենակարևոր օրը, խորհրդային տարիների հայկական ավանդական այդ տոնը կարծես իր տեղը զիջել է նոր տոնակատարության, որ ավելի ճոխ է ու շքեղ, չնայած ավանդական ծեսերի որոշակի տարրեր դեռ պահպանվում են:

Փոխվել են ժամանակները... Հարսանքի ժամանակ նորապսակների ուսերին առաջներում լավաշ էին գցում, մեղր հյուրասիրում, իսկ նոր

օրերում դրանք սեղանին են դրվում, նաև նրանց գլխին ցորեն, քաղցրավենիք էին շաղ տալիս ու ափսե կոտրում: Միշտ էլ նման միջոցառումներում կարևորագույն մաս են կազմում հարսի և փեսայի, նրանց հարազատների, բոլոր հրավիրվածների երջանկության և բարեկեցության համար կենացները: Առաջներում նշանդրեքից հետո հարսանիք էր լինում, հարսանքից հետո կատարվող կարևորագույն հանդիսությունը հարսի ծնողների կողմից տրվող օժիտի արարողությունն էր: Հնում այդ ամենը կատարվում էր հրապարակային, իսկ օժիտը բաղկացած էր անկողնուց, զգեստների մեծ հավաքածուից, ինչպես նաև կենցաղային այլ իրերից ու կահույքից: Այժմ այս ամենը փոխարինվել է տան կամ մեքենայի բանալիներով, երբեմն էլ մեղրամիսը որևէ երկրում անցկացնելու համար տրվող համապատասխան տոմսերով:

Ինչքան էլ ուրախ լինի այդ արարողությունն իր բնույթով, միշտ էլ առաջին իսկ կենացներում խոնարհում կա ազգի նահատակների հիշատակին, թախծախառն ու խրոխտ երգեր՝ նվիրված Արցախյան պատերազմի և հետագա տարիների զոհերին: Հոտնկայս մեկ րոպե լռությունն ամենուր մեզ հետ է, նաև՝ երախտիքի արտահայտություն բոլոր նրանց հանդեպ, ում շնորհիվ վայելում ենք այս խաղաղ օրերը:

Որքան էլ հին ավանդույթներն իրենց տեղը զիջած լինեն նորին, նշանադրություն լինի թե հարսանիք, այն նոր ընտանիքի կազմավորման առիթով կատարվող տոնախմբություն է, հայկական կենցաղի ամենաճոխ դրսևորումներից մեկը, որ միշտ համարվել է մարդու կյանքում տեղի ունեցող ամենաուշագրավ իրադարձությունը և դարձել ծնողների անպարփակ ուրախության ու բացառիկ պատասխանատվության հրապարակային դրսևորման առիթ:

Շնորհավորանքներս ծիածանվում են, երբ գիտեմ՝ օրեր անց Արցախում շուտով նոր ընտանիք է ձևավորվելու, որ պիտի ավետի նոր կյանք և խաղաղ լուսաբացների նոր երջանկություն:

http://www.usarmenianews.com/am-n-9366.html

2017-08-02

ԱՆՑՅԱԼՈՒՄ ՄՆԱՑԱԾ ԾԱՄՈՆԻ ՏՈՒՓԸ

Օրերից մի օր դպրոցի դահլիճում կազմակերպված հերթական միջոցառման ժամանակ բեմահարթակ բարձրացա, աշխատանքային դաստիարակության մասին իմ խոսքում երևացի ես՝ ինձ ուշադիր ունկնդրող աշակերտներին դասավանդող ուսուցչուհիս, որ պատմում էի այն օտար քաղաքում իմ ապրած օրերից՝ հաստատելով այն միտքը, որ պետք է դիմակայել ամեն դժվարության:

Արցախյան պատերազմի տարիներին ընտանիքով հաստատվել էինք հեռավոր ափերում: Պատահեց այնպես, որ անգործության մատնվեցի մեծ քաղաքում: Ամեն օրվա իմ փնտրտուքները՝ աշխատանք գտնելու համար, իզուր էին: Շրջում էի տեղից տեղ, երբեմն հարցումներ անում, երբեմն ամաչում էի նույնիսկ հարցնել, մեծ քաղաքի շքեղության մեջ հոգիս դատարկ էր, մտածումներս՝ բազմազան ու խայտաբղետ: Հանրային փոխադրամիջոցը, որ այդ օրը նստեցի, ինձ էլ մյուս ուղևորների հետ տարավ դեպի այն մյուս քաղաքը, որ այս քաղաքից բաժանվում էր գետով: Աշխատանք փնտրելու հույսերս սպառված էին, բայց մոտակա այն խոշոր գետը, որի մասին գիտեի դեռ դպրոցական տարիների աշխարհագրության դասերից, ինձ քաշում էր դեպի իրեն:

Ես գետափին էի, այն ինձ ծով էր թվում, հայացքս հառած էի կապույտ հեռուներին, որտեղ իմ խորտակված երազանքներն էին թևածում: Արցունքներիս արտացոլանքում այն կապույտ հեռուներն էլ մշուշապատվեցին, սառը ջուրը քսվում էր ոտքերիս, որ պիտի ինձ տաներ մեկ ուրիշ հեռավոր աշխարհ: Հանկարծակի տեղացող անձրևից, որ թրջեց ինձ, ուշքի եկա...Փոքրիկ դուստրս... տանը սպասում են ինձ նաև մյուս հարազատներս...Ես համարյա վազում էի, բայց հեռանում էի, որ փրկեմ ինձ գետի հորձանուտ ալիքների՞ց, թե՞ փախչում էի, որ չթրջվեմ հորդառատ անձրևից...

Մտա մոտակա խանութը, տարատեսակ մթերքների շքեղություն կար այնտեղ, բայց հիշեցի օրեր առաջ բաց շուկայի մի անկյունում առևտուր անող այն կնոջը, որ մեր կողմերից էր բռնագաղթված, ու իր առջև՝ արկղին շարված ծխախոտն էր վաճառում: Նրան ասել էի, որ անգործ եմ, իսկ նա ինձ ուղղորդեց շատ հանգիստ. «Վերցրու՛ ինչ-որ ապրանք ու մի ուրիշ տեղ վաճառի՛ր մի քիչ բարձր գնով...»: Ես այդ օրը հակադարձեցի նրան, որ դա ինձ համար չէ, բայց ահա այդ խանութում հայացքս հառել էի դարակներին շարված ծամոնների հավաքածուին:

Մտովի ամենաէժանն ընտրեցի, բայց ձեռքի գումարս շատ քիչ էր, մի տուփի մեջ 240 ծամոնի շերտ կար, հատը՝ ռուսական գումարով 25 կոպեկ, ուրեմն կարելի է 30 կոպեկով վաճառել: Արդեն ընտրված էր այն, ինչ կարող էի վաճառել, մնում էր գումար գտնել: Ժամեր հետո ես տանն էի, բայց չէի համարձակվում գումարի մասին խոսել: Մայրս խախտեց լռությունը, որ թոշակ է ստացել, ու ես խնդրում եմ նրան այդ գումարը ինձ տալ, որ մեր մի քանի օրվա ապրուստն էր:

Հաջորդ օրը երկու ժամվա ճանապարհն աննկատելի անցավ, երբ հասա այն խանութը: Ծամոնի տուփը ձեռքիս՝ տեղից տեղ եմ գնում, կանգառից կանգառ, շուկայից շուկա... Այդ օրն իզուր անցավ, ես չկարողացա այդ տուփն ամբողջությամբ որևէ մեկին հանձնել: Հաջորդ օրը կրկնվեց նույնը, առավոտից երեկո շրջեցի, ոչ մեկը չցանկացավ գնել: Միայն երրորդ օրը, արդեն ուժասպառ ու հոգնած, մտա մի շուկա: Ծամոններ վաճառող ռուս կինը ձեռքիցս տուփը վերցրեց, նայեց ուշադիր ու հանկարծ հնչեց նրա խոսքը. «Երեք տուփ կվերցնեմ»: Բայց որտեղի՞ց երեք տուփը, այն միակն էր, որ հանձնեցի ու վերցրի գումարը: Ժամեր անց ես նորից այն խանութում եմ, նորից գնում եմ մի տուփ, ու իմ ձեռքին ավելցուկ կար, դա իմ աշխատած գումարն էր, որով կարելի էր մի երկու օր ապրել: Այն վաճառող կինը երկրորդ տուփը չվերցրեց, փոշմանել էր, ու ես նորից օրեր շարունակ այդ տուփը ձեռքիս շրջում էի շուկայից շուկա, որ կարողանամ վաճառել:

Անցան ամիսներ, տարի ու նորից տարի, մորս տված այն ծերության թոշակը, որ թալիսման էր դարձել, վաղուց վերադարձրել էի հարազատիս, որ սրբորեն պահի, իսկ իմ վաճառվելիք ապրանքների տեսականին կամաց-կամաց ավելացավ, արդեն ծանր պայուսակներ էին կողքիս: Հայրս, քույրս նույնպես նման աշխատանքի էին կցված: Ձեռքներիս գումարներն ավելացան, մենք գնում էինք արդեն քաղաքից քաղաք, նոր գնումներ էինք կատարում, նոր գներով վաճառում: Բայց մի օր էլ, դա 95-ին էր, լսեցի, որ Մարտակերտում ապրողներ կան, ասացին, որ կանգուն է մեր բնակելի հնգհարկանի շենքը, բայց ուրիշ է ապրում իմ բնակարանում:

Վերադարձա, կարոտաբաղձ հոգով վերադարձա իմ հայրենիք, եկա ու ինձ հետ բերեցի նաև դստերս: Հարազատներիցս բաժանվելը դժվար էր, ոչ մեկը չէր համակերպվում իմ մտադրությանը, միայն փոքր եղբայրս ողջունեց իմ նախաձեռնությունը՝ համոզված, որ այստեղ ես կգտնեմ ինձ, կգտնեմ այն կյանքը, որով ցանկալի է, որ ապրեմ, կաշխատեմ իմ մասնագիտությամբ, որ սիրել եմ միշտ: Եկանք ու սկսեցինք ապրել այս ճաք տված հողում ու առայսօր ապրում ենք, որ այսքան հարազատ է մեզ ու նահատակների արյամբ էլ ներկված:

http://www.usarmenianews.com/am-n-9385.html

2017-08-03

Ե՞ՐԲ ԵՄ ՁԵՌՔՍ ԱՌՆԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՍ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐԸ

Շնորհակալական զգացումով ընթերցում եմ այս ոսկեծամ, սիրունիկ ու փոքրիկ արցախուհու խոսքերը և պարտավորվածություն զգում, որ պետք է հաղթահարեմ գիրք հրատարակելու մեր օրերի դժվարությունները և իրականացնեմ շատերիս ցանկությունը:

«Չնայած ես այնքան էլ մեծ չեմ, բայց վաղ տարիքից եմ սկսել զբաղվել ընթերցանությամբ: Ինձ գրքի կախարդական աշխարհն առաջնորդել են հեքիաթների ժողովածուները, որոնք ինձ սովորեցրել են ատել չարը, պայքարել բարու համար, լինել ազնիվ ու համարձակ: Մեծանալուս զուգընթաց՝ սկսեցի ընթերցել ավելի «լուրջ» ստեղծագործություններ և հասկացա, որ գիրքը ոչ միայն ճանաչողական արժեք ունի, այլև այն գեղագիտական հաճույք է պատճառում ընթերցողին, զարգացնում լեզվամտածողությունը, ձևավորում աշխարհայացքը, սովորեցնում ապրել, այո՛, ապրել՝ քայլելով միայն ու միայն ճիշտ ու շիտակ ճանապարհով:

Իմ ուսումնառության տարիներին հասկացա նաև, որ հայ ժողովուրդը հանճարեղ գրողներ շատ է տվել: Դրան նպաստել է և՛ իր պատկերավոր լեզվամտածողությունը, և՛ իր հավաքական հանճարը: Այսօր աշխարհին հայտնի մեծանուններին պետք է փոխարինեն նորերը՝ հասարակությանը մատուցելով նոր գրքեր: Ինձ համար ցանկացած նոր գրքի ծնունդ ողջունելի է, այն ես համեմատում եմ նոր ծնված մանկան հետ: Չէ՞ որ երկուսի ծննդով էլ լույս է սփռվում շրջապատում:

Թե երբ իմ ձեռքը կառնեմ ուսուցչուհուս նոր հրատարակվելիք գրքերը, չգիտեմ, բայց համոզված եմ, որ անսահման հպարտություն ու երջանկություն կապրեմ: Ես ինքս էլ երջանիկ եմ, որ նման ուսուցչուհու սան եմ, ով մեծ առաքելություն ու նույնքան մեծ գործ է կատարում: Նրան է վստահված հայոց տան սյուները ամուր, օջախը անմար պահելու գործը, ինչն իմ թանկագին ուսուցչուհին հաճույքով ու մեծ նվիրումով է կատարում: Երջանիկ եմ, որ մեր պատմական Արցախում, չնայած գիրք հրատարակելու համար միջոցներ չկան, բայց մեր ուուցչու-

հին իր առջև դրած նպատակն իրագործում է՝ ցանկացած դժվարություններ հաղթահարելով:

Սիրելի՛ տիկին Պողոսյան, Ձեր աչքերին նայող մաքրամաքուր սաներիդ աչքերի առջև Դուք ազնվության, շիտակության, անմնացորդ նվիրումի կերպար եք: Մենք՝ Ձեր սաները, հպարտանալու, երջանիկ զգալու առիթ ունենք: Թող դպրոց տանող ճանապարհդ լինի հայերեն ոգու առավոտներով բացվող ճանապարհ: Ձեզնով, Ձեր աճեցրած սաներով է Արցախը մնալու Արցախ»:

Հուզվում եմ, առավել շատ վերջին տողերից, որ 8-րդ դասարան փոխադրված իմ աշակերտուհին՝ Մերի Հովհաննիսյանն է գրել իր ուսուցչուհուն, ում համար դարձել եմ ազնվության ու նվիրումի կերպար, բայց նաև տեղեկացնեմ, որ այս օրերին ընթացքի մեջ է իմ գրքերից մեկի հրատարակությունը:

http://www.usarmenianews.com/am-n-9393.html

2017-08-04

ԲԱՐՁՐ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՍՄՈՒՆՔԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՑ

Արցախի պատմական Շուշի քաղաքում կայացած ասմունքի համահայկական 6-րդ փառատոնին մասնակցած Անի Սկրտչյանն իր մայրիկի հետ այցելեց ինձ: 8-րդ դասարան փոխադրված իմ աշակերտուհին կիսվում է արձակուրդում գտնվող իր ուսուցչուհու հետ՝ ստացած տպավորություններով, որ շատ բարձր էր, ոգևորիչ: Տարիքային երկու խմբում նա փոքրերի մեջ էր, ով ասմունքելու համար նախատեսված բանաստեղծություններով պիտի հնչեցներ պատերազմ տեսած աշակերտուհու հուզումնալից խոսքը, բայց նաև փոքրիկ հայուհու իր տեսակով պիտի ազդարարեր, որ փառատոնի խորագիրը՝ «Մենք հպարտ ենք մեր լեռների պես», իմաստություն ունի իր մեջ, որ դարեր շարունակ ամուր է պահել մեր ոգին ու տանում է մեզ դեպի նոր գալիք:

Երեք ստեղծագործությունների ընտրությունը պատահական չէր՝ Պ.Սևակի «Ընկածները», Ս. Կապուտիկյանի «Պատերազմը» և Մ.Մարգարյանի «Այնքան լեռներ կան կուտակված»: Նա հնարավորություն ստացավ ասմունքելու առաջին բանաստեղծությունը, որ օրեր առաջ դպրոցում արտասանելիս ներկա գտնվող զոհվածի այրին հուզված արտասվել էր ու չէր կարողացել մինչև վերջ լսել: Մեծագույն վիշտ կար այդտեղ, անցյալի հիշողություն, նահատակների հիշատակ, մարած կյանքեր...

Կռիվներում ընկան նրանք.
Ամեն մեկը՝ մի տան ճրագ,
Ամեն մեկը՝ մի մոր որդի,
Ամեն մեկը՝ մի աղջկա
Երազանքը անապական,
Կնոջ՝ սերը, հոր՝ ապագան…
Ամեն մեկը՝ անգիր մի վեպ,
Ամեն մեկը՝ անգին մի կյանք…

Նրանք ընկան կռիվներում,
Բայց ապրում է հոգին նրանց
Ապրողների հոգիներում.
Չի մեղմացել ցավը կրած,
Ատելությունը փրփրած
Եվ հաղթության տենչը խորին՝
Ի գիտություն այն բոլորի,
Որ նայում են շիրմին նրանց
Միայն իբրև մի բլուրի,
Որ հարթվում է կամա՜ց-կամա՜ց:
Անմիտի պես մոռանալով,
Որ եթե չար թշնամու դեմ
Ապրողները իրենց ուժով
Ու զենքով են անպարտելի,
Ընկածները իրենց հուշով,
Վրեժով են սարսափելի…

Նա պատմում է, որ մասնակցում էին այդտեղ Արցախի տարբեր շրջաններից, Հայաստանից, Ջավախքից, Սփյուռքից...Եռօրյա այդ հանդիպումը մի նոր էջ բացեց նրա կյանքում, որ պիտի առանձնանար արձակուրդային իր հանգստյան օրերից: Մասնակիցները շրջել են Արցախի տեսարժան վայրերում, եղել Գանձասարում, Տիգրանակերտում, Ամարասում, այցելել են Շուշիի մատենադարան, Սուրբ Ղազանչեցոց եկեղեցի, եղել են Ստեփանակերտում:

«Մասնակցել եմ մի փառատոնի, որտեղ չեմ կարևորում այնքան հաղթանակը, որքան ստեղծված մթնոլորտը, նոր ընկերական միջավայրը, շփումն իմ հասակակիցների հետ... Միջավայրը շատ գեղեցիկ էր, դուրեկան, անչափ տպավորված եմ, հանձնաժողովի անդամներն էլ մեզ հետ շատ բարեհամբույր էին: Երրորդ օրը, երբ իմացա, որ հաջորդ փուլ չեմ անցել, մի քիչ անտրամադիր էի, բայց հասկացա, որ պիտի նաև մի քիչ դերասանական շնորհ ունենալ, բեմական արվեստին տիրապետել, սակայն մխիթարում է ինձ այն փաստը, որ երբ ասմունքել էի, բազմաթիվ ծափահարող-

ներ կային: Նաև հպարտության զգացում ունեմ, որ դպրոցում ինձ ընտրեցին՝ մասնակցելու այդ փառատոնին, որով շնորհակալություն եմ հայտնում իմ ուսուցչուհուն, նաև շնորհակալ եմ այդ միջոցառման բոլոր կազմակերպիչներին: Այդ փառատոնը ուսանելի էր, բարձր տրամադրություն ստեղծող, հիշողություններով հարուստ...Ես այն վայելեցի մեծագույն սիրով»:

Նրա անկեղծ զրույցում Շուշիի մշակույթի և երիտասարդության կենտրոնում տեղի ունեցած տոնական միջոցառումն էր, որտեղ ամփոփվեցին մրցույթի արդյունքները: Դեմքին հայտնված ժպիտը համեստորեն տեսանելի է դարձնում իմ աշակերտուհուն՝ իր ստացած հավաստագրով՝ որպես ասմունքի համահայկական 6-րդ փառատոնի ակտիվ մասնակից:

http://www.usarmenianews.com/am-n-9403.html

2017-08-07

ՀՐԱՏԱՐԱԿՎԵՑ ԻՄ ԳԻՐՔԸ՝ ԱՐՑԱԿԱԳԻՐ ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆԻ ՁԱՎԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վերջապես հրատարակվեց իմ գիրքը՝ մեր հայրենակից գրող Լևոն Ադյանի գեղարվեստական արձակի վերլուծությունների ընդգրկմամբ՝ նվիրված կյանքից անժամանակ հեռացած նրա երկու որդիների՝ Միհերի և Զորայրի հիշատակին:



Այն կոչվեց «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին», որը հրատարակվեց ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության երաշխավորությամբ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Ղարախանյանի խմբագրական միջամտությամբ, բանաստեղծուհի Նելլի /Ավակովա/ Գրիգորյանի ֆինանսական օժանդակությամբ:

Գիրքը հրատարակվեց Արցախի բանաստեղծուհի, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ժաննա Բեգլարյանի՝ նախաբանի գնահատողական խոսքերով: Իմ մեծագույն երախտագիտությունը բոլոր նրանց, ովքեր մեծ դեր ունեցան այս գրքի հրատարակության գործում: Այս օրերին ընթացքի մեջ է նաև իմ մյուս՝ «Մանկավարժի օրագիր» գրքի առաջին մասի հրատարակությունը:

Այս գիրքը եկավ ազդարարելու, թե ինչպես աշակերտներին տանել դեպի ընթերցանություն, այն եկավ սովորեցնելու, թե ինչպես ծրագրից դուրս գրողներին ուսումնասիրել դպրոցում՝ դարձնելով նրանց ստեղծագործությունները աշակերտության համար դյուրընկալելի ու հետաքրքիր: Սա գիրք է, որտեղ աշակերտների մասնակցությամբ լուսաբանվում է Ադյանի գեղարվեստական արձակը...

Բայց ի՞նչն առիթ հանդիսացավ, որ սկսեցի գրել գրողի որոշ գրական գործերի վերլուծություններ: Արձակագրի մասին գիտեի դեռ իմ դպրոցական տարիներից, վաղուց կարդացել էի նրա ստեղծագործություններից, բայց ֆեյսբուքյան տարածքում գրողի հետ ընկերությունը նորից իմ առջև բացեց նրա ստեղծագործությունների բովանդակությունը, և շուտով սկսեցի վերընթերցել տարբեր ժանրերի ստեղծագործություններ: Դա իմ կողմից մի նոր հայացք էր գրողի ստեղծած պատկե-

րավորման արվեստի նրբությունների շուրջը, որ ուշադրությանս արժանացան հայրենի բնության նկարագրություններում ու այդ բնաշխարհում ապրող մարդկանց խոսքում, որ գրողի վարպետ գրչով շնչավորվել էին:

Գեղարվեստական ստեղծած պատկերները, արտահայտչական տարբեր միջոցների գործածությունը փայլատակում էին նրա արձակում, գունային խաղ կար այնտեղ, մարդկային հարաբերություններ, որ գալիս էին ազդարարելու այն մաքուր ու անաղարտ աշխարհի մասին, որտեղ ծնվել ու իր պատանեկան տարիներն էր անցկացրել հայրենասեր գրողը: Այդ արձակում նա երևաց նաև որպես տարագիր, որ փրկվել էր անցած դարավերջի՝ Բաքվում հայերի նկատմամբ տեղի ունեցած սարսափելի ոճրագործությունից:


ԵՂԵՐԳ

Ես աղերսում էի Աստծուն՝ Տեր իմ,պահապան եղիր իմ զավակներին,և թախանձում ու պաղատանքն էի հոգում իմ երան:
Ամայիր, Տեր իմ, մրմնջում էի, բանգի կենսարար արև են երանք մեր գյուղերն,և առանց նրանց լուսերես տեսքի ու մեղուշ ձայնի փուչ է մեզ համար աշխարհը արար:
Երկինքը մթնում. գիշեր էր գալիս. աչքերս չէին գոցվում մինչև լույս,արցունքի շողն էր լճանում այնտեղ, և վաղնջական օրերը նորեն ետ էին գալիս, ու գեղեցկատեսք իմ որդիները՝միշտ գորովագութ, անապակ հոգով,ուրիշի ցավին հավետ համակիր,մեր կողքին էին,և արեգակը ժպտում էր վերից երջանիկ նյաբի զուսեղ ժպիտով:
Եվ այդ տեսիլից թալկացած հոգով, վեստ ու ենուն՝ ձեռքերս պարզած աղաչում էի հետու Աստծուն՝ ողորմիր,Տեր իմ,մի լրիր երանց ու մի կործանիր,բանգի կորած ենք առանց իրարու:
...Սակայն չանսաց նա պաղատանքին իմ, եղավ անողորմ, բարսիրտ ու ոժնի,և ես հակացա՝սուտ է ամեն բան ու մարեց իմ մեջ հավատն աս Աստված:
ԷԵՎՈՆ ԱՂՅԱՆ

Նրա գեղարվեստական արձակի պատկերային համակարգը հիացրեց ինձ, բայց նաև անսպասելի էր, երբ իմացա, որ գրողն անձնական վիշտ ունի, ու երկու որդիների կորուստը հոգում՝ նա շարունակում է օտար ափերում արարել, ու նրա ստեղծագործությունների արտացոլանքում վշտահար հայր կա:

Գրողին ամոքելու հարմար միջո՞ց էր, որ ցանկացա գեղարվեստորեն վերլուծել նրա ստեղծագործություններից, թե՞ իմ առաջին փորձն էր դա, որով ցանկացա ուսուցչուհուս տեսնել, թե որքանով կկարողանա արդարացնել իրեն այդ ասպարեզում...Երևի թե երկուսն էլ մեկտեղվել էին, բայց նաև անհագուրդ ցանկություն կար՝ վեր հանել այդ ստեղծագործությունների գեղարվեստական արվեստը, ու այն կդառնար գնահատանքի խոսք՝ ուղղված գրողին:

Եվ շուտով իմ առաջին փորձն իրականացնում եմ «Իրիկնային աղջամուղջ» վիպակի գեղարվեստական վերլուծությամբ՝ իմանալով հանդերձ, որ դա Աղյանի ամենասիրված ստեղծագործությունն է: Թե որքանով կկարողանայի արդարացնել ինձ, դեռ չգիտեի, բայց գրողի կարծիքը բարձր էր ու նաև անակնկալ ինձ համար, և այն ոգևորեց ինձ այն-

քանով, որ սկսեցի նաև այլ ստեղծագործությունների վերլուծականներ գրել՝ միշտ հավատարիմ մնալով ուսուցչուհու իմ մասնագիտությանը: Դրան նպաստեց նաև ֆեյսբուքյան սոցկայքի իմ ընկերական միջավայրի բարձր գնահատանքը, արցախյան մամուլի տարբեր հրապարակումներ ամերիկյան հայկական USArmenianews.com լրատվական կայքում այդ վերլուծականները տեղադրելու հանգամանքը և իմ աշակերտների՝ Ադյանի գրքերի հանդեպ հետաքրքրասիրությունն ու գրողի մասին իրենց տան մեծերի հիշողությունները, որ հուշեցին ինձ՝ հավաքել այդ նյութերն ու դարձնել գիրք:

Ես այն նվիրեցի Սիերի և Զորայրի հիշատակին՝ ի սփոփանք որդեկորույս ծնողների՝ Լևոն և Էլմիրա Ադյանների: Այդ գրքի ծնունդն սկսվեց այն օրը, երբ տեղեկացա գրողի դառնակսկիծ վշտի մասին ու գրականագիտությունից հեռու լինելով հանդերձ՝ հանձն առա համարձակորեն գրել ուսուցչուհուս կարծիքը գրողի ստեղծած գեղարվեստական արձակի մասին... Եվ այն այս օրերին դրվեց ընթերցողի սեղանին, որ նվիրենք մեր մտերիմներին, աշակերտներին, ծնողներին, ուսուցիչներին, բոլոր նրանց, ում համար հետաքրքրիր կլինի այդ գրքի ընթերցանությունը:

http://www.usarmenianews.com/am-n-9423.html

2017-08-10

ԱՐՑԱԽԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՍ ՓԱՐԻԶԻՑ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԱՇԱՐՈՒՄ

Բազմիցս ֆեյսբուքյան փարածական աշխարհում առնչվել եմ ֆրանսաբնակ հայուհու՝ Նվարդ Մնացականյանի հետ, ով իր գործունեությամբ միշտ էլ հիացմունքի է արժանացել ու գնահատողական խոսքերի: Վերջերս որքան զարմանալի, նույնքան երախտագիտության էր արժանի նրա առաջարկը, որ Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիս ներկայացնի իր կենսագրությունն ու սահմանամերձ բնակավայրում ապրողի ներքին մտորումները, որ հայերենով կհեռարձակվի Փարիզից ռադիոյով: Հարմար գտա USArmenianews.com լրատվականով հայտնելու մեծագույն շնորհակալությունս այս հաղորդաշարի հեղինակ ու վարող հայրենասեր հայուհուն, ով հեռուներում իր ազգանվեր գործունեությամբ ամեն անգամ մի նոր էջ է ավելացնում մեր կենսագրությանը:

http://radio-aypfm.com/?page=archives&id=11878

Բարև ձեզ, հարգելի՛ ռադիոլսող ունկնդիրներ, այսօր «Պոեզիայի պատառիկներ» հաղորդաշարով սիրով ձեզ ենք ներկայացնում Նատաշա Պողոսյանին:

Նատաշա Միքայելի Պողոսյանը ծնվել է 1958 թ. դեկտեմբերի 3-ին, Մարտակերտ քաղաքում: Ավարտել է շրջկենտրոնի համար 1 միջնակարգ դպրոցը, 1978թ. ընդունվել և 1982թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը:

1982-1985թ.թ. աշխատել է Մարտակերտի շրջանային պիոներական տանը՝ որպես գեղմասվար: 1985-1986 ուստարում աշխատել է շրջկենտրոնի գիշերօթիկ միջնակարգ դպրոցում՝ որպես դաստիարակչուհի: 1986-1992թ.թ. աշխատել է Մարտակերտի շրջանային լուսավո-

ղության աշխատողների տանը՝ որպես տնօրեն, համատեղության կարգով հայոց լեզու և գրականություն է դասավանդել հեռակա գիշերային միջնակարգ դպրոցում:

1992 թվականի Արցախյան պատերազմի տարիների բռնագաղթից հետո ապրել է Ռուսաստանի Դաշնությունում: 1995 թվականին հայրենի հողի կանչով վերադարձել է Արցախ և 1996-ին աշխատանքի անցել Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

2011թ. պարգևատրվել է ԼՂՀ վարչապետի հուշամեդալով՝ մատուցած ծառայությունների և մանկավարժության մեջ ներդրած ավանդի համար: 2013թ. մասնակցել է «Տարվա լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթին ու պարգևատրվել ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ «Լավագույն ավանդույթների պահպանումը և նորարարությունը մանկավարժության մեջ» անվանակարգում հաղթելու համար:

2013թ. ԼՂՀ ԿԳ նախարարության երաշխավորությամբ և ֆինանսական օժանդակությամբ հրատարակվել է նրա գիրքը՝ «Ուսուցչի իմ թղթապանակը» մեթոդական ձեռնարկը: 2014թ. նրան շնորհվել է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման առաջին աստիճանի տարակարգ: 2014թ. ստացել է վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում: Այս օրերին հրատարակման ընթացքի մեջ են նրա մանկավարժական ուղղվածությամբ երկու գրքերը: Որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ այժմ էլ շարունակվում է նրա մանկավարժական գործունեությունը: Ունի մեկ դուստր և մեկ թոռնիկ:

Աշխարհը լռում է

Իմ ժողովրդի, առավելապես սերնդի ճակատագրի համար մտահոգ եմ շատ, երբ ապրում եմ Արցախում, սահմանամերձ Մարտակերտ քաղաքում դասավանդում նոր սերնդին:

Այստեղ մտորումներս անխոս են դառնում, երբեմն՝ անձայն, երբ կողքիս օրոցքի կարոտ հայոց երկրիս զավակներն են զոհվում, մեր արշալույսները ներկում արյամբ... Երեխաներ են որբանում..., երազանքներ են թևատվում այստեղ, մահվան դեմ մարդու անզորությունն է թևածում ու սահմանի մոտ ոգեղեն է դառնում անմահանալուն դիմադարձ լինելու անխուսափելիությունը...

Բայց աշխարհը լռում է... Լռում է, երբ հայերս մեր ողջ պատմության ընթացքում հավատացել ենք միայն Աստծո պատգամներով աշ-

խարիը վերափոխելու, մարդու հոգին ազնվացնելու գաղափարներին ու այդպես էլ շարունակում ենք հավատալ գալիք լավ օրերի՝ մեր բոլորիս երազանքների իրականացմանը: Աշխարհը լռում է, երբ անմահների անցած ճանապարհի մասին հիշողություն կա այստեղ, երբ սգավոր մի մեղեդի ժողովրդիս անցյալի հուշերն ամեն օր թարմացնում է՝ հոգու մի խոր կսկիծով ներկայում իմաստավորելով հավերժացած կյանքեր: Լռում է աշխարհը, երբ մեր հայրենին դարձել է հավերժորեն բաց մի ընծայարան, ուր ամեն ոք անցնում է ընծայաբերման իր ճամփան և արժանանում երկնային անդաստաններին:

Բայց մենք ամեն օր ավելի ամուր ենք կառչում այս հողին, երբ զգում ենք մեր հոգում օր օրի սաստկացող այս հողի քաղցրությունը, երբ տեսնում ենք այս հողին նվիրված կենդանի լեգենդներին ու նրանց անցած մարտական ուղին և գիտենք, որ հավերժական մի արև կա մեր կողքին, որ միշտ մեզ հետ է, և ուզում ենք այն ճառագի միշտ, պատերազմները հետ մղի անդարձ, ու խաղաղ կյանքով լույս մանուկների կարկաչուն ձայնը ամենուր հնչի:

Հավերժական մի արև՝ արցախական աշխարհում

Ամեն անգամ անհասցե դարձած սրտիս զարկերն են հորդում լույս-երազներով...Երկրիս արևը՝ այն հավերժական, միշտ էլ ինձ հետ է, այն շատ ցավալի օրերին անգամ, պատեպատ զարկվում, մայրամուտի մեջ էր ապավեն փնտրում: Լուսե օրերի երազանքներում հոգուս մեջ էլ արևն է շողում, «արեգակն արդար» ու մի պահ ասես անձրևից հետո երկնքում հայտնված ծիածանի պես երփներանգվում է ու կամար կապում:

Սահմանից եկող կրակոցները մեզ հետ են միշտ, այն մահաբեր արկերի թնդուն ձայները... Ու երբ ուզում եմ վանել մեզանից, գրկում եմ հույսով երկրիս արևը, այն հավերժական արևն արցախական աշխարհի, որ լույս է ինքնին, մի նոր սիրո կյանք, մի նոր ջերմություն՝ հավերժին հառած իր իսկ գոյությամբ: Հրետակոծության օրերին անգամ հառաչանքներով, սրտի զարկերով արևի երգն եմ լսում շատ կամաց, հույզով շաղախված... Օդն էլ համեմված նրա տաք շնչով, անեղեր, համառ իր գովքն է անում:

Արցախական արևը... Անցած օրերում տագնապ կա, սարսափ, կորուստ դառնագին, հետքեր կան տխուր, ու ես մեղմորեն փրկության հույսով նայում եմ նրան, որ փարվում է ինձ լուսե շողերով: Հավերժող երկրիս արևն եմ սիրում, մեր արևածագը՝ այն ցողաթաթախ, նր-

բին ժպիտով, որ ծեքծեքում է մանրիկ ծիծաղով: Արևով բացվող բոլոր օրերս, որ կյանք են դառնում, հուշերի թևով բացվում են իմ դեմ, ու օրհնության պես լուսավառ սիրով ժպտում եմ նրան: Երբ լուսե ճերմակ ամպերը նորից ուզում են նրան քողարկել հանկարծ, հոգիս ջերմագին գգվում է նրան: Մշտանորոգուն այս կյանքում ես էլ հոգու խորությամբ փայում եմ նրան, լուսազարդ շողով փարվում է նա ինձ, արևոտ օրս դարձնում լույս երազ: Ուզում եմ այսպես լուսահորդ ու ջինջ երկրիս արևը շողշողա հավերժ, մենք էլ լիառատ մի կյանքով ապրենք, լուսե-լուսավոր խաղաղ մի կյանքով՝ ի վերուստ տրված:

http://www.usarmenianews.com/am-n-9440.html

2017-08-11

ԱՆՑՅԱԼԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՆԵՐԿԱՅԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Հայաստանից եկած Արմավիրի հ. 6 հիմնական դպրոցի ուսուցչուհի Ալվինա Անաստասյանի մոտ եմ՝ Ստեփանակերտի իր բնակարանում: Նոր հրատարակված իմ գիրքը՝ «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին», սիրով նվիրեցի նրան: Ամբողջ օրը զրուցեցինք, բայց գիշերային մայրաքաղաքն ինչքա՜ն գեղեցիկ էր. այն իր լուսե շքեղությամբ մի նոր հմայք էր փռել շուրջբոլորը: Մեքենաների սլացքը երբեմն խախտում էր շրջապատի լռությունը: Երրորդ հարկի բացօթյա պատշգամբում վայելում եմ այս խաղաղ, պարզկա օրը, բայց մտքերով անցյալի հետ եմ, դեռ մինչ արցախյան պատերազմական օրերը, երբ հարևանությամբ մենք ապրում էինք Մարտակերտում: Մեր դուստրերը նույն դասարանում էին սովորում, այն ժամանակ ոչ մեկս չգիտեինք, որ մեր կողքին մեծացող փոքրիկ Արտյոմը հոր՝ երաժշտագետ Վալտեր Հակոբյանի արվեստի արժանի ժառանգորդը կդառնա, ու Արտեմ Վալտերը կճանաչվի երգելու և նոր երգեր արարելու իր շնորհքով:

Արցախյան պատերազմը բոլորիս բաժանեց, հարևաններ, բարեկամներ, հարազատներ իրար կորցրինք ու նորից գտանք: Բայց գտանք մի նոր սիրով, նոր հույզերով, անցյալի հիշողություններով, որտեղ հարազատ դեմքեր կան, բայց այսօր մեզ հետ չեն, Արցախյան պատերազմ կա ու մի նոր կսկիծ, խրամատային ու նկուղային կյանք կա, սովի տարիներ, լույս սիրողներիս համար անլույս գիշերներ կան, հացի կարոտ...Ու անթիվ զոհեր և մեծ կորուստներ, Վալտեր Հակոբյանի հիշատակ կա ու այդ անցյալում կնոջ՝ Ալվինա Անաստասյանի հետ մանկավարժական կյանք, երբ երկուսն էլ համատեղ աշխատում էին դպրոցում՝ Մարտակերտի մեր կրթօջախում:

Ալվինայի հետ զրուցում եմ ու նրա խոսքը երանգավորվում է, երբ հարցնում եմ ամենամյա այս օրերին նրա Արցախ այցելելու մասին.

«Ես նորից իմ բնաշխարհում եմ, ամառային հանգիստս վայելում եմ հարազատ մայրաքաղաքիս բնակարանում: Բերկրալից հոգիս ցնծում է ուրախությամբ, հայրենի օդ ու ջրի կարոտ մարդու զգացողությամբ մի նոր հրաշալիք եմ ըմբոշխնում: Շրջապատս լցված է արցախցու հյուրընկալությամբ, մեծի ու փոքրի ջերմ հոգածությամբ, նրանց անկեղծ զրույցներով: Դրախտավայրիս խաղաղ անդորրության մեջ մի նոր երջանիկ կյանք եմ ապրում՝ վերհիշելով անցյալի հիշողություններս: Ամեն անգամ իմ մտորումներում նույն հարցն է ծագում, թե ինչն է ձգում ինձ այստեղ՝ անցյա՞լս, ներկա՞ս, թե՞...Պատահում է՝ ամբողջ ուժով ուզում եմ կանգնեցնել ժամանակը ու հավերժացնել այն պահը, որ այլևս չի կրկնվելու»:

Այն դպրոցը, որտեղ դասավանդում է նա, ինձ էլ հարազատ է դարձել, կարծես գիտեմ ոմանց, ովքեր մանկավարժիս նյութերի ակտիվ ընթերցողներն են վաղուց: Շնորհակալական զգացումով ուզում եմ մի քանի խոսք գրել մանկավարժական կոլեկտիվի մասին ու հարցեր եմ ուղղում այդ դպրոցի ուսուցչուհուն, ով հիացմունքով է տալիս շատերի անունները, նաև՝ գոհունակություն հայտնում դպրոցի տնօրեն Հասմիկ Գասպարյանից:

«Շատ համերաշխ կոլեկտիվում եմ աշխատում, ուրախության թե տխրության պահերին միշտ միասին ենք, իսկ դա գալիս է դպրոցի տնօրենից: Մովսես Սիլիկյանի անվան իննամյա դպրոցն է, որտեղ վեց տասնյակ մանկավարժներ կան, մոտ՝ 500 աշակերտ: Նախապատրաստվում ենք՝ շուտով նշելու դպրոցի հիմնադրման 50 տարին: Սիրում եմ իմ աշխատանքը, ինձ երբևէ չեմ պատկերացնում առանց դպրոցի, առանց իմ սիրելի գործընկերների և աշակերտների: Չնայած ամուր կապված եմ իմ անցյալին, բայց գիտեմ, որ Արցախն ու Արմավիրն իմ երկու լուսատուներն են, իմ անցյալն ու ներկան է շաղախված այդտեղ... Այն տանում է ինձ դեպի նոր գալիք»:

http://www.usarmenianews.com/am-n-9443.html

2017-08-12

ԱՐՑԱԽԻ ԱՅՍՕՐՆ ՈՒ ԳԱԼԻՔՆ Է ՆԱ

Լուսինե Ղարախանյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ:

Կկարողանա՞մ նկարագրել մարդու, ում հետ շփվելու մեծագույն երջանկությանն եմ արժանացել ու ազնիվ մղումով միշտ էլ սիրով ունկնդրել նրան՝ որպես մարդու մի գեղեցիկ տեսակի, ումից սովորելու շատ բան ունեի ու նաև ունեմ առայսօր էլ: Գիտական աշխատող է նա, ով դասախոսում է նաև Արցախի պետական համալսարանում, վայելում շատ-շատերի համակրանքը: Ունկնդիրների հզոր բանակ ունի Արցախի հանրային հեռուստատեսությամբ իր վարած «Իրական արժեքներ» հաղորդմամբ, որտեղ այս կյանքի արժեքներն է լուսաբանում: Նաև մեկն է նա, ով զարմացնել գիտի՝ գիտելիքների իր իմացությամբ, մարդու հանդեպ ունեցած իր անշահախնդիր նվիրվածությամբ, ազնվագույն մի կերպար, որ այս տարիների ընթացքում միշտ էլ հիացրել է ինձ՝ իր համեստ պահվածքով, պարզ ու հասարակ իր մարդկային տեսակով...

Ո՞վ է նա, առաջին հերթին Մարդ, ում ազնվորեն սիրում եմ իր հոգու հարուստ ներաշխարհով, մտքի իմաստալից սլացքով, իր աշխատասիրությամբ...Նա մնում է ինձ համար տիկին Ղարախանյան, բայց ինձ երևում է նաև մայրական գորովագութ սիրով՝ որպես ընտանիքի հրաշալի մայր ու ազնվագույն կին: Նրան տեսնում եմ այս երկրին, նրա հող ու ջրին նվիրված հայրենասերի կերպարով՝ նժդեհյան գաղափարախոսությանն ունկնդիր: Նա իր մասնագիտության գիտակն է, ով կարողանում է մտնել մարդու հոգին ու դառնալ նրա հոգու բանալին՝ իր խորհուրդներով ու խելացի մտքերի իր իմաստությամբ:

Ես Լուսինե Ղարախանյանի հետ ծանոթացա դեռևս 2013-ին, երբ կասկածամտորեն ձեռքիս տակ ունեցած իմ գրագրություններով մտա նախարարություն ու ծանոթացա նրա հետ: Երկընտրանքս, թե արդյո՞ք

այս նյութերը կհավանի նա, երբ ընթերցի դրանք, անմիջապես վերացան, երբ տեսա նրա դեմքին ճառագող այն բարի ժպիտը, որ ինձ տարավ դեպի իրեն, ու ես մտերմացա նրա հետ: Իմ առաջին մեթոդական ձեռնարկը՝ «Ուսուցչի իմ թղթապանակը», լույս տեսավ նրա խմբագրական ուղղորդող խորհուրդներով ու այն մեծ ներշնչանքով, որ փոխանցեց ինձ, ու ես շուտով դարձա գրքի հեղինակ, մի բան, որ ամենևին չէի հավատում:

Այս ամիսներին էլ, որպես խմբագիր, նա քրտնաջան աշխատել է նաև իմ հրատարակվելիք հաջորդ գրքերի վրա: «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին», «Մանկավարժի օրագիր», գրքերի հրատարակության գործի անցումային բոլոր փուլերում երջանկություն ունեցա նորից առնչվելու այդ գերազնիվ ու մաքուր անհատականության հետ, ով օր օրի ինձ հիացրեց իր անկեղծ նվիրվածությամբ, պատասխանատվության զգացումով, հայ մտավորականին հարիր կեցվածքով, մանկավարժական բարձր մշակույթով...

Ակնածանքի խոսքերս ու խոնարհումս մեծ է, երախտագիտությունս՝ անչափելի ու սիրով լեցուն, Լուսինե Ղարախանյան Մարդու տեսակի հանդեպ, իսկ շնորհավորանքներս լավագույն օրհնանքների բազում իղձեր ունեն ինձ շատ սիրելի անձնավորության ծննդյան տարեդարձի կապակցությամբ: Թող բարեբեր լինի նրա անցնելիք ուղին, կյանքով լեցուն... Արցախի այսօրն ու գալիքն է նա, հենց այսպիսի կենսունակ կերպարներն են, որ մեր երկիրը կարողանում են տանել դեպի հավերժություն:

http://www.usarmenianews.com/am-n-9446.html

Շատ սիրելի՛ տիկին Պողոսյան, խորապես զգացված եմ: Մեր շփումը փոխադարձ հաճելի և օգտակար է: Ես էլ Ձեզ ու Ձեր տեսակն եմ բացահայտել 2013-ին: Դուք ինչ համար էնտուզիազմի եզակի օրինակ եք: Ձեր նմանների շնորհիվ վարժապետությունը դառնում է ածանցյալ, ուսուցչությունը՝ գերակա նպատակ, ստրատեգիական նշանակության ծրագիր: Մենք այլևս ռազմական դրության մեջ ենք, իսկ սահմանին հաղթում է այն զինվորը, որի ուսուցիչն առաջնորդ է և իշխանավոր իր որդեգրած արժեքների ու սկզբունքների, համոզմունքների ու իդեալների մեջ: Շատ պարտավորեցնող են Ձեր խոսքերը... Շնորհակալ եմ, որ Դուք կաք, և որ Դուք ստեղծագործում եք հենց Մարտակերտում...

Լուսինե Ղարախանյան

2017-08-13

ՀԵՌՈՒՆԵՐԻՑ ԵԿԱԾ ՆԱՄԱԿ

Հարգելի՛ վաստակաշատ մանկավարժ Նատաշա Պողոսյան, Դուք եղաք այն առաջինը, ով հեռու հեռվից՝ Արցախից, մանկավարժական կապ հաստատեց այս ափի հետ...

Երկար ժամանակ է՝ ուշադրությամբ ընթերցում եմ «Մանկավարժի անկյուն» բաժնի Ձեր նյութերը: Գիտեմ, անշուշտ, Դուք Ձեր տարիների փորձերն ամբարած, իմաստնացած, ջանք ու եռանդ եք ներդնում ու ոչ միայն այսօրվա, այլև վաղվա ու հետագա արժանավոր քաղաքացի, ազգասեր ու ազգապահպան սերունդ կրթելու-դաստիարակելու նպատակով: Եվ, ինչու չէ, այն կշարունակեք՝ յուրաքանչյուր տպագրված նյութերը հավաքելով և «Մանկավարժական ձեռնարկ» գիրք դարձնելով, որը ոչ միայն սկսնակների համար օգտակար կլինի, այլև՝ ամենքիս:

Եվ Դո՛ւք եղաք այն առաջինը, ով հեռու-հեռվից՝ Արցախից, գրական-մանկավարժական կապ հաստատեց այս ափի հետ...

Ողջունում եմ Ձեզ ու շնորհավորում, որ ընտրել եք USArmenianews.com լրատվական կայքը. ինչո՞ւ՝ գիտե՞ք...

Դուք վստահել եք այնպիսի լրագրողական կայքի, որի գլխավոր խմբագիր Դայանե Մանուկյանը, դեռևս 21 տարեկանից այստեղ՝ Լոս Անջելեսում, այս օտար ափում, օժտված՝ լրագրողական արվեստի և խոսքի բացառիկ ճկունությամբ, համայնքում առաջինը լինելով՝ երիտասարդական բազմաբնույթ թեմաներով հեղինակային հեռուստաշոուներ է անցակացրել, ուր մասնակցում էին համայնքի անվանի մարդիկ, հետաքրքրասեր հանդիսատես, առողջ մտածող երիտասարդություն, ովքեր անկաշկանդ ու ազատորեն արտահայտվել են ու պատասխանել Դայանե Մանուկյանի խելամտորեն մշակված հարցադրումներին, լինեին՝ միմյանց համամիտ, թե՝ հակամիտ:

Ինչպես ներկաներն էին արտահայտվում, Դայանեի շնորհիվ էր հեռուստաշոուն այդքան ընդգրկուն դառնում, քանզի ապահովում էր ազատ խոսքի դաշտը նաև կայքում:

Գայանեն Լոս Անջելեսում վարում էր նաև մանկական «Ա՜յ-ա՜յ-ա՜յ» հեռուստահաղորդումը՝ իր քաղցրահնչյուն ձայնով նա դարձել էր փոքրիկների սիրելին, անգամ հիմա, երբ նախկինում փոքր երեխան, այսօր հասունացած մոտենում ու հարցնում է «...Դուք էիք չէ՞ «Ա՜յ-ա՜յ-ա՜յ» հաղորդաշարի վարողը...», նա հաստատում է ժպտուն աչքերով:

Լուսանկարում՝ ամուսինս, դուստրերս և Տեր. Հովսեփ քահանան գրքիս շնորհանդեսի ժամանակ

Բացի համայնքի բոլոր թերթերին թղթակցելուց, նա ունի պատմվածքներ ու իրական հեքիաթներ, որոնք տպագրվել են «Լույս» պարբերականում, որտեղ նրան վստահված էր երիտասարդական բաժնի մի ամբողջ էջ:

2015թ. մանկավարժական ձեռնարկ՝ «Հնադարյան ազգի զավակ ես» գրքիս շնորհանդեսի հանդիսավարը Գայանե Մանուկյանն է եղել, ինչպես նաև գրքիս՝ բացահայտում-նախաբանի հեղինակը:

Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի հայոց առաջնորդարանում նա այնպես հմտորեն վարեց այդ միջոցառումը, որի մասին իր գնահատականը տվեց Կալիֆորնիայում հրատարակվող «Նոր Հայաստան» օրաթերթի ճանաչված լրագրող Սարգիս Մաճառյանը:

Սիրելի՛ Նատաշա Պողոսյան, հարգելի՛ գրչակցուհիս, թերևս հաջորդ անգամ ներկայացնեմ իմ «Խոսքի ուժը»:

Ես հետևում եմ Ձեզ, շարունակե՛ք, շատերին է դուր եկել՝ ընթերցելի են և ուսանելի: Միաժամանակ շնորհավորում եմ «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» գրքի լույս ընծայմանը՝ այն սպասումով, որ շուտով կտեղեկանանք Ձեր հաջորդ գրքի հրատարակմանը:

Սվետլանա ՆԱԼԲԱՆԴՅԱՆ-ՏՈՆԱՊԵՏՅԱՆ
Մանկավարժ-արատաբան
Գլենդել

http://www.usarmenianews.com/am-n-9455.html

2017-08-15

ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ ԳԵՂԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մարտակերտի մշակույթի տանը կազմակերպված միջոցառումը մեծագույն հարգանքի արտահայտություն էր ամիսներ առաջ՝ փետրվարի 8-ին, սահմանում զոհված Գեղամ Մանուկյանի հիշատակին:

Այս ցերեկույթը հրամանատարի հանդեպ հավատարիմ զինվորի սիրո ու հարգանքի արտահայտություն էր, որի նախաձեռնությունը պատկանում էր Հայաստանից ժամանած հյուրերին՝ հանձինս Ռազմիկ Խրշոյանի և մյուս երիտասարդների, ովքեր հանդես եկան ռազմահայրենասիրական համերգով՝ ի հիշատակ հայրենի հողի նվիրյալ փոխգնդապետի:

Մինչ միջոցառումը հասցրի առերես ծանոթանալ Ռազմիկի հետ, ում վաղուց գիտեի ֆեյսբուքյան տարածքից: Բազմիցս ընթերցել էի Գեղամի հավատարիմ զինվորի՝ հոգու կսկիծով գրած տողերը, նաև գիտեի նրա կողմից նախապատրաստվելիք միջոցառման մասին, որ նպատակ ուներ Մարտակերտում կազմակերպեր հուշ-ցերեկույթ՝ իր հրամանատարին նվիրված: Կար նաև փոխգնդապետի գերեզմանին այցելելու, նաև Մատաղիսում լինելու ցանկություն. այդտեղ էր անցել նրանց զինվորական ծառայությունը, և այդտեղ էլ զոհվել էր ազգի նվիրյալը:

Ես զրուցում եմ Ռազմիկի հետ, հիշողությանս մեջ այն օրն է, երբ նա ինձ ուղարկեց իր հրամանատարին նվիրված տողերը, որ պիտի երգ դառնային, ու նպատակ ուներ առաջին անգամ այն հնչեցներ այս այցելության ժամանակ: Նա խոսում էր հաստատակամ, կարծես զգոնության կոչ էր հնչեցնում. «Ռազմահայրենասիրական համերգի մեր

ծրագրով երեկ ներկայացել ենք Մատաղիսում: Մեր նպատակն է՝ հարգել հրամանատարի հիշատակը: Ովքեր չգիտեն, պետք է իմանան Գեղամ Մանուկյանի մասին, նա կենդանության օրոք էլ հերոս էր, ամեն օր գնահատել է իր զինվորին, սիրել հայրենի հողն ու հայրենիքը: Նրա



մոտ ձևական ոչինչ չկար, արհամարհանքով էր վերաբերվում դժվարություններին, վախը գոյություն չուներ նրա համար, նա պատրաստ էր իր զինվորի համար կյանքը տալ»:

Մեր կողքին այս զրույցին մասնակցում է նաև մեկ ուրիշ երիտասարդ, ում հետ ծանոթացա ու իմացա, որ նա ևս Գեղամի զինվորն էր, ով 2015-ի հոկտեմբերի 11-ին նույնպես վիրավորվել էր իր հրամանատարի հետ ականի պայթյունից: Լյովա Սահակյանին ուղղված իմ հարցը, թե ինչից է վիրավորվել, պատասխանը եղավ՝ վառվել եմ...Ընդամենը մեկ բառ, որն անակնկալի բերեց ինձ: Ինքնաբերաբար կրկնում եմ խոսքը, որ այնքան ցավոտ է հնչում, ու Աստծուն փառք տալիս, որ փրկվել է հայոց զինվորը:

Շուտով միջոցառումը վարող հաղորդավարուհու հետ բեմում երևում է Ռազմիկը: Նրանց երկուսի մեկընդմեջ արտահայտող խոսքերում ակնածանք կար, խոնարհումի խոսք Գեղամ Մանուկյանի մասին ու նաև միջոցառման բոլոր մասնակիցների կողմից հոտնկայս հարգանքի տուրք՝ նահատակների հիշատակին: Ներկայացվում էր մի զինվորական կյանք, որ հիշողություն էր դարձել, և այն պիտի ուղեկցվեր հայրենասիրական երգերով, բանաստեղծական տողերով, այն բոլոր ելույթներով, որ ուղեկցվում էր բեմ բարձրացողներիս խոսքերով:

Հուզիչ էր միջոցառումը, արտասվախառն, որ բացել էր հիշողությունների թելը Գեղամ Մանուկյան զինվորականի մասին, ու այն պիտի շարունակվեր հետմահու ապրողներիս խոսքերով, որ պիտի դառնար սփոփանք, որպեսզի դարմաներ նահատակ հերոսի հարազատների դառնակսկիծ վիշտը: Քար լռության մեջ ծաղիկներ նվիրեցին որդեկորույս մորը՝ Արմինե Ափանցին, Գեղամի կնոջը՝ Ինգա Մանուկյանին, քրոջը՝ Քնար Մանուկյանին, ովքեր այս ամիսներին իրենց վրա կրում էին հարազատի մեծագույն կորստի դրոշմը:

Հարգանքի արտահայտություն էր Հայաստանից ժամանած չորս հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունն այս միջոցառմանը, որ պիտի ուղեկցվեր նրանց ղեկավարների խոսքով, Գեղամի երեխաներին ու նրա հավատարիմ զինվորին նվերներ փոխանցելով, պատվոգրերով, որ արժանացան այս միջոցառմանն օժանդակողները, նաև հուշանվեր հանձնվեց զոհվածների թանգարանին: «Հայրենյաց պաշտպան» երգի ծնունդը՝ նվիրված Գեղամ Մանուկյանին, պիտի հնչեր՝ որպես միջոցառման ավարտ: Հուշ-ցերեկույթը եզրափակվեց որդեկորույս հոր՝ Հենրիխ Մանուկյանի տխրամած ու հպարտալից խոսքով:

http://www.usarmenianews.com/am-n-9469.html

2017-08-16

ՄԵՐ ԿՈՂՔԻՆ ԿԵՆԴԱՆԻ ԼԵԳԵՆԴ ԿԱՐ, ՄԵՆՔ ՉԳԻՏԵԻՆՔ

Ամիսներ առաջ մերժեցի հրամանատարի հավատարիմ զինվորի՝ Ռազմիկ Խրշոյանի առաջարկը՝ այս բեմահարթակից խոսելու Գեղամ Մանուկյան նվիրյալի մասին՝ հաշվի առնելով, որ կլինեն մարտական ընկերներ, ովքեր շատ ավելին կարտահայտեն նրա մասին, քան ես՝ դպրոցի ուսուցչուհիս, որ ընդամենը նրան դասավանդել էի 1996-ի փետրվարից մինչև մայիսը: Օրեր առաջ որդեկորույս հոր՝ Հենրիխ Մանուկյանի առաջարկը՝ մի քանի խոսքով ներկայանալ, չկարողացա մերժել, հասկացա, որ այս բեմից ուրեմն ես էլ ասելիք ունեմ Գեղամի մասին, ում սևազգեստ ու վշտահար մայրն իմ գործընկերուհին է, և նրա հետ աշխատում եմ արդեն երկու տասնյակ տարի: Նաև հասկացա, որ այո՛, այդտեղից ես պիտի ներկայանամ, քանի որ 8-րդ դասարան փոխադրված նրա սիրելի դստեր՝ Արմինե Մանուկյանի դասղեկն եմ և դասավանդող ուսուցչուհին:

Դպրոցն ավարտելուց հետո այս տարիների ընթացքում ես Գեղամին մի օր պատահական տեսա, մեր մի քանի իրար հետ փոխանակած խոսքից հետո նա մի նախադասություն ասաց. «Ես այլևս այն չեմ, չափազանց փոխվել եմ...»: Բազմանշանակ նայեցի նրան ու ժպտացի, բայց չհասկացա, թե ինչով էր փոխվել, ենթադրեցի, որ մեծացել է, ընտանիքի հայր է, սիրված ամուսին, ծնողների արժանի զավակ:

Այդ բոթաբեր դեպքից հետո, կարելի է ասել, ծանոթացա Գեղամ Մանուկյան փոխնդապետ ազնվագույն հայորդու կերպարին ու բազմիցս ինձ հարց տվեցի՝ այդ ինչպե՞ս է, որ մեր կողքի կենդանի լեգենդների մասին մենք չգիտենք: Այդ ինչպե՞ս է, որ իմ քսան տարվա դպրոց գնալ-գալու ճանապարհին երբևէ մի անգամ չհանդիպեցի Գեղամին: Այդ ինչպե՞ս ստացվեց, որ իմ կողքին աշխատող Արմինե Ափանցը

երբևէ մի անգամ չարձագանքեց իր որդու՝ հողի նվիրյալի մասին: Նույն կերպ նաև գործի բերումով միշտ էլ առնչվել եմ այս տարիներին Հենրիխ Մանուկյանի հետ, բայց երբևէ առիթ չի եղել իր որդու մասին բարձրաձայնելու: Ես դասղեկ եմ արդեն քանի տարի նրա դստերը, ծնողական ժողովներին մասնակցել է իմ աշակերտուհու մայրը՝ Ինգան, ով, նույնպես համեստության քողով պատված, երբևէ չի ասել, որ Գեղամն այս հողն ավելի է արժևորել, քան իրենց ու ընտանեկան հոգսերը:

Հպարտանում եմ, որ Գեղամի ու նրա նման շա՜տ-շատ ազնիվ հայորդիների մարտական ուղին է մեզ լուսավորում մեր անցնելիք ճանապարհին: Ես խոնարհվում եմ Գեղամի ու բոլոր նրանց հիշատակի

առջև, ովքեր իրավունք տվեցին ինձ իմ խոսքով ներկայանալու այս բեմահարթակից, որպեսզի նորից բարձրաձայնեմ մանկավարժիս խոսքը, որ մտահոգ եմ իմ ժողովրդի, առավելապես սերնդի ճակատագրի համար, երբ ապրում եմ Արցախում, դասավանդում նոր սերնդին: Մտահոգ եմ ծնողազուրկ երեխաների համար և չեմ ուզում այլևս իմ առջև նստած երեխաները սահմանում հայրիկներ կորցնեն:

8-րդ դասարան փոխադրված իմ դասղեկական դասարանի այդ երեխաներն են, որ ինձ սովորեցրին չամաչել իմ արտասվելուց: Այդ Դավիթ Պետրոսյանի /Խուդոյի/ որդին՝ Գևորգն էր, որ ինձ սովորեցրեց դասարանում արտասվել, երբ ասաց, որ այնքան եք մեծարել իմ հորը, որ ինձ թվում է՝ նա շուտով կգա: Ինչպե՞ս կարող էի չարտասվել, երբ ամիսներ առաջ Գեղամի զոհվելու մասին լսելուց հետո նրա լացակումած դստերն ուղեկցում էի իրենց տուն: Այդ նրա դուստրն էր ամիսներ առաջ սպիտակի վրա սևացրած տողեր հանձնել ինձ, որ ուրախ է իր

ուսուցչուհու հրատարակվելիք գրքով, որտեղ ինքն էլ կա, բայց ափսոս, որ չկա հայրը, որպեսզի բացի այդ գիրքը:

Ազգը չպետք է երբևէ մոռանա իր զոհված հերոսներին: Մարտադաշտում նրանք չէին մտածում անմահության մասին, այլ իրենց արյան գնով հասան հաղթանակների, որպեսզի ստիպեն աշխարհի հզորներին՝ ճանաչելու Արցախի՝ ապրելու և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը: Չմոռանանք նրանց, ովքեր անցան այդ դաժան ճանապարհը, բայց այսօր ֆիզիկապես մեզ հետ չեն, և նրանց, ովքեր, ապրելով մեր կողքին, իրենց սխրանքների մասին լռում են համեստաբար: Նրանց թափած արյան ամեն մի կաթիլը չիրականացված մի երազանք է, կիսատված իղձ: Հնարավո՞ր է ստույգ հաշվել, թե առայսօր այդ ճանապարհն անցած հերոսների քանի՞ երազանք-իղձեր են կիսատվել...

Սիրելի՛ Գեղամ, թող Աստված լուսավորի հոգիդ: Անմահության պսակն արդեն քո գլխին է:

http://www.usarmenianews.com/am-n-9472.html

2017-08-20

ՆԱՄԱ՞Կ Է ՍԱ, ԹԵ՞ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ...

Նամա՞կ է սա, թե՞ մենախոսություն, որտեղ երբեմն ուսուցչուհուս կերպարն է ընդգծվում իմ աշակերտի՝ ինձ հղած տողերում: Անհանգիստ սրտի մի տրոփյուն ինձ այցի է գալիս, իմ մտապատկերում նա է՝ երկրորդ նստարանին նստած, 8-րդ դասարան փոխադրված Նարեկ Բաղրյանը, ով այնքան պարզ է ու անկեղծ իր անցած օրերի հետ:

«Չեմ կարողանում զսպել իմ ուրախությունն ու այն բոլոր դրական հույզերը, որ համակել են ինձ: Ես էլ արժանվույն տեղ ունեմ իմ ուսուցչուհու հրատարակվելիք գրքում, որտեղ իրենց համեստ տեղն են զբաղեցնում նաև իմ շարադրանքները: Լինելով ացախցի՝ փորձում եմ իմ տողերով, վաղը՝ հայրենիքի սահմանները պաշտպանելով, կանգուն և անառիկ պահել մեր փոքրիկ դրախտ երկիրը:

Այն հայրենասիրական քայլերը, որ առկա են մեզանում, Ձեր շնորհիվ է, տիկի՛ն Պողոսյան: Դուք խոր ազդեցություն ունեցաք մեզ վրա՝ Ձեր վերաբերմունքով, հաճելի զրույցներով, դաստիարակությամբ, անգամ խոր լռությամբ կամ մի խորաթափանց հայացքով՝ ամեն րոպե մեզ սերմանելով հայրենապաշտություն: Երբ հարցրիք, թե ի՞նչ կանեիք հայապահպանության գործում, որ մեր այս փոքրիկ երկիրը չկործանվի, խոստացա, որ չեմ լքի իմ հայրենիքը, որ ուր էլ գնամ սովորելու, անպայման կվերադառնամ և ամեն մի քանդված քարի վրա մի նոր քար կդնեմ, կկառուցեմ իմ երկիրը:

Թեկուզ հուզմունքով, սակայն ներքուստ մեծ հպարտությամբ շուտով Ձեր գրքերի շնորհանդեսի ժամանակ կկանգնեմ բեմահարթակում, երախտագիտության խոսք կհայտնեմ Ձեզ, որ նպաստեցիք մեր աշխարհայացքի ճիշտ ձևավորմանը և հայեցի դաստիարակությանը, սովորեցրիք ապրել բոլորի հոգսերով՝ անմասն չմնալով ազգի տառապանքներից:

Իմ կողմից արտահայտած ամեն մի միտք մի նոր կանչ է աշխարհին՝ ի լուր հայությանը, որ Արցախում ապրող և արարող հայի գլխա-

վերևում թեկուզ ամեն րոպե կարող է սև ամպրոպ ճայթել, սակայն քաջ է ու աներեր, չի ընկրկում դժվարությունների առաջ, միշտ գլուխը բարձր է պահում, հպարտ՝ ինչպես հայրենի լեռները: Այո՛, հայրենասիրությունը բույն է դրել մեզանից յուրաքանչյուրի սրտում, մեր հոգուց են բխում այն տողերը, որ մեր Արցախը չի ընկրկի, միշտ հավերժ կմնա նրա լեզուն, արվեստը և ազատ ոգին: Նաև ուրախ եմ, որ սփյուռքում ապրող իմ հասակակիցները հնարավորություն կունենան կարդալ ու տեղեկանալ Արցախի՝ իրենց հասակակիցների կյանքում տեղի ունեցող փոթորկահույզ ու ալեբախ իրադարձությունների մասին, նրանք էլ կոգևորվեն արցախցու աննկուն, չընկճվող ոգուց»:

Նարեկի տողերը հպարտությամբ են համակում հոգիս, բայց հիշողության մեջ ամիսներ առաջ նրա արտահայտած խոսքերն էին. «Եթե կախարդական վրձին ունենայի, կնկարեի մի աշխարհ, որտեղ պատերազմ չէր լինի, ո՛չ զենք, ո՛չ կրակոցներ, ո՛չ սարսափ կլիներ այդ աշխարհում, ոչ էլ՝ արտագաղթ: Երեխաներն այստեղ կապրեին անհոգ ու երջանիկ մանկությամբ: Որբանոցներում երեխաներ չէին լինի, ոչ մի ծնող իր զավակին չէր կորցնի: Իմ նկարած աշխարհում կվերացնեի այդ վրձնով այն երեք հնչյունից բաղկացած ահասարսուռ «մահ» բառը, սերը կթևածի այդ աշխարհում, մարդիկ բարի կլինեն, իրար հանդուրժող, պատկերացում չեն ունենա թշնամիների մասին, նրանք երբևէ չեն նախանձի միմյանց:Այդ աշխարհում, որպես խաղաղության խորհրդանիշ, կհամարվեն ոչ թե աղավնիները, այլ՝ մարդիկ՝ բարությամբ լցված»:

Ինչպիսի՜ գեղեցիկ երևակայություն, որ բոլորիս երազանք-ցանկությունն է դարձել...Երանի՜ թե աշխարհում խաղաղություն լինի, մարդիկ էլ միմյանց հանդեպ հանդուրժող լինեն, բարի...

http://www.usarmenianews.com/am-n-9481.html

2017-08-22

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՅԴ ԳՐՔԻ ՄԻ ՔԱՆԻ «ՀԵՐՈՍՆԵՐԻ» ՀԵՏ

Այս գիրքը՝ «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին», որ նվիրվեց արձակագիր Լևոն Ադյանի՝ կյանքից անժամանակ հեռացած Սիեր ու Զորայր որդիների հիշատակին, մտավ դպրոց դեռ մինչ ուսումնական տարին սկսվելը: Այս օրերին այն մեծագույն հարգանքով նվիրեցի շատերին ու դեռ կնվիրեմ արժանավորների, բազմաթիվ ընթերցողների...Ակնածանքով նվիրեցի նրանց, ովքեր արժանի ներդրում ունեն այս գրքի հրատարակության գործում՝ հանձինս ԼՂՀ ԿԳՍ նախարար Սլավա Ասրյանի և գրքի խմբագիր Լուսինե Ղարախանյանի:

Սիրով նվիրեցի ուսուցիչներին, ովքեր աշխատում են ինձ հետ կամ թեկուզ հեռուներում, ընդհանրապես, նվիրեցի նրանց, ովքեր այդ գիրքն ունենալու անհրաժեշտությունն ունեն...

Հպարտության ու գեղեցիկի զգացողություն կա հոգումս, որ այս գիրքը դարձել է շատերի համար հետաքրքիր ու ցանկալի: Այս գիրքը հուշում է ինձ, որ նվիրելու այս ապրումներն էլ շատ ավելի հրապուրիչ են, որքան որ գրքի ծննդյան հետ կապված դրական հույզերը:

Այն մեծագույն սիրով իրենց ձեռքն առնելու ակնկալիքն ունեն գրքի մասին գրախոսականով իր կարծիքն արտահայտած Արցախի բանաստեղծուհի Ժաննա Բեգլարյանը, հեռուներում ապրող, գրքի հրատա-

ռակությանը ֆինանսապես օժանդակող լոսանջելեսաբնակ բանաստեղծուհի Նելլի /Ավակովա/ Գրիգորյանը, գրող Լևոն Ադյանը, ով ապրում է Սանկտ Պետերբուրգում, և այս օրերին՝ նրա իսկ ֆինանսական միջոցներով, նույն 250 օրինակ տպաքանակով, վերահրատարակվում է գիրքը՝ նաև Մարտակերտի շրջանի դպրոցներին բաժանելու ահրաժեշտությամբ, այդ թվում Չլդրանի ու Առաջաձորի կրթօջախներին, որ-

տեղ տարիներ առաջ սովորել էր գրողը:

Այսօր այդ գիրքը մեծագույն սիրով նվիրեցի մեր դպրոցականներին, առանձնապես նրանց, ովքեր դարձան այս գրքի գործող դեմքերը: Այդ նրանք էին՝ մեր դպրոցի 12-րդ հումանիտար դասարանի աշակերտները, ովքեր ավարտեցին դպրոցը, նրանցից շատերը բարեհաջող ընդունելության քննություններ հանձնեցին և շուտով կմտնեն տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Նրանց հետ հանդիպումն իրենց դասարանում ինձ թվաց մի նոր վերջին դաս էր, չնայած հարգելի բացակայողներ ունեինք: Իսկ նոր դասն սկսվեց գրողի մասին իմ զրույցով, այս գրքի հրատարակության անցած ճանապարհով, այս գիրքն ընթերցողներին նվիրելու իմ մեծագույն ցանկությամբ, նրանից դասեր քաղելու ակնկալիքով, մեր անցած օրերի հիշողությամբ, որ գրողի գրքերի հետ էին կապված, մեր կազմակերպած գրքերի քննարկումներով, նրանց պատրաստակամությամբ, որ անցած մի ուսումնական տարի մեզ կապել էր մի գրողական աշխարհի հետ, ով դպրոցական ծրագրում չկար:

Մեր շրջանավարտների հետ լուսանկարվեցի՝ համոզված, որ տարիներ կանցնեն, այդ տարիների հետ կմեծանան նրանք, բայց գրքի իմ այս «հերոսները» կմնան նույն դպրոցականները՝ հենց իրենց այս լուսանկարներով, որ հիշողություն կդառնան, ու տարիները ափսոսանք կծնի նրանց մոտ, որ անցածը նորից չի վերադառնա, բայց իրենք այս գրքում կմնան՝ որպես գրողի կյանքով ու նրա ստեղծագործությունների գրական կերպարներով ապրած դեռահասներ:

http://www.usarmenianews.com/am-n-9490.html

2017-08-23

ԱՆՆԱ ՄԻՐԶՈՅԱՆ. ԳՐՔԻ ԵՎՍ ՄԵԿ «ՀԵՐՈՍ»

Աննա Միրզոյանի սպիտակի վրա գրված տողերն եմ ընթերցում, ինձ համար էլ անսովոր է այս համեստ աղջնակի անկեղծությունը, ով, դպրոցում իր լռության մեջ էր պարփակված: Օրեր հետո ես կմտնեմ 8-րդ դասարան, այդ ժպիտով նա ինձ կողջունի, նոր ժպիտներ կհավաքեմ այդ օրը ու կհիշեմ նորից նրա սրտից բխած տողերը:

«Երբեք չէի կարող երևակայել, որ ես, միշտ առանձնացած լինելով իմ խոհերով, մի օր կարող էի երևալ իմ ուսուցչուհու հրատարակած գրքում: Ինքս միշտ ակնածում էի, երբ կարդում էի գրքեր, միշտ հիացմունք ապրում այդ հերոսների հանդեպ, քանի որ մտածում էի, որ եթե նրանք առանձնահատուկ հատկություններ չունենային, եթե իրենց էությամբ արտասովոր չլինեին, երբեք չէին կարող հայտնվել գրքում:

Իսկ այժմ ինքս եմ նրանցից մեկը, ես իրական եմ, բայց երբեք չէի կարող վայելել այդ բերկրանքը, եթե ուսուցչուհիս իր նրբանկատությամբ և ստեղծագործական մեծ ձիրքով չգրեր մեր մասին: Ինքս ինձ, իհարկե, լավ եմ ճանաչում, բայց երբ ուսուցչուհիս գրեց իմ մասին, ինձ ավելի լավ ճանաչեցի, կարծես իմ դիմանկարը ոչ թե հայելին, այլ տիկին Պողոսյանն էր իր տողերով արտացոլել:

Երբեմն մեր մեջ կարող է անձկություն առաջանալ, և մեզ կարող են պաշարել անսովոր զգացումներ, բայց կարողանում ենք հաղթահարել դրանք, որովհետև մեզ ուժ է տալիս մեր ուսուցչուհու մեծ ուշադրությունը մեր նկատմամբ, նրա անմնացորդ նվիրվածությունը մեզ փոխանցում է դրական էներգիա, ոգեշնչվում ենք և ավելի արժևորում այն ամենը, ինչ շրջապատում է մեզ: Երբեմն մեր փայփայած երազներն այնքան շուտ կարող են այցի գալ մեզ, որ ինքներս կարող ենք չհավատալ, որ մեր նվիրական երազները կատարվել են:

Թվում է՝ հեքիաթներ չեն կարող լինել կյանքում, միայն պարզամիտ մարդիկ կարող են հավատալ հեքիաթին, բայց ես նույնպես հավա-

տում եմ: Եթե անգամ չեմ արտահայտվել բացահայտ, բայց հոգուս խորքում անչափ ուրախ եմ, որ ես էլ իմ ուսուցչուհու գրքում կամ:

Ու նորից համոզվում եմ, որ մենք ինքներս երբևէ չէինք կարող գիտակցել, թե մեր խառնվածքով ինչքան ենք տարբերվում մեկը մյուսից, թե ինչքան ինքնատիպ ենք մեր տեսակով, մեր թերություններով և առանձնահատկություններով հանդերձ, բայց երբ կա մեկը, ով կարողանում է իր խորաթափանց հայացքով մտնել մեր հոգու խորքը, բացահայտել մեր ներաշխարհը, ինքներս մեզ ավելի երջանիկ ենք զգում»:

Ուրեմն ի՞նչ...Եթե իմ աշակերտների հոգու խորքը թափանցելով՝ գտել եմ նրանց երջանկացնելու բանալին, ուրեմն իմ գործունեությունը շարունակական կլինի, որը կդառնա նրանց երջանկացնելու նվիրում, ազնվագույն մի ճանապարհ, որտեղ կերպարներ են կերտվում՝ մեկը մյուսից յուրովի տարբեր, յուրովի գեղեցիկ:

http://www.usarmenianews.com/am-n-9500.html

2017-08-29

ԻՆՉՈՒ՞ ԹԱՔՑՆԵԼ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ

Երբևէ չեմ խուսափում բարձրաձայնել հարցեր, որ մեր շրջապատում առկա են, մտահոգվում եմ նաև իմ կողքին ապրող մարդկանց խնդիրներով: Հետաքրքրություններիս շրջանակը հիմնականում իմ դպրոցն է, այնտեղ դասավանդող ուսուցիչը, ուսում և դաստիարակություն ստացող դպրոցականը, մանկավարժիս անհանգիստ հոգու մտորումներն են, սահմանամերձ բնակավայրիս ապրումները, որ միախառնվում են մեր դասերին ու դառնում այստեղ ապրողներիս համար ընդհանրական հարց, գոյության ու պայքարի ոգեշնչման աղբյուր:

Վերջերս իմ բարձրացրած մտահոգությունը, որ Արցախում աշխատատեղի սղություն կա, ու միշտ չէ, որ մարդը կարողանում է ապահովված զգալ իրեն աշխատանքով, որը նրա գոյության իմաստն է, դարձավ թեմա, որի մասին գրված նյութը ստիպված էի հեռացնել իմ էջից: Նկատի ունենալով առանձին անհատի՝ ես բարձրացրել էի ընդհանրական թեմա, որ շատերիս մտահոգությունն է: Գուցե և պետք չէր որևէ անձի օրինակով բարձրաձայնել այդ հարցը, բայց, կարծում եմ, այդտեղ վատ մտադրություն չկար, երբ խոսքը վերաբերում է բոլոր այն մարդկանց, ովքեր ամուր կառչած են Արցախի հողին, բայց, ցավոք, շատերի համար մեծագույն մտահոգություն է, որ աշխատատեղ չլինելու պատճառով ցանկացած ոք մնում է անգործության մատնված կամ ստիպված է լինում մեկ ուրիշ տեղ աշխատել:

Այստեղ խնդիրն այն չէ, թե մարդ արարածը, անգործության մատնվելով, կկարողանա՞ ապրել...Այո՛, հնարավոր է, որ նա կարողանա ավելի լավ ապրել, եթե կողքից այլ եկամուտ ունի, բայց այստեղ կա մեկ այլ հարց. ինչու՞ բարձրագույն կրթություն ստացած անձն անգործության մատնվի...

Մանկավարժս երբևէ չեմ թաքցնում, որ 1982-ին բարձրագույնը գերազանց ավարտելուց հետո չկարողացա մտնել Մարտակերտի հ. 1 դպրոցը, որտեղ սովորում էին մոտ 1700 աշակերտ, դասավանդում 120-ից ավելի ուսուցիչներ: Միայն հետպատերազմյան տարիներից՝ 1996-ից, սկսեցի դասավանդել այդ դպրոցում, որտեղ առայսօր էլ աշխատում եմ: Երբ կրթության բաժնի վարիչներից մեկին տարիներ առաջ հարցրի, թե ի՞նչն էր պատճառը, որ իմ մասնագիտությամբ խորհրդային տարիներին աշխատանքի չընդունվեցի՝ անգամ նվազագույն դասաժամով, նա

շատ կտրուկ բացատրեց: Պարզվեց, որ այնտեղ ինձ չցանկացողներ կային, և նրանք դեմ էին, որ ես դպրոց մտնեի:

Ահա և պատասխան...Այն դեպքում, երբ այդ դպրոցում բարձրագույնն ավարտած ուսուցիչների կողքին միջին մասնագիտական կրթությամբ դասավանդողներ կային, իսկ ես բարձրագույնի կարմիր դիպլոմով աշխատանք էի փնտրում:

Ինչու՞ թաքցնեմ, երբ խորհրդային տարիներին մեր ընտանիքում միշտ էլ աշխատանք ունենալու մտահոգությունն առկա էր: Չորս երեխաներ ունեցող հայրս իրականացրեց իր երազանքը և Երևանում ընդունվեց բարձրագույն ուսումնական հաստատություն: Դյուրին չէր այն ճանապարհը, որ անցավ նա իր ուսանողական տարիներին, ու մենք՝ երեխաներս էլ անցանք այդ ճանապարհը մեծագույն դժվարություններով, երբ մեր ընտանիքի միակ աշխատողը մայրս էր՝ մանկապարտեզի իր նվազագույն աշխատավարձով: Առավել ցավալին բարձրագույնն ավարտած հորս աշխատանքի չընդունելն էր: Ու տարիներ անց նա ստիպված եղավ մեկնելու հեռուները՝ արտագնա աշխատանքի...

Ես երբևէ չեմ թաքցնում մտահոգություն, երբ առկա է շրջապատում, գրած տողերս միշտ էլ իմ տեսածի ու լսածի ճշմարիտ արձագանքներն են, հորինված չեն իմ կերպարները, այլ՝ իրական, նաև՝ ճշմարտությունից խուսափողները տեղ չունեն իմ նյութերում: Սրանք շատ պարզ ու անկեղծ շարադրանքներ են՝ շաղախված իմ հոգու տվայտանքներին, իսկ ում հասանելի չեն, պետք չէ կառչեն տողերից, թող կողքով անտարբեր անցնեն՝ առանց թերթելու այդ նյութերը:

Ես չեմ գրում որևէ մեկին հաճոյանալու կամ գովեստների արժանանալու համար: Սա ուսուցչի ճշմարտության համար մղվող իմ ուրույն պայքարն է:

http://www.usarmenianews.com/am-n-9523.html

2017-09-01

ՍԵՊՏԵՄԲԵՐՄԵԿՅԱՆ ԽՈՀԵՐՍ

Նոր ուսումնական տարվա՝ Սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվա առթիվ շնորհավորում եմ գիտության և կրթության գործի նվիրյալներին, բոլոր նրանց, ում ձեռքին է ազգային կրթության ու հայեցի դաստիարակության հայրենանվեր գործը: Հաջողություն եմ մաղթում բոլորիս, ցանկանում նոր ձեռքբերումներ, ստեղծագործական աշխատանքի նոր վերելքներ: Սերնդի համար ուսումնառության ողջ ընթացքը թող դառնա աշխարհաճանաչման ու ինքնադրսևորման ժամանակաշրջան, մաղթում եմ նրանց լուսավոր ճանապարհ, բարձր առաջադիմություն, որ կախված է բոլորիս հետևողական աշխատանքից ու մեծագույն նվիրումից:

Նոր ուսումնական տարում ամեն անգամ սրտի թրթիռներով ու նոր սպասելիքներով ենք մտնում դասարանները, ողջունում դպրոցականներին, նոր օրերի երազանքներով մի նոր կյանք ցանկանում նրանց: Սահմանամերձ բնակավայրում ապրողներիս համար, երբ մեր գլխավերևում «դամոկլյան սուր» կա, ամեն անգամ վեր է հառնում հարցը, թե ինչպես կլինի ուստարին, երբ խաղաղ կյանքի երաշխավորը մենք չենք, բայց խաղաղություն ենք ուզում՝ հայացքներս ուղղած սահմանին կանգնած զինվորին: Ապրիլյան օրերի հետքեր կան մեր հոգում, որ անցյալ չեն դառնում, ապրած օրերի թանձրույթում ամեն անգամ առկայծում է լույսի մի շող, որ ուղեկցում է մեզ ու դառնում մեր այստեղ ապրելու երաշխիքը:

Իմ հավատն ինձ հետ է, երբ մտնում եմ դասարանները, իմ երազանքները շաղախված են նրանց լույս օրերի հետ ու այդ իսկ սիրով ողջույններս հղում եմ դպրոցականներին, որ դառնում են ինձ համար այս նոր կյանքի լուսատուները: Իմ սպասումները շատ են, երբ ասելիք ունեմ նրանց, ու այդ իսկ սպասումներով ես փնտրում եմ իմ նոր կերպարներին, որ պիտի դեռ նոր ծանոթանամ նրանց հետ՝ այդ նոր դասարանը մտնելով: Տեսնում եմ նրանց հայացքներն ինձ ուղղված, որ սրտի տրոփյունով կսպասեն իմ խոսքին: Կզրուցեմ ես նրանց հետ

մտերմական, շատ հանգիստ, երբեմն անունները կշփոթեմ՝ նոր ժպիտների մեջ քողարկված:

Մանկավարժի իմ ազատությամբ կմտնեմ դասարանները, այն կփոխանցեմ աշակերտներին, որ իրենց խոսքերում, նոր մտածումներում ազատ լինեն ու անկաշկանդ, և ըմբռնումով կմոտենամ նրանց ամեն մի մտքին, որ նորի առկայծում կդառնա, նորի սկիզբ: Սովորությանս համաձայն՝ հայացքս այն վերջում նստած դեռահասներին կհառեմ, որ նրանց լսեմ:

Երբեմն ամաչկոտ, երբեմն լռակյաց ոչինչ չեն ասի նրանք, բայց լռության խորքից եկած նրանց մեկ բառն էլ արժեք կունենա, ու թևեր կտամ նրանց՝ նորից խոսեն, որ բառը բառի հետ մի նոր միտք դառնա:

Այն բացակա օրերի մասին կխոսենք, որ միասին չէինք, ամառային հանգստյան օրերի զրույցը կլսեմ, այս անգամ էլ գուցե ոմանք կբարձրաձայնեն նորից, որ տնային հանձնարարությունները դպրոցականների արձակուրդային օրերի համար չեն: Կանցնի մեր օրը մտերմիկ ժպիտների մեջ, ու նորից կամրագրվի աշակերտի և ուսուցչի մի նոր հարաբերություն, որ կդառնա այս նոր ուստարվա սկիզբը՝ ակնկալիքներով ու խաղաղ օրերի երազանքներով լեցուն:

http://www.usarmenianews.com/am-n-9537.html

2017-09-02

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԲՈԼՈՐԻՍ ԱԶԱՏ ՈՒ ԽԱՂԱՂ ԱՊՐԵԼՈՒ ԵՐԱՇԱՆՔՆ Է

Սեպտեմբերի 2-ը Արցախի Հանրապետության անկախության օրն է: 26 տարի առաջ այս օրն արցախահայությունը հռչակվեց իր անկախ պետականությունը: Այս տարիների ընթացքում Արցախը կայացավ որպես ամուր, ազատ ու ժողովրդավարական պետություն:

Պատերազմի կրակների և ավերակների միջով անցանք, բռնագաղթ տեսանք, օտար ափեր, բայց կարողացանք նորից արարել, բարձրանալ և աշխարհին ներկայանալ մեր հերոսական բանակով, պետական հաստատություններով, տնտեսական լուրջ առաջընթացով, կրթական ու մշակութային օրինակելի օջախներով, մեր կազմակերպված հասարակությամբ:

Չնայած աշխարհը չի ուզում ճանաչել մեր անկախությունը, բայց այս տարիների ընթացքում մեր ժողովուրդն ինքն է տնօրինում իր սեփական ճակատագիրը՝ ինքնուրույն, ազատ, անկախ, ժողովրդավարական, իրավական ու սոցիալական պետություն կառուցելու ճանապարհին: Համամարդկային արժեքներ կան այստեղ, ժողովրդի երկար տարիների քրտնաջան աշխատանք, մեր քաջ զավակների անձնվեր ծառայություն, որոնք գալիս են հաստատելու, որ մենք ի վիճակի ենք սեփական ուժերով կառուցելու, շենացնելու ու պաշտպանելու մեր հայրենի օջախը, մեր անկախ պետականությունը:

Ամեն տարի այս օրը հուշարձան ենք այցելում, ծաղիկներ խոնարհում Արցախի ազատության համար ընկածների հիշատակին, ամեն անգամ այս փառավոր օրը երախտագիտությամբ հիշում ենք կենդանի լեգենդների անցած ճանապարհը, ամեն անգամ ավելի ենք հաստատակամ դառնում Արցախի խնդրի ռազմական լուծման անհնարինության հարցում: Ամեն անգամ մենք համոզվում ենք, որ Արցախը Մայր

Հայաստանի ու Սփյուռքի միջոցով կկարողանա ապրել, նրանց միջոցով կկարողանա կյանքի կոչել բազմաթիվ ռազմավարական ծրագրեր, որոնք կօգնեն նրան դիմադրելու թշնամու արկածախնդրություններին:

Յուրաքանչյուրիս համար գերխնդիր է դառնում այս երկիրը պահելու, այս հողը սիրելու մեր նախնիներից եկած ավանդույթը, իսկ այն սկսվում է խրամատից, սահմանը պահող զինվորից, նահատակների հիշատակով, այն բոլոր հայորդիներով, ովքեր անցել են այդ հերոսական ճանապարհը և այսօր էլ շարունակում են արարել հայոց հողում: Այս հայրենիքը պահպանվում է որդեկորույս մայրերի համառ կամքով, մեր այստեղ ապրելով, այն բոլոր ձեռքբերումներով, որ ի ցույց ենք դնում աշխարհին:

Անկախության տոն, որ ինքնին այս հողի նահատակների խոսուն վկան է, մեր կողքին ապրողների անցած մարտական ճանապարհը, մեր ոգեղեն ապրելու կամքը, թշնամու սադրանքներին դիմակալելու հաստատակամությունը, մեր ազատությունը, մեր ստեղծագործ կյանքը՝ սահմանից եկող կրակոցների արձագանքների տակ, որ օր օրի կոփում է մեզ, դարձնում անկոտրում:

Շնորհավորում եմ բոլորիս Անկախության տոնը, որ այս հողում մեր ազատ ապրելու իրավունքն է, մեր անցյալի հիշողությունը, մեր ներկան ու գալիքը, մեր լուսավոր ու խաղաղ կյանքի լավագույն երազանքը: Անկախությունն ու ազատությունը այլևս իրողություն է մեզ համար: Իրողություն է նաև ժողովրդավարական արժեքների արդիականացումը:

Այո՛, ես երջանիկ եմ, որ հենց այս չճանաչված երկրի քաղաքացին եմ:

http://www.usarmenianews.com/am-n-9548.html

2017-09-07

ՀՐԱՏԱՐԱԿՎԵՑ ԻՄ ԳԻՐՔԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԴՍՏԵՐՍ՝ ՍՈՖՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

2016-ի՝ մանկավարժիս գործունեության լավագույն արգասիքն իմ երկու գրքերի հրատարակությունն է՝ «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» և «Մանկավարժի օրագիր» /մաս 1-ին/, որոնց նյութերը սոցկայքերից տեսանելի են եղել շատ ընթերցողների, արժանացել տարբեր մեկնաբանությունների, այդ թվում՝ գնահատողական խոսքերի: Այդ նյութերը տեղադրվել են Լոս Անջելեսի հայկական USArmenianews.com լրատվական կայքում, առանձնապես



այնտեղ գործող «Մանկավարժի անկյուն» բաժնում, որտեղ տեսանելի դարձան մանկավարժիս նյութերի նկատմամբ բազմաթիվ ընթերցողների համակրանքն ու հետաքրքրասիրությունը: Այդ հոդվածների մի մասը տեղ գտան նաև Հայաստանի Սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» պարբերականում, Արցախի և Սփյուռքի տարբեր մամուլներում, որոնք նույնպես նկատելի էին շատերին ու ողջունելի:

«Մանկավարժի օրագիրն» ունի ընթացք ու շարունակություն, և դեռ անհայտ է այդ շարունակականության ավարտը, քանի դեռ մանկավարժիս համար տեսանելի են իմ դպրոցն ու այնտեղ դասավանդվող աշակերտները, ուսուցիչներն ու նրանց վարած դասերը, հայրենի սահմանակից բնակավայրիս ապրումներն ու մանկավարժիս անհանգիստ տվայտանքները...Այս գիրքը ես եմ: Սա գիրք է, որ դեռ պիտի գրվի, քա-

նի դեռ հնարավորություն ունեմ իմ գրիչը ծառայեցնելու հանրությանը, ովքեր էլ նրանք լինեն, դա լինի իմ շրջապատում, իմ դպրոցում, իմ հայրենիքում, թե հայրենիքից դուրս՝ Սփյուռքում:

«Մանկավարժի օրագիրը» նույնպես հրատարակվեց ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության երաշխավորությամբ, նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Ղարախանյանի խմբագրությամբ, նաև՝ որպես նախաբան, գիտական իր գնահատողական խոսքով: Երախտագիտությունս նրանց, ովքեր հարգանքով ու սիրով ընկալեցին մանկավարժիս աշխատանքը և ճանապարհ հարթեցին՝ հնարավորություն ընձեռելով՝ հրատարակելու այս գիրքը:

«Մանկավարժի օրագիրը» դարձավ ինձ հարազատ ու շատ մտերիմ: Իմ կողքին զգալով նրա իսկ գոյությունը՝ ես սկսեցի լրացնել այդ օրագիրը, որ օր օրի ստվարանում էր, բացահայտում մանկավարժիս աշխատանքային գործունեությունը, իմ աշակերտների մտորումները, մեր անհանգիստ ապրումները, որ ուղեկցվում էին սահմանից եկող կրակոցների արձագանքներով, ապրիլյան պատերազմական օրերի սարսափներով, հայրենասիրական այն բոլոր դասերով, որ ոգեղեն էին դարձել՝ հաստատակամորեն մեզ գամելով այս հողին, որ այսքան սուրբ է, նահատակների արյամբ ներկված:

Այս օրագիրն ինձ հարազատ դարձած դպրոցի նորօրյա կյանքն է, դասարանից դասարան մտնող ուսուցչի աշխատանքային գործունեությունը, ով մտահոգ է սերնդի վաղվա օրով, ընդհանրապես՝ նրա ճակատագրով: Լավատեսությունը փայլում է այս օրագրում, որ միտված է նոր սերնդին տանելու դեպի լուսավոր ապագա: Սա գիրք է, որ հպարտության և ուրախության նրբերանգներով տեսանելի է դարձնում մեր դպրոցականների և ուսուցչուհուս մանկավարժական կյանքը, որ ինչքան ուսանելի, նույնքան դաստիարակչական է: Այս օրագիրը բացահայտում է աշակերտի և ուսուցչի մի նոր հարաբերություն, որ շատ մտերմական է, փոխադարձ հասկացվածության բարձր մակարդակով, դեռահասների անձնական հույզերի անհանգիստ վայրիվերումներով, մանկավարժի ուղղորդող խորհուրդներով: Այստեղ գործող անձերը դպրոցականներն են, ովքեր տեսանելի են իրենց շարադրություններով, ունեցած մտքերով, տարբեր կարծիքներով, ապրած անհանգստությամբ, միմյանց հանդեպ ունեցած վերաբերմունքով, ուսուցչի ու նրա աշխատանքի նկատմամբ ունեցած ակնածանքով:

Իմ մանկավարժական գործունեության մեջ ես վաղուց ինձ ազատություն եմ տվել, այդ իսկ ազատությամբ առաջնորդում եմ իմ աշակերտներին: Սա գիրք է, որ բացում է ընթերցողի համար ուսուցչի գործունեության լայն տարածքներ: Այս գիրքը ազդարարում է ուսուցչի բարդ ու դժվարին աշխատանքը, որ բազում նրբություններ ունի՝ կախված աշակերտի ու ծնողի հետ ունեցած հարաբերություններից, որոնցից էլ ծնվում են ուսուցչի հանդեպ ակնածանքն ու այն դրական բոլոր որակները, որի պատասխանատուն հենց ինքն ուսուցիչն է՝ իր մանկավարժական ու հոգեբանական ճշմարիտ ուղղվածությամբ: Այս գիրքը գալիս է նաև բարձրաձայնելու կրթության ոլորտում եղած այն թերությունների մասին, որ առկա են այս համակարգում:

Սա գիրք է, որտեղ արժևորվում է աշակերտի անհատականությունը՝ անկախ նրանից, թե նա ինչ կարողությունների և ընդունակությունների տեր է: Այստեղ չեն տարբերակվում աշակերտներն իրենց սովորելու շնորհով, նրանք հավասարապես ուշադրության կենտրոնում են, ուսուցչի կողմից սիրված: Ազատ են նրանք ուսուցչի հետ ունեցած հարաբերություններում, նաև՝ հարգալից ու համակրանքով լեցուն:

Այստեղ ի ցույց են դրվում դեռահասների տարբեր հուզական վիճակներ, որոնց զուգահեռվում է մանկավարժի կողմից հնարավոր մոտեցման ու հարթեցման ճանապարհը: Այստեղ ուսուցիչը երևում է նաև դասերից դուրս իր անձնական և անանձնական ապրումներով, նա հասարակության անդամ է, իր երկրի քաղաքացին, նաև՝ մտահոգ այդ երկրի ապագայով: Այս գիրքը գալիս է «ո՛չ» ասելու մանկավարժական քարացած ձևերին, սա գիրք է, որտեղ ուսուցիչն ինքն է իր համար ստեղծում դյուրընկալ պայմաններ ու այդ իսկ սիրով այն փոխանցում իր առջև նստած դեռահասներին:

Այս գիրքը մանկավարժիս անցած մեկ տարվա աշխատանքային կենսագրությունն է, որ ծնվեց ու դարձավ ուսուցչի ու աշակերտի համատեղ գործունեության դպրոցական տարեգրություն: Սա իմ ընտանիքի, իմ մտերիմների, իմ աշակերտների, նրանց ծնողների, մեր ուսուցիչների, հեռու և մոտիկ ապրող և ինձ հարազատ դարձած մարդկանց սպասվելիք գիրքն է, որ դժվարություններ հաղթահարելով՝ հրատարակվեց, որպեսզի մեծագույն սիրով նվիրեմ նրանց:

http://www.usarmenianews.com/am-n-9569.html



2017-09-11

ՄԻ՞ԹԵ ՈՒՍՈՒՑԻՉՆ ԱՐԺԱՆԻ ՉԷ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԻ...

Իմ օրագրային գրառումները երբեմն ընդհատվում են, այն օրերի պոռթկացող ապրումներս իրենց տեղը երբեմն զիջում են հիասթափությանս, որ նկատում եմ շրջապատում, մարդկային անտարբերության հորձանուտում: Գեղեցիկն արարելու իմ հակումը երբեմն հակադարձվում է, ու անշնորհակալության քայլերգն է կողքիս հնչում, որ առերեսվում է ինձ ու դառնում խոցելի: Լսած կա՞ք, որ փշաքաղվում է մարդը, երբ իր դաստիարակության արդյունքում անպտուղ է դառնում նաև իր աշխատանքը, երբ կանգնում է ճշտի ու սխալի միջակայքում:

Երբեմն հարցնում եմ, թե որտեղ է տարիների ընթացքում թույլ տված իմ սխալը, որ դարձել է ինձ մոտ գեղեցիկն արարելու ձգտում, դարձել է նպատակ, դարձել իմ օրերի ու տարիների անքնության պատճառը: Դողացող ձեռքերով շարել եմ տառերը, որ բառեր դառնան, ու բառի մեծ ու փոքրը նորից շտկել եմ, որ նոր միտք դառնա ու նոր ասելիք: Ու իմ երկխոսությունն այն դեռահասների հետ էր, որ երբեմն մենախոսություն էր դառնում ու մտերմիկ զրուցում էի նրանց հետ, որ երբեմն մի նոր հույզ էր դառնում, և այս ինքնավերլուծություններում փորձում էի գտնել ծագող խնդիրների լուծումը:

Իմ առջև նստած աշակերտներին ես նորից սովորեցնում էի այսօր այն «շնորհակալություն» բառի բարձրագույն արժեքը, որ անտեսում են երբեմն: Որտեղի՞ց է գալիս սխալը՝ ծնողների դաստիարակությա՞ն, թե՞ մանկավարժներիս անելիքի պակասն է, որի հետ առնչվում ենք շրջապատում: Մի՞թե ամեն անգամ պետք է բարձրաձայնենք, որ այդ ներգործուն շնորհակալը միայն բառ չէ բառապաշարում նստած: Ի՞նչն է խանգարում, որ մարդուն գնահատեն գոնե այդ միակ բառով, ինչու՞ է մարդը հեռանում դիմացինի մեջ լավ տեսնելու ցանկությունից, և ինչքա՜ն անպատասխան հարցեր կան...

Այս կյանքում որքա՜ն առատ են իմ շնորհակալությունները, որ սիրով շաղ եմ տալիս ամենուր, անգամ այն մեկ բառի համար, որ հարցնում են՝ ինչպե՞ս ես, այն ծաղկի համար, որ ինձ են ուղարկում, երբեմն ուզում եմ շնորհակալություն հայտնել այն անծանոթ մարդուն, ով կողքովս անցնելիս հանկարծ ժպտում է:

Ինչու՞ է դժգոհում աշակերտը, նաև խուսափում այդ հրաշալի «շնորհակալություն» բառից: Բանավոր ասելուց խուսափում են, երևի գրելն էլ դժվար է, բայց ո՞րն է դյուրինը...Մի՞թե դժվար չէ այն ճանապարհը, որ անցնում է ուսուցիչը, որպեսզի իր առջև նստած դպրոցականի անհատականությունն արժևորի, որպեսզի նրան նկատելի դարձնի աշխարհին...Գուցե ուսուցիչը պիտի պարտավորվա՞ծ զգա, որ իր անելիքն է դա, ու նա պիտի մեծարի, անընդհատ մեծարի իր աշակերտներին:

Ես այսօր անծանոթ երիտասարդից ստացա բազմաթիվ շնորհակալական խոսքեր: Այնքա՜ն բազմերանգ դրական հույզեր բերեցին հոգուս նրա շնորհակալությունները, որ փորձեցի մոռանալ իմ շրջապատում նկատածս բացասական հույզերը: Բայց ինչու՞ շնորհակալություն չասենք լավ արարքի համար, ինչու՞ ուսուցչին չասվեն շնորհակալական խոսքեր, երբ նա իրեն նվիրել է այդ աշակերտներին ուսուցանելու և նրանց կերպարներն արժևորելու գործին:

Սիրելինե՛րս, շնորհակալ լինելը մեծ ապրում ու զգացողություն է, շնորհակալություն ասելը՝ արժեք: Շնորհակալ լինելով՝ ընդարձակվում են մեր գոհունակության սահմանները, և մենք մեզ ավելի ինքնավստահ ենք զգում: Շնորհակալ լինելիս անհետանում են չարն ու նախանձը:

Դաստիարակե՛ք ձեր երեխաների մեջ շնորհակալ լինելու զգացման կարևորությունը:

http://www.usarmenianews.com/am-n-9590.html

2017-09-13

ԳԻՐՔԸ ՊԵՏՔ Է ՆՎԻՐԵԼ ԳՐՔԻ ՀԱՐԳՆ ԻՄԱՑՈՂՆԵՐԻՆ

Նախապատրաստվում եմ կազմակերպել իմ գրքերի շնորհանդեսը, բայց ինչու՞ են չարենցյան տողերով Աբովյանի ներքին մտորումներն ինձ հետ այս օրերին, գրողի վերջին օրվա հոգու հույզերը, թե որքանով է ճիշտ եղել, որ գիրք է գրել ու թողել սերունդներին. «Ի՞նչ է ասում այդ գիրքը և ի՞նչ է բարբառում. Զուր չէ՞ արդյոք վատնել անհատնելի իր ձիրքը...»:

Զրուցում եմ ինքս ինձ հետ, մենախոսում եմ շատ բարձրաձայն, ու իմ ասելիքը տարածական է դառնում, հասանելի շատերին, այն փռվում է ամենուր, որ հոգու կսկիծ է դառնում, մի ազնիվ նվիրում: Ես մենախոսում եմ, իմ անցած այն օրերի հետ եմ, երբ համացանցի լայն հնարավորություններից գաղափար անգամ չունեի: Ինձ համար անհասանելի մի տարածք էր սա, որի մասին չգիտեի, բայց հոգու խորքում մեծ ձգտում ունեի՝ գտնել մի ասպարեզ, որտեղ ասելիք ունենամ, նաև՝ լսարան: Ու գտա այն, գտա այս ընկերական տարածքը, որ իմ ներքին հոգու խմորումները տեսանելի դարձնեմ նրանց, լսեմ կարծիքներ, մտքեր փոխանակեմ...

Տարիների իմ մանկավարժական գործունեությունը դարձավ տեսանելի իմ շրջապատում, կամաց-կամաց այդ տեսանելիության տարածքներն ընդարձակվեցին, որտեղ դպրոցականներ կան կողքիս, ինձ հասկացող դեռահասներ, ու սեր կա մեր միջև, գեղեցիկ հարաբերություններ: Բայց լայնացավ այդ տարածքը, ու աշխարհից հեռու ծվարած Մարտակերտը տեսանելի դարձավ իր դպրոցով, իր աշակերտներով, այնտեղ դասավանդող ուսուցիչներով, իր անհանգիստ ապրումներով, ապրիլյան պատերազմական օրերով...

Ես ո՞վ էի, որ ձգտում էի գրել, ու իմ գրիչն իր արժանվույն տեղն ուներ այն հեռավոր ամերիկյան կայքի «Մանկավարժի անկյուն» գողտրիկ տարածքում, որտեղ բարեհամբույր մարդկանցով շրջապատված՝ շուտով ես ի տես դարձա շատերին: Ես ո՞վ էի, դասարանից դասարան

մտնող ուսուցչուհիս, ով 92-ի փախստականի պիտակ ուներ իր հետ, օտար ափերի սառնություն, հայրենադարձի դժվարին կացություն, որ դպրոց էր մտել ու ցանկանում էր իր նորարարությամբ մի նոր ազատություն տալ դեռահասներին, որ ընկալելի չէր ոմանց համար:

Իմ էությամբ ես ազատ եմ, ու իմ ազատությունը տարածեցի ամենուր, որ իմ առջև նստած աշակերտն իր խոսքը հնչեցնի համարձակ, որ պիտի դառնար մեր երկուսիս միջև ազատ հիմքերի վրա դրված երկխոսություն: Երբեմն իմ աշակերտների աչքին ես գեղեցիկ էի դառնում, որ ժպիտով էի ընդունում, երբեմն ես մեկն էի, ով կարող էր տխրել, ու նրանք ինձ հետ էին...Մեր դասերն սկսվում էին միմյանց որպիսություն հարցնելով, նրանց հույզերն իմն էին դառնում, որ կարողանամ հուսադրել, կարոտս անչափելի էր դառնում, երբ հանդիպման սպասումն էր մեզ բաժանում:

Ուսուցչի ու աշակերտի միջև փոխադարձ սիրո ու հարգանքի վրա ստեղծված այս հրաշալի հարաբերությունը տեսանելի դարձրի, որը կդառնար մանկավարժի փորձ, ուսումնական գործընթացի գեղեցիկ նվիրում, գուցե նաև ուրիշների սեփականությունը՝ որպես ուղեցույց դրանով իսկ առաջնորդվելու դեպքում: Ես ցանկացա իմ աշակերտները երևան, իսկ նրանք ինձ համար այս հող ու ջրի ազնիվ նվիրումի կերպարներ էին, որ հպարտությամբ լցված՝ ի ցույց էի դրել աշխարհին: Ես ուսուցիչ էի, ով սիրում էր իր մասնագիտությունը և այդ իսկ սիրով տեսանելի դարձնում իր աշակերտների հոգում կատարվող տեղաշարժերը, որ կապված էին հիմնականում սահմանամերձ բնակավայրիս անհանգիստ ապրումներով:

Ու ծնվեց մտահղացումը՝ իմ բոլոր նյութերը գրքեր դարձնել, որտեղ կլինեն նաև իմ առջև նստած դպրոցականները: Այդ գրքերը պիտի ազդարարեին սերնդի հանդեպ ունեցած իմ մեծագույն հավատի մասին...Ու հրատարակվեցին այդ գրքերը, որ սեր ունեն թերթերի արանքում, դեռահասների շունչ կա այնտեղ, ազատ խոսք ու միտք, կյանք կա այնտեղ, բայց տխուր է հոգիս... Աբովյանի մտորումներն եմ հիշում, երբ ցավալիորեն կոտրել են սիրտս, բայց նախապատրաստվում եմ շնորհանդեսի:

http://www.usarmenianews.com/am-n-9603.html

2017-09-17

ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐ Է «ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳԻՐԸ»

Գրքեր նվիրեցի 12-րդ դասարանի աշակերտներին, նաև գիտեի, որ սրտատրոփ սպասում են այդ գրքին, որտեղ իրենք էլ կերպավորված են իմ օրագրային գրառումներում: Այդ օրը նաև բացակայող աշակերտներ կային, ու իմ նվիրումը, որ գրչի մի քանի տողերով ուղղվում էր նրանց, ուղեկցվում էր նրանցից յուրաքանչյուրի կարծիքով, ոգևորությամբ, ուսուցչուհուս ուղղված որոշ հարցումներով, բավականության արտահայտությամբ, երբեմն ափսոսանքով, այդ գիրքը թերթելով, միմյանց ուղղված հիշողության արթնացումով:

Այդ գրքում բոլորն էլ հավասար են, չեն կարևորվում նրանց ընդունակությունները, անգամ խոսքը, որ ուղեկցվել է մեկ նախադասությամբ, այն մտել է այդ գիրքը, որ հիշողություն դառնա, դեռահասի այդ օրվա ապրում, որ երբեմն դժվարացել է իր միտքը գրավոր շարադրել, բայց բարձրաձայն ասված մի նախադասությունն էլ երբեմն ցնցել է ինձ, ու մատներիս անհանգիստ շարժումներով շարել եմ տողերը, որ դարձել է ուսուցչուհու և աշակերտի հույզերի արտահայտություն, անհանգիստ ապրած օրվա շաղախ, որպեսզի մնա գալիքի սերնդափոխության ճանապարհին:

Ես հայացքով փնտրում եմ նրան՝ Քրիստինե Մարդոյանին, ով այդ օրը չէր եկել դպրոց, բայց մտքերով նրա հետ եմ, իսկ նրա գրած տողերը՝ իմ հոգում. «Դա հետաքրքիր ու յուրատեսակ մանկավարժի մի օրագիր է, կարծես արձակի ու չափածոյի մի ուրույն դաշնություն, բայց սրտահույզ տողեր ու խոհեր մարդու, նրա ապրած կյանքի, ներաշխարհի ալեվետումների, կորցրածի ու գտածի, անցավորի ու հավերժականի մասին: Գրքի կերպարները նրբին հույզերից հյուսված ներաշխարհ ունեն, ինքնատիպ կամային որակներ, գեղեցիկի զգացողություն: Նրանք փորձում են ազատություն տալ հոգու զսպված ապրումներին, ներկայացնել երազայինը, աշխարհաճանաչման իրենց կերպարը:

Ուրախության ու ցավի, ապրած ու չապրած օրերի, հասկացված ու խաթարված հարաբերությունների, անկատար հույսերի ու ապրումների, իրականության և երազանքների հանդիպման վայր է «Մանկավարժի օրագիրը»:

Շնորհակալ եմ Ձեզ, տիկի՛ն Պողոսյան, ինձ նույնպես այս գրքի կերպար դարձնելու համար: Վստահ եմ, որ Ձեր այսքան ջանքերն ու չարչարմունքը մեծ հետաքրքրություն կառաջացնեն հասարակության լայն շրջանակներում»:

Այս օրերին տեսնում եմ, որ գիրքն ունենալու մեծ ցանկություն ունեն շատերը, հեռախոսային զանգերն անգամ երբեմն հիշեցնում են ինձ մարդկանց, որոնց վաղուց չեմ տեսել կամ չեմ էլ ճանաչում, բայց գրքի նկատմամբ ունեցած հետաքրքրությունն իսկ հաստատում է իմ աշակերտուհու վստահորեն ասած խոսքը, որ իզուր չեն անցել գիրք ստեղծելու ճանապարհին իմ ջանքերն ու չարչարմունքը, երբ «Մանկավարժի օրագիրը» ընթերցողներ ունի:

http://www.usarmenianews.com/am-n-9617.html

2017-09-18

ՀԱՄԵՍՏ ԱՇԽԱՏԱՎԱՐՁՈՎ ՏՊԱԳՐՎԱԾ ԳԻՐՔ

Ֆեյսբուքյան ընկերության մեջ իմ կողմից շատ հարգված անհատականության՝ Անահիտ Մարգարյանի առաջարկը որքան հաճելի, նույնքան ցավոտ էր ինձ համար, երբ կարդացի նրա տողերը.

«Նատաշա՛ջան, ես կցանկանայի, որ գիրքը լիներ բոլոր դպրոցներում և բուհերում, դա յուրահատուկ դաս է, որ պետք է իմանա ոչ միայն մեր մատաղ սերունդը, այլև ամբողջ աշխարհի երիտասարդությունը: Եթե իսրն ենք մտածում, դա սովորական դաս չէ, դա մարդկային վերաբերմունք է բոլորին, ովքեր նոր են կյանք մտնելու: Հպարտ ենք Ձեզնով: Էլի գրե՛ք: Մեզ պետք է, որ գրեք...Մենք հավատում ենք Ձեզ ու անհամբեր սպասում, գրե՛ք ...»:

Ես ցանկացա արձագանքել այդ արդարացի առաջարկությանն իմ այս նյութի հրապարակումով: Այո՛, դժվար է ինձ համար արձագանքել այս առաջարկությանը, թե ինչու այս գիրքը չլինի բոլոր դպրոցներում և բուհերում, առավելապես, երբ 2013-ին ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված և նրանց ֆինանսական միջոցներով հրատարակված իմ առաջին գիրքը՝ «Ուսուցչի իմ թղթապանակը» մեթոդական ձեռնարկը, բաժանվել էր Արցախի բոլոր դպրոցներին, իսկ անցած տարի Արցախի պետական համալսարանի բանասիրականում ուսուցանվել էր այդ ձեռնարկով:

«Մանկավարժի օրագիրը» ուսուցչի գիրք է իր աշակերտների մասին. այն բացառիկ է իր տեսակով, բայց ցավալի է, որ չունեցավ օգնող ձեռք: Չգիտեմ ինչու, անտարբերության մատնվեց այս գրքի հրատարակությունը: Եղան պատկան մարմիններ, որ չկարողացան օգնել՝ գումար չունենալու պատճառով, եղան մարդիկ, որ հնարավորություն ունեին, բայց անուշադրության մատնեցին: Այս գրքի հրատարակությունը մնաց ուսուցչուհուս համեստ աշխատավարձի հաշվին:

Գիրքը հրատարակվեց Ստեփանակերտի «Դիզակ» հրատարակչության տնօրենի բարյացակամ միջնորդությամբ, այն պայմանով, որ հրատարակության ծախսերը կարողանամ փակել մի քանի ամսվա ընթացքում: Հույսեր եմ փայփայում, որ կկարողանամ գումար հայթայթել, բայց այս 250 օրինակը հրատարակվեց, որ նվիրեմ նրանց, ովքեր դարձան իմ գրքի գործող կերպարները: Այն հրատարակեցի, որ նվիրեմ արժանավորների, ովքեր սրտատրոփ ու ազնիվ նվիրումով սպասել են այդ գրքի հրատարակությանը: Օրերս այդ գիրքը նվիրում էի մեր ուսուցիչներին, աշակերտներին, իմ մտերիմներին, ընթերցողներին, բայց գրքի սահմանափակ քանակով չեմ կարողանում շատ-շատերին ընդառաջել:

Սահմանամերձ Մարտակերտի միջնակարգ դպրոցում դասավանդող ուսուցչուհուս մեկ տարվա օրագրային գրառումները դարձել են գիրք, դարձել է իրական պատմություն, որ սահմանից եկող կրակոցների արձագանքների տակ է գրվել: Այդ օրագրային գրառումները, որ տեղադրվում էին Լոս Անջելեսի հայկական USArmenianews.com լրատվական կայքում, առավելապես ուսուցչուհուս նյութերի համար բացված «Մանկավարժի անկյուն» բաժնում, տեսանելի դարձան հազարավոր ընթերցողների:

Այդ գրքում ապրիլյան պատերազմի ականատես դպրոցականներն են, նրանց ուրախ և տխուր ապրումները... Այդտեղ խաղաղ ապրելու երազանքներ կան, նոր սերնդի բարձրակոչ աղաղակ, հայրենի հողի սեր կա, կորստյան ցավ, համառ ապրելու կամք կա, հայրենասիրության բազում դասեր, որոնք ի ցույց են դրվել աշխարհին, որ այս սերունդն իր անհողդողդ կամքով ուսանում է սահմանամերձ բնակավայրում՝ ո՛չ ասելով արտագաղթին ու այն դաժան պատերազմին, որ ճակատագրեր է կործանում, իր շուրջը ավերածություններ փռում:

Այդ գրքում երկու պատերազմ տեսած, Արցախյան ազատամարտի տարիներին հայրենի օջախից բռնագաղթված, օտար ափերի սառնությունն իր վրա զգացած ու 95-ին հայրենադարձված և դասարանից դասարան մտնող ուսուցչուհուս անհանգիստ մտորումներն են, որ շարադրել է մտքերը երբեմն արցունքախառն, երբեմն՝ սարսափած, երբեմն՝ հուզախառով հոգով, երբեմն՝ ծիծաղկոտ...Հանձնվել է այն թղթին, որ այս սերնդի մասին այն նոր եկող սերունդներն ընթերցեն, որ իմանան նաև տարհանվածներիս մասին, որ տեղեկանան նկուղաբնակներիս հոգու ալեբախությանը, որ հասկանան անգամ այս կյանքում այն ցողի կաթիլի ջերմությունն այնպես, ինչպես ես եմ զգացել գիշերային

հրետակոծությունից հետո, երբ վախվորած դուրս եմ եկել բորբոսնած ու խոնավ նկուղից ու մտերմորեն այն փոքրիկ ցողը բռանս մեջ դրել և ուրախությամբ ժպտացել, որ փրկվել ենք մենք:

Սա ուսուցչի ու աշակերտի երկխոսությամբ ստեղծված գիրք է, նրանց մտերմիկ հարաբերությամբ ամրագրված օրագիր, որ սովորեցնում է ապրել, այն սովորեցնում է գոտեպնդվել հողի, հայրենի օջախի նկատմամբ ունեցած սիրուց, սա գիրք է, որ սովորեցնում է հարգել անմահների հիշատակը, այս գիրքը սերնդի միջոցով բարոյական որակներ է սերմանում մարդու մեջ, այն սովորեցնում է դիմակայել դժվարություններին, ապրել գալիք լուսավոր օրերի երազանքներով:

Սա գիրք է, որի առաջին մասն է հրատարակվել, այն ունի շարունակություն, որը մինչև տարեվերջ կհամալրվի՝ որպես «Մանկավարժի օրագրի» երկրորդ մաս, որտեղ աշակերտների կողքին ուսուցիչներ կան ընդգրկված: Այս գիրքը դպրոցական կյանքի նկարագրությամբ հավատ ու սեր է սերմանում շրջապատին, բայց որքա՜ն ցավալի է, որ նրա հրատարակությունը դարձավ մանկավարժիս աշխատավարձի սուղ միջոցներից կախված նվիրում, իսկ գրքի շարունակության հրատարակությունը ֆինանսական միջոցների պատճառով անհավանական է դարձել:

http://www.usarmenianews.com/am-n-9622.html

2017-09-18

ԻՐԱՊԵՍ ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ՀԱՐԳԵԼԻ ՏԻԿԻՆ ՆԱՏԱՇԱՅԻ ՀԵՏ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ ԵՆՔ

Նատաշա Պողոսյանն Արցախի վաստակավոր ուսուցչուհի է, ով ոչ միայն մատաղ սերնդի հիանալի դաստիարակ է և իր մասնագիտության առաջատարը, այլև Արցախյան գոյամարտի օրինակելի կրողը:

Ապրիլյան թեժ օրերի արցախցու իրական վիճակը, ապրումները, դաժան առօրյան մենք տեղեկանում էինք տիկին Նատաշայի օբյեկտիվ գրառումներից: Ուրախանում էինք նրա սաների հաջողված ստեղծագործություններով, տխրում նրա մտերիմների կորստով մարտի դաշտում, քաջալերվում նրա տոկունությամբ...

Տիկին Նատաշան այդ բոլորը հաջողությամբ ամփոփել է իր վերջին երկու գրքերում՝ «Մանկավարժի օրագիր» և «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին»:

Ի դեպ, հուրախություն ինձ, մենք արդեն պայմանավորվել ենք, որ ես նվեր կստանամ այդ սպասված գրքերն իր ինքնագրով և կարդալուց հետո արժանիորեն կտեղավորեմ դրանք իմ հարուստ գրադարանի ինքնագրով գրքերի բաժնում (որտեղ առկա են Վիլյամ Սարոյանի, Պերճ Զեյթունցյանի, Համո Սահյանի, Մկրտիչ Սարգսյանի և այլ երևելիների՝ ինձ նվիրված գրքերը):

Տիկի՛ն Նատաշա ջան, հուսով եմ որ մեր ամենօրյա ֆեյսբուքյան բովանդակալից շփումները բարեհաջող կշարունակվեն՝ փոխադարձ հարստացնելով մեր ներաշխարհը, հուսամ՝ ռեալ կյանքում էլ կհանդիպենք:

Մարտակերտն ինձ համար էլ հարազատ է, քանի որ որդիս երկու տարի ծառայել է Մատաղիսի դիրքերում և առիթի դեպքում հաճույքով նորից կգայի ձեր հայրենական եզերքը:

Արշակ ԱՐԶԻԿՅԱՆԻ ֆեյսբուքյան էջից
http://www.usarmenianews.com/am-n-9627.html

2017-09-19

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ, ՈՒՄ ԳՈՒՑԵ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ ԱՎԵԼԻ ԳՆԱՀԱՏԵՆՔ

«Ուսուցչուհի, ում գուցե տարիների հեռվից ավելի գնահատենք»,- նորից եմ ընթերցում տողը... Սա անակնկալ էր, ճշմարտություն, որ մատուցեց ինձ 12-րդ դասարանում սովորող իմ աշակերտուհին՝ Սեդա Գրիգորյանը: Այս սիրուն, համեստ ու խելոք արցախադստեր մոտ միշտ էլ լսել եմ ճշմարտության ճիչը, որ երբեմն բարձրակոչ աղաղակի է վերածվել՝ որպես դեռահասի խոսք՝ ուղղված աշխարհին: Դա սահմանին մոտիկ ապրող մարդու կոչ էր, երբեմն հույզերի շղթա, որ թղթին հանձնած տողերը նա երբեմն մեկնել է ինձ, որ իր ուսուցչուհին մասնակիցը դառնա իր և նրա սերնդակիցների հոգու ընդվզումներին, և դրանք արժանվույն տեղ են գտել «Մանկավարժի օրագրում»:

Չասված խոսքեր կան այս օրերին, որ երբեմն չեմ կարողանում բարձրաձայնել, բայց պատահում է, որ լավագույն որակումների ու ազնիվ արարումների կողքին թևածում են նաև անտարբերությունն ու խեթ հայացքները: Թվում էր՝ պիտի թևաթափ լինեի, բայց տարիների տառապալից ու ոգևին ապրած օրերից հետո զգում եմ, որ հիասթափությունն ինձ համար չէ: Ու կարծես իմ հոգու ալեվետումներին էր ընդառաջել աշակերտուհիս, ում տողերում գտնում եմ ինձ՝ մանկավարժիս:

«Որոնող, անհանգիստ, անարդարությունը մերժող, լավն ու լուսավորը գնահատող, բազմաթիվ դժվարություններ հաղթահարած իմ ուսուցչուհին, իր պրպտող տեսակին հարիր, մի մեծածավալ գործ է կատարել: Այսօր երևի ամենադժվարն իմ սերնդակիցներին գիրք կարդալ սովորեցնելն է: Գրավիչ ու հասանելի համացանցն իր բազմաբնույթ տեղեկատվությամբ կլանել է մեզ ու մեր ժամանակը: Նա կարողացավ մեզ կարդալ, մտածել, վերլուծել սովորեցնել: Նրա պահանջկոտությունը, հետաքրքրություն առաջացնելու կարողությունը մեզ մտածող ու ստեղծագործող անհատներ դարձրին:

Յուրաքանչյուր հայ, առավել ևս՝ արցախցի, պետք է կարողանա դասեր քաղել պատմությունից և վերլուծություն անել: Պիտի կարողանա սիրել ու գնահատել իր երկիրն ու հողը: Պիտի կարողանա արժևորել ընկերոջը, մերձավորին, հայրենակցին ու դրացուն: Պիտի կարողանա գնահատել ամեն խաղաղ բացվող առավոտը ու միաժամանակ ձգտի կատարելության: Հենց այսպիսին է մեր ուսուցչուհին, ում գուցե տարիների հեռվից ավելի գնահատենք:

Շնորհակալություն Ձեզ, տիկի՛ն Պողոսյան, այն ամենի համար, ինչ տվել եք մեզ, մտածելու այն կերպի համար, որ կյանք ենք տանելու... Նրա համար, որ այսօր նաև՝ երևի անսխալ ու անկաշկանդ, կարողանում եմ շարադրել մտքերս»:

Իմ սիրելի՛ աշակերտուհի Սեդա Գրիգորյան, տողերդ հուզել են ինձ: Մեր շրջապատում երբեմն լավը չտեսնելու միտումը տեսանելի է դառնում մեզ, բայց դու ուսուցչուհուդ ուղղված գնահատանքի խոսքերով ինձ լսելի դարձրիր իմ ներկան, նաև տեսանելի դարձրիր այն գալիքը, որտեղ իմ լինելությունն է կասկածի տակ, բայց համոզված եմ, որ թումանյանական լավ գործի անմահության գաղափարով դու և քո հասակակիցները կշարունակեք առաջնորդվել և ձեր հնչեցրած անուններին մեջ կլինի նաև ուսուցչուհուդ անունը:

http://www.usarmenianews.com/am-n-9638.html

2017-09-21

ՍԻՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒ ՁԵՐ ԱՆԹԵՐԻ ԿԵՐՊԱՐԸ

11-րդ գ դասարանում այս ուսումնականից սկսեցի դասավանդել: Տպավորությունս բարձր է ոչ այնքան աշակերտների սովորելուց, որքան նրանց ուշադիր հայացքներից, որ կլանում են իմ ամեն մի խոսքը: Դասանյութը պատմելու պատրաստակամություն հայտնած աշակերտուհուն՝ Տաթևիկ Ղահրամանյանին, հիացմունքով լսեցի, ամենաբարձր գերազանց «10» գնահատականը, որ նշանակեցի, զարմանալի էր թե՛ դասանյութը պատմողի և թե՛ մնացած աշակերտների համար: Որպեսզի հետո նա ցանկություն հայտնեց կարդալու տետրի թերթերի վրա ինչ-որ շարադրանք, որ գրել էր տանը: Ես չէի կարողանում ընդհատել նրան, բայց նաև չկարողացա թաքցնել հուզմունքս, որ պարուրել էին հոգիս նրա անկեղծ խոսքերը:

«Ես այսօր, հակառակ իմ սովորության, ուզում եմ խոսել ոչ թե իմ մասին, այլ տիկին Պողոսյանի, ով մեզ նույնպես դասավանդում է և գրքերի հեղինակ է: Երբ ամեն անգամ իր խոսուն հայացքով մտնում է դասարան, անկախ ինձանից՝ սիրտս լցվում է բերկրանքով, ու ամեն մի ժամը հեքիաթ է թվում ինձ, չավարտվող հեքիաթ: Մի անկեղծ, անբացատրելի սիրով նա կապված է բոլորիս հետ, նա չի տարբերակում լավ թե վատ սովորողներին, նա առ աշակերտները տածում է մի անկեղծ սեր, որտեղ չկա երկմտանք, չկա տարակուսանք, այլ կա լոկ սրտաբուխ սեր: Իր անկեղծությամբ նա նույն անկեղծությունն էլ տարածում է մեզ վրա և համարձակություն է սերմանում մեր մեջ ազատ ու անկաշկանդ արտահայտվելու համար:

Ես կարծում եմ՝ նա հասկանում է բնության լեզուն, գիտի զգալ ամեն մի արտասովոր երևույթ, նաև կարողանում է թափանցել աշակերտի ներաշխարհը: Նրա ուշադրությունից ոչինչ չի վրիպում, ոչի՛նչ, անգամ ամենասովորական երևույթների մեջ նա կարողանում է նշմարել արտասովոր գծեր: Այո՛, ես կասեի՝ նա ընկալում է աշխարհն այլ տեսանկյունից, ընկալում է այնպես, ինչպես կընկալեն միայն բնության լեզուն

հասկացողները:Կարծես միայն նրան է տրված հազարավոր խճճված ճանապարհների միջից գտնել աշակերտի հոգին տանող ճանապարհը:

Թափանցելով մեր հոգու հորձանուտները՝ նա փորձում է գտնել այն տարաբնույթ հարցերի պատասխանները, որոնց մասին նույնիսկ չգիտենք մենք: Անգամ կզարմանաք՝ իմանալով, որ ինձ չդասավանդելով հանդերձ՝ ես էլ հայտնվել եմ նրա կերպարների շարքում, և ի՞նչը կարող է ավելի մեծ երջանկություն բերել աշակերտին, քան ուսուցչի կողմից ուշադրության արժանանալը, քան ջերմ ու անքակտելի սիրով պարուրված լինելը:

Երբեմն ինձ թվում է, թե նա մեզ ավելի լավ է հասկանում, քան մենք, և երևի հենց դա է պատճառը, որ միշտ արդարացումներ է գտնում մեր սխալների համար: Դեղեցիկ ու լուսավոր սերունդ տեսնելու ակնկալիքով նա իր ամբողջ ջերմությունն ու լույսը տարածում է ամենուր՝ անգամ առանց տարակուսելու, որ կգտնվեն այնպիսիները, ովքեր կարող են չգնահատել, քանի որ նա անգամ չարությամբ ու դառնությամբ լեցուն օվկիանոսի մեջ կարող է գտնել բարության ու սփոփանքի կաթիլներ:

«Ես ձեզ սիրում եմ»,-սա մի սրտաբուխ խոստովանություն էր, որ անկեղծորեն հնչեցրել է նա օրեր առաջ: Մենք էլ Ձեզ ենք սիրում, տիկի՛ն Պողոսյան, սիրում ենք Ձեզ և ուսուցչուհու Ձեր անթերի կերպարը: Միշտ ասում եք, որ իդեալներ չկան, որ ոչ ոք իդեալ չէ, բայց Դուք իդեալ եք ինձ համար, և ես անթաքույց խոստովանում եմ դա»:

Ես կարկամել էի, առավելապես նրա վերջին խոսքերը հուզել էին ինձ, ինչպե՞ս կարող էի անթերի լինել....Շնորհակալական խոսքեր էի մրմնջում ու անհամբեր սպասում զանգի ձայնին, որ աչքերիս արտացոլանքի այն մշուշե քողն այս դեռահասները չնկատեին:

http://www.usarmenianews.com/am-n-9646.html

2017-09-22

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ, ՈՎ ԻՄ ՀԱՄԱԿՈՒՐՍԵՑԻՆ Է ԵՂԵԼ

Մելսիկ Արամայիսի Զաքարյանը Հրազդան քաղաքի հ. 11 հիմնական դպրոցի տնօրենն է, ում տարիների հեռվից եմ տեսնում՝ դեռևս ուսանողական օրերից: Աշխատասեր ու պրպտուն իմ համակուրսեցին նաև մեր ավագն էր: Ես նրան չճանաչեցի, երբ ֆեյսբուքյան տարածքում ընկերությունն ընդունեցի, բայց նորից տարիքը եկավ զգացնել տալու իրեն, որ երեքուկես տասնամյակ է անցել բուհն ավարտելուց հետո, և զարմանալ պետք չէ, որ տարիներն իրենց կնիքն են դրել մեզ վրա, և յուրաքանչյուրս ունենք մեր ընտանիքը, իսկ այնտեղ երեխաների կողքին ծլարձակում են նաև մեր թոռնիկները:

Դա անակնկալ էր, որ ինձ տարավ դեպի այն անցած ուսանողական տարիների հիշողությունները...Այնքան էլ կարևոր չէր՝ ափսոսա՞նք կար այդ անդարձ գնացած օրերի համար, թե՞ հպարտության զգացումն էր գերիշխում հոգումս, որ երկար տարիների դպրոցի տնօրենի աշխատանք է վարում Մելսիկ Զաքարյանը, երբ նրան խնդրեցի ներկայացնել իր մանկավարժական գործունեության մասին՝ անմասն չթողնելով նաև այն դպրոցը, որտեղ մեծագույն վաստակ ունի նա:

1982 թ-ին մենք երկուսս էլ գերազանցության դիպլոմով ավարտեցինք Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը: Հաջորդ տարիների նրա աշխատանքային գործունեության մասին տեղեկանում եմ Մելսիկ Զաքարյանից, որ նույն թվականի սեպտեմբերից մանկավարժական աշխատանքի է անցել Հրազդանի Ավ. Իսահակյանի անվան հ.9 միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար և հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ:

1993-ից նշանակվել է Հրազդան քաղաքի հ.11 միջնակարգ դպրոցի տնօրեն, որտեղ աշխատում է մինչև օրս: Զբաղվել և զբաղվում է հասարակական ակտիվ գործունեությամբ, բազմիցս ընտրվել է քաղաքի ավագանու անդամ: Մի շարք հոդվածների հեղինակ է: Իր մանկավար-

ժական գործունեության ընթացքում պատկան մարմինների կողմից բազմիցս արժանացել է պատվոգրերի և շնորհակալագրերի: 2016 թ. մասնակցել է «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթին և «Դեղագիտական դաստիարակության լավագույն փորձի համար» անվանակարգում հաղթող ճանաչվել: Նաև ուսանողական տարիներից հիշեցի Կարինե Ստեփանյանին, ում հետ գեղեցիկ ընտանիք է ստեղծել, նա էլ ուսուցչուհի է, ունեն երկու տղա և երեք թոռնիկ:

Իսկ դպրոցի պատմության մասին տեղեկացա, որ «ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան հ. 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հիմնվել է 1970 թ. որպես միջնակարգ դպրոց: 2008թ. ՀՀ կառավարության որոշմամբ այն անվանակոչվել է հանճարեղ գրող Վիլյամ Սարոյանի անունով: Հետագայում՝ 2009 թ.-ից «Հրազդանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.1 հատուկ /օժանդակ/ դպրոց» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվել է՝ միացվելով այդ դպրոցին՝ դառնալով հատուկ կրթության ստորաբաժանում:

2012 թ. ՀՀ կառավարության որոշմամբ «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան հ. 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը վերակառուցվել է որպես հիմնական դպրոց: 2014թ. դպրոցն իրականացնում է նաև ներառական կրթություն: Դպրոցում աշխատում է 51 ուսուցիչ, նրանցից մեկը ՀՀ վաստակավոր մանկավարժ է: Ստորաբաժանումում աշխատում է 7 ուսուցիչ: Աշակերտների ընդհանուր թիվը 2016-17 ուստարում կազմում էր 1091 աշակերտ, ստորաբաժանումում՝ 21, իսկ 19 աշակերտ ստանում է ներառական կրթություն: Մեկ ուսուցչին ընկնող աշակերտների թիվը կազմում է 21 աշակերտ:

Առանձնակի հետաքրքրությամբ ծանոթացա Մելսիկ Զաքարյանի մանկավարժական գործունեությանը, նրա ղեկավարած դպրոցի պատմությանը, որին զուգահեռվեց այսօր 12-րդ դասարանի իմ աշակերտուհիներից մեկի հարցումը, թե արդյոք իր ուսուցչուհին ճանաչում է Հրազդանի դպրոցներից մեկի տնօրենին, ով տարիներ առաջ իր համակուրսեցին է եղել: Որքա՜ն զարմանալի, նույնքան հաճելի էր, որ

հնարավորություն ստեղծվեց վերջերս հրատարակած իմ գրքերից՝ որպես նվեր, փոխանցելու նրան: Նաև այս հրապարակումով մեծագույն ակնածանքս այդ դպրոցի բոլոր մանկավարժներին՝ հանձին այդ կրթօջախի տնօրեն Մելսիկ Զաքարյանի, ով վաղուց իր համակուրսեցիների համար եղել է հարազատ մարդ, տարիների իր վաստակով դարձել կրթական ոլորտի լուսավոր անհատականություններից մեկը:

http://www.usarmenianews.com/am-n-9657.html

Հ. Գ. Իմ շատ հարգելի՛ Նաիրաշա, իմ և իմ ղեկավարած դպրոցի մասին գրածդ հոդվածը ,անկեղծանամ, անակնկալի բերեց ինձ, շնորհակալ եմ...շնորհակալ եմ: Մեզնից հեռացած դասնամյակները անկարող եղան փշրելու մեր հիշողությունները, արցախյան հայրենի քաղցր հիշողությունները՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատերի ներքո այլևս հավերժացած: Ես իսկապես շատ ուրախ եմ քո և՛ ստեղծագործական, և՛ աշխատանքային հաջողություններով:

Մելս ԶԱՔԱՐՅԱՆ

2017-09-25

ԳԵՂԵՑԻԿ ԱՆԱԿՆԿԱԼԸ

8-րդ ա դասարանում սովորող աշակերտուհուս առեղծվածային ժպիտը անսովոր թվաց ինձ: Ինչ-որ մի բան կար, որ ցանկանում էր ցույց տալ: Շուտով սեղանին դրեց փոքրիկ համակարգիչը, բացեց այն, և ահա ընթերցում եմ. «Տեսանյութը նվիրվում է Նատաշա Պողոսյանի գրքերի շնորհանդեսին»: Այնուհետև նկարներ, բազմաթիվ նկարներ, որտեղ մենք ենք...

Ու կամաց-կամաց այդ նկարները տեսանելի են դառնում, որ ուղեկցվում են մեղմ երաժշտությամբ, ու դրանցից յուրաքանչյուրը մի պատմություն ունի իր ներսում, որ տանում է մեզ դեպի անցյալի հիշողությունները ու բերում ներկան, որտեղ գրքեր կան հրատարակված, և աշակերտուհու անակնկալ կա, որին շնորհակալական զգացումով եմ արձագանքում:

Շուտով իմ ձեռքին հայտնվում են նրա՝ Մալենա Մուսայելյանի տողերը, որ թղթին էր հանձնել օրեր առաջվա տպավորություններով. «Դպրոցական օրերից մեկն էր: Պատահական դպրոցի միջանցքում լսեցի, որ մեր դասղեկ տիկին Պողոսյանը հրատարակել է իր հերթական գրքերը: Այդ պահին աննկարագրելի էր, թե ինչ ուրախություն ապրեցի: Կարծես մի փոքրիկ աշխարհի հերոսուհի էի դարձել, նաև հպարտ էի, որ ունեմ այնպիսի ուսուցչուհի, ով մեզ հնարավորություն տվեց՝ լինելու մի գրքում, որը մի քանի օրերի ընթացքում բազմաթիվ ընթերցողներ ունեցավ:

Ուրախ տրամադրությամբ գնացի տուն և ամբողջ օրը մտածեցի, թե ինչ անակնկալ մատուցեմ ուսուցչուհուս: Ախր գիտեի, որ չէի կարող նրա արած գործին համապատասխան ինչ-որ մի բան անել: Հետո մտածեցի, որ կարելի է նախապատրաստվելիք շնորհանդեսին ընդառաջ՝ իմ ձեռքով մի տեսանյութ պատրաստել:

Ուսուցչուհուս նկարներից մի քանիսն ընտրեցի, ապա գրքերի նկարները տեղադրեցի, այնուհետև տարբեր դասարանների աշակերտների, նաև՝ ուսուցիչների խմբանկարներ: Հերթով դասավորեցի դրանք, վերջում

մի շատ գեղեցիկ կոլաժ ստացվեց, նաև այդ նկարների ցուցադրությանը զուգահեռ՝ ընտրեցի մի երաժշտություն, և շուտով տեսանյութը պատրաստ էր: Շատ ուրախ եմ, որ իմ անակնկալն ստացվեց, իմ ուսուցչուհուն դուր եկավ այն: Հիմա ես ունեմ իմ անհատական գիրքը, որ տիկին Պողոսյանն է նվիրել ինձ: Հուսամ՝ ես կարդարացնեմ նրա սպասելիքները, որ կապված է մեր բոլորիս, ընդհանրապես, նոր սերնդի հետ»:

Այո՛, դա գեղեցիկ անակնկալ էր, որի համար գոհունակությունս ցանկացա արտահայտել այս հրապարակումով, նաև հաջողված էր այդ տեսանյութն այնքանով, որ որոշեցի այն ցուցադրել սեպտեմբերի 28-ին Մարտակերտի մշակույթի ու երիտասարդության կենտրոնում կայանալիք իմ գրքերի շնորհանդեսի ժամանակ:

http://www.usarmenianews.com/am-n-9662.html

2017-09-29

ՀԱՆԴԻՊՈՒՄ, ՈՐՏԵՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՇՆՉՈՎ ՍՓՅՈՒՌՔ ԿԱՐ, ԱՐՑԱԽԱԿԱՆ ԲՈՒՅՐ

Ուսուցչուհուս գրքերի շնորհանդեսի արձագանքը որքան զարմանալի, նույնքան հաճելի էր, որ անգամ Արցախի հեռուստատեսությամբ հայտարարվեց Մարտակերտում կայանալիք շնորհանդեսի մասին: Մուտքն ազատ էր բոլորի համար, որ կազմակերպվեց մշակույթի և երիտասարդության կենտրոնում սեպտեմբերի 28-ին:

Միջոցառումն ավելի մեծ հետաքրքրությունների առիթ տվեց, որ միանգամից երկու գիրք է լույս ընծայվել՝ «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին»՝ նվիրված Լևոն Ադյանի գեղարվեստական արձակին՝ ի հիշատակ նրա կյանքից անժամանակ հեռացած որդիներին, և «Մանկավարժի օրագիր»՝ ուսուցչուհի դստերս նվիրված, որի առանցքում իմ մանկավարժական գործունեության տարեգրությունն է՝ Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի ուսումնական կյանքը՝ սահմանամերձ բնակավայրի անհանգիստ ապրումներով:

Շնորհանդեսին մեծագույն շուք տվեցին սեպտեմբերի 27-ին Պետերբուրգից Մարտակերտ ժամանած մեր հայրենակից արձակագիր Լևոն Ադյանը, նրա տիկին Էլմիրա Ադյանը և Լոս Անջելեսից՝ այն հեռավոր ամերիկյան քաղաքից, մեզ այցելած բանաստեղծուհի Նելլի /Ավակովա/ Գրիգորյանը:

Ֆեյսբուքյան տարածքում հաստատված ընկերությունը գրողի ու բանաստեղծուհու հետ կարծես եռամիասնություն էր ստեղծել ուսուց-

չուհուս համար և կարճ ժամանակում այն պիտի դառնար ավելի մտերմական՝ ամրագրված անցած տարվա մեր առաջին հանդիպման տպավորություններով: Այս նոր հանդիպումն իմ ընտանիքի և օտար ափերից եկած հյուրերի հետ բարեկամական էր, հարազատական, որտեղ հայկական շնչով սփյուռք կար, արցախական բույր և այն հեռուներում կարոտով ապրող հայություն:

Այս օրերին դպրոցականների հետաքրքրասեր հայացքներում Լևոն Ադյան գրողն էր, նրա տիկինը, ովքեր մեծագույն վիշտ ունեն իրենց հոգում, և ահա այնքան տարածություն հաղթահարելով՝ եկել են մասնակցելու այդ գրքերի շնորհանդեսին: Աշակերտների՝ ինձ ուղղված հարցումներում նրանց զավակներն են՝ Սիեր և Զորայր Ադյանները, որոնց հանդեպ վշտամորմոք կսկիծ կա, իսկ նրանց ծնողների հանդեպ՝ խոնարհում:

Դեռահաս հարցասերների զրույցներում այն հեռավոր Ամերիկայում ապրող հայուհին է...Արցախ այցելելու մեծագույն կարոտով ու ցանկությամբ այս օրերին նորից մեր կողքին է բանաստեղծուհի, նաև՝ թարգմանչուհի Նելլի Ավակովան, ով վաղուց բարեկամության մի գեղեցիկ կամուրջ էր գցել Ադյանների հետ՝ միշտ էլ բարձր գնահատելով արձակագրի վարպետությունը բառ ստեղծելու և արարելու գրողական իր ուրույն արվեստով:

Միջոցառման սկիզբը թախծախառն էր, հուզումնալից: Արտասվախառն մայրական մորմոք կար այնտեղ, որդեկորույս հայր՝ հայացքները հառած իրենց որդիների նկարներին ու բեմ բարձրացած ուսուցչուհուս և աշակերտների տխրամած խոսքերին: Բայց նրանց հոգում հպարտության զգացում կար, նաև բերկրալից ապրումներ ուսուցչուհուս հանդեպ, որ հիշատակի մի նոր էջ էր բացել, հիշողության արթնացում՝ որպես սփոփանք Լևոն և Էլմիրա Աղյաններին:

http://www.usarmenianews.com/am-n-9687.html

2017-09-30

ԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ

Շնորհանդեսի բացման խոսքը պատկանում էր ուսուցչուհուս: Ողջույնի խոսքս ուղղված էր այս միջոցառմանը մասնակցող Սփյուռքի, Հայաստանի և Արցախի բոլոր հյուրերին, Մարտակերտի հասարակությանը, շրջկենտրոնի երկու դպրոցների տնօրենությանը,

ուսուցիչներին, աշակերտներին, նրանց ծնողներին, բոլոր նրանց, ովքեր հարկ էին համարել մասնակցելու շնորհանդեսին: Մեծագույն երախտագիտություն ուղղված էր հեռավոր Պետերբուրգից Մարտակերտ ժամանած մեր համերկրացի արձակագիր Լևոն Ադյանին ու նրա տիկնոջը՝ Էլմիրա Ադյանին, Ամերիկայի Լոս Անջելես քաղաքից այստեղ ժամանած բանաստեղծուհի Նելլի /Ավակովա/ Գրիգորյանին:

Իմ կողմից ծաղիկների նվիրումը երկու զավակ կորցրած տիկին Էլմիրային, խոնարհումի ու հիշատակի արտահայտություն էին, որ այստեղ էին բերել Ադյաններին: Նելլի Ավակովային նվիրած ծաղիկներով թերևս փորձում էի մեծագույն շնորհակալություն հայտնել մեզ այցելած հայուհուն, ում համար Արցախը կյանք է, գոյություն, մարդ, ով հովանավոր դարձավ Մեր և Զորայր Ադյանների հիշատակին գրված գրքին՝ իր իսկ մարդասիրությամբ ու շռայլ հոգով:

Հյուրեր ունեինք ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունից, Արցախի պետական համալսարանից, Հայաստանի գրողների միությունից, Արցախի գրողներից՝ հանձին միության նախագահ Վարդան Հակոբյանի, ում նախաձեռնությամբ կազմակերպվում էր այդ

միջոցառումը, այդտեղ էին նաև Արցախի հանրային հեռուստատեսությունից և ռադիոյից:

Խոսքս օրեր առաջ ընթերցողի սեղանին դրված իմ գրքերի մասին էր... «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» և «Մանկավարժի օրագիր», որոնք հրատարակվեցին ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության երաշխավորությամբ: Մեծագույն շնորհակալություններ ակնածանքս նախկին նախարար հարգարժա՛ն պարոն Ասրյանին էր ուղղված և գրքերի խմբագիր Լուսինե Ղարախանյանին: Իմ կողմից նրան նվիրած ծաղիկները խորին ակնածանքի ու սիրո արտահայտություն էին, ում պատկանում էր նաև «Մանկավարժի օրագրի» նախաբանի խոսքը:

Հայացքս փնտրում էր դահլիճում բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ժաննա Բեգլարյանին, ով ուներ իր կողմից տրված գնահատականի խոսքը «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» գրքի մասին, ում իրավամբ շնորհակալական խոսք ուղղեցի, իսկ կողքիս ծաղիկների զամբյուղը ձեռքին կանգնած էր իմ աշակերտուհին, ով այն պիտի նվիրեր Արցախի բանաստեղծուհուն...

Շնորհակալական խոսքս ուղղված էր Լոս Անջելեսի հայկական USArmenianews.com լրատվական կայքի ամբողջ խմբագրակազմին՝ հանձին խմբագիր Գայանե Մանուկյանի, ով գնահատանքի իր հոդվածով ազդարարեց մեր համատեղ համագործակցության մասին, ու շնորհանդեսին ուղարկված նրա նամակն ընթերցվեց՝ հպարտության զգացումով, որ մեր դպրոցը՝ հանձին ուսուցչուհուս կայքին հղած նյութերի, հիմք դրեց Հայաստան-Արցախ-Սփյուռք ամուր կապերին:

Հպարտության արտահայտություն էր այդ կայքին ուղղված շնորհակալական խոսքս, որ այդ երկու գրքերի նյութերը սոցկայքերից տեսանելի եղան բազմաթիվ ընթերցողների, դրանք տեղադրվեցին առանձնապես ամերիկյան այդ կայքում գործող «Մանկավարժի անկյուն» բաժնում: Այդտեղ տեսանելի դարձան մանկավարժիս նյութերի նկատ-

մամբ բազմաթիվ ընթերցողների համակրանքն ու հետաքրքրասիրությունը: Վերջին ամիսներին որքան էլ քարկոծեցին այդ կայքը, այն մնաց աներեր, շատ-շատերի պարծանքը համարվող «Մանկավարժի անկյուն» բաժինը հպարտորեն շարունակեց իր գոյությունը, արժանացավ անգամ ամերիկյան հայկական դեստանատան հյուպատոսի ուշադրությանը:

Այդ նյութերն արժանացան նաև Ամերիկայի հայ գրողների միության հավանությանը, Գլենդել քաղաքից բանաստեղծուհի, մանկավարժ-ադրատաբան Սվետլանա Նալբանդյան-Տոնապետյանի խոսքով դարձա առաջինը, ով մանկավարժական կապ ստեղծեց այն հեռավոր ամերիկյան ափերի հետ, որտեղ խտացված է հայության մեծագույն զանգված: Այդ հոդվածների մի մասը տեղ գտան նաև Հայաստանի Սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» պարբերականում, Արցախի և Սփյուռքի տարբեր մամուլներում, այդ թվում Կալիֆորնիայի մայրաքաղաք Սակրամենտոյում հրատարակվող «Մռավ սար» և Վորոնեժի հայկական համայնքի «Անի» թերթերում:

Խոսքս հրատարակված գրքերիս մասին էր, նաև առկա էր մտահոգությունը, որ սահմանամերձ բնակավայրում կրակոցների արձագանքների տակ դասավանդող ուսուցչուհիս հայրենասիրության դասեր է տալիս պատերազմ տեսած երեխաներին և գիրք է հրատարակում դպրոցի, իր առջև նստած աշակերտների մասին, բայց, ցավոք, ոչ ոք ձեռք չի մեկնում այդ գրքի հրատարակությանը, որ պատմություն է իր մեջ կրում, տարեգրություն, մի իրական վավերագրություն, որ պիտի դառնա սերունդների սեփականությունը:

http://www.usarmenianews.com/am-n-9696.html

2017-10-01

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ...ԳՐՔԵՐԻ ՕԾՈՒՄ ԳԻՆՈՎ ԵՎ ԻՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԽՈՍՔՈՎ

Սովորաբար ասում են՝ նոր ծնված գիրքը պետք է օծել գինով: Դա մի փոքրիկ արարողություն էր, որ ուսուցչուհուս գրքերի շնորհանդեսին իրականացվեց գիտության երևելիների՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսորների՝ Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանի և Արցախի պետական համալսարանի, նաև ուսանողական տարիների իմ դասախոս Սոկրատ Խանյանի կողմից:

Շնորհանդեսի բացման իմ խոսքից հետո բեմահարթակը հանձնվեց աշակերտներին: Իմ դասղեկական 8-րդ ա դասարանի աշակերտների հայրենասիրական երգերը, ապրիլյան պատերազմական օրերի նրանց սարսափելի ապրումները, որ հիշողություն էին դարձել ու կոփել նրանց այս հողին, եկան ազդարարելու, որ այս դեռահասներն իզուր չեն իրենց մտորումներով դարձել իմ գրքերի իրական կերպարները: Անի Մկրտչյանի ասմունքն ընկածների հիշատակին էր, բայց շարժական նկարները, որ ցուցադրվում էին միջոցառման մասնակիցներին տեսանելի, երբեմն արտասվելու առիթ էին տալիս հանդիսատեսին, իսկ այնտեղ վշտամորմոք ծնողներ կային՝ Լևոն և Էլմիրա Ադյանները, հայացքները հառած իրենց զավակների՝ Սիերի ու Զորայրի նկարներին, որտեղ կսկիծ կար, անսահման մեծ ցավ:

Հիացմունքի էր արժանի Սերի Հովհաննիսյանի ասմունքը, որ գերեց շատերին: Այս փոքրիկ երկծամ ութերորդցին զարմացրեց շատերին իր ասմունքով: Ծավալուն խոսք էր այն, որ ոգեղեն զգացողությամբ, հնչերանգային նուրբ շեշտադրությամբ արտասանեց նա՝ ար-

ժանանալով բուռն ծափահարությունների: Որքան զգայացունց էր Գերտրուդա Բեգլարյանի խոսքը՝ որպես ապրիլյան պատերազմի փոքրիկ ականատեսի, նույնքան գերող էր նրա հմայիչ ձայնը, որ երգեց ու իր հետ տարավ իր համադասարանցիներին, ովքեր նրան ոգի առած ձայնակցում էին:

12-րդ դասարանից Լուսինե Հակոբյանի խոսքն ուղղված էր Լևոն Ադյան արձակագրին, նրա տիկնոջը՝ Էլմիրա Ադյանին, և բանաստեղծուհի Նելլի Ավակովային: Գրողի մասին անցած օրերի հիշողություններով իրենց սրտի խոսքն ասացին նաև ինքներորդցիներ Կարինե Պետրոսյանն ու Մերի Հակոբջանյանը: Ուսուցչուհուս ուղղված՝ առանձին-առանձին երախտիքի խոսք հնչեցրին 12-րդ դասարանից Սեդա Գրիգորյանն ու Քրիստինե Մարդոյանը, 8-րդ ա դասարանից Էլինա Սարգսյանը, Մերի Հովհաննիսյանն ու Նարեկ Բաղրյանը:

Առանձնակի ուշադրության արժանացավ 11-րդ գ դասարանի աշակերտուհի Տաթևիկ Ղահրամանյանի՝ մանկավարժիս ուղղված մեծարանքի խոսքը, աշակերտուհի, ում դեռ այս նոր ուսումնականից էի դասավանդում, բայց դարձել էի նրա համար ուսուցչուհու իդեալ կերպար:

Զինվորական արտահագուստով աղջիկների «Մարտակերտ» պարը հիացրեց ներկաներին: Ոգի կար այնտեղ, հստակ շարժումներ, իսկ ուսուցչուհուս խոսքում պարուսույց Նաիրի Ազատյանի մասին գնահատանք կար, ում դասավանդել էի դեռևս 5-րդ դասարանում, իսկ ամիսներ առաջ արձանագրել այդ պարով հանրապետական փառատոնի անվանակարգում նրա հաղթանակը:

Դպրոցականներին ուղղված շնորհակալական խոսքս անկեղծ էր, սրտաբաց: Իմ գրքերի իրական կերպարներն էին նրանք, որ իրենց եր-

գերով, սրտի խոսքով, ասմունքով ու պարով գոհացրին ներկաներին: Բեմահարթակում առերեսված էին ուսուցիչն ու նրա դասավանդելիք դասարանների աշակերտները, չնայած ոչ բոլորը տեսանելի եղան, բայց դա նաև անկեղծության ժամ էր՝ ի տես հանդիսատեսի, որ պիտի ավարտվեր ութերորդցիների ներողություն հայցող խոսքով և իրենց ուսուցչուհուն նվիրած ծաղիկներով:

Բեմահարթակն ազատված էր, շնորհանդեսի մասնակիցների բուռն ծափահարություններով ավարտվեց առաջին մասը, որ բեմը հանձնվի արվեստի մարդկանց՝ այն գրողական աշխարհին, ովքեր իրենց խոսքը պետք է ասեին իմ նոր ծնված գրքերի մասին:

http://www.usarmenianews.com/am-n-9699.html

2017-10-02

ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ: ԳՆԱՀԱՏԱՆՔ ԵՎ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ

Շնորհանդեսի երկրորդ մասում բեմ հրավիրվեցին Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը, ով շարունակեց վարել միջոցառումը, և մի շարք գրողներ, ովքեր իրենց իսկ մասնակցությամբ ամրագրեցին Հայաստան-Արցախ-Սփյուռք անքակտելի կապը, որ նրանց միավորել էր այդ դահլիճում՝ իմ նոր ծնված գրքերի շուրջը, որոնց մասին դեռ ասելիք կար նրանց կողմից:

Գիտական և գրողական աշխարհի ճանաչված ու հարգված անհատականությունների՝ Վարդան Հակոբյանի և Սոկրատ Խանյանի ելույթներում արժևորված էր ուսուցիչը, բացահայտված գրքերի գործառական նշանակությունը, արձակագիր Լևոն Ադյանի և բանաստեղծուհի Նելլի /Ավակովա/ Գրիգորյանի խոսքում սփյուռքահայության կարոտն էր բարձրաձայնվում, որ նրանց բերել էր Արցախ՝ մասնակցելու գրքերի շնորհանդեսի, գրքեր, որոնց ստեղծման պատմությանը վաղուց տեղյակ էին ուսուցչուհուս հետ ունեցած տարածական հարաբերություններից: Գնահատանք կար բոլորի խոսքում, ուսուցչի աշխատանքի հանդեպ դրվատանք, ընթերցողի սեղանին դրված գրքեր կային, որտեղ վավերական պատմություն կար շարադրված:

Երկու գրքերի մասին գիտականորեն իր արժանվույն գնահատականի խոսքն ասաց խմբագիր Լուսինե Ղարախանյանը: Հայաստանից բանաստեղծուհի Հասմիկ Հակոբյանի, Արցախի Գր. Նարեկացու անվան համալսարանի դասախոսներ Ամալյա Գրիգորյանի և Սոնա Համբարձումյանի խոսքերում ուսուցչուհուս ստեղծագործական աշխատանքի մասին արժևորում կար:

Մարտակերտի հ.2 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սուսաննա Բալասանյանի վերլուծականը «Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին» գրքի մասին էր՝ իր արժևորող խոսքով: Տարիներ շարունակ մեր դպրոցի ծնողական կոմիտեի նախագահ, այժմ՝ շրջանավարտների ծնող Սոնա Ադամյանի ելույթով ուսուցչուհուս և աշակերտների հարաբերության փոխադարձ հասկացվածության ամուր կապն էր բարձրաձայնվում, իսկ Արցախի պետական համալսարանի բանասիրականի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Մելինե Պետրոսյանի ելույթը «Մանկավարժի օրագիր» գրքի գեղարվեստական վերլուծությունն էր՝ իր իսկ գնահատանքով:

Ընթերցվեց Լոս Անջելեսի ամերիկյան հայկական Usarmenianews.com լրատվական կայքի խմբագիր Գայանե Մանուկյանի ելույթի խոսքը, դրա հիմքում մեր համագործակցությունն էր, որի համաձայն՝ աշ-

խարհասփյուռ հայությանը շարունակաբար ներկայացվել են Բալայանի անվան միջնակարգ դպրոցի, նրա ուսուցչական կոլեկտիվի ու աշակերտների մասին: Խմբագրակազմի կողմից ուսուցչուհուս ուղղված շնորհավորանք կար, մեծագույն գնահատանք:

Միջոցառումն ավարտվեց հանդիսատեսի բուռն ծափահարություններով, նրանց ուղղված իմ շնորհակալական խոսքով, բեմ բարձրացող հյուրերի, իմ մտերիմների, ուսուցիչների, աշակերտների, նրանց ծնողների՝ ուսուցչուհուս ուղղված երախտիքի խոսքով, ինձ նվիրած բազմերանգ ծաղիկների բույլերով, նվերներով: Հպարտության զգացում կար, բերկրալից պահեր, երջանիկ ակնթարթներ, որ հավերժացան մեր համատեղ լուսանկարներում:

http://www.usarmenianews.com/am-n-9704.html

2017-10-03

ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ՕՐԸ ՀԵՌՈՒՆԵՐԻՑ ԵԿԱԾ ԵԼՈՒՅԹԻ ԽՈՍՔ

Օրեր առաջ մանկավարժիս հղած այս ելույթը, որ պիտի ընթերցվեր իմ գրքերի շնորհանդեսի օրը, անակնկալ էր, որ ինձ ուղարկեց Լոս Անջելեսի ամերիկյան հայկական Usarmenianews.com լրատվական կայքի խմբագիր Գայանե Մանուկյանը: Բազմիցս ընթերցել եմ այն, հուզվել՝ նման գնահատանքի խոսքերի արժանանալով, որտեղ ակնածանք կա ուսուցչի աշխատանքի հանդեպ, անձիս նկատմամբ՝ գեղեցիկ մարդկային որակում:

Ուսուցիչ-խմբագիր համագործակցության լավագույն արգասիքը այս օրերին հրատարակված իմ գրքերն են, որ հեռավոր ամերիկյան քաղաքում գործող այդ կայքի՝ առանձնապես շատ-շատերիս հարազատ դարձած «Մանկավարժի անկյուն» բաժինն Արցախում մի նոր գիր է դարձել «Մանկավարժի օրագիր» գրքի տեսքով, որ մնա սերունդներին, դառնա պատմություն՝ գալիքին պարզված:

Հպարտությամբ ու մեծագույն շնորհակալական զգացումով առ Գայանե Մանուկյանը և այդ կայքի ամբողջ խմբագրակազմը՝ իմ խոսքը հնչեցրի շնորհանդեսի օրը, իսկ այդ ելույթը ներկայացրի Արցախի գրողների միության նախագահին, ում առաջարկով այն ընթերցեց «Գրիգոր Նարեկացի» համալսարանի երիտասարդ դասախոս Սոնա Համբարձումյանը:

Նատաշա Պողոսյան

Դպրության հանդեպ մեր ժողովրդի ունեցած ակնածանքը հայտնի է ողջ աշխարհին, բոլորին: Մենք իրավամբ համարվում ենք ամենաուսումնատենչ ազգերից մեկն աշխարհում, որ մեր անգնահատելի ավանդն ենք ներդրել համաշխարհային գիտության զարգացման գործում: Սակայն մեր ժողովրդին բնորոշ ուսումնատենչությունն ու դպրության հանդեպ սերն ամենևին էլ պատահական բնույթ չէ, որ կրում են: Այս ամենի ակունքներում կանգնած է հայ ուսուցիչը՝ այն անձնուրաց մանկավարժը, ում տաղանդի, հանճարի շնորհիվ մեր ժողովրդի զավակները հազարամյակներ ի վեր հատուկ վերաբերմունք են ունեցել գիտության ու կրթության նկատմամբ:

Մեր օրերում նույնպես, ի բարեբախտություն մեզ բոլորիս, կան անհատներ, մանկավարժի վեհ կոչումն իրենց կյանքով ու գործունեությամբ վաստակած անհատականություններ, որոնց շնորհիվ նույնիսկ ամենաանբարենպաստ իրավիճակներում հնարավոր է դառնում շարունակական դարձնել սերունդներին կրթելու սուրբ ու նվիրական գործը: Նման անհատներից մեկն էլ, անկասկած, տիկին Նատաշա Պողոսյանն է՝ Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան դպրոցի այն ուսուցչուհին, ում տիտանական ջանքերի շնորհիվ այդ դպրոցն ու դրանում ուսում առնող աշակերտները հայտնի են դարձել բոլորին:

Նշենք, որ Usarmenianews.com-ը, շնորհիվ տիկին Պողոսյանի հետ բեղուն համագործակցության, առաջին իսկ օրվանից աշխարհասփյուռ հայությանը շարունակաբար ներկայացրել է ու ծանոթացրել

Բալայանի անվան դպրոցը, ուսուցչական կոլեկտիվին ու աշակերտներին, խոսել ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների նրբությունների մասին, վեր հանել մանկավարժական աշխատանքի բնորոշ առանձնահատկությունները:

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները մարդկային հարաբերությունների մի յուրատեսակ շերտ են, ուստի՝ առանց դրանց մասին իրական պատկերացման անհնար է խորամուխ լինել իրերի իսկության մեջ:

Կայքում տեղ գտած հրապարակումներից շատերում հաճախ խոսվել է նաև այն դժվարությունների մասին, որոնց, ցավոք, շատ արցախցի երեխաներ ստիպված են եղել բախվել հատկապես պատերազմական շրջանում: Անքուն գիշերներ, մութ ու ցուրտ ապաստարաններ…

Մեր ուշադրության կենտրոնում են եղել նաև զոհվածների ընտանիքներն ու պատերազմի կիզակետում գտնվող այն մարդիկ, որոնց անձնազոհության շնորհիվ էր նաև, որ իրականություն դարձավ հաղթանակը:

Տիկին Պողոսյանը ոչ միայն լավ ուսուցիչ է, իսկական մանկավարժ, նաև՝ հրաշալի անձնավորություն: Ցանկացած մեկը, ով երբևիցե շփվել է նրա հետ կամ մտերմություն արել, կարող է վկայել, որ տիկին Պողոսյանի մեջ խտացված են այն բոլոր դրական մարդկային հատկանիշները, որոնք մարդ արարածին դարձնում են ողջ արարչագործության թագն ու պսակը:

Նկատենք, որ Usarmenianews.com-ը լայն ճանաչում է ձեռք բերել նաև շնորհիվ վաստակավոր ուսուցչուհու հրապարակումների, քանի որ ի տարբերություն հայաստանյան կայքերի, մեր կայքը մշտապես ունեցել է «Մանկավարժի անկյուն» անվանումը կրող բաժին, որը նվիրված է հայ դպրությանն ու դրա կենտրոնում գտնվող մանկավարժին ու աշակերտին, նրանց փոխհարաբերություններին: Տիկին Նատաշա Պողոսյանի հրապարակումներն անգնահատելի ավանդ են՝ ներդրված դպրոց-հասարակություն կապերի ամրապնդման ու փոխադարձ ճանաչելիության խորացման գործում:

USArmenianews.com կայքի ողջ խմբագրակազմը շնորհավորում է տիկին Պողոսյանին՝ այս հրաշալի գրքերի լույս ընծայման հետ կապված: Համոզված ենք, որ դրանք ըստ արժանվույնս կգնահատվեն հայ ընթերցողի կողմից՝ դառնալով յուրատեսակ հայելի, ուր արտացոլվել են ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների խորքայնությունն ու նրբերանգները:

Ասում են՝ պատմությունը գրում են մարդիկ, սակայն սա այն դեպքը չէ: Ժամանակն է գրում պատմությունը, և գրում է այն պատմության գրչով, որոնք եղել են, և այժմ այն տպագրվելով՝ յուրաքանչյուր ապրող սերնդի մասին թողնում է տեղեկություն և պատմություն: Ապացույցը՝ նրա հրատարակած այս հրաշալի երկու գրքերը:

Հպարտ ենք, որ համագործակցում ենք տիկին Պողոսյանի հետ՝ մեկի, ով շատ բան է արել Հայաստան-Արցախ-Սփյուռք կապերն ամրապնդելու ու դրանք անքակտելի դարձնելու համար:

Մեր կայքն առաջիկայում ծրագրում է է՛լ ավելի ամուր կամուրջներ գցել Լոս Անջելեսի ու Արցախի կրթօջախների միջև, դառնալ հարթակ մյուս մանկավարժների համար նույնպես:

Եվս մեկ անգամ շնորհավորում ենք տիկին Պողոսյանին ու մաղթում բեղուն ստեղծագործական կյանք: Անկասկած, նման մարդկանց գործի շնորհիվ է հնարավոր դառնում անմահ պահել հայ դպրությանը բնորոշ լավագույն ավանդույթները:

USArmenianews.com լրատվական կայքի խմբագիր
Գայանե ՄԱՆՈՒԿՅԱՆ
Լոս Անջելես

http://www.usarmenianews.com/am-n-9712.html

2017-10-05

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Հոկտեմբերի 5-ը Ուսուցչի օրն է: Տոն, որ նշվում է ավանդաբար:

Արցախի պետականակերտման գործընթացում անուրանալի է ուսուցչի դերը, որովհետև առաքելություն ունի պիտանի սերունդ աճեցնելու մեր հասարակության համար. ուսուցչի շնորհիվ են կայանում հայրենիքի վաղվա պաշտպանը, գիտնականն ու շինարարը: Հայ ժողովուրդը միշտ էլ առանձնահատուկ պատկառանք է ունեցել ուսուցչի հանդեպ:

Օրվա կապակցությամբ Արցախի շուրջ 4500-հոգանոց ուսուցչական բանակից ընտրել ենք երեքին՝ ԼՂՀ վաստակավոր մանկավարժ, Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատաշա Պողոսյանին, Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան հ. 4 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի քաղաքային փուլի հաղթող Նորա Թամրազյանին, Ասկերանի Էդ. Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի անգլերենի ուսուցչուհի, «Տարվա լավագույն ուսուցիչ»շրջանային փուլի հաղթող Շուշան Մինասյանին, որոնք իրենց մտորումներն են կիսել մեզ հետ «Ո՞վ է մեր օրերի ուսուցիչը» հարցադրման շրջանակում:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Ազատ Արցախ», հոկտեմբերի 5, 2017 թ.

Ո՞Վ Է ՄԵՐ ՕՐԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Հոկտեմբերի 5-ը համարվում է ուսուցիչների և կրթական ոլորտի բոլոր աշխատողների մասնագիտական տոնը, ուստի շնորհավորում եմ բոլորին այս հրաշալի օրվա կապակցությամբ:

Ո՞վ է ուսուցիչը: Հարց, որ ամեն անգամ բարձրաձայնում եմ ու փորձում վերաարժևորել այս մասնագիտությունը կրող անձանց, ովքեր սերունդներ են կրթում, նորովի դաստիարակում գալիք օրերի հողի մշակներին, սահմանը պաշտպանող հայորդիներին...Տնտեսագետ չեն ծնվում և ոչ էլ՝ բժիշկ, երկրի նախագահն էլ դպրոցական կյանք է անցել, ու պատկառանքը ուսուցչի հանդեպ դարերն են ծնել, որ ծնրադ-

րեն նրանց, ովքեր ուսուցիչ են կոչվել: Ու վեհագույն են դարձել նրանք, և խոնարհվել են նրանց առջև՝ որպես սրբության սրբոց:

Բայց ժամանակնե՞րն են փոխվել գուցե, որ երբեմն թերարժեքության զգացումն է իշխում ուսուցչի հանդեպ: Իսկ ես ուսուցչին տեսնում եմ ժամանակին համաքայլ, նոր օրերի աշակերտության հետ սիրով շաղկապված, փոխադարձ հասկացվածությամբ, իր օրինակելի կերպարով, իր անձի հանդեպ դեռահասի ցուցաբերած համակրանքով: Ուսուցիչն ինձ երևում է իր մանկավարժական նորարարությամբ, նրբանկատ ու ազնիվ վերաբերմունքով, երբեմն՝ դեռահասի հետ ունեցած հավասար իրավունքներով:

Ո՞վ է ուսուցիչը, ում բացակայությամբ անհանգստանում է աշակերտը, նույնիսկ հարցնում նրա որպիսությունը... Երբեմն վեհության պատվանդանից իջնել է պետք, որ դեռահասի բացահայտումին, թե «Դուք գեղեցիկ եք այսօր», կարողանաք ժպտալ: Գաղտնիքներ գիտե՞ք, որ աշակերտն է պատմել իր հույզերի մասին, որ թեթևանա հոգին: Երբեմն թաքուն, երբեմն անթաքույց սրբե՞լ եք աչքերը ձեր, որ արցունքով են մշուշվել նրանց հետ զրուցելիս: Աղաղակե՞լ եք երբեմն այն անարդարների դեմ, որ աշխարհ են քանդում, երկիր ավերում:

Բացե՛ք ձեր սրտի դռները, երբ օրենք պահողն է օրենքը խախտում, բացե՛ք դրախտի դռներն այն դեռահասների առջև, որ չհուսահատվեն, թե աշխարհն այս շատ նեղ է... Իսկ ո՞վ է այն ուսուցիչը, ում համար դասաժամի րոպեներն անգամ թռչում են սահուն՝ վայրկյաններ դարձած: Երբեմն խոստովանե՞լ եք այդ դեռահասներին, որ սիրում եք նրանց: Գուցե ծիծաղե՞ք նրանց հետ, երբ կատակում են, ու զսպում իրենց, որ ծիծաղ սպանեն: Անկեղծանալ է պետք երբեմն, որ սերը թևեր առնի, ու դեռահասի համար դառնանք ընդօրինակելի կերպար:

Ամենապատվաբեր աշխատանքն է ուսուցչի մասնագիտությունը, որին պետք է տիրապետել ու նվիրվել անհագուրդ սիրով: Այն ո՞վ է, որ երազել է իր ամբողջ կյանքում ուսուցիչ լինել, ու երազանքն այդ թևեր է առել, երբ դասարան է մտել: Մտքերի մեջ ընկած այն վերջին նստարանին նստած աշակերտին խոսեցրե՛ք երբեմն, որ կարող է ցնցվեք հանկարծ նրա մեկ բառով անգամ: Եթե լույսի սերմնացան ենք, ապա լույս փռենք այս սերնդի առջև, որ լուսավոր լինի նրանց անցնելիք ճամփան:

Լուսավորենք նրանց միտքն ու հոգին, առ Աստված ուղղված աղոթքները մեր սուրբ հավատք դառնան, որ հոգիներ բուժեն:

Միշտ էլ մանկավարժի գործն ակնածանքով է գնահատվել հասարակության, ընդհանրապես՝ պետության կողմից: Ստեղծագործող ուսուցիչների հանդեպ առանձնակի ուշադրության կարիք կա, որ երբեմն անտեսվում է, երբեմն՝ ընկալվում: Դրա վառ ապացույցը սահմանամերձ բնակավայրում ապրող ուսուցչուհուս վերջերս հրատարակած գրքերն են, որ նվիրեցի ուսուցիչներին, աշակերտներին...Իմ «Մանկավարժի օրագիրը» դարձավ ուսուցչի նվաստացուցիչ աշխատավարձով նվիրատվություն, երբ պատկան մարմինները հրաժարվեցին այն հրատարակել:

Ուսուցիչն ո՞վ է...Մարդ, ով մտահոգ է սերնդի վաղվա օրով, ու այդ սերնդին սահմանից եկող կրակոցների արձագանքների տակ հայրենասիրության դաս է ուսուցանում: Այդ ուսուցիչն է գիրք ստեղծելու ստեղծագործական պաթոսով այս սերնդին տանում դեպի ճշմարտություն, սերունդ, որ պատերազմի ականատես է և իր ուսուցչի գրքի հերոսն է դառնում ու ամուր կառչում այս հող ու ջրին: Այս սերունդն է, որ իր ուսուցչից դաս առած «ո՛չ» է ասում արտագաղթին ու պատերազմին, և հայացքը հառած ջինջ երկնքին՝ խաղաղություն է երազում: Այս սերունդն է մեր երկրի ապագան, նա էլ ամենքի հետ շնորհավորում է Ուսուցչի տոնը, ցանկանում բոլորին ստեղծագործական նորանոր վերելքներ:

«Ո՞վ է ուսուցիչը...»,- նորից կրկնում եմ ես ու դառնում մեկն այն հազարավորներից, ով խաղաղ ու անհոգ կյանք է երազում մեր երեխաների համար, որ պիտի դառնան այս երկրի սյունը, նրա ապագան:

http://artsakhtert.com/arm/culture-and-sport/item/23596-2017-10-05-06-48-40

http://www.usarmenianews.com/am-n-9725.html

2017-10-05

ՍՐՏԱԲԱՑ ԶՐՈՒՅՑ

Իրոք, սրտաբաց զրույց, որ շարունակվում է ամեն մի հանդիպման ժամանակ, իսկ հանդիպումս Զարիևե Սառաջյանի հետ իմ գրքերի շնորհանդեսի օրն էր: Բայց այսօր էլ Ուսուցչի տոնին այդ հանդիպումը շարունակվեց, ու այս նոր զրույցն ինձ ապշեցրեց: Շնորհավորական խո՞սք է սա, թե՞ ուսուցչի աշխատանքի գնահատանք, առավել շատ՝ մեծարում... Այս տողերում ինձ տեսնում եմ մանկավարժական խիզախումների բարդությունքում և այս հրապարակումով ի սրտե նրան խորին երախտագիտություն եմ հայտնում՝ ուսուցչուհու իմ անհատականությունն այսպես արժևորելու համար:

Նատաշա Պողոսյան

Կան հանդիպումներ, որոնք նշանակալից և ուղենշային են դառնում ողջ կյանքի համար: Այդպիսի մի հանդիպում էր իմ և Նատաշա Պողոսյանի հանդիպումը տարիներ առաջ, երբ թերթի հերթական համարն էի պատրաստում և որոշել էի հարցազրույց վարել Մարտակերտի շրջանի ճանաչված ու սիրված վաստակաշատ մանկավարժի հետ: Հարցազրույցը հաջողված ու անկեղծ մի զրույց ստացվեց, որը համատեղ որոշեցինք վերնագրել «Սրտաբաց զրույց»: Այդ սրտաբաց զրույցը ամեն անգամ իր շարունակությունն է ունենում մեր ամեն մի հանդիպման ժամանակ: Զրույց, որ կարող է սկսվել հայ դասական գրողների, նրանց գործերի շուրջ քննարկումներից մինչև շրջապատում առկա խնդիրներ, տարաբնույթ իրադարձություններ, դեմքեր, դեպքեր:

Նատաշա Պողոսյան: Անուն, որ արտաբերելիս նրան ճանաչող ցանկացած մարդու դեմքին հայտնվում է մի բարի ու մեղմ ժպիտ, որ սովորաբար ունենում ես այն ժամանակ, երբ կողքիդ հնչում է հարազատ մարդու անուն: Հարազատ, որովհետև նա իր սրտաբացությամբ, անկեղծությամբ, ըմբոստ ու անհանդուրժող բնավորությամբ, բայց և միաժամանակ ներողամիտ ու գթասիրտ մեղմությամբ հարազատ մարդ է

դարձել վաղուց իր սաների, իր ընկերների, հեռու և մոտ ծանոթների համար: Նա այն ուսուցիչն է, ով մանկավարժության հանդեպ ունեցած նվիրումով ու բարձր պատասխանատվությամբ արժանացել է իր կոչմանը: Ամենօրյա պրպտումները, որոնումները նրա դասը դարձնում են հագեցած, ստանդարտներից դուրս, ծրագրային նյութի սահմաններով չբավարարվող: Նրա ամեն մի դասը յուրահատուկ առաքելություն է, որով նոր սերնդին մոտեցնում է գրքին ու գրականությանը, իր սաների առջև բացում հայ գրականության գանձարանի հարուստ շերտերը և նրանց սիրել ու արժևորել սովորեցնում այդ գանձերը:

Բնավ չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ նրա նման մանկավարժների նվիրյալ գործունեությունը ռազմավարական նշանակություն ունի մեր երկրի համար: Զինվորը զենքով է պաշտպանում հայրենիքի սահմանները, իսկ նվիրյալ մանկավարժը, մտավորականը պաշտպանում է հայրենիքի հոգևոր սահմանները՝ մատաղ սերնդի մեջ ձևավորելով, ամրապնդելով և պահպանելով ազգային արժեքներ, ազգային ինքնագիտակցություն:



Գրքի ու գրականության հանդեպ ունեցած նրա սիրո ու պաշտամունքի վկայությունն են դառնում նրա հեղինակած գրքերը, որտեղ էջ առ էջ բացվում է մանկավարժի ապրած ամեն մի օրը՝ լի այն անպարագիծ սիրով, որ նա տածում է ուսուցչության և իր սաների հանդեպ: Ու հասկանում ես մի ճշմարտություն, որ մանկավարժությունը Նատաշա Պողոսյանի համար կենսակերպ է, առաքելություն: Գրքի էջերում մեկ առ մեկ տեսնում ենք իր սաների սրտի ամեն մի թրթիռը զգացող խորաթափանց ուսուցչուհու խոհերը, որ վաղուց մարտահրավեր է նետել սահմանամերձ բնակավայրում ապրելու և դասավանդելու բոլոր դժվարություններին, խոչընդոտներին, տագնապներին ու մտահոգություններ-

րին, որովհետև նրա ուղենիշը լավատեսությունն է և իր հայրենի Մարտակերտը զարգացող, բարեկեցիկ, խելացի ու բանիմաց մասնագետների ներուժով համալրված ու խաղաղ երկնքի ներքո օր օրի բարգավաճումը տեսնելու տեսլականը:

Այս տեսլականով ուղղորդվող մանկավարժի աշխատանքն ու եռանդը չի ընկճում անգամ սահմանում ժամանակ առ ժամանակ հակառակորդի կողմից խախտվող հրադադարը: Նա իր գործի նվիրյալն է անգամ այն ժամանակ, երբ մի քանի կիլոմետր այն կողմ թեժ մարտեր են մղվում Արցախի սահմաններն անառիկ պահելու համար, և նման դեպքերում շատ հաճախ սահմանամերձ բնակավայրի ուսուցչուհին կրակոցների ձայնի տակ շարունակում է իր սաներին բարձր ոգի ներշնչել, հաղթել սովորեցնել, արհամարհել վախն ու բոլոր մյուս թուլությունները և ամուր կառչած մնալ հող հայրենիին:

Խոհերս գրի առա հոկտեմբերի 5-ին՝ ուսուցիչների տոնին, երբ ամեն ոք փորձում է յուրովի արժևորել տոնն այդ՝ մեծարանքի և գնահատանքի խոսք ուղղելով ուսուցիչներին: Շնորհավորելով բոլոր արժանավոր ուսուցիչներին տոնի առթիվ՝ մաղթում եմ, որ Նատաշա Պողոսյանի օրինակը ուղղորդող դառնա շատ-շատերի համար, հատկապես երիտասարդ ուսուցիչների համար, ովքեր փոքր-իսկ խոչընդոտի կամ թերացման դեպքում թևաթափ լինելու զգացողություն են ունենում: Բարձունքին հասնելը դժվար է՝ բազում հաղթահարումներով լի, ամեն մի օրը պայքար է, հաթահարում, բայց երանելի է այն նվիրյալը, ով իրապես արժանանում է ուսուցիչ վեհ կոչմանը...

Եղե՛ք ձեր կոչմանը հավատարիմ և արժանի, սիրելի՛ ուսուցիչներ, դուք եք կերտողը մեր վաղվա ապագան, քանզի ձեր կրթած ու դաստիարակած սաներն են լինելու վաղվա օրվա պատասխանատուն, երկրի նախագահը, նախարարը, զինվորը, բանվորը...

Զարինե ՍԱՌԱՔՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԱրՊՀ ավագ դասախոս, ԱրՊՀ ՈՒՀՏԱ, ՀԿ և
Լրատվության բաժնի պետ

http://www.usarmenianews.com/am-n-9732.html

2017-10-06

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՄՏՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹՌԻՉՔՆԵՐԻԴ ՃՆՈՒՆԴԸ

Սեծագույն շնորհակալություն դպրոցն ավարտած մեր շրջանավարտների՝ իմ լավագույն աշակերտուհիների՝ Մարիամ և Շուշան Հարությունյանների մայրիկին՝ բոլորիս կողմից սիրված ու հարգված մտավորականին՝ Սոնա Ադամյանին, ով տարիներ շարունակ արդարացիորեն վարել է Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի ծնողական խորհրդի նախագահի պարտականությունները: Ստորև նրա ելույթն է, որով ներկայացել է իմ գրքերի շնորհանդեսին:

Նատաշա Պողոսյան

Սիրելի՛ ուսուցչուհի, հարգելի՛ ներկաներ, այսօր յուրահատուկ տոն է, տոն, որը խորհրդանշում է մարդու վերաբերմունքը գիրք-սրբության նկատմամբ: Գրքի ստեղծման իմաստն ավելի լավ գիտի հենց ինքը նրա ստեղծողը, արարողը:

Տիկին Նատաշայի ստեղծագործությունները ողողված են հուզականությամբ, անմիջականությամբ ու պարզությամբ…Տողերի մեջ թաթախված են սովորողների ստեղծագործական մտքերի մաքրությունն ու քաղցրությունը: Ուսուցչուհու կատարած գործը մեծ է. նրա շնորհիվ բացահայտվել ու զարգացել է աշակերտների ստեղծագործական միտքն ու ունակությունները, նրանք սկսել են ճանաչել իրենց ներաշխարհը, տեսնել գեղեցիկը, արժևորել հայրենիքն ու մարդկային վսեմ արժեքները և արտացոլել են ճերմակ թղթերում:

Անսահման է այն երջանկությունը, երբ աշակերտն իր հետ հանդիպում է իր ուսուցչուհու հոդվածներում, առավել ևս՝ նրա գրքերում: Ինքնին

աշակերտը զգում ու գնահատում է իր կարևորությունը, իր ստեղծագործելու կարողությունները բացահայտելով՝ կարողանում է նայել աշխարհին այլ հայացքով, լսում է իր հոգու ճիչը, իր մտքի ծփանքը, իր սրտի զարկերի տրոփյունը ու դարձնում մի հրաշակերտ շարադրանք:

Իսկ այս ամենի հետևում կանգնած է ուսուցչուհին՝ իր «կախարդական փայտիկով»՝ իր մանկավարժական մեծ հնարամտությամբ, իր սաների մեջ գեղեցիկը տեսնելու, գնահատելու, արտացոլելու արվեստով: Այնտեղ, որտեղ աշխատանք կա, անպայման կա արդյունք: Ուսուցչուհու իմաստուն աչքից չէր կարող անտես մնալ թե՛ պրպտացող, թե՛ մտահոգ, թե՛ թախծոտ հայացքներով իր առջև նստած սանը, նա թափանցում է նրանց հոգու խորքը՝ տեսնելու այնտեղ ալիքվող խռովքը, օգնում տեսնելու իր երազանքներն ու մտորումները:

Մեծ ուսուցիչ, մեծ մանկավարժ ու հոգեբան, մեր շատ սիրելի՛ տիկին Պողոսյան, շնորհավոր մտքի հերթական թռիչքներիդ ծնունդը, թող շարունակական լինի այն: Շնորհակալություն Ձեզ:

Սոնա ԱԴԱՄՅԱՆ

http://www.usarmenianews.com/am-n-9735.html

2017-10-07

«ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳՐԻ» ԱՄԵՆ ՄԻ ԳՐԱՌՈՒՄ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ Է

Իմ առաջին հանդիպումը դպրոց այցելած Մելինե Պետրոսյանի հետ նոր ծանոթության սկիզբ դրեց: Այն որքան զարմանալի, նույնքան հաճելի էր, երբ առաջարկեց ծանոթանալ իմ «Մանկավարժի օրագրի» նյութերին ու գեղարվեստորեն վերլուծական գրել: Շուտով իմ ձեռքի տակ էին նրա ներքոբերյալ տողերը, որ հիացրին ինձ: Նորից անակնկալ, որ ցանկանում է ընթերցել այն իմ գրքերի շնորհանդեսի օրը: Շատ հաճելի էր նման առաջարկը, որ ընդունեցի մեծագույն սիրով ու շնորհակալական զգացումով, և դրա արդյունքում իմ երկրորդ հանդիպումը նրա հետ կայացավ շնորհանդեսի օրը՝ Մարտակերտի մշակույթի և երիտասարդության կենտրոնում:

Նատաշա Պողոսյան

Ժողովուրդների հավիտենության փարոսները հանճարեղ և նվիրյալ ուսուցիչներն են, որոնք ի բնե կոչված են մանկավարժ լինելու համեստ, բայց հույժ կարևոր աշխատանքին: Արժանապատիվ կեցվածք ունենալու իմաստնությունը հավերժական խորհուրդ է կրում, ինչի վերծանողները ոչ միայն գիտական բարձր կոչումներ ունեցողներն են, այլև՝ հմուտ և վաստակաշատ մանկավարժները:

Ուսուցիչը պետք է հավատարիմ լինի իր կոչմանը, քանի որ դարի մարտահրավերների առջև կանգնած այսօրվա սերունդը պետք է լինի գաղափարապես առողջ, ազգային ավանդույթներին հավատարիմ, մարդասեր և բազմակողմանիորեն զարգացած:

Ն.Պողոսյանի «Մանկավարժի օրագիրը» փաստում է ասվածի ճշմարտացիությունը: Գիրքը բաղկացած է 240 օրագրային գրառումից, և յուրաքանչյուր օրագրային գրառում հոգեբանական և փիլիսոփայական խորը ենթաշերտեր ունեցող գեղարվեստական մանրապատում է. «Երբեմն պատահում է, որ խաթարվում է մեր խաղաղ կյանքը: Գիշերվա կեսին հանկարծակի սկսվող հրետակոծության արձագանքից սիրտդ կծկվում է, հոգիդ՝ ալեկոծվում անհանգստությունից, ուզում ես սփոփել ինքդ քեզ, ու խաբուսիկ մի պատրանք ես ստեղծում քեզ հա-

մար, որ իբր ամեն ինչ լավ է, պետք չէ հուսալքվել, բայց երբ թվում է, թե ևս մեկ անգամ՝ տունդ ահա փուլ կգա գլխիդ, ուզում ես աշխարհին ի տես՝ բոլորին ասել, որ խաղաղ ապրել ես ուզում…»:

Սա փաստում է, որ գրողն օժտված է ոչ միայն լայն մտահորիզոնով, նյութը բազմակողմանիորեն քննելու կարողությամբ, այլև՝ մարդասիրական լավագույն ձգտումներով: Այս երևույթների նկատմամբ նրա մտորումները բացարձակ ազնվության, արժանապատվության մասին են փաստում: Տարաժամանակյա կտրվածքով նյութը քննելու դեպքում՝ ականատես կլինենք այն պարզ ճշմարտությանը, որ խաղաղ ապրելու ձգտումը հայի գենետիկ կոդի մեջ է, և մեր լինելության բանաձևումը հենց այս հանգամանքով է պայմանավորված: Ն. Պողոսյանի գրչին ծանոթները միանգամից տարբերում են նրա ոճը, սա ևս գրականագիտության մեջ առանձնացող և հարգի երևույթ է:

Այստեղ կյանքի փաստացի վերարտադրումն է բանաստեղծական տաղանդի շնորհիվ, թեպետ ամբողջ գիրքը արձակ է շարադրված, բայց զգացվում է բանաստեղծական ոգու առկայություն, դա ևս գրողի՝ սեփական ժողովրդի հետ ամուր կապի մասին է խոսում, քանի որ աշխարհի մասշտաբով հայ ժողովուրդը հայտնի է որպես բանաստեղծ ժողովուրդ: Բավականին ակնառու է խոսքի ներքին ռիթմը, գեղարվեստական բարձր որակը, բառախաղերի յուրօրինակությունը և ամենակարևորը՝ տարողունակ նյութը, որը պատկերում է 21-րդ դարի աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակն Արցախում. «Եվ այստեղ հոգու սնունդն ապրեցնում է մեզ, ու մենք ապրում ենք այստեղ հոգու սնունդով, որ բառ է դառնում, երբեմն հավատ: Եվ հույսը գրկած՝ երբեմն խոսքը վահան եմ դարձնում ու չարիքի դեմ մի հատիկ բառը հզոր է դառնում, մի ամուր թիկունք՝ չարիքին ուղղված»:

Գրքի հերոսները պատանիներ ու պարմանուհիներ են՝ հետաքրքիր մտորումներով, հոգեբանական վայրիվերումներով, և նրանցից յուրաքանչյուրը բավականին լավ հասկանում է, որ պատմական այս իրադարձությունների թատերաբեմում իր ժողովրդի ճակատագրի կերտման գործընթացն իրեն է պատկանում: Այսօրինակ փաստերը պետք է դի-

տել որպես սեփական անձի արժևորման հոգեբանական յուրօրինակ գործընթաց:

Ամենօրյա դարձած կրակոցներն ու երկյուղածությունը գրքի հերոսների մոտ տագնապային հոգեվիճակներ, ատելություն, ժխտողականություն չեն առաջացնում, այլ ընդհակառակը՝ սեր, հաջողությունների հասնելու նպատակայնություն, ազնվություն, մարդասիրական ձգտումների հիմք է հանդիսանում:

Միայն նրանց է տրված կյանքի յուրաքանչյուր ակնթարթը ճշմարիտ գնահատելու շնորհը, ովքեր իրապես հասկանում են կյանքի գինը: Գնահատում ու արժևորում են իրենց կյանքի յուրաքանչյուր խաղաղ առավոտը. «Երջանկության մեջ օրեր մի՛ փնտրեք, երբ ամեն պահը երջանկություն է»:

Հայրենասիրությունը սոսկ հասկացողություն չէ, այն ապրում է, կամային հատկանիշների յուրօրինակ դրսևորում, որը ձևավորում է կայուն արժեհամակարգ: Պողոսյանի յուրաքանչյուր օրագրային գրառում հայրենասիրական ենթատեքստ ունի. «Դա իմ բնօրրանն է սուրբ, առանց որի չեմ կարող ապրել, որովհետև բոլորը մեկը մյուսին ճանաչում են ու հավատում միմյանց, իսկ երբ սահմանին մոտ կրակահերթերի արձագանքներն են լսվում, դառնում են մեկ ՄԱՐԴ ու մեկ ՀՈԳԻ, որ կարողանան միասին «մեռնել», որպեսզի նորից հարություն առնեն»:

Հեղինակի մտասևեռումներն ապացուցում են հայկյան ոգու մեջ անթեղված փյունիկյան առասպելի անժամանակավրեպ խորհուրդն ու արդիականությունը:

Մելինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
Արցախի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

http://www.usarmenianews.com/am-n-9740.html

2017-10-09

ԿԵՑՑԵ՛Ք ԴՈՒՔ, ՈՐ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՔ ՔԱՅԼԵԼ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ ԵՎ ԱՆԴԻՆ

Տարիների լավագույն վաստակ ունեցող հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սուսաննա Բալասանյանի խոսքը՝ հրատարակված գրքերիս մասին, արժեքավոր էր, գնահատանքով լի: Ամիսներ առաջ Մարտակերտի կենտրոնական գրադարանում կազմակերպված Աղյան գրողի վիպակներից մեկի քննարկման մասնակիցն էր նա, որտեղ հանդես եկավ իր հուզական խոսքով: Այս անգամ էլ, որպես հայոց լեզվի և գրականության մասնագետի, զարմանալի չէր նրա իմաստալից վերլուծականը վերջերս հրատարակված «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» գրքի մասին, որ հանդես եկավ իմ գրքերի շնորհանդեսի օրը: Ազնիվ զգացողությամբ շնորհակալական խոսքս թող հասանելի լինի հրաշալի անհատականությանը, որ ցանկացա արտահայտել իր ելույթի այս հրապարակումով: Նաև խորին երախտագիտություն այդ դպրոցի մանկավարժական կոլեկտիվին՝ հանձին տնօրեն Մելսիդա Քարդումյանի:

Նատաշա Պողոսյան

Վաստակավոր ուսուցչուհի Ն. Պողոսյանը վերջերս նոր գրքեր դրեց ընթերցողի սեղանին: Եթե «Մանկավարժի օրագիրը» հետաքրքիր է որպես օրագրության հատուկ նմուշ, որի մեջ նրա հերոսները իր իսկ սաներն են՝ իրենց արտահայտման յուրատիպ ձևերով /շարադրություն, բանավոր խոսք, կարծիք/, ապա «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» գիրքն ունի վերլուծական բնույթ: Ուսուցչուհին վերլուծությունը կատարում է հիշողությանը զուգընթաց՝ նորից դիմելով իր աշակերտների խոսք-կարծիքներին:

Բոլորովին էլ պատահական չէ, որ հմուտ մանկավարժի աշակերտներն իրենք են նախաձեռնում արցախցի արձակագիր Լ. Աղյանի այս կամ այն գրքի քննարկումը: Նրանք մեր ժամանակների համար զարմանալիորեն ակտիվ ընթերցողներ են, իրենց ուսուցչուհու նման փնտրտուքներ կատարողներ: Ուսուցչուհուն հաջողվել է աշակերտների միտքը սևեռել դեպի մեր պատմությանն ու աղյանական նրա վերլուծությանը:

Տիկին Պողոսյանի աշակերտները սիրում են նրան և պատրաստ են իրենց առաջնորդող ջահակիր ուսուցչուհուն հետևել ողջ կյանքում: Անչափ հուզվել եմ նրա յոթերորդցի Արեգ Ստեփանյանի խոստովանությունից: /Մեջ եմ բերում բառացի. «Անշա՛հ ուսուցչուհի, Ձեզ նման երկուսը կան իմ կյանքում՝ Աստված և մայրս: Ես սիրում եմ Ձեզ, տիկի՛ն Պողոսյան»/:

Առավել հոգեցունց է Ձեր արձագանքը. «Ինչքա՜ն լավ է, որ ես ուսուցչուհի եմ, և նա սիրում է ինձ»: Այո՛, լավ է և շատ լավ: Դուք կարողանում եք երեխային մտածել սովորեցնել, մարդկանց և իրերը ժամանակի մեջ տեսնելու կարողություն ստեղծել նրանց մեջ, ինքնուրույն կարծիք կազմելու, մինչև վերջ անկեղծանալու հնարավորություն տալ նրանցից յուրաքանչյուրին: Ձեր խոսքը տպավորիչ է, Ձեր բնածին որոնողական եռանդը՝ վարակիչ:

Մտազբաղ ուսուցչուհին քննարկում, վերլուծումներ է կատարում դպրոցում, գրադարանում, թանգարանում և այլուր: Նրա շնորհիվ առավել տեսանելի է դառնում Ադյան հայրենասերի մեծությունը: «Հեռացող եզերք»: Մեր ժամանակի պատմություն՝ իր ողբերգական երանգներով: Փշրվող երազներ...Հերոսուհին՝ բժշկական ինստիտուտի ուսանողուհի աղրբեջանցի Ռենան: Եթե Ադյան հումանիստին հաջողվել է սերը ներկայացնել Լեոյի և Ռենայի կերպարներով, ապա հոգեբան մանկավարժի անվրեպ նետը խառնել է աշակերտների հուզաշխարհը՝ նրանց մոտ ցանկություն առաջացնելով ստեղծել ֆիլմ՝ ստեղծագործության մոտիվներով և այն ցուցադրել անվճար՝ ամողջ աշխարհում: Պողոսյանի ընթերցասեր աշակերտները կարողանում են սիրել սովորել, հուզվել արտասվելու աստիճան և իրենց տեսնել Ադյանի այս կամ այն հերոսի դերում: «Անձրևից հետո» պատմվածքի՝ ուսուցչուհու վերլուծականին հաջորդում են աշակերտների կարծիքները: Այսօրվա աշակերտն իրատես է, իր ասելիքի մեջ համոզված: Նրանք խոսում են սիրո անսպասելի ու ակամայից ծննդի, նրա անսահմանության մասին, իսկ 12-րդ դասարանի աշակերտուհի Աննան այնքան էր դերի մեջ մտել, որ պատրաստ էր իր ձեռքերով սպանել պատմվածքի հերոսին, որը խաղացել էր սիրո հետ:

Ուսուցչուհին հնարավորություն էր տվել բացվելու, և նրանք բացվում էին: Ահա թե ինչ է ասում 21-րդ դարի աշակերտը. «Ես հիմա գիտեմ, թե ինչ է կարոտը սիրած էակի նկատմամբ: Միայն կորցնելուց հետո եմ հասկանում, թե ինչքան եմ սիրում դիմացինիս»:

Ուսուցիչ-վերլուծաբանը ոչ միայն իր ասելիքն է ներկայացնում Ադյան արձակագրի մասին, այլև աշակերտներին է սովորեցնում մտածել, խոսել, դրվատել կամ դատապարտել: Գիրքը հագեցված է նուրբ հոգեբանությամբ և հերոսներից յուրաքանչյուրի հանդեպ յուրահատուկ զգայական արտահայտչականությամբ: Մեզ մնում է տիկին Պողոսյանին շնորհավորել իր հաջողված գրքի համար և ցանկանալ նրա բեղմնավոր աշխատանքում նորանոր հաջողություններ: Կեցցե՛ք Դուք, մե՛ծ ուսուցիչ, որ կարողանում եք քայլել ժամանակի մեջ և անդին:

Սուսաննա ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Մարտակերտի հ. 2 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

http://www.usarmenianews.com/am-n-9751.html

2017-10-10

ԱՆԴԱՐՁ ՀԵՌԱՑՈՂ ՕՐԵՐԻՍ ՄԵՋ ՁԵԶ ԵՄ ՏԵՄՆՈՒՄ

Մարդն ինչո՞վ է ջերմանում...Երբեմն մի խոսքով, անգամ՝ մեկ բառով, ու սրտաբաց ասված բառը հոգուդ մեջ է ներսուզվում, որ ջերմացնի հոգիդ: Ուսուցչի համար այդ ջերմությունն առավել քան դուրալի է, երբ այն ստանում է դպրոցականից կամ թեկուզ՝ շրջանավարտից, ում տարիներ շարունակ դասավանդել է, և դարձել է նա այդ տարիներում ամփոփված հիշողություն: Եվ այդ իսկ հիշողությամբ էլ նա տարիներ անց էլ կարողանում է մեղմացնել հոգիդ իր ջերմագին ասված խոսքերից, որ ընթերցում ես հուզմունքով, սիրով պարուրված, հեռվից հեռու նրան գրկելով:

2016-ի մեր դպրոցի շրջանավարտ, Արցախի պետական համալսարանի ուսանողուհի Դայանե Հայրապետյանի տողերն անակնկալ էին ինձ համար, որ կարդացի հուզված, նրա հանդեպ ունեցած համակրանքով:

«Կյանքում ամենաթանկ հիշողությունները մինչև խոր ծերություն կմնան մեր մեջ տպավորված, որոնք հիշելիս կամ վերապրելիս մեզանից յուրաքանչյուրի դեմքին անկասկած մեղմ ժպիտ է արթնանալու:

Մտքերով էի ընկել, ինչ-որ հետևություններ ու վերլուծություններ էի անում օրվա իրադարձություններից: Եվ հանկարծ լսեցի հարազատ ձայն: Առավել մեծ էր անակնկալը, երբ շրջվեցի ու տեսա իմ ուսուցչուհու գեղեցիկ պատկերը: Մի թույլ ու հաճելի ժպիտ երևաց դեմքիս ու ակամա քայլերս ուղղեցի դեպի նրան: Լսվում էր սրտիս արագ բաբախյունը: Հուզմունքս մեծ էր, երբ մոտեցա ուսուցչուհուս:

Արդեն մի քանի ամիս է՝ չենք հանդիպում իրար: Բայց այդ օրը զրույցի ընթացքում իմացա նրա հրատարակվող գրքի մասին... Ուրախությունս չեմ կարող հանձնել թղթին: Եվ այսօր պատահական ձեռքս առա այդ գիրքը: Դա սովորական գիրք չէր: Արագ ուզում էի թերթել, անցնել բոլոր էջերով: Ժամերով ընթերցում էի «Մանկավարժի օրագիրը»:

Շնորհակալություն, տիկի՛ն Պողոսյան: Դուք ոչ միայն ուսուցիչ եք, այլև՝ լավագույններից մեկը, ով իր հոգու խաղաղությամբ չափազանց բարի ու դրական ժպիտով պարզապես չի կարող մարդու հոգում չտպա-

վորվել որպես լուսավոր ու վառ կերպար: Ձեր բոլոր դասերն ու միջոցառումներն ստեղծագործական մեծ ժայթքում են: Յուրաքանչյուր սերնդի հետ քայլում եք ժամանակի շնչով, փորձում եք Ձեր սաների մեջ սերմանել բարին ու գեղեցիկը: Ձեր խորաթափանց հայացքով կարողանում եք սուզվել յուրաքանչյուր աշակերտի հոգու խորքը և մայրական նուրբ ու քնքուշ ժպիտով ու խոսքով հանդարտեցնել հոգու խռովքը:

Հիմա, երբ ամեն անգամ շրջվում ու նայում եմ երամի պես անդարձ հեռացող օրերիս, Ձեզ եմ տեսնում, նաև հասկանում եմ, որ մեծ ուսուցչուհու աշակերտուհի եմ եղել ես: Իմ հիշողության մեջ առանձնահատուկ ձևով միշտ ամուր կպահեմ Ձեր բոլոր խոսքերը՝ իմաստուն և ինչոր տեղ՝ մարգարեական: Շնորհավոր և շնորհակալություն Ձեզ, տիկի՛ն Պողոսյան»:

http://www.usarmenianews.com/am-n-9755.html

2017-10-11

ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ ԳՐԵԼ ԱՅՍՊԻՍԻ ԳԻՐՔ, ԻՍԿԱՊԵՍ ՀԵՐՈՍՈՒԹՅՈՒՆ Է

Ձեռքիս Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանի երկերի ժողովածուն է, որը նվիրեց ուսուցչուհուս օրեր առաջ: Գրքում թողած նրա գրառումը բազմիցս ընթերցել եմ, այդ մի քանի տողում կարծես հայտնաբերում եմ այն նոր բառը, որ թևեր է տալիս մարդուն, տանում դեպի բարձունքներ...Ու այդ իսկ բարձունքի պատվանդանից կամաց-կամաց իջնում եմ կարծես ու համեստորեն ընթերցում նրա տողերը՝ գրքում թողած, որ հասանելի դարձան հանդիսատեսին իմ գրքերի շնորհանդեսի օրը՝ գրողի ընթերցմամբ. «Մեր հող ու ջրի ուսուցչական բարձունքուհուն՝ տիկին Նատաշային...Նրա գործի, կրակների առաջին գծում գրված տողի երկրպագումով՝ Վարդան Հակոբյան: 28. 09.2017 թ.»:

Վերջերս ինձ ուղարկված շնորհանդեսի տեսաերիզն եմ դիտում: Բառ առ բառ փորձում եմ լսելիք դառնալ ու վերարտադրել յուրաքանչյուր ելույթ ունեցողի խոսք, որ կարծես դեռ նոր եմ լսում, նորովի ընկալում: Ու նորից Վարդան Հակոբյան գրողի կողմից ուսուցչուհուս ուղղված մեծարանքի խոսք, որ արձագանք էր տալիս դահլիճում, կերպավորում մտավորականիս: Բայց ի պատասխան այդ գնահատանքի՝ խոսքերս սպառվում են կարծես ու մեջբերում եմ տողերը նրա, որոնք ակնածանքով շարում եմ մեկընդմեջ:

Նման խոսքերից հետո, որ ուղղված էր ուսուցչուհուս ու իմ աշակերտներին, մնում է խորին երախտագիտություն հայտնել Արցախի գրողների միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, մեր շատ հարգելի Վարդան Հակոբյանին:

«...Այսօր մենք շատ ուրախ ենք, որ գտնվում ենք այստեղ, և առիթը մեզ տվեց մեր սիրելի տիկին Նատաշան: Չշտապեմ ասել, որ նա Արցախ աշխարհի, հայոց աշխարհի մտավորականության լավագույն կերպարն է: Երբ ես վերջերս ստացա նրա կողմից «Մանկավարժի օրագիր» և «Գրողն ու ուսուցիչը...» գրքերը, ճիշտն ասած, իմ աչքերի առջև

կանգնեց մի բավականին երանելի մարդ մեր իրականության, մեր գրականության, գիտության համար...Շուշեցի ուսուցիչ Ա. Բահիրաթյանը գրել էր հայոց հին տաղաչափական արվեստի մասին, որը մինչ այսօր իր այժմեականությունը չի կորցրել, և Չարենցը, կարդալով այդ գիրքը, լուսանցքում գրել էր. «Գիրք հանճարեղ և զարմանալի»:

...Մենք՝ Արցախի գրողներս, մտավորականներս, այսօր գտնվում ենք հերոսական Մարտակերտում, իսկապես հերոսական ժողովուրդ, հերոս զինվորներ, և այս հերոսականը շատ է պատշաճում մեր ուսուցչուհի Նատաշա Պողոսյանին: Նա ոչ միայն ուսուցչուհի է, այլև՝ հերոսուհի, որովհետև նա դպրոց է պահում, վաղվա զինվորին է կրթում մի դպրոցում, որը գտնվում է կրակի առաջին գծում բառի ամենաուղղակի իմաստով: Եվ կրակի առաջին գծում գրել այդպիսի գիրք, սա իսկապես հերոսություն է:



Ժամանակ եմ ունեցել թերթելու «Մանկավարժի օրագիրը»: Գրքում բավականին հուզիչ էջեր կան, բավականին հետաքրքիր պատմություններ: Թող ների Աստված ինձ, որ ասում եմ՝ հետաքրքիր.... Գրքում ես հանդիպեցի ցնցող տողերի, երբ երեխան մատներ չունի, ձեռք է բարձրացնում, սկզբում թաքցնում է այդ ձեռքը, որ մատներ չունի, հետո վարժվում է դրան...Սա գեղարվեստական մի ամբողջ երկի համար բավականին հետաքրքիր նյութ է: Եվ այսպես է ստեղծել այս գիրքը Նատաշա Պողոսյանը, նաև ուրախ եմ, որ դեռ պիտի ծնվի այս գրքի երկրորդ մասը:

Այն սպասված գիրք է ընթերցողի համար, այս գիրքն առանձնանում է իր գործառական նշանակությամբ: Ասում են՝ գիրքն օտարվել է, այս գիրքը չի օտարվի, այս գիրքն ունի իր ֆունկցիոնալ դերակատարությունը ոչ միայն Մարտակերտում, այլ, ընդհանրապես, հայ իրականության մեջ: Այս գրքում ոչ միայն մեր հոգսերն ու ցավերն են, այլ այս գիրքը սպեղանի է, ուղեցույց, թե ինչպես պետք է պահել Մարտակերտը, Արցախը, Հայաստանը, ինչպես ընդունել բոլոր արկերը, հարվածները, ինչպես Սարոյանն է ասում, բայց չմեռնել, չզոհվել, չընկնել, ապրել հողի վրա և այդ հողը քեզանով ապրեցնել:

Այս գրքի մեծագույն խորհուրդը հենց սա է, որի համար շնորհակալություն եմ հայտնում Նատաշա Պողոսյանին, ով այսպիսի գիրք է ստեղծել: Սա բացառիկ է, բացառիկ է իր նշանակությամբ, իր ծննդով, բացառիկ է իր ծննդյան միջավայրով, իր աշակերտներով...

Իմացա նաև, որ գրքի կազմի վրա նկարներ տեղադրելու մտահղացումը խմբագիր Լուսինե Ղարախանյանի կողմից է. այն ինձ բավականին շատ դուր եկավ: Թվում է՝ սովորական նկարներ են, բայց նրանք Պողոսյանի աշակերտներն են, որ կարծես Սևակի խոսքերով ասում են՝ մենք կանք, կլինենք ու դեռ կշատանանք... Շնորհակալություն եմ հայտնում մեր աշակերտներին, որ հանդես եկան, շնորհալություն նրանց, ովքեր այնքան լավ պարել գիտեն, երբ ուրիշ բան է պարելը կրակների տակ...»:

http://www.usarmenianews.com/am-n-9766.html

2017-10-12

ԱՅՍ ԳՐՔԵՐԸ ԴՆՈՒՄ ԵՄ ԿՐԾՔԻՍ, ՀԵՏՈ՝ ՀԱՄԲՈՒՐՈՒՄ

Միշտ էլ ոգեշունչ է եղել իմ ուսանողական տարիների դասախոս, բոլորիս կողմից հարգված անհատականության՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանի խոսքը, որ բազմիցս հնչել է Մարտակերտի հասարակության առջև իմ կազմակերպած միջոցառումներում՝ դա լինի դասական գրողներին նվիրված գրական-գեղարվեստական ցերեկույթներ թե շնորհանդեսներ, որոնց նա միշտ էլ պատրաստակամությամբ իր մասնակցությունն է ցուցաբերել՝ իր բազմակողմանի գիտական վերլուծություններով, հետաքրքիր խոսքով՝ արժանանալով հանդիսատեսի բուռն ծափահարություններին:

Ես նրան տեսնում եմ տարիների հեռվից դեռ այն ուսանողական օրերին՝ բոլորիս հետ այնքան մտերմական ու ազնիվ հարաբերությամբ: Նա ինձ երևում է հետուսանողական տարիներին ու միշտ՝ իր վառ հիշողությամբ, ուսանողուհուս հանդեպ ունեցած բարձր գնահատանքով: Ես նրան տեսնում եմ մայրաքաղաքում կայացած տարբեր միջոցառումների իմ մասանակցությամբ՝ մեր դասախոս, մեզ համար միշտ էլ «ընկեր Խանյան» մնացած հրաշալի մարդու հետ առերեսվելով:

Նա ինձ երևում է 2013-ին՝ իմ առաջին գրքի՝ «Ուսուցչի իմ թղթապանակը» մեթոդական ձեռնարկի շնորհանդեսին՝ այդ գրքի մասին իր գիտական վերլուծությամբ, ու երբևէ չի մոռացվում գնահատանքը նրա, որ իր իսկ խոսքով՝ այն դարձավ «Օրինակելի «Թղթապանակ»՝ անհրաժեշտ բոլոր ուսուցիչներին» և բաժանվեց Արցախի դպրոցներին:

Ակնածանքով ու երախտագիտությամբ լսեցի օրեր առաջ իմ գրքերի շնորհանդեսին արժանավոր մարդու խոսքը, այդ նույն զգացողությամբ տեսաերիզով այս օրերին լսել եմ բազմիցս նրա ելույթից պատառիկներ, որ գիտության բարձունքին հասած մեծությունն է ասել այդ խոսքերը և հոգիս լցրել իր հանդեպ ունեցած պատկառանքով:

«...Նատաշա՛, ես այս երկու գիրքը համարում եմ քո նորածին արու թոռները: Այս գրքերը դնում եմ կրծքիս, հետո՝ համբուրում, ապա համբուրում եմ քո ձեռքը, որ այս հրաշալի գործը կատարել ես:

«Մանկավարժի օրագրի» մասին քիչ է ասել, որ այստեղ զրույց կա, մեր աշակերտների խոսքը կա, այս գրքով Նատաշան ստեղծել է մեր ժամանակաշրջանի գեղարվեստական և վավերագրական պատկերը: Կանցնեն տասը, քսան, երեսուն տարիներ...Անպայման այս գրքով ճանաչվելու է մեր ապրած ժամանակաշրջանը: Այստեղ նա ոչ թե հանդես է գալիս ժամանակի օրագիր ստեղծող, այլ նա, պարզապես, որպես ինքնակենսագրական երկ, ստեղծել է հայ ուսուցչուհու կերպար: Նատաշա Պողոսյանն այստեղ հայ ուսուցչուհու գեղարվեստական կերպար է, նաև ստեղծել է աշակերտների կերպարներ: Այստեղ է այդ գրքի պատմական, արդիական նշանակությունը, առավելապես՝ նրա գործառնական նշանակությունը:

....Այսպիսի ոգի ունեցող ժողովրդին ոչ ոք չի կարող հաղթել, այսպիսի երեխաներից, որոնց մասին Նատաշա Պողոսյանն է գրել, ոչ ոք չի կարող Արցախ խլել... Արցախը Արցախ է, Արցախը հայ ժողովրդի արժանապատվությունն է, և այդպես էլ լինելու է...

Նատաշա Պողոսյանը շատ բարձր մակարդակով գիրք է ստեղծել: Ես ծանոթացել եմ նաև Լևոն Ադյանի մասին գրած նրա «Գրողն ու ուսուցիչը..» գրքի էջերին: Այս գիրքը ևս նրա խիզախություններից մեկն է: Այս գրքերով և նրա տաղանդով ես հիանում եմ, հիանում եմ և շնորհավորում նրան, նաև հպարտ եմ, որ նա եղել է ուսանողական տարիների իմ գերազանցիկ ուսանողուհին...»:

http://www.usarmenianews.com/am-n-9769.html

2017-10-13

ԱՆՑԱԾ ՕՐԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՄԲ

Օրեր առաջ Ռուսաստանից Լևոն Ադյան գրողի, նրա տիկնոջ՝ Էլմիրա Ադյանի, ու լոսանջելեսաբնակ բանաստեղծուհի Նելլի /Ավակովա/ Գրիգորյանի այցը Մարտակերտ մի նոր հպարտությամբ էր լցրել հոգիս, դարձել մեր հասարակության՝ նրանց հանդեպ ունեցած ակնածանքի աղբյուրը:

Այս օրերին այդ հանդիպման տեսաերիզն եմ նայում, ձգտում նորից լսել նրանց խոսքը, որտեղ հայրենի Արցախի հանդեպ անզուսպ մի սեր կար, իսկ Մարտակերտը նրանց համար հարազատ օրրան էր, հարազատ միջավայր՝ անդարձ օրերի հիշողություններով: Նելլի Ավակովայի՝ Արցախին նվիրած բանաստեղծությունը, որ հնչեց, հայրենի հող ու հանդին սիրահար հայուհու խոսք էր, չնայած իր կյանքն անցկացրել էր մեծ քաղաքներում: Ուսուցչուհուս հանդեպ ունեցած մտերմական շունչը զգալի էր դեռ բեմից, որ սկիզբ էր դրվել ապրիլյան պատերազմական օրերից նրա հեռախոսազանգով ու դարձել շարունակական մինչ օրս:

Էլմիրա Ադյանի հետ իմ ծանոթությունը կամաց-կամաց իր տեղը զիջեց հոգու մեղմագին տվայտանքի, ես ինձ տեսա նրա աչքերից առատորեն հոսող արցունքների արտացոլանքում: Մեծագույն կսկիծ տեսա, որդիներ կորցրած մայրական սիրտ՝ ինձ ուղղված նրա երախտիքի խոսքերում, որ ազնիվ մղումով ինձ տանում էր դեպի նրան խոնարհման, որ զսպում էի իմ հոգում:

Մեկընդմեջ Լևոն Ադյան գրողի՝ այդ օրվա ելույթի տողերն եմ շարում: Ուսուցչուհուս հանդեպ ակնածանք կար, հուզումնալից խոսք, լավագույն գնահատանք, բարի ցանկություններ, որ շնորհակալության ու հպարտության զգացումով է լցնում հոգիս, ինձ տանում դեպի այն օրե-

ը, երբ դեռ նոր էի ծանոթացել գրողի հետ սոցցանցում՝ առանց մտքով անգամ անցկացնելու, որ հնարավոր է՝ նրա զավակների հիշատակին գիրք գրեի գրողի գեղարվեստական արձակի մասին ու արժանանայի այսպիսի մեծարանքի արձակագրի կողմից, այն էլ՝ իմ գրքերի շնորհանդեսին՝ մեր հարազատ Մարտակերտում:

«Սիրելի՛ բարեկամներ, իրոք, սիրելի՛ բարեկամներ, որովհետև Մարտակերտի շրջանն իմ հայրենիքն է: Եվ, ամեն անգամ այստեղ գալով, երբ մենք ջահել էինք, գեղեցիկ և մերն էր ամբողջ աշխարհը, ես մտնում էի Մարտակերտ սրտի անդիմադրելի մղումով, որովհետև այստեղ բազում ընկերներ ունեի...

Այսօր ինձ համար տարօրինակ օր է, ուրախալի և տխրալից օր: Եթե ինձ նման խաթարված ճակատագրի տեր մարդու համար կան երջանիկ օրեր, ապա սա իմ ամենալավ օրերից մեկն է, որովհետև այս օրը, այս հանդիպումն այնպիսի մի ջերմություն է բերում իմ հոգուն, որ ես հեռավոր ցրտաշունչ Ռուսաստանում էլ կզգամ այդ ջերմությունը, և դա կօգնի մեզ ապրելու: Ես ուրախ եմ, որ եկել ենք այստեղ Սանկտ Պետերբուրգից, իմ տիկնոջ հետ եկել ենք հաղորդելու մեր սրտի ակնածանքը, մեր հոգու ամենաջերմին խոսքը Նատաշա Պողոսյանին՝ հաղորդելու մեր տուրքը նրան, որ նա իր գիրքը նվիրել է մեր զավակների հիշատակին, և առհասարակ, որ նա ամբողջապես վերլուծել է իմ ստեղծագործությունները:

Ես հիմա կարիք չունեմ անդրադառնալու դրանց վերլուծությանը, բայց նա այնպես գեղեցիկ, այնպես գեղարվեստորեն բարձր մակարդակով է դա կատարել, որ երևի ես ինքս չկարողանայի այդպես անել: Իր գրածները կարդալով՝ երբեմն ինձ թվում էր, թե երեխաների փոխարեն ինքն է գրում, այնքան բարձր մակարդակով էին գրված այդ մեջբերումները: Այսօր տեսնելով այդ երեխաների տաղանդը՝ ես զգացի, որ ինքն է նրանց մեջ սերմանել այդ շնորհը, այդ իրենից է՝ այդ տաղանդը, այդ սերը փոխանցվել երեխաներին:

Մեծ է Նատաշա Պողոսյանի ավանդը: Մեր այս ձորերում, մեր Մարտակերտի շրջանում նա հանդես է գալիս որպես երևույթ, որ այսպես

կարողանում է հայեցի դաստիարակել մեր երեխաներին, նա կարողանում է ապացուցել, որ ազգն իր մշակույթով է հանդես գալիս որպես ազգ:

Ես ցանկանում եմ մեկ անգամ ևս խորին շնորհակալություն հայտնել Նատաշային: Ցանկանում եմ նորանոր ստեղծագործական նվաճումներ, որպեսզի հայտնի մանկավարժ Սուխոմլինսկու պես մեր հանրապետությունում, Հայաստանում, մեր սահմաններից դուրս նրան իմանան որպես հայտնի մանկավարժ, նրան իմանան ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև՝ ուրիշ երկրներում: Ցանկանում եմ, որ նա շարունակի հրատարակել իր մյուս գրքերը, իսկ մեր ժողովրդի համար թող հաստատվի խաղաղություն, բայց ոչ մի թիզ հող չհանձնվի թշնամուն»:

http://www.usarmenianews.com/am-n-9776.html

2017-10-16

ՆՄԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ ԱՌՈՂՋ Է ՏՐՈՓՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԻՐՏԸ

Եթե ասեն՝ հորինի՛ր հրաշալի մարդու կերպար, ապա հորինելու կարիք չկա, երբ այդ «հորինվածքն» իրական է, իմ կողքին, երբեմն՝ հեռվում, բայց իմ հոգում՝ իր ազնվությամբ, մարդկային գեղեցիկ բնավորության գծերով, ժպտերես ու համեստության մեջ սքողված, որ երբեմն ես ինքս եմ ուզում նրան այդ հեզությունից հանել, երբ մեր շուրջը արտաքուստ համեստությամբ շպարված մարդիկ կան, բայց չգիտեն համեստությունն ինչ է:

Ինչու՞ է մարդն ամաչում, երբ ասում ենք՝ հրաշալիք եք Դուք: Բայց ամաչելը հատուկ է մարդկանց, իսկ նրա առավել շատ ամաչելուց ենք զարմանում: Երբ նրան հրավիրում եմ բեմ, այստեղ էլ նա համեստություն է ցուցաբերում, ձգտում խուսափել երևալուց, իսկ երբ բարձրաձայնում եմ մեր նախարարությունում նրա զբաղեցրած մասնագիտական կրթության ու գիտության բաժնի վարիչ լինելու մասին, այդ կերպարն այստեղ էլ երևում է իր համեստության մեջ, բայց նույնպես՝ շրջապատին տեսանելի չլինելու ձգտումով: Ինչու՞ եմ իր անվան-ազգանվան դիմաց նրա գրած այն համեստ համառոտ գրությունը՝ հ.գ.թ.դ, ես փորձում բացել, որ ընթերցողին տեսանելի լինի իմ երեք գրքերի խմբագրի անցած գիտական ճանապարհը, երբ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ է, բայց համեստորեն ձգտում է տեսանելի չդարձնել այն:

Լինու՞մ է այսպես, երբ վերջին մի քանի տարիների մեր մտերմության արդյունքում ուզում ես անցնել Դու-ի, բայց նորից այն հմայիչ Դու-ն իր տեղը զիջում է Դուք-ին, և հասկանում ես, որ այդ Դուք-ն այնքան սեր, հարգանք ու հմայք ունի իր ներսում, որ չես ուզում նրանից կտրվել, ու նորից այդ ազնիվ ու համեստ կերպարի մեջ տեսանելի է դառնում մի հրաշալի աշխարհ...Եվ հասկանում ես, որ հորինելու կարիք չկա, երբ զգում ես, որ այդ «հորինվածքը» կողքիդ է իսկապես, այն

էլ՝ համեստությամբ ու ամաչելու հակումով, մտերմական ու շատ սիրալիր Դուք-ի մեջ ամփոփված:

Շնորհանդեսի օրվա նրա ելույթի խոսքերը դեռ արձագանք են տալիս իմ հոգում, և Լուսինե Ղարախանյանի հանդեպ ունեցած շնորհակալական զգացումով այն հրապարակում եմ սիրով. «Ասում են՝ բոլոր

ճանապարհները տանում են դեպի դպրոց: Տարածության ու ժամանակի բոլոր հանգուցակետերում ծագող խնդիրները բեկվում են դպրոցի և ուսուցչի աշխատանքի միջով: Եթե դիվանագիտության ու քաղաքականության մեջ հաղթանակներ են կերտվում, եթե սահմանում կանգնած զինվորը հաղթել է, եթե տնտեսությունը շահեկան վիճակում է, եթե մշակույթը տեսակ է պահպանում, ուրեմն դպրոցի ուսուցիչը հաղթել է: Ցավոք, այսօր հաղթող և իշխանավոր ուսուցիչներ քիչ ունենք, և հաղթող ու իշխանավոր ուսուցիչների կարիք շատ ունենք, այնպիսիններ, ովքեր ունեն ստրատեգիական մտածողություն, ովքեր ունեն գերակա նպատակ, ովքեր արդարամիտ են, անկողմնակալ են, պատեհապաշտ են...Այս իշխանավոր ուսուցիչներից է Նատաշա Պողոսյանը, ում հետ, իսկապես, երջանկություն է, որ շփվում եմ, նրա նման ուսուցիչների շնորհիվ է, որ մենք հաղթում ենք:

Ժամանակը, դրանից ածանցվող դեպքերն ու իրադարձությունները բեկվում են մանկավարժի մասնագիտության, համոզմունքների ու աշխարհայացքի, նրա գործունեության արդյունքների՝ աշակերտների բոլոր ստեղծագործությունների միջով և դառնում մանկավարժի օրագիր: Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Նատաշա Պողոսյանը վաղուց հասցրել է նվաճել Արցախի, ինչու չէ, նաև հայկական ուսուցչական հանրույթի սերն ու հարգանքը: Ես ուզում եմ խոսել ոչ թե խմբագրի, այլ կրթության համակարգի լիազոր մարմնի աշխատողի բերանով: Շարադրությունների ու ստեղծագործական աշխատանքերի մրցույթներում ու առարկայական օլիմպիադաներում հաղթող աշակերտների միջոցով եմ դեռևս նրան ճանաչել՝ հեռվից, տա-

ռածության վրա, ու համոզվել, որ գործ ունենք իշխանավոր ուսուցչի կերպարի հետ, չափանմուշային մարդու, ով մինչև ողն ու ծուծը նվիրված է համակարգին:

Երջանիկ եմ, որ ճանաչել ու շփվում եմ Նատաշա Պողոսյանի հետ, ումից մեծ եռանդ, ոգևորություն եմ ստանում: Սիրելի՛ Պողոսյան, Ձեզ նման ուսուցիչների շնորհիվ առողջ է տրոփում կրթության համակարգի սիրտը: Առողջություն Ձեզ ու երկար տարիների կյանք, ինչից կշահենք բոլորս՝ Արցախի դպրոցը, կրթության համակարգը, ուսուցչությունը, աշակերտությունը, հասարակությունն ու մեր երկիրը: Սիրով կսպասենք Ձեր մանկավարժական տարեգրության հերթական նյութերին: Համոզված ենք, որ «Մանկավարժի օրագրի» հերթական հատորները կշարունակեն հաճելիորեն զարմացնել մեզ Ձեր մտքի ու երևակայության փայլատակումներով»:

http://www.usarmenianews.com/am-n-9788.html

2017-10-17

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ Է

Այս ամիսներին շատացել են Մարտակերտ եկողները, հիմնականում՝ ռուսաստանաբնակ մարտակերտցիները: Ոգևորությունս անչափելի էր, երբ լսեցի, որ եկողների մեջ կային մարդիկ, ովքեր կարոտով են մտել այստեղ, ովքեր իրենց մանկության օրերից են վերհիշում հարազատ ծննդավայրը, բայց տարիներ անց եկել են այս օրը շնչելու, հարազատ օջախը տեսնելու, իրենց հայրենակիցների հետ շփվելու:

Հակառակ ոգևորությանս՝ հիասթափությունս մեծ էր, երբ լսեցի, որ Մարտակերտ այցելածներից ոմանք հեռուներում սկսեցին հնչեցնել այստեղ ապրողների աղքատիկ կյանքի մասին, մարդկանց ոչ զգոն վիճակից, այն էլ՝ սահմանամերձ բնակավայրի «ոչ զգոն վիճակ»: Սա վրդովեցրեց ինձ՝ մտավորականիս, որ ապրում եմ այս բնակավայրում, շնչում այս օդը, զգում կողքիս ապրող մարդու անհանգիստ ապրումները պատերազմական գոտում, հասկանում յուրաքանչյուրի ցավը, երազում խաղաղ կյանք, սահմանում կանգնած զինվորին ցանկանում անփորձանք ծառայություն:

Այսօրվա գրառմանս առանցքում այն մարտակերտցիներն են, ովքեր վաղուց՝ դեռ քառորդ դար առաջ, բռնագաղթից հետո ապաստան են գտել հեռուներում: Ոմանք՝ բարեկեցիկ կյանքով, ոմանք՝ գոյություն քարշ տալով, ոմանք իրենց համեստ ապրելակերպով դարձել են այդ երկրի քաղաքացին ու նույնիսկ հեռացել հայկականից, մեր սովորույթներից, լեզվից...

Խոսքս նրանց մասին է, ովքեր մեծ քաղաքների շլացուցիչ լույսերին սովոր աչքերով են մտել Մարտակերտ ու զարմացել գիշերային մթությունից: Խոսքս նրանց մասին է, ովքեր սովոր են ասֆալտապատ ճանապարհով անցնել ու հանկարծ այստեղ նրանց կոշիկներն են ցեխոտվել: Ես նրանց մասին եմ բարձրաձայնում, ովքեր չտեսան այստեղ ապրող մարդկանց անհանգիստ հոգու տվայտանքը, այլ տեսան արտաքինից չփայլող մարտակերտցիների համեստ հագուկապը, որ աղքատիկ է երևում: Խոսքս նրանց մասին է, ովքեր սովորել են քաղքենի կյանքով ապրել, բայց մնացել են հոգով աղքատ, ու եկել են մեր հայրենի բնակավայրի ավերակների ու պատերազմական կորստյան ցավի կողքին մարդկանց հարուստ կյանքը փնտրելու:

Ո՞վ է ուզում իմանալ Մարտակերտում ինչ կա: Կամ ի՞նչն է հետաքրքրում Մարտակերտ մտնող այցելուին, առանձնապես նրանց, ովքեր տեսան իրականությանը չհամապատասխանող պատկեր՝ մարդկանց ծայրահեղ աղքատիկ վիճակ, խմիչքի ազդեցության տակ գտնվող մարդիկ, որոնց զգոնությունից է կախված ճանապարհային երթևեկությունը:

Այստեղ ապրողներիս հոգսառատ կյա՞նքը, խաղաղ ապրելու երազա՞նքը, քչով բավարարվելու հակու՞մը, երջանիկ ապրելու ցանկությու՞նը...Արդյո՞ք սրանք հետաքրքրում էին նրանց, այստեղ եկողներին, առավելապես մեր բնիկ այն մարտակերտցիներին, որոնցից ոմանք հիմնականում իրենց ծննդավայրն են գալիս որևէ փաստաթուղթ ձեռքբերելու ցանկությամբ՝ առանց ուշադրություն դարձնելու այստեղ ապրողների հերոսական կամքին, որ արարում են, շարունակում գոյատևել, որ կարողանում են ապրել ու նորից պատերազմ տեսնել, որ կարողանում են տարհանվել ու նորից վերադառնալ, որ կարողանում են ավերակ տուն վերականգնել ու նորից ապրել:

Երբ պատերազմի հետքերը տեսնում եք, ապա այն ավերակների մեջ հայի հառաչանքներին լսելի՛ դարձեք, որ այն փլատակներն են արձագանքում: Մոտեցե՛ք, ձեռքով շոշափե՛ք այն, այդտեղ ծխից կուրացած, փուլ եկած տանիքի տակ մարդիկ են ապրել, որ հիմա չկան կամ գուցե փրկվել են, բայց օջախ են կորցրել: Եկե՛ք, փնտրե՛ք այդ կորսված օջախները, եթե նույնիսկ հետքեր կան մնացած, իսկ գուցե նաև ձեր քանդված օջախներն են, որոնց տեղը չգիտեք անգամ: Գերեզմանոցներ մտե՛ք, հուշարձաններ այցելե՛ք, հիշատակ հարգե՛ք...Մարդկանց մեջ հոգի փնտրե՛ք, կամք փնտրեք, հերոսներ փնտրե՛ք, որ ամենուր են, երազանքներ փնտրե՛ք... Ու կգտնեք..., թեկուզ արտասվախառն, բայց կգտնեք...Հարստություն ու ճոխություն մի՛ փնտրեք, որովհետև հարստությունը Մարտակերտի ազատությունն է...

http://www.usarmenianews.com/am-n-9790.html

2017-10-18

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՄՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկընտրանքը, թե նոր ուսումնականից որ դասարանն ընտրեմ երկու 11-րդ դասարաններից, դասղեկ Անահիտ Ներսիսյանի կողմից զարմանալի չէր, որ նախընտրությունը տվեց իր դասարանին՝ այդ գ-ի մեջ ամփոփված դեռահասներին դասավանդելու բուռն ցանկությամբ: Եվ շուտով ես սկսեցի մտնել 11-րդ ա և գ դասարանները՝ կարծես չցանկանալով տարբերակել մեկը մյուսից: Ու ամեն անգամ հոգու հանգստություն եմ ապրում՝ այդ դաարանները մտնելով՝ աշակերտների ուշադիր հայացքների ներքո, լսողություն դարձած և ինձ ունկնդրելու ցանկությունից հիացած:

11-րդ գ դասարանի աշակերտների կողմից դասղեկին ուղղված գնահատանքի խոսքեր կարդացի օրեր առաջ. «Արդեն չորս տարի է, ինչ տիկին Ներսիսյանը դասավանդում է մեզ: Ժամանակը, տարիներն այնքան ամուր և անխզելի կապ ստեղծեցին նրա ու մեր միջև, որ այս պարագայում սխալ համեմատություն չէր լինի, եթե մայրական սիրո չափ համեմատվեր այն նվիրական զգացումը, որ նա տածում է դեպի իր աշակերտները: Առանց խտրականության, անգամ անտեսելով աշակերտների թույլ կամ ուժեղ ընդունակությունները՝ նա բոլորին ընդունում է որպես առանձին անհատականություն: Նրան տրված է լինել հոգեբան, հասկանալ այն, թե ինչ է ուզում աշակերտը, ինչպես է մտածում և ինչ ձգտումներ ունի: Միայն լավ մասնագետ լինելը բավարար չէ մանկավարժի օրինակելի կերպար լինելու համար, նա ունի այնպիսի դրական հատկանիշներ, որոնցով էլ արժանացել է բոլորիս սիրուն...»

Անհրաժեշտ էր աչքով տեսնել ու զգալ այդ խոսքերի ճշմարտացիությունը, որի համար երկար ժամանակ պետք չէր: Անզեն աչքով տեսանելի էր այն ուշադրությունը, որ տածում էր դասղեկն իր դասարանի աշակերտների հանդեպ, կասկածելի չէր ամենևին, որ աշակերտ-ու-

սուցիչ հարաբերությունը բարձր մակարդակի վրա էր այդ դասարանում՝ հանձին Ներսիսյանի:

Հետադարձ հայացք եմ ձգում իմ գրքերի շնորհանդեսի օրվան, ուսուցչուհուս մատուցած անակնկալին, որ միջոցառման վերջում ինձ մոտեցան այդ աշակերտներն իրենց դասղեկի հետ:

Մենք բեմահարթակում էինք, իմ ձեռքին նրանց՝ ինձ նվիրած ծաղկեփունջն էր, հուշանվեր. ինձ ուղղված շնորհավորանքների ընթացքում մենք հասցրինք նաև լուսանկարվել: Բերկրալից պահ էր, երբ աշակերտների կողքին նաև մեր ուսուցչուհիներին տեսա. հավերժացման ակնթարթներ կային, ուրախ ժպիտներ, որ միախառնվել էիր իրար:

Այդ օրվա հիշողությամբ 11-րդ գ դասարանի դասղեկ և ֆիզիկայի ուսուցչուհի Անահիտ Ներսիսյանի կերպարն ինձ տարավ դեպի այն անցած դպրոցական օրերը, երբ ես էի նրա դասղեկը և այն դպրոցական օրերին հիանում էի նրա ընդունակություններով, կազմակերպչական ջիղով, հպարտանում նրա հայոց լեզվի և գրականության հանդեպ ունեցած սիրուց, նրա ասմունքելու շնորհքից, ու այս օրերին էլ ամենևին չեմ զարմանում, երբ նրա աշակերտներն են ասում. «Հիանալի է, երբ ուսուցիչն ակնածանքով է նայում աշակերտներին, երբ մոր նման երբեմն հրճվում է նրանց փոքրիկ չարաճճիություններից, բայց, միևնույն ժամանակ, խստությամբ մանրազնին հետևում բոլորին: Այո՛, ժամանակը և ուսուցչի անմնացորդ նվիրվածությունն է ստեղծել այն ամուր կապը, որ նման է պիրկ, չկտրվող պարանի, և այդ սերը երբեք էլ չի մարի, պարանն էլ չի կտրվի, քանի որ տիկին Ներսիսյանի շնորհիվ վեճեր չեն լինում դասարանում, և բոլորը, եթե անհրաժեշտ լինի, պարանի նույն կողմից կբռնեն, և ոչ ոք չի անցնի հակառակ կողմը: Ահա թե ինչով է յուրահատուկ 11-րդ գ դասարանը»:

http://www.usarmenianews.com/am-n-9795.html

2017-10-19

ՈՉ ՈՔ ՉԿԱՐՈՂԱՑԱՎ ՓՐԿԵԼ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐԻՆ

Համացանցը լցված է Լևոն Հայրապետյանի մահվան մասին ազդարարող հոդվածներով, հետմահու հայ բարերարին ուղղված ներողություն հայցող խոսքերով, ամոթանք կա, որ հայը չկարողացավ պահել կենդանության օրոք լեգենդ դարձած Մարդուն: Մեղադրանքներ կան վերնախավի դեմ, մարդկային վիրավորանքը հորձանք է տվել, ալեկոծվել, ափերից դուրս եկել, որ չկարողացան պաշտպանել Մարդու, ով անչափելի մեծ բարեգործություն է կատարել հայության, առանձնապես՝ արցախցիներիս համար:

700 հարսանեկան զույգ, որոնցից շատերը հարսանքով ամուսնանալու երազանք ունեին, ու նա՝ այդ մեծատառով Մարդը, երազանքներ իրականացրեց:

700 զույգ, որ ճառագեցին, ջերմացան, սիրով վարակվեցին՝ իրենց շուրթերին Լևոն Հայրապետյան բարերարի ազնվագույն նվիրումը: 700 ընտանիք ճյուղեր տվեցին, ու նրանց մեջ «Լևոն» անունը սրբություն դարձավ...700 երջանիկ ընտանիք ջերմացավ Լևոն Հայրապետյան բարեգործի նյութական օգնությամբ:

Ասում են՝ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի բարձունքում գտնվող 13-րդ դարի Գանձասարի վանական համալիրը վերանորոգել է: Ասում են՝ մեծ գումարներ է ներդրել տարբեր ծրագրեր իրագործելու համար: Ասում են այնքան շատ բաներ, որ գրելն անհնար է...Ու ես այդ ասված խոսքերի մեջ փնտրում եմ այն մարդկանց, ովքեր նույնպես մեծ գումարների տեր են, մեծ ունեցվածքով մեծահարուստներ, բայց այդպես լիասիրտ ձեռք չմեկնեցին հայությանը, որքան Լևոն Հայրապետյան բարերարը:

Գուցե հարցնենք արցախցիներին, հենց թեկուզ Արցախ այցելած հյուրերին, թե ինչ ակնածանքով են բարձրանում Գանձասարի վանք

բարենորոգված, ասֆալտապատ ճանապարհով, ինչ երկյուղածությամբ են աղոթքներ մրմնջում առ Աստված այդ վերանորոգված սրբասուրբ պատերի ներսում, ինչ հիացմունքով են նայում շրջապատի անձեռակերտ բնությանը, որ իր ներսում ձեռքով կերտված հրաշալիքներ ունի... Ու դրանց կողքին հպարտորեն հնչող Լևոն Հայրապետյան բարերարի մասին օրհնանքների բազմերանգ արձագանքներ...

Մենք մեղավորներ ենք փնտրում, մեղադրում մեզ, ներողություն հայցում, որ ամենադյուրին արտահայտվող բառն է դարձել շրջապատի համար, մենք ափսոսում ենք, գուցե զայրանում, որ չկարողացանք փրկել Մարդուն, ով իր բարեգործության սահմանները որքան ընդարձակել, նույնքան նեղացրել էր իր ազատությունը: Մենք կսկիծ ենք ապրում մեծ մարդու կորստյան համար, մեր վիշտը տարածքներ չի ճանաչում...Ու ես էլ դառնում եմ մեկն այն հարյուր հազարավորներից, որ չկարողացանք փրկել Մարդուն:

Ասում են՝ գյուղ կանգնի, գերան կկոտրի, բայց ո՞վ է ասում, որ հայությունը, տեր կանգնելով հայ բարերարին, կկարողանար փրկել նրան, ո՞վ է ասում, որ հայության պոռթկացող ցասումը կօգներ նրա ազատության վերականգնմանը: Եթե կան աշխարհով մեկ սփռված հայության պոռթկացող ճիչը լսողներ, թող կանգնեցնեն սահմանին զոհվող զինվորների կորուստը, թող այս աշխարհին խաղաղություն բերեն, թող հայրենադարձվեն աշխարհի հայերը, որ կարոտը բեռ է դարձել նրանց հոգիներում:

Ապրում եմ իմ բաժին ցավը, հալածվում իմ խղճի դատավորից: Ինչպե՞ս չկարողացանք փրկել համազգային սեր և հարգանք վայելող մեծ բարերարին: Անհանգիստ է Գանձասարի բարձունքը, բնությունը՝ շունչը պահած: Թվում է՝ հուղարկավորությունից հետո հոգոց կհանի: Խռովք կա Վանքի ամեն մի անցորդի աչքերում, կորստի ցավ...Ինչու՞ է այդպես. մահանալուց հետո ենք սկսում իսկապես բացահայտել ու գնահատել մեր մեծերին:

http://www.usarmenianews.com/am-n-9798.html

2017-10-21

ԱՅԴ ԳՐՔԵՐՆ ԻՐԵՆՑ ԱՐԺԱՆԻ ՏԵՂԸ ԿԶԲԱՂԵՑՆԵՆ ՊԱՏՄԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Իմ գրքերի հրատարակվելուց հետո Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն Սեդա Հայրապետյանի՝ այդ գրքերն իրենց մոտ ունենալու առաջարկն ամենևին զարմանալի չէր ինձ համար և ոչ էլ՝ հիշեցումը մանկավարժիս, որ անպայման ներկայացնեմ նաև իմ անձնական գործերը՝ բոլոր պարգևատրումներով ու վաստակավոր մանկավարժի կոչումով: Վաղուց տեղեկացված էի այդ մասին, նաև գեղեցիկ էր առաջարկը: Այն ինձ տարել էր մտքերով դեպի գալիք, որ գուցե ժամանակի ընթացքում ուսուցչուհուս անցած ճանապարհը կդառնար հիշողություն՝ պահ տված պատմությանը սերնդափոխության այս անցավոր կյանքում:

Այս պահին թանգարանի աշխատող Մարինե Միքայելյանի գրած տողերն եմ ընթերցում, որ ինձ էր հանձնել օրեր առաջ նրա գործընկերուհի Նաիրա Ավետիսյանը: Այդտեղ հիշողություն կար թանգարանում անցկացրած միջոցառման մասին, որ նվիրված էր Սումգայիթի և Բաքվի ոճրագործության զոհերի հիշատակին: Այդտեղ գրքի քննարկում կար, կարծիք՝ հրատարակված գրքերիս մասին, գնահատանքի խոսքեր, որ շնորհակալական զգացումով եմ ընթերցում, նաև անթաքույց է հարգալից վերաբերմունքս թանգարանի տնօրենի և մյուս աշխատողների հանդեպ, որ տարիների հեռվից է գալիս:

«Նատաշա Պողոսյանի տքնաջան աշխատանքի արդյունքն ընթերցողի սեղանին է: Դա ուսուցչուհու պրպտումների վավերագրություն է՝ իր հերոսներով: Նրանք այսօրվա սերունդն են՝ սահմանամերձ Մարտակերտի փոքրիկ բնակիչները՝ հասուն մտքերով, անմնացորդ հայրենասիրությամբ: Այդտեղ անդրադարձ կա նաև 2017 թվականի փետրվարին կազմակերպված միջոցառման մասին: Սումգայիթյան ոճրագործության տարելիցի կապակցությամբ թանգարանում կազմակերպ-

ված գրական ցերեկույթի երկրորդ մասը տիկին Պողոսյանն էր վարում: Վերլուծող անձիք դպրոցականներն էին՝ հասուն մտքերով, սթափ հայացքներով: Քննարկվող թեման Սումգայիթյան ոճրագործությունն էր՝ մեր համերկրացի գրող Լևոն Ադյանի «Հեռացող եզերք» վեպի վերլուծությամբ:

17-18 տարեկան մարտակերտցի պատանիներն ու աղջիկներն ունեին ձևավորված կարծիքներ, կարողանում էին պաշտպանել այդ կարծիքները, բացատրել դրանց հանգելու դրդապատճառները: Դա մի անսովոր հարցազրույց էր, պատանեկան արդարացի պոռթկում, որի մեջ կար հույզերի կծիկ, ցավի համն ու գույնը զգալու ունակություն, արդարությանը հասնելու բուռն ցանկություն: Մանկավարժ Պողոսյանի անտեսանելի ուղղորդումները միտված էին դեռահասներին, որ նպատակ ունեին զարգացնելու նրանց անկաշկանդ մտածելու և արտահայտվելու կարողությունը:

«Այդ գրքերը յուրահատուկ ամփոփագրեր են՝ մտքերի և փաստերի, հույսերի և հույզերի, կատարված աշխատանքների...

Այդտեղ իրական կերպարներ կան, ովքեր իրենց ավելի կայացած ու արժանավոր են զգում:

Նրանք անկոտրում կամքի տեր են, կարողանում են հաղթահարել դժվարություններ, նաև կարողանում են ժպտալ աշխարհին և արցախյան բարեսրտությամբ նայել ապագային: Այդ գրքերն իրենց արժանի տեղը կզբաղեցնեն Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարանի գրադարանում»:

http://www.usarmenianews.com/am-n-9810.html

2017-10-22

ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՂ ՄԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԸՆՏԱՆԻՔ

Ես զրուցում եմ ինձ շատ մտերիմ ընտանիքում նոր ամուսնացած զույգի՝ Արտակի և Շուշանի հետ: Երկուսն էլ բարձրագույն կրթություն են ստացել Արցախի պետական համալսարանում: Արտակը տարիներ առաջ ավարտել է ճարտարագիտական ֆակուլտետի շինարարական բաժինը: Շուշանն այս տարի ավարտել է բնագիտական ֆակուլտետի «Մաթեմատիկա և համակարգչային գիտելիքներ» բաժինը, ընդունվել նույն բաժնի մագիստրատուրան: Բուհն ավարտել է գերազանց գնահատականներով, արժանացել Արցախի նախագահի ուշադրությանը, պարգևատրվել թանկարժեք նվերով:

Ինչու՞ է մեր կողքին ապրող երիտասարդը մեկնում արտագնա աշխատանքի: Հարցի պատասխանը միշտ էլ կա: Մարդ պետք է աշխատանք ունենա, ապահով լինի նյութապես: Արտակը բուհն ավարտելուց հետո պայմանագրային զինծառայող է եղել: Հիմա այս նորաստեղծ ընտանիքը պետք է շուտով մեկնի օտարության, այնտեղ տան տղամարդը կաշխատի, իսկ Շուշանի կարմիր դիպլոմը գուցե և մնա փոշոտված, այնինչ նա էլ սիրում է իր մասնագիտությունը. «Կցանկանայի հաշվապահական աշխատանք տանել, սիրում եմ մանկավարժությունը, կաշխատեի նաև այդ մասնագիտությամբ, եթե աշխատանք լիներ»:

Աշխատատեղ ունենալն Արցախում դառնում է հարցերի հարցը: Այս անգամ չեմ ուզում մեղավորներ փնտրել, երբ ամենուր այս մտահոգությունն է մի պատերազմական գոտում, որտեղ հայացքներս հառած երկնքին՝ խաղաղ օրերի երազանքներով ենք ապրում: Բայց հոգուս անհանգիստ խմորումներն ինձ հանգիստ չեն տալիս, երբ երկիր հայրենին «դատարկվում է», երբ նրա հարազատ զավակներն են ստիպված հե-

ռանում հող հայրենիից, ու թախծախառն են դառնում մտքերս, մտածումներս ինձ տանում են այն հեռուները, որտեղ կարոտն է բաձրաձայնում իր մասին, ու երազանքս դառնում է հայրենադարձության տեսլականը գալիք օրերում:

Այն հեռավոր անցած տարիներին իմ առջև նստած դպրոցականն է Արտակը, ում դասավանդում էի դեռևս 5-րդ դասարանում: Որքա՜ն պատրաստակամ էր նա՝ դպրոցականին հարիր կեցվածքով...Նոր օրերում նա ինձ երևում է իր երջանկության բարձունքում՝ այն հարսանեկան հիսաքանչ օրը Արցախի մայրաքաղաքում:

Գեղեցիկ զույգ՝ հայկական պարի դյութիչ մեղեդու հնչյունների տակ, հարսանյաց հանդեսի նորահարսի մենապարի գեղեցիկ արարում, հանդիսության սրահի բազմերանգ լույսեր, նորաստեղծ ընտանիքի շնորհավորական վարդաբույր կենացներ, որտեղ անեզրական երջանկությունն էր թևածում...

Եվ նոր օրերի անհանգստություն՝ հայրենիքում աշխատանք չունենալու հոգս, արտագնա աշխատանքի մեկնելու նպատակ, հեռուներում օտարության սառը շունչ, հարազատների կարոտ, որ դառնում է բոլորին հուզող հարց Արցախում ապրողների համար:

http://www.usarmenianews.com/am-n-9815.html

2017-10-24

ՉԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻ ԵՆ

Իմ նյութերում երբեմն բացասական հնչողություն ունեցող երևույթների մասին եմ արձագանքում՝ անկախ նրանից, որ շրջապատում վայելում եմ շատ-շատերի հարգանքն ու սերը: Նպատակս է՝ մարդկային բնավորության բացասական որակներն անհանդուրժելի համարել մանկավարժության մեջ, դառնալ բարության մարմնացում, նկատել կողքիդ արարող մարդու հաջողությունները, արմատախիլ անել այն որոմը, որ չարություն է ծնում, թունավորում ու կեղտոտում մարդկանց հոգիները:

Երբևէ երանի չեմ տալիս խորհրդային կարգերին, բայց խորհրդային մանկավարժությունն իր չափանմուշայնությամբ կատարելության էր հասցրել ուսուցչի կերպարը: Նույնիսկ առկա էր մանկավարժական ասպարեզից հեռացնելու երևույթը:

96-ի փետրվարից աշխատանքի ընդունվեցի Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում: Մտա 10-րդ դասարան, այնքան սահուն ամեն ինչ անցավ, որ գոհունակություն հայտնեցի աշակերտներին, նաև զարմացա, թե ինչու ոչ ոք չէր ուզում նրանց դասավանդել, առավելապես հայոց լեզվի և գրականության մասնագետները, ովքեր չէին ուզում մտնել այդ դասարանը: Զարմանալին նաև աշակերտների արձագանքն էր, որ իրենց մասին հանկարծ գոհունակություն չհայտնեմ ուսուցչանոցում, այլապես մյուս ուսուցիչները կարող են ինձ հետ «վատանալ»:

Սկզբնական շրջանում անհասկանալի էր ինձ համար, թե ինչպես են «վատանում» ուսուցչի հետ, բայց ժամանակի ընթացքում հասկացա, որ այս համակարգում կան ավելի լուրջ թերություններ, քան ես գիտեի: Եվ շուտով երկու զուգահեռ դասարանների միջև կազմակերպված մրցույթում հաղթող չեղավ: Բաց աչքով նկատելի էր իմ դասղեկական դասարանի հաղթանակը, որ բավականին առավելություն ցուցաբերեց, սակայն մրցութային հանձնաժողովի անդամ ուսուցիչների կողմից հավասար միավորներ տրվեցին երկու դասարանին: Չնայած հորդորում էի իմ աշակերտուհիներին, բայց նրանց արցունքոտված աչքերը մնացին հիշողությանս մեջ, ու նաև հասկացա, որ այսպես են «վատանում» ուսուցչուհու հետ, երբ չեն հարմարվում նրա հեղինակության բարձրացմանը:

Արդեն հետաքրքրված էի, թե ուրիշ էլ ինչ ձևով են «վատանում» մարդու հետ: Իմ կազմակերպած բաց դասին հրավիրել էի նաև քաղաքի մյուս դպրոցի ուսուցիչներից: Բազմավաստակ ուսուցչի հիացմունքը, որ վերջին երեսուն տարվա ընթացքում նման դաս չէր տեսել, անտարբերության մատնվեց մեր ուսուցիչների կողմից և շուտով այդ դասի վերլուծության, կարծիքների փոխանակության ժամանակ մասնագետ որոշ ուսուցչուհիների՝ ինձ հետ «վատանալուն» առերեսվեցի, որ խուսափեցին խոսք ասել կամ կառչեցին բառից՝ անտեսելով այդ դասի արժանիքները:

Ու այդպես շարունակվեց «վատանալու գործընթացը»: Հայոց լեզվի առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում բարձր միավոր վաստակած աշակերտուհիս ՀՀ եզրափակիչ փուլում մի նոր հաջողություն արձանագրեց: Դա 2002-ին էր, որ շարունակական դարձավ, ամենամյա հաղթանակներ ունեցանք թե՛ օլիմպիադաներում, թե՛ շարադրությունների ու աստունքի մրցույթներում, որ ուղեկցեցին ինձ տարիներ շարունակ...Ու քանի՞-քանի անգամ ականատես դարձա ինձ հետ «վատանալուն», որ արդեն սովորական էր դարձել իմ աշակերտների ձեռքբերումների կողքին:

Ժամանակի ընթացքում ես հասկացա, որ այդ «վատանալը» իր տարածքներն ընդարձակել է...

Իսկ ես նպատակասլաց դարձա, այդ ճանապարհին իմ հաջողությունները կրկնապատկվեցին, կեղծարարներն էլ զգուշացան իմ արդար խոսքից, որ հնչեցնում էի ամենուր: Իմ ըմբոստ հոգին ծառս էր ելել շրջապատի անարդարությունների դեմ, որ ձգտում էի ինձ «վատացնելու»՝ վախկոտների խաղը կանգնեցնել...

Ու կանգնեցրի... Հասա գնահատանքի ու մեծարման՝ իմ տքնաջան աշխատանքով, աշակերտների սիրով ու հարգանքով, որ այսօր էլ վայելում եմ ես, մաքուր հոգու տեր այն ուսուցիչների ազնիվ նվիրումով, որ իմ կողքին են միշտ: Ես բարձրացա ինձ «վատացնելուն» սովոր այն հատուկենտ անձանց ուղղված իմ ժպիտներով, որ վերջապես հարմարվեն հաջողությունների հասած ուսուցչուհուս վերելքներին ու ապրեն հանդարտ հոգով:

http://www.usarmenianews.com/am-n-9826.html

2017-10-25

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԻՇԱՏԱԿ

Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի դահլիճում կազմակերպված միջոցառումը նվիրված էր Արցախյան պատերազմի մարտական ճանապարհ անցած Դավիթ Պետրոսյանի /Խուդոյ/ ծննդյան 47-րդ տարելիցին, ով 2012-ին դարձավ պատահականության զոհ՝ իր երեք երեխաներին թողնելով կնոջ՝ Անժելա Պետրոսյանի հույսին:

Իմ դասղեկական 8-րդ ա դասարանի աշակերտների մասնակցությամբ իրականացված այս հուշ-ցերեկույթն իրենց համադասարանցի Գևորգ Պետրոսյանի հայրիկին էր նվիրված, ում անունով կոչվում է այդ դասարանը:

Ամաչկոտությունը նրա մեջ է միշտ, անգամ բեմահարթակում կանգնած՝ Գևորգն իր համադասարանցիների կողքին չի ուզում հանդիսատեսին երևալ, բայց իր արտասանած տողերով յուրաքանչյուր ոք մտովի տեղափոխվում է նրա հայրիկի ծննդավայրը, իսկ նվիրյալ ազատամարտիկի մեծագույն երազանքն է եղել այդ հայրենիքն ազատագրված տեսնել, ազատ ու անկախ:

Դրախտ, չքնաղ մի երկիր էր Շահումյանը,
Այդ դրախտի տղաները, նաև՝ ՀԱՅՐՍ
Պայքարեցին մինչև վերջ,
Սարերն ընկան, եղնիկ դարձան սարերում,
Կյանք տվեցին, հերոս դարձան անկոտրում:

Ավանդու՞յթ է դարձել հոկտեմբերին այս միջոցառմանը նախապատրաստվելը, թե՞ ցավն ու կսկիծն են միախառնվում իրար, երբ գիտենք, որ մեր կողքին աշխատող Անժելան որքան հպարտորեն է կարողանում տանել իրեն բաժին հասած ճակատագիրը, որտեղ հայրիկ կորցրած դպրոցահասակ երեխաներ կան, և նրանց մեջ ավագը Գևորգն է, ում արդեն չորրորդ տարին է, ինչ դասավանդում եմ: Ու որդեկորույս մայրերին, որբացած մանուկներին, զոհվածներին ու նրանց կանանց նվիրված երգերի ու բանաստեղծական տողերի մեջ այդ օրը մենք տեսնում ենք նրանց, ովքեր իրենց կորստյան ցավով ու անսասան կամքով մեր կողքին են:

Որդեկորույս մայրերին փառքեր ու երգ են ձոնում,
Խոնարհ ճամփա են տալիս այրուն զոհված զինվորի,
Մանուկներին որբացած ամենքը գիրկ են բանում,
Գուրգուրում են հոր նման՝ դարձած գթոտ ու բարի:

Ութերորդցիների համար այս միջոցառմանը նախապատրաստվելը ոգևորիչ է, հուզերի առիթ, մի տեսակ մրցակցություն միմյանց միջև, թե ով ինչպես կներկայանա այդ օրը՝ իր ասմունքով, երգերով, որ սովորում էին սրտանց, ազնվագույն նվիրումով, գիտակցելով, որ յուրաքանչյուր նահատակված ազատամարտիկ արժանի է մեծարանքի ու հիշատակի:

Պատերազմ տեսած այս երեխաների շուրթերով Դավիթ Պետրոսյանի անցած ուղին էր փառաբանվում, նրա կարոտը հայրե-

նի եզերքի հանդեպ, խաղաղ օրերի իրենց երազանքը, որ պատերազմ չլինի և ոչ էլ՝ կորուստներ, որ ավերածություններ է փռում շուրջբոլորը, ավերում անգամ մարդկային հոգիներ:

Պատերա՞զմը...Նա վերջին ռումբի հետ չի ավարտվում,
Ականի պես դեռ հետո նա պայթում է հոգու մեջ,
Ու մինչ մահվան մոտեցող մոր հին կսկիծը թմրում,
Մխիթարվում է այրին որդիներով արդեն մեծ:

http://www.usarmenianews.com/am-n-9828.html

2017-10-26

ՀԻՇԵՆՔ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ ԱՆՈՒՆ ԱՌ ԱՆՈՒՆ

Հերոսական ճանապարհ անցած նահատակներին հիշենք, որ երկար մարտական ուղի են անցել, ձուլվել այս հողին՝ չմտածելով անգամ, որ ապրողները պարտադրված են իրենց հիշելու: «Պարտադրված» բառն եմ գործածում, բայց պարտադրում են հոգով տկարներին, որ չգիտեն կորստյան գինն ու անմահների անցած այն փշոտ ճանապարհը, որ ուղեծիր է դարձել ապրողներիս համար:

Երբեմն ուզում եմ հարցնել՝ հիշու՞մ եք նրանց, որ չկան մեր կողքին, նրանց, որ մաքառումների երկար ուղի են անցել ու ձուլվել հողին: Հողն էլ տնքում է ցավից, բայց մեր կողքին ապրող մարդիկ երբեմն չեն գիտակցում, որ նահատակների հիշատակը հարգելը ապրողներիս հոգու կանչը պիտի դառնա, մեր խիղճը, որ կարողանանք պարզերես քայլել այս ցավատանջ հողի վրա:

Ու այդ իսկ հիշողության արթնացումով եմ ուզում շարադրել մտքերս դպրոցում կազմակերպված միջոցառման մասին, որտեղ նահատակ ազատամարտիկ Դավիթ Պետրոսյան կար, ծննդյան տարեդարձ, հիշատակ կար, քար լռություն, հանդիսատեսի լուռ հայացք... Նրա ընտանիքի՝ Անժելայի և երեխաների խոր կսկիծը կար այնտեղ, աշակերտների խոսք, որ թախծոտ երգերի ելևէջումներով էին, երբեմն՝ ոգեղեն, երբեմն՝ մեղրածոր, երբեմն՝ կարկաչուն, որ տարան հանդիսատեսին դեպի սահմանները, դեպի խրամատում կանգնած զինվորը, որ հայրենիք է պաշտպանում անգամ իր կյանքի գնով:

Ասմունքող աշակերտների մեջ շփոթված դպրոցական կար, որ մոռացության տվեց տողերը: Միջոցառման ավարտին բեմ բարձրացած ուսուցչուհիս առաջարկեց իր աշակերտին արտասանի Դավիթ Պետ-

րոսյանին նվիրված բանաստեղծությունը: Արցունքոտված աչքերը սրբեց ու բեմահարթակի մեջտեղում շատ ոգևորված արտասանեց՝ շրջապատված իր համադասարանցիներով: Վերջին տողերը արտասվախառն էին, որ հուզեցին անգամ հանդիսատեսին: Հարութ Բաղրյանին բուռն ծափահարություններով ուղեկցեցին, իսկ նա անզոր էր թաքցնելու արցունքները, որ ալեկոծեցին մեզ:

Ես բեմահարթակին հայացքս հառել էի այն բոլոր ուսուցիչներին ու աշակերտներին, ովքեր Դավիթ Պետրոսյանի հիշատակի լուռ ունկնդիրներն էին, բայց հայացքս փնտրում էր նաև նրանց, ովքեր չկային, ու նրանց փոխարեն կարծես դահլիճի այն դատարկ նստատեղերի աղմկոտ ձայնն էի լսում, որ աղաղակում էին նահատակներին հիշելու պատգամի մասին, որ ապրողներս չմոռանանք երբեք այն հողին ձուլված հայորդիներին, երբ նրանք էլ ապրելու ծարավ ունեին իրենց հոգում, բայց հողի գիրկն ընկան:

Ու խոսքս հնչում է բարձրաձայն, որ մեր հիշողությունը երբևէ չնիրհի, այլ դառնա հայրենասիրության դաս, ապրողաց արյան կանչ՝ հայրենի հողի ու նրա գրկում անմահացած քաջերի հիշողությամբ, մեր կողքին ապրող նվիրյալների անցած ճանապարհով:

Միջոցառումն ավարտվեց Անժելա Պետրոսյանի՝ ինձ նվիրած ծաղիկներով, որ ամուսնու՝ Դավիթ Պետրոսյանի հիշատակը հարգելու՝ իր որդու դասղեկին ուղղված ակնածանքի արտահայտություն էր: Շնորհակալությունս ուղղված էր բոլորին, որ ուղեկցվեց՝ հուշ-ցերեկույթի մասնակիցների հետ լուսանկարվելով:

Այո՛, մեծարելով մեր քաջերին, մենք էլ վեհանում ենք, հարստանում արժեքներով: Չգիտեմ՝ տխրե՞մ թե ուրախանամ, որ հերոսական կերպարների մի ամբողջ աստղաբույլ ոգեկոչում է ինձ ի դաս հայրենյաց:

http://www.usarmenianews.com/am-n-9832.html

2017-10-29

«ԳԻՐ» ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Ստեծագույն երախտագիտություն արդյակագիր, հեռուստալրագրող Համլետ Մարտիրոսյանին ցանկացա արտահայտել այս հրապարակումով, ով վերջերս հարցազրույց էր վարել ինձ հետ՝ մասնակցելով Մարտակերտում կազմակերպված իմ գրքերի շնորհանդեսին:



Համլետ Մարտիրոսյան: Բարև Ձեզ, հեռուստադիտող բարեկամներ, եթերում «Գիր» հեռուստածրագիրն է: Տակավին մերջերս մեր նկարահանող խումբը մի հաճելի առիթով գտնվում էր Մարտակերտում: Իսկ առիթը հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատաշա Պողոսյանի գրքերի շնորհանդեսն էր: Բնականաբար, հեղինակի հետ զրուցելու հնարավորությունը ես բաց թողնել չէի կարող: Եվ այսպես եթերում «Գիր» ծրագիրն է:

Նատաշա Պողոսյան: Գրքի ծնունդը, իրոք, հուզումնալից է, պիտի ապրես այդ զգացողությունը, որ իմանաս: Մինչև 2013-ին իմ առաջին գրքի՝ «Ուսուցչի իմ թղթապանակի» հրատարակությունը, ես չգիտեի, որ այսպիսի ապրումներ կունենամ: Առավել ևս, որ հիմա երկու գիրք է, առավել ևս, որ այս գրքերի մեջ իմ դպրոցն է, նաև 2016 թվականի մեր ապրումներն են՝ պատերազմական վիճակ, աշակերտների հոգեկան ծանր ապրումների նկարագրություն, դասարանից դասարան մտնող ուսուցչուհու ապրումներ, հրետակոծության տակ դասավանդման ծանր իրավիճակ...Հետպատերազմական մեր օրերի նկարագրությունները, աշակերտների ապրումները թերևս միահյուսվել են պատերազմական օրերին, և դրա արդյունքում ստեղծվել է մի օրագրային աշխատանք՝ «Մանկավարժի օրագիր», որը, կարելի է ասել, ուսուցչուհուս ամենօրյա գրառումներն են, որ օր օրի հարստացան...

Օրագրային գրառումներս սկսեցին տեղադրվել ՀՀ Սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» պարբերականում, մեծամասամբ, առայսօր էլ տեղադրվում են Լոս Անջելեսի ամերիկյան USArmenianews.com հայկական լրատվական կայքում: Այն բացվել է մոտ երկու տարի առաջ,

այնտեղից անմիջապես ինձ առաջարկել են համագործակցել իրենց հետ: Իմ բոլոր նյութերը տեղադրվում են այդ կայքում, որից հետո ես դրանք տեսանելի եմ դարձնում իմ էջում: Ստացվեց այնպես, որ այդ նյութերը հազարավոր ընթերցողներ ունեցան, բազում հետաքրքրություն կար, մեկնաբանություններ, գնահատականներ...

Ու Մարտակերտի մեր դպրոցը տեսանելի դարձավ շատ-շատերին, կարելի է ասել, տարբեր երկրների: Նույնիսկ վերջերս ինձ ասացին այդ խմբագրությունից, որ կայքում բացված «Մանկավարժի անկյունը» հայկական դեսպանատան ուշադրությանն է արժանացել, այդ նյութերն ընթերցվում են այնտեղ: Նաև առանձնակի ուշադրություն նկատեցի ամերիկյան գրողների միության կողմից, գրող, նաև մանկավարժ-արատաբան Սվետլանա Նալբանդյան-Տոնապետյանի կողմից բաց, տեսանելի դաշտում ինձ ուղղված խոսք, որ Դուք առաջինն էիք, Նատաշա՛ Պողոսյան, որ Արցախից մանկավարժական կապ ստեղծեցիք ամերիկյան այս հեռավոր ափերի հետ:

Իհարկե, ողջունելի են նման գնահատականները, ուշադրություն է դա, նաև կա մի այլ հանգամանք, որ այս նյութերը միայն Սփյուռքի այդ կայքերում տեսանելի չդարձան, չեմ սահմանափակվում միայն դրանց անունները տալուց: Այդ նյութերը տպագրվեցին նաև հայկական համայնքների մամուլներում՝ Կալիֆորնիայի Սակրամենտո մայրաքաղաքում հրատարակվող «Մռավ սար» և Վորոնեժի «Անի» թերթերում: Առաջարկություններ եղան, որ իմ նյութերից ուղարկեմ, առավելապես՝ պատերազմական վիճակից, նաև իմ առջև նստած զոհվածների երեխաներ կային, որոնց մասին գրել էի, ու այնտեղ տեղ գտան այդ նյութերը: «Մանկավարժի օրագիրը» շարունակական գործ է, առաջին մասն է հրատարակվել, այստեղ ուսուցչի ամենօրյա կատարած աշխատանք է, բայց նաև մտահոգություն կա սերնդի վաղվա օրվա մասին:

Համլետ Մարտիրոսյան: Մարտակերտի մշակույթի տունը մարդաշատ էր, միջոցառմանը մասնակցելու էին եկել ոչ միայն Նատաշա Պո-

ղոսյանի համաքաղաքացիները, գործընկերները, աշակերտները, այլև՝ գրողներ, լրագրողներ, մտավորականներ նաև արտերկրից: Դա յուրատեսակ ցերեկույթ էր՝ գրական-երաժշտական կատարումներով, որոնցում թևածում էր հայրենասիրական ոգին:

Համլետ Մարտիրոսյան: Ձեր գործընկերները, ծանոթանալով Ձեր գրքերին, ի՞նչ կարծիքներ են հայտնում, կա՞ն դժգոհություններ:

Նատաշա Պողոսյան: Առայսօր ոչ մի դժգոհության չեմ հանդիպել:

Համլետ Մարտիրոսյան: Իսկ նրանց համար ուղեցույց հանդիսանու՞մ են Ձեր գրքերը:

Նատաշա Պողոսյան: Կարծում եմ՝ այո՛: Ցավոք, այն հասանելի չէ շատերին, որովհետև ոչ բոլորն են արձագանքում: Նաև ասեմ ինչու՞: Դասարան եմ մտնում, աշակերտը երբեմն ասում է՝ դաս չեմ սովորել: Հարցը, թե ինչու չի սովորել, ասում է՝ ժամանակ չեմ ունեցել: Կամ տնային աշխատանքը չի գրում աշակերտը՝ պատճառաբանելով, թե ինչու պիտի ամառային արձակուրդներին տնային հանձնարարություն գրի: Հիմա հարց է ծագում, թե որքանով է ճիշտ, որ մենք ամառային արձակուրդներին տնային աշխատանք ենք հանձնարարում: Երբեմն ես աշակերտին կողմ եմ արտահայտում, նրա կողմնակիցն եմ դառնում: Կամ աշակերտը մեկ ուրիշ դասարանի դուռ ծեծում է, ես այնտեղ դասի եմ, ասում է շատ ծանր հոգեվիճակում եմ, տիկի՛ն Պողոսյան, պիտի ինձ օգնեք: Ու նրա ներքին ապրումների ականատեսն եմ դառնում: Աշակերտների հետ իմ հարաբերություններն այնքան մեղմ են, լավ, փոխհասկացված, որ երբեմն իրենց անձնական ապրումներն իմն են դառնում, բայց դրանք ոչ բոլորին են հասանելի:

Համլետ Մարտիրոսյան: Տիկի՛ն Պողոսյան, փաստորեն Ձեր մյուս գիրքն էլ նվիրված է Լևոն Ադյանի ստեղծագործություններին: Ադյանը մեր ամենասիրված, ճանաչված գրողներից է, բայց Ձեզ մոտ մտավախություն չկա՞, որ ասենք ներկայիս գրականագետները կարող են չհավանել Ձեր մեկնաբանությունները կամ լուսաբանումները:

Նատաշա Պողոսյան:Շատ հետաքրքիր հարց է: Նախ և առաջ՝ այս գիրքը ծնվեց այն օրվանից, երբ իմացա, որ մեր հայրենակից գրողը որդիների կորուստ ունի: Կարծես ցանկացա մխիթարել, ու միտք ծագեց: Դպրոցական տարիներից ընթերցել էի նրա ստեղծագործությունները, նորից վերընթերցեցի: Տեսա, որ որոշ վիպակներում շատ գեղեցիկ պատկերավորման արվեստ կա: Ինքս առաջարկեցի գրողին, նաև հարցրի, թե ուրիշները վերլուծած կա՞ն իր ստեղծագործությունները: Ասաց՝ եթե ցանկանում եք, փորձե՛ք վերլուծել: Ես շատ անհամարձակ,

իհարկե, նաև հավատարիմ մնալով ուսուցչի իմ մասնագիտությանը, իմ առաջին փորձը «Իրիկնային աղջամուղջից» սկսեցի՝ իմանալով, որ այդ վիպակը գրողի ամենասիրելի ստեղծագործությունն է:

Կարելի է ասել, մի ներքին անհանգիստ դող ապրելով՝ գրեցի և ուղարկեցի իրեն՝ սպասելով, որ կասի՝ այս ի՞նչ եք գրել: Ու այնքան բարձր գնահատականի արժանացրեց, որ հիացա, նաև ոգևորիչ էր դա ու նաև այդ ամերիկյան կայքում տեղադրվեցին իմ վերլուծականները: Ապրումները կային, իհարկե, ես ո՞ր օրվա գրականագետն էի, ընդամենը ուսուցչուհի եմ, ով իր կարծիքը գրել էր այնպես, ինչպես ուսուցանում է իր աշակերտներին որևէ գրող անցնելիս, ինչպես դասավանդում է տվյալ դասարանում՝ գրողի պատկերավորման արվեստը բացատրելիս: Այդ իսկ իմացությամբ իմ վերլուծությունները կատարեցի՝ նաև սպասելով, որ կարող է բացասական հնչերանգ ունենա, բայց ուրախալի էր, որ չլսեցի, գուցե կային, բայց չարտահայտվեցին, չգիտեմ:

Նույնիսկ Աղյանի մանրաքանդակների իմ վերլուծությունը կարդացին Արցախի հանրային ռադիոյով, մտածեցի, որ ինչ-որ արժեք ունի ուրեմն, նաև այդ վերլուծությունները տպագրվեցին մամուլում. «Եղիցի լույս», «Լուսարար», «Ստեփանակերտ», նույնիսկ մեր շրջանային «Ջրաբերդ» թերթում: Ինձ համար ոգևորիչ էին այդ հրապարակումները, բայց նաև չեմ էլ ժխտում, որ լավագույն գրականագետների կողմից կարող էր բացասական արձագանք լիներ, նույնիսկ սպասում եմ, բայց չէ՞ որ ընդամենը ուսուցչուհի եմ: Ես ամեն օր գրում եմ, բայց ես լրագրող չեմ, ես հավատարիմ եմ իմ մասնագիտությանը: Նույն ձևով ես վերլուծականներ գրում եմ, բայց գրականագետ չեմ, ես ուսուցչուհի եմ մնում:

Համլետ Մարտիրոսյան: Շնորհանդեսին ուրիշ ելույթ ունեցողներ էլ եղան, շատերն էին ուզում իրենց բարեմաղթանքն արտահայտել իր գործի նվիրյալ ուսուցչուհուն, ով հայրենիքը շեն պահելու իր բաժին ծանրությունը կրում է պատասխանատվությամբ և սիրով:

Տիկի՛ն Պողոսյան, անկախ նրանից, որ Դուք գրում եք, երկու գիրք եք հրատարակել, նաև տարիներ առաջ էլ հրատարակել էիք, Դուք Ձեզ գրո՞ղ չեք համարում:

Նատաշա Պողոսյան: Ո՛չ, երբե՛ք: Ամերիկայի գրողների միությունից ինձ ասացին, որ անդամատոմս են ուղարկելու: Ես մի նյութ գրեցի շնորհակալական խոսքով, որ նման ուշադրության են արժանացրել ինձ, բայց օրեր հետո մտածեցի, թե ի՞նչ գրող եմ ես, երբ ընդամենը իմ

դպրոցի, իմ աշակերտների մասին եմ գրում: Իմ աշակերտի գեղեցիկ շարադրությանը, ասենք, ես գնահատական եմ տալիս, նրա պատմած դասի մասին կարող եմ կարծիք հայտնել կամ վերլուծություններ անել... Ի՞նչ գրողի մասին է խոսքը, երբևէ չեմ կարող լինել գրող, միշտ հավատարիմ եմ իմ մասնագիտությանը:

Ես «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» գիրքը նվիրեցի Լևոն Ադյանի Միեր և Զորայր որդիների հիշատակին: Այս գիրքը, իհարկե, մենք չկարողացանք ամբողջ Արցախի դպրոցներին բաժանել, բայց այն նվիրել եմ Մարտակետի շրջանի դպրոցներին, մեր աշակերտներին, ծնողներին, ուսուցիչներին, շատ-շատերին: Իսկ «Մանկավարժի օրագիրը» նվիրել եմ իմ աղջկան, նա ռուսաց լեզվի ուսուցչուհի է: Որպես մանկավարժի՝ սերնդափոխության ճանապարհին համարեցի, որ ինձանից հետո ուսուցչուհի կա մեր ընտանիքում:

Ասեմ, որ այս գրքերը հրատարակվել են ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության երաշխավորությամբ, մեր նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ Լուսինե Ղարախանյանի խմբագրությամբ: «Մանկավարժի օրագրի» նախաբանը հենց Լուսինե Ղարախանյանի գնահատողական խոսքով է սկսվում, իսկ «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» գրքի առաջաբանի խոսքը պատկանում է Արցախի բանաստեղծուհի, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ժաննա Բեգլարյանին: Ընդ որում, ասեմ, որ այս գրքերի հրատարակության գործում հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Ղարախանյանի դերը շատ մեծ է: Նույնիսկ նախաձեռնությունը իրենն է, մենք «Մանկավարժի օրագրի» կազմի վրա նախատեսեցինք լավագույն աշակերտների նկարները տեղադրել. սա թերևս նորություն է...Նաև նորություն է, որ գիրքն ուսուցչուհին է գրել իր աշակերտների մասին: Այս գիրքն այնքանով է նորություն, որ առաջին մասն է հրատարակվել. սա շարունակական ընթացք է:

Ես հիմա չեմ կարողանում կանգնել, նաև այստեղ ներգործություն ունի Լոս Անջելեսի ամերիկյան USArmenianews.com հայկական կայքը, առավելապես մեծ ներդրում ունի այստեղ խմբագիր Գայանե Մանուկյանը, ամբողջ խմբագրակազմը, բոլորին իմ շնորհակալությունն եմ հայտնում, որ բացեցին այդ «Մանկավարժի անկյունը» և իմ թևերը բացեցին, որպեսզի ես կարողանամ գրել, նաև պարտավորվածության զգացում կա, որ ինձ սպասում են նյութեր ուղարկեմ: Ու այսպես Մարտակերտը դարձավ տեսանելի, չգիտեմ, մարդ կլինի՞, որ չիմանա այդ

մասին: Կա նյութ, որ այդ կայքում երեսուն հազարից ավելի ընթերցող է ունեցել:

Մեզ մոտ այցելել է այս շնորհանդեսին գրող Լևոն Ադյանը, տիկին Էլմիրա Ադյանը, միաժամանակ Լոս Անջելեսից այստեղ է այցելել Նելլի /Ավակովա/ Գրիգորյանը, ում հովանավորությամբ հրատարակվել է «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» գիրքը: Կարելի է ասել, որ նրանց այցելությունը զուտ այս շնորհանդեսին մանակցելն է, որն ինձ համար պատիվ է, նաև մեր հասարակության, մեր շրջապատի համար, որ մարդիկ կարողացել են այդքան երկար տարածությունը կտրել, գալ մասնակցել, ասենք, ժամուկես կամ երկու ժամվա միջոցառման՝ դրանով իսկ ուշադրություն սևեռել ուսուցչուհու աշխատանքին:

Համլետ Մարտիրոսյան: Բարեկամնե՛րս, ինձ հատկացված ժամանակի մեջ տեղավորվելու համար ներկայացրի միջոցառման ընդհանուր պատկերը, իսկ միջոցառումը լեցուն էր սիրով ու ջերմությամբ: Այսքանը, մինչ նոր հանդիպում:

http://www.usarmenianews.com/am-n-9851.html

Արցախի հեռուստատեսության «Գիր» հաղորդաշրջիր

https://www.youtube.com/watch?v=Ca7LfVv6z50

2017-10-31

ՀԵԼՈՒԻՆ՝ ՕՏԱՐ ՈՒ ՍԱՏԱՆԱՅԱԿԱՆ

Հելոուին, որի մասին մի քանի անգամ արձագանքել եմ, քանի որ այն վերջին տարիներին մուտք է գործել նաև մեր դպրոցը, իսկ դպրոցից դուրս այդ օրը մեր դպրոցականները կորցնում են նաև իրենց հոգին: Այն տոնում են հոկտեմբերի 31-ին, ու մանկավարժիս թվում է՝ մենք այդ օրը կորցնում ենք մեկ տարվա ընթացքում մեր ուսուցանած դաստիարակության պտուղները: Եթե իմանայի՝ դա միայն քաղցրավենիք խնդրելու սովորույթ է, երբ երեխաները հագնում են կտորից դիմակներ և մի դռնից մյուսը քայլելով, խնդրում հյուրասիրություն, ապա ես երբևէ բացասական հնչողություն չէի տա դրան, որը ցավալի է նաև այն առումով, երբ մեր ազգայինը չլինելով՝ շատ դյուրին ձևով երեխաների կողմից հաճելիորեն ընդօրինակվում է: Ես գիտեմ, որ մեզ համար օտար սովորությունը շատ գեղեցիկ ձևով վայելում են այն միջավայրում, ովքեր գիտեն այդ միջոցառման «համն ու հոտը», այն մեզ մոտ խեղաթյուրվում է, ու արդյունքում մենք դրա հանդեպ բացասական վերաբերմունք ենք ցուցաբերում:

Հենց այսօր բազմիցս իմ դուռը բախել են, բացում եմ, դիմակներով երեսները ծածկած երեխաներ են, ինձ տեսնելով՝ փախան: Ու դա կրկնվեց մի քանի անգամ: Եվ ես որոշեցի դուռը չբացել: Բայց նորից ուժեղ թակոցներ, թվում է՝ դիտավորյալ են ուժեղ հարվածում, այնպես, որ տպավորություն է ստեղծվում, թե այդ պահին ուզում են դուռը տեղից պոկել:

Անցած տարի մեկ այլ պատկեր էր: Այդ օրը մեր տան դուռը ծեծեցին: Երեխաների ձայներ լսելով՝ թոռնիկս իսկույն դուռը բացեց: Սարսափահար հետ քաշվեց, ես էլ մնացի քարացած դռան շեմին: Քսանից ավելի խայտաբղետ գույներով դեմքները անճանաչելիորեն ներկված՝ դեռահաս երեխաներ են կանգնած մեր առջև... Գուցե ձայներից հասկանայի՝ ովքեր են, բայց լռված կանգնած են, միայն հայացքներով ցույց են տալիս ձեռքների պարկերը, որ ուտելիք լցնեմ մեջը: Դա խնդրանք չէր, այլ լուռ պահանջ, որ ի կատար ածվեց իմ կողմից մեր տան բերք ու բարիքով, քաղցրավենիքով: Մոտ կես ժամ հետո շենքի մուտքում ուժեղ ձայներ եմ լսում: Մեկ այլ խումբ է. սրանք որոշել են հինգերորդ հարկից սկսել «բերքահավաքը», բայց վերևի հարկերի անլույս մուտքերում իրար կորցրած՝ միմյանց հրմշտում են, գոռգոռում...

Ու այսպես մարդկային դեմքները կորցրած մեր երեխաները, գայլերի ոհմակների նման վայնասուն բարձրացնելով, համարյա հարձակվում էին բնակարանատերերի վրա, բայց ոչ թե խնդրում, այլ պահանջում էին ամեն ինչ բերել, միայն թե լցվեր այդ անկուշտ պարկը:

Հաջորդ օրը դպրոցում փնտրում էի նրանց հայացքները: Դպրոցի պատերի ներսում անմեղության քողով պատված նրանց դեմքերին էի նայում՝ չհավատալով անգամ, որ այս երեխաներն ընդունակ են նման արարքի: Բայց ամիսներ անց այդ օրվա մասին պիտի խոսեին, որ այդ «տոնական խրախճալից գիշերը» մարդկային գեղեցիկ հոգիները կորցրած անկուշտների նկատմամբ ամենաառատաձեռնն իրենց ուսուցչուհին է եղել:

Չեմ ուզում արհեստականորեն հեռանանք մեզանից, մեր սկզբից: Հելոուինը երբևէ չի կարող լինել հայկական և իրական հրճվանք ու բավականություն պատճառել հայ երեխային: Ավելին, մասնագետների կարծիքով այն սատանայի տոն է և իրականում կարող է վնասել շատ ու շատ երեխաների:

http://www.usarmenianews.com/am-n-9860.html

2017-11-01

ԻՄ ԸՆԹԵՐՑԱԾ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

Սեպտեմբերին էր...Մտա 11-րդ գ դասարան: Օրեր առաջ նրանց նվիրել էի իմ գրքերից՝ «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին»: Այդ օրը զարմանալի չէր, որ աշակերտները քարացած ունկնդրում էին ինձ: Հանկարծ դասարանի աշակերտուհիներից մեկն ինձ հանձնեց տետրի թղթի վրա գրած տողեր: Մի հայացքով հապշտապ ընթերցեցի այն, հարցրի անուն-ազգանունը, քանի որ դեռ անուններով չէի ճանաչում նրանց: Հարցրի նաև՝ ինչպես էր սովորում նախորդ տարիներին:

Նրա համեստ պահվածքը, նաև անկեղծությունը բացահայտեցին այս տողերի ճշմարտությունը, ես հասկացա, որ այնքան էլ պարտաճանաչ չէ դասերի հանդեպ, բայց իր սրտի խոսքն է գրել ու ինձ հանձնել առանց երկընտրանքի՝ համոզված, որ իր հոգում տեղի ունեցածի մասին հարմար կլիներ տեղյակ լիներ նաև իր ուսուցչուհին:

Այն աշակերտուհու նամա՞կ էր, թե՞ մենախոսություն, որ ուղղված էր ինձ: Բայց ինչու՞ ես չկարողացա այն հրապարակել՝ ի տես շատերի, երբ ինձ էր հանձնվել դեռ ամիս առաջ: Ինչու՞ հապաղեցի, այնինչ երբ կարդացել, հուզվել էի ու շնորհակալություն հայտնել նրան՝ նույնիսկ ամաչելով, որ այսքան հիացական ապրումներով է ինձ ուղղել իր սրտի խոսքը:

«Գիրքը պետք է լինի մեր առօրյայի և, ընդհարապես, մեր կյանքի անբաժան մասը: Գրքի միջոցով է, որ մենք կարողանում ենք պահպանել և սերնդեսերունդ փոխանցել մեր պատմությունը, մեր մտքերն ու հույզերը և ժամանակի գեղեցիկ ապրումները: Սակայն, չգիտես ինչու, մենք՝ աշակերտներս, այդքան էլ չենք սիրում գիրք կարդալ:

Երբ Դուք մեծ սիրով մեզ նվիրեցիք Ձեր գրքերից, ես կարծում էի, որ այն իր տեղը կգտնի մեր գրապահարանում՝ իմ մնացած չընթերցված գրքերի կողքին, սակայն երբ տուն գնացի, հետաքրքրությունից սկսեցի կարդալ՝ չնկատելով, թե ինչպես եմ մեկը մյուսի հետևից կարդում մնացած էջերը ևս:

Դուք այնքան մատչելի և հստակ ձևով եք գրել Ձեր ասելիքը, որ անգամ ես, որ չեմ սիրում գիրք կարդալ, սկսեցի մեծ սիրով ընթերցել: Դուք իմ մեջ սեր անթնացրիք դեպի գիրքը, որի համար Ձեզ ուզում եմ հայտնել իմ խորին շնորհակալությունը:

Ձեր դասաժամերի ընթացքում մենք այնքան սիրով ենք նստում դասերին, որ չենք էլ նկատում, թե ինչպես է անցնում դասաժամը: Դուք իդեալական ուսուցչուհու կերպար եք, և ես շնորհակալ եմ, որ Դուք կաք և շարունակում եք Ձեր գիտելիքներով կրթել մեզ: Շնորհակալ եմ, շնորհակալ, տիկի՛ն Պողոսյան, ես ուրախ եմ և հպարտ, որ Ձեզ նման ուսուցչուհի ունեմ»:

Սպասում էի, որ դասաժամից դասաժամ օրերն ամիս կդառնան, ու ես էլ իմ աշակերտուհու համար կդառնամ սովորական մեկը, ով չի տարբերվում մյուսներից: Վերջերս իմացա, որ գրքի հանդեպ սեր չունեցող այս աշակերտուհին արդեն ավարտում է իմ մյուս գրքի՝ «Մանկավարժի օրագրի» ընթերցանությունը: Նաև իմ հարցին, թե արդյո՞ք այս օրերի, ամիսների ընթացքում փոխվել է նրա կարծիքը ուսուցչուհուս հանդեպ, հաստատակամ գլուխն օրորեց, որ ուսուցչուհին մնացել է իր դերում, անձիս հանդեպ ունի նույն կարծիքը, բայց ավելի է լայնացել նրա հետաքրքրության շրջանակը դեպի այս գիրքը: Ու ես ցանկացա իմ այս հրապարակումով արձագանքած լինել Էվելինա Լազարյանին, ով ուրախացրեց ինձ, որ իմ գրքերով սեր է արթնացել նրա մոտ դեպի ընթերցանությունը:

http://www.usarmenianews.com/am-n-9869.html

2017-11-02

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԱԾ ԸՄԲՇԱՄԱՐՏԻԿԸ



Դպրոցի միջանցքում պատահաբար հանդիպեցի նրան: Գրկախառնվեցինք՝ մեծագույն բերկրանքով, հարգանքի ու հպարտության զգացողությամբ: Նախորդ տարիների համադասարանցիների հետ էր նա՝ իր հասակակիցների, ովքեր հիմա 12-րդ դասարանում են սովորում, որոնց երբևէ չէր մոռանում: Դրա վառ ապացույցը նրա այցելություններն են դպրոց, ում ջերմորեն ենք ընդունում, պարծանքով, որ տարիներ առաջ մեր առջև նստած աշակերտը հասել է օլիմպիական բարձունքների, նվաճել բազմաթիվ հաղթանակներ ըմբշամարտից:

Գրիշա Ներսիսյան, ում դասավանդել եմ տարիներ առաջ 5-8-րդ դասարաններում: Նա տեղափոխվել էր Երևան, այժմ սովորում է Օլիմպիական հերթափոխի քոլեջի 3-րդ կուրսում: Ու ես նրա հետ առանձնանում, զրուցում եմ: Ինչպես միշտ, նա մեղմ ժպտում է, ու այդ ժպիտների մեջ այն անցած օրերն եմ հիշում, որ երբեմն նախատում էի դասերին անպատրաստ ներկայանալու համար: Նա մնացել է նույնը՝ իր պարզ ու նրբին բնավորությամբ, իր հանդեպ ունեցած անկաշառ սիրով, հաղթություններ ունեցողի համեստությամբ, որ երբեմն զարմացնում է մեզ ու անթաքույց հպարտությամբ համակում շրջապատին:

Իմ հարցերին նա պատասխանում էր շատ կարճ ու կտրուկ, բայց անընդհատ շեշտում էր, որ այս տարվա սեպտեմբերին Հունաստանում կայացած աշխարհի առաջնությունում պարտվել է: Ես փորձում էի նրան հակադրվել, որ այդ առաջնությանը մասնակցելն ինքնին հաղթանակ է, բայց նա նորից էր ինձ հակադարձում երեսին ողողած ժպիտների հեղեղով:

«Մարդիկ կան, ովքեր ինձ բարձրացրին, հասցրին հաղթանակների: Դա սկսվել է Մարտակերտից: Առաջին մարզիչս եղել է Միքայել Սահակյանը: Այստեղ մեծ դեր ունի Կարեն Շախնումանցը՝ Մարտակերտի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահը: Նրանց շնորհիվ Վրաս-

տանում կայացած միջազգային մրցույթում չեմպիոն եմ դարձել: Սանկտ Պետերբուրգում ըմբշամարտի մրցույթում 1-ին տեղ եմ զբաղեցրել, հետո Հայաստանի հուշամրցույթում չեմպիոն դարձա: Անցած տարի Բաթումի քաղաքում տեղի ունեցած միջազգային մրցույթում 2-րդ տեղ զբաղեցրի: Գոլեցիայի անվան միջազգային մրցույթում, որ Արտաշատ քաղաքում էր, մի քանի օր առաջ 2-րդ տեղ գրավեցի, հիմա Հայաստանում երկրորդ ըմբշամարտիկն եմ համարվում: Երևանում իմ մարզիչը Արշակ Հայրապետյանն է, նրան շատ եմ պարտական, նրա շնորհիվ մեծագույն հաջողությունների հասա»:

Բազմաթիվ են այն մրցույթները, որոնց մասնակցել էր նա, անգամ անհնար է հիշել, թե որտեղ ինչ պարգևատրություններ են եղել: Նայում եմ նրա ձեռքի լուսանկարի պատվոգրերին, օլիմպիական մեդալներին, հաղթության գավաթներին, ու հպարտությամբ է լցվում հոգիս, որ Գրիշա Ներսիսյանը եղել է մեր դպրոցի աշակերտը, ում ես էլ դասավանդել եմ, անգամ՝ նախատել...

Նա սպորտային մրցույթներում հասել է վերելքների, բայց իր բնավորությամբ մնացել ազնիվ ու համեստ, նույնիսկ ամաչկոտ, մաքուր մի կերպար, ում նորանոր օլիմպիական բարձունքներ եմ ցանկանում սպորտային առաջնություններում:

Իմն են իմ բոլոր աշակերտների հաղթանակները, իմն են նաև նրանց պարտությունները, իմն է նրանց ավյունն ու կորովը...

http://www.usarmenianews.com/am-n-9880.html

2017-11-05

ԿՐԹՕՋԱԽԻ ԿԵՍԴԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Սրմավիրի հ.6 հիմնական դպրոցի կեսդարյա հոբելյանական տարին է, ու ես՝ որպես Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի, չկարողացա այդ դպրոցի տոնական օրվա ուրախ տրամադրությանը չարձագանքել:

Մի քանի օր առաջ առնչվեցի կյանքի հերթական անարդարություններին ու չկարողացա այդ օրն արձագանքել մանկավարժական կոլեկտիվին՝ հանձին դպրոցի տնօրեն Հասմիկ Գասպարյանի, որոնցից շատերին հեռվից հեռու ճանաչում ու հարգում եմ՝ թե՛ որպես ֆեյսբուքյան տարածքում իմ նյութերի ընթերցողների, և թե՛ որպես իմ հեռավոր գործընկերների: Այս նկարների ու տոնական տրամադրության համատեղումն այն վառ ապացույցն են, որ այդ դպրոցում կա միասնականություն, իսկ համերաշխությունը, մեկը մյուսին անշահախնդիր նվիրվածությունն արգասաբերության աղբյուր են դառնում, թևավորում մարդուն, որ յուրաքանչյուրը յուրովի կարողանա իր ասպարեզում թևերը փռի նոր աշխատանքային վերելքների հասնելու ճանապարհին:

50 տարին դա քիչ չէ մի դպրոցի համար, որը տարբեր սերնդի ուսուցիչների հերթափոխ է տեսել, սերունդներ կրթել ու դաստիարակել և բազում ձեռքբերումներ արձանագրել: Այդ տարիներն իրենց մեջ մտերմություն են ձևավորել գործընկեր մանկավարժների, ուսուցիչների ու աշակերտների, նրանց ծնողների միջև, որ դարձել է փոխադարձ հասկացվածությամբ համակցված մի կառույց, հարազատ օջախ՝ իր լուսավոր հայացքն ուղղած գալիքին:

Եթե ինձանից հարցնելու լինեին, թե ընդհանրապես ինչ բարեմաղթանք կուղղեիր մարդկանց, ապա իմ լավագույն օրհնանքներով ու ցանկություններով միմյանց սիրելու աստվածաշնչյան պատգամի կողքին թև կառներ մեծագույն խորհուրդս ուսուցիչներին. «Ժպտացե՛ք թև առած թռչունի սլացքով, երբ սավառնելու սովոր է, ժպտացե՛ք անգամ թռիչք կանգնեցնելու մարմաջով տառապողների վրա, որոնց համար այդ թռիչքը մղձավանջ է դարձել, ժպտացե՛ք ձեր առջև նստած աշակերտներին, որ սիրում են ձեզ, թև՛ տվեք նրանց, որ նրանք էլ սավառնեն, երբ թռչելու սովոր չեն դեռ»:

Ու խորհուրդս, թև առած իմ շնորհավորանքներով, փոխանցում եմ Ձեզ, իմ շատ հարգելի՛ գործընկերներ:

Սիրով ու փոխհասկացվածությամբ ամրակայված կրթօջախի մանկավարժական կոլեկտիվին շնորհավորում եմ՝ հարազատ դպրոցի կեսդարյա հոբելյանական օրվա կապակցությամբ, ցանկանում անձնական ու անանձնական երազանքների իրականացում, ուսումնադաստիարակչական գործընթացում ստեղծագործական նորանոր վերելքներ... Շնորհավորաքներս նաև ձեր բոլոր դպրոցականներին, որ ձեր առջև են նստած, բոլոր նրանց, ովքեր, դաս առած այդ կրթօջախից, կյանք են մտել՝ ուսուցչի պատվաբեր անունը իրենց հետ: Թող արգասաբեր լինի ձեր ացնելիք ճանապարհը, որով հայոց երկրի լուսավոր ապագան է կերտվում:

http://www.usarmenianews.com/am-n-9888.html

2017-11-06

ԱՇԱԿԵՐՏՈՒՀՈՒ ԱՆԿԵՂԾ ԽՈՍՔ

Այսօր նա դասի չէր եկել: Մայրյանի առաջին համարի՝ նրա անվան բաց վանդակում «բացակա» նշանակեցի՝ մյուս աշակերտներին ուղղված իմ հարցումով, թե ինչու է բացակայում Ալլա Աղասյանը: Իմ ցեռքին օրեր առաջ նրա գրած տողերն էին, որ դեռահասի անկեղծ խոսք էր՝ դեռ այս ուսումնականից 11-րդ գ դասարանում դասավանդող իր ուսուցչուհու մասին, որ կարդացի ջերմությամբ, շնորհակալական զգացումով:

«Տիկի՛ն Պողոսյան, անչափ շնորհակալ եմ, նաև շատ սիրում եմ Ձեզ: Դուք սրբություն եք դարձել մեզ համար, մեր հոգու հարազատ մասնիկը: Դուք կարճ ժամանակահատվածում դարձաք մեր սիրելին: Չգիտեմ՝ ինչ խոսքեր ուղղեմ Ձեզ, որովհետև հասկանում եմ, որ ինչ էլ ասեմ, միևնույն է, չասված բառեր մնալու են... Մտածում էի երկար, բայց չէի կարողանում բարձրաձայնել: Կաշկանդվում էի փոքր-ինչ, բայց ուրախ եմ, որ վերջապես հնարավորություն ունեցա մտքերս հանձնել թղթին և Ձեզ փոխանցել խոսքերս»:

Սա ինձ համար անակնկալ էր, չնայած այդ դասարան մտնելու առաջին օրվանից զգացել էի բոլոր աշակերտների՝ ինձ սևեռած հիացական հայացքները, որ այնքան դուրեկան էին, մեղմ, հետաքրքրասիրությամբ լեցուն, և որքա՜ն հաճելի էր այդ հայացքների ներքո խոսել: «Ես ուրախ եմ, որ ունեմ նրա նման ուսուցչուհի: Ամեն անգամ ուշադիր նայում եմ նրան և զգում, թե ինչպես են բառերը մեղրի պես ծորում նրա շուրթերից: Եվ ինձ թվում է՝ հայտնվել եմ նրա կերտած գրքերի զարմանահրաշ աշխարհում»:

Չնայած այդ դասարանի աշակերտները տեղ չէին գտել իմ հրատարակած գրքերում, բայց օրեր առաջ նրանց էլ նվիրեցի: «Ես աշխարհի չափ ուրախացա, քանի որ վաղուց հետաքրքրված էի, թե ինչ կլինի գրված նրա գրքերում մեսրոպյան սրբատառերով: Երբ նվիրեց, ես սկսեցի թերթել էջերը՝ նայելով վերնագրերին: Շտապում էի՝ շուտափույթ հասնել տուն և ընթերցել գիրքը: Ճանապարհին դանդաղ քայլում

էի ու կարդում ուսուցչուհուս կենսագրությունը, որ գրված էր գրքի շապիկին: Իսկ երբ հասա տուն, անմիջապես զանգեցի տատիկիս ու ասացի, որ ինձ էլ ունեմ այդ գրքից: Իմ ուրախությամբ կիսվեցի նաև մորս հետ: Չէի պատկերացնում, որ նման զգացողություն կունենայի...

Հաջորդ օրը դասին դեռ գրքի ազդեցության տակ էի: Ես ուշադիր նայում էի նրան: Հայտնվել էի նրա կերտած գրքերի զարմանահրաշ աշխարհում: Ինձ ուղեկցում էին նրա մտքերը, խանդաղատանքով էի լցվում՝ ամեն խոսք ընթերցելիս: Հասկացա, որ գիրքը լոկ տառերի և բառերի կապակցված ամբողջություն չէր, նրա տողերում տեսա սեր, տեսա անմնացորդ նվիրվածություն, ես ջերմություն զգացի՝ այն ընթերցելով: Գիրքը կարծես օվկիանոս լիներ, իսկ ես մեկը, ով լողալ չգիտեր, բայց խորասուզվում էր այդ օվկիանոսում: Օվկիանոսն անհատակ էր, զգում էի, որ գնալով ավելի ու ավելի խորանում եմ՝ շունչս պահած: Բայց եթե այդ գրքերն էին օվկիանոսը, ապա ես պատրաստ էի խորտակվել»:

Ասում են՝ գրքից հեռացել է սերունդը: Երբեմն ես էլ համամիտ եմ լինում նման կարծիքին, որ մեր օրերում աշակերտը չի սիրում գիրք ընթերցել, բայց նաև առերեսվում եմ այսպիսի դպրոցականների: Նաև ասում են՝ պետք չէ գրքեր հրատարակել, երբ գոյություն ունի էլեկտրոնային տարբերակը: Բայց վերջերս, երբ ցանկացա գիրք նվիրելու և այն թերթելու բերկրանքը քարացնել, որ նրանք հայացքները հառեն համացանցում տեղադրված սառը գրքերին, այդ դեռահասների դժգոհությունն էի լսում:

Էլեկտրոնային, հատկապես ռադիոգրքերը չեն կարող փոխարինել ոչ մի գրքի, որին շոշափում ենք, առնում բույրը, դնում բարձի տակ, հետը քնում ու արթնանում: Էլեկտրոնային գիրքը չի կարող առաջացնել այն ապրումներն ու հույզերը, այն զգացմունքներն ու խոհերը, որ ունենում ենք գրքի հետ շփումից: Գիրքը մեռած կապիտալ չէ: Կզարմանաք գուցե, բայց դրանք իմ ընկերներն են, որոնց հետ շփումը նախապատվելի է դառնում շատերի հետ ունեցած շփումից:

http://www.usarmenianews.com/am-n-9895.html

2017-11-09

ԺԱՄԱՆԱԿՆԵ՞ՐՆ ԵՆ ՓՈԽՎԵԼ, ԹԵ ՄԵ՞ՆՔ ԵՆՔ ՀԵՏ ՄՆԱՑԵԼ ԺԱՄԱՆԱԿԻՑ

Այս գրառման առաջաբանի խոսքն օրեր առաջ ֆեյսբուքյան իմ էջում գրած տողերն են, որի շուրջ փորձում եմ մի քիչ ընդարձակվել. «Առաքինություն ենք սովորեցնում, մարդկային բարձր որակներ, բայց երբեմն դեղնակտուցներ կհայտնվեն, որ մեր սովորեցրած առաքինության վրա կծիծաղեն, ու կհամոզվենք դարերի խորքից եկած ճշմարտությանը, որ մեզ էլ աշակերտներ ունենք՝ «սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան...»:

Ինչու՞ են դպրոցի դաստիրակությունից դուրս մեր շրջանավարտներից ոմանք կարծես կերպարանափոխվում: Երևի նրանից է, որ երբեմն մեր առջև նստած աշակերտների մեջ էլ հանդիպում ենք սնապարծների, բայց թույլ չենք տալիս այդ սնապարծությունը գլուխ բարձրացնի, սակայն մեզանից հետո այն ազատ տարածքում իր թևերը փռում է:

Ժամանակնե՞րն են փոխվել, թե մե՞նք, որ երբեմն զարմանում ենք մեր կողքին գլուխ բարձրացնողների արտահայտած մտքերից, որ վերամբարձ են հնչում, ճոռոմ, բայց ո՞վ է մեղավորը, մե՞նք, որ իբր ժամանակի հետ չենք քայլում, թե՞ նրանք, որ իրենց թերարժեքությամբ ժամանակից առաջ են ընկնում:

Իմ հարցադրումները կարող են այսպես շարունակվել, բայց զարմանալի է, երբ իրենք են հարցնում, թե ինչու՞ են հիշում հենց Ավարայրը, Արցախյան այն հին ու նոր պատերազմները, որտեղ կորուստներ, վիշտ ու մորմոք կան բազում, իսկ իրենք կարկաչն են սիրում զուլալ աղբյուրի, մեղրածոր կյանքը, որ ցավեր չունի:

Ու զոհված ազատամարտիկի հիշատակին նվիրված միջոցառմանը չմասնակցելու ոմանց մտադրությունը սովորական է համարվում, առավել ևս՝ գրքի բանավեճ-քննարկմանը մասնակցելու կարիք չկա, երբ վաղուց հեռացել են գիրք կարդալուց:

Մտել ենք երթուղային տաքսի, մեր դիմաց նստած պատանին կասկածում է՝ տե՞ղ տալ մեծերին, թե՞ աչք փակել, որ կողքին կանգնած մեծահասակ կա, բայց երիտասարդ աղջիկը վեր թռավ տեղից. «Դուք իմ մոր հասակին եք», ու իր տեղը զիջեց կանգնած կնոջը: Կամ երբեմն ականատես ենք լինում, թե ինչպես են մեկ այլ երթուղայինում ծեր մար-

դուն տեղահան անում, որ իրենք՝ տոմս ունեցողները, նստեն, չէ՞ որ նա իրենց տեղն էր պատահաբար զբաղեցրել: Ինչու՞ չենք հարմարվում այս նոր «կարգերին», երանի ենք տալիս անցած օրերին, երբ հարգանք ու պատիվ կար մեծերի հանդեպ:

Երբեմն լսում ենք՝ ձեր ժամանակներն անցել են, հիմա ո՞վ է այդպես մտածում: Իհարկե, մեր ժամանակներն անցել են, բայց այն ժամանակներում հազիվ դասարանից դասարան փոխադրվող աշակերտները բուհ չէին ընդունվում, ամեն մեկն իր տեղն ուներ, իսկ հիմա երբեմն մեր առջև նստած ամենաթույլ կարողությունների տեր աշակերտներն են մեզ դյուրին ու բարվոք ապրելու ճանապարհը ցույց տալիս՝ համոզված, որ իրենք ժամանակի ընթացքում շատ ավելին կունենան, քան մենք ենք մեր քրտնաջան աշխատանքով ձեռք բերել այս տարիների ընթացքում:

Ես գիտեմ, որ այս սերունդը աշխարհ կփոխի, բայց շրջապատում մեծամիտներ կան, որ աշխարհ կքանդեն, ո՞վ է մեղավորը, մե՞նք, որ երբեմն հասուն արտի մեջ որոմ է աճում, թե՞ նրանք, որ որոմ դարձած՝ մեզ «թունավորում են»:

http://www.usarmenianews.com/am-n-9923.html

2017-11-10

ՏՊԱԳԻ՞Ր , ԹԵ՞ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳԻՐՔ

Ժամանակները փոխվում են, նոր սերնդի առջև նոր մարտահրավերներ են, հնին փոխարինում են նոր գաղափարներ, նոր մոտեցումներ, արդիական մտահղացումներ, որոնք երբեմն բանավիճային են դառնում: Ու այդ բանավիճային թեման առողջ մթնոլորտում երբեմն մտնում է դասարանները, դառնում աշակերտների համար կարծիքներ արտահայտելու հարթակ, որտեղ որքան նորի հավակնություն լինի, միևնույն է, չի թերագնահատվում հինը: Ու իմ հարցման արդյունքում թեման դառնում է տնային հանձնարարություն, որտեղ յուրաքանչյուրը յուրովի արտահայտում է իր տեսակետը, անգամ որոշ աշակերտների մոտ անկեղծ ասելիք կար, որ իրենք գիրք ընդհանրապես չեն ընթերցում, չգիտեն անգամ ինչպես արձագանքեն նման հարցին:

12-րդ դասարանում ակտիվ աշակերտների մոտ կարծիքներ կային, որ ուշադրությանս արժանացան, ու մեծամասնությունը համակարծիք էին, որ երկու տարբերակն էլ ընդունելի է, ուղղակի տպագիր գիրք ընթերցելու համն ու հոտն ուրիշ են:

«Ըստ ինձ՝ տպագիր գրքեր ընթերցելն ավելի հաճելի ու հարմար է: Սիրում եմ գրքեր ընթերցելիս նշումներ կատարել մատիտով, սիրում եմ թերթել գրքի էջերը և զգալ նրա բույրը: Սակայն ոչ միշտ եմ կարողանում գտնել ինձ անհրաժեշտ գիրքը, այդ իսկ պատճառով ստիպված ընթերցում եմ էլեկտրոնային տարբերակը: Բայց էլեկտրոնային գրքերն ընթերցելն այնքան էլ հարմար չէ, այդպես ահավոր լարվում ենք, վնասում մեր աչքերը և այդքան էլ ուշադիր չենք լինում մանրամասներին: Ես երկու տարբերակով էլ ընթերցում եմ գրքեր, բայց, իմ կարծիքով, իրական գրքի բույրին ոչինչ չի փոխարինի» /Մարդոյան Քրիստին»/:

«Գիր ու գրականությունը մարդկության և անհատի զարգացման գլխավոր նախապայմաններն են: Ժամանակը փոխել է գրականության թե՛ բովանդակությունը, թե՛ ձևը: Ու չնայած հիմնական թեմաները մշտապես նույնն են՝ մարդկային հարաբերություններ, սեր, հայրենասիրություն, հոգևոր ու աշխարհիկ ըմբռնումներ, սակայն մատուցման ու ներկայացման ձևերը փոխվել են: Եվ ահա 21-րդ դարում ի հայտ են եկել

էլեկտրոնային գրքերը: Դրանց վերաբերյալ կարծիքները հակասական են: Ըստ իս՝ այս երևույթն ունի մի շարք դրական կողմեր՝ մատչելիություն, հարմարավետություն, արագ հասանելություն: Սակայն ծնողներիս պնդմամբ կարդալու երևույթը հաճույք է, եթե թերթում ես էջերը: Հնամաշ գիրքն արդեն ասոցացվում է «լավ ու հետաքրքիր գիրք» հասկացության հետ: Ես կողմ եմ ընթերցանության բոլոր ձևերին, իմ կարծիքով՝ մատուցման ձևը կարևոր չէ, կարևորը գրքի ասելիքն է» /Գրիգորյան Սեդա/:

«Մանկուց ես սիրել եմ գիրքը, ու տարիների ընթացքում համալրվեց իմ փոքրիկ գրադարանը տարբեր գեղարվեստական գրքերով: Նույնիսկ սիրում էի քնել գրքի վրա: Հասունանալով հասկացա, որ գիրքը մեզ օգնում է տարբեր բնագավառներում, այն ավելի է ընդլայնում մեր աշխարհայացքը, հարստացնում մեր բառապաշարը: Էլեկտրոնային տարբերակով գիրքը թեկուզ ժամանակակից է, բայց, միևնույն է, ձգտում եմ օգտվել գրադարանից, նախընտրում եմ ընթերցել տպագիր գիրքը, որը կարող ես շոշափել, զգալ գրքի յուրահատուկ, անկրնկնելի հոտը» /Դավթյան Տաթևիկ/:

«21-րդ դարը տեխնոլոգիապես զարգացման ժամանակաշրջան է: Այսօր զարմանալի չէ տեսնել մարդու, ով ընթերցում է էլեկտրոնային եղանակով: Իմ վերջին կարդացածս գիրքը էլեկտրոնային էր, քանի որ գտնել այդ գիրքը, այդպես էլ չկարողացա: Այդպիսի ընթերցումը բավականին հոգնեցուցիչ է և առանց համ ու հոտի: Նախընտրում եմ կարդալ գիրքը շոշափելով, թերթելով, սիրում եմ հավաքել նույնիսկ հնացած գրքի թափթփված թերթերը, կարդալիս անցնել մի մասից մյուսը, ժամանակից շուտ իմանալ՝ ինչ ավարտ ունի այն... Հետևաբար կան բաներ, որ էլեկտրոնայինով չեմ կարող անել»: /Դանիելյան Վիկտորյա/:

Այս թեման շարունակական է, նախընտրելի է նաև լինեն արձագանքներ տարբեր սերունդների ընթերցողների կողմից:

http://www.usarmenianews.com/am-n-9926.html

2017-11-11

ԴԵՌԱՀԱՍԻ ՀԱՐՑՈՒՄ. «ԱՎԵԼԻ ՀԱՃԵԼԻ Է ՇՓՎԵԼ ՄԱՐԴԿԱ՞ՆՑ, ԹԵ՞ ՌՈԲՈՏՆԵՐԻ ՀԵՏ»

11-րդ գ դասարանում Տաթևիկ Ղահրամանյանի պատրաստակամ հայացքը՝ տնային հանձնարարությունը կարդալու ցանկությամբ էր համակված, որի առաջին իսկ տողերն ինձ անակնկալի բերեցին: Սպասողական վիճակում էի, իսկ նա ընթերցում էր իր գրածը մեղմ, հոգեպարար ձայնով՝ կարծես ուզում էր թմբիրից հանել այն զգայացունցը, որն իր տեղը զիջել էր վաղուց նորին, որ սառն է, առանց ջերմության:

«Հարցս ուղղված է բոլորին. «Ավելի հաճելի է շփվել մարդկա՞նց հետ, թե՞ ռոբոտների»:

Կասեք՝ անհեթեթ հարց է, բայց այստեղ իրականում ոչ մի արտասովոր բան չկա: Ժամանակակից տեխնոլոգիաներն այնքան են զարգացած, որ հավատացե՛ք, երբեմն մարդկանց ու ռոբոտների հետ շփման մեջ զանազանություն կարող է չնկատվել: Նրանք էլ մարդկանց պես խելացի են, ընկալում են տարբեր ինֆորմացիաներ, կարողանում են արձագանքել, շարժվում են, բայց մի՞թե դրանք ունեն ջերմություն, մի՞թե կզգանք այն, ինչ զգում ենք մարդկանց հետ շփվելիս: Իհարկե, ո՛չ: Նույն ձևով էլ տպագիր գրքերն ու էլեկտրոնային տարբերակներն են: Այն հոգեպարար զգացումը, որ կզգանք գիրք ընթերցելիս, երբևէ չենք կարող զգալ էլեկտրոնայինով ընթերցելիս:

Գրքի մեջ կենդանություն կա, շունչ, այնտեղ թափառող մի ոգի կա, որ անընդհատ մեզ հետ է, որ երբեմն հակադրվում է մեզ, երբեմն՝ համաձայնվում... Իսկ էլեկտրոնային տարբերակով կարծես ինչ-որ բան խանգարում է՝ նույն ջերմ շփումը ստեղծելու համար: Միգուցե էկրա՞նն է պատճառը կամ գուցե ճառագայթնե՞րն են խանգարում այդ ջերմ շփմանը, բայց սա դեռ հարցի տեսանելի մասն է:

Էլեկտրոնային տարբերակով կարո՞ղ եք թերթել գիրքը, կարո՞ղ եք արագ ետ ու առաջ տանել ու փակ աչքերով անգամ գտնել քեզ անհրաժեշտ տողերը: Գիրքը լոկ թղթերի կանոնավոր համակցություն չէ, այն հոգի ունի, շունչ, լեզու: Այո՛, այն խոսել գիտի, բայց նրա ձայնը ոչ

բոլորին է հասու: Եվ անգամ կարելի է գրքերի ձայնի հերցը սահմանել, մի ուժգնություն, որ լոկ թվերով չես կարող տալ, բայց կա այդ ձայնի ուժգնությունը, որը, ցավոք, չի ընկալվում այնպես, ինչպես մարդը չի ընկալում անդրաձայները:

Գիրքը մի աշխարհ է, որտեղ ներթափանցելու համար ո՛չ ժամանակը, ո՛չ էլ տարածությունը չեն կարող խթան լինել: Այն թղթից է, թուղթն էլ՝ փայտից, բայց ո՞ր փայտը կարող է արցունքներ քամել մեր աչքերից, փորփրել մեր հոգին, կայծեր բռնկել մեր մեջ: Ինչքա՜ն զորեղ է գիրքը, երբ ստիպում է մարդուն դրսևորել իր բոլոր զգացումները, մինչ մարդիկ ի զորու չեն ստիպել մեկը մյուսին դրանք արտահայտել: Մարդը կարո՞ղ է միաժամանակ ժպտալ ու ակնածել, լացել ու զայրանալ, ըմբոստանալ և դողալ, իսկ գիրքը կարող է, նույնիսկ երբեմն մոռանում ենք, որ հենց մարդիկ են գրել գրքերը, որոնք դարձել են հոգու թարգմաններ:

Մի՞թե կարելի է անտարբերությամբ նայել սեղանին դրված որևէ գրքի, առավել ևս՝ արհամարհանքով կամ դժկամությամբ: Ես մարդկանց ճանաչում եմ գրքերի հանդեպ ունեցած վերաբերմունքից: Եթե ակնածում են գրքով, ապա որքան ակնածելի են իրենք, իսկ երբ գնահատում են, ապա մեղք է՝ չգնահատել այդպիսի մարդկանց: Միգուցե մարդկային շփումն արդեն իսկ փոխարինվել է էլեկտրոնայինո՞վ, բայց երբեք գիրքը չեմ փոխարինի էլեկտրոնային տարբերակով: Ես ջերմ շփման կողմնակից եմ, ամենից առաջ կարևորում եմ մարդկայինը և մարդկանց չեմ փոխարինի անգամ ամենախելացի ռոբոտների հետ: Աշխարհի բոլոր «ամենա- ամենաները»՝ սերը, ընկերությունը, անկեղծությունը, ընտանիքը, վստահությունը վերացական գոյականներ են, մինչ գիրքը ինձ համար ամենաշոշափելի «ամենա-ամենան» է»:

Հպարտությամբ է լցվում հոգիս դեպի իմ աշակերտուհին, ում համար գիրքը «ամենա-ամենան է», ու այդ իսկ հպարտությամբ այս շարադրանքը տեսանելի դարձրի՝ հաշվի առնելով, որ այս օրերին քննարկման է դրված հարց, որը տարակարծությունների առիթ է տվել:

Մարդի՛կ, նույն այդ էլեկտրոնային գիրքը, արհեստական ինտելեկտով ուսուցանելու գաղափարը մեռցնում է ոչ միայն միտքը, այլև զգացմունքն ու հույզը, որ շատ կարևոր են հատկապես արժեքների համակարգի ձևավորման համար: Ու՞ր ենք գնում...

http://www.usarmenianews.com/am-n-9930.html

2017-11-12

ԻՄ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Որքա՜ն անմիջական էին նրա տողերը, իրական, որ մի պահ ես նրան պատկերացրի գրադարանի ճանապարհին: Եվ որքա՜ն հարազատ է ինձ այդ ճանապարհը...Այդտեղով քանի՜-քանի անգամ եմ գնացել մեր քաղաքի կենտրոնական գրադարանը, նստել իմ դպրոցական տարիների այն մտերմիկ անկյունում, թերթել բազմաթիվ գրքեր, զրուցել գրադարանի աշխատողների հետ...

11-րդ ա դասարանի աշակերտուհի Լուիզա Մամունցի տողերն եմ ընթերցում ու տպագիր շարվածքիս մեջ փորձում եմ նաև ինձ տեսնել տարիների հեռվից ու նոր օրերում գրադարանի ճանապարհին: Անհագուրդ ծարավ կար գրքերի հանդեպ ու ինչպիսի՜ անկուշտ հայացքով էինք կլանում գրքերի տողերը:

«Ցանկանու՞մ ես գիրք ընթերցել, օգտվի՛ր գրադարանից... Բայց ինչու՞ օգտվել գրադարանից և ոչ համացանցից: Մտորումների առիթը, իհարկե, առկա է: Եվ այսպես՝ արձակուրդային օրերին օգտվեցի գրադարանից, քանզի ժամանակս բավարարում էր: Այն ճանապարհը, որը տանում էր ինձ դեպի գրքերի աշխարհը, թեկուզ ամենօրյա, բայց ինձ համար այդժամ հեքիաթային էր:

Տունդարձի ճամփին շտապում եմ: Շտապում եմ վաղ հասնել, քանզի թերթածս էջերում ուշագրավ տողերի եմ հանդիպել: Շտապում եմ ամբողջությամբ կարդալ... Եվ ահա արձակուրդային վերջին օրերն են: Շուտով դպրոց, կրկին դասեր, նոր հանձնարարություններ...Կարդացածս գրքի բովանդակությունը պիտի շարադրեի:

Ի՞նչ անեմ...Դասերս այնքան շատ են, ես ինչպե՞ս հասնեմ գրադարան: Ձեռքիս տակ գիրք չունենալ, էլ չեմ կարող, ինձ պետք են այն տողերը, որոնք շարադրանքիցս անպակաս պիտի լինեն: Համացանցում գրքի էլեկտրոնային տարբերակն է: Ընդամենը վայրկյաններ, և գիրքն իմ առջև է: Կարող եմ «թերթել», ցանկացածս տողերը գտնել:

Ասածս ի՞նչ է...Երբ ինձ հապշտապ գիրք էր անհրաժեշտ, ես չվազեցի գրադարան, ընտրեցի հեշտ ուղին՝ գրքի էլեկտրոնային տարբե-

րակը, որը կարծես ավելի հասանելի է դարձել, քան գիրք ձեռք բերելը: Բայց ի՞նչ արած, երբ այդ ձևով իմ հեքիաթային ճանապարհը չանցա...»:

Հեքիաթային ճանապարհ...Հրաշալի է հնչում: Մանկական անհոգ օրերի մեղեդին եմ լսում, և վաղուց, շատ վաղուց մոռացության տրված հուշեր են արթնանում, ու նորից գրադարան տանող ճանապարհին եմ: Այդտեղից հայացքս հառում եմ այն մացառապատ ճանապարհին, որ մեր հին բնակելի տան ավերակներն է տանում, որտեղ պատերազմն իր հետքերն է թողել...

Լռություն է այնտեղ, մարդկություն չկա, բայց այն իմ հին ճանապարհն էր, գրադարան տանող իմ ճանապարհը, որ հեքիաթային էր, անհոգ, գրքերի հերոսների կյանքին շաղախված՝ նրանց հետ արտասվելիս, նրանց նման հուզված, երբեմն ծիծաղկոտ և ուրախ: Անցյալ են դարձել այդ հին օրերը, փոշոտված գրքերի նման փոշի է նստել օրերի վրա, իսկ հիշողությանս մեջ իմ հայրական տնից գրադարան տանող այն օրերի հեքիաթային ճանապարհն է, որ բացել է իմ դեմ կյանքի, դժվարությունների, տեղատվությունների ու մակընթացությունների հեռուները: Գրադարան, որով ճանաչում ու նվաճում ենք կյանքը:

http://www.usarmenianews.com/am-n-9937.html

2017-11-14

ԹՌԻՉՔԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԴԱԼ Է ՊԵՏՔ

Տողը հրաշալի հնչեց. «Ես կարծում եմ՝ մտածելու համար կարդալ է պետք, ապրելու համար կարդալ է պետք, թռիչքի համար կարդալ է պետք»: Ու ես զարմացած եմ, որ այս միտքն արտահայտում է 11-րդ ա դասարանում միջակ կարողությունների տեր աշակերտուհի, ով իր շարադրանքում բնաբանի խոսք էր ընտրել Ցիցերոնի միտքը. «Տունը, որտեղ գրքեր չկան, նման է հոգուց զուրկ մարմնի»:

Մի պահ ընդհատում եմ նրան, հայացքս ուղղված է մյուսներին, որ պատրաստակամ եկել էին դասի՝ իրենց գրած տնային հանձնարարությունը կարդալու մեծ ցանկությամբ, որտեղ մեկը մյուսից հետաքրքիր կարծիքներ կային: Եվ Մերի Հակոբյանի տողի արձագանքը հոգումս՝ լսում եմ նրան, հետո մյուսներին, որ ընթերցում են իրենց շարադրանքը՝ ո՞րն է նախընտրելին՝ տպագիր գրքի՞, թե էլեկտրոնայինի ընթերցանությունը:

«Շատ քչերն են գիրք ընթերցում, իսկ ես սիրում եմ արկածային գրքեր կարդալ: Քաղցր է շնչել հին գրքերի բույրը, առավել ևս, երբ դրանց արանքում հանգրվանել են չորացած ծաղիկների թերթիկները: Կարծես հիմա կարևորություն չեն տալիս տպագիր գրքերին, բայց դրանք պետք է հրատարակվեն, մարդիկ կլինեն այս աշխարհում, որ կկարդան լավ գրքերը հիացմունքով: Այն պետք չէ փոխարինել ոչնչով, երբ այդ տողերը սովորեցնում են գթասրտություն, չարն ու բարին զանազանելու կարողություն, դարձնում մարդուն արդարամիտ, անաչառ, մաքրում հոգին, օգնում գնահատել մարդկային արժեքները» /Հակոբյան Մերի/:

«Իհարկե, գրքի էլեկտրոնային տարբերակը շատ մատչելի է, եթե ձեռքիդ տակ չկա տպագիր գիրքը, սակայն այն չի կարող զբաղեցնել գրքի պատվավոր տեղը: Իմ կարծիքով, գրքի էլեկտրոնային տարբերակը կարելի է ընտրել այն դեպքում, երբ շտապ անհաժեշտ է ինչ-որ կարևոր տեղեկություն ստանալ, այլապես ամբողջ գիրքն այդպես ընթերցել, համամիտ չեմ: Ինքս փորձել եմ կարդալ էլեկտրոնային տար-

բերակով, սակայն չէի կարողանում ինձ պատկերացնել գրքի հերոսների փոխարեն, ջերմություն չէի զգում և ոչ էլ՝ սրտի թրթիռ՝ կապված տագնապալի որևէ իրադարձության հետ: Ինձ համար այն միայն սառը տեղեկության աղբյուր էր, ուրիշ ոչինչ» /Խաչատրյան Անի/:

«Երբևէ այս հարցի շուրջ խորը չեմ մտածել, միգուցե պատճառն այն է, որ ես հեռացեա՞լ եմ գիրք ընթերցելուց: Բայց երբ հարցի էությունն այդպիսին է, ապա ես ունեմ իմ սեփական և անփոփոխ կարծիքը: Թե որքանով է մատչելի էլեկտրոնային գրքի ընթերցումը, ապա կարող եմ սեփական փորձից ասել, որ պետք է ուղղակի մի փոքր համբերություն ունենալ և ուշադիր կարդալ մինչև վերջ: Ինձ թվում է՝ ես գերադասում եմ էլեկտրոնային

տարբերակը, չնայած ժամանակ լինելու դեպքում նախընտրելի է ընթերցել տպագիր գրքի բնագիրը: Բայց կա այստեղ անհասկանալի հարց, թե ինչ կլինի գրադարանների վիճակը, այն կտանի դրանց գոյության ավելորդությանը, որին խստիվ դեմ եմ: Առանց այն էլ մարդը այս դարում հեռացել է բնականից ու իրականից և նախընտրում է «պատրաստին»: Ես կողմ եմ երկու տարբերակին՝ թե՛ տպագիր և թե՛ էլեկտրոնային գրքերի ընթերցանությանը, կարծում եմ դա չէ էականը, այլ կարևորը՝ ընթերցածը հասկանալն է» /Գրիգորյան Նորա/:

Գրքից հեռացած նոր սերնդի խոսքերն են սրանք, որ լսեցի նրանց հոգուս խորքում ունեցած մեծագույն բերկրանքով, այն մեծ հույսով, որ ինչ տարբերակով էլ ընթերցելու լինեն, ողջունելի է, բայց երբևէ չպետք է թույլ տալ, որ հանուն այս նորի, վերացնենք այն հինը, որ գեղեցիկ է, ջերմությամբ լի:

http://www.usarmenianews.com/am-n-9941.html

2017-11-15

ԻՄ ՆԵՐՍՈՒՄ ՀՈԳՈՒ ՊԱՏԵՐԱԶՄ Է

11-րդ գ դասարանում եմ: Մինչ դասամատյանը կբացեի, նա մեղմ ժպիտով ինձ տեղեկացրեց, որ ի պատասխան իր ուսուցչուհու նախօրդ օրվա հարցմանը, ինքը գրավոր շարադրանք ունի և ցանկալի է ընթերցի բարձրաձայն: Համակ ուշադրությամբ բոլորս լսում ենք: Երևակայությամբ ես նրա տողերին ու իր ապրումներին եմ ձուլվում...Բայց որտեղի՞ց են ծնվել նրա մտքերը, որ իր հոգու նման փխրուն են՝ մերթ ահուդողի մեջ, վախվորած ու սարսափահար, մերթ հանդարտ և խաղաղ երանությամբ: Ցավալիորեն տխրում է հոգիս, երբ գիտեմ՝ այս սիրունատես արցախուհու հոգում դեռ պատերազմ է, հոգու պատերազմ, որ խաղաղության է տենչում:

«Մատներս ի զորու չեն գործել մտքիս պես, ո՛չ ուժ ունեն, ո՛չ էլ՝ թռչելու հնարավորություն, բայց նրանց միջոցով եմ մտքիս թռիչքը հանձնելու թղթին: Ուսուցչուհուս «Մանկավարժի օրագիրն» էի ընթերցում, մի գիրք, որ անկախ նրանից՝ այդ օրն ընթերցելու եմ թե ոչ, դրված է սեղանիս: Հարցին, թե ամբողջությամբ կարդացե՞լ եմ, չգիտեի ինչ պատասխանել, ինչպե՞ս ասել, որ խուսափում եմ այն տողերից, որտեղ պատերազմական օրեր կան, արյուն, արտասուք: Կարդում եմ գիրքը, բայց փորձում եմ զգույշ լինել այն տողերի հետ, որտեղ պատերազմի շունչ կա: Համարձակությունս չէր հերիքում կարդալ այդ օրերի ապրումների մասին...Գուցե վախենու՞մ էի: Ավարայր եմ կարդում, Ձիրավ, Հալիձոր, բայց ուժ չունեմ ապրիլյան պատերազմի մասին կարդալ, նույնիսկ անկարող եմ դարձել, չեմ ուզում դիտել ֆիլմեր, որոնք պատերազմի մասին են:

Դարձյալ պատերա՞զմ,- բողոքում էր ներքին ձայնս: Ես սարսափում եմ պատերազմից, բայց չկարծեք, թե ինձ համար եմ վախենում: Ո՛չ, ես վախենում եմ, որ հայրենիքս կարոտ կդառնա ինձ համար, որ արցունքախառն աչքերով կլսեմ նրա անունը, և սիրտս չի դիմանա այն ցասմանը, որ այլևս իմը չէ: Վախենում եմ, որ կքայլեմ օտար, բարեկարգ փողոցներով ու մտքով կկառչեմ իմ հին հուշերից, մեր հին ու ավերակ փողոցները կկարոտեմ ու ծարավ կմնամ հայրենի ջրին, անհագ կարոտով կլցվեմ անգամ հայրենքիս օդի հանդեպ, այո՛, հենց՝ օդի: Ուզում եմ կոտրել իմ մեջ վախը, բայց մինչև չիշխեմ վախին, չեմ կարող հաղ-

թել, խուսափում եմ, ականջներս պինդ փակում եմ, երբ լսում եմ այդ հնչյունների միացումից առաջացած ահասարսուռ բառը: Մի՞թե տառերը խիղճ չունեն, որ միանալով կազմում են այդպիսի բառ, բայց ինչ անմի՞տն եմ ես, տառերն ի՞նչ մեղք ունեն:

Որոշեցի և հաստատակամ եղա, որ պետք է կարդամ, որ ես ավելի ուժեղ եմ, քան պատերազմ հարահրող թշնամին, որ ոգիս ավելի զորեղ է: Եվ հասկացա, որ միայն ես չէի անորոշության մեջ, որ ինձ նման քանի՜-քանիսն էին այդ սոսկալի վիճակում, երբ հոգիդ ձգտում էր դեպի կործանարար անդունդը: Հոգումս մի մեծ խոց էր թողել պատերազմը, բայց հոգուս բացը լրացավ, և ինչքա՛ն լավ կլիներ, եթե պատերազմի օրերին հնարավորություն ունենայի այդ գրքի տողերը կարդալ: Ես իսկապես այն օրերին այդ խոսքերի կարիքն ունեի, իմ անմխիթար վիճակին իրապես անհրաժեշտ էին հոգու այդ «դեղերը»: Ինքս ինձանից փախչելով՝ խնդիրը չէի լուծի, բայց իմ մեջ արմատներ գցած վախին կարողացա հաղթել: Ու ես հաղթեցի:

Պատերազմի նախօրեին էր, երբ հիանում էի աստղերով, երազանքներս հասել էին այնտեղ՝ աստղերի մոտ, դրանք ծուլվել էին աստղերի երազային լույսի հետ և ավելի էին պայծառացել: Չէի կարող անգամ երևակայել, որ երազներս կմնան հեռուներում՝ աստղերի լույսի տակ սքողված, և որ անգամ կխուսափեմ նայել աստղերին: Այսօրվա պես հիշում եմ այդ պարզկա գիշերը, որ իմ անհոգ կյանքի վերջին երազային ակնթարթն էր: Պատերազմն ավարտվեց, բայց այն չէր ավարտվել իմ փխրուն հոգու մեջ, սկսվել էր ավելի սոսկալին՝ հոգու պատերազմ, որ իմ ներսում էր:

Բայց հիմա նորից ընկերացել եմ աստղերի հետ, վախն ու սոսկալի պաշարումներն իմ մեջ սպանելով՝ ուզում եմ դառնալ նույն երազկոտ աղջիկը, բայց պատերազմն արդեն իր չմարող շունչն է թողել հոգուս ներսում և ինչքան էլ դառնամ երազկոտ, միևնույն է, առաջին երազանքս խաղաղությունն է լինելու: Ուզում եմ տեսնել մի մեծ ծիածան՝ կամարված հայրենիքիս երկնակամարում, և ուզում եմ, որ դա խաղաղության ուխտ լի՝ նվիրական, չխախտվող ուխտ»:

Մի քանի անգամ կարդացի Տաթևիկ Ղահրամանյանի տողերը, որ իմ հոգուն էլ տխրություն բերեցին: Որքա՜ն նուրբ է նա, հմայիչ, բայց պատերազմն իր հետքերն է թողել այս լուսավոր էակի հոգում, և որքա՜ն շատ երազանքներ ունի նա: Իսկ ես ուրախ եմ, որ իմ օրագրային պատերազմական գրառումները նրան օգնել են նորից աստղերի հետ ընկերանալ և դառնալ նույն երազկոտ աղջիկը, ով շա՜տ-շատերի նման խաղաղություն է երազում:

http://www.usarmenianews.com/am-n-9946.html

2017-11-16

«ՕՏԱՐԻ» ՄԵՋ ՉԿԱ ԱՅՆ ՏԱՔ ՇՈՒՆՉԸ, ՈՐ ԿԱ «ՀԱՅՐԵՆԻ» ԲԱՌԻ ՄԵՋ

11-րդ ա դասարանում Քրիստինե Կարապետյանի տողերն անակնկալ էին ինձ համար: Նա մեկն էր, ով զարմացրեց ինձ իր արածախնդրության ձգտման մեջ, որին անհագուրդ ցանկությամբ մեծ տեղ տվեց՝ արդարացնելով իրեն իսկ, որոնք ուղեկցվում էին հարցումներով ու դրանց տրված պատասխաններով: Սիրում է իր հայրենիքը, բայց մեծ ձգտում ունի դեպի արկածային կյանքն ու նորարարությունը, որոնց իրականացումն հնարավոր է տեղի ունենա մեկ այլ միջավայրում, որ իրեն օտար են, մեզանից հեռու:

« «Ի՞նչն է ձեզ պահում Արցախում, արդյո՞ք պատկերացնում եք ձեր ապագան Արցախից դուրս»: Տիկին Պողոսյանի հարցն ուղղված էր ամբողջ դասարանին: Բոլորս լուռ էինք... Ուսուցչուհիս շարունակեց հարցը, թե կա՞ն դասարանում աշակերտներ, ովքեր կցանկանան հետագայում ապրել ուրիշ երկրում:

Չկարողացա հետաքրքրությունս զսպել և ցանկություն հայտնեցի լսել ուսուցչուհուս այդ հարցի շուրջ: Ուշադիր լսում էի նրա կողմից տրվող պատասխանին: Լսում էի... Մինչ ունկնդրում էի նրան, թե ինչն է ինձ պահում Արցախում, և որտե՞ղ եմ ինձ տեսնում ապագայում, ուղեղս ինձ ազդանշաններ էր ուղարկում: Ազդանշաններն արձագանքներ էին համամտության, ինչպես նաև՝ այլամտության:

«Չգիտեմ ով ինչպես...»: Ուզում եմ հենց այսպես սկսել իմ անձնական կարծիք արտահայտող շարադրանքը: Ուզում եմ խոսել միայն իմ անունից, միայն իմ անձնական «ես»-ից:

Ես ապրում եմ սահմանամերձ գոտում... Մի՞թե ընտանիքիս այստեղ բնակվելն է ինձ պահում այստեղ: Միայն դա չէ պատճառը: Ես ունեմ մեկ այլ պատճառ, որը վեր է ամեն ինչից: Եվ դա իմ հայրենիքն է, իմ սերը դեպի իմ լեռնային աշխարհը: Չեմ ուզում խոսել հայրենիքիս հանդեպ տածած սիրո մասին: Պատկերացրե՛ք, որ ես էլ սիրում եմ հայրենիքս այնքան, որքան՝ մյուսները:

Հիմա մեկ հարց. «Եթե հնարավորություն է տրված «գնալ հեռուն» և բացահայտվել մեկ այլ աշխարհում, որտեղ մեր կյանքը գրեթե կնմանվի անբիծ թղթի, ապա ինչու՞ բաց թողնել ընձեռված հնարավորությունը և չգնալ այդ նոր միջավայրը՝ նոր գիրք ստեղծելու...»:

Այո՛, ես կգնամ «հեռուն»: Միգուցե իմ պատասխանը եսասիրություն թվա՝ թողնել հայրենիքը՝ նոր գիրք ստեղծելու համար: Ո՞չ, դա եսասիրություն չէ, դա արկածախնդրություն է կամ անհագ ծարավ դեպի նորարարություն: Ինչու՞ ապրել միապաղաղ, երբ ապրում ենք միայն մեկ անգամ: Մեզ տրված է միայն մեկ հնարավորություն: Արարիչը մեզ կյանք է տվել: Իսկ ինձ համար կյանք ասվածը ոչինչ է առանց արկածների: Հենց այդ արկածներն են իմ կյանքին, իմ ապրած ամեն մի օրվան գույն ու շունչ տալիս: Որտեղ էլ լինես, ինչ էլ անես, պետք է տարօրինակություն ու յուրօրինակություն ունենաս, որ հիշվես միլիարդների մեջ: Ինչպե՞ս սպանեմ իմ մեջ նորը ստեղծելու, տեսնելու, զգալու, ապրելու ցանկությունը:

Հիմա ինձ կհարցնեք, թե ու՞ր կորավ հայրենիքդ, ինչու՞ այդքան հեշտ մոռացար այն, մի՞թե օտարության քաղցրությունը կարողացավ մոռացության մատնել հայրենիքը:

Եկե՛ք համեմատենք «օտար» և «հայրենի» բառերը լեզվաբանորեն: «Օտարի» մեջ չկա այն տաք շունչը, որ կա «հայրենի» բառի մեջ: Եվ ինչքան էլ օտարության մեջ լինի քաղցրություն, ջերմություն, այն երբեք չի գերազանցի հայրենիքին: Բայց ինչի՞ համար են զգացմունքները: Եթե չլինենք հայրենիքից հեռու, ապա ինչպե՞ս զգանք «կարոտ» ասվածը: Ինչպե՞ս կարոտել մի բան, որի մի անմիջական մասն ես: Եվ ինչպես չկարոտել հայրենիքը, երբ հեռավորությունն ու տարածությունն են բաժանում: Կմտածեն ոմանք, որ ես չեմ հասկանում, չեմ դատում, չեմ գնահատում, ու այսպես էլի «չեմ-եր»: Բայց ես իմ սրտի ու զգացմունքների առջև անզոր եմ և չեմ կարող ցանկություններս ամուր փակել մի տուփի մեջ՝ մոռանալով տուփի գոյության մասին:

Չգիտեմ որքանով կարողացա հասկացնել իմ էությունը: Ես մեկն եմ, ով մեծ տեղ է տալիս իր սրտին ու արկածներին: Սա էլ կբացատրեմ մաթեմատիկորեն: Կյանքը նման է անսահման տարածության, արկածներն էլ դրա մեջ գծված պատկերներն են: Եթե տարածության մեջ թվերով նշված մարդկանց, առավել ևս՝ զգացմունքների հանդիպենք, անուշադրության կմատնենք 0-ն, քանի որ այն դատարկություն է, իսկ ոչ մի իրական զգացմունք, նույնիսկ չնչին մասով, չունի դատարկություն:

Որպես վերջաբան՝ ասեմ, որ ինձ ապագայում պատրաստ եմ տեսնել ամենուր, միայն թե հաճելի լինի ապրած կյանքս և ազնիվ լինեմ խղճիս հանդեպ: Խոսքս ուզում եմ եզրափակել Պաուլո Կոելյոյի՝ իմ ամենասիրելի գրքային մեջբերմամբ. «Տիեզերքի հոգին սնվում է մարդկային երջանկությամբ: Եթե երբևիցե ինչ-որ բան ցանկանաս՝ ողջ Տիեզերքը նպաստելու է քո ցանկության կատարմանը» »:

Դասարանի լավագույն աշակերտուհիներից է Քրիստինեն: Իր ընդունակություններով, աշխատասիրությամբ, պատասխանատվության զգացումով տարբերվում է նա, բայց նաև զարմացած եմ նրա արկածային կյանքի ձգտելու հակումով՝ կողմնակից լինելով այն նորարարությանը, որն ապագայում օգտակար կլինի նաև մեր հայրենիքին: Հետաքրքրությունս, թե ինչ արկածների է նա ձգտում, արձագանեց ժպիտով ու այն անսովորով, որը մեր միջավայրում անհարմար է՝ տեսանելի դառնար, բայց օտար միջավայրում սովորական կլիներ: Որպես իր ուսուցչուհին՝ որքան էլ համամիտ չլինեի արկածախնդրության այդ ձգտմանը, միևնույն է, նրա այդ երազանքների իրականացման ջատագովն եմ դառնում, թող ի կատար ածվեն նրա մատաղ սրտի բոլոր իղձերը:

http://www.usarmenianews.com/am-n-9953.html

2017-11-17

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՉՊԵՏՔ Է ՎՆԱՍԻ ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Այս վերջին օրերին աշակերտներին առաջարկված բանավիճային թեմայի շուրջ բավականին կարծիքներ արտահայտվեցին՝ մեկը մյուսից հետաքրքրիր ու հարցադրումներով հարուստ, թե գիրք կարդալու ո՞ր տարբերակը նախընտրեն: Նույնիսկ եղան աշակերտներ, որ, ընդհանրապես, հեռու են ընթերցանությունից, բայց արտահայտեցին իրենց կարծիքները՝ անմասն չմնալով բարձրացված հարցից:

«Անշուշտ, հարցը շատ արդիական է, սուբյեկտիվ, կարծում եմ՝ այն մի քիչ անհատական է՝ կախված մարդուց: Իհարկե, մեր օրերում համացանցը դարձել է բոլորիս առօրյայի անբաժան մասը, որովհետև այն ավելի հետաքրքրիր է, ժամանակին համապատասխան, ավելի ինֆորմացիոն դաշտով հարուստ և ավելի մատչելի, բայց գիրք կարդալու հարցում ես մի քիչ այլ մոտեցում ունեմ: Իմ կարծիքով՝ ինչքան էլ, որ տեխնիկան և ժամանակները զարգանան, միևնույն է, գիրքը մնում է ընթերցանության լավ ճանապարհը, ինչպես ասում են՝ գրքի հոտն ուրիշ է, այն զգալով՝ զգում ես նաև գիրքն ու կարդացածդ: Գրքի մեջ ավելի շատ ես կարողանում խորասուզվել, ես նախընտրությունը տալիս եմ հրատարակված գրքի ընթերցանությանը» /Ավթանդիլյան Մերի/:

«Տարբեր են մարդիկ, տարբեր են կարդալ-չկարդալու գրական ժանրի ընտրության նրանց նախընտրությունները, ինչպես նաև՝ գիրքը էլեկտրոնային թե տպագիր կարդալու տեսանկյունից: Էլեկտրոնային գրքերը շատ տարածված են, իհարկե, այն չունի թղթի հոտ, որ ունեն սովորական գրքերը, բայց, այնուամենայնիվ, ունի նաև մի շարք առավելություններ: Նախ՝ մեր որոնելիս գիրքը հնարավոր է անվճար գտնել, հնարավոր է գտնել այնպիսի գիրք, որը կգտնվի աշխարհի մյուս ծայրում: Գիրքը մարդկության լավագույն ստեղծածներից է: Դրա միջոցով մենք դարեր շարունակ փոխանցում ենք մեր գիտելիքները սերունդնե-



րին: Եթե չլիներ գիրքը, ամեն դարաշրջան նոր Նյուտոն, նոր Շեքսպիր և նոր Էյնշտեյն պետք է ունենար: Գրքերի այնքան մեծ բազմազանություն կա, որ չես էլ կողմնորոշվում ո՞րը կարդալ: Հաճախ ժամանակն էլ չի հերիքում գիրք կարդալու համար: Շատերը նույնիսկ երազում են այնքան ժամանակ ունենալ, որ աշխարհի բոլոր գրքերը կարդան: Լավ...ո՛չ բոլորը, միայն հետաքրքիրներն ու օգտակարները: Ամեն դեպքում միշտ էլ ժամանակ պետք է գտնել գիրք կարդալու համար: Բայց դա, իհարկե, այն դեպքում, եթե ուզում ենք անձնային աճ ունենալ: Իսկ այժմ շատերը նախընտրելի են համարում էլեկտրոնային տարբերակը, քանի որ հիմնականում երիտասարդության մի հոծ զանգված գիրք չի կարդում, ընդհակառակը, խորացած է «ինտերնետ» ասվածում: Ու կարևորն այստեղ բովանդակությունն է, ինչ տարբերակով էլ կարդալու լինենք» /Սաղաթելյան Վահագն/:

«Մտորումների մեջ եմ. գրքի ընթերցանության ո՞ր տարբերակն է նախընտրելի: Եթե ցանկություն է լինում գիրք կարդալ, ես շտապում եմ գրադարան: Ինձ համար աննկարագրելի հաճելի է այն պահը, երբ անցնում եմ գրապահարանների կողքով, ընտրում ցանկացածս գիրքը, զգում գրքերի հնացած թերթերի շունչը: Իսկ վերադառնալիս շտապում եմ ավելի շատ, քանի որ հետաքրքրությունը, թե ինչ է պարունակում այդ հնամաշ գանձը, ուղղակի խեղդում է ինձ: Նույնիսկ այնպիսի հետաքրքրությամբ և միաժամանակ լարված եմ ընթերցում, որ չեմ էլ նկատում, թե ինչպես ավարտեցի այն: Բայց երբեմն, որ հանձնարարություն է տրված լինում՝ շտապ կարդալ ինչ-որ գիրք, ես չեմ հասցնում գնալ գրադարան, ընտրում եմ ավելի հեշտ ուղի՝ գրքի էլեկտրոնային տարբերակը: Ընդամենը մեկ վայրկյան, և գրքի բովանդակությունն իմ դիմաց է: Կարող եմ թերթել ցանկացածս էջերը և տեղավորվել ժամանակի մեջ՝ ընտրելով այս տարբերակը» /Նավթալյան Անի/:

Եզրափակելով այս թեման՝ կարելի է ասել, որ ինչ տարբերակ էլ նախընտրելու լինեն, դա չի տանում դարերի խորքից մեզ հասած գրքերի գոյության սահմանափակմանը, նոր գրքերի հրատարակության ժխտման փաստին, որ վերջիններս իրենց տեղը զիջեն էլեկտրոնային տարբերակին: Յուրաքանչյուրը յուրովի իրենց տեղն ու դերն ունեն՝ առավելություններով ու թերություններով հանդերձ, և դա չի նշանակում, որ մեկի գոյությունը պետք է վնասի մյուսին:

http://www.usarmenianews.com/am-n-9958.html

2017-11-20

ՂԱՐԱԲԱՂՅԻՆ ՈՐՏԵՂ ԳՆՈՒՄ, ՂԱՐԱԲԱՂԸ ՏԱՆՈՒՄ Է ԻՐ ՀԵՏ

Լոս Անջելեսի «Հորիզոն» հեռուստակայանից արձակվող հաղորդումն եմ դիտում ու ցանկացա այս հրապարակումով արտահայտել իմ կարծիքը, նաև մեծագույն շնորհակալությունս հայտնել հարազատ մարդկանց, ովքեր այնտեղ բարձր գնահատանքով հնչեցրին նաև ուսուցչուհուս մասին՝ ի ցույց դնելով Նելլի Ավակովայի հովանավորությամբ և իմ հեղինակությամբ հրատարակված «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» գիրքը, որ նվիրված էր Լևոն Ադյանի զավակների հիշատակին:

Այս հարցազրույցը արձակագիր Լևոն Ադյանի ու բանաստեղծուհի Նելլի Ավակովայի հետ կարծես մի նոր էջ էր բացում ինձ համար, ու հանդիսատեսի դերում էի հայտնվել՝ լուռ ունկնդրելով նրանց: Հաղորդավարուհի Մարիկա Ավետիսյանի և Ադյանի մասին նկարահանվող ֆիլմի ռեժիսոր Վահե Խաչատրյանի կողմից մեկընդմեջ լրացվող մտքերը կարծես հոգուս մեջ ծնված հարցերի արձագանքներն էին, որ լսում էի նրանց ազատ ու անկաշկանդ խոսքում, որի համար շնորհակալությունս նրանց:

Այսօր Սանկտ Պետերբուրգից Միացյալ Նահանգներ այցելած ու իր տիկնոջ՝ Էլմիրա Ադյանի հետ Նելլի Ավակովայի ընտանիքում հյուրընկալվող Լևոն Ադյանի խոսքն էի լսում հեռուստաթերից: Մարդը միշտ չէ, որ կարողանում է հաղթահարել իր «ես»-ի նեղ շրջանակը, միշտ չէ, որ կարողանում է ընդհանրական բոլորի ցավով ապրել: Ունկնդրում էի մի արցախապատում. «Ես, որ շուրջ 60 տարի է, ինչ Ղարաբաղից դուրս եմ եկել, իմ կյանքի ամբողջ այդ ընթացքում Ղարաբաղը եղել է իմ մեջ...»:

Ես գիտեի, որ գրողը մշտապես իր հայրենիքի հետ է, իսկ այն տեսնում է նա իր հոգու աչքերով, և ամենուր ցավագնորեն արտահայտում է մեր անսփոփ վիշտը: Բայց այս անգամ կարծես մի նոր արցախապատում էի լսում, Արցախով ապրող մարդու խոսք: Որտե՞ղ է կայանում մարդու ասելիքի խորությունը, երբ հետաքրքիր փաստի առջև ենք, որ

60 տարի առաջ Արցախից հեռացած, բայց հայրենի եզերքով ապրող մարդն այդ հեռավոր երկրի գունազարդ լույսերի տակ էլ Արցախի հետ է, այստեղ ապրողներիս հետ ու մեր ճակատագրով մտահոգ:

Նելլի Ավակովայի խոսքում, չնայած քաղաքում է ապրել, նաև Արցախի ծնունդ չէ, աշխարհն ընկալվում և վերարտադրվում է իր բանաստեղծություններում տխուր և թախծախառն, բայց այն չեմ դիտում միայն որպես սեփական ապրում ու մտածում: Ապրումի հեղինակն ինքն է, բայց նրան տեսնում եմ որպես հավաքական կերպար, ով ապրում է Արցախով, նույնիսկ՝ արցախցու գյուղական կյանքով:

Ու նա այդ աշխարհին էր ձուլվել Ադյանի ստեղծագործությունների թարգմանությամբ, իր արմատների կանչով, իր ընդհանրական մտածողությամբ, որ արցախցի է դարձել հոգու ներշնչանքով՝ այդ հայրենիքը կրելով իր մեջ:

Անցած դարավերջի ոճրագործության ականատեսներն են նրանք, որ փրկվել են ու իրենց գրիչը ծառայեցրել նաև այդ արյունոտ բարբարոսների վայրագությունների պատկերմանը: Իրենց ապրած ցավից հոգին կարող էր քարանալ, բայց կարևորը՝ հույսի ճանապարհը չկորցնելն էր, որ կատարվածը դատապարտեցին՝ տոգորված կենսասիրությամբ, խոր ապրումներով: Այն կանխամտածված ցեղասպանություն էր, որ իրենց գրչով գեղարվեստական ձև ստացավ, ու հրատարակվեցին այդ գրքերը սեփական միջոցներով՝ առանց պետական աջակցության:

Ադյան գրողի մեջբերմամբ, որ Վարդգես Պետրոսյանի խոսքով, թե ղարաբաղցին որտեղ էլ լինի, Ղարաբաղը կտանի իր հետ, ասված էր ամեն ինչ, որտեղ մարմնավորված էր սփյուռքի հայության հայրենանվեր կարոտը: Այստեղ միավորված էին հայրենի երկիրն ու նրա բախտով մտահոգ մարդը, որ մանրաքանդակների տեսքով աշխարհին էր պարզել անցողիկ կյանքի ու հավերժորեն հարատևելու գաղտնիքը:

Իսկ ինձ մնում էր նրանց փոխանցել իմ ակնածանքը, որ դպրոցի ուսուցչուհիս իր հեղինակած գրքով հայտնվել էր այն հեռուներում՝ ինձ հարազատ դարձած մարդկանց՝ Լևոն Ադյանի և Նելլի Ավակովայի գնահատողական խոսքերում, ովքեր ամիսներ առաջ, նույնքան հարազատ Էլմիրա Ադյանի հետ, այցելել էին Մարտակերտ, մասնակցել իմ գրքերի շնորհանդեսին՝ իրենց հետ տանելով մի բուռ Արցախ, հայրենյաց մի սեր, որ նրանց հետ է միշտ:

http://www.usarmenianews.com/am-n-9960.html

Լոս Անջելեսի «Հորիզոն» հեռուստահաղորդում՝

https://www.youtube.com/watch?v=Mr2rzsgJipU&feature=youtu.be

2017-11-21

ՈՒ ՀԵՏԴԱՐՁԻ ՃԱՄՓԱՆ ԵՄ ՓՆՏՐՈՒՄ, ՈՐ ՎԵՐԱԴԱՌՆԱՄ ԱՐՑԱԽ

Օրերս բարձր դասարաններում աշակերտներին ուղղված իմ հարցը, թե որտեղ կցանկանային ապրել, նաև որտեղ են տեսնում իրենց ապագան, բազմաթիվ մտորումների տեղիք տվեցին: Կարծիքներ արտահայտվեցին մեկը մյուսից տարբեր, նաև որքան էլ մեծ քաղաքների շլացուցիչ կյանքը նրանց գերեր, հոգուս խորքում ուզում էի լսել, որ իրենց կյանքը Արցախում են տեսնում, հարազատ հողի վրա: Նրանց շարված տողերին մեկընդմեջ ավելանում էին իմ հարցումները, որով ցանկանում էի այդ դեռահասներին տեսնել տարբեր իրադրություններում, առավելապես օտար ափերի շքեղության մեջ, որպեսզի կարողանայի կողմնորոշվել, թե արդյո՞ք չէին գայթակղվի այդ քաղաքների արտաքին գեղեցկությամբ:

11-րդ ա դասարանի աշակերտուհի Լուիզա Մամունցի տողերը սիրով տեսանելի դարձրի՝ համոզված նրա խոսքերի ճշմարտության մեջ. «Արցախի մի գողտրիկ անկյունում՝ Մարտակերտում եմ ապրում: Լեռնային է երկիրս, բնությամբ լեցուն, ոգի ու շունչ ունի, ապրեցնող ուժ իրենում: Իր բարձր լեռներով, մաքուր օդով, սառնորակ ջրով, կարմիր գինով, թոնրի հացով ու պանրով է տարբերվում Արցախս, իր անուշաբույր ծաղիկներով և կանաչապատ դաշտերով, արևի լույսի տակ շողացող ցորենի հատուկենտ ցոլքերով...Առաջին քայլերս այստեղ են եղել, առաջին բառերս այստեղ են հնչել, «Այբբեն-գիմ»-ն այստեղ եմ սովորել, առաջին տառերս՝ այստեղ գրել:

Լինել արցախցի, բայց ապրել հեռու եզերքում: Ապրել սրտում փակված անհագ կարոտով, խեղդել կարոտը լռությամբ և վերադառնալու «անճար» հավատով: Չգիտեմ ով ինչպես, բայց ես անկարող եմ: Շրջել ամբողջ աշխարհով, բայց բնակություն հաստատել հայկյան երկրում. ես սրան եմ համախոհ: Ապրիլյան օրեր եմ տեսել, բայց երբեք հավատս չի մարել, երբևէ չեմ մտածել օտարոտի դառնալու, այլուր մնալու, ապրելու և հողս այլոց թողնելու մասին:

Օտարություն...Նոր էջ, նոր հիմք, նոր սկիզբ, ինչու՞ չէ, մի կյանք, որտեղից սկսվում է նորը, սկսվում է անսպասելին ու անհավանականը: Չէ՞ որ օտար ափերում հազար ու մի «սկզբնակետի» ես հանդիպում, ապրելու նոր ոճի: Թափառում ես օտարության մեջ, անվերջ ելք ես փնտրում՝ քոնը ստեղծելու, նորը կառուցելու... Գուցե ստեղծել այնպիսինը, որը երազ էր թվում, լոկ ցնորք, որ կարող էր լինել կամ չլինել: Բացել էջն ու ստեղծել ռեալից հեռու թվացողը... Այնպիսին, որը երևակայական է, բայց և՛ յուրահատուկ, գուցե և՛ գունեղ լույսերով պատված, կամ էլ...

Եթե հայտնվեի Արցախից հեռու, մշտական բնակություն հաստատեի և կանգնեի նորը կառուցելու փաստի առաջ, իմ էջը կհամարվեր բացված: Գուցե պահը կլիներ կարոտը խեղդելու, մի կողմ թողնելու... Ինձ ի՞նչ է մնում: Միայն հարմարվել, բայց և չմոռանալ, թե որտեղից եմ եկել: Այն լեռնային երկրից, որ ի տարբերություն շքեղ երկրների պահպանվող ավանդույթների, հոծ աղբյուրներ ունի: Շքեղություն, գունավոր լույսեր, ամենուր երաժշտության ձայներ, բարձր կառույցներ, ճոխություն և օտար լեզու: Առաջիններին կարող եմ հարմարվել, չէ՞ որ գեղեցիկ է, գերող...Բայց վերջինին, վերջինին ինչպե՞ս հարմարվեմ, ինչպե՞ս մոռանամ մայրենիս:

Առանց երկար-բարակ մտածելու տողեր եմ մտմտում. «Օտարությունն ինձ է կանչում, հայրենիքս էլ հետ է կանչում, Ու՞ր եմ գնում՝ դեգերում, ու՞ր եմ թողնում, հեռանում: Ինչպե՞ս թողնեմ «Տատ ու պապիս», ինչպե՞ս թողնեմ ծիլ ու ծաղկիս, Ինչպե՞ս թողնեմ, մոռանամ, ինչպե՞ս անդարձ հեռանամ»:

Այս պահին ինձ պատկերացրի օտարության մեջ: Ճանապարհին աչքս հառեցի մոտակա թանգարանին: Ուժգին քամի է: Սարսուռը պատեց ինձ: Մի ակնթարթում սլացա սանդուղքով, հասա դռներին: Ամուր կողպված են: Շրջվեցի, հետդարձի ուղին բռնեցի... Հանդարտ քայլում եմ, և հանկարծ մի ձայն, այն էլ՝ օտար: Կին էր... Հեռվից տեսել և զգացել էր ներս մտնելու ցանկությունս: Հասկացրեց, որ քիչ անց թանգարանը կբացվի: Սպասեցի: Սպասեցի այնքան, մինչև կողպեքը «չքացավ»: Ներս մտա: Պատերին մարտերից դրվագներ կային, ձեռքով «քանդակված» հզոր նկարներ և բազում հերոսների քարացած պատկերներ: Նրանք ինձ օտար են: Ու հանկարծ ականջիս ձայներ են հասնում. «Դու նրանց չես ճանաչում, քո նախնիները, հայրենի հողի համար արյուն թափած մարտիկները հեռվում են, ա՛յն լեռնային երկրում... Զուր ես նրանց այստեղ փնտրում...»:

Ու հետդարձի ճամփան եմ փնտրում, որ վերադառնամ Արցախ»:

http://www.usarmenianews.com/am-n-9963.html

20 17-11-22

ԵՍ ԻՄ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԻ ՄԱՍՆԻԿՆ ԵՄ

11-րդ գ դասարանի աշակերտ Նաիրի Ջհանգիրյանի այս խոսքերը մտովի մի քանի անգամ կրկնեցի. «Մեծերից շատ եմ լսել, որ ասում են, թե այստեղ ապրելու տեղ չէ, պետք է հեռանալ այստեղից, բայց ինձ համար դրանք քամու բերած խոսքեր են: Ես իմ ապագան տեսնում եմ իմ քարքարոտ հայրենի բնաշխարհում՝ լեռներով շրջապատված: Մի՞թե կարող եմ մեր քարեղեն ժայռերը փոխարինել այն հարթ տարածությունների հետ, մի՞թե կարող եմ լքել իմ հայրենի հողը»:

Ինչու՞ եմ համոզված, որ նա երբևէ չի լքի իր հայրենիքը, ինչու՞ եմ հավատում նրա այս խոսքերին, որ հոգուց են բխում, սրտից, այնքան հաստատուն, որ նույնիսկ հիացմունքս չեմ կարողանում թաքցնել: Ու այդ իսկ հիացմունքով լսում եմ նրան. «Եթե այստեղ եմ ծնվել, ապա ի սկզբանե կապվել եմ այս հողին, ճակատագրով է ինձ տրված՝ լինել արցախցի, ես ինչպե՞ս կարող եմ փոխել ճակատագիրս»:

Երբ ուստարվա սկզբին առաջին անգամ մտա այդ դասարանը, նա ինձ ողջունեց իր երգով: Այն ոգեղեն էր հնչում, բարձր ոռոգանությամբ... Հենց այդ օրն էլ անհուն բերկրանքով հայրենյաց ապագա պաշտպանին տեսա. «Ես իմ լեռնաշխարհի մի մասնիկն եմ ու կմնամ անբաժանելի: Ես հաստատակամ կառչած եմ իմ հայրենիքից: Երբ զինվոր դառնամ, այն ժամանակ ավելի բարձր ոգով կերգեմ: Գովերգելու եմ իմ հայրենի լեռնաշխարհը, աղաղակելու եմ պատերազմի դառնությունների դեմ և միշտ սատար եմ կանգնելու իմ ազգին»:

Երբեմն ես նրան դիտողություն եմ անում՝ դասերին անպատրաստ ներկայանալու համար, բայց որքա՜ն եմ գնահատում նրա անկեղծությունը, որ ինձ այնքան դուրեկան ժպիտներ է պարգևում: «Ապագա մասնագիտությունս արդեն ընտրել եմ, երգիչ եմ դառնալու, արդեն ունեմ ձայնագրված տեսահոլովակ, և պատահական չէ, որ երգը պատե-

բազմի մասին է, հայրենիքի: Թեև լավ չեմ սովորում, ինքս էլ երբեմն ստեղծագործում եմ հայրենիքիս մասին, որին հոգուս չափ սիրում եմ»:

Իմ զրույցը նրա հետ «Բարո՛վ գնացեք» պատերազմի մասին երգի շուրջն էր, որ նկարահանվել ու ձայնագրվել էր, բայց երգն ուրիշի հեղինակածն էր, որ հոգուն հարազատ է համարել ու սկսել երգել:

«Ուրիշներն էլ երգում են այն: Նաև «Ղարաբաղ» երգ ունեմ ձայնագրված: Հետագայում ձայնս կմշակեմ, նաև սեփական երգեր կունենամ: Միշտ էլ կապրեմ այստեղ: Եթե իմ ապագան տեսնեի մեկ այլ երկրում, ապա հաստատ հայրենասիրական երգեր չէի ձայնագրի, կերգեի օտար լեզվով, սիրո, ընկերության, ամեն ինչի մասին, բայց եթե իմ երգերը հայրենիքի մասին են, ապա բնական է, որ իմ անցնելիք ուղին այդ ճանապարհով է լինելու: Հայրենասիրական երգերն իմ հոգուց են բխում: Ես արդեն կատարել եմ իմ ընտրությունը, ուրիշ կերպ չեմ կարող մտածել: Ծնվել եմ Արցախում, ապրում եմ այստեղ, իմ ապագան էլ տեսնում եմ այստեղ»:

Զրույցս իմ աշակերտ Նաիրի Ջհանգիրյանի հետ հրապարակային դարձրի՝ նաև ցանկանալով նրան հաջողություն մաղթել իր երգելու ստեղծագործական արվեստում: Առաջին քայլերն արված են արդեն, արարելու, նորը կյանքի կոչելու հաստատուն կամք եմ ցանկանում նրան, խաղաղ ու բերկրալից ճանապարհ:

http://www.usarmenianews.com/am-n-9969.html

Երգի տեսահոլովակ՝

https://www.youtube.com/watch?v=OBZ58sDLPns

2017-11-23

ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍԻ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՈՒ ՈՉ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ

Հեռախոսի մյուս կողմից անհանգիստ ձայնն ինձ ասում էր, որ երեխան չի ուզում դպրոց հաճախել: Պատճառը պարզ չէր, երբ նրա մոտ միտք էր ծագել, թե ընդհանրապես ինչու՞ են երեխաները դպրոց գնում, և հարմար էր գտել օրերով տանը նստել, միայն հեռու մնար դաս սովորելու ամենօրյա պարտականությունից: Ծնողը խնդրում էր մանկավարժիս միջամտությունը:

Անմիջապես հարցրի, թե ինչպես կարող եմ կապվել երեխայի հետ: Հեռախոսահամարը ձեռքիս էր, մնում էր ինչ-որ բան մտածել: Շուտով ինձ արձագանքում է մի շատ դուրեկան ձայն: Ես զրուցում եմ նրա հետ մտերմական, իմ խոսքերում կարոտ կար մեկի հանդեպ, ում օրերով չէի տեսել, ափսոսանք կար խոսքիս մեջ, որ նա բացակայում է, խորհուրդ կար իմ խոսքում, որ դասերի բացթողումը լուրջ հետևանքներ կունենա նրա ուսումնառության ընթացքի վրա:

Նա պարելու, երգելու լավագույն շնորհ ուներ, բազմիցս հիացրել էր մեզ: Ասմունքում էր երբեմն արտահայտիչ, չնայած չէր սիրում անգիր սովորել: Դասերի հանդեպ անտարբեր էր, բայց պարում էր հիացնելու չափ, երգում էր հյութեղ:

Մեր խոսակցությունը շատ մեղմ էր ընթանում, անկեղծ: Երբեմն ծիծաղի կտորներ էին հասնում ինձ հեռախոսի մյուս կողմից, երբեմն՝ զարմանք արտահայտող խոսքեր...Դա մի զրույց էր տարածության մեջ դեռահասի և ուսուցչուհու, ու երկուսս էլ բավարարված զգացինք, երբ փոխադարձ հասկացվածություն կար մեր միջև: Մենք հասկացանք, որ շտկված է ամեն ինչ, այն բոլոր «արգելքները» վերացված են, որ նրան այդ օրերին «հեռացրել էին» դպրոցից:

Իրավիճակը հարթված էր, բայց որո՞նք են պատճառները, որ երեխան երբեմն հրաժարվում է դպրոց հաճախելուց: Ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերության մեջ փորձում եմ գտնել այն «ոսկե միջինը», որի հարթության վրա պետք է մնա մեզանից յուրաքանչյուրը:

Ընտանեկան պայմանն՞ը, թե՞ ծնողների կողմից նրան ուղղված ոչ վայելուչ վարվելակե՞րպը: Աշակերտի ծուլությո՞ւնը դասերի հանդեպ, որ չի կարողանում հաղթահարել, թե՞ պարապ մնալու անհագուրդ ծարավը, որից կտրվում է նա, երբ դպրոց է հաճախում: Կամ գուցե այդ

երեխայի հանդեպ իր շրջապատի ընկերական միջավայրի ոչ բարյացակամ վերաբերմունք կա, որ տանում է նրան մեկուսացման... Թե՞ դասավանդող ուսուցիչ կա, ում դասերից խուսափում է աշակերտը:

Շուտով դպրոց հաճախող այդ աշակերտի հետ ես առերես զրուցում եմ: Նա մերժում է բոլոր բացասական ազդեցությունները, որ կարող են ներգործել իր վրա: Կողքին նստող աշակերտուհին հաստատում է նման երևույթների բացակայությունը, համադասարանցիները դրական որակներով են բնութագրում դասարանի տաղանդաշատ աշակերտին, ով բոլորի հետ համերաշխ է, հարգանքով լեցուն:

Այս անգամ իմ գրառման «հերոսը» անհայտ կմնա, դասարանն էլ չեմ նշում: Կարևորը ծնողի գոհունակությունն էր, որ վերջապես երեխան դպրոց է հաճախում, որով էլ տրվում են բոլոր անհասկանալի հարցերի պատասխանները:

http://www.usarmenianews.com/am-n-9973.html

2017-11-25

ՉԵՄ ԹՈՂՆԻ ԱՐՑԱԽԸ

Երբեմն ես մտերմորեն զրուցում եմ իմ աշակերտների հետ: Որքա՜ն կարևոր են այդ զրույցները, որ մտերմացնում են մեզ: Ոմանք կասեն՝ բա ուսումնական ծրագի՞րը: Ո՞վ է ասում, որ պետք է կառչենք այդ ուսումնական ծրագրից, երբ նախատեսված դասանյութը կարող եմ զուգահեռել մեր անցած ու նոր օրերի ապրումներին, որ 92-ի պատերազմ ենք տեսել, արտագաղթել, բայց եկել, արարել ենք ու ապրիլյան պատերազմով կոփվել, տարհանման կսկիծ ապրել, նորից վերադարձել: Ու երբեմն իմ աշակերտները դառնում են օրվա «հերոսները», ովքեր պատերազմի ականատես են, բայց գերադասում են այստեղ ապրել, քան մեկ ուրիշ երկրում:

11-րդ ա դասարանի աշակերտուհի Անի Նավքալյանի տողերն եմ ընթերցում: Շատ-շատերին տեսանելի դարձրի նրա մտքերը՝ հավատացած, որ տարիներ էլ անցնեն, նա կվերադառնա՝ նվիրվելու հայրենիքի շենացման գործին:

«Ծնվածս օրվանից բազմաթիվ թելերով կապված եմ Արցախի հետ: Ինչպե՞ս կարող եմ հեռանալ այն վայրից, որտեղ ծնվել, մեծացել եմ, որտեղ սկսել եմ առաջին քայլերս, որտեղ լսվել է իմ առաջին ճիչը, որտեղ ունեցել եմ լավ ու վատ օրեր, որտեղ ունեմ իմ շրջապատը, ընկերներին և, վերջապես, որտեղ գտնվում է իմ հայրենի տունը: Ինչպե՞ս թողնեմ իմ Արցախը, իմ տունը, հիշողություններս ու հեռանամ:

Ապրում եմ Մարտակերտում: Այն այսօր կանգուն է, որովհետև մեր քաջարի մարտիկներն իրենց կյանքի գնով պաշտպանեցին այն: Ապրիլյան օրեր եմ տեսել և պատերազմի շունչը մինչ օրս էլ զգում եմ: Բայց երբեք չեմ մոլորվել, չեմ մտածել հայրենիքս թողնելու և օտարության մեջ ապրելու մասին:

Ամառային արձակուրդներին ծնողներիս հետ մեկնեցի օտար երկիր՝ հանգստանալու: Դժվարանում եմ ասել՝ գո՞հ եմ եղել, թե՞ դժգոհ: Ուրախացա, որ տեսա հարազատներիս, ովքեր շատ վաղուց լքել էին

հայրենի հողը: Նրանց հետ Արցախի մասին զրուցելիս փորձում էի հասկանալ, թե ինչպես են ապրում այդ օտար միջավայրում: Բայց շատերի մոտ զղջում չտեսա: Նրանք գոհ էին իրենց կյանքից և ցանկություն չունեին հայրենիք վերադառնալու:

Իսկ ես ինչպե՞ս եմ պատկերացնում օտարությունը: Նոր կյանք, նոր շրջապատ, նոր մարդիկ, անսովոր ու անորոշ աղմուկ, մեծ շինություններ...և օտար լեզու: Կարծես թերթում եմ էջը և ամեն ինչ սկսում նոր էջից: Թերթել, իհարկե, կարող եմ, բայց չեմ կարող թերթածս էջը պոկել ու դեն նետել: Այն իմ սրտում է, իմ մտքում, իմ հոգում:

Ինչպե՞ս կարող եմ մոռանալ հայրենիքիս կանաչապատ դաշտերը, փարթամ ծառերը, անուշաբույր ծաղիկները, թռչունների դայլայլը... Ինչպե՞ս մոռանամ իմ քաղաքի քարերն ու ավերակները: Եվ ամենակարևորը՝ ինչպե՞ս մոռանամ իմ մայրենին: Ինչպե՞ս...

Քայլելով մեծ քաղաքների շքեղ փողոցներով՝ ես ավելի ու ավելի էի կարոտում իմ հայրենիքը՝ իմ հարազատ Մարտակերտը: Չեմ կարող ապրել հեռու եզերքում, իմ հողից հեռու, օջախից հեռու, երբ միտքս ինձ հետ չի լինի, այլ՝ այնտեղ, որտեղից հեռացել եմ՝ թողնելով հիշողություններ: Այդ դեպքում երբեք չեմ կարող կյանքս լիարժեք համարել, երբ օտար քաղաքում մտքերով հայրենիքում կլինեմ:

Չեմ մոռանա երբեք այն ապրումները, որ ունեցա ես, երբ վերադառնում էի հայրենիք: Այդ պահի իմ զգացողությունն ուղղակի աննկարագրելի էր, երբ մտա Մարտակերտ: Կարծես հարյուր տարի էր անցել, ինչ հեռացել էի: Այդ օրը հասկացա, որ չեմ կարող ապրել մեկ ուրիշ երկրում: Հասկացա նաև, որ իմ հայրենի քարը, նույնիսկ այն ավերակները շատ ավելին արժեն, քան մեծ քաղաքների շքեղ շինությունները:

Իսկ հիմա ուսուցչուհուս հարցին, թե որտեղ եմ ինձ տեսնում ապագայում, չեմ կարողանում հստակ պատասխանել, քանի որ այն այդքան էլ ինձանից կախված չէ: Մի բան պարզ է, որ ես էլ շատերի նման ժամանակավորապես կլքեմ հայրենի քաղաքս՝ ուսում ստանալու նպատակով: Իսկ հետո կվերադառնամ՝ հայրենի հողում ապրելու, գիտելիքներս այստեղ օգտագործելու նպատակով:

Կաշխատեմ այստեղ և ամեն կերպ կփորձեմ հայրենիքիս շենացման գործում ինչ-որ ներդրում ունենալ»:

http://www.usarmenianews.com/am-n-9980.html

2017-11-27

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ «ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳԻՐ» ԳՐՔԻ ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Կարդալով Նատաշա Պողոսյանի «Մանկավարժի օրագիր» գիրքը՝ հիանում եմ նրա ոչ միայն ստեղծագործական բնածին ունակություններով, այլև մտավորականի նրա խելացի կեցվածքով, նուրբ ու խոհուն բնավորությամբ, մեծ համբերությամբ ու անսահման հայրենասիրությամբ: Իր սաներին մեկիկ-մեկիկ բնութագրելով, նրանց բնավորությունները վեր հանելով՝ ցանկանում է ճշմարիտ հայրենասերի անօրինակ կերպար ձևավորել իր սաների մեջ այն միջավայրում, որտեղ դեռ պատերազմը չի ավարտվել. պատերազմը կամա թե ակամա շարունակվում է. սահմանը Մարտակերտից շատ քիչ է հեռու, իսկ այդ «հեռվից» կրակոցներն այնքա՜ն մոտ են: Մոտ են նաև այն ցավերն ու կսկիծները, որ դեռ մխում են ու շարունակելու են մխալ Նատաշա Պողոսյանի սիրելի սաների սրտերում:

«Ամեն անգամ օջախների լույս է մարում, իսկ դու, սահմանային բոթաբեր լուրերից կուչ եկած, չես կարողանում անգամ սրտանց ուրախանալ: Տառապանքի ահազանգի կողքին երբեմն հայտնվում է մի փոքրիկ վախվորված ժպիտ, որ չի համարձակվում անգամ իր գոյության մասին ազդարարել»,- գրում է մանկավարժ-գրողը:

Սահմանը հսկող, ուսուցանող և դաստիարակող մանկավարժ-գրողն աշխարհին և մարդկանց քննում է իր սաների աշխարհով, Արցախ աշխարհում ապրող սովորական և անսովոր մարդկանց աշխարհով: «Իսկ հետո կվերադառնամ՝ հայրենի հողում ապրելու, գիտելիքներս այստեղ օգտագործելու նպատակով»,-խոստովանում է նրա աշակերտուհի-հերոսուհին:

Շատ հետաքրքիր և գեղեցիկ են ներկայացված ուսուցչուհու և իր սաների փոխհարաբերությունները, որոնք շատ մտերմիկ են: Մանկավարժ-գրողը շատ նրբորեն է մտնում իր աշակերտ-հերոսների և՛ հոգևոր, և՛ հոգեկան աշխարհը՝ գտնելով յուրաքանչյուրի հետ շփվելու,

մոտենալու ճշմարիտ ուղին. չէ՞ որ նրանցից յուրաքանչյուրը ոչ միայն ընտանիք և ընտանեկան յուրահատուկ բնավորություն է ներկայացնում, այլև իրենք են յուրահատուկ՝ իրենց իսկ բնավորությամբ:

Վերջին հաշվով պատերազմ տեսած, պատերազմի բովով անցած հերոսական սերնդի զավակներն են, որոնցից շատերի հայրերը իրենց երիտասարդ կյանքը մատաղել են հայրենիքի փրկության զոհասեղանին: Նրանք այնքան իրական են, որքան՝ մենք:

«Արտաքուստ հանգիտ ես ձևանում, բայց չես էլ թաքցնում, որ այդ պահերին ուզում ես իրենց հետ լինել: Նայում ես նրանց, խաղաղ են, անհոգ, անսովոր չես տեսնում ոչինչ և ամաչում ես հոգուդ ալեկոծումից, սրտիդ անհանգիստ տրոփյուններից ես ամաչում, որ գիշերային կրակոցների արձագանքների տակ այնքան արագ են խփում...»,-անկեղծանում է Նատաշան:

Ուրախ եմ Նատաշայի հաջողությունների համար, ուրախ եմ, որ այդ հրաշալի գրքի հեղինակը մանկավարժ է և իմ համակուրսեցին, առավել ևս հպարտ եմ, որ իմ համակուրսեցին իսկական հայուհի է, հայուհու իսկական կերպար՝ ազնվազարմ, անվախ, քաջ, իսկ և իսկ մի նոր Այծեմնիկ, ով ոչ միայն ինքն է հերոսաբար մաքառում, այլև հերոսաբար մաքառել է սովորեցնում իր սաներին»:

Մելսիկ Զաքարյան

Հրազդան քաղաքի հ. 11
հիմնական դպրոցի տնօրեն

Մելսիկ Զաքարյանի կողմից ինձ մատուցած անակնկալը մեծ էր, երբ օրերս ինձ ուղարկեց իր հոդվածը՝ հետևյալ գրառմամբ. «Նատաշա՛ ջան, սա իմ կարծիքն է քո և քո գրքի մասին: Ինչ գրել եմ, գրել եմ անկեղծ: Հոդվածն ընդարձակելու միտք ունեմ»:

Գրքի ու հեղինակիս մասին նրա գնահատականի խոսքերին ի պատասխան՝ շնորհակալություն լավագույն մարդուն և տարիների վաստակ ունեցող մանկավարժին ցանկացա հայտնել այս հրապարակումով՝ հոդվածն ուղարկելով ամերիկյան USArmenianews.com հայկական լրատվական կայքին:

http://www.usarmenianews.com/am-n-9982.html

2017-11-28

ԲՈԼՈՐ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ ՆՈՒՅՆ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՉԵՆ ԹՌՉՈՒՄ

Սովորաբար իմ նյութերում հիմնականում հայտնվում են այն դպրոցականները, ում դասավանդում եմ: Հնարավոր չէ գրել մեկի մասին, ում հետ չեմ շփվում կամ չգիտեմ նրա մասին ընդհանրապես: Հետևաբար, ինչու՞ եմ հայտնվել թիրախում, երբ գրում եմ իմ դասավանդելիք աշակերտների մասին, կամ ինչո՞վ եմ մեղավոր, որ իմ կողքին աշխատող մեկ ուրիշ ուսուցիչ չի գրում իր աշակերտներից: Կամ

ի՞նչ կարևոր է, որ բոլորն էլ գրեն: Եթե կողքիս նկարելու շնորհ ունեցող մեկ ուրիշ առարկայի մասնագետ ուսուցիչ կա, պարտադիր չէ ես էլ նկարելու ունակ լինեմ: Ու այսպես շատ «կամ»-եր...

Միշտ էլ ձգտում եմ տվյալ դասարանում բոլորին յուրովի ուշադրության արժանացնել՝ անկախ նրանց սովորելու ընդունակություններից: Ուսուցչի և աշակերտի փոխադարձ հարաբերությունն այսպես եմ արտահայտում իմ ամենօրյա գրառումներով. սա իմ ընտրած ճանապարհն է, չնայած յուրաքանչյուր ոք յուրովի կարող է իր ձևով արտահայտել այն:

Ինչու՞ բժիշկը, իր հիվանդների մասին գրելով, կարող է ատենախոսություն պաշտպանել կամ գիտական կոչում ստանալ, մանկավարժը չի կարող գրել իր առջև նստած դեռահասների մասին՝ բացահայտելով ուսուցչի և աշակերտների միջև գեղեցիկ մարդկային հարաբերություններ: Մի՞թե նա տվյալ հիվանդանոցի բոլոր հիվանդների մասին է գրել: Հասկանալի է, որ գրել է այն հիվանդներից, ում համապատասխան ախտորոշում է տվել:

Ի՞նչն է խանգարում մարդուն, որ երբեմն չի ցանկանում տեսնել գեղեցիկը, որ տքնաջան աշխատանքի արդյունքում է ստեղծվում ու հանձնվում գալիքին, որ սերունդները թերթեն այն՝ մեր անցած օրերի ու դեմքերի հիշողությունների տեսքով: Իմ գրառումները նպատակ չունեն նսեմացնելու որևէ ուսուցչի աշխատանք, բայց նաև դա չի նշանակում,

որ գրելու ընդունակ որևէ մեկի աշխատանք չնկատելու տանք, թե ինչ է մյուսները չեն կարողանում գրել կամ օժտված են նման ունակությամբ, ուղղակի չեն գրում: Եթե ունենք հաջողակ ստեղծագործող ուսուցիչներ, բայց ասպարեզում չեն երևում, դա չի նշանակում, որ պետք է նրանց ստվերում մնանք մեր իսկ լռությամբ:

Ուսուցիչների մի քանի հազար բանակ ունենք Արցախում, նրանց մեջ՝ մեկը մյուսից հետաքրքիր, բազում շնորհներով օժտված, տարբեր մրցույթներում հաղթած, լավագույն վաստակի արժանացած, կատարելության հասած այնպիսի մասնագետներ, որոնցից շատերին գուցե և առերես չգիտեմ, բայց համոզված եմ, որ յուրաքանչյուրը մատաղ սերնդի դաստիարակության գործում յուրովի իր արժանվույն նպաստն է թողնում մեր երկրի բարօրության, լավագույն ապագայի համար:

Հնարավոր է՝ ուսուցիչներ լինեն, ովքեր դեռ արժանվույն չեն գնահատվել: Բայց ինչու՞ են առանձնացվել ուսուցիչները կամ թեկուզ տարբեր ոլորտի մարդիկ՝ իրենց կոչումներով, կառավարական պարգևներով..., այդ թվում ես՝ վաստակավոր մանկավարժի կոչումով կամ ուսուցչի առաջին աստիճանի որակավորման տարակարգով: Հիմա ի՞նչ, կանգնեցնե՞ն այդ երթը, անտեսե՞ն արժանավորների հաջողությունները, որ հանկարծ այն մյուսներն իրենց նվաստացած չզգան:

Եթե իմ կողքին աշխատող ուսուցիչը երգելու տաղանդով օժտված լինի, երբևէ ինձ նսեմացած չեմ զգա, որ ինչ-որ մեկը նրա շնորհը ի ցույց է դրել: Եթե այդ երգելու շնորհով օժտված լինի աշակերտը, պետք չէ թաքցնել նրա տաղանդը, թե ինչ է կողքի աշակերտն իրեն նվաստացած կզգա, որ իր համադասարանցուն արժևորել են: Եթե կգտնվեն մարդիկ, որ կկասկածեն խոսքերիս ճշմարտությանը ու չեն հավատա, որ իմ օրագրային գրառման կերպարներն իրական են՝ իրենց ազատ մտքերով ու հույզերով, թող արձագանքեն: Եթե կլինեն կասկածամիտներ, թող բարձրաձայնեն նաև, որ սիրում են իրենց աշխատանքն այնպես, ինչպես ես եմ սիրում իմ մասնագիտությունն ու իմ առջև նստած այդ անկեղծ դեռահասներին:

Որքա՜ն «եթե»-ներ կան, որոնց մասին կարող եմ բարձրաձայնել: Իմ կողքի ուսուցիչը, եթե ձեռքի լավ աշխատանքով կարող է զարմացնել, այդ նույն զարմանալու չափ էլ հիացնում է ինձ: Սովորաբար երանի եմ տալիս անգլերենի մասնագետներին՝ այդ լեզվի լավագույն իմացության համար, բայց երբևէ նսեմացած չեմ զգում ինձ, որ այդ լեզուն չգիտեմ: Եթե ես գրելու սովոր եմ կամ խոսելու ընդունակ բեմերից, թող կողքիս կանգնածները նսեմացած չզգան իրենց: Պետք չէ թերագնա-

հատել մանկավարժիս գործունեությունն այս տարածքում և գիրք հրատարակելու գործում, երբ արդար գրիչս ընդամենը մի դպրոցական կյանք է արձանագրում՝ առանց որևէ մեկի աշխատանքը նսեմացնելու:

Հիշենք, որ բոլոր թռչունները նույն բարձրության վրա չեն թռչում, իսկ եթե սովոր են բարձունքների, նոր թափով ու մղումով կսավառնեն՝ նույնիսկ քամու ուղղությանը հակառակ:

http://www.usarmenianews.com/am-n-9991.html

ՀԳ. Այս հոդվածին ֆեյբուքյան կայքում ուշադրությանս արժանացավ հետևյալ արձագանքը:

ՅԱՐԳԵԼԻ՛ ՆԱՏԱՇԱ, ՄԱՏԸ ԴՐԱԾ Է ՆԵՐԿԱՅ ԴԱՐՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԷՐՔԻ ՄԸ ՎՐԱՅ, ՈՐՈՒՆ ՊԱՏՃԱՌԸ ԿԱՐԵՒՈՐ ՄԷԿ ԶԱՆԳՈՒԱԾԻ ՄԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՐԴԻԿ ԵՆ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ԿԱՐԵԼԻ ՉԷ ՏԵՄՆԵԼ ԸՆԿԵՐՈՋ ՄԸ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐՈՒՆ ԱԿԱՆԱՏԵՍ ԸԼԼԱԼ, ՄԻՆՉ ԿԸ ՔԱՐՈԶԵՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆ, ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԷՐ ԵՒ ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ:

ՅԱՒԱԼԻՆ ԱՅԴ Է, ՈՐ ԱՅՍ ՄԱՐԴԻԿԸ ՉԵՆ ԱՇԽԱՏԻՐ, ՈՉ ԱԼ ԿԸ ՓԱՓԱՔԻՆ, ՈՐ ՈՒՐԻՇՆԵՐ ԱԼ ԱՇԽԱՏԻՆ ԵՒ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵՆ: ՆԵՐԿԱՅ ԵՒ ԱԿԱՆԱՏԵՍ ԿԸԼԼԱՆ ԵԼՈՅԹՆԵՐՈՒ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒ, ԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ, ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԿԵՑՈՒԱԾՔ ԿՈՒՆԵՆԱՆ, ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐԸ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ՓԱՍՏԵԼՆ Է ԵՒ ՆԿԱՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԵՐԵՒԱԼՆ Է, ՅԱՏԿԱՊԷՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԴՈՑ ԿՈՂՔԻՆ ՈՐՈՎՀԵՏԵՒ ԱՅՍՊԻՍԻՆԵՐԸ ԵԿԱԾ ԷՆ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ, ՈՉ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ:

ՇԱՏ ՅԱՒԱԼԻ Է ՊԱՏԿԵՐՆԵՐԸ, ՏԻԿԻՆ ՆԱՏԱՇԱ, ԱՅՆՊԷՍ ՈՐ ՀԱՄԲԵՐԱՆՔՈՎ ՊԻՏԻ ՎԵՐԱԲԵՐՈՒԻՔ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԷՔ ՁԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ՝ ԸՍՏ ՁԵՐ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ, ՈՐՊԷՍԶԻ ՊԱՏՐԱՍՏԷՔ ԱՌՈՂՋ ՄՏՔՈՎ ԵՒ ՀՈԳԻՈՎ ԱՊԱԳԱՅ ՍԵՐՈՒՆԴԸ:

ԱՍՏՈՒԱԾ ՕՐՀՆԷ ՁԵԶ, ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ:

ԱԲԻԿ ԳԱՆՏԻԼԵԱՆ, ԿԱՆԱԴԱ,
«ԿԱՆԹԵՂ ՀԱՅԿԱԿԱՆ» ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ

2017-11-29

ՄԱՆԿՈՒՑ ԵՐԱԶԵԼ ԵՄ ԳՐՔՈՒՄ ՀԱՅՏՆՎԵԼ

Նա սիրում է հարցեր տալ իր ուսուցչուհուն, իսկ ես պատրաստակամ պատասխանում եմ նրան, նաև սիրում եմ նրա համարձակությունը, որ գալիս է իր ակտիվ կենսադիրքից: Պատահում է՝ դասերի հետ կապված՝ դիտողություն եմ անում նրան, բայց նա միշտ ժպտերես է, ու երբեմն մեղմ ժպիտների բույլով եմ տեսնում նրան, որ դառնում է իմ դիտողությունների արձագանքը: Որքան զարմանալի են նրա հարցումները, նույնքան էլ անակնկալ դարձան նրա այս տողերը, որ ուղարկեց ինձ 11-րդ ա դասարանի աշակերտ Գոռ Ավագիմյանը:

«Լինել ուսուցչի ուշադրության ներքո, հայտնվել նրա հեղինակային գրքում, և նույնիսկ՝ Լոս-Անջելեսի հայկական կայքերից մեկում... Կարծում եմ, այսքանից հետո մարդիկ ունենում են հաճելի ապրումներ: Սակայն նրանք, ովքեր չեն արժանանում այդպիսի ուշադրության, կա՛մ երազում են և անում են հնարավորինս՝ այնտեղ հայտնվելու համար, կա՛մ էլ այդ հարցը երևի նրանց, ընդհանրապես, չի հուզում:

Ուրախալի է, երբ սոցկայքում նյութ է տեղադրված, և այդ նյութի «հերոսը» կամ «հերոսուհին» հենց քո համադասարանցին է: Իհարկե, մի պահ փոքրինչ «նախանձում ես», սակայն հասկանում ես, որ որոշ ժամանակ անց դու էլ կլինես նյութերից մեկում: Ես ամենևին էլ չեմ շտապում, բայց կարծես շատ եմ ուզում հայտնվել այնտեղ, որտեղ արդեն հայտնվել են դասընկերներիցս շատերը:

Մինչ տիկին Պողոսյանի մեզ դասավանդելը՝ այնքան էլ չէի հետաքրքրվում նրա նյութերով, որքան հիմա: Ցանկանում էի մոտենալ նրան, և հարցնել.

«Ինչու՞ Ձեր ուշադրության կենտրոնում չեն հայտնվում այն աշակերտները, որոնց Դուք չեք դասավանդում», սակայն համարձակություն չունեի կամ էլ ամաչում էի: Օրեր առաջ այդ հարցն ուղղեցի ուսուցչուհուս և ստացա դիպուկ ու, միաժամանակ, հետաքրքիր պատաս-

խան: Իրոք, եթե չի դասավանդում ու չի շփվում, ինչպե՞ս կարող էր գրել նրանց մասին:

Դեռ անցյալ տարիներին ես հայտնվել էի նյութերից մեկում, սակայն պատճառներն ուրախալի չէին: Այդ նյութից ստացածը միայն զղջման ու մեղքի զգացում էր. անունս չկար, բայց հասկացա, որ իմ մասին էր: Ափսոս, որ դեռ չեմ զգացել այն հաճելի զգացումը, որ զգացել են դասընկերներս: Նույնիսկ, չգիտեմ՝ դրանք աննկարագրելի՞ են, թե՞ ոչ:

Ես համամիտ եմ այդ նյութերը գիրք դարձնելուն: Գիրքը պահպանվելու է: Իսկ նյութերը ժամանակի ընթացքում փոխարինվելու են նորերով: Մեր ապագա սերունդը, թեկուզ և իմ երեխան, կկարողանա հեշտությամբ բացել գիրքն ու ընթերցել: Մանկուց երազել եմ լինել գրքի հերոսներից մեկը, թեկուզ այդ գիրքը մեկ էջանոց լինի:

Տարիներ անց միգուցե իմ երեխային կպատմեմ անցկացրած տարիների մասին: Կպատմեմ իմ ուսուցչուհու մասին, ով ի կատար ածեց մանկության երազանքս: Ցույց կտամ գիրքը և այն տողերը, որտեղ նշվում է իմ անունը: Կպատմեմ նաև ուրիշներին, ցույց կտամ նրանց և ինձ լավ կզգամ: Ես դեռ չկամ այդ գրքում, բայց ինձ պատկերացնում եմ այնտեղ: Պատկերացնում եմ, թե ինչպես եմ տասնյակ տարիներ անց թերթում հնացած էջերն ու կարդում այն տողերը, որոնք գրվել են իմ կողմից: Կկարդամ և, միաժամանակ, կհիշեմ ուսուցչուհուս, դասընկերներիս: Պատկերացնում եմ նաև, թե ինչպես ենք տարիներ հետո հավաքվել դասընկերներով, և մեր կողքին դրված է «Մանկավարժի օրագիրը»: Կնայենք գրքին, վերապրենք այն օրերը, որ ունեցել ենք տարիներ առաջ»:

Գոռի երազանքը ցանկացա կատարել: Այն հրապարակային դարձրի, շատ-շատերին տեսանելի՝ ուղարկելով ինձ հարազատ դարձած կայքին: Չնայած հրատարակվելիք նոր գիրքը մեկ էջանոց չի լինի, բայց այս նյութը իր տեղը կունենա այդ գրքում, որ տարիներ հետո նա հնարավորություն ունենա թերթելու այդ օրագիրը՝ իր անցած դպրոցական օրերի հիշողություններով:

http://www.usarmenianews.com/am-n-10000.html

2017-12-01

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ USArmenianews.com ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆ

Երկրորդ տարին է, ինչ հոգու ազնիվ մղումով Արցախի ուսուցչուհիս իր աշակերտների հետ շնորհավորում է օտար ափերում գործող ամերիկյան հայկական կայքի ծննդյան օրը: Երբեմն ինձ թվում է՝ նրա ծննդով մի նոր շրջադարձ տեղի ունեցավ իմ մանկավարժական գործունեության մեջ: Մի նորի սկիզբ դրվեց, որը հազարավորների համար դարձավ դուրեկան, գուցե և անդուր՝ մատների վրա հաշված մարդկանց համար, բայց սա այն էր, ինչ երազում էի երբեմն ու համարում անհնարինություն Մարտակերտում ապրող ուսուցչուհուս

համար: Երբեմն նայում էի այս տարածքի ընկերական միջավայրին, զարմանում, նաև հետաքրքրությամբ լցվում, թե ինչպես են նրանց գրառումները վերցնում և տեղադրում տարբեր կայքերում:

Շուտով իմ երազանքն իրականություն դարձավ, երբ տարբեր սոցկայքերից տեսանելի դարձան ամենօրյա գրառումներս: Բայց շուտով սրտանց «հավատարմագրվեցի» USArmenianews.com լրատվական կայքին՝ խմբագիր Գայանե Մանուկյանի և խմբագրակազմի ազնիվ ու պատրաստակամ աշխատանքի շնորհիվ: Առանձնապես կայքում բաց-

ված «Մանկավարժի անկյունը» այնքան հարազատ դարձավ, որ կարծես ամեն օր գրկաբաց սպասում էր իմ օրագրային հղումներին, որ երկու տարվա ընթացքում գրքերի վերածվեցին ու հիմա էլ պատրաստվում եմ նոր հրատարակումների:

Շնորհակալական խոսքեր եմ փնտրում, որ ուղղեմ կայքին՝ ծննդյան այս երկու տարվա ակտիվ գործունեության համար: Լավագույն խոսքերը միշտ էլ կան, որ շռայլում ենք մեր մտերիմներին՝ խորին մաղթանքներով հանդերձ: Ցանկությունս մեծ է, երազանքս անչափելի, որ ուզում եմ փոխանցել Գայանե Մանուկյան հայուհուն՝ այն հեռուներում լրագրողական իր ակտիվ գործունեության համար: Մարդ, ով չճանաչելով ուսուցչուհուս, անծանոթ լինելով բնակավայրիս՝ կայքի հետ համագործակցելու երաշխիք տվեց ինձ ու իմ առջև բացեց Սփյուռքի դռները, որ հայրենիքում և հեռուներում հայության համար սփռվի մի դպրոցական կյանք՝ դասարանից դասարան մտնող ուսուցչուհուս կերպարով:

Սրտանց շնորհավորում եմ, բայց ի՞նչ եմ ցանկանում կայքին, ամբողջ խմբագրակազմին: Անխափան «եթե՛ր», երբ գիշեր-ցերեկ գործում է այն, կամ գուցե բազում «հո՛սք» ընթերցողների, երբ բազմահազար են այդ նյութերը «թերթողները»: Ասում են՝ համբերությունը կյանք է...Ուրեմն՝ համբերություն եմ ցանկանում Գայանե Մանուկյանին ու կայքի բոլոր աշխատողներին, ովքեր դիմակայում են սոցցանցի «ցնցումներին», որ կարողանան ապրեցնել կայքը: Հոգու անդորրություն եմ ցանկանում նրանց, ովքեր հպարտորեն տանում են նաև «հետցնցումները», որ ապրեցնեն ազատ խոսքը: Նաև անձնական ու անանձնական երջանիկ կյանք եմ ցանկանում բոլորին, որ հայրենաբաղձ սրտերը ազատ տրոփեն հայրենիքից դուրս և հայրենիքում:

Սրտաբաց խոսքերիս ցանկանում եմ միացնել նաև իմ աշակերտների լավագույն ցանկությունները: Տեսանելի եմ դարձնում տասնմեկերորդցիներին, ովքեր նոր են իրենց մտորումներով տեղ գտել կայքում, քանի որ մի քանի ամիսներ են, ինչ դասավանդում եմ նրանց:

«Բարև Լոս-Անջելեսի USArmenianews.com լրատվակա՛ն կայք: Ես Ձեր մասին այս մի քանի ամիսների ընթացքում եմ իմացել: Գիտեմ, որ ուսուցչուհիս՝ տիկին Պողոսյանը, համագործակցում է Ձեզ հետ: Վերջերս ուսուցչուհուս շնորհիվ մի փոքրիկ նյութով տեղ եմ գտել կայքում և շնորհակալությանս հետ մեկտեղ՝ ուզում եմ շնորհավորել բոլորիդ՝ կայքի ստեղծման երկու տարվա կապակցությամբ: Ցանկանում եմ տոկունություն, հաջողություն լրատվական նոր անդաստաններում: Թող

Աստծո օրհնությամբ և հովանավորությամբ Ձեր կայքը երկար տարիների կյանք ունենա» /Ավքանդիլյան Մերի/:

«Երկու տարի է, ինչ տոնում են ամերիկյան հայկական USA-rmenianews.com լրատվական կայքի ծննդյան օրը:Միայն այսօր տեղեկացա և ցանկացա «շնորհավորանք-շնորհակալություն» շղթա ստեղծել, քանի որ այդ կայքի շնորհիվ գրվածքներիցս երկուսը տեսանելի են դարձել ոչ միայն Լոս-Անջելեսում, այլև՝ ամենուր...Ամիսն էլ դեռ չի բոլորել այն օրից, ինչ կարճատև «հերթափոխով» երկու անգամ հայտնվեցի կայքում: Առաջինը հենց էլեկտրոնային տարբերակով գիրք ընթերցելուն էր վերաբերում, և ստացվեց այնպես, որ այսօր իմ գրվածքներն էլ դեռ այդ տարբերակով են ընթերցվում կայքում, մինչև տիկին Պողոսյանի «Մանկավարժի օրագիր» գրքի երկրորդ մասի հրատարակվելը: Կայքն այսօր էլ ակտիվորեն գործում է. ցանկանում եմ շարունակական լինի նրա գործունեությունը» /Մամունց Լուիզա/:

«Վերջերս ես այդ կայքում երևալու պատիվ եմ ունեցել: Բառերով չեմ կարող բացատրել իմ ապրումներն այն պահին, երբ տեսա իմ հեղինակային խոսքը կայքում տեղադրված: Շնորհակալությանս հետ մեկտեղ՝ շնորհավորում եմ կայքին՝ ծննդյան օրվա կապակցությամբ, մաղթում ստեղծագործական երկար կյանք» /Սաղաթելյան Վահագն/:

«Եթե մեկ տարի առաջ ինձանից հարցնեին այդ կայքի մասին, ես չէի իմանա՝ ինչ ասեմ: Սակայն սեպտեմբերից ես տեղեկացա, որ ուսուցչուհիս իր գրածներն ուղարկում է այնտեղ: Այսօր տիկին Պողոսյանից իմացա նաև, որ կայքը երկու տարեկան է: Ես շնորհավորում եմ բոլոր աշխատողներին, ցանկանում նորանոր վերելքներ» /Դանիելյան Մարիամ/:

«Բարև Ձեզ, սիրելի՛ կայք: Ես արդեն գիտեմ, որ ազգանվեր գործ է կատարվում՝ շնորհիվ այս կայքի, որտեղ տեղադրվում են նաև ուսուցչուհուս և աշակերտներիս գրածները: Մեզանից յուրաքանչյուրը շնորհակալ է, որ օտար ափերում չեք մոռանում մեզ ու մեր փոքրիկ երկիրը: Այդ հեռուներում ձեռք բերեցիք համբավ, որը ոչ բոլորին է հաջողվում: Միանում եմ ուսուցչուհուս շնորհավորանքներին, իմ համադասարանցիների ու շատ-շատերի կողմից ցանկանում կայքին երկար տարիների անխափան գործունեություն» /Ստեփանյան Արեն/:

http://www.usarmenianews.com/am-n-10006.html

2017-12-03

ԵՐԱԽՏԻՔԻ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔ ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ ՆԱՏԱՇԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

USArmenianews.com լրատվական կայքի 2-ամյակի առթիվ կայքին ուղղված շնորհավորանքները՝ թաթախված գովեստի ու երախտագիտության խոսքերով, հուզեցին մեզ:

Չափազանց կարևոր է այն բանի գիտակցումը, որ քեզ գնահատում են, արժևորում, քանի որ միայն այդ բանի գիտակցումն է, որ քեզ ուժ է հաղորդում շարունակելու այն, ինչ սկսել ես, անել այն, ինչի մեջ հոգի ու ավյուն ես դրել:

Պետք է առանձնահատուկ շնորհակալություն հայտնենք հատկապես տիկին Նատաշա Պողոսյանին ու նրա աշակերտներին, որոնց՝ կայքին ուղղված շնորհավորանքը երևի թե բոլորից ամենահուզիչն է ստացվել՝ լի երախտիքով, խորին գնահատանքով ու կենարար բարեմաղթանքներով:

Տիկի՛ն Պողոսյան, Ձեր սիրառատ ու անկեղծ շնորհավորանքը՝ համեմված հայ աշակերտների մաքուր սրտից բխած գովեստի խոսքերով, մեզ միայն հավելյալ ուժ ու եռանդ կարող են պարգևել՝ մինչև վերջ առաջ տանելու այն գործը, որին հավատարմորեն ծառայում ենք մեր հիմնադրման առաջին իսկ օրվանից:

Անչափ շնորհակալ ենք ու երախտապարտ Ձեզ՝ մեր աշխատանքը գնահատելու, հավուր պատշաճի արժևորելու համար: Ձեր խոսքերն իսկապես պարտավորեցնող են ու ներշնչող:

Վստահ ենք՝ հատկապես Ձեր ու Ձեր արժեհամակարգը կիսողների շնորհիվ է նաև, որ հնարավորություն ենք ունենալու հուսախաբ չանել մեր լսարանին, մնալ այնպիսին՝ ինչպիսին որ հիմա ենք:

Շնորհակալություն ևս մեկ անգամ և հաջողություն Ձեզ ազգանվեր Ձեր առաքելության մեջ:

Հարգարժա՛ն տիկին Նատաշա Պողոսյան, խմբագրակազմի երախտիքի խոսքը համընկավ Ձեր ծննդյան օրվա հետ, ուստի, միանում ենք այն բոլոր շնորհավորանքներին ու մաղթանքներին, որոնք ուղղված են Ձեզ, միաժամանակ ցանկանալով առողջություն և նոր գրքերի ծնունդ, որին անհամբեր սպասում են բազմաթիվ մանկավարժներ, ծնողներ և աշակերտներ:

Բարի, ուրախ տարեդարձ...

USArmenianews.com լրատվական կայքի խմբագրակազմ
http://www.usarmenianews.com/am-n-10011.html

2017-12-06

ՕՏԱՐ ՀՈՂՈՒՄ ԵՍ ԵՍ ՉԷԻ

Որքա՜ն լավ եմ հասկանում իմ աշակերտուհի Աննա Պետրոսյանի անհանգիստ մտորումները, երբ ինքս էլ անցած դարավերջի Արցախյան պատերազմից հետո ընտանիքով բռնագաղթել, ապրում էի օտար ափերում: Ինչու՞ եմ ուրախանում, որ իր նման շատ-շատերը գերադասում են ապրել հայրենի բնօրրանում, քան մեծ քաղաքների շքեղության մեջ, որտեղ եղել է իմ այս գրառման «հերոսուհին», բայց պարզապես իրեն զգացել է այնտեղ որպես գերի ու վերադարձել հարազատ տուն: Ցավում եմ շատերի համար, ովքեր կարոտաբաղձ հոգով միշտ մեզ հետ են, բայց նաև ափսոսում եմ, որ ոմանք չեն էլ ուզում հիշել, թե որտեղից են գնացել օտարության. հաստատվել են այնտեղ՝ առանց հետադարձ հայացքի:

«Մարտակերտն այն վայրն է, որտեղ ծնվել եմ, որտեղ գտնվում է իմ տունը, որտեղ կատարել եմ առաջին քայլերս, թոթովել առաջին բառերս, որտեղ անց եմ կացրել ամբողջ մանկությունս: Այստեղ են ապրել ու մահացել իմ նախնիները: Եվ ինչքա՜ն ջերմություն կա այստեղ, բայց, ցավոք, ոչ բոլորն են հասկանում:

Որոշ մարդիկ պատերազմից հետո բռնագաղթեցին, գնացին օտար երկրներ, որտեղ ուղղակի հյուր են, և ինչքան էլ այնտեղ ապրեն, միևնույն է, հյուր կմնան: Նրանք գուցե փնտրում են հայրենի՞ք, ավելի լավը, քան իրենցն է, սակայն հայրենիքը չեն ընտրում, այն միակն է, որի հետ կապված ես ամբողջ հոգով: Կան մարդիկ, ովքեր շրջել են աշխարհով մեկ, տեսել գեղեցիկ քաղաքներ և ափսոսում են, որ ծնվել են այստեղ:

Ես զարմանում եմ, թե ինչպես կարող են մոռանալ այս բիբլիական հողը, մոռանալ մեր պատմությունը: Ինքս էլ եղել եմ օտար հողի վրա, հոգիս այնտեղ կարծես նվաղում էր, գիտակցում էի, որ այնտեղ պարզապես գերի եմ, ինձ թվում էր՝ ամեն քայլափոխս վերահսկվում էր:

Այնտեղ շատ հայեր տեսա, ու մի պահ պարզապես մտքովս անցավ՝ նայել նրանց դեմքին, հասկանալ՝ զղջում կա՞ արդյոք, որ հայրենիքից

հեռացել են: Ցավոք, նրանք ցանկանում էին ավելին, քան իրենց հայրենիքում է: Ապրում են այնպես, կարծես հայ չեն և մոռացել են նույնիսկ այն հայրենիքը, որտեղ ծնվել են: Որոշ ծանոթ հայերի հետ խոսեցի հայրենիք վերադառնալու մասին, սակայն նրանք քմծիծաղով պատասխանեցին. «Ինչի՞դ է պետք, մնա՛ այստեղ՝ ավելի զարգացած երկրում, այնտեղ ապագա չունես»:

Սրտի ցավով տեսա, թե ինչպես են ապրում օտարության մեջ ու հպարտանում: Մի անբացատրելի զարմանք ապրեցի, ու ինքս ինձ հարցրի. «Մի՞թե հայրենիքը նրանց այդքան խորն է դառնացրել»:

Ամեն մարդ պետք է սիրի իր հողը, մնա իր հայրենիքում, շենացնի հայրենի երկիրը: Այստեղ էլ կարող են լինել թերություններ, բայց չպետք է լքել այն: Ես երբեք չեմ թողնի իմ հայրենիքը…Ինչպես ասում են՝ հայրենիքը մեր ազգի ողնաշարն է՝ իր սխալներով հանդերձ»:

Աննա Պետրոսյանի տողերը հպարտությամբ են լցնում հոգիս, որ այս սերունդն իր ապագան տեսնում է մեր հայրենիքում, նաև այս սիրուն հայուհու վերջերս ինձ ուղարկած խոսքն եմ նորից ընթերցում շնորհակալական զգացումով. «Ցանկանում եմ, որ Ձեր արևաշող դեմքից չիջնի հոգսի ոչ մի ցող: Մաղթում եմ առողջություն, անսպառ եռանդ, ստեղծագործական վերելքներ ու հաջողություններ: Ցանկանում եմ, որ սերունդներ կրթելու բարձր ու վեհ կոչմանը միշտ հավատարիմ մնաք, որ Ձեր սաները միշտ հիշեն Ձեզ ու հպարտանան: Ձեր աշխատանքից է կախված մեր վաղվա օրը, հույսի ու երազի չափը: Ձեր շնորհիվ ենք մենք ներխուժում գիտության հարուստ գանձարան և փնտրում ու գտնում այնտեղ գիտելիքների մի ողջ պաշար, առանց որի մարդը ոչինչ է: Ես խոնարհվում եմ Ձեր առջև, Ձեր մեծության առջև, Ձեր ծով համբերության ու նվիրվածության առջև»:

http://www.usarmenianews.com/am-n-10019.html

2017-12-07

ԿՅԱՆԿԱՆԱՅԻ ԱՐՑԱԽԻՍ ՄԱՍԻՆ ՖԻԼՄ ՆԿԱՐԱՀԱՆԵԼ



Երբեմն ալեկոծվում է հոգիս, որ իմ առջև նստած դեռահասների խոսքերն եմ ընթերցում կամ լսում նրանց, բայց նաև հիանում եմ, որ իրենց ապագան հայրենիքում են տեսնում, հարազատ Արցախում: Մտորումներս տասնմեկերորդցի Մերի Հակոբյանի հետ են, ով շատ-շատերի նման մեծ երազանքներ ունի: Արցախի մասին ֆիլմ նկարահանելը նրա գերագույն նպատակն է, որ ինքն էլ աշխարհին տեսանելի դարձնի, թե երկիրը մեր ինչպիսի անսիրտ թշնամիներ ունի:

«Սա 21-րդ դարն է: Նոր միջավայր, նոր տեխնիկա, նոր երիտասարդություն: Ես նույնպես պատկանում եմ 21-րդ դարի երիտասարդությանը: Եվ ինչպես իմ շրջապատի մյուս աղջիկներն ու տղաները, ես էլ, ապագայի հետ կապված, ունեմ իմ սպասելիքները, նպատակներն ու երազանքները:

Նախ՝ սկսեմ նրանից, թե ինչպիսին եմ տեսնում իմ երկիրն ու ազգը մոտ ապագայում: Երկիրս՝ ավելի կանաչապատ և գեղեցիկ, հոյակապ դաշտերով ու այգիներով, առատ սրճարաններով և այլ հետաքրքիր կառույցներով, որտեղ կարող ես ժամանակ անցկացնել ընկերներիդ կամ ընտանիքիդ անդամների հետ: Ազգն իմ ավելի հյուրասեր ու ընկերասեր եմ տեսնում, ազնիվ, խաղաղ ու ջերմ հարաբերություններով: Ինչպես յուրաքանչյուր հայ՝ ես նույնպես ցանկանում եմ, որ մեր երկրում տիրի խաղաղություն, ու մարդիկ հեռու լինեն դժբախտություններից և ապրեն շատ հանգիստ ու անհոգ:

Իսկ այժմ անցնեմ իմ անձնական կյանքին: Ինչպե՞ս եմ պատկերացնում իմ ապագան: Մեկ տարուց հետո ավարտում եմ դպրոցս, կստանամ ավարտական վկայական: Ցանկալի է՝ ընդունվեմ Երևանի պետական թատերական ինստիտուտ, ուզում եմ դառնալ որակավորված և գնահատված դերասանուհի: Մի քանի տարի անց, երբ կհարմարվեմ իմ նոր միջավայրին, կիրականացնեմ մյուս երազանքս՝ ճամ-

փորդության կգնամ մի քանի երկրներ: Եվ ամենագլխավոր երազանքս է՝ դառնալ կինոռեժիսոր:

Ես պատկերացնում եմ, որ ապագայում կգա մի օր, երբ կունենամ իմ սեփական ստուդիան, իմ սեփական աշխատող ածնակազմը և նրանց հետ կնկարահանեմ ֆիլմեր: Կցանկանայի Արցախիս մասին մի փոքրիկ ֆիլմ նկարահանել, որ երկիրս ունի անսիրտ թշնամիներ: Այդ ֆիլմում կերևար իմ ստեղծագործ ժողովուրդը, նաև Արցախյան հին ու նոր պատերազմները կերևային: Ուզում եմ հասանելի լինի շատերին, որ իմ սերունդը տեսավ ապրիլյան քառօրյան, տեսավ, թե ինչպես են տասնութ տարեկան տղաները սահման պաշտպանում, ինչպես են կամավորագրվում մեծահասակները, որ լինեն զինվորների կողքին...

Ահա սրանք են իմ երազանքները: Հուսով եմ՝ որոշ չափով կիրականացվեն սպասելիքներս: Ես չեմ պատկերացնում կյանքս այլ երկրում, ուր էլ գնամ, վերջին հենակետս կլինի Արցախը»:

Մերի Հակոբյանի տաղանդը բազմիցս տեսել եմ հայկական ժողովրդական պարի արվեստում, հավատացած եմ, որ նպատակասլաց լինելու դեպքում նա կիրականացնի իր երազանքները: Այս պահին, երբ ուզում եմ նրա մասին այս նյութը հրապարակային դարձնել, միաժամանակ հիշում եմ օրեր առաջ նրա՝ ինձ ուղղած տողերը. «Խորապես մարդկային մարդ, մարդ, ով գիտի սիրել, ապրել, հասկանալ դիմացինին ու ինքն իրեն, մարդ, ով արժանի է մեծագույն երջանկության ու սիրո: Եղե՛ք ու մնացե՛ք այնպիսին, ինչպիսին կաք, տիկի՛ն Պողոսյան»:

http://www.usarmenianews.com/am-n-10021.html

2017-12-08

ՄՐՑԱՆԱԿ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ

Արցախում Սահմանադրության օրվան նվիրված, Մարդու իրավունքների առաջին պաշտպանի կողմից հայտարարված շարադրությունների մրցույթում հաղթանակ ենք արձանագրել: Այն անցկացվել է երկու փուլով «Ինչու՞ են մարդու իրավունքները կարևոր. իմ ապրած իրականությունը և Զաբել Եսայանի փորձառությունը» խորագրով: Մեր դպրոցից հանրապետական մրցույթին ներկայացվել է 11-րդ դասարանի իմ երկու աշակերտուհիների շարադրությունները: Տաթևիկ Ղահրամանյանն իր շարադրանքով անցել է 2-րդ փուլը, մրցանակային տեղ զբաղեցրել: Քրիստինե Կարապետյանը հաղթահարել է միայն մրցույթի 1-ին փուլը:

Պարգևատրությունը կլինի դեկտեմբերի 10-ին՝ Սահմանադրության օրը, Ստեփանակերտում:

Շարադրությունները, ըստ նախատեսվածի, ծավալուն են՝ 1200 բառ, ներկայացնում եմ հատված Տաթևիկ Ղահրամանյանի շարադրությունից:

«Այսօր ինքնազարգացման բարձր մակարդակի վրա ենք գտնվում, բոլոր ընդունված օրենքները բխում են մարդկանց շահերից, թեև կան բացառություններ, բայց այն, ինչ վերաբերում է Զ. Եսայանի «Սիլիդարի պարտեզների» պատմությանը, այնտեղ օրենքը ոչ թե կարգավորիչ էր, այլ «սարսափելի ու նողկալի հրեշ», որն իր մահազդու շունչն էր փռել ամենուր և սպանում էր կենդանությունը, բնածին ազատությունը, որ տրված էր մարդուն: Իմ ապրած իրականության մեջ նրա կյանքում տիրող իրավիճակն անհանդուրժելի է, և եթե այդպես լիներ, ես ինքս կաղաղակեի, կըմբոստանայի այդ օրենքների դեմ:

Ընտանիքն այն ամուր կառույցն է, որի վրա հիմնված է մեր ամբողջ կյանքը, և առանց աղջկա կամքի՝ նրան ամուսնացնելը, այն էլ՝ անչափահաս տարիքում, օրինազանցություն է: Ընտանիքը պետք է կառուցվի միայն սիրո վրա, սակայն գրողի տատիկը, առանց ճանաչելու,

ամուսնացավ անծանոթ տղամարդու հետ: Մեր օրերում աղջիկները, երբեմն սիրուց կուրացած, հաշվի չառնելով ծնողների կարծիքը, փախչում են իրենց սիրած էակների հետ: Հիմա այդպիսի դեպքերն անխուսափելի են, և մարդկային ո՞ր օրենքը կարող է սիրող էակներին բաժանել միմյանցից, եթե սիրում են անկեղծ, տարիքն էլ համապատասխանում է:

Երբ աչքերս սահում էին տողերով, թե աղջիկներին և կանանց այն ժամանակ արգելված էր եկեղեցի գնալ, մի պահ սկսել եմ պատկերացնել մեր այսօրվա եկեղեցին՝ առանց կանանց: Կիրակի օրերին հաճախ եմ եկեղեցի գնում, և միշտ ակնածում եմ աղոթող կանանց ջերմեռանդությամբ, նրանց ամուր հավատով, որ ծնկի են գալիս և աղերսում Տիրոջը: Մի՞թե այն ժամանակ նրանք զրկված էին եկեղեցու մաքուր և սրբագործված ծուխը շնչելուց:

Սպիտակ գլխաշորերով, որ հնազանդության խորհրդանիշ է, եկեղեցու խորանի դիմաց վառվող մոմերի լուսավորության մեջ կանգնած կանայք աղոթում են միշտ, ես էլ ամբողջ հոգով հավատում եմ Աստծուն, և եկեղեցի գնալն ինձ համար ոչ թե քրիստոնյայի պարտականություն է, այլ՝ մաքրության ուղի, լույսի ճանապարհ: Եվ զարմանքս ու շփոթմունքս ավելի է մեծանում, երբ գրողի պատմության մեջ պահք չպահելու համար պատժում, տանջամահ էին անում մարդկանց, մինչդեռ պահքի խորհուրդը ոչ թե կայանում է զուտ ուտելիքից հրաժարվելու, այլ՝ կյանքի հաճույքներից ազատվելու, մեղքերից մաքրվելու մեջ: Պահքը մարմնի համար չէ, այլ՝ հոգու:

Մեծ պահքի օրերին մասնակցում էի պատարագին, աշխարհից վերացած՝ ընկղմվել էի մտքերի մեջ: Տեսարանն ամբողջացնում էր քահանայի ձայնը, որի հետ միախառնված՝ լսում էի Նարեկացու տաղերի ծիծաղախիտ հնչյունները: Ես այն ժամանակվա քահանաներին կպատասխանեի մեր քահանաների խոսքերով. «Պահքը ոչ թե միս ուտելու կամ չուտելու մեջ է, ո՛չ, ի՞նչ օգուտ պահքից, եթե կենդանու միսն ուտելու փոխարեն, ուտում եք ձեր բարեկամի միսը, գրգռում, բարկացնում եք նրանց: Ի՞նչ ուժ ունի փողը, որ կաշառքը մինչև հիմա գոյատևում է և իր կործանարար արմատներներով կառչած է աշխարհից: Մի՞թե մարդկային անկեղծ շփումն ավելին չէ, քան փողը»:

Երբևէ հայն իրեն ազատ զգացե՞լ է օտարի լծի տակ, երբևէ ապրե՞լ է՝ որպես ազատ, անկոտրում մտածողության տեր մարդ: Եվ այդ անարգանքն ու նսեմությունը հիմա ավելի է բորբոքում իմ մեջ վրեժի ցասումը, բայց ո՞վ էր ստիպում լինել գառ, որ գայլերը նրանց հոշոտեին:

Հայ և հույն տղամարդիկ պարտավոր էին սափրել իրենց բեղերը՝ հնազանդություն ընդգծելու համար: Մեր շրջապատում էլ կան եզդիներ, բայց եթե կրոնական տարբերությունը չլիներ, ես երբեք չէի զգա, որ նրանք հայ չեն: Իրավունքները հավասար են բոլորի համար:

Երբ խոսում են պանդխտության մասին, ինքս չեմ արդարացնում կամ մեղադրում հայրենքից հեռացած կռունկներին: Զաբել Եսայանի պապիկն էլ, իր ընտանիքը թողնելով բախտի քմահաճույքին, առանց տեղեկացնելու, հաճախ էր հեռանում: Մեր օրերում էլ մարդիկ ստիպված են թողնել իրենց հողը, ընտանիքը և գնալ օտար երկրներ՝ աշխատանք փնտրելու: Սոցիալական շերտավորումն այնքան խոր արմատներ ունի, որ կարծես երբեք էլ չի ավարտվի:

Հաճախ ինքս ինձ հարցնում եմ, թե արդյո՞ք մեղավոր են թուրքերը, որ իրենց նախնիները գազաններ են եղել: Հրեա շրջիկ թիթեղագործի անօգնական վիճակը, ով հալածվում էր և՛ քամուց, և՛ չար տղաներից, հուզմունք է առաջացնում հեղինակի մոտ: Նա տեսնում է մի մարդու , ով ի ծնե պատժված էր բնության կողմից: Նա չէր կարող անգամ երևակայել, որ մարդիկ կարող էին ուշադրություն դարձնել խեղճ հրեայի ազգությանը: Կարդալու ընթացքում ինքս էլ մտատանջության մեջ ընկա, իսկ ինչու՞ պաշտպանել հրեային, երբ նրանց նախնիները տանջել էին Հիսուսին, բայց մտորումներս երկար չտևեցին և հիշեցի «Աստվածաշնչի» խոսքերը, որ Հիսուսը եկավ խաչվելու և փրկություն տալու համար, և այս ամենը սահմանված էր նախօրոք և պիտի լիներ...

Անձեռնմխելի անձ չկա, և ես դեմ եմ անհավասարությանը: Երբ վարպետը կավից ամաններ է քանդակում, դրանցից ոչ մեկն իր ձևը չի փոխում, բոլորն էլ մնում են նույնը՝ նույն նյութից, նույն ձևով և նույն վարպետի ձեռքերով պատրաստված, բայց մարդիկ, լինելով Աստծո կերտած էակները, ժամանակի ընթացքում փոխել են իրենց ձևն ու էությունը և անգամ դարձել են ավելին , քան կան՝ իրենց սահմանված հարթությունից դուրս գալով:

Սիրեցի Զաբել Եսայան գրողի ու Մարդու կերպարը, ով արդարացիորեն նկարագրել էր իր ժամանակաշրջանը, և այսօր ես հնարավորություն ունեմ իր ժամանակներին հակադրել մեր օրերի օրենքներն ու ապրելակերպը՝ նախապատվությունը տալով նոր օրերին»:

http://www.usarmenianews.com/am-n-10025.html

2017-12-11

ԻՆՉՈՒ՞ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ

Շարադրությունների հանրապետական մրցույթում իմ աշակերտուհին մրցանակի արժանացավ: Հուշանվերը՝ Զաբել Եսայանի նկարով և նրա իսկ խոսքերով, որ ստացել էր պարգևատրության ժամանակ, նա ինձ նվիրեց: Չցանկացա վերցնել այն, բայց նա զինաթափեց ինձ, երբ ասաց, որ գրողի՝ կնոջ մասին այս խոսքերը հենց իր ուսուցչուհու մասին են գրված. «Կինը աշխարհ չէ եկած միայն հաճելի ըլլալու համար: Կինը եկած է իր խելքը, մտային, բարոյական եւ ֆիզիքական յատկութիւնները զարգացնելու համար: Ինքզինքնին յարգող բոլոր կիներուն իտէալը միայն հաճելի ըլլալը պէտք չէ ըլլայ, այլ երկրիս վրայ գործօն բարերար տարր մը դառնալը»:

Շնորհավորում եմ 11-րդ ա դասարանի աշակերտուհի Տաթևիկ Ղահրամանյանին, ով Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված դպրոցական շարադրությունների երկրորդ մրցույթում արժանացել է Արցախի Հանրապետության մարդու իրավունքների առաջին պաշտպանի հատուկ մրցանակին: Ստորև ներկայացնում եմ իմ աշակերտուհու շարադրության շարունակությունը: /Սկիզբն այստեղ է՝ http://www.usarmenianews.com/am-n-10025.html /:

«Օրենքը երբեք մեղավոր չէ և ոչ էլ՝ սխալ: Հանցավոր են օրենքը սխալ կիրառողները, օրինապահ այն մարմինները, ովքեր անձամբ են շրջանցում օրենքը: Զաբել Եսայանի «Սիլիդարի պարտեզներ» ստեղծագործությունից սուլթանների անձեռնմխելիության մասին իմանալն ինձ համար նորություն չէր, քանի որ և՛ պատմությունից, և՛ եղեռնի մասին գրքերից կարդացել էի և այդ պատճառով էլ առաջին իսկ պահից խորշեցի նրանցից:

Ժամանակները փոխվել են, բայց դարձյալ թուրքը մնացել է նույն վայրենին, իսկ ինչու՞ պետք է զարմանամ, չէ՞ որ այդ մարդատյաց գազանները ոչ բանականություն ունեն և ոչ էլ կարող են ձեռք բերել: Մի՞-

թե սուլթանից տարբերվում է անմեղ հայի գլուխն անողոքաբար կտրողին հերոսի կոչում տվող ազերիների նախագահը, մարդասիրությունից խույս տվող անհումանիստ մարդը: Զինվորի թափած արյան անգամ վերջին կաթիլն էլ արդարացի է, դա հայրենիքի համար է, իսկ հայրենիքի համար արժե զոհել անձնականը, բայց անգամ գազանը, տեսնելով արյամբ շաղախված զինվորին, վնաս չէր տա... Եթե շուն լիներ նրանց փոխարեն, կհասկանար, անգամ նվնվոցով կփորձեր արթնացնել ընկածին, կլիզեր վերքերը, անհանգիստ կվնգստար, մինչդեռ թուրքը հոգի չունի, նա լկտիաբար ծաղրել գիտի ու անպատվել:

Զաբել Եսայան գրողը մտել է հոգուս մեջ, նա երանի է տալիս, որ տղա լիներ, թեկուզ չերքեզ, գող, ավազակ, ապաստաներ լեռներում, պայքարեր հանուն արդարության և ուրախությամբ մեռներ: Հայրենիքի համար մեռնելը երջանիկ մահ է: Արյունը կներծծվեր հողի մեջ, կսուզվեր երակ-երակ, կնիրհեր այնտեղ՝ տաք հողի մեջ՝ որպես անմնացորդ նվիրման խորհրդանիշ, որպես սրտաբուխ կարոտ, որպես թախիծ:

Առանց քրտինք թափելու՝ հարստություն կուտակողներ այսօր էլ կան, ովքեր չեն գիտակցում, որ երկնքում պետք է կուտակել մի ամբողջ ամբար, այլ ոչ թե երկրի վրա, որտեղ ցեցն ու ժանգը ոչնչացնում են: Գրողի մորաքրոջ պատմություններն այդ մասին ինձ ստիպում են մտածել, որ նրանք չվերացող ցեղատեսակներից են: Հարստանալ՝ հարստահարելով, երջանկանալ՝ դժբախտություն պատճառելով. ահա սա է նրանց կարգախոսը: Ոսկին կուրացրել էր նրանց մինչև այն աստիճան, որ անգամ հարազատ ու անծանոթ չեն տարբերում: Իհարկե, մեր օրերում նման ճղճիմ ձևերով չեն վարվում, ավելի են մասնագիտացել անիծվածները: Ցեղատեսակը զարգացել է, կատարելագործվել:

Այս պատմության մեջ տեղեկանում եմ ոչ միայն մարդկային բռնության, այլև հոգու բռնության մասին: Աստված, կնոջը տղամարդու կողից ստեղծելով, ցանկացել է դարձնել նրան հավասար կողակից, այնինչ այն ժամանակվա պատկերացումներով կինը ոչ թե կողից, այլ՝ տղամարդու ոտքի կրունկից էր ստեղծված: Կնոջը նսեմացնելը, հպատակ դարձնելը, տարբերություն դնելը սեռերի միջև սովորական երևույթ էր: Սեռերի միջև պատնեշ դնելը սկսվում էր մանկապարտեզից, երբ անգամ դեռափթիթ մանուկները պատկերացում չունեին, որ տարբեր սեռի են պատկանում, որ անկարող են նույնիսկ միասին լիաթոք ծիծաղել...

Օսմանյան կայսրության նպատակը հայ երեխաներին խղճուկ, անպաշտպան մեծացնելն էր: Մատղաշ ծիլերը՝ դեռ պտուղ չտված, չորացնելն էր, կայծը՝ դեռ կրակ չդարձած, հանգցնելն էր, ազատությունը՝ դեռ թև չառած, սպանելն էր... Սրտի խորին հուզմունքով ընթերցում էի տողեր և հոգու խորքում վրդովվում, հոգիս ալոկոծվում էր, մոլեգնում ցավագին: Ձեռքերս ակամա տարա դեպի երեսս և խաչակնքեցի՝ փառք տալով, որ հիմա այդպես չէ, որ մեր ազատությունը սանձված ու ճնշված չէ: Արցախում ապրող յուրաքանչյուր մարդ առնչություն ունի զինվորի հետ: Նա զինվորի մայր է, քույր, ընկեր, միգուցե՝ սիրած աղջիկ: Ազատ մտածելու ունակությամբ, հայրենասիրական բարձր ոգով են այսօր կրթում երեխաներին, դեռ վաղ հասակից համազգեստ կրելով՝ տոգորված են լինում զինվոր դառնալու երազանքով:

Այսօր չես կարող միայն գիտելիք ստանալու համար երեխային ուղարկել դպրոց, այսօրվա ըմբոստ հոգուն չես կարող հարմարեցնել «տեր-թողիկյան» կարգերին, և պետք է աշակերտի մեջ սերմանել մի այնպիսի սեր, որ դպրոց մտնելը լոկ պարտավորություն չթվա: Մե՞նք ենք ըմբոստ, թե՞ այն ժամանակվա երեխաներն էին խեղճ, որ գլխահակ ենթարկվում էին դպրոցի աչառու կարգերին: Ի՞նչ օգուտ ուղեղ լցնելը, եթե քերթում էին միսն ու կաշին և լոկ ոսկորն էին թողնում. խելացի «կմախքներն» ինչի՞ էին հարկավոր:

Այսօր դաս չսովորելու պատճառը ոչ թե վախն ու խորշանքն է, այլ՝ անտարբերությունը: Աշակերտների վախվորած, սարսափած դեմքերից կարելի էր անկասկած կռահել ուսուցիչների բիրտ վերաբերմունքի մասին: Մեր դպրոցները՝ համամետած նախկին դպրոցների հետ, ավելի ճիշտ կլիներ ասել՝ մանկական զնդանների հետ, իհարկե, շատ տարբեր են, սակայն այստեղ էլ ամեն ինչ կատարյալ չէ: Ծեր, նեղսիրտ վարժուհին քանոնով հարվածում էր աշակերտների կապտած ու ցրտից ճաքճքված ձեռքերին: Հիմա ո՞վ թույլ կտա, որ իրեն նման կերպ ստորացնեն միայն սխալ գրելու համար: Իրենց իրավունքները հստակ գիտակցելով՝ այսօրվա ազատամիտ աշակերտներն անգամ բացատրություն են պահանջում անտեղի վիրավորանքների, երբեմն էլ՝ ուսուցչի պոռթկումների համար:

Մեր իրականության մեջ ինչքան էլ հանդիպած լինեմ խեղճ, ամաչկոտ աշակերտների, միևնույն է, չեմ գտնի անգամ մեկին, ով ինչ-որ չափով նմանվեր այն ժամանակվա վախվորած աշակերտների հետ: Հիմա

զավեշտալի է այն մարդը, ով փորձում է վախեցնելով, այլ ոչ թե հարգանքով ու արժանապատվությամբ հասնել իր նպատակներին: Ինչ վերաբերում է այսօրվա սոցիալական վիճակին, կարող եմ ասել, որ հիմա ավելի պատշաճ կյանքով ենք ապրում: Այն ժամանակ երեխաները ոջլոտ, երբեմն՝ կուշտ, երբեմն քաղցած էին հաճախում դպրոց, բայց մեր օրերում նյութական անապահովությունն այդքան ծայրահեղ չէ:

Որքա՜ն երջանիկ ենք մենք, որ ապրում ենք 21-րդ դարում, ազատ ու անկախ մի չճանաչված երկրում, որտեղ տեր ու տնօրենը օրենքն է, բայց, ցավոք, պատերազմի սպառնալիքն օրենք չի ճանաչում, որ ազերի օրինազանցներին պատժեն և ապրենք խաղաղ ու բարեկեցիկ կյանքով»:

http://www.usarmenianews.com/am-n-10032.html

2017-12-12

ԵՍ ՄԻՇՏ «ԳԱՂՏՆԻ» ՀԵՏԵՎՈՒՄ ԷԻ ՁԵՐ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋԻՆ

Ինչպիսի՜ անկեղծություն աշակերտուհու կողմից, ում մի քանի ամիս է, ինչ դասավանդում եմ: Տեսնես այսպես «գաղտնի» ընթերցողներ քանի՜-քանիսը կլինեն, ովքեր չեն համարձակվում տեսանելի դառնալ կամ այս տարածքում ընկերանալ մեզ: Ու սիրով եմ ընթերցում նրա տողերը, որ անակնկալ էին ինձ համար. «Պիտի խոստովանեմ, տիկի՛ն Պողոսյան, ես երկար ժամանակ «գաղտնի» էի հետևում Ձեր ֆեյսբուքյան էջին: Համարձակություն չունեի ընկերության հայտ ուղարկել ուսուցչուհու, ով ինձ չէր դասավանդում: Բայց ամեն անգամ ընթեցում էի Ձեր տեղադրած նյութերն ու մտածում. «Կլինի՞ մի օր, որ ես էլ հայտնվեմ այնտեղ»:

Դուք դեռ ամիսներ առաջ դիմել էիք դասարանին. «Ինչպե՞ս եք վերաբերվում այն հարցին, թե ինչու՞ այն աշակերտները, ում չեմ դասավանդում, իմ նյութերում չեն հայտնվում»:

Ես ակամայից անձագանքեցի. «Սպասում կար»:

Եվ այս օրերին ես մեկն եմ այն բազում աշակերտներից, ովքեր Ձեր շնորհիվ հայտնվել են լոսանջելեսյան հայկական կայքում, որի շնորհիվ տարբեր թեմաներով մեր մասին գրածներն ամենուր հասանելի են դարձել: Արդեն երկրորդ անգամն է, ինչ ես երևում եմ այնտեղ: Երբ առաջին անգամ հայտնվեցի, համբերությունս չէր հերիքում, որպեն մեկ մտնում էի կայք, որպեսզի տեսնեմ քանի դիտում ունի նյութը, որում ինձ էիք ընդգրկել: Կարծես թվերն իրենց կորցրել էին, կանգուն չէին մնում, այլ փոփոխվում էին անընդհատ: Բայց վայրկյանների ընթացքում ինչպե՞ս կարող էր նման բան լինել: Սկզբից զարմանում էի, բայց հետո հասկացա լինելությունն ու հանդարտվեցի:

Երկրորդ անգամ հայտնվելով՝ այլևս չէի հետևում թվերի տեղաշարժին: Գիտեի՝ առաջինի պես շարժը չի կանգնի, այն շարունակական կլինի: Մտածում էի, որ կգա մի օր, և թվերը «կքարանան»: Այդժամ ո՞վ կհիշի այդ գրվածքների մասին, միայն նորերը կընթեցվեն: Դրա համար

էլ նյութերը, որոնք Դուք գիրք եք դարձնում, հավերժություն են դառնում և երբեք հնություն չեն համարվի:

Տարիները գլորվում են, սերունդները՝ փոխվում: Գրապահարանում քնքշորեն պահված գրքերը միայն իրենց բույրն են փոխում, բայց ո՛չ էջերն ու տողերը և ո՛չ այն մտքերը, որոնք զետեղվել են, որ անմահանան ու հուշ դառնան: Խոսքերս լոկ պատկերացում են, երբ գիրքը նվեր եմ ստացել, սրբության պես պահել, քանզի ինձնից հետո այն սերունդներ պիտի թերթեն: Բայց մինչ այդ ես եմ թերթողը, ես եմ դպրոցական կյանքս վերապրողը: Մեղմ ժպիտով, դողդոջուն ձեռքերով վերցնում եմ գիրքն ու թերթում էջերը...

Էջեր, որտեղ ապրած օրեր են, զգացած պահեր, և անմոռանալի հիշողություններ, որոնք բառեր են դարձել, կողք կողքի շարվել, գրքի մեջ թափանցվել: Ամեն անգամ տողերն ընթերցելիս նոր ապրումներ կունենամ, նոր զգացողություններ և կրկին կարոտ դեպի անցած օրերը: Ահա աչքիս առջև պատկերները քայլում են. դպրոցական կյանքն է իմ առջև: Ընթերցման ակնկալիքով նոր սերնդի ձեռքն եմ փոխանցում, որ նրանք էլ իրենց սերունդներին փոխանցեն հնացած էջերով, բայց ոչ հնություն դարձած գիրքը»:

Չնայած համամիտ չեմ իմ աշակերտուհու կարծիքին, որ ես գրող եմ, չէ՞ որ գրողական տաղանդն ուրիշ է, ոչ բոլորին հասանելի, չնայած մեր օրերում շատ-շատերն են իրենց գրող համարում, բայց սիրով վերհիշեցի Լուիզա Մամունցի հրաշալի տողերը, որ օրեր առաջ ինձ էր ուղարկել. «Դուք ունեք նպատակ, որին հասնում եք արահետի միջով...Մատների վրա հաշվվում են այն ամիսները, ինչ Դուք մեզ դասավանդում եք...Այնժամ լսում էի դպրոցականների պարծալից խոսքերը, իսկ այսօր ես եմ պարծենում, քանզի ինձ դասավանդում է ուսուցչուհի, ով լոկ ուսուցչուհի չէ, այլև՝ գրող»:

http://www.usarmenianews.com/am-n-10036.html

2017-12-14

2017-Ը ՄԱՆԿԱՎԱՐԺԻՍ ԱԶԱՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆ ԷՐ

Դեկտեմբերի այս օրերին ձգտում եմ մինչև Նոր տարին ավարտին հասցնել իմ «Մանկավարժի օրագրի» 2-րդ մասը, որը նույնքան ծավալուն կլինի, ինչպես նախորդն էր, որ հրատարակվել էր ամիսներ առաջ: Այն 2017-ի իմ բոլոր նյութերն են, որտեղ աշակերտների կողքին նաև ուսուցիչներ կան ընդգրկված, այս հողին ամուր թելերով կապված անհատականություններ, ովքեր հավատարմորեն իրենց աշխատանքն են վարում իմ կողքին՝ իրենց հոգում ունեցած կորստյան ցավով, հայրենիքի վաղվա օրվա մտահոգությամբ, սերունդների դաստիարակության վեհ առաքելությամբ:

Այնքան էլ շատ պետք չէ հետ նայել՝ ամփոփելու մեկ տարվա մանկավարժի գործունեություն, որ տքնաջան աշխատանք է ընդգրկում իր մեջ՝ այս անգամ խաղաղ երկնքի տակ, նաև՝ սահմանային կրակոցների արձագանքներին միախառնված, երբեմն՝ հերթական զգուշացումներով, որ հանկարծ հեռվից եկող այն փորձարարական զորավարժությունների ժամանակ բարձրակոչ խուլ թնդյուններից չսարսափենք: Հարմարվում ենք երբեմն այդ բարձրակոչ ձայներին, որ գալիս են հիշեցնելու մեզ, թե կյանքն այդքան էլ խաղաղ չէ, ինչպես մենք ենք երբեմն կարծում, երբ այդ արկերի պայթյուններից զոհեր են լինում նորից, ու սիրտդ մի նոր կսկիծ է մտնում, ահազարհուր մի մեծ վիշտ, որ ոչինչ չի վերջացել այս անցավոր կյանքում, երբ կողքիդ թշնամի ունես սանձարձակ ու վայրենի:

Տարին հաջողակ էր իմ ստեղծագործական գործունեության համար, իսկ այն դյուրին չէր այդքան էլ, երբ գիշերն ու ցերեկն իրար էին խառնվել, որ գրի առնվեին ամենօրյա իմ ապրումները, որոնք ուղեկցվում էին իմ աշակերտների անհանգիստ մտորումներով, նրանց ամեն մի անսովոր խոսքով, բանավիճային թեմաներով, նորի հանդեպ ունեցած իրենց տարակարծություններով ու առաջարկներով:

Այս տարվա իմ երկու գրքերի հրատարակությունը 2016-ի մանկավարժիս գործունեությունն էր ընդգրկում: Այն դարձավ «Մանկավարժի օրագրի» 1-ին մաս՝ իմ ամենօրյա գրառումներով, որ աշակերտների հետ մի նոր հասկացված հարաբերություն էր բացահայտում: Մանկավարժիս գեղարվեստական վերլուծություններն իր աշակերտներին ար-

տաղասարանական ընթերցանության մեջ ուղղորդելու սկիզբը դրեցին, որից էլ ծնվեց ուսուցչի ու գրողի մի նոր հարաբերություն, որ պիտի ամրագրվեր «Գրողն ու ուսուցիչը...Ժամանակի մեջ և անդին» գրքի հրատարակությամբ:

Մանկավարժիս համար գնահատանքի, մեծարման տարի էր, որ շարունակվում էր իմ համեստ գրչով տեսանելի դառնալ դպրոցս, նորօրյա սերունդը, գործընկերներս, հենց ես՝ մանկավարժս... Բայց հազարավորների համար տեսանելի դառնալն ու ընդունված լինելը թե՛ սոցկայքերում և թե՛ տարբեր եթերներում, այնքան էլ ընկալելի չէր հատուկենտ անհատների կողմից, որ հաղթահարվեց իմ իսկ զգոնությամբ, այս նվիրական գործի շարունակական ընթացքով: Իմ գրիչը երբևէ կանգ չառավ, երբ հիասթափության ու թևաթափ լինելու անկումային ապրումներին նորից հաջորդեցին վերելքների հասնելու մանկավարժիս հակումը...Ու 2017-ն ինձ համար դարձավ հաղթանակի ու նոր դժվարություններ հաղթահարելու տարի:

Գուցե և հակադարձողներ կլինեն ինձ, բայց դա հաղթանակ էր մանկավարժի ազատ գործունեության, նպատակասլաց աշխատանքի, դեռահասների հետ ունեցած հասկացված հարաբերության ու այդ իսկ դեռահասներին՝ շատերին տեսանելի դարձնելու ցանկությամբ, որ իրականություն դարձավ: Դա հաղթանակ էր այն նորարարության, որի սկիզբը դրել էի դեռ տարիներ առաջ՝ իմ առաջին մեթոդական ձեռնարկը հրատարակելով: Տարին հաղթական էր ինձ համար, որ մանկավարժիս գործունեությունը շարունակական դարձավ ու ազդարարում է այս օրերին մի նոր գրքի ամփոփման ավետիս, որ սերունդներին թողնվի՝ որպես 2017-ի հիշողության արթնացում:

http://www.usarmenianews.com/am-n-10047.html

2017-12-15

ԿՐԹԱԿԱՆ «ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ԳԵՐԻՆ ԵՆՔ ԴԱՐՁԵԼ

Անցած ուսումնական տարվանից 12-րդ դասարանի աշակերտները հնարավորություն ստացան երեք մասնագիտական առարկաներից քննություններ հանձնել դեկտեմբերին՝ առաջին կիսամյակն ամփոփելուց հետո: Այս տարի նույնությամբ կրկնվում է՝ այն հաշվով, որ այդ առարկաները երկրորդ կիսամյակում նրանք չեն ուսումնասիրելու: Աշակերտը կարծես «ազատվում է» այդ առարկաներից, մի տեսակ իրեն թափ է տալիս, թեթևացած զգում, որ վերջապես կուսումնասիրի միայն այն առարկաները, որոնք հետագա ուսումնառության համար իրենց պիտանի կլինեն բուհ ընդունվելու համար:

Կրթական համակարգում նման «նորամուծությունը» չգիտեմ որքանով է հարմար շատերի համար, բայց ես՝ որպես հայոց լեզվի և գրականության մասնագետ, չեմ կարողանում հաշտվել նման երևույթին, երբ կանգնում ենք ծայրահեղ անելանելի վիճակում: 12-րդ դասարանի հայ գրականության դասագրքում ընդգրկված են ութ դասական գրողներ՝ իրենց կենսագրություններով և ստեղծագործությունների համառոտ վերլուծություններով: Ակնարկային թեմաներով պետք է ուսումնասիրվեն նաև նորագույն շրջանի հայ բանաստեղծներն ու արձակագիրները, սփյուռքահայ և հայազգի օտարագիր գրողները:

Հայոց լեզվի առումով հիմնականում անցած նյութերի կրկնություն է, քերականության երկու բաժինների վերհիշում, բայց մի ամբողջ հայ գրականության դասագիրք պետք է ուսումնասիրենք՝ հազիվ չորս ամսվա ընթացքում՝ շաբաթական երեք ժամի մեջ տեղավորվելով, ընդ որում՝ այդտեղ երկու շաբաթվա առաջին կիսամյակի աշնանային և ձմեռային արձակուրդներ կան: Այդքանին զուգահեռ՝ եթե ուսուցողական, թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքներն էլ հաշվում ենք, չափազանց քիչ ժամաքանակ է մեզ բաժին հասնում այդ գրողներին ուսումնասիրելու համար:

Ու՞մ էր պետք այս շտապողականությունը, դեռ Սահյանին չմարսած աշակերտին հրամցնում ենք Սևակ, դեռ նրանց ստեղծագործությունները կարգին չուսումնասիրած՝ ժամաքանակի սղության պատճառով առաջ ենք վազում՝ ծրագրից հետ չմնալ, այդ մի քանի սուղ ժամերում հասցնել ուսումնասիրել մյուս դասականներին: Նոր օրերում

շտապում ենք, հայ գրողների ստեղծագործությունների խորքային ուսումնասիրությունն անցյալում ենք թողել, հիմա նոր սերնդին պետք չէ Սահյանի կենսագրության մասին իմանալ, այն երեք նախադասության մեջ է ամփոփված: Ստացվում է այնպես, որ մեկական դասաժամն էլ հերիք է, որպեսզի Սևակի «Անլռելի զանգակատունը» կամ նրա մյուս բանաստեղծություններն ուսումնասիրվեն:

Դպրոցի 12-րդ դասարանի աշակերտների համար, կարելի է ասել, «լավագույն պայմաններ» են ստեղծվել: Ամենաթույլ կարողությունների տեր աշակերտները բուհ են ընդունվում, հազիվ դրական գնահատված աշակերտը համոզված է, որ ինքն ընդունելությունից երբևէ դուրս չի մնա, նրա համար արդեն չի կարևորվում՝ դպրոցում հայ գրողի ստեղծագործություններին երկու թե երեք դասաժամ է տրվում ուսումնասիրելու: Հավասար դրության մեջ է հայտնվում նրա կողքին սովորող լավագույն կարողությունների տեր աշակերտը, ով հապշտապ պետք է ավարտի դպրոցական ծրագիրը, որ առաջին կիսամյակի վերջում մասնակցի քննություններին:

Որտեղի՞ց է գալիս անտարբերությունը գրքի, ընթերցանության հանդեպ: Ինչու՞ ենք դժգոհում, թե սերունդը հեռացել է գրքից, երբ գերի դարձած այս նոր ծրագրերին՝ շտապում ենք ավարտել մի ամբողջ հայ գրականության դասագիրք, որ աշակերտը հասցնի մասնակցելու դեկտեմբերին նախատեսված քննությանը, որով հրաժեշտ կտա այդ առարկային:

http://www.usarmenianews.com/am-n-10056.html

2017-12-18

ԻՄ ԽՈՀԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՈՒ ԳԵՂԱՐՎԵՍՏՈՐԵՆ ՇՆՉԱՎՈՐՎԱԾ ԿԵՐՊԱՐԸ

Ինեզ Կոստանդյան, այս տարածքում իմ խոհերում տեղ գտած մի ազնվագույն կերպար: Չգիտեմ ինչու, նա միշտ իմ մտորումների մեջ է, ինձանից հեռու, բայց միշտ ինձ հետ: Ես ցանկացա նրան տեսանելի դարձնել, նրան, ում վաղուց դարձրել եմ իմ խոհերին ուղեկից, նրան, ում չափած-ձևած խոսքերը բազմիցս հիացրել են ինձ, նրան, ում իմ հեռուներից սրբություն եմ դարձրել՝ իր իսկ մաքրությամբ, գուցե նաև՝ իմ անթաքույց մտածումների ոչ այնքան շատ տեսանելիությամբ: Նրա մի տողը, մի բառն անգամ ինձ հիացնում է, ու իմ թևերը թռիչքի են պատրաստվում երբեմն նրա մեկ բառից անգամ: Ու այս տողերում ես նրան եմ տեսնում, գրականությանը, արվեստին նվիրված իր հայացքով, իր ազնիվ նվիրաբերմամբ, իր իսկ առաքելությամբ, իր վաստակած կյանքի իմաստով, որ վերագրել էր ինձ՝ ուսուցչուհուս, դեռ շատ ամիսներ առաջ:

«...Սիրում եմ Ձեր՝ գրականությանը, պոեզիային, արվեստին վերաբերող ՀԱՅԱՑՔԸ... Մարդու՛ն, բնությա՛նը, հայրենիքի՛ն, դպրոցին, Ձեր սաներին նվիրված ՀԱՅԱՑՔՆ ու ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ....Սիրում եմ Ձեր ունեցած, վաստակած ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ....Դուք մարդ եք, ԿԻՆ, որ տեսել ու տեսնում է ՏԱՌԱՊԱՆՔԸ...Սիրում եմ Ձեզ, սիրելի՛ Նատաշա ջան....Սիրում եմ և մնում եմ մշտապես նաև Ձեր տառապանքի ընկերը: Եվ փափագով սպասում այն բաղձալի օրվա գալուստին, երբ Արցախի երկինքը հար խաղաղ ու կապույտ կլինի և ծնված մանկանց համար «պատերազմ» ու «կրակոց» բառերը կթվան չեղած, չունեցած մի բան....Տա՛ Աստված...»:

Վաղուց նա մտել էր իմ ներքնաշխարհն իր թախծագին ապրումներով, իր մարդասիրությամբ ու մաքրությամբ: Սիրեցի նրա մշուշոտ հայացքը, արցունքախառն աչքերը, որ երազկոտ ու անքնության տենդով այնպես տխրորեն արտասվել են դեռ անցած տարի, երբ կարդացել էր գրածս վերլուծությունն Աղյան արձակագրի մանրաքանդակների մա-

սին: Այդ օրը ես էլ նրա հետ տառապեցի՝ հայացքս հառած այն հեռուներին, որտեղ հարազատներ ունեմ ամփոփված: Այդ օրը ես նորից զգացի մայրական կորստի կսկիծը, երբ կարդացի նրա տողերը թախծախառն:

«Այնպե՜ս անսպասելի...առավոտ ծեգին արցունքներս իրար հերթ չտալով՝ թափվեցի՜ն...Թափվեցին տխրորեն ու հուսաբեկ...Այսպես հուզու՛մ է անսպասելի կերպով սրտիդ այցելող երաժշտության ԱՆՀՈՒՆԸ...Կարդացի հրաշալի արձակագրի մանրաքանդակների խորքային վերլուծությունը Ձեր: Անրջել չհասցրած՝ փուլուքանդ եղա: Լուռ կանգնեցի: Այդ դիրքում մնացի երկար, այնուհետ լռիկ մոտեցա ողջ գիշեր անձրև ու արցունք ճաշակած սա՛ռ պատուհանիս, ու քիչ է ասել՝ երազկոտ ու անքնության տենդով հիվանդոտ աչքերս կրկին առատապես լա՜ց եղան: Սառն օդի մեջ արցունքս գրկեց տխրությունս ու խեղճությունս: Խաղաղվեցի՜, սակայն...Խաղաղվեցի՜ մեկեն...Լուսավոր մի հույզ այցելեց միանգամից: Այդ լույսի ՄԵՂԱՎՈՐԸ Դուք դարձաք, աննմա՛ն ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ...

Շնորհակալ եմ...Նրա՛ համար, որ կա՛ք...Նրա՛ համար, որ մեղքառատ աշխարհում, մեր ցավո՛տ իրականության մեջ դեռ մեր ԱՐՔԱՅԱԿԱՆ ԼԵԶՎՈՎ հնչող երգեր կան, որ մեր ՈՍԿԵՂԵՆԻԿ ՀԱՅԵՐԵՆՈՎ վերլուծություններ կան, որ կարող են հուզել, պատճառել լուսեղեն թախիծ և՛ ուրախություն, և՛ խորախոր խաղաղություն....Մնացե՛ք խաղաղությամբ...Աղոթքս առ Աստված՝ Արցախի խաղաղ, անկրակոց օրերի համար....Լավագույն այն տողերքի, որոնց հիշատակը անմարելի է ո՛չ միայն երկրի վրա...Նրանք Աստծո աջակողմյան դասի նվիրական անուններն են....ԱՂՈԹՔ ՈՒ ԽՈՒՆԿ ՆՐԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ... ԱՄԵՆ....»:

Մենք վաղուց անցել ենք դու-ի... Հարազատական ու մտերմորեն միշտ նրան զգում եմ իմ կողքին: Երբեմն այս տարածքում անտես ենք դառնում, երբեմն՝ անսահման մոտիկ, բայց նրա խոսքերը միշտ ինձ հետ են. «Դու Ուսուցչի իսկական ԷՏԱԼՈՆ ես...Մեր օր օրի վատթարացող իրականության մեջ, իսկապես, դու, Նատաշա՛ ջան, Ճառագող Արևի Շող ես... ՀԱՑ ՈՒ ՋՐԻ, ՕԴԻ պես անհրաժեշտ ես այնտեղ, որտեղ ավելի շատ կարիք կա մարդկային կարեկցանքի, սիրո, հոգածության ու նվիրվածության: Քո բոլոր տողերի խոր իմաստներում տեսնում եմ մարդուն մա՛րդ տեսնելու ձգտումդ: Քեզ նման ուսուցիչը շատ արագ է ճանաչում դիմացինին, գրեթե անմիջապես, անգամ երբ նա չի խոսում, երբ լուռ կանգնած է»:

Այո՛, ես հասցրի նրան ճանաչել, բայց ոչ առերես, իմ մտապատկերում նա կանգնած չէ, այլ՝ խոհերի մեջ, գլուխը հակած խաչված ձեռքե-

րին: Ինչու՞ է մտախոհ, աշխարհի ցավից ու դարդից մտահոգ, մարդուն կարեկից դարձած այս ազնվությունը: Ես նրան գտնում եմ իր խոսքերում, այն բոլոր տողերում, որ ուղղել էր ինձ գուցե ամիս կամ ամիսներ առաջ: Նա ինձ երևում է որպես ուսուցանող, որ շնչավորում է իր ամեն բառն ու փոխանցում մեզ, որով ապրեցնում է մեր տեսակը, ու այդ տեսակի մեջ հենց իրեն եմ տեսնում՝ գեղարվեստորեն շնչավորված մի կերպար:

«Քո բոլոր գրառումների, նյութերի մեջ, յուրաքանչյուր տողիդ նրբիմասների մեջ չխաթարված տեսակիդ եմ տեսնում: Զգացումներդ թղթին տալու ԱՐՎԵՍՏԻ մեջ հիանալի ձևող-կարող ես և հուզող ես, մտածելու առիթ տվող ես...Դու, որ գիտեմ, համոզվա՜ծ եմ, զգում եմ, ներքնատեսությամբ աչքիս դեմ են կարծես քո բոլոր դժվարին, անելանելիության եզրին կանգնած տեսակիդ ապրումներն ու տագնապները, լացախեղդ գիշերներդ: Ամեն հեռացող զինվորի կորուստը, անհայր երեխայի արցունքոտ աչքերը քո սեփական ցավն ու մրմուռն են, որ հասկանում եմ իմ հեռվից»:

Բառ ու նորից բառեր, որ նա արարում, քաղցրացնում է իր շարվածքում, մեղեդի է փոխանցում իր ամեն խոսքին, ընթերցում ես ու նորից ընթերցում անհագ ցանկությամբ, նվիրական ազնիվ զգացողությամբ առ մեկը, ում իրականում չգիտես, բայց այդ հեռուներից երբեմն այնքան է նա մոտենում քեզ, որ զգում ես նրան կողքիդ, հպարտանում նրա տեսակին քո առնչվելով:

«Դու Կին ես, որ մի տեսակ ասես ազդարարում ես ԳԱԼՈՒՍՏ ու ՎԵՐԱԴԱՐՁ: Սիտք ես ու երազանք, սիրելի՛ս...Քո կողքին ապրող մա՛րդը, աշակե՛րտը, քեզնո՛վ, քո գիտելի՛ք-զինանոցով սնվող մեկը պետք է, որ ճգտի, հասնի կատարելության, հայելացու՛մը մարդո՛ւ՝ պետք է որոնի ու քո միջոցով գտնի...Դու է՛լ զինվորի պես, դու է՛լ՝ զինվո՛ր, քո վտանգված տարածքին ԹԻԿՈՒՆՔ հանդիսացող եղելությու՛ն... Հաստատակամ ու ամո՛ր Ուսուցիչ, քո տեսակը թող Աստծո կամոք շատանա, որ երկրագունդը չընկնի իր հավասարակշռությունից, որ մարդկային չարությունը, ոխը, ճանճրույթն ու այլասերումը պակասի աշխարհից»:

Ես ամեն օր մտորում եմ, թե ինչպես փոխանցեմ իմ գրքերից այս հրաշալի հայուհուն: Նա մեկն է, ում անհագուրդ սիրով ցանկանում եմ նվիրել այդ գրքերից: Ես գիտեմ, որ նա այդ թերթերում անգամ իմ շունչը կզգա, իմ թույլ հառաչանքի շշուկն անգամ կհասնի նրան... Այնպես, ինչպես ես եմ զգում նրա բառի շունչը, նրա իսկ ջերմությունը և այդ իսկ

ջերմությամբ ցանկանում այս հրապարակումով մի փոքրիկ անակնկալ մատուցել նրան Նոր տարվա շեմին: Ամփոփում եմ իմ հաջորդ հրատարակվելիք «Մանկավարժի օրագրի» երկրորդ մասը ու ցանկանում նրա մասին իր իսկ խոսքերով շարված այս տողերը երևան այդ գրքում, ով վաղուց դարձել է իմ խոհերի իրական ու գեղարվեստորեն շնչավորված կերպարը:

http://www.usarmenianews.com/am-n-10063.html

ՀԳ. Հիմա ես ի՞նչ ասեմ...անչափ անսպասելի, անչա՜փ մարդկային, փիրուզյա մաքրությամբ, շոգ սիրով ու անհուն համակրանքով...ու էլի ուրիշ սիրուն զգացումներով համեմված այս լույս նամակին: Ես այն կոչում եմ ՍԵՐ-ԼՈՒՅՍ-ՆԱՄԱԿ...Երբեմն մարդիկ այնպիսի քնքշություն ու քաղցրություն են ցույց տալիս, այնպիսի մի անեզրական ՍԵՐ են ուղարկում աշխարհից աշխարհ, որ մտածում ես և՜... մանկական պարզությա՛մբ ու անմեղությամբ հավատում, որ նրանք այդ անում են անպայմա՛ն ԱՍՏԾՈ ՏՆԻՑ: Հիմա ես ի՞նչ ասեմ...ԱՍՏԾՈ ՏՆԻՑ եկած նամակին ի՞նչ պատասխան տամ. այն դեպքում, երբ ողջ էությամբ դարձել եմ համակ հուզում ու լռություն....Հիմա ես ի՞նչ ասեմ. զգացողություններիս ու հույզերիս գերառատությունը կապկպել է լեզուս...ՇՓՈԹՎԵԼ ԵՄ ԱՆԱՆՑ ՀՈՒԶՄՈՒՆՔԻՑ ու չեմ կարող դո՜ւյզն չափ տալ պատասխան՝ ճանաչված, շա՜տ շատերիս կողմից սիրված ու գնահատված, մեր աչքի ու սրտի առաջ մշտապես ՏԵՍԱՆԵԼԻ ԻՐ ՀՆՉՈՒՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ մշտավառ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՓԱՐՈՍ Նատաշա Պողոսյանին....

Ամոթից կարմրած այտերով /և մի՞թե ես արժանի էի այս մեծ ուշադրությանն ու ՆՐԲԱՎԱՐ վերաբերմունքին.../ գլուխս տարուբերում եմ ու որքան էլ անհնար ու դժվարին թվացող՝ ՆՐԲԱՀՈՒՆՉ բաներ են ծնվում թրթիռ դարձած հոգուս մեջ. նրբահունչ բարեմաղթանքնե՞ր արդյոք, նրբահյուս վարդափու՞նջ արդյոք՞ ՍԵՐ շնչող ու արտաշնչող իմ մի՛ բուռ սրտով...Արդյո՞ք սի՛րտս նրան՝ ՈՒՍՈՒՑԻՉ-ԵՐԵՎՈՒՅԹԻՆ տալու պատրաստակամություն ու զոհողություն...Ե՛վ մեկը, և՛ մյուսն ու մյուսնե՛րը, ամենը, ի՜նչ որ ունեմ: Իսկ ամենից շատ ԱՂՈ՛ԹՔ ունեմ, հարկավ: Աղո՛թք՝ վերին շնորհով օժտված, Աստծո պատկերակիր ՈՒՍՈՒՑՉԻ հանդեպ: Աղոթք առ Բարձրյա՛լը, որ նրա սրտի արևները Ամենատես ՏԵՐԸ պահի ու

պահպանի, դարձնի անմարելի՝... Չէ՞ որ Աստված է իր անհունական սիրուց մի չքնաղ մաս կաթեցրել մեր Նատաշայի սրտի մեջ ու նրան դարձրել Ա՛Ղ , ու նա անմնացորդ տալի՜ս է, տալի՜ս է իր սաներին, իր Արցախ աշխարհին, իր մտերիմներին, ընկերներին....Եվ մի՞թե այս կերպ. արդեն տանելի չի դառնում ԱՇԽԱՐՀԻ ԱՔՍՈՐԸ... Եվ մի՞թե չարությամբ ու չկամությամբ, քեն ու նախանձով դառնացած օդը չի դառնում ՇՆՉԵԼԻ՛... Օ՛դը, կյա՛նքը ՇՆՉԵԼԻ դարձնող իմ ու բոլորի՛ս Նատաշա, իմ սիրելի՛ արցախցի ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺ, նվիրական ԵՐԿԻՐ-ԱՐՑԱԽՈՒՄ սարսափելի կրակահերթեր ու մահեր տեսած ՀԱՅՐԵՆԱՏԵ՛Ր ՀԱՅՈՒՀԻ....Բազմաբաղձիկ սերս ու գնահատանքս ընդունի՛ր գրկումների փնջով: Որքա՜ն հաճելի ես դու ԱՍՏԾՈՒՆ, որչա՜փ սիրելի....ՍՐԲԱՆՄԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆԴ համար հազար ՕՐՀՆԱՆՔ ՔԵԶ, սիրելի՛... իմ սիրելի՛....

Հարազատական տաք զգացմամբ այս անգամ արբեցա՛ծ արդեն, արդեն աչքերիս մեջ հմայվածի սիրափա՛յլ, հոգիս գինովցա՛ծ արդեն, խորին խոնարհումով ասում եմ - Շնորհակալ եմ, ԲՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԵՆ ՈՒՍՈՒՑԻՉ, որ տաք էություն դարձա ՔԵԶՆՈՎ....

Նիկոլ Կոստանդյան

2017-12-20

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՄՆԱԿԻՑԸ

Սեպտեմբերին մտա 11-րդ ա դասարան, ուշադրությանս արժանացավ նա, այդ համեստ աշակերտը, ում հիշեցի դեռ անցած տարիներից, երբ մտել էի այդտեղ՝ դասալսման: Նա փոքր էր, դեռ 5-րդ դասարանում: Նրա հայոց լեզվի և գրականության ուսուցչուհին առաջարկեց գրատախտակին ինչ-որ բան նկարել: Եվ ո՞վ զարմանք, որ նկատեցի նրա ձեռքի արագ շարժումներում... Կավիճը ձեռքին իր տաղանդն էր ցուցադրում: Շուտով գրատախտակին երևաց Մաշտոցի մեծադիր դիմանկարը: Հիացած էի, բայց նա լուռ էր, միայն մի ազնվագույն ժպիտ էր դեմքին խաղում...

Արդեն նրան՝ Կարեն Ափանցին, դասավանդում եմ: Տարիները փոխել են նրան արտաքնապես, բայց ինքը մնացել է նույն համեստ աշակերտը՝ մեղմ ժպիտով, ինքնամփոփ ու լռակյաց: Պատի թերթը, որ առաջարկեցի ձևավորել, սիրով կատարեց, և շուտով իմ տեսադաշտում երևացին նրա ձևավորած մի շարք նկարներ...

Ես զրուցում եմ նրա հետ: Դեռ նկարել սկսել է հինգ տարեկանից, նկարել է ինքնուրույն, դրանք արժանացել են տարբեր խրախուսանքների: 2011 թվականից հաճախել է Մարտակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն: Ավարտել է գերազանց, արժանացել վկայականի, զբաղվում է նաև քանդակագործությամբ, բայց ավելի շատ խորացած է նկարչության մեջ: 2013-ին Արցախյան շարժման 25 և Մարտակերտի ազատագրման 20-ամյակի կապակցությամբ անցկացված նկարչական մրցույթ-ցուցահանդեսում առաջին տեղ է զբաղեցրել, պարգևատրվել ՄԱԿ-ի տնօրեն Ռ. Իզմաիլյանի կողմից:

Կարենի հաջողությունները նկատելի են մի շարք գրքերում: Շուտով իմ ձեռքի տակ հայտնվում են ՀՀ կրթության և գիտության նախարա-

ղության գեղագիտության ազգային կենտրոնի կողմից կազմակերպված տարբեր մանկապատանեկան մրցույթ-փառատոնների՝ գրքեր դարձած հավաքածուները: Նա խոսում է հատ-հատ, շատ կամաց: Սեղանին դրված գրքերի էջերն է թերթում, ցույց տալիս ինձ իր նկարները, որ արժանացել են տարբեր մրցանակների, մտել այդ գրքերը:

Դեռևս 2012 թ.-ին «Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք» հոբելյանական ծրագրի շրջանակներում ՀՀ մշակույթի նախարարությունը կազմակերպել էր մանկական գրական-ուսուցողական միջոցառում՝ «Ես գիրք եմ ստեղծում» խորագրով, որի նպատակն էր երեխաներին ու պատանիներին գրքի ստեղծման աշխատանքներին մասնակից դարձնել, նաև սեր ձևավորել գրքի ու ընթերցանության նկատմամբ: Կարեն Ափանցը ծրագրի շրջանակներում մասնակցել է «Ես նկարազարդում եմ» նկարչական մրցույթին, արժանացել պատվոգրի:

«Սիրե՛ք պոետի գույները» համահայկական մանկապատանեկան նկարչական 3-րդ մրցույթ-փառատոնում Արցախից ներկայացված նկարների շարքում նրա երեք ստեղծագործությունները տեղ գտան այդ գրքում: Գ. Էմինի «Հայաստանի գարունը», Վ. Դավթյանի «Ձորի աշունը» և «Աշուն» բանաստեղծությունները մի նոր գունային երանգներով ներկայացրեց 12 տարեկան պատանին 2012-ին: Հաջորդաբար երևում է նրա մասնակցությունը համահայկական տարբեր նկարչական մրցույթներին:

2013-ին նա մասնակցել է «Հայկական լեռնաշխարհից ծնված ոգին» խորագիրը կրող համահայկական 4-րդ փառատոնին: Երկու հազար աշխատանք էր ներկայացվել տասնութ երկրներից: Կարենի նկարը՝ «Հյուրընկալ արցախցիները», լավագույնների շարքում էր: Իսկ 2015-ին նա մասնակցել է «Մեկ դար և ավելի...» խորագրով համահայկական

նկարչական փառատոնի 5-րդ փառատոնին՝ նվիրված Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին:

Ես թերթում եմ այն գրքերը, որոնք հրատարակվել են տարբեր համահայկական մրցույթների արդյունքների ամփոփումից հետո: Այնտեղ Կարենի, արցախցի, նաև տարբեր երկրների հայ երեխաների նկարներ են տեղադրված, լավագույն աշխատանքներ, որտեղ յուրաքանչյուրի տաղանդի շնորհիվ արվեստն է խոսում՝ իմաստավորելով հայի ստեղծագործական ոգին: Բայց Կարենը շատերիս նման մեծ երազանք ունի...Որ պատերազմ չլինի Արցախում, խաղաղ լինի կյանքը՝ երկնքի լազուրում ճախրող աղավնիներով...

http://www.usarmenianews.com/am-n-10074.html

2017-12-22

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՀԱՆՈՑԸ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Արտակերտի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն Սեդա Հայրապետյանի կողմից հրավերը սիրով ընդունեցի՝ մասնակցելու օրվա միջոցառմանը, որ Արցախի ազգային խոհանոցին էր վերաբերում: Դպրոցի ուսուցչուհիներ Արշալույս Գաբրիելյանի և Նոնա Հայրապետյանի հետ նշված ժամին թանգարանում էինք: Հյուրընկալ պատերի ներսում առանձնակի ջերմություն զգացինք տնօրենի և թանգարանի աշխատողներ Մարինե Միքայելյանի ու Նաիրա Ավետիսյանի կողմից, ովքեր գեղեցիկ անակնկալ մատուցեցին մեզ տարբեր ուտեստների տեսականիով, որ իրենք էին պատրաստել ու ցանկացել իրենց իսկ մատուցմամբ հյուրասիրել հրավիրվածներիս:

Շուտով հյուրընկալ սեղանների շուրջը հավաքվեցինք բոլորս, բայց մեր ուշադրությունից չվրիպեցին այն գեղարվեստական բոլոր ձևավորումները, որ առանձնակի տեսք էին տվել թանգարանին ու մի նոր որակ փոխանցել մեր տրամադրությանը: Փայտի վառարանի վրա դրված կաթսաներից համեղ բուրմունք էր տարածվել շուրջբոլորը, բայց բոլորիս համար հասկանալի էր, որ խոհանոցը միայն սնունդ և սնվելու տեղ չէ, այն ազգային մշակույթի և մտածողության մաս է, իսկ մենք վաղուց գիտեինք, որ ունենք հրաշալի խոհանոց, որը ժառանգել ենք մեր տատիկներից, և պարտավոր ենք փոխանցել այն մեր մյուս սերունդներին:

Տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ կային այստեղ, որ համախմբվել էին սեղանների շուրջ՝ իրենց անկեղծ զրույցով, մեծագույն ջերմությամբ, հասկացվածության այն բարձր մակարդակով, որտեղ գնահատանք կար այս միջոցառման նախաձեռնողների հանդեպ, նաև հիացմունք այն բոլոր ուտեստների համար, որ հասցրել են ազգային տեսանկյունով մի նոր տեսք տալ այս հանդիպմանը, որով եզրափակվում էր թանգարանի միջոցառումների շարքն այս տարում:

Ամենատարբեր համերի և հոտերի զարմանալի համադրություն կար, որ այդ ուտելիքները դարձրել էին ավելի յուրահատուկ: Ամենատարածված ուտելիքը բոլորիս հայտնի ժենգյալով հացն է, որը համարվում է ծիսական կերակրատեսակ, որի խորհուրդը բարեկամներին համախմբելն է: Այդ օրն էլ բոլորս բարեկամական մտերմությամբ հավաքվել էինք վայելելու տարբեր բույսերից և բուսական յուղով համեմված լցոնով պատրաստված այդ բարակ հացը: Գիտենք, որ արցախյան խոհանոցն ունի խորը արմատներ: Կերակուրները մեծ մասամբ պատրաստվում են մսից և մեր լեռներում աճող բանջարեղեններից:

Սեղաններին ավանդական խորոված էր դրված, մյուս ճաշատեսակը կորկոտն էր, կամ ինչպես մենք ենք ասում՝ խոզի մսով ու ցորենով համեմված կուրկուտը: Որքա՜ն հետաքրքիր էր կճեխաշը, մեր խոսքով՝ կճեխածը, որ սովորաբար համարվում է հայկական ծես, որ ատամհատիկի ժամանակ են պատրաստում՝ մանկան առաջին ատամը դուրս գալուց հետո: Նաև ասում են, որ ատամհատիկը պտղաբերության և առատության խորհրդանիշ է: Կամ՝ ավելուկը, որը ժողովրդական բժշկության մեջ ամենից շատ տարածված դեղաբույսերից է, բուժական նպատակներով գործածում են արմատը, տերևներն ու սերմերը: Ավելուկի տերևները հյուսում են և կախում, իսկ այն տապակած դրված էր սեղանին:

Ուզում եմ առանձնակի շեշտել, որ սեղանին տարվա այս եղանակին զկեռն էր և դրանից պատրաստված զկռթթոն, պանիր կար, բայց ոչ սովորական, այլ, ինչպես ասում ենք մեր բարբառով՝ «մոթալ պանիրը», թթու դրած կաղամբն էր, տաքդեղը, Արցախի կարմիր գինին: Խմորաշերտերի արանքները խորիզ լցրած բլիթանման թխվածք կար սեղանին, որ սովորաբար թերթերուկ են կոչում, նաև՝ թերթաբլիթ, այնքան բարակ են դրանց շերտերը:

Միջոցառումը հրաշալի էր, հագեցած բարձր տրամադրությամբ, բոլորիս շնորհակալական խոսքով...Եվ համոզմունք կար, որ ազգային խոհանոցը շատ կարևոր է մեր մշակույթի պահպանման համար, որը տանում է դեպի մեր բնության, մեր արմատների, մեր ապրելակերպի պահպանմանը՝ որպես ազգի գոյատևման երաշխիք:

http://www.usarmenianews.com/am-n-10081.html

2017-12-25

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՉԵՆ ՈՐԱԿ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Դպրոցականների առաջին կիսամյակն ամփոփեցինք, ձմեռային երկշաբաթյա արձակուրդային օրեր են, իսկ ուսուցիչներս, հակառակ աշակերտներին, դեռ գնում ենք դպրոց: Վերջին օրերի ծանրաբեռնված ու լարված աշխատանքից հետո կարծես ուզում ենք «հավաքել» մեզ, մի քիչ շունչ քաշել, բայց նաև այս իրավիճակն առիթ է տալիս ուսուցիչներիս արտահայտելու մեր դժգոհությունն այն թերությունների մասին, որ առկա են կրթության համակարգում:

Հայոց լեզվի և գրականության ուսուցողական, թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ գրավորների ծանրաբեռվածությունը յուրաքանչյուր կիսամյակում նկատելի է մեզ՝ մասնագետներիս, չնայած նմանատիպ իրավիճակ է նաև մյուս առարկաներ դասավանդող ուսուցիչների մոտ: Որ գրավորների քանակի ավելացումը մի նոր որակ է հաղորդում կրթությանը, չեմ կարող հաստատակամորեն համաձայնվել այդ կարծիքին: Որ աշակերտի մոտ ձգտում է առաջանում գրավորից գրավոր ավելի գեղեցիկ շարադրի իր մտքերը, նույնպես չեմ կարող համամիտ լինել դրան: Որ աշակերտները սիրով են կատարում այդ գրավոր հանձնարարությունները, նույնպես կարող եմ հակադարձել: Որ այդ գրավորների միջոցով աշակերտը գիտակցում է իր գրավոր խոսքի նվազ իմացությունը և խուսափում բուհ ընդունվելու իր մտադրությունից, նման բան չկա:

Բազմաթիվ գրավոր աշխատանքներից «անբավարար» գնահատված ամենաթույլ աշակերտը քմծիծաղով է արտահայտում, թե մի քանի տարուց հետո ինքը ի՞նչ պաշտոններ կարող է զբաղեցնել և ինչ եկամուտների տեր կարող է դառնալ: Գուցե կրթության ոլորտում ուսուցչի աշխատանքի այս ավելորդ թղթաբանությու՞նը վերանայվի, որ արհեստական դժվարություն է ստեղծում մեզ համար:

Ու՞մ է հետաքրքրում, թե վերոնշյալ գրավորներից քանի աշակերտ է ամեն անգամ բացակայում: Ո՞վ է մտածում, թե ինչպես պիտի ամենաբարձր ջերմության մեջ գտնվող աշակերտը մասնակցի գրավոր աշխատանքներին, այլապես նա «1» կգնահատվի, եթե չգրի այդ գրավորը նշված ժամկետում: Բայց ո՞վ գիտի, թե ձմռանը փայտի վառարաններով տաքացրած դասարաններում ամեն օր քանի աշակերտ է բացակա-

յում և դրա արդյունքում պարտադիր քանիսին պետք է թելադրություն տալ: Մի՞թե պակաս որակ էր արձանագրվում խորհրդային տարիներին, երբ այդքան գրավոր աշխատանքներ չէին հանձնարարվում:

Մեր օրերի ուսուցիչը ծանրաբեռնված է իր աշխատանքում: Այս օրերին 12-րդ դասարանի աշակերտներից շատերը դպրոցներում երեք առարկայից քննություն են հանձնում: Արդյո՞ք քննություններից առաջ կա այն մտահոգությունը, որ ունեցել ենք մենք տարիներ առաջ դպրոցում կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելիս: Այդ ո՞ր մի աշակերտն է անհանգստություն ապրում, թե հաջորդ օրն ինչպես կհանձնի քննությունը: Աշակերտների անհոգությունը փոխանցվում է ծնողներին, բայց ու՞մ մեղադրել՝ աշակերտի՞ն, ով գիտի, որ ամենացածր անցումային միավորն անգամ վաստակելուց հետո դյուրին ձևով հայտնվելու է որևէ բուհում: Գուցե ծնողի՞ն մեղադրենք, որ մինչ իր երեխայի ընդունվելն արդեն մտածում է, թե ինչպես պիտի նրա ուսման տարեկան վարձավճարը փոխանցի:

Ուսուցչի աշխատանքի նման ծանրաբեռնվածությունը երբեք որակ չի ապահովի, նաև փորձում եմ բարձրաձայնել, որ թերությունը պետք է գտնել ոչ թե դպրոցներում՝ ուսուցչի ձեռքի տակ եղած թղթաբանությունն օր օրի ավելացնելով, այլ պետք է վերևից սկսել՝ կրթության համակարգից, որ ամեն տարի չնայած նոր «փորձարկումներ են» կատարվում, բայց արդյունքում ընդունելության մարմաջով տարված բուհերի դռները ավելի լայն են բացվում բոլոր դիմորդների համար՝ արժեզրկելով ուսուցիչներիս տքնաջան աշխատանքը:

http://www.usarmenianews.com/am-n-10084.html

2017-12-27

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ, ՈՎ ԼԱՎ Է ՀԱՍԿԱՆՈՒՄ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ «ՈԳՈՒ ՍՈՎԸ»

Մանկավարժի մասին իմ խոսքով և շուտով՝ Ամանորի շնորհավորանքով ավարտին կհասցնեմ իմ ստեղծագործական տարին: Այս հրապարակումով և տոնական օրերի նոր տրամադրությամբ կեզրափակեմ իմ «Մանկավարժի օրագրի» 2-րդ մասը:

Նոր տարվա նախօրեին ցանկացա մի փոքրիկ անակնկալ մատուցել լավագույն անհատականությանը՝ Նոր Մարաղայի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Անահիտ Լորեցյանին, ով օրեր առաջ հրավիրված էր մեր դպրոցը՝ մասնակցելու հայոց լեզվի և գրականության փնջային մեթոդմիավորման հերթական նիստին:

Նա մեկն է, ում հետ կարող ես անկեղծանալ, ով լավ է հասկանում մեր ժամանակների «ոգու սովը», որի մասին վաղուց ահազանգել էր Վարպետ բանաստեղծը: Ուսուցչուհի, ով տեղ ունի հոգուդ գաղտնարաններում, ում վաղուց տեսել ես գրականության ու գրքի մեջ ընբոշխնելիս ու զգացել, որ կարոտ ունես պարզ, մաքուր ու անաղարտ հոգու հետ առնչվելու: Ու այդ իսկ կարոտով մտերմորեն զրուցեցի նրա հետ նաև մանկավարժի ոչ հարիր պահվածքի մասին, որ երբեմն առնչվում ենք մեր շրջապատում: Կան բացասական երևույթներ, որ արժեզրկում են ուսուցչի կերպարը, այդ տեսակը դարձնում հասարակ ու ճղճիմ...Կարծես իմ զրույցով փորձում էի ինձանից հեռացնել այն մղձավանջը, որ երբեմն անտեսանելի քողով պատում է հոգիս:

Ես նրան նվիրեցի իմ նոր հրատարակված գրքերից: Այն երջանիկ ժպիտը, որ բոլորեց նրա դեմքը, ինձ էլ փոխանցեց մի անթաքույց ուրախություն, որ հանձին Անահիտ Լորեցյանի՝ այդ գրքերը իսկական հասցեատեր ունեն, ով գրքի հանդեպ հարգ ունի ու սրտի անհանգիստ թրթիռ: Հիշեցի 2013-ը, երբ իմ առաջին հրատարակված փոքրածավալ մեթոդական ձեռնարկը՝ «Ուսուցչի իմ թղթապանակը», նվիրեցի նրան:

Շուտով հեռախոսի մյուս կողմից լսեցի նրա ձայնը, որ մեծագույն գոհունակություն էր հայտնում գրքի մասին: Օրեր անց նա ինձ ծաղիկներ նվիրեց Մարտակերտի մշակույթի տանը կազմակերպված իմ գրքի շնորհանդեսի օրը և բեմ բարձրացավ իր բարձրարժեք խոսքով՝ կարևորելով այդ գիրքն ու հեղինակիս:

«Գրքույկն օդ ու ջրի նման անհրաժեշտ է սկսնակ ուսուցիչներին և, ինչու չէ, նաև՝ մանկավարժական պատկառելի փորձ ունեցողներիս, որովհետև արդիական է, տարողունակ, ուսուցողական: Անչափ հուզիչ է ուսուցչուհու մարդկային կերպարը, նրա խորաթափանց հայացքը նկատում է երեխայի մեջ բոլորի համար աննշմարելի շնորհքը և օգնում, որ այն զարգանա, նա կարողանում է մտնել երեխայի հոգին, արձագանքել նրա ստեղծագործական կարողություններին, արթնացնում է նրանց զգացմունքների նուրբ ու փխրուն աշխարհը, և երեխան ճանաչում, հասկանում ու սիրում է նրան:

Լրագրական հոդվածներից, հարցազրույցներից երևում է Պողոսյան քաղաքացին՝ սկզբունքային, անկոտրում, խիզախ, քաղաքացիական առողջ դիրքորոշմամբ: Նրա նման մանկավարժների դաստիարակած սերունդն էր, որ պահեց երկիրը, մաքրեց այն թուրքի ոտնահետքերից: Նա լուսավոր մարդ է, հոգու լույսը շռայլորեն բաշխում է ոչ միայն իր սաներին, այլև՝ բոլորիս: Նա կարեկից է մարդու ցավին, աջակից գործին, ուղեկից ճամփին... Մարդն իրենով կա՛մ մեծացնում, կա՛մ փոքրացնում է իր բնակավայրը: Նատաշա Պողոսյանն այն մարդկանցից է, ով մեծացնում է իր բնակավայրը, և ես գոհ եմ իմ ճակատագրից, որ առիթ ունեցա շփվել այս գեղեցիկ ու ազնվական մարդու հետ: Իմ գրադարանում բազմաթիվ արժեքավոր ու թանկ գրքեր կան՝ հեղինակների մակագրություններով, դրանց կողքին իր արժանավոր տեղն ունի նաև Նատաշա Պողոսյանի գրքույկը՝ հեղինակի մակագրությամբ»:

Ինչու՛ եմ սիրում նրա տեսակը, որ քիչ են մեր շրջապատում: Նա մեկն է, ով Հայաստանից վաղուց տեղափոխվել է Արցախ ու դարձել մեզ հարազատ, ում վաղուց գիտեմ՝ որպես իր մասնագիտության լավագույն գիտակ, մեկը, ում խոսքում երբեմն վճռական, նույնիսկ ըմբոստ ոգի եմ տեսնում, ով չի հանդուրժում շրջապատի անարդարությունը: Երբեմն նա տարիների հեռվից ինձ երևում է Տիգրանակերտի նորաբաց թանգարանում, ով այցելուներին զարմացնում էր իր իմացությամբ ու հմայիչ խոսքով, նրան տեսնում եմ դասերի կոնկրետ ու տեղին վեր-

լուծություններով, իր գրագետ խոսքի շափաղումներով, լավը, գեղեցիկը տեսնելու և գնահատելու կարողությամբ, կյանքը ճշմարտացի պատկերելու հմտությամբ... Նա ազնվագույն կերպար է, ով միշտ իմ մտորումներում ուղեկցում է ինձ իր նրբին ու մեղմ ժպիտով, մեծագույն հարգանքով, այն մաքուր զգացողությամբ, որ կարող է տածել բարի ու անկողմնակալ Մարդն իր գործընկեր ուսուցչուհու հանդեպ:

Օգտվելով առիթից՝ շնորհավորում եմ բոլորիս գալիք Նոր տարին: Թող ծիածանվեն ամենքիս գլխավերևում այն բոլոր բարեմաղթանքները, որ այս օրերին շողարձակում են ամենուր:

http://www.usarmenianews.com/am-n-10090.html

2017-12-28

ԱՅՍ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐՍ ԲԱԶՄԵՐԱՆԳՎՈՒՄ ԵՆ

Նոր տարի, նոր երազանքներ ու այդ նորի հանդեպ՝ նոր սպասելիքներ...Ոմանց համար նոր տրամադրություն, նոր հրաշալիքներ, բարձրագույն վայելք, ոմանց համար՝ հացի խնդիր, որ առատ սեղաններ չեն ունենա, կլինեն նաև շատերը, որ մյուսներից հետ չմնալու համար մի նոր ճոխությամբ կդիմավորեն Նոր տարին, բայց հաջորդ օրերի սուղ կյանքը կազդարարի նրանց խեղճացած վիճակը, որ կարիք չկար մյուսների հետ քայլել ժամանակի հետ, եթե նյութապես ապահովված չես:

Գեղեցիկ է այդ տոնը, երբ շնորհավորանքները չեն տարբերակվում սոցիալական տարբեր շերտավորման պատկանող մարդկանց համար: Բարեմաղթանքները բոլորիս մեծագույն երազանքն են դառնում, երբ ամենքս ենք կապույտ երկնքի անդորրությունը երազում, որ խաղաղ լինի կյանքը, ստեղծագործ աշխատանքը՝ բեղուն:

Իմ շնորհավորանքներն օրեր առաջ ուղղված էին բոլորին, առանձնապես դպրոցի ավագ դասարանների այն աշակերտներին և ուսուցիչ-

ներին, ովքեր մասնակցում էին Նոր տարվա տոնական հանդիսավոր միջոցառմանը: Դպրոցի տնօրեն Լիդիա Պետրոսյանի խոսքը համեմված էր լավագույն օրհնանքներով՝ բոլորիս ընտանիքների բարեկեցիկ ու անհոգ կյանքի երազանքների իրականացմամբ: Գեղեցիկ էր միջավայրը, երբ երգն ու պարը, բազմազան կատակային խաղերը՝ միա-

խառնված բարի օրհնանքներին, տոնական ուրախ տրամադրություն էին ստեղծել շուրջբոլորը:

Շնորհավորանքներս այս օրերին բազմերանգվում են, տարածքներն՝ ընդարձակում, երբ ամենուր դեմքեր կան՝ ծանոթ թե անծանոթ, հեռու թե մոտիկ, նյութապես ապահով թե անապահով, մեծ թե փոքր, նորածին թե ծեր...Բայց նրանց մեջ առանձնանում են այս ցրտերին սահմանին կանգնած զինվորները, ովքեր հայրենիք են պաշտպանում, որ խաղաղ լինի երկինքը, թիկունքում հանգիստ ապրի հայը: Ակնածանքս ու շնորհավորանքս նրանց, ովքեր հպարտորեն անցել են արցախյան պատերազմների բովով, հաղթանակ կռել ու այսօր էլ ապրում ու արարում են...Խոնարհումս նրանց, ովքեր չկան մեզ հետ, բայց անմահացել են ապրողներիս հոգում. շնորհավորանքս նրանց հարազատներին:

Շնորհավորում եմ բոլորիս Ամանորը և գալիք Սուրբ ծնունդը՝ հանձին կողքիս ապրող և Սփյուռքում գտնվող իմ արյունակից հարազատների և բոլոր նրանց, ովքեր վաղուց բարեկամական ու մտերմական թելերով կապված են ինձ հետ: Շնորհավորանքս հեռուներում ապրող հայությանը, Լոս Անջելեսի հայկական USArmenianews.com լրատվական

կայքի խմբագրակազմին, սոցկայքերի իմ ընկերական միջավայրին, իմ նյութերի բոլոր ընթերցողներին...

Շնորհավորանքս կրթության ոլորտի աշխատողներին, ուսուցիչներին, դպրոցականներին, նրանց ծնողներին, մեր բոլոր շրջանավարտներին... Բազմաթև բարեմաղթանքներս հեռու և մոտիկ, ինձ հարազատ, մտերիմ դարձած անձանց, ովքեր առիթ են տվել ինձ երբեմն զրուցելու, ովքեր սրտանց անկեղծանալ գիտեն ու թևեր են տվել ինձ սավառնելու...

Նոր տարին թող բարեբեր լինի, մարդիկ ներողամիտ լինեն, անշահախնդիր, սերն ու բարությունը իշխեն բոլորիս սրտերում, մարդու սիրտը կեղեքող չարությունը վերանա: Սուրբ ծննդյան տոնով բոլորի օջախներում ավետիս լինի նորածնի ծննդով թե բարի գործով, անձնական թե անանձնական կյանքով...Երկարատև խաղաղությունը թևածի ամենուր, պատերազմի սպառնալիքը վերանա հավերժ, բնությունն էլ դառնա մարդուն զորավիգ, հեռու լինենք բոլոր տարերքներից, այն աղետներից, որ վիշտ են բերում, խոր կսկիծ: Հայոց աշխարհը թող հզորանա, վերանա աղքատությունը, հայրենադարձության բաղձալի երազանքն էլ իրականանա...

http://www.usarmenianews.com/am-n-10094.html

ՎԵՐՋԱԲԱՆԻ ԽՈՍՔ... ԵՍ ԵՎ ԻՄ ՕՐԱԳԻՐԸ

Կյանքի անխախտ օրենքին համահունչ ստեղծագործում ու արարում ենք, և արարումը դառնում է կենսակերպ, ոգի, մտածողություն, վարք, տեսլական: Յուրաքանչյուր սերնդի հետ մենք փորձում ենք կապել իր որոնած ու նախասիրած կամուրջը, նրանցից յուրաքանչյուրի հետ նորովի ենք հատում ճանապարհը՝ մերթ համաչափ, մերթ վայրիվերումներով, որը դառնում է ստեղծագործական որոնումների ու ինքնահաստատման ուղի:

Մեկիկ-մեկիկ ճանաչում ու մտերմանում ես ու նորոգվում են ապրումներդ, հույզերդ ու մտքերդ նրանց յուրաքանչյուրի հետ համատեղ ճանապարհում: Ամեն տարի, ամեն օր ու ժամ նորովի եմ ընկալում, ու այդ նորն ամեն օր բեկվում է իմ միջով՝ մի օր հեղեղ ու փոթորիկ, մի օր հանդարտ ու խաղաղ օր: Խաղաղ օրն էլ, միևնույն է, մտահոգ եմ ու կքում եմ խոհերիս տակ: Ուզում եմ փախչել հակասական դիպվածներից, մարդկանց պայմանականություններից ու պատեհապաշտությունից, ուզում եմ մնալ ես ու իմ օրագիրը:

Մանկավարժի իմ օրագրային գրառումների արդյունքում խայտաբղետ մի խճանկար է՝ բարձր արժեքների սերմանում և կողքին ակամայից սերտաճող գաճաճ արժեքներ, ողջամտություն և դրան անհարիր աբսուրդ, մարտիրոսված ու ոգեղենացած հերոսներ և մեր աչքի առաջ ընկնող կերպարներ…Որտե՞ղ ենք գնում…Ի՞նչ ենք անում փրկելու համար արյան գնով ձեռք բերածը…Ինչպե՞ս ենք ընկալում և իմաստավորում օրվա խորհուրդը, ինչպե՞ս ենք ապրում Աստծո տված ամեն օրը՝ ավերու՞մ, թե՞ կառուցում ենք այն:

Անհարմար եմ զգում, երբ իմ օրագրային գրառումների նյութը դառնում է որևէ բացասական դեպք կամ կերպար, այնուհանդերձ, ուսուցչի կամ աշակերտի բերանով արտածված ամեն մի գրառում այստեղ սեփական անձնագրի գոյության հաստատում է, որի ակունքները հասնում են մինչև նախնյաց հիշողության հոգևոր բովանդակություն: Այո՛, առանց նախնյաց հետ հոգևոր կապի, առանց հայրենիքը սիրելու և նրա նկատմամբ հոգատարություն տածելու, չկա ու չի կարող լինել վերածնունդ: Խոսքը նախ և առաջ մտածողության ու հոգու վերածննդի մասին է: Այսօրվա բարդ ու խրթին ժամանակներում ծանրացել է մեր հայ մայրերիս ու մանկավարժներիս գործը: Բայց մենք կրում ենք 5-րդ

դարի փափկասուն հայ տիկնանց ոգին, որոնք այսօր երևակվում են նոր դրսևորումներով:

Այո՛: Մենք փորձության ու յուրատեսակ ստուգատեսի ժամանակներ ենք ապրում: Եվ պատվով պետք է անցնենք այդ ստուգատեսը: Ու այն անհաղթահարելի պտույտ չպետք է դառնա հատկապես մեզ՝ մանկավարժներիս համար:

Ես և իմ օրագիրը: Ամենօրյա տքնաջան աշխատանքներով փորձել եմ ուրվագծել ինչ-ինչ արժեքային համակարգի չափանիշներ՝ խզում չստեղծելով նոր սերնդի ու իրականության միջև, չմոնտաժելով առանձին հատվածական դրվագներ: Մանկավարժի գործունեության կանոնավոր շարունակություն. սա էր մանկավարժի իմ օրագրային գրառումների վերջին հանգրվանը և ոչ թե քննադատության աշխուժությունը:

Լուիս Քերոլի «Ալիսը հրաշքների աշխարհում» հեքիաթում բանալին անհետանում է, իսկ ես գտել եմ աշխարհը և ինքներս մեզ փոխելու բանալին. դա ճիշտն ու լավը ստեղծելու նվիրումն ու հավատամքն է, ճշտին ու ճշմարտությանը հավատարիմ լինելը, ճշտի սկզբունքով աշխարհը նվաճելը, աշխարհին տալն ու վերցնելը....

Անվախճան է մանկավարժի հույսս… Մնամ Ձեր

Նատաշա ՊՈՂՈՍՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբանի խոսք «Մանկավարժի օրագրի» մասին.....3
Մանկավարժի խիզախում.....5
Բարի ճանապարհ արարումիդ սրբազան հերկերում..... 7
Նոր տարին յուրատիպ հաշվետվություն, նոր տեսլական.....9
Որպես ինքնակենսագրական.....11
Սուրբ ծննդյան տոնի իմ խոհերից.....14
Սոցցանցն էլ միջավայր է, որտեղ մաքրություն է պետք.....16
Մեր դպրոցի տնօրենը.....18
ԼՂՀ Մարտակերտի քաղաքային համայնքի
ղեկավարի շնորհակալագիրը 20
Ողջերի մեջ ենք գտնում ընկածներին.....22
Ես իմ հուշերից մի երգ եմ հյուսել.....24
Ծաղկամանի գաղտնիքը.....26
Զինվորական ծառայության մեկնելուց առաջ հնչած երգը.....28
Երկու նահատակ եղբայրների մանկավարժ քույրը.....30
Մեր դպրոցի ուսմասվարը.....32
Անշուք, բայց ջերմությամբ լեցուն մեր հարազատ դպրոցը.....34
Մի՞թե, աշխա՛ռհ, սխալ կլիներ, եթե իր տոնին
նա ներկա լիներ.....36
Տոնդ շնորհավոր, հայո՛ց բանակ.....38
Եվս մեկ հայրենյաց դաս.....40
Ջերմությամբ լցված ձյունոտված օրը.....43
Գովք հայոց բանակին.....45
Մարտակերտ... այստեղ հավերժահույզ մեղեդիներ կան,
լուսե երազներ.....47
Հայրենասեր հայուհու մի խաթարված ճակատագիր.....49
Հայուհի եմ ես, խրոխտ լեռնուհի 51
Մարդկանց, ամենքին, աշխարհին ուղղված հավատս լուսե.....53
Ես ինչ եմ անում Արցախի համար.....56
Մենք Արցախում ենք տեսնում մեր վաղվա օրը 58

Պատրաստ եմ դառնալ հայրենիքիս պաշտպանը.....61
Աշխա՛րհ, կանգնեցրու՛ ազգիս արժանավոր
զավակների կորուստը.....63
Ես չեմ մահացել, ես միացել եմ հավերժությանը.....65
Բավակա՛ն է՝ մեր արցունքներով չափենք ազգիս զավակների
կորուստը 67
Երազում եմ ծառայել, զինվորական համազգեստ հագնել.....69
Հուշ-ցերեկույթ՝ նվիրված նահատակ հերոս
Վլադիմիր Բալայանի ծննդյան օրվան.....71
Առաջին ու վերջին դարձած հանդիպում 73
Հայրիկ կորցրած ևս երկու դպրոցական.....76
Ե՞րբ ենք վերջին անգամ համտեսել ազգային ճաշատեսակներ.....78
Թումանյանի «Անուշը» մեր օրերի աշակերտության
ընկալումներում.....80
88-ի մշտարթուն հիշողություններով.....83
Հեռուներից կանչո՛ղ կարոտ, ոսկեղենի՛կ մայրենի 85
Հավերժության ճամփան բռնած մեր Սահակը... 87
Ի շրջանս դե յուր կամ ճիշտ ապրելու իմաստը.....89
Անցած դարավերջի ոճրագործության անխոս վկան.....91
Կարդանք ականատեսի այս գիրքը.....93
Գրքի քննարկման հուշ-ցերեկույթ նահատակների հիշատակին.....95
Բացում ենք սիրով, ընթերցում՝ հափշտակված,
փակում՝ ափսոսանքով.....98
Ողջագուրվում եմ սպասված լուսաբացին.....100
Խոսք Գրողների միջազգային օրվա առթիվ.....102
Կարպետագործության փորձը փոխանցվում է սերունդներին.....104
Ինքնախոստովանություն դեռահասների լեզվով.....107
Եղբոր կորուստը նրա էության մեջ է... 110
Կինը… 112
Հայրիկ կորցրած մի գարնանաբույր մանկություն……114
Հասունացա միանգամից, երբ դարձա պատերազմի ականատես.....116
Հոգետանջ մի հարց՝ ուսուցիչն ու աշակերտը նու՞յն
տարածքում չեն.....118

Երբ հացն է երգում մի թախծալից երգ.....120
Այս գրքում ինձ կամրջված եմ տեսնում հեռուներին.....122
Մեր օրերում կաթիլներով ենք հավաքում երջանկությունը.....124
Որտե՞ղ է պոեզիայի մշակույթը.....126
Ապրիլի 24-ի իմ ձախողված միջոցառումը.....128
Խորհրդային կարգերի իմ հուշերից.....130
Մի քանի հուշ «եղբայրական» Ադրբեջանի տարիներից.....132
Գիտեմ ապրելու գինը... 134
Մանկավարժը նաև քաղաքական համոզմունքների կրող է.....136
Պատերազմ տեսած սերունդը չի հավատում խոստումների.....138
Աշխարհին մաքրություն է պետք՝ մեր մանուկների անհոգ ծիծաղով...140
Ապրիլի 2-ը մեր ինքնաճանաչման սկիզբն էր.....142
Հայրենասիրական դաս նաև ուղիղ եթերով.....144
Հարցազրույց Արցախի հանրային հեռուստատեսությամբ.....146
Նա զոհվեց երկու տարի առաջ՝ Մայրության օրը.....151
Անցած տարվա այս օրը.....153
Շնորհավոր Ապրիլի 7-ի՝ Մայրության, գեղեցկության և
ավետման տոնը.....155
«Մարտակերտ» պարն արժանացավ
«Լավագույն դեբյուտ» անվանակարգին.....157
Մարաղայի սպանդը մեզ հետ է արդեն 25 տարի.....159
Երկու խոսք մանկավարժ դստերս մասին.....161
Նա չի մահացել, նա միացել է հավերժությանը.....164
Այսօր Սուրբ Զատիկ է.....166
Մեռելոցին էլ մտովի եմ այցելում այն հեռավոր գերեզմանոցը,
որտեղ իմ մի կտոր հայրենիքն է մնացել.....168
Նամակ հայ զինվորին ու Աստծուն.....170
Ինձանից պոկվեց մի կապույտ երազ.....172
Արծվի մի թռիչք ընդհատվեց հանկարծ.....174
Նոր սերնդի արձագանքը դպրոցների կամ
դասարանների անվանակոչման մասին.....176
Տառապանքից ծնված կերպար.....179
Գառնիկ Հովհաննիսյան. անհայտ բարձունքներում.....181

Մրցանակային տեղ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղում.....184
Հայաստանյան օլիմպիական բերկրանք.....187
Ինչու՞ Մայիսի 1-ի տոնական օրվա շունչ չկա.....190
Դպրոց կառուցող բարերարն ու Մ. Գալշոյանի «Մամփրե արքան».....192
Մտորումներ մամուլի օրվա առթիվ.....195
Հայտնի դառնալու մի մեծ երազանք.....197
Կոմիտաս Հակոբյան. անավարտ պոեմ.....199
Շնորհավորում եմ շարադրությունների հանրապետական
մրցույթի հաղթողներին.....202
Ցերեկույթ՝ նվիրված Մայիսյան եռատոնին.....204
Եռատոնի մեր հաղթանակը.....206
Արցախի երեխաները խաղաղ ու անհոգ կյանք են ուզում.....209
Որպես չգրված նամակ՝ սիրելի քրոջս.....211
Մեր անհանգիստ օրերի մտածումների զրուցակիցը ես եմ.....213
Երբ վտանգված է հող հայրենին.....215
Ես զինվորն եմ հայոց բանակի.....218
Նա ուզում է դառնալ հայոց բանակի զինվոր.....221
Համբույրով օծված մի չուղարկված նամակ.....224
Սպիտակ թուղթ, գույներ, վրձին ու լռություն... 226
Թե ինչ էր նկարում յոթերորդցիների վրձինը.....228
Մրցանակ «Բրեյն-ռինգ» ինտելեկտուալ խաղում.....230
Երբ ուսուցչին «հաղթում է» աշակերտը.....233
«Ոսկե միջինը»՝ անհրաժեշտություն.....235
Մանկավարժի խոսք.... շնորհավոր Արցախի լրագրողների տոնը.....237
Ուստարվա ավարտի խոհերից.....239
Անցած «Վերջին զանգերի» հիշողություններով... 241
«Վերջին զանգ» Մարտակերտում.....243
«Վերջին զանգի» հուշերով... 11 տարի առաջ և այսօր.....247
Սերնդի երթը շարունակվում է.....250
Երեխաների հետ Գանձասարում.....252
Երեխաների օրվա շնորհավորանքն աղոթք է դարձել.....254
Զինվորական նվագախումբն ու հունիսի 1-ը.....257
Գանձասարի վանքն ու ձեռագրատունը.....259

Ուսուցիչը ծնողների հիշողության մեջ.....261
Հավատարմության երդում առ հայրենին.....263
Միայն մարդասիրությունը կփրկի աշխարհը.....265
Մանկավարժի բարդ ու դժվարին մասնագիտությունը 267
Իրավիճակներ, որտեղ մանկավարժի վարպետություն է պետք.....269
Ուսուցիչների աշխատանքն ուստարվա վերջում.....271
Մանկավարժի ուսանելի կերպար.....273
Անեզրական թախիծ, որ միշտ ինձ հետ է.....275
Մտերմիկ զրույց երիտասարդ ուսուցչուհիների հետ 276
Երկփեղկված ապրումներ.....279
Երիտասարդ դասվար՝ հոգում անթեղած ամուսնու կորուստը.....281
Մեր դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչուհին.....283
«...Ու տանում են ամեն հարված, բայց մնում են
էլի կյանքին սիրահարված».....285
Լրջորեն մոտենանք դեռահասների
մասնագիտական կողմնորոշմանը.....287
Այսօր Մարտակերտի ազատագրման օրն է 289
Դադիվանքում ենք՝ միջնադարի վանական համալիրում.....291
Թարթառի ափին ենք.....293
Մանրապատումների շարքից.....295
Բառի համը, բառի հոտը, բառի գույնը... 296
Ովքե՞ր են խոսում հոգու մաքրությունից... 297
Մեկ բառն էլ կյանք է, միայն թե ասենք... 298
Համեմատել պետք չէ, երբ նա Սևակ չէ կամ ոչ էլ՝ Սահյան... 300
Վերականգնենք դպրոցական ընթերցանության
վաղեմի ավանդույթը.....302
«Ես ո՞վ եմ» շարքից... 304
Օրագրային գրառումների ևս մեկ հերոսուհի.....306
Ո՞վ է մեղավորը, որ Արցախի այս նորածին
բալիկն էլ պիտի արտագաղթի.....308
Բարձրագույն կրթության օգուտն ու վնասը.....311
Հետադարձ հայացք կամ իմ առաջին գրքի մասին.....313
«Նեղ օրերից մեկը».....316

Նշանադրություն, որ Մարտակերտում խաղաղ լուսաբաց է
ավետում.....318
Անցյալում մնացած ծամոնի տուփը.....320
Ե՞րբ եմ ձեռքս առնելու ուսուցչուհուս հրատարակված գրքերը.....322
Բարձր տպավորություն ասմունքի համահայկական փառատոնից.....324
Հրատարակվեց իմ գիրքը՝ արձակագիր Լևոն Աղյանի
զավակների հիշատակին.....327
Արցախի ուսուցչուհիս Փարիզից
հեռարձակվող ռադիոհաղորդաշարում.....330
Անցյալի հիշողությունների ու ներկայի
խաչմերուկում.....334
Արցախի այսօրն ու գալիքն է նա.....336
Հեռուներից եկած նամակ.....338
Հուշ-ցերեկույթ Գեղամ Մանուկյանի հիշատակին.....340
Մեր կողքին կենդանի լեգենդ կար, մենք չգիտեինք.....343
Նամա՞կ է սա, թե՞ մենախոսություն... 346
Հանդիպում այդ գրքի մի քանի «հերոսների» հետ.....348
Աննա Միրզոյան. գրքի ևս մեկ «հերոս».....351
Ինչու՞ թաքցնել մտահոգությունը.....353
Սեպտեմբերմեկյան խոհերս.....355
Անկախություն, որ բոլորիս ազատ ու խաղաղ ապրելու
երազանքն է.....357
Հրատարակվեց իմ գիրքը՝ նվիրված մանկավարժ դստերս՝
Սոֆյա Պետրոսյանին.....359
Մի՞թե ուսուցիչն արժանի չէ շնորհակալական խոսքերի... 362
Գիրքը պետք է նվիրել գրքի հարգն իմացողներին.....364
Իրականության և երազանքների հանդիպման վայր է
«Մանկավարժի օրագիրը».....366
Համեստ աշխատավարձով տպագրված գիրք.....368
Իրապես հպարտ եմ, որ հարգելի տիկին Նատաշայի հետ
ֆեյսբուքյան ընկերներ ենք.....371
Ուսուցչուհի, ում գուցե տարիների հեռվից ավելի գնահատենք.....372
Սիրում ենք ուսուցչուհու Ձեր անթերի կերպարը.....374

Դպրոցի տնօրեն, ով իմ համակուրսեցին է եղել.....376
Գեղեցիկ անակնկալը.....379
Հանդիպում, որտեղ հայկական շնչով սփյուռք կար,
արցախական բույր.....381
Գրքերի շնորհանդես Մարտակերտում.....384
Շնորհանդես...գրքերի օծում գինով և իմ աշակերտների խոսքով.....387
Շնորհանդեսի երկրորդ մաս: Գնահատանք և արժևորում.....390
Շնորհանդեսի օրը հեռուներից եկած ելույթի խոսք.....393
Մեր ժամանակի մանկավարժը.....397
Սրտաբաց զրույց.....400
Շնորհավոր մտքի հերթական թռիչքներիդ ծնունդը.....403
«Մանկավարժի օրագրի» ամեն մի գրառում
գեղարվեստական մանրապատում է 405
Կեցցե՛ք դուք, որ կարողանում եք քայլել ժամանակի մեջ և անդին.....408
Անդարձ հեռացող օրերիս մեջ Ձեզ եմ տեսնում.....411
Մարտակերտում գրել այսպիսի գիրք, իսկապես հերոսություն է.....413
Այս գրքերը դնում եմ կրծքիս, հետո՝ համբուրում.....416
Անցած օրերի հանդիպման հիշողությամբ.....418
Նման ուսուցիչների շնորհիվ առողջ է տրոփում կրթության
համակարգի սիրտը 421
Մարտակերտի հարստությունն իր ազատությունն է.....424
Ուսուցչի անմնացորդ նվիրվածություն.....426
Ոչ ոք չկարողացավ փրկել մեծ բարերարին.....428
Այդ գրքերն իրենց արժանի տեղը կգրաղեցնեն
պատմաերկրագիտական թանգարանում.....430
Օտարության մեկնող մի նորաստեղծ ընտանիք.....432
Ցարությունն ու մանկավարժությունն անհամատեղելի են.....434
Ազատամարտիկի ծննդյան տարելիցի հիշատակ.....436
Հիշենք նահատակներին անուն առ անուն.....439
«Գիր» հեռուստածրագրի հարցազրույցը.....441
Հելոուին՝ օտար ու սատանայական.....447
Իմ ընթերցած առաջին գիրքը.....449
Աշխարհի առաջնությանը մասնակցած ըմբշամարտիկը.....451

Կրթօջախի կեսդարյա հոբելյանական տարի.....453
Աշակերտուհու անկեղծ խոսք.....455
Ժամանակնե՞րն են փոխվել, թե մե՞նք ենք
հետ մնացել ժամանակից.....457
Տպագի՞ր , թե՞ էլեկտրոնային գիրք.....459
Դեռահասի հարցում. «Ավելի հաճելի է շփվել մարդկա՞նց,
թե՞ ռոբոտների հետ».....461
Իմ հեքիաթային ճանապարհը.....463
Թռիչքի համար կարդալ է պետք 465
Իմ ներսում հոգու պատերազմ է.....467
«Օտարի» մեջ չկա այն տաք շունչը, որ կա «հայրենի» բառի մեջ.....469
Ընթերցանության էլեկտրոնային տարբերակը չպետք է
վնասի նոր գրքերի հրատարակությանը.....472
Ղարաբաղցին որտեղ գնում, Ղարաբաղը տանում է իր հետ.....475
Ու հետդարձի ճամփան եմ փնտրում, որ վերադառնամ Արցախ.....477
Ես իմ լեռնաշխարհի մի մասնիկն եմ.....479
Ուսուցչի և դեռահասի սովորական ու ոչ սովորական զրույց.....481
Չեմ թողնի Արցախը.....483
Մի քանի խոսք «Մանկավարժի օրագիր» գրքի և նրա
հեղինակի մասին.....485
Բոլոր թռչունները նույն բարձրության վրա
չեն թռչում.....487
Մանկուց երազել եմ գրքում հայտնվել.....490
Շնորհավորում ենք USArmenianews.com լրատվական
կայքի երկու տարին.....492
Երախտիքի և շնորհավորանքի խոսք հարգարժան
մանկավարժ Նատաշա Պողոսյանին.....495
Օտար հողում ես ես չէի 496
Կցանկանայի Արցախիս մասին ֆիլմ նկարահանել.....498
Մրցանակ Սահմանադրության օրվան նվիրված
շարադրությունների մրցույթում.....500
Ինչու՞ են մարդու իրավունքները կարևոր 503
Ես միշտ «գաղտնի» հետևում էի Ձեր ֆեյսբուքյան էջին.....507

2017-ը մանկավարժիս ազատ գործունեության հաղթանակն էր.....509
Կրթական «նորամուծությունների» գերին ենք դարձել.....511
Իմ խոհերի իրական ու գեղարվեստորեն շնչավորված կերպարը.....513
Համահայկական նկարչական տարբեր
մրցույթների մասնակիցը.....518
Արցախյան ազգային խոհանոցը Մարտակերտի թանգարանում..... 521
Ուսուցչի աշխատանքի ծանրաբեռնվածությամբ չեն որակ
ապահովում..... 524
Ուսուցչուհի, ով լավ է հասկանում մեր ժամանակների «ոգու սովը».....526
Այս տոնական օրերին շնորհավորանքներս
բազմերանգվում են.....529
Վերջաբանի խոսք... Ես և իմ օրագիրը..... 532

ՆԱՏԱՇԱ ՄԻՔԱՅԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳԻՐ

ՄԱՍ 2

Խմբագիր՝ Լուսինե Ղարախանյան
Սրբագրիչ՝ Թամար Հարությունյան
Էջադրումը՝ Ժաննա Ավանեսյանի
Կազմի ձևավորումը՝ Մարինե Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16,
ծավալը՝ 34 տպ. մամուլ, տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25

Ստեփանակերտ-2018